

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





ՀԻՐՎԱՆՋԱԳԵ

2, 1

ՅԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԶՈՐՐՈՐԴ

Հր. № 1174

Գրառնակվար № 2987 (բ):


Տիրած 3000,

Պետրատի տոս ջին տպարան Վաղարշապատում:

Պատվեր № 196.

Ն Ա Մ Ո Ւ Ս

1884



ԴՈՐԻՆ ՅԵՐԱԽՏԱԴԻՏՈՒԹՅԱՆ

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԻՄ ՄՈՐԸ

ՊՎՍԱՆՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ

Հ Ե Ղ Ի Ն ա կ

10-11

THE NEW YORK PUBLIC LIBRARY

ASTOR LENOX TILDEN FOUNDATION

500 N. 5TH ST. NEW YORK, N. Y.

1911

Ն Ա Մ ՈՒ Ս

I

1859 թվականի մայիս ամսին պատահած լերկրաշարժը մեծ թշվառութիւն եր Շամախու համար: Բավական ծաղկած և կանոնավորված նահանգական քաղաքը մի րոպեյում կերպարանափոխվեց, դարձավ ավերակ: Մտոերկրյա զորեղ հարվածը մի ակնթարթում դուրս թափեց փողոցները հազարավոր ընտանիքներ, վորոնք մինչև այդ րոպե հանգիստ իրանց տներում նստած, չգիտեցին բնութիւնն ինչ զժբախտութիւն և պատրաստել իրանց համար: Հայ, ռուս, թուրք, բոլորը խառնվեցին իրարու, և փողոցները ու հրապարակները մի րոպեյում սևացան մարդկանցով: Բարձրացավ աննկարագրելի աղմուկ, խլացուցիչ զրդրոց: Քառասուն հազար բնակիչների միաձայն գոռում ու գոչումները, խառնվելով փլաթակվող շինութիւնների թնդումների հետ, ականջներ ելին խլացնում:

Ընդհանուր աղմուկին մասնակցում ելին տնային կենդանիների աններդաշնակ ձայները: Տավարների բառանչումները, շների վոռնալը, թռչունների կչկչոցները, բոլորը, միանալով փոշիալի ողի մեջ, ահաբեկել ելին ժողովրդին:

Առաջին վտանգալի րոպեն ամենքին ստիպեց մոռանալ ամեն ինչ, նուցնիսկ չուր սրտին ամենամերձավոր արջունակիցներին: Այդ մահաբեր րոպեն մոռացնել տվեց մորն չուր զավակներին, վորոնց համար մի փոքր առաջ պատրաստ եր կյանքը զոհել: Մոտահաս վտանգի բուռն զգացմունքների ճնշման ներքո սեփական անձի փրկութիւն խնդիրը լերկրաշարժի րոպեյում խավարեցրեց, անհետացրեց ամեն ինչ: Սեփական կյանքի փրկութիւնը կուրացրել եր ամենքին:

Անցավ առաջին ահարկու րոպեն: Մարդիկ փրկված են վտանգից: Ամենքը, փլշող պատերից հեռացած, խռնվում են փողոցներում: Այստեղ միայն առաջին անգամ չուրաքանչուրը սկսում և մտաբերել չուր արջունակիցներին: Կրկին սոսկումը տիրում և ամենքին, և ահա թշվառները գունաթափված, մեռելային դեմքերով, ընդհանուր խառնաշփոթութիւն մեջ շվարված, վորոնում են իրարու:

Ողբ թնդում և հազարավոր վայվռուներով:

— Աղբերս վայ, աղբերս վայ,— բացականչում և մի կողմում մինազելի որիորդ, փետտելով չուր դիւխի մաղերը և մերկ կրծքին բռունցքներ տալով:

Սովորական ամոթխածութիւնը նրան չի նեղում այդ ընդհանր նա մոռացել և չուր ծննդավայրի ավանդութիւնը, վորը չափահաս որիորդին արգելում և ոտար տղամարդկանց առաջ բերան բանալն անդամ:

Որիորդը ուշադրութիւն չի դարձնում չուր շուրջը, չի քաշվում վոչ վոքից: Նրա ուշ ու միտքը կենտրոնացած և հողի ու քարերի մի բարձր կուլտի վրա: Այստեղ կենդանի թաղված և նրա թանգագին լեղբայրը, վոր մի բոպե առաջ նրա հետ խոսում եր, զվաճանում եր կամ դուցե կռվում: Ձեռները առաջ տարածելով, որիորդը աղաչում, պաղատում և անցորդներին, վոր ոգնեն դուրս բերելու լեղբորը հողի ու քարերի տակից: Կնչ վոք ուշադրութիւն չի դարձնում նրա աղերսալի դուռնցների վրա: Ամենքը զրաղված են իրանց մոտավորների վիճակով, լերեկ, ամենքն ունեն մի-մի ալդալիս կենդանի թաղված, անխելքութիւն և մեկից ոգնութիւն սպասելը: Տեսնելով, վոր վոչ վոք չի ոգնում, որիորդը հուսահատված ու գրեթե անզգա, շտապում և դեպի չուր կենդանի լեղբոր տարորինակ գերեզմանը: Յուր քնքուշ մատներով նա աշխատում և բարձրացնել առաջին մեծ քարը: Քարը չի շարժվում տեղից, շատ ծանր և: Քնքուշ մատներից հեղում և վարդազույն արչունը, լեղունգները փշրտվում են, բայց քարը դարձյալ չի շարժվում: Անեծք քեղ, անսիրտ քար:

Մի ակնթարթում որիորդը զգում և, վոր կանգնած և չուր լեղբոր գերեզմանի վրա: Զգում և, վոր ինքը, փոխանակ թեթևացնելու, ավելի ևս ծանրացնում և այդ գերեզմանը չուր մարմնի կշռով: Ծալահեղ սարսափը վերջնականապէս ուշաթափ և անում սիրող քրոջը, և նա, մի ճիչ արձակելով, կամենում և հեռու փախչել, բայց ծնկները չեն հնազանդվում, և գնդակահարվածի պէս փռվում և հողի կուլտի վրա:

— Կնիկս, բալաներս, այ քրիստոնյաներ, այ ձեր հերը լույս դառնա, այ, հրեա եստեղ ե,— բացականչում և ուրիշ կողմից մի տղամարդ, ցույց տալով մի մեծ գերան, վորի տակից լերկում և նրա ամուսնի գլուխը:

Դժվար և նկարագրել այդ կնոջ դեմքը: Նրա վրա ամեն ինչ կորցնելով չուր բնական ձեւը, ալլանդակվել և: Ծանրակշիռ գերանը, վոր հորիզոնաձև ընկած և նրա վրա, այնքան ճնշում և, վոր քթի

ծակերից թափվող արյունը տեղ չի գտնում հոսալու։ Մի քիչ նրանից հեռու լերեում են լերկու մանկական գլուխներ և չորս ձեռնիկներ, իրարու գրկած։ Չեռիկներից մեկում սեղմված է մի փոքրիկ խնձոր, մյուսում մի գուլչնզգուլչն տիկնիկ։

Վոդոբեյկն ամուսին, տարաբնույթ հայր։ Նա, կարծես, խելագարվել է, ուժ է անում գերանի ծայրը բարձրացնելու, սակայն անդոր է, գերանը չի հնազանդվում, համառությամբ ընկած է։ Կինը ծանր բեռան տակից արձակում և հաղիվ լսելի տնքոցներ։ Ամուսինը կուրծքը գերանին տված անզաղար ուժ է անում։ Չնր։

Այսպես շարունակվում է, մինչև վոր միջանի հարևաններ, կանխապես հավաստիանալով իրանց արյունակիցների ապահովություն մասին, շտապում են ողնելու թշվառ հարևանին։

Հարյուրավոր այսպիսի տեսարանների բնմ եր ներկայացնում Շամախին նույն ժամին, լերը լերկրաշարժ ասված աղետալի լերեվույթը կործանում եր այսօրվա հետ ընկած խղճուկ ավանը, վոր մի ժամանակ ամբողջ կովկասի պարծանքն եր չուր սքանչելի մեռաքսով և առատ պտղաբերությամբ...

Քաղաքի արևմտյան կողմում, մալախանյան անվանված թաղի փողոցներից մեկում, գտնվում էլին լերկու փոքրիկ միահարկանի հարևան տներ։ Այս տները իրանց արտաքին համեատ ու անշուք տեսքով իրարուց զանազանվում էլին մի բանով միայն, այն, վոր մեկը փողոցի կողմից ունեւր մի փոքրիկ պատուհան, մյուսը—չունեւր։ Յերկրաշարժից ուղիղ մի ժամ առաջ այս պատուհանի առջև նստած եր մի կին, մոտ լերեսունուհինգ տարեկան։ Սա զերձակ Բարխուդարի ամուսինը, Գյուլնազն եր։ Նստած եր նա մի ծնկան վրա, մյուսը ձգած դեպի սենյակի հատակը, վոր ծածկված եր ասիական գորգերով։ Փողոցից միայն նրա կիսաղեմն եր լերեում։ Միջուրեյի ախորժիլի արեգակի ճառագայթները, անցնելով լերկաթե ցանցով պաշտպանված լուսամուտի ապակիներով, սփռվել էլին նրա վրա։ Չնայելով Գյուլնազի տարիքին, նրա վոչ այնքան նիհար աչտերի վրա դեռ պահպանվում եր լերիտասարդական թարմութունը, իսկ խոշոր, սևադուլն աչքերի մեջ փայլում եր մի կրակոտ արտահայտություն։ Միխակագուլչն, նուրբ բրդից դործված շալի տակից մազերի ծայրերը հասնում էլին մինչև մեջքը։ Նա չուր ձեռում շտապով գուլչնզգուլչն գուլթա լեր հյուսում, թուրքերեն բարբառով լերգելով շամախեցի կնոջ սովորական բայտթին։

Դսող, ինձի բռնեցին,
Շամփրի վրա խորովեցին,
Մխս կերան, կշտացան,
Վռակորներս ձգեցին:

Տանը, բացի Գյուլնազից, վոչ վոք չկար: Նրա ամուսինը, Բար-
խուդարը խանութումն էր, վոր գտնվում էր քաղաքի թրքաբնակ
թաղում, իսկ մեծ վորդին, միակ արու զավակը, տասնունինգ տարե-
կան Սմբատը, դեռ ուսումնարանից չէր վերադարձել:

Փողոցում անցողներ չկային: Մանկահասակ տղաների և
աղջկերանց մի խումբ, պատուհանի տակ հավաքված, ինչ-վոր ման-
կական խաղ էր խաղում: Ստեպ-ստեպ Գյուլնազը չուր հալացքը
դտրձնում էր փողոց և նալում խաղացող մանուկներին: Մանկական
անմեղ ճլվղոցների ձայնը, հազիվ թափանցելով փակված պատուհա-
նով, հասնում էր նրա ականջներին: Այս մանուկների հետ խաղում
էր և նրա միակ աղջիկը, մոտ տասը տարեկան Սուսանը: Գյուլնազը
ծնողական զգացմունքների ամբողջ թափով սիրում և չուր Սուսանին
և սիրում և աշնչափ, վոր չի վստահանում բոլե անգամ աչքից հե-
ռացնել: Այս պատճառով, պատուհանի մոտ նստած, հսկում և Սուսա-
նին մալրական զգաստ աչքերով: Ահ, չլինի թե մեկը ընկերներեց
վորեն փռա հասցնի նրա զավակին:

Դուրեկան էր, գեղեցիկ էր փոքրիկ Սուսանը: Նա գեղեցիկ էր,
վորովհետեւ ներկայացնում էր չուր մոր, Գյուլնազի, կատարելատիպը:
Փոքրիկ աղջիկը ժառանգաբար ստացել էր բնությունից չուր մոր բո-
լոր ֆիզիկական հատկութունները, ամենաանշան մանրամասնու-
թյուններով անգամ: Բարխուդարը, ամեն անգամ աղջկա չերեսին նա-
լելիս, սովորություն ուներ ասելու. «Փառք քո զորութենին, տեր
ամենակարող աստված, եղբան ել նմանություն, կասես, մեր ու աղ-
ջիկ մի խնձոր լինեն, չերկու տեղ բաժնած»: Պակաս չեր զարմա-
նում և ինքը, Գյուլնազը ալո նմանության վրա: Նա մտաբերում էր
չուր մանկությունն ամեն բոլե, չեր նալում էր Սուսանի չերեսին:
Նրան թվում էր, թե ալո փոքրիկ դեմքի վրա, ինչպես հայելու մեջ,
տեսնում և չուր դեմքը: Նույն փալլուն, սևորակ աչքերը չերկալն
թերթերունքներով, նույն շնորհալի սրածալր քիթը, նուրբ, վաղա-
գույն շրթունքները, գեղեցիկ ալտերը, իհարկե, մանկության հատուկ
թարմությամբ:

Սուսանի հետ խաղացող չերեսաների թվում կար մոտ տասնու-
մեկ տարեկան մի տղա: Սա ամենամոտիկ հարեան «կուժ ծախող»
Հայրապետի վորդի Սեյրանն էր: Հայրապետը չուր ընտանիքով ապ-

բում եր աչն տան մեջ, վոր գտնվում եր դերձակ Բարխուդարի տանը կից:

Սուսանի և Սեյրանի մեջ նկատվում եր մի տեսակ մտերմութուն, մի մտերմութուն, վոր, չերևի, առաջացել եր չերկու մանուկների հաճախ տեսնվելուց: Այս մտերմութունը չերևան եր գալիս նամանավանդ աչն ժամանակ, չերբ Սեյրանը կամ Սուսանը կովում ելին իրանց ընկերակիցների հետ: Այսպիսի դեպքերում մեկը պաշտպանում եր մյուսին, որինակ, չերբ Սեյրանը կովում եր մեկի հետ, Սուսանը իսկուչն հարձակվում եր նրա հակառակորդի վրա, չուր փոքրիկ ձեռքերով բռնում եր նրա արխալուղի փեշերը քամակից և բոլոր ուժով քաշում: Այսպիսով նա նպաստում եր Սեյրանի հաղթութան: Իսկ չերբ Սեյրանի հակառակորդների թիվը մեկից ավելի չեր լինում, աչդ ժամանակ Սուսանը անմիջապես վազում եր Սեյրանի մօրը հաշտեցնու:

— Մարիամ բաջի, Մարիամ բաջի, Սեյրանին չերեխերքը սպանեցին,—ասում եր նա, արտասուքն աչքերում և հուզմունքից ամբողջ մարմնով դողդողալով:

Մարիամ բաջին իսկուչն դուրս եր թռչում և կովող մանուկներին իրարուց բաժանում: Սուչն պաշտպանութունը փոխադարձաբարցուչ եր տալիս Սեյրանը չուր կողմից Սուսանին, չերբ վերջինին պատահում եր մեկի հետ կովել: Իսկ այս փոխադարձ պաշտպանութունը նրանց մյուս ընկերակիցների մեջ զարթեցնում եր նախանձ, վոր շատ անգամ արտահայտվում եր բացարձակ թշնամութամբ: Սուսանին և Սեյրանին ծաղրում ելին, նրանց վրա ծիծաղում ելին և պատահում եր մինչև անգամ, վոր, ամենքը միանալով, հարձակվում ելին նրանց վրա ու ծեծում:

Գյուլնազին վաղուց եր հաշտի այս ամենը: Այս եր պատճառը, վոր նա շուտ-շուտ նալում եր փողոց: Մի առանձին ախրիժելի, միևնուչն ժամանակ դառն ժպիտ եր սահում Գյուլնազի չերեսով ամեն անգամ, չերբ նա չուր հայացքը ձգում եր Սուսանի վրա: Նա տեսնում եր, թե ինչպես փոքրիկի դեմքը բերկրութամբ փայլում և, չերբ Սեյրանը մոտենալով նրան և ձեռ-ձեռի տալով քաշում և խաղի ասպարեզը, վորտեղից Սուսանը սովորութուն ուներ շուտ-շուտ հեռանալ և քաշվել պատի տակ: Նա տեսնում եր, թե ինչպես Սեյրանը, հոնքերը կիտում եր ու դեմքը թթվացնում, չերբ վորևե բանով անբավական եր լինում Սուսանը:

Աչդ բոլորներին Գյուլնազի գլխով տեսակ տեսակ մտքեր ելին աչցնում, և նրա մայրական քնքուշ սիրտը սկսում եր բաբախել չուր գավալի ապագա վիճակի մասին: Նա կրկին մտաբերում եր չուր անցյալը,

սեփական մանկութիւնը և այդ մանկութեան հետ կապված շատ հիշատակներ: Նա կրծքի խորքից արձակում էր խորը հառաչանքներ:

Ահա այդ հառաչանքներից մեկի վայրկյանին էր, չեբբ Գյուլնազը հանկարծ դգաց մի դորեղ շարժում: Յերկար մտածել չէր կարելի, նա իմացավ, ինչ և նշանակում այդ շարժումը: Գուլբան ձգեց մի կողմ և մի ակնթարթում դուրս թռավ:

Առաջին վայրկյան նա մտածեց լուր գովակների, հետո միայն ամուսնու մասին: Վորդին—Սմբատը ուսումնարանում է, իսկ ուսումնարանը բավական հեռու չէ, ուրեմն նախ հարկավոր և վորոնել Սուսանին: Գյուլնազը վաղեց փողոց, վոր արդեն լցվել էր հարեաններով:

— Աղչի, Գյուլնազ, Գյուլնազ, ալ բոլոր մեռնեմ, բալաներս, բալաներս,—ասելով հանդիպեց նրան փողոցի դռանը մի միջահասակ էին, չերկու ձեռներով ճանկոտելով մերկացրած կուրծքը:

Սա հարեան «կուժ ծախող» Հալբապետի էինն էր, Սեյրանի մայրը, Մարիամ բաջին: Գյուլնազի մեջ կենդանութիւն չէր մնացել, նրա լեզուն կաշկանդվել էր. խոսելու ուժ չուներ: Առանց պատասխան տալու, թռավ առաջ և ընկավ Մարիամ բաջու գիւղը, ինքն էլ չգիտեր ինչու համար:

— Ձեռ քաշիր, աղջի, խելքդ գլուխդ հավաքիր, վոր տեսնենք բալաներս ինչ տեղ մնացին,—բղավեց Մարիամ բաջին, բոլոր ուժով հրելով Գյուլնազի կրծքին:

Խեղճ էինը բոլորովին ուժաթափ լեզավ, բայց վոչ չերկար ժամանակ: Մայրական սերը կրկին վերագարձրեց նրան բնական աշխուժութիւնը: Նա, գլխակոր վաղելով, հետեւեց Մարիամ բաջուն, վոր նույն վայրկյանին ինքն էլ չգիտեր, ուր և վազում:

Այս ամինը անցնում էր չերկրաշարժը պատահած բոպելին, չեբբ մարդիկ դգում էին, թե դեռ չերկիրը չի դադարել ռորովելուց: Յերկու մայրերը չգիտելին ինչտեղ էին իրանց գովակները: Գյուլնազը ալնքան շփոթված էր, վոր մոռացել էր, թե մի բոպե առաջ նրա Սուսանը խաղում էր մանուկների հետ հենց իրանց տան պատահանի առջեւ, ուրեմն այդ կարճ միջոցում նրանք չէին կարող շատ հեռու փախչել: Խեղճ կանայք, փետելով իրանց գլխի մագերը և չեղունգներով ճանկոտելով իրանց չերեան ու կուրծքը, վազում էին այս ու այն կողմը, սուգ ու շիվան բարձրացրած: Հանկարծ նրանց դեմ վաղեց մի գունաթափ մանուկ և արտասուքը աչքերում, խեղդված ձայնով ասաց.

— Մարիամ բաջի, ալ, Սեյրանը Սուսանի հետ մնացին հողի տակ, շուտ արեք հանեցեք, խեղճերի սիրտը կճաքի:

Մանուկը ցույց տվավ մի փոքր զեպի ձախ աշնտեղից, ուր ինքը քիչ առաջ անհոգությամբ խաղում էր Սուսանի ու Սեյրանի հետ։ Մանկան բերանից թռած չարագուշակ խոսքերը, սուր ասեղներ ելին, ցցված դժբախտ մայրերի սրտում։

— Բալաս վաչ, վաչ,— դուրս թռավ միաժամանակ նրանց կրծքից։ Սա մի վայրենի ձայն էր, մի ձայն, վոր կարող է միայն մոր կրծքից դուրս գալ զավակի կործանման վայրկյանին։

II

Բարխուդարի և Հայրապետի խանութները գտնվում էին քաղաքի միևնույն թաղում միևնույն շարքում, ալյուկա վոր ալստեղ ևս նրանք հարևաններ էին։ Նույն ժամին, չերբ, Գյուլնազը պատուհանի առաջ նստած գուլբա լեր գործում, նրա ամուսինը, Բարխուդարը, չուր խանութում, մինդարի վրա ծալապատիկ նստած, դադգչահի առաջ կար էր անում։

Սոտ հիսուն տարեկան բարձրահասակ Բարխուդարը, հաստ և բավական չերկայն բեղերով, սափրած չերեսով, խիտ հոնքերով, վորոնց տակ տեղավորված էին նրա շագանակագույն կոլորակ աչքերը։ Բարխուդարը ավելի նիհար էր, քան գեր, բայց նրա ալստերի տակից դուրս ցցված հաստ վոսկորները, լացն թիկունքները և բարձր ուսերը տրտաշայտում էին նախանձելի առողջութուն և ուժ։ Նա հագնում էր չերկայն թևավոր կապա, նույն ձևի արխալուզ, վորի վրա ուղիղ չերեք ծալ կապած էր կապտագույն մետաքսյա գոտի։ Իսկ գլուխը ծածկում էր բուխարայի սև մորթուց կարած չերկայն, սրագագաթ գդակով, վորի ծայրերը թե՛ ներքևից և թե՛ վերևից մաշվել էին, տեղ տեղ մորթու մազերը թափվել էր ու սպիտակ կաշին մերկացել։ Բացի Բարխուդարից, խանութում գործում էին չերեք աշակերտներ և մի քյաղզյար (ոգնական վարպետ)։ Բարխուդարը չուր փոքրավորներին և՛ սիրում էր, և՛ տոում. նա և՛ կակողությամբ էր վարվում նրանց հետ, և՛ խստությամբ, նայելով ինչ հոգեկան տրամադրություն մեջ էր։ Յեթև գո՛հ էր չուր աշակերտների վարք ու բարքից, կատարած գործերից, կատարյալ հայր էր նրանց համար։ Սիրում էր նրանց, ինչպես չուր Սմբատին և Սուսանին, պարգևներ էր բաշխում, հեաը տուն էր տանում ճաշելու, ընթերիււ կամ թեյ խմելու։ Մուշտարի չեկած ժամանակ աշխատում էր, վորքան կարելի չէ «չագիրդանա»¹ շատ պոկել։

¹ «Շագիրդանա»-ն մի փոքրիկ պարգև է փողով, վոր հին արհեստավորները սովորություն ունեյին առնել իրանց աշակերտների ոգտին մուշտարիներից։

Դսկ չերբ նա տխուր եր կամ աշակերտներից անբավական, այն ժամանակ կատաղում եր, և լինչպես: Նրա մշտական մոայլ դեմքը կարմրում եր, աչքերը արցունով լցվում ելին. նա մոռանում եր տմեն բան: Ել մկրատներ, գաղաշափեր, մոմի կուռններ, մատնոցներ, մահուդի կտորտանք չեյին մնում, վոր նստած տեղից չհասցներ հանցավոր աշակերտի գլխին: Յերբեմն պատահում եր, վոր գործ եր գնում կրակով լիք արդուկը կամ տեղից վեր եր կենում, բարձրացնում եր փոքրիկ հանցավորին մինչև չուր գլուխը և միանգամից վայր խփում գետնին: Աշակերտը զգում եր, թե իբր մի բարձր ծառից և ընկնում, այնքան չերկայն եր վարպետի հասակը: Այս բավական չեւ. պատրժվելուց հետո, հանցավորը չեւ կարող բարձր ձայնով լաց լինել, լեթե վոչ հավատացած եր, վոր չերկրորդ անգամ կպատժվի: Նա քաշվում եր խանութի մի անկուռնը, և սովորաբար այն անկուռնը, ուր ածուխ եր հավաքած և, նստելով ալստեղ, լաց եր լինում կամացուկ, մինչև վոր սիրտը հանգարտվում եր: Այնուհետև Բարխուդարը սկսում եր նրա սիրտն առնել, խրատներ տալ, իհարկե, միևնույն ժամանակ, արտաքուստ ցուլց չտալով, թե զղջում և չուր խստության մասին:

— Դիչ տղադիր, վեր կաց, ես չուխան տար տուր տիրոջը, ամա տես հո, տանց շագիրդանի չի պուք գաս:

Պատժված աշակերտը աչքերը սրբում եր և ցավը մոռանում:

Յերկրաշարժը պատահած ըոպելին Բարխուդարը դարձյալ բարկացած եր աշակերտներից մեկի վրա: Նա հենց նոր եր վերջացրել կշտին դրած մոմի կուռնները, գաղաշափերը, մահուդի կտորտանքը և ուզում եր տեղից բարձրանալ, չերբ բոլոր մարմնով դողաց և «թրբի» մեկ ել նորից նստեց տեղը:

— Ուստա, դուրս թուր, տափը տիրուն ա կլամ,— գոռաց քլարգլար Սարգիսը և, պատասխանի չսպասելով, ինքը մի վոստումով թռավ փողոց:

Բարխուդարը և աշակերտները անմիջապես հետեցին նրան:

— Սարգիս, դուքանը ձեռաց կապիր, լես տուն եմ վազում,— ասաց և գզակը գլխից հանելով (ինքն ել չգիտեր ինչու), վազեց դեպի տուն:

Տունը բավական հեռու չեր, գտնվում եր քաղաքի մյուս ծայրում: Ամբողջ ճանապարհը Բարխուդարը պիտի բարձրանար դեպի վեր, վոր մի մեծ ղժվարութուն եր նրա համար ալդպիսի դրության մեջ: Նա սկսեց չուր չերկայն վոտերին ուժ տալ: Մի քանի քալ չանած, նրան հանդիպեց Հալրապետը:

— Զրբնգ, զրբնգ, փշովեցին, Բարխուդար, տունս քանդվեց:

— Բեհէի ջառհառալընդա, դասար—փիլ¹,—պատասխանեց միայն Բարխուդարը, ուշադրութիւն չդարձնելով Հայրապետի վրա և մինչև անգամ չնայելով նրա յերեսին:

Հարեանները շարունակեցին իրանց ճանապարհը դեպի տուն: Բարխուդարը արագիլի նման եր ընթանում, մինչդեռ Հայրապետը հագիլ հազ կարողանում եր հետեւել նրան: Կարճահասակ մարդը ճարհատջալ սկսեց վազ տալ, վորպեսզի յետ չմնա յուր հարեանից:

Քաղաքը չեր հանդարտվում, փողոցները դեռ լիքն էին խառնի-ճաղանճ ամբոխով: Հայրապետը և Բարխուդարը դժվարությամբ էլին կարողանում իրանց համար ճանապարհ բանալ: Ամեն մի քաղափոխում նրանց առաջ հանդիսանում էին մեկը մյուսից զարհուրելի տեսարաններ: Մի կողմում չերեք-չորս մարդիկ փալտսի մեջ փաթաթած տանում էին բազարից դեպի տուն իրանց աղգականներից մեկի դիակը: Փալտսի ծայրերը բռնողները յաց չեն լինում, նրանց աչքերի արտասուքը չորացել է. նրանք առաջ են շարժվում լուռ ու մունջ, ինչպես գիշերաչին ուրվականներ: Մյուս կողմում մեջքից ծոված մի ծերունի, կանգնած յուր փլատակված տան ավերակների վրա, վողբում է յուր վորդու կորուստը, ուժաթափ ձեռները խփելով ալեղարդ գլխին: Այստեղ հավաքված են մի խումբ մանուկներ: Նրանք, իրանց մոր դիակը շրջապատած, մի աչնալիսի աղաղակ են բարձրացրել, վոր լսողի գլխի մազերն են ցցվում: Այնտեղ ահա, ուղիղ փողոցի մեջ տեղում, մի կին է նստած: Նա յուր գրկում բռնած է մանկահասակ աղջկա ջարդ ու փշուր չեղած գլուխը, կատաղի համբուրում է նրան: Յերբեմն բարձրացնում է յուր գլուխը և, լերկու ձեռներով բռնելով անցորդների հագուստի փեշերից, բղավում է վայրենի ձայնով.

— Տվեք ինձ, ինձ տվեք մինիկ աղջկանս, դուք եք նրան սպանել, անաստվածներ, դուք քոմակ չարիք նրան հողի տակից դուրս բերելու:

Սակայն անցորդները ուշադրութիւն չեն դարձնում նրա վրա, միայն մի վայրկյան նայում են նրա արունալի աչքերին, «գժվել է», բացականչում են և, գլուխները շարժելով, շարունակում են իրանց ճանապարհը:

Յեւ այսպես, ամեն քաղափոխում Բարխուդարը և Հայրապետը հանդիպում էին մեկը մյուսից ավելի վողբերգական, ավելի սարսափելի պատկերների և բոլոր մարմնով դողում:

Վերջապես, հասան այն փողոցը, ուր գտնվում էին նրանց տները: Դեռ փողոցի ծայրից Բարխուդարը տեսավ, վոր յուր տան հանդեպ խոնվում են մարդիկ:

¹ Այժմ յուր կյանքի հոգսումն է, իսկ սպանողորժը նրա ճարպի:

«Տուես թափվել ե, կնիկս ու բալաներս տակն են մնացել», տն-
ցավ նրա մտքով, և նա զգաց մի սոսկում: Պակաս չսարսեց և Հալ-
րապետը, բայց նույն վալրկյանին հանկարծ նրանց առաջը կտրեց մի
գունաթափ պատանի:

Սա Բարխուդարի վորդի Սմբատն էր:

— Սուսանին ել դուրս բերեցին հողի տակից, Սմբատին ել. սաղ
սալամաթ են: Միքիչ Սեյրանի գլուխը արնվել ե, ինքը լաց չի իլում,
ասում ե, չի ցավում, ծիծաղում ե:

— Բաս մե՞րդ, Մարիամ բաջի՞դ, սաղ սալամաթ են, — հարցրեց
Հալրապետը:

— Չիմ, չիմ սաղ սալամաթ են: Մարիամ բաջին ինձ ասեց, վոր
վաղ տամ ու ձեզանից խտրար իմանամ: Շուտ հասեք, նրանք նիզա-
րան են, գրտում հավաքված լաց են լինում:

Փողոցում նրանք հանդիպեցին Գյուլնազին և Մարիամ բաջուն:
Մարիամ բաջին, տեսնելով չուր ամուսնուն կենդանի և ա՛նջլաս, չկա-
րողացավ զսպել չուր ուրախությունը: Նա վազեց առաջ և ուզում եր
փաթաթվել Հալրապետի վզովը, բայց հանկարծ մտաբերեց, վոր փո-
ղոցումն ե և չկտ քաշվեց: Ինկ ամոթխած Գյուլնազը ուրախության
արտաքին վոչինչ նշան չցուցց տվավ:

— Սաղ սալամաթ են, — խոսեց, վերջապես, Մարիամ բաջին, —
Սեյրանս ու Սուսանս ազատվեցին, ողորմի մեր հարեանների մեռել-
ներին, նրանք մեկ ձեռք հասցրին, հանեցինք հողի տակից:

— Փառք աստուծու, փառք աստուծու, — ասացին միարեւրան
Բարխուդարն և Հալրապետը, իրանց չերեսների քրտինքը սրբելով:

— Ամա տունս քանդվեց, Մարիամ ջան, զրընդ-զրընդ կուժ ու
կուլաս փշրվեցին: Ռւֆ, հենց կասես վոսկորներս ելին փշրվում, հա-
վատաս, մի հատ ել սաղ չի մնացել: Պիտի վաղ տամ, տեսնեմ:

— Փիչե ե, զահլա տարիր հո, — հանդիմանեց Բարխուդարը չուր
հարեանին, — ինչ ա՛նշնորհակալ մարդ ես, մին չերեսիդ խաչահանիր,
վոր մենք ամեններս սաղ սալամաթ ազատվել ենք:

Այս ասելով, Բարխուդարը մշուսների հետ շտապեց ներս:

Յերկու հարեաններից վոչ մեկի տունը չեր քանդվել, չմիայն բակի
կողմից ցած պարիսպը փլատակվել եր կիսով չափ: Նույնպես մի քանի
տեղերից ճաքճքվել եր փողոցի պարիսպը: Այս կողմից չերկու հարե-
վանները համեմատաբար բախտավոր ելին, քան մշուս հարեանները,
վորոնցից շատերի տները կատարյալ ավերակ ելին դարձել:

Բարխուդարն և Հալրապետը, տեղեկանալով Սուսանի և Սեյրանի
մասին, շտապեցին իրանց ազգականների ու բարեկամների մոտ՝ «հալ
ովհալ» իմանալու:

Մի չերկու ժամից հետո վերադարձան և հայտնեցին, թե փառք աստուծո՞ր, ամենքը փկված են, միայն այս ինչի գլուխն և քիչ ջաղրվել, այն ինչի կուռն և դուրս ընկել և ալին:

— Ամա բանից չերեւում և, շատ մարդ և փչացել, ասում են մոտ հիսուն հոգի կա,—ավելացրեց Բարխուդարը:

— Ինչ հիսուն, սաղ քաղաքն և սուգի մեջ,—մեջ մտաւ Հայրապետը: Գնացի, Մարիամ ջան, դուքանս տեսա, մոխիր, մոխիր, հենց կասես, աման-չամաններս ձեռքով են փշրած: Սաղերը ջոկեցի, դրադ դրի: Դրուստ չերկու հարցուր կուժ և մնացել, հարցուր կուլա, վեց կարաս, տասներկու խաշխաշի գավաթներ, ե՛, մին ել քսանութ գիլասաբի աման, մնացածը «հլուֆֆ», թո՛ղ:

III

Քաղաքը բավական հանդարտվել էր, ցերեկվա խլացուցիչ աղմուկի, զրդոցի փոխարեն այս ու այն կողմերից լսվում էին լալու հանդարտ ձայներ: Իսկ քաղաքի հեռավոր մասերից, թրքերի թաղից չերբեմն-չերբեմն բարձրանում էին ծնծղաների և թմբուկների հնչուններ: Կանանց, տղամարդկանց և չերեխաների «շահ Հլուսեխին, վահ Հլուսեխին» բացականչող ձայները, խառնվելով այդ հնչունների հետ և տարածվելով խավար մթնոլորտի մեջ, մի տեսակ անբացատրելի դարհուրանք էին ազդում:

Սա թուրք դժբախտ ընտանիքներն էին, վորոնք վողբում էին իրանց ազգականների հանկարծակի կորուստը:

Ողբ բավական մաքրվել էր: Փլատակված շինութչուններից բարձրացած փողին նստել էր գետնին: Յերկինքը պարզ էր, լուսին չկար: Դժբախտացած քաղաքի վողբերվության վկա աստղերը պայծառությամբ պսպղում էին: Բնակիչները—վոմանք իրանց տների բակերում, վոմանք փողոցներում, բաց ողի տակ կամ վրանների մեջ—պատրաստվում էին հանգստանալու ցերեկվա չարչարանքներից հետո: Վոչ վոք չեր համարձակվում լուր տունը մտնել, ամենքը չերկուղ ունեյին չերկրաշարժը կրկնվելուց:

Բարխուդարի և Հայրապետի ընտանիքները վճռեցին այս գիշեր միասին անցկացնել: Դուլլահադը, Մարիամ բաջու ոգնությամբ, սփռելով բակում, խորտակված պարսպից քիչ հեռու, մի քանի կապերտներ, բավական ընդարձակ տեղ էր պատրաստել չերկու ընտանիքների համար:

Բարխուդարի և Հայրապետի ընտանիքների մեջ կար մի անկեղծ

բարեկամութուն նահապետական ձևով: Յերկու հարևան ընտանիքները մոտ քսան տարի չեր, վոր խաղաղ և անխախտ շարունակում էին այդ բարեկամութունը: Քսան տարիներ ապրելով միասին, նրանք այնչափ ընտելացել էին իրարու, վորչափ հաղիվ կարողանան ընտելանալ չերկու աղգահան ընտանիքներ: Մեկի տխրությունը ընականաբար տխրություն էր պատճառում մյուսին, ուրախությունը—ուրախություն:

— Մի հատ քեզ պես հարևանը ինձ համար թանկ է, քան տասը աղգականներ, — դեպքը պատահած ժամանակ Հայրապետը չեր մոռանում կրկնել Բարխուդարին:

Յեթե պատահում էր, վոր նրանցից մեկը այս կամ այն ձևերով զուլջան պատճառով ընկնում էր նշութական կամ բարոյական նեղ դրություն մեջ, իսկույն մյուսը, առանց հարցնելու, աշխատում էր չուր հարևանին գուրս բերել նեղությունից:

— Բարխուդար:

— Հը՞մ:

— Ախար չերեկ ելի «սուխարի» (ժլատ) Սարգիսը բաղարում բըռնեց ինձ:

— Պատճառը:

— Դուքանի քրեհ է ուզում:

— Լավ:

Յեվ Բարխուդարը մյուս որը, մի կերպ հաշիվը վերջացնելով «սուխարի» Սարգսի հետ, Հայրապետի ոճիքը ազատում էր նրա ձեռից:

Այս սերտ բարեկամության շնորհով շատ հազիվ էր պատահում, վոր չերկու ընտանիքները նեղ դրության մեջ մնալին:

— Ունաչնություն ունաչնությանց, այսոր բաղումն ենք, վաղը հողումը, — կրկնում էր Բարխուդարը ստեպ-ստեպ:

Մյուս հարևանները, տեսնելով Բարխուդարի և Հայրապետի այս բարեկամությունը, զարմանում էին, մանավանդ նրանք, վորոնք ապելի մոտիկ էին ծանոթ չերկու հարևանների ընավորությանը: Այսպիսիների համար հանելուկ էր, արդյոք ինչն է նպաստում Հայրապետի և Բարխուդարի այդչափ սերտ բարեկամությանը: Նրանք չերկար միջոց իրարու հետ վիճաբանում էին այս մասին: Վերջ ի վերջո, իրանց կարծիքով, մի կերպ իբրև թե հանելուկը բացատրեցին:

Առաջ Հայրապետի ու Բարխուդարի հարևանները այսպես էին դատում:

— Տանձ ու խնձոր մի ծառի վրա ո՞վ է տեսել: Ախար մինը կրակի կտոր-գալլ է, մյուսը գլուխը բոշ-վոշխար, լարաբ թնչպես են իրարու աչքը մտել:

Իսկ հետո, չերբ, իրանց կարծիքով, գաղտնիքը իմացան, այսպես ելին դատում։

— Մինը եշ ե, մշուսը փալան։

Այսպես թե աչնպես, Հայրապետը և Բարխուդարը բարեկամներ ելին, և այս բարեկամութունը իրավունք եր տալիս նրանց ընտանիքներին միասին գիշերելու։

Բարխուդարը նստած եր փափուկ մինդարներից մեկի վրա։ Նա, մի կռուր բարձին հենած, մշուս ձեռով չերկաչն ու բարակ չիբուխը բռնած, մտածողության մեջ թաղված, ծխում եր։ Դադատանի դառն թամբաքուրի ծուխը, քուլա-քուլա դուրս սրնթալով նրա հաստ բեղերի տակից, վոլոր-մոլոր պտույտներով բարձրանում եր խաղաղ ողի մեջ։ Ամեն անգամ ծխի քուլաները բերանից դուրս արձակելու ժամանակ, Բարխուդարը զուխը բարձրացնում եր վեր և, կրկին ցած ձգելով, «չըրթ» թքում գետնին։ Հայրապետը նստած եր նրա դեմ։ Այս մարդը նույնպես ինչվոր մտածմունքների մեջ եր, ինչպես այդ չերեռում եր նրա ճակատի կնճիռներից։ Յերկաչն տերողորմաչի սև ու խոշոր հատիկները, կանոնավոր կերպով պտույտ գալով նրա ձեռում, չըխկչխկում ելին միատեսակ ձայնով։ Կար մի տեսակ ներդաշնակութուն այդ չխկչխկոցների և Բարխուդարի բերանից դուրս չեկող ծխի քուլաների մեջ։

Սմբատը, մի կողմը քաշված, ճրագի առաջ ինչվոր գերք եր թերթում։ Նրանցից մի փոքրիկ հեռու Մարիամ բաջին և Դուլյնազը, քիթ քիթ տված, ընթերիքի պատրաստութուն ելին տեսնում, չերբեմն իրարու հետ քչփչալով։ Սուսանը և Սեյրանը պառկած ելին Բարխուդարի ձախ կողմում, ջոկ-ջոկ անկողիներին մեջ։

Սեյրանի գլուխը և ձախ աչքը փաթաթված ելին կարմիր թաշկինակով։ Սուսանը բոլորովին անվնաս եր պրծել։

Վտանգից փրկված մանուկները, իրարու դեմ պառկած, խոսակցում ելին մի քանի ժամ առաջ իրանց գլխով անցած փորձանքի մասին։ Նրանք խոսում ելին աչնալիսի սառնասրտությամբ, վոր կարող եր ամաչեցնել հասակավորներին։

— Յես հողի տակ չլսեցի կարմիր կովի ձայնը, — ասում եր Սեյրանը։

— Յես լսեցի. նա մին բառաչում եր, մին բառաչում եր, վոր ջանս դարձանդում եր, — պատասխանեց Սուսանը։

— Ի՞նչպիսի կով եր. պոզեր ունե՞ր։

— Ունե՞ր, ունե՞ր, ամեն պողը են ծառի բոլի, — Սուսանը չուր փոքրիկ ձեռով ցույց տվավ բակում գտնվող կանաչադարդ թթենին։

— Աչքեր ել ունե՞ր, — կրկին հարցրեց Սեյրանը։

— Բաս, բաս, աչ ետպես, — Սուսանը վերմակի տակից հանեց չերկու ձեռները և, նրանց ծալքերը իրարու մոտեցնելով, կոներով մի-շրջանակ կազմեց:

— Յես պողերն ել տեսա, գլուխն ել տեսա, աչքերն ել տեսա, — շարունակեց Սուսանը, — չիմ տեսա, չիմ Սեյրան, նա բերանը բաց եր արել ու ինձ ասում եր. «Սուսան, Սուսան, չես քեզ կուլ կտամ, իմանում ես»: Սեյրան, նրա բերանից, քթի ծակերից, աչքերից մին կրակ եր փչում, մին կրակ եր փչում, վոր կասես, մեր են մեծ թո-նիրն եր: Դու տեսել ես մեր մեծ թոնիրը:

— Հա, տեսել եմ:

— Իմանում ես, վոր հաց թխելիս նրա մեջ ալովը ինչպես ե «գուլի-գուլի» անում:

— Հա, տեսել եմ, իմանում եմ:

— Այ, կովի բերանի կրակն ել հենց ենենց «գուլի-գուլի» եր անում: Իմանում ես: Բաս, լեզուն, ել մի ասա, վաճվաճ. հենց կասես, վոր նոր թխած կարմիր հաց լինել:

— Սուտ ես ասում, չես չեմ հավատում, — ընդմիջեց նրան Սեյ-րանը, ուղղելով չուր գլխի թաշկինակը:

— Յես եմ սուտ ասում, չեեեե, չեեեե, — բարկացավ Սուսանը, գլուխը բարձրացնելով և ձեռներով ճակատի վրա թափած գան-գուր մազերը հետ դարսելով:— Բաս չեմ իմանում, վոր տափի տակին կարմիր կով կա: Ձեմ իմանում, վոր չերը վոր մարդիկ կարմիր կովին շատ են կթում, ել նրա պստիկ բալի համար կաթ չեն թողնում, կովը հրստովում ե մեզ վրա: Ձեմ իմանում, վոր պողերով տափը ժաժ ե տա-լիս ու մեզ ել տակովն ե անում ետորվա պես: Հը՞մ, հը՞մ, չեմ իմանում:

— Բեզանից ել լավ եմ իմանում, ինչպես չեմ իմանում, ամա դու ելի սոտ ես ասում, ինչու վոր նրան հողի տակը իսկի չես տեսել:

— Սուտը դու չես, վոր չես հավատում: Սուտ, սուտ, սուտ:

— Ուտես հավի կոտ, հը՞ր, դեհ, լավ եր, — բարկացավ Սուսանը և կարմրեց:

— Հա հա հա, — կշկշաց Սեյրանը:

— Ծիծաղիր, ծիծաղիր, անհավատ, հարցրու հայրիկից:

— Ելի թիչ կա, ինչ՞ի համար եք կռիվ անում, — մեջ մտավ Բար-խուդարը, վերջապես չիբուխը հանելով բերանից և կշտին դնելով:

— Սեյրանը չի հավատում, վոր տափի տակին կարմիր կով կա:

— Սուտ ե ասում Սուսանը, չես հավատում եմ, — արդարա-ցավ Սեյրանը:

— Հա, կա, բալաներս, բաս վոր չլինել, ետոր տափը ժաժ

կղանք, — ասաց Բարխուդարը, քաղցրութեամբ շոյելով Սուսանի մազերը և համբուրելով նրա ճակատը:

— Ո՞վ եր հրսոտացրել կարմիր կովին, վոր մեզ հողի տակ թողեց, — հարցրեց Սեյրանը:

— Ձեզպես չար ու կովարար լերեխերքը:

— Մենք ի՞նչ ենք արել, վոր ասում ես:

— Ել ինչ պիտի անեք. մեր խոսքը չեք լսում, մեր ասածը չեք կատարում, չարութիւններ եք անում, լերեխաների հետ կռիվ եք անում ամեն որ, ալ ինչ եք անում:

— Յես իսկի կռիվ չեմ անում, — հակառակեց Սուսանը:

— Յես Սուսանին ենք ան հմ սիրում, ենք ան հմ սիրում, վոր չեմ ուզում ինձանից հեռանա, ինչո՞ւ պիտի կռիվ անենք, — ավելացրեց Սեյրանը:

— Շատ լավ եք անում, շատ լավ եք անում, բալաներս, ուրիշ լերեխաների հետ ել եզպես սիրով վարվեցեք, նրանց հետ ել կռիվ մի անեք:

— Իրանք են մեր հետ կռիվ անում, մենք իսկի կռիվ չենք անում, — պատասխանեցին միաբերան մանուկները:

— Մեզ փախըլութիւն են անում նրանք, — շարունակեց Սեյրանը, — հենց տեսնում են, վոր չես ու Սուսանը մի տեղ խաղ ենք անում, թափվում են մեզ վրա, ծիծաղում են, մեր աչքերին հող են ածում, մեզ «հըռհըռ» են կանչում: Մենք ել հրսոտվում ենք նրանց վրա ու կռիվ անում: Այ, են ուրը թափառողանց Ջհանգիրը ուղում եր Սուսանի մազերից քաշի, տմա հենց վոր չես մոտեցա, մի սիլլա տվի, մի սիլլա տվի, վոր մի բաշ փախավ իրանց տուն:

— Ի՞նչ ելիր խոսում, Սուսի ջան, Սեյրանի հետ հողի տակ, — հարցրեց Հալրապետը, վերջապես, ընդհատելով չուր տերողորմչալի չխկչխկոցը:

— Ի՞նչ ելի խոսում, հա, չե չե, չեմ իմանում. միտս չի, Սեյրանը կասի:

— Խոսում չեի՞նք, լաց ելինք իլում, — մեջ մտավ Սեյրանը:

— Հերիք ե, Սեյրան, քիչ խոսիր, ալ տղա, գլուխդ կցավի, — շընջաց Մարիամ բաջին, մոտենալով չուր վորդուն:

Հետո նա, շալը բերանին պահած, մոտեցավ չուր ամուսնուն և ցած ձայնով ավելացրեց.

— Այ մարդ, լերեխիս մի թողնիր, վոր հողի տակ մնալը միտը գցի, ախար կզարգանդի ու հետո կհիվանդանա:

— Բո բանը չի, թող ինչքան ուզում ե՛ խոսի, սիրտը կպինդա-

նա, մին ել, վոր կմեծանա, կմոռանա, — ասաց Հայրապետը — Ասա, բալաս, Բնչպես մնացիր հողի տակ, Բնչ ելիք խոսում:

Սեյրանը, կարծես, հենց մի աչքալիսի առիթ եր վորոնում: Նա գլուխը բարձրացրեց, ծալտպատիկ նստեց անկողնի մեջ և աչքան սկսեց:

— Սուսանը տիկին-տիկին եր խաղում Սուսամբարի, Թաղուհու, Զողաուի, Սապանի, Խաթաչի, Նուրջիի ու Հուռուսիկի հետ, չես ել թամաշա ելի անում: Մին ել տեսնենք «գլուռ-գլուռ» չերկինքը դուռ-դուռեց, տափը լըխլխեց, գլուխս շուռ տվալ, վոտի վրա կանգնել չկարողացա: Զիմ փախան, չես ու մեկել Սուսանը մնացինք: Յես ել կփախչեի, ամա Սուսանը մնաց, չեկալ կալալ շորերիցս, պոկ չեկալ, չես ել չկարողացա վոտ փոխել: Մին վախտ տեսնենք Ախշամանաց-դուռը «թարախկ» մեղ վրա ընկալ, մի քիչ գլխիս կալալ, ամա մին ցավացրեց, մին ցավացրեց, վոր չես հառաչ տվի ու տեղնուտեղը ընկա: Սուսանն ել ընկալ իմ կողքին: Խեղճը մին լաց եր իլում, վոր մազերս դիք-դիք եր կանգնում, սիրտս մըղկըտ-մըղկըտ եր անում: Մին ել տեսնեմ «գլուռ-գլուռ» հողը սելի պես թափվեց մեր գլխին, ամա Ախշամանաց դուռը ընկած եր մեղ վրա ու չեր թողնում, վոր հողը մեղ շատ դուռ անի: Սուսանը վախուժեցինց ինձ դուջ արալ, «ախ մամա, վաջ մամա» կանչելով:

— Հետո, հետո, հա, տեղս նեղ չեր, ամա գլխիս ճղված տեղը շատ ցավում եր, նաֆասս ել մին քիչ փաթաթվում եր: Սուսանը ասեց. «Սեյրան, դա տափի տակի կարմիր կո՞վ ե, ելի հրստով և մեղ վրա»... Հետո. հետո, չես ասացի. «Սուսան, չեկ մենք հստեղից դուրս դալուց հետո, ել հարուժչուն չանենք, կարմիր կովին չհրստացնենք, չերեխաների հետ կռիլ չանենք, չիմին սիրենք»: Սուսանը ասեց. «Հա, կսիրեմ, կսիրեմ, չիմ չերեխաներին կսիրեմ, մինիկ չեղբորս արեւը վկա կսիրեմ. թող մին աղատվենք, թող մինիկ մամիս չերեսը տեսնեմ»:

— Ես վոր ասեց, ելի լաց իլալ, չես ել լաց իլա, չերկուսներս ել ձեն ձենի տվինք ու լաց իլանք: Իմ խեղճս գալիս եր Սուսանին: Հետո... հետո, հետո Բնչ իլալ, հա չեմ ասիլ:

Սեյրանը, վերջին խոսքերը ասելով, գլուխը ցած թեքեց և սկսեց ամոթխաժուժյամբ աչքերի տակով նայել Սուսանին: Նրա աղանջները և չերեսը կարմրեցին: Սուսանը աչքերը պլշած, ուշադրությամբ լսում եր նրան:

— Հետո Բնչ իլալ, — հարցրեց Հայրապետը, ձեռքերով շոյելով Սեյրանի գլուխը:

— Հետո, չես դռնի տակից ձեռներս մեկնեցի, դուջ արի ու պաչեցի, ել նրանից հետո ինչ իլալ, ինչ չիլալ, միտս չի:

— Ո՞ւմին պաշեցիր:

— Սուսանին:

— Այ դռնադ, — բացականչեց Հայրապետը, աջ ձեռը դնելով լուր վորդու ուսին և ուղիղ նայելով նրա աչքերին:

— Սուտ, սուտ, սուտ և ասում, նա ինձ չի պաշել, — մեջ մտավ Սուսանը, վորի գեղեցիկ թշերը, վոր առանց աչքի կարմիր ելին, Սելրանի խոսքերից հետո, վարդի գուշն ստացան:

— Դու չես սուտ ասում, պաշել եմ, միտդ չի:

— Լավ ե, լավ, մի հրստովի, Սուսի ջան, ինչ անենք վոր պաշել ե, չեղբայրը քրոջը կպաշի ելի, — հանգստացրեց մանուկներին Բարխուդարը, քաղցրութամբ, նայելով նրանց չերեսին: Մանուկները լռեցին, Բարխուդարը չիբուխը կրկին վառեց և կրկին ընկավ մտածողության մեջ:

IV

Ընթրիքը պատրաստ եր: Մարիամ բաջին և Գյուլնազը բաց արին մեջտեղ կապտագուշն, մաքուր սփռոցը և վրեն շարեցին տեսակ-տեսակ ուտելիքներ: Իրարու մրցմամբ չերկու տանտիկիներն ինչ-վոր ունեյին բերին մեջտեղ. գետնախնձոր, քամած մածուռ, չեփած հավ, վոչխարի խորոված, խաշած ձվեր, թթվեղեն, կանաչեղեն: Իսկ Գյուլնազը լուր կողմից այս բոլորը ղարդարեց խաղողի թուռնդ ողիով լիքը մի մեծ շշով, վոր նա բերավ ու դրավ ուղիղ լուր ամուսնու ծընկան առաջ: Բոլորը պատրաստելուց հետո, Մարիամ բաջին ու Գյուլնազը քաշվեցին մի կողմ:

Վերջապես, ընթրիքը սկսվեց, ողու բաժակները մի քանի անգամ լցվեցին ու դատարկվեցին: Կարծես, չերկու հարեանները կամենում եյին ջնջել իրանց սրտերից ցերեկվա անցքից փնացած ծանր տպավորութունը:

Հայրապետի գլուխն ավելի շուտ տաքացավ, քան Բարխուդարինը: Բանն այնտեղ հասավ, վոր նա մինչև անգամ մոռացավ լուր կուժ ու կուլան: Այս բավական չե, նա լուր արխառն գլխից հանելով մորթու գդակը, փորձեց Քեռուղովի չերգերից մինը կըլկլացնել: Սակայն Բարխուդարը, այս նկատելով, հիշեցրեց նրան, թե անհարմար ե, վորովհետև սուգ ե, բոլոր հարեանները դրսումն են, կլսեն և կծիծաղեն:

— Ափսոս, ափսոս, Բարխուդար, եշխս միջուժս թողիր: Այ հասց, հաց, փուչ և փուչ աշխարհս. Տեր-Մաթալն ասում ե. «Ե ասե հող եյիր ու հող դառնաս»: Եհ, քեֆդ քոք պահիր, ինչ կա, փառք աստուծո, մեռնեմ նրա գորութենին, նա ուզում եր մեզ խրատել ու խրատեց,

լով խրատեց, շատ լավ խրատեց: Ամա կուժ ու կուլաս զըրընդ զըրընդ հաա, փահ, փահ, սիրտս եր մղկառում, չունքի դե կլի ապրանք ե կլի: Ադա, հէ, ջառ ու ջհաննամը, խալիսը կտորվեց, կուժ ու կուլաս մատաղ Սեյրանիս ու Սուսանիս գլխի մի մագին:

Արատասանիով այս խոսքերը, Հայրապետն ողու բաժակը միանգամից դատարկեց և, չուր կարճիկ բեզերը սրբելով, թաշկինակը ձգեց ուսերին:

Բարխուդարը ուտում եր և թեև ըստ լիբուլթին լսում եր հարեանի ճառարանութչունը, բայց ներքուստ, կարծես, միտքը ուրիշ բանով եր զրադված:

— Ինչքան վոր, Բարխուդար ջան, ֆիքը անես, հարյուր կուպեկը կլի մի մանեթ ե. հոդ, հոդ, ամեններս հող ենք դառնալու: Մտրիամ ջան, Գյուլնազ խանում, կոնծեցեք, վոր սիրտներդ բացվի, մոռանաք հստովա տեսածներդ:

Բարխուդարը լուս ու մունջ ընթրում եր, լերբեմն ողին կում անելով քիչ-քիչ: Յերը Հայրապետը լռեց, նա հանկարծ արագութչամբ սրբեց բեզերը և, մի ձեռով բարձրացնելով ողու շիշը, մշուսով բաժակը, ասաց.

— Հայրապետ, մտքովս մին բան ե անցնում, մին թաս ել արադ ամիր, տեսնենք:

— Թող հաղարն անց կենա, ամա խեր իլի: Ասում ես, վոր անծն: Ոհո, բաշ չուստա, ջանս դուրս գա, ինչ անեմ, ճարս կտրած, պիտի զժվար հրամանդ կատարեմ:

Հայրապետը բաժակը պահեց, Բարխուդարը լցրեց մինչև ծալը:

— Դեհ, հիմա կարող ես հրամայել, Բարխուդար ջան, տեր աստված, դու խերը վերաբերես:

— Խեր չիլած, ինչ կա, փառք աստուծո: Հայրապետ, առաջ ես թասը խմենք մեր Սուսանի և Սեյրանի կենացը: Վոդորմած աստվածը մեր ծերութչան որում մեզ խնայեց ու նրանց մեզ մեկ ել նորից բաշխեց, թոդ որես դեն ել պահի ու պաշտպանի մեզ համար:

— Յերկու ձեռներով պինդ պահի, աֆարիմ, աֆարիմ, Բարխուդար, ճարտար լեզվիդ դուրբան, — բացականչեց Հայրապետը, միանգամից պարպելով բաժակը:

— Հայրապետ, քանի տարի լե, մենք միասին հարեանութչուն ենք անում, հաքան ժամանակ, գոհութչուն աստուծո, մենք մի անգամ ել իրարուց չենք նեղացել:

— Իսկի, իսկի. ով ե տեսել, վոր լես քեզ կամ դու ինձ ասած իլես. «այ մարդ, վոտդ երվում ե, մի կողմ դիր», — ընդմիջեց Հայրապետը:

— Ինչպես մենք, ենպես ել մեր ողլուշաղը, ապրել ենք սեր, միաբան, վոր թե աստծուն և դուր չեկել, թե մարդկանց, — շարունակեց Բարխուդարը։— Ինչ արած, վոր չեղրայր չեմ ունեցել, աստված վկայի, վոր քեզ չեղրորից ալիլի չեմ սիրել։ Ե՛հ, Հայրապետ, չեմ իմանում չեթե մերս վոր ինձ պես մեկն ել ծներ, չես նրա հետ ինչպես պիտի վարվելի։ Մտիկ եմ տալիս հիմիկվա աշխարհին, մտիկ եմ տալիս հիմիկվա չեղրայրներին ու վողորմի չեմ տալիս մորս հոգուն, վոր նա ինձ համար չեղրայր չի օնել։ Ո՛վ և իմանում, նա չել ինձ համար ուրիշներ չեղրորց նման չեղրայր կլիներ, վոր հիմա փողի համար իրարու գլուխներն են ծաղում, ինչպես հրեն Ղարգուշանց Յեփրեմը ու Գրիգորը։ Աստված վկա, ամեն մի մտիկ անելիս հիմիկվա աշխարհին, վոր միտք եմ անում, մաղերս դիք-դիք են կանգնում, մարմինս փշաքաղում ե։ Հայրապետ, ցավերս չեւ են գալիս, բաշխիւր, Հայրապետ, մարդս կեղտոտվել և, մարդս փչացիւ ե։ Ել հալա, ել արոււ չի ֆնացել, նամուս ասված բանը ճրագով վոր փնտռես, չես կարող գտնել, չկա։ Բաս աստված ինչ անի, վոր, ես ամենը տեսնելով, ետրվա պես պատիժ չհասցնի մեր մեղավոր գլխին։ Թացն ել երվում և չորի կրակով։ Ել գողութուն ասես, մարդասպանութուն ասես, խաբերալութուն, սուտ ասել, ել մի մեղք չի ֆնացել, վոր չաննա։ Չմուշկ կարողը փթած կաշուց և կարում, դերձակը մուշտարու չուխից ալիւացած մահուդն և գաղգյահի տակը կոխում կամ «մինգաբալթի» անում, ել վոր մինը ասես։ Հիմա դե, ել ինչ չերկարացնեմ, Հայրապետ, խոսքս նա չե, վոր ես ամենը տեսնելով, մեր քաղաքի խալխից զզվել եմ և եդ պատճառով ե, վոր ետրվա որը չես վո՛չ մի մարդու հետ գործ չեմ ուզում բռնել։ Մի հատ մարդ, վոր իմ աչքումս հալալ և չերեւում, Հայրապետ, դա դու չես։ Չասես, վոր չերեսիդ եմ ասում։ Ուրեմն, ես թասն ել խմում եմ, վոր աստված մեր չեղրայրութունը մինչև մեր մահի դուր հաստատ պահի...

— Ամեն, ամեն, — կրկնեցին մյուս կողմից Մարիամ բաջին և Գյուլնազը միաբերան հազիվ լսելի ձայնով։

Սմբատը, Սուսանն ու Սեյրանը արդեն քնած ելին։ Իսկ ինչ վերաբերում և Հայրապետին — նա, ողիի ազդեցութունից փալլող աչքերը չռած, ուշադրութեամբ լսում եր Բարխուդարի ճառը։ Վերջին խոսքերը լսելու ժամանակ խեղճ մարդը այլևս չկարողացավ զսպել յուր արտասուքը։ Նա սկսեց փոքրիկ մանկան նման հեկեկալ։

— Հիմա չերեխալի պես լաց ես իլում, ամա ինչվոր մտքովս անցնում ե, նա չել վոր ասեմ, Հայրապետ, պիտի ծիծաղես։ Անպատճառ կծիծաղես, ինչու վոր շատ լավ բան եմ ասելու։

— Աստ, տաս, Բարխուդար ջան, Իմ լեզուս, Տեր-Մաթաթի ասած, Ջաքարիալի լեզվի պես պապանձվել է, չես խոսելու հնար չունիմ:

— Միտքս են է, Հայրապետ, վոր մենք պիտի աշխատենք մեր բարեկամութունը պիտի պահել, վոր չլինի թե մեր միջովը սև կատու անցկենա: Մենք պիտի ենպես մոտիկ ապրենք, վոր ջուրը ջրութենով մեր արանքով չանցնի: Լսում ես. ջուրը ջրութենով: Հիմա դու կհարցնես, դա ինչպես կլինի: Ականջներդ լավ բաց արա, Հայրապետ ու լավ խիր, տես ինչ եմ ասում: Դու քնում ես, այ մարդ:

Իրավ, Հայրապետը, կարծես, ուզում էր քնել: Նրա կողերը հոգնածութունից և ողորի զորութունից այնքան ծանրացել էլին, վոր չէր կարողանում աչքերը բաց պահել: Իսկ տանձի կոթի պես թուլացած շլինքը ուժ չուներ, վոր նրա գլուխը ուղիղ պահեր, ուստի վերջինը տատանվում էր այս ու այն կողմ:

— Մի քիչ գլուխս թարաղ չի, ամա տաս, աստ, Բարխուդար, խոսքերիցդ մինն էլ բաց չեմ թողնում:

— Թարաղ պահիր, տես ինչ եմ ասում:

— Հըբ'...

Հայրապետը գլուխը մի կերպ բարձրացրեց, կողերը հոնքերի հետ ուժով քաշեց դեպի ճակատը և նայեց Բարխուդարի չերեսին: Ճրագի զեղնադուլն լուսո առաջ նրա կարմրած աչքերը փայլեցին:

— Շատուց է, վոր տեսնում եմ իմ Սուսանիս և քո Սեյրանիդ մեջ կա մի մոտավորութուն. նրանք իրարու հետ ենպես են վարվում, ինչպես մի հորից ու մի մորից ծնվածներ: Յեկ, Հայրապետ ջան, մենք ել մեր ձեռքով ես չերեսաների սերը հաստատենք և մեր բերանով որհնենք: Եսորվա որը նշանավոր է, չեկ Սեյրանին ու Սուսանին հենց ես գիշեր իրարու հետ կապենք ու աստծուն բախշենք: Յես Սուսանիս բախշեցի քո Սեյրանին, Սուսանը, փառք աստուծո, որեցոր չափահասանում է: Եսոր եզուց նրան, մեր քաղաքի սովորութունն է, պիտի գցենք տուն, վոր լազ տղի չերես չտեսնի, ինչպես վոր աղջկա պարտքըն է և ինչպես վոր մեր պատիվն և ուզում: Ամա չես խտակ սրտիցս խոսք եմ տալիս, վոր Սուսանս Սեյրանինը կլինի: Իմ ասածս ասած է, արածս ել արած. խոսքիցս հետ չեմ կանգնիլ, չեթե Սեյրանիդ ենպես կմեծացնես, վոր նա մեր քաղաքի «կապը կտրածների» պես տղա չդուրս գա: Լսում ե՞ս: Դե, Հայրապետ ջան, ինչ կասես, լավ միտք եմ արել, թե՛ չե:

Բարխուդարի խոսելու ժամանակ Դյուլնագի և Մարիամ բաջու քշփոցը քանի գնում այնքան կենդանանում էր:

Յերբ Բարխուդարը, լուր խոսքերը ավարտելով, դիմեց Հայրա-

պետին, հարցնելով նրա կամքը, վերջինը մի քանի վայրկյան վռչինչ-չապտապտանեց: Նա ապշած նայում եր չուր հարևանի չերեսին: Հան-կարծ սթափվեց, գդակը գլխից վերցրեց և խփեց գետնին:

— Մարիամ ջան, Մարիամ ջան, մի մոտ չեկ, հստեղ վաղիր, մոտս, ալ, հասն հո, հստեղ կանգնիր:

Մարիամ բաջին դարձացած մոտեցավ չուր ամուսնուն և կանգ-նեց նրա մոտ, մի ձեռով շալի ծայրը բերանին պահած: Հայրապետը բռնեց նրա արխալուղի փեշից, կարծես, վախենալով, մի գուցե փախչի:

— Մարիամ ջան, դու քո հոր աղջիկը չես իլի, մարգու զավակ չես իլի, թե վոր սուտ ասես: Զիլավ, հալա մին չերեսիդ խաչակնքիր տեսնեմ, հաս, եղպես: Դեհ, Մարիամ, ցավդ առնեմ, հիմա ասա, քա-նի-քանի անգամ եմ չես ֆիքքր արել հենց Բարխուդարի ասածը: Հը՞մ, միտդ չի՞, ասա ելի, լալ հո չես. հը՞մ, քանի անգամ եմ քեզ ասել, վոր լավ կլինի մեր Սեյրանին Սուսանի հետ բեթիգֆյաբուա անենք: Ասա ելի...

Մարիամ բաջին դեպի Բարխուդարի կողմը գլխով նշան արավ թե ճշմարիտ և ասում Հայրապետը:

— Զեհ, չե, չիլավ, լեղվովդ ասա: Խոսիր, խոսիր, հաջաթ չի, մի ամաչիր,—հրամայեց Հայրապետը:

— Դորթ ե ասում, շատ և ասել,—փնթփնթաց քթի տակ Մա-րիամ բաջին:

— Լսում ես, Բարխուդար: Դեհ, հափ-հափ հուռաւ, ես թասն ել կխմենք Սուսանիս և Սեյրանիս բեշիգֆյաբութմի համար:

Մարիամ բաջին մոտեցավ Գյուլնազին: Յերկու տանտիկինները, ոգուտ քաղելով հաջող դեպքից, վերջապես, կամեցան դոնե առժամա-նակ արձակել իրանց լեզուների կապը:

— Հըմ, ինչ կա քըչփըչում եք, խոսեցեք, տեսնենք, դուք ինչ եք ասում,—դիմեց նրանց Բարխուդարը:

— Աստված շնորհավոր անի, բախտավոր լինեն, մեծանան, պսա-կենք, ծլեն, ծաղկեն, մենք ել խեղճ ենք, տեսնենք մեր ես կարոտ աչքերով ու ուրախանանք,—խոսեց Մարիամ բաջին բարձր ձայնով:

— Այ ախչի, թող մի բան բերենք, վոր բերանները քացրաց-նեն,—մեջ մտավ Գյուլնազը, մի ձեռով շալի ծայրը բերանին բռնած, մյուս ձեռի արմուկնով բռնելով Մարիամին:

— Մուրաբաներից բերեցեք, տեսնենք,—հրամայեց Բարխուդարը:

— Թո՛ղ չես բերեմ,—ասաց Գյուլնազը, տեղից բարձրանալով:

— Զե, թող չես բերեմ,—հակառակեց Մարիամ բաջին, բռնելով Գյուլնազի թևից և կամենալով կրկին նստեցնել չուր տեղը:

— Չէ, չես կրերեմ:

— Չէ, չե, մերը լափն է, նոր եմ չեփել:

— Մերը նաբինջի չե:

— Մերն ել վարդի չե:

Յերկու տասնիկինները մի քանի վայրկյան աչտաչտ վրա կանգնած հակառակվում էլին, իրարու կրծքին հրելով: Վոչ մեկը թույլ չէր տալիս մյուսին տեղից շարժվելու:

— Երիհաս, զուռնադավալը բարձրացրին սատանի ճտերը, ձեռքաշեցեք, չեկա՛վ, խաբարդար,— գոռաց Հայրապետը և զգալի արձակեց նրանց վրա:

— Հանդարտվեցեք, լավ է, յերկուսներդ ել բերեք, տեսնենք ինչ էք բերում:

Բարխուդարի հրամայողական ձայնը ստիպեց Գյուլնաղին և Մարիամ բաջուն իրարուց բաժանվելու:

Մի բոպեցից հետո սփռոցի վրա շարվեցին թեյի պնակների մեջ մի քանի տեսակ մուրաբաներ:

Այս ընդհանուր աղմուկի ժամանակ մանուկները քնից զարթնեցան:

— Ինձ ել մուրաբա տվեք,— գոչեց Սուսանը, գլուխը բարձրացնելով և աչքերը բռնեցնելով տրորելով, վոր քունը փախցնի:

— Ինձ ել տվեք,— կրկնեց Սեյրանը:

— Բաս չէ՛ս, ինձ չեք տալ՞ու,— ավելացրեց Սմբատը:

Բարխուդարը, բոլորին բավականացնելուց հետո, ասաց.

— Սուսի, հստիվանից քեզ ու Սեյրանին բախշում ենք կարմիր կովին:

— Ոոո, չե չե, չեմ ուզում, չես կարմիր կովի պողերից վախենում եմ:

— Յես չեմ վախենում, չես նրա պողերի վրա կնստեմ,— մեջ մտավ Սեյրանը:

— Միք վախենալ, մենք ձեզ չենք տալու նրան, վոր տանի: Դուք նրա բալաները կլինեք հիմիկվանից, ամա մեզ մոտ կմնաք: Մենք բախշում ենք ձեզ նրան, վոր ել ես գիշերից դեն չհրժոտվի ձեզ վրա, ձեզ հողի տակ չթողնի:

— Ես թաւը մին ել կոնծում եմ Սեյրանիս ու Սուսանիս կենացը,— ընդհատեց Հայրապետը:— Լսի՛ր, Բարխուդար, մի լավ աղոթք եմ սովորել Տեր-Մաթթայից, թող նա լել տեսն ու բանը պրծնի: Ինչպես ե... հա... աստված շնորհավոր անի, բարով թագ ու պսակի արժանանան, կանաչ կարմիր կապեն, «և առյալ զձեռն Յեվայի և տվալ»...

Դէհ, Սեւրան, մոտեցիր ու հարսնացուիդ մի լավ պաշիր, այ ինչպես
եսոր հողի տակումն ես պաշիր:

— Ի՞նչ հարսնացու,—հարցրեց Սեւրանը չերեխայական դար-
մացմամբ:

— Սուսանին ու քեզ նշանեցինք, դու նրա փեսացուն ես հիմա:
Պարզամիտ մանուկները, լսելով Հայրապետի խոսքերը, կարմրե-
ցին ամոթից: Հայրապետի ստիպմամբ նրանք իրարու գրկեցին և համ-
բուռեցին: Այս համբուլը չեղավ չերկու մանուկների ապագա միավո-
րութունը չերաշխավորող միակ գրավականը:

— Դեհ, բախնիր, չոքեցեք ու ազոթք արեք ձեր արդար բերա-
նով, վոր աստված ետորվա պես որ շանց չտա մեզ,—ասաց մանուկ-
ներին Մարիամ բաջին:

Մանուկները չոքեցին չերեսները դեպի ազոթաբան և նախ «Հայր
մեր» ասացին, հետո, Մարիամ բաջու թելադրութեամբ, չերկրաշարժը
չկրկնվելու համար ազոթեցին:

Ազոթքը վերջացավ, չերկու ընտանիքները բաժանվեցին:

V

Յերկրաշարժը, մի անգամ դրոշմելով յուր կնիքը Շամախու ճա-
կատին, կարծես, չերգվել եր աջնուհեաւ ալլի ձեռ չբաշել նրանից:

Տարիներ անցան, բայց քաղաքը չեր խաղաղում: Նա նմանում
եր ընդարձակ ծովի վրա լողացող մի նավի, վոր խորտակված առա-
գաստներով և փշրտված խարխիսներով թողված ճակատագրի հաճույ-
քին, չերերվում և ալիքների մեջ: Յերկիրը, կարծես, մի անգամ կորց-
նելով յուր ուժը, կարողութունն չուներ պահել քաղաքի ծանրութուն-
ը: Ինչպես դաշտում մեծացած վայրենի ձի, վոր յուր մեջքը չի կա-
մենում չնթարկել թամբի ծանրութեան, Շամախու չերկիրը շարժում
եր յուր մեջքը, համառութեամբ հրաժարվելով քար-քարի վրա թողնել:

— Սողոմ-Գոմորն ե, — կրկնում էին ծերունիները, իրանց ալե-
զարդ գլուխները շարժելով:

Կառավարութունը, տեսնելով, վոր քաղաքը չի դադարում, ստիպ-
ված չեղավ նահանգապետութունը փոխադրել Բագու: Այս չեղավ մի
ուրիշ հարված, վորից հետո քաղաքը միանգամայն գրկվեց կենդանու-
թյունից: Քանի գնաց, աչքան նրա գրութունը թշվառացավ: Առեկ-
տուրն ընկավ, ժողովուրդն որըստորե սկսեց աղքատանալ: Շատերը
ստիպվեցին թողնել իրանց պապական չիրկիրը և գաղթել ուրիշ քա-
ղաքներ ոտարութեան մեջ որակաւ ապրուստ հալթալթելու: Մեծ մա-
սամբ գաղթում էին հայերը, վորոնք գլխավորապես գնում էին Դու-
բա, Դերբենդ, ուր ալ գամանակները տորոնի արդունաբերութունը

նախանձելի վիճակի մեջ երբ Իսկ մշուս մասը գաղթում եր Դադաստանի զանազան կողմերը, Պետրովսկ, Վլադիկավկաս, Թեյմուրխան-Շուրա, Բազու և այլն:

Այս ընդհանուր գաղթականության ախտը, վոր խիստ վարակիչ եր, համարձակվեցավ մոտենալ վոչ Բարխուդարին և վոչ Հայրապետին: Առաջինն այսպես եր դատում.

— Ենա գերձակ մարդ եմ, իմ արհեստս թուրքերի հետ և կապված, թուրքերն ել, փառք աստուծո, իրանց տեղումն են: Նրանք մեղանից խելոք են, իրանց պապական ոջաղը չեն քանդում մեր հայերի պես ու ոլքա-ուլքա ընկնում մի կտոր հացի խաթրու: Թե վոր աստված մարդուս ճակատին մի կտոր հաց և գրել, նա վորտեղ վոր լինի, կուշտ կլինի, թե չէ, ու չէ:

Իսկ Հայրապետը այսպես եր դատում.

— Թուրքն ասում և. «քյու իչուն համսի բիր, չա բուրդա, չա Բադ-դադտա»¹: Միքանի հարյուր կուժ ու կուլաս բարձած լճնչտեղ կարող եմ գնալ, լճնչ կարող եմ անել: Ելի Շամախում մի բան կա. ճշմարիտ և, ասելը մեղք և, բայց դրունտը պիտի խոստովանեմ, վոր չերկրաշարժը թեև ինձ մնասեց, խեր ել տվավ, չունքի քաղաքում ել սաղ կուժ ու կուլա չի մնացել, հիմա ամենքը մեկել նորից են առնում: Առևտուրս զու և:

Յեվ այսպես, Բարխուդարն ու Հայրապետը մնում էլին Շամախում:

Յերկու հարեանները շարունակում էլին իրանց բարեկամութունը: Նախկին զրացության համակրության վրա ավելացել եր խնամությունը: Դյունաղը և Մարիամ բաջին խնամիներ էլին և կատարում էլին մի առանձին չեռանդով աչն բոլոր պարտականությունները, վոր պահանջում եր քաղաքի ավանդությունը:

Կտեսնելիք, վոր բարեկենդան որ և, առավոտը կանուխ, դեռ թեյ չխմած, առա Մարիամ բաջին, ցրտից սրթսրթալով, ներս մտավ, ձեռում չերկու ափսե իրարու վրա դրած: Ախահների մեջ խնամքով դարսած են դուժարներ և բիշիններ²: Մարիամ բաջին վազեվազ բերել և, վոր նրա «աչքի լույս Սուսանը տաք-տաք ուտի»:

Չատիկ առավոտ և, մեկ ել տեսնես Դյունաղը շալի ծայրում փաթաթած տասը քստն խաշած կարմիր ձվեր վաղեցնում և Հայրապետանց տուն:

¹ Կուլբի համար միենույն և, այստեղ, թե Բադդադում:

² Խմորեղեն կերակուրներ, վոր լարեկենդանին պատրաստում են Շամախու հայերը:

— Առ, բալաս, տանր, եսոր կովացրու ես ձվերը, բախտդ փոր-
ձիր, —ասում ե նա, ձվերը տալով Սեյրանին և միքանի համբույրներ
դրոշմելով նրա թշերին:

Դեռ լերկրաշարժից մի տարի չանցած Հայրապետը Բարխուդա-
րի խորհրդով Սեյրանին տվել եր Սարգիս վարպետի ուսումնարան,
ուր նուշնայես սովորում եր Բարխուդարի վորդի Սմբատը:

— Թող սե ու սպիտակը ջոկել սովորի, մեղ նման մարդը ինչի
չե հարկավոր, —ասում եր Բարխուդարը:

Սեյրանը առաջին տարին մի աշնայիսի ընդունակութուն ցույց
տվավ, վոր Սարգիս վարպետի ուշադրութունը գրավեց: Մի տարվա
ընթացքում նա անցավ այրուբենի տետրը, Սաղմոսը, բայց չեր
չերկրորդ տարում հասավ Ավետարանին — սկսեց փոքր առ փոքր ծու-
լանալ: Նա որից որ զգվեց Սարգիս վարպետի ուսումնարանից: Շատ
աշխատեց Սարգիս վարպետը չուր ընդունակ աշակերտին ազատելու
ծուլության խնտից, շատ անգամ դիմեց այս նպատակով սովորական
միջոցին — ֆալախկալին: Բայց վոչինչ չոգնեց: Սեյրանը քանի գնում,
աշնքան ծուլանում եր: Նա շատ ժամանակ, տանը Մարիամ բաջուն
խաբելով, թե ուսումնարան ե գնում, գրքերը թապցնում եր բակում,
հողի տակ, իսկ ինքը վազում փողոց ընկերակիցների հետ խաղալու:

Հայրապետը սկզբում խրատում եր նրան, պարգևներ եր խոս-
տանում, բայց վերջը, տեսնելով, վոր այս չի ոգնում, նուշնայես դի-
մեց Սարգիս վարպետի միջոցին, այսինքն սկսեց ծեծել:

— Յես շկոլից հենց վարպետի ուղղիներից եմ փախչում,
դու չել տանն ես թակում, —ասում եր Սեյրանը, աչքերի արտասուքը
արխալուղի թևերով սրբելով:

Մի որ վարժապետը Սեյրանին, մի դաս նշանակելով, ասաց.

— Տես, Սեյրան, վաղը այս դասը այնտեղից մինչև այստեղ լավ
անգիր կանես: Զուր կանես, հաա, թե չե ձեռիցս չես պրծնի, իմա-
ցիր, վոր այնքան վոտերիդ կծեծեմ, վոր կաշին կթափվի, կարմիր
միսը կմնա:

— Աչքիս վրա, վարպետ, մի ջուր անեմ, վոր քեֆդ դա, —պա-
տասխանեց Սեյրանը:

Նախընթաց որը Սեյրանը սաստիկ ծեծ եր կերել և այս պատ-
ճառով խիստ նեղացած եր վարժապետից: Նա մտածեց այս ծեծի փո-
խարեն մի լավ խաղ խաղալ վարժապետի գլխին: Ողուտ քաղելով
վերջինի խոսքերից «դասդ ջուր կանես», Սեյրանը մյուս որը գիրքը
պահեց Առաքելի աղբյուրի տակ այնքան, վոր նա թրջվելով բուրբո-
վին «ջուր դառավ»:

— Առ, վարժապետ, — տվեց նա գիրքը Սարգիս վարպետին:

— Այդ ի՞նչ ես արել, — հարցրեց վերջինը դալրացած:

— Զուր:

— Այ դու սատանի ճուտ, ինձ ձեռ ես դցել: Պահեցե՛ք դրա վրաները, պինդ պահեցե՛ք, ենպես, վոր խակի տեղից ժաժ չգա:

Այս վերջին ծեծն եր, վոր Սեյրանը կերավ Սարգիս վարպետի կողմից:

Մյուս որը վորքան նրան ստիպեցին, այլ ես չհամաձայնվեց ուսումնարան գնալ:

Հայրապետը, տեսնելով, վոր ել ճար չկա, դուրս բերավ նրան ուսումնարանից ե հանձնեց Բարխուդարին, վոր սա դերձակութուն սովորեցնի նրան: Այսու ամենաչնիվ, չերեք տարվա ուսումը շատ ել անողուտ չեղավ Սեյրանի համար. նա սովորել եր քիչ թե շատ ուղիղ կարգալ ե գրել:

VI

Բարխուդարը չընդգիծացավ Գյուլնազի առաջարկութան, այն ե — Սուսանին Հերիքնաղ կուսի ուսումնարանը տալու:

— Վնաս չունի, թող Սուսանս ել սե ու սպիտակը ճանաչի, ես ժամանակում հարկավոր ե, ինչ պիտի անենք: Յես ու դու, վոր գրել ու կարդալ իմանայինք, եսորվա պես վաղ չնչի տալ տերտերի մոտ, թե ինչ ե՛ իմանամ չերբ են պաս բռնում:

Այս խոսքերից հետո Գյուլնազը շալը դցեց Սուսանի գլխին, ինքն ել փաթաթվեց չարշովի մեջ, բռնեց աղջկա ձեռքից ե տարավ կուսի մոտ: — Ա՛ռ, ուսում տուր, ամա դու քո տասվածը, չերեխիս քիչ թակիր:

Յերեք տարի Սուսանը մնաց կուսի ուսումնարանում: Առավոտները նա Սմբատի ուղեկցութամբ գնում եր ե դարձչալ Սմբատի ուղեկցութամբ վերադառնում տուն: Յերբ նա բավականաչափ սովորեց կարդալը ե «բարովագիր» գրելը, Բարխուդարը դուրս բերավ նրան ուսումնարանից:

Սուսանն որ ըստ որե աճում եր ու մեծանում: Տասնուչորս տարեկան հասակից նրա ճկուն մարմինը սկսեց ստանալ չուր կատարյալ ե վորոշ ձևերը: Նա դարձավ բարձրահասակ, վայելչակազմ որիորդ: Նրա դեմքի գծագրությունը, հետզհետե դարձանալով, ստացավ կանացի չափահասութան հատուկ կատարելությունը: Ուսումնարանից դուրս գալուց հետո ծնողները նրան արգելեցին ոտար տղամարդկանց առաջ չերեալ, նա փակվեց տանը: Սկզբում մի քիչ դառն թվաց նրան

ծնողների այս կարգադրութունը: Մանկական ազատ կյանքից հետո, բանտարկվելով, սկսեց տաղտկանալ: Նա սովորել էր ցերեկ ժամանակ փողոցներում այս ու այն հարևանի բակում չուր ընկերների հետ թռչկոտել, խաղալ ազատ, արձակ, բաց ոդու: Նրա համար անտանելի չէր, նամանավանդ արեգակնային որերը, նստել սենյակում, չուր մոր կշտին և թոռ կամ զուլբա գործել: Սակայն ժամանակի ընթացքը ստիպեց նրան հետզհետե ընտելանալ այս ձանձրալի դրության, և նա ընտելացավ, թեև սովորութունը այնքան թեթևութուն չտվավ նրա սրտին:

Ուղիղ ինչը տարի չեր անցել չերկրաշարժից:

Մի ամառային որ Սուսանը, իրանց տան սրահում նստած, թոռ էր գործում: Դեմուգեմ նստած էր նրա մանկության ընկերուհիներից մեկը: Դա հարևան կոշկակար Յեղիայի աղջիկն էր:

Սուսամբարը մոտ տասնութ տարեկան որիորդ էր, միջին հասակով, նիհար ու դեղնած դեմքով և բարակ կազմվածքով: Նա ավելի տգեղ էր քան գեղեցիկ, բայց և այնպես խիստ համակրելի դեմք ունեւ: Նրա մուգ կապտագույն աչքերը, վորոնց մեջ փայլում էր բնածին նրբամտութուն, խիստ ազդող էին:

Սուսամբարը, զլուխը քարշ գցած, շտապով զուլբա չեր գործում լուռ ու մունջ: Լուռ էր նույնպես և Սուսանը:

Որն անցած էր: Արեգակը շտապում էր ծածկվել հորիզոնի տակ, չուր վերջին պղնձագույն ճառագայթները տարածելով ավերականման քաղաքի բարձրագույն տեղերի վրա:

Սուսանի դեմուգեմ, խորտակված պարսպի մոտ գտնվող բարձրաբույս թթենու կանաչազարդ կատարի վրա հավաքված ճնճղուկները, ճվլլալով զվարճանում էին արեգակի թույլ ճառագայթներով: Բակում տիրող լուսթյունը խանգարվում էր միմիայն ճնճղուկների ճվլլոցներով, վոր քանի գնում, այնքան զորեղանում էր: Ծառի տակից նայելով այդ փոքրիկ թռչնիկներին, լսելով նրանց աղմուկը, կարելի չէր կարծել, թե նրանք մի ինչ-վոր բանի վրա վիճաբանում են, այնքան տաքացած ճվլլում էին: Բայց թե ինչ բանի մասին և նրանց վիճաբանութունը, ինչ մի դժվար փիլիսոփայական խնդիր են լուծում այդ փոքրիկ թեափորները—այս մեր խիլքին մոտ բան չե: Ո՞վ գիտե, շատ կարելի չե նրանց աղմուկի պատճառը թագնվող արեգակն է, չե՞ վոր նրանք միևնույն ճվլլոցները, աղմուկը սկսում են և առափոտները, չերը արեգակը նոր-նոր սկսում և բարձրանալ հորիզոնը:

Որիորդները լուսթյամբ շարունակում էին գործել: Սուսանի դեմքը տխուր էր: Նա չերբեք զլուխը չեր բարձրացնում, միայն

կնճռոտած ճակատը և սեղմված շրթունքները հաստատում էին, թե նա ինչ-վոր մտածողութեան մեջ է։ Սուսամբարը շուտ-շուտ գլուխը բարձրացնում էր, աջ ձեռքով ճակատի վրա թափվող խոպոպ ծամերը լետ քաշում և չերբեմն չուր հաչացքը մեխում Սուսանի չերեսին։ Վերջինը այդ չեր նկատում։

Վերջապես, Սուսամբարը մի կողմը շարժեց գուլքան։

— Ախշի, Սուսան, սիրտս ճաքեց, դեն գցիր զահրումարը, քիչ խոսենք։

Սուսանը լուռ էր։

— Ականջներումդ բամբակ կա։

— Հը՞մ։

— Չոոո։

— Չոո ու գլխում, ի՞նչ ես ասում։

— Ասում եմ, դեն գիր այդ զահրումարը, մի քիչ հանգստանա՛նք, մատներս մաշվեցին, մի քիչ խոսենք ելի։

— Ձեմ իմանում, ի՞նչ պիտի խոսենք,—ասաց Սուսանը հառաչելով։

— Մին այդ սատանի տոտերը կորցրու դեն, հետո կասեմ ինչ խոսենք։

Այս ասելով, Սուսամբարը Սուսանի ձեռից խեց թոռի դադգահը և մի կողմը դրավ։

— Ուֆ, ուֆ, տեր աստված,—արձակեց մի խորը հառաչանք չուր կրծքից Սուսանը, չերկա՛ն մաղերը ուսերի վրա ուղղելով և գլխի ճուրղին առաջ քաշելով։

— Ել ինչ ուֆ, հողիներս դուրս չեկավ, մի քիչ խոսիր, վոր սիրտներս բացվին։

— Խոսքս ել ե պրծել, զրույցս ել։

— Ելի ռի ե եշիդ կաղ ասել,— հարցրեց Սուսամբարը։

— Մի՞տդ ե, Սուսամբար, չերկրաշարժի որը։

— Հն։

— Այ գիդի որեր հա՛մ։

— Խե՛ր լինի, ի՞նչ ե պատահել, վոր ախ ես քաշում։

— Մի՞տդ ե, ինչպես չես ու կուժ ծախողանց Սելրանը մնացինք հողի տակ։

— Ինչպես այս որվա արեգակը։

— Բախտավոր եյին այն որերը։

Սուսանը կրկին հառաչեց։

— Դու չե՛լ լավ որի չես չերանի տալի. հողի տակ մնալը չեմ իմանում ի՞նչ բախտ ե։

— Յես հողի տակ մնալուն չեմ կարոտում:

— Բան:

— Այն որերին, չերվոր մենք վոտարաց, դլխարաց, ինչտեղ վոր ուզում ելինք, ալնտեղ ելինք վազում:

— Յերվոր ել ուզում եր Սուսանը, կուժ ծախողանց Սեյրանի հետ սիլիկ-բիլիկ եր անում,—ավելացրեց Սուսամբարը, խորամանկութեամբ ժպտալով:

Սուսանը տկամա կարմրեց: Այս առաջին անգամը չեր, վոր նա Սեյրանի անունը լսելիս կարմրում եր:

— Հը՛մ, ինչպես ե, կարմրեցի՛ր, բարեկամ: Չլինի սրտիդ փափուկ տեղին դիբա:

— Ե՛լի, Սուսամբար... ախ, չերեխալութունդ չես մոռանում, չե:

— Սուտ եմ ասում: Թե վոր սուտ ե, բաս ինչո՞ւ կարմրեցիր անունը տալիս:

— Ո՞վ ե կարմրում, ախչի, թո՛ւ սուտ խոսողն ես,—հակառակվեց Սուսանը, ավելի կարմրելով:

— Թշերդ ալ լալադարի պես հուժի հըռչեւ եմ, ելի վզով չես առնում: Լավ ե, լավ, խեղճ ես, մի՛ ամաչիր, ել անունը չեմ տալ,—ասաց Սուսամբարը, հեղնորեն ժպտալով:

— Հողս կուժ ծախողանց Սեյրանի գլխին, նա ո՞վ ե, թո՛ւ մարդ ե, վոր նրա անունը տալիս չես ամաչեմ,—պատասխանեց Սուսանը բարկացած, ավելի ու ավելի շփոթվելով:

— Ոհո, ինչ ասեցի՛ր, վոր հեր ու մերդ լսեն, քեզ թո՛ւ կանեն, գիտե՛ս: Ի՞նչպես ես սիրտ անում նշանածիդ համար անեծք անել:

Սուսամբարը այս ասաց գիտմամբ, վոր ավելի բարկացնի Սուսանին: Բայց Սուսանի բարկութունը անցել եր: Նա, չուր խոսքերը արտասանելուց հետո, համկարծ ընկավ մտածմունքի մեջ. «Ծճմարիտ, ինչպես եմ սիրտ անում հոր ու մոր մի հատ աչքի լույս ու ճար տղի համար ալսպես անեծք անել»,—անցավ նրա մտքով և մի տնայացատրելի զգացմունք սկսեց ճնշել նրան:

— Ե՛հ, թո՛ւ ես ֆիքր անում, մեր որին հո չես մնացել: Մի մատ քերեխա ժամանակդ քեզ նշանել են, ախոր եզուց ել սարքին-կարգին նշանդրեք կանեն ու զուռնադավալով կպսակեն: Մեզ պես հո աչքդ ճանապարհին չի մնացել:

Սուսամբարը կրկին կամենում եր բարկացնել Սուսանին:

— Դու լինես քո լեղձոր արևը, Սուսամբար, ել մի՛ խոսի: Ե՛հ, դալաթ չարի՛, վոր քեզանից մի բան հարցրի:

— Վոր չեղձորս արևով չերդում տվիր, ել չեմ խոսի: Դու հենց

կա իմանում, վոր լես քեզ նախանձում եմ:—Ձե, աստված մի արասցե: Յես ինքս շատ ուրախ եմ, վոր հարսանիքդ շուտով լինի, վոր առաջիկ մին լավ չբխա կոփեմ ու պար դամ, ալն ել քեզ ժամ տանելիս: Հոր ու մորս ել հիմիկվանից պիտի աղաչեմ-պաղատեմ, վոր ինձ համար մի ձեռք լավ շորեր պատրաստեն: Հիմա պիտի ասեմ, վոր մինչև հարսանիքդ ասածս գլուխ բերեն, թե չե՝ անողը չեն: Ուֆ, մեր հեր ու մերերն ել ամա մարդ են համ, մինչև հարցուր, հազար անգամ չես ասում, մինչև լեղրդ բերանումդ մաղ չե կտրվում, մինչև մի հալավ միս չես թափում, մի գլխաշոր չեն առնում: Մի տարի լես, վոր այս շալս ճընթռ շոր ե կտրվել, ամոթ եմ քաշում մի բարեկամի տուն մտնել, հալվում, հալբհալ եմ լինում: Ա՛յ քույր, ա՛յ մեր, ել չեն ասում, թե դա լիլ լերեսը դռներին աղջիկ ե: Եհ, մենք ել ասում ենք, վոր ապրում ենք, Ոհանջանանց Ջառնշանն ել ապրում ե, Բախտավորի աղջիկը սանդուխը զըղբազըղ լցրել ե, ելի լերեկ ասում եր, վոր մի նոր խտրիկա չարկան են կտրել տալիս: Հենց նա լես, վոր ինքն ել ալնպես փարթամացել ե, վոր մարդու հետ խոսելն ել լալադ չի անում, կասես, վոր գլո՜ւ բո՜ւսա թի աղջիկ լինի: Լավ ե, վոր մին շիր ու շիքիլ ել չունի, թե չե, ել ախարհս նրա համար տեղ չեր անի: Փառք աստուծո, մի քիթ ունի, ա՛յ—մի դուռնա, մի լերես ունի—սե սաթ, մի աչքեր ունի—բոտով, պլոդ-պլոդ, հենց իմանաս, մարդ ե ուզում կուլ տալ:

— Դենդ ու դանգասար լինես Սուսամբար աղջիկ, գլուխդ ցավի, քիչ բլբլա քիչ, վա՛ւ:

— Ջիտեսմ, բաս ինչ անեմ, դու ասա, ախար սիրտս ճաքում ե, տեսնելով հարուստների աղջկերանց: Ախ, Սուսան, դիտես ինչ կամ: Մեղա աստուծո, մեղա աստուծո, թե վոր լես մի որ, մին սհաթ աստված լինեմ ե, ինչքան վոր հարուստներ կան, ամենից կխլեմ նրանց իլած ու չիլածը ու դիտես ինչ կանեմ:

— Խո՛չ կանես:

— Կտանեմ ծովը կթափեմ, բաս, հետո թող նրանք դնան տեսնեմ, ինչպես կարող են իրանց աղջկերանց, հարսներին զառ ու զառ-բոֆի, վոսկի ու արծաթի մեջ պահել:—Հա, բաս ալնպես կանեմ,— շարունակեց Սուսամբարը տաքացած: Դո՛ւ ինչպես կանես, Սուսան, վոր, մեղա աստուծո, մեղա աստուծո (լերեսին խաչակնքելով), մի որ աստված լինես:

— Վոչինչ չեմ անիլ:

— Ձե, ելի ասա տեսնեմ, ի՞նչ կանես:

— Ձեռ քաշի՛ր, դատարկ-դատարկ մի դուրս տալ, մեղք ե:

— Ձե, մատաղդ լինեմ, Սուսան ջան, ասան:

— Են:

— Ջըխկո՛ւն, լեզվիցդ հո քրեհ չեն ուզում, մի խոսք ասա պըր-
ձիր հիլի:

— Հարուստներից կառնեմ ու քեղպիսներին կտամ, վոր ուրիշնե-
րին չի նախանձեն, ալ ինչ կանեմ:

— Ախար իմացա, վոր խելոք բան չես կարող անել,—ասաց
Սուսամբարը, ներողամտությամբ ժպտալով:

— Ինչո՛ւ:

— Թե վոր ինձ տաս, չես իսկի քո ուխտդ մտիկ ել չեմ անիլ,
այ ինչո՛ւ:

— Կփարթամանմա:

— Բաս չե, իսկի քեզ հետ չեմ ել խոսի Ռհանջանանց Ջառնշա-
նի պես:

— Ձե, Սուսամբար, վոր ինձ տան, չես իսկի չել չեմ փարթա-
մանալ: Փողը լի՛նչ ե, ձեռի կեղտ, աչսոր կա, եզուց չկա: Հաչրս ասում
ե. մարդս պիտի իստակ անուն ունենա:

— Հաչրդ ասում ե ասում, բայց չի իմանում, վոր առանց փողի
մարդ չի կարողանում իստակ անուն պահել:

— Ինչպե՛ս:

— Ա՛յ ինչպիս: Դու ճանաչում ես Ջավահիրի հորը, չմուշկ կա-
րող Վարաքին:

— Էսեկ եմ: Հաչրս նրան գովում ե, շատ հալալ ու նամուսով
մարդ ե:

— Յեկ տես, վոր քո նամուսով մարդը հիմա ինչ ե արել:

— Հը՞մ:

— Դողուլթուն:

— Ձե՞ն:

— Հաս: Հը՛մ, լի՛նչ տներ, վոր գողուլթուն չանել, ասում ե-
անճարը կերել ե բանջար: Յերկու թե չերեք ամիս եր դուքանի քրեհ
չեր տալիս, դե, տասը կորիդ չունի, տասը մանեթ վորտեղից տա մի
տուն չերեխերքի տեր մարդը: Անջախ մի կտոր ցամաք հաց ե կա-
րողանում աշխատել, որական, մի ջուխտ չմուշկ խշտելով: Դուքանի
տերը չոքում ե բողազին, թե աղջիկ ես՝ ծնիր, տղա չես՝ ծնիր, քրեհը
տուր: Դես ու դես ե ընկնում Վարաքը, ոչով տասը մանեթ փող չի
հավատում նրան: Յերեկ չե, մեկել որը տերը գալիս ե ու ասում.
«Ինթե եզուց մինչև սհաթի տասը փողերս չտաս, դուքանից դուրս եմ
բերելու ու ապրանքդ ել ծախելու չեմ, վոր քրեհս հանեմ»: Վարաքի

փոխանը վոտներն է ընկնում, հա դես, հա դեն, ազաչում-պաղատում է, տսում է. չերեխերքստովածութունից մեռնում են: Ձի լինում, դու-քանի տերը խեղճի չերեու վոտը մի չումուշկումն է դնում: Առավոտը Վարաքը կոտրված փշրված սրտով, մի կտոր ծաղկած հաց ծոցում դրած, գնում է դուքան: Գնում է ու մաքումը աղոթք անում. «Աստ-ված, դու չերկնքից ինձ համար տասը մանեթ փող գցես, վոր պարտ-քիցս ազատվեմ»: Հենց նոր Վարաքը սկսած է լինում աշխատելու, մի թուրք բեկ մտնում է դուքան: Բեկը նրան մի ջուխտ սաղրի չմուշկ է պատվիրում կարելու: Վարաքը չափսը վերցնում է, թուրքը ջրից հա-նում է արծաթի փողով լցրած մի մեծ քսակ, վոր չմուշկի բեհը տա- Բեհը տալիս է ու դուրս գնում: Բաց չեմ իմանում ինչպես է լինում, ինչպես է ի լինում, փողի քսակը մոռանում է ու թողնում դադգլահի վրա: Նրա դուրս գնալուց հետո Վարաքի աչքը ընկնում է քսակի վրա: Սոված գալլի պես, խեղճ կոշկակարի աչքերը դրուստ չորսանում են: Առջ ուղում է, վոր բեկին կանչի ու փողը տա իրան, բաց մեկ էլ մտածում է. «Բալքա հենց աստված իմանալով է թուրքին մոռաց-նել ավել, վոր չես նրա փողերով ազատվեմ»: Ասում է ու, մի խոր թառանչ քաշելով, քսակը բանում է ու փողերը համարում: Դրուստ տասներեկու մանեթի արասիներ ու չերեք շահանոցներ են լինում: Վարաքը դողդողալով քսակը կոխում է մինդարի տակը: Մի սհաթից հետո, բեկը, նաֆաշը կտրված, դալիս է:

— Ուստա, փողիս քսակը քեզ մոտ եմ թողել:

— Չեմ իմանում, փնտուր, տես:

Փնտում են, չկա: Թուրքը Վարաքի ոձիքից ձեռ չի քաշում: «Աստված, չերկնք, հավատս վկա, չեմ տեսել,—ասում է Վարաքը: Թուրքը հավատում է նրա չերդումին ու դուրս է գնում: Բաց վոտի մինը դուքանի ներսում, մեկելը դրսում, աչքը ընկնում է մինդարի տակ դրած քսակի ճոթին, վոր Վարաքը մոռացած է չեղել լավ ներս կոխել:

— Բաս չերդում ես ուտում, անհավատ, դա լինչ է:

Թուրքը դուրս է քաշում քսակը մինդարի տակից: Վարաքը տեղն ու տեղը չորացած է մնում: Բեկի աչքեշը արլուն են կոխում, քսակի ճոթից բռնում է ու անորեն փողերով խփում Վարաքի չերես-մերեսին, գլխին: Խեղճ մարդու գլուխը ճղվում է. նա ուշաթափ ընկ-նում է: Հիմա չերեկվանից դես վողորմելին չերեսի վրա ընկած է չուր տանը ու աղի արտասուք է թափում, թե «վա՛յ, բաս չես հիսուն տարի անուն աշխատեմ, նամուս պահեմ, վոր կտրվա որը խալտառակվեմ քաղաքում»: Տեղ ու բարձում մեկնված է, լա ապրի, լա հապրի:

Սուսամբարն չուր պատմութիւնն ավարտեց, աչքերը հառեց Սուսանի վրա ու ավելացրեց.

— Տեսնո՞ւմ ես աղքատութիւնը ինչ մեղքեր ե գործել տալիս մարդուս:

— Ծը՛ւր, ցը՛ ցը՛ւր, խեղճ մարդ,—ասաց Սուսանը, կրծքից անկեղծ հառաչանք արձակելով:

— Դե հալոդ թող ասի, վոր փողը դատարկ բան եւ Ձե, այ քուչը, աչ մեր, փողը մեծ բան եւ Հիմա Զառնշանը շատ լավ ե անում, վոր մեզ մարդու տեղ չի դնում: Յես աչքով աչք չունիմ նրան տեսնելու: Ամեն մի նրան մտիկ անելիս սրտումս նախանձ ե շարժվում, չես ել ուղում եմ, վոր կամ նրա նման հարստի աղջիկ լինիմ կամ նա իմ որն ընկնի, աղքատանա: Ախար նա չել մարդ ե, խելք ունի—մտածում ե, աչքեր ունի—տեսնում ե, վոր չես, նրա հետ չերեսանց խոսում եմ, ծիծաղում եմ, բաց սրտանց ասում եմ: Հիմա ասա, Սուսի, դու նրա տեղը լինես, չես ուռչի՞ր:—Հավատացի՛ր, վոր կուռչես: Տես, մի բան ասեմ: Մենք հիմա լերկուսս ել աղքատ ծնողների աղջիկներ հնք, կարողանում ենք պարզ սրտով իրարու հետ խոսել: Բաց Զառնշանի հետ չեմ կարող պարզ լինել: Դիտե՛ս ինչու: Նրա համար, վոր չես նրա հետ խոսելիս, ուշք ու միտքս հենց նրա շորերի, վոսկիների վրա չե լինում, ել սիրտս խաղաղ չի լինում, վոր կարողանամ հնաւ անկեղծ լինել: Յես Զառնշանին աչքով աչք չունիմ տեսնելու, բաց քեզ սիրում եմ, ինչու վոր, դու չել ինձ նման աղքատ մարդու աղջիկ ես: Դրա համար եմ ասում, վոր թե աստված լինիմ, մեղա աստուծո, հարուստներից կառնեմ իլած չիլածները ու ծովը կթափեմ, վոր ամենն ել մեղ պես աղքատ լինին: Թե վոր ամենն ել աղքատ լինին՝ լավ կլինի, ել վոչ վոք ուրիշին չի նախանձիլ: Դե, վոր նախանձ ասած բանը չլինի աշխարհիս չերեսին, աչն ժամանակ ամենքն ել իրարու հետ պարզ կլինեն, իրարու կսիրեն, ինչպես չես ու դու: Իմ կարճ խելքովս այսքան եմ հասկանում: Դու թի՛նչ կասես, Սուսի:

— Քո խելքը կարճ չի, Սուսամբար, դու կարգին վարպետի հասկացողութիւն ունիս: Դա վճրտեղ ես սովորել: Կույսը խելի մեղ ալդպիսի բաներ չեր ասում:

— Հոդս կույսի գլխին, նա ինչ ե հասկանում: Ումից պիտի լսելի, չես ինքս եմ լերկար ու բարակ մտածել ամենը:

— Դե վոր ալդքան բաներ ես հասկանում, մի բան հարցնեմ, կարճ ես պատասխանել:

— Յերկուսը հարցրու, թե վոր կարողանամ, կպատասխանեմ:

— Մեր ծնողները ինչու չեն մեզ գողերի պես փակած պահում:

- Հէչ, ելի քո եշդ քշեցի՞ր, փորացավդ իմանում եմ:
- Չի, Սուսամբար, քո արեւ փորացավ չունիմ:
- Գիտես ի՞նչ, Սուսան, մեր ծնողները շատ անխելք են:
- Ինչո՞ւ:

— Վոր մեկ տանը թագցնում են: Մին հարցնող լինի նրա՞նցից, թե չես աղջիկ, վոր իմ սրտումս ծուռ բան լինի, չե՞մ կարող կատարել: Հըմ, կմեռնեմ, կսատկեմ, հազար ու մի սատանայութիւններ կսարքեմ, ուղածս կանեմ:

- Պարզ խոսիր, Սուսամբար, չեմ հասկանում:

— Շատ լավ ես հասկանում: Ուղում եմ ասել, թե մի աղջիկ, վոր ուզենա մի աղի հետ սիլիկ-բիլիկանել, ծնողներին աջնպես կխաբի, նրանց աչքերը աջնպես կկապի ե իրան բանը աջնպես կզրստի, վոր սատանան ել իր սատանայութիւնով չի իմանալ, ինչպես:

- Մեր քաղաքի աղջիկերքը չեն անիլ:

- Հը՛մ, շատերն են անում:

- Ո՞վ:

— Ո՞վ. հենց մինը Աշխանանց Ջարաֆիլը. վարսը կտրվածն ինչեր չի անում իրանց հարեան՝ Բալասիի հետ: Հըմ, ի՞նչ ե, զարմանում ես, բաս Ֆիքրդ ի՞նչտեղ ե, եեմ, մեր քաղաքում բաներ են լինում, վոր...

Սուսամբարը խորհրդավոր կերպով դուռը շարժեց:

- Դե րենամուսուրթուն չե՞, Սուսամբար:

— Շատ ել լավ ե՛ն անում. մեր հոր ու մոր հախն ե: Ինչ րենամուսուրթուն. հենց քեզ ու Սեյրանին վերցնենք, հազար ինձանից կեղես, չես ելի իմանում եմ, վորդու նրա սրտի, նա չել քո սրտի մեջն ե: Հիմա վոր...

— Կտրիր, կտրիր ձայնդ, — ընդհատեց Սուսանը բարկացած, կրկին կարմրելով:

— Ի՞նչ ես նազ ու բազ անում, ճշմարիտ խոսողի փափախը ծակ ե լինում, ասում են:

- Հերիք ե, լավ:

— Արխային կաց, թե շամբալութից¹ լուղ դուրս կգա, ինձանից ել խոսք դուրս կգա ուրիշների մոտ քո մասին:

- Թե ինձ սիրում ես, ել մի խոսի:

— Աչքիս վրա, չես ել նեղացել եմ, որն ել մի՞նեց, դնամ տանը թառ լինիմ: Մնաս բարով, քիչ Ֆիքր արա, առանց աչն ել մաշվել ես:

- Գնաս բարով:

¹ Շաղանակ:

Այդ որից անցել եր մի շաբաթ, Ուշ չերեկո չեր: Բարխուդարը, սենյակում նստած, կար հր անում: Մուշտարիններից մեկը մտադիր եր չերկու որից հետո ձանապարհ ընկնել ուրիշ քաղաք, նրան պատվիրել եր մի չուխա պատրաստել այդ չերկու որվա ընթացքում: Բարխուդարը շտապում եր չուր տված խոստումը կատարելու, վորպեսզի ամօթալի չմնա մուշտարու առաջ:

Նրա գեմուղեմ նստած եր խանութի աշակերտներից մեկը և ոգնում եր նրան:

Դյուլնազը և Սմբատը, սենյակի մի անկյունը քաշված, նիրհում ելին: Սուսանը կանգնած եր դրսի պատշգամբի վրա:

Ամառային եր այդ չերեկոն և հիանալի: Տասնորջա լուսինը կապտագուլն չերկնքում փայլում եր չուր հրճվալի գեղեցկութամբ: Նրա կապտագուլն լուսո շողիւրը, մեղմութամբ թափվելով ցերեկվա անձրևվով լվացված թթենիների վրա, շողշողացնում ելին թրջված տերևները: Կիսավեր քաղաքի համեստ բնակիչները վաղուց արդեն փողոցներից քաշվել ելին իրանց ապաստարանները: Տիրում եր մեկամաղձային լուսություն, վոր վոչնչով չեր խանդարվիլ, չեթե աչս ու աչն կողմից չլավելին մի քանի շների հաջելու ձայները: Իրանց հետքի թաթերի վրա յեռանկյունաձև նստած, սրածայր դռնները վեր քաշած, նրանք անախորժ ձայներով վոռնում ելին լուսնի վրա: Խնչ ելին պահանջում այդ թշվառ չորքոտանիները պաշտառ լուսնից— դա միայն իրանց և հալտնի: Բայց նրանց անախորժ ձայները խանդարում ելին գեղեցիկ գիշերի հրապուրիչ ներդաշնակութունը:

Սուսանն, արմուկներով հենված պատշգամբին, թավամորթ ծնոտը դրած ձեռների ափերի մեջ, անթաքթ աչքերով կանաչադարձ թթևնու խտատերև ճուղիների միջով նայում եր լուսնին: Նրա սեպուլն, չերկաչն ու կակուղ մազերը, սփռվելով վողորկ ուսերի վրա, հասնում ելին մինչև նազելի կերպով թեքած մեջքը: Յեղանակը բավական ջերմ եր: Սուսանը կարմիր թափտայից կարած բարակ արխալուղի մեջ ցուրտ չի զգում: Նա նայում և լուսնին և մտածում: Խնչ եր մտածում: Վոչինչ և ամեն ինչ: Շատ բաներ ելին անցնում նրա մտքով, բայց վոչ մեկը նրանցից չերկար ժամանակ կանգ չեր առնում նրա գլխում: Նրա պատանեկական վառվռուն չերեակայության մեջ անցյալ կյանքից նկարվում ելին տեսակ-տեսակ պատկերներ, վոր շուտապուրուտ կալելդոսկոպի նման շրջաններ անելով, փոխարինում ելին իրարու: Սկզբում նա մտաբերեց չուր մանկության որերը դեռ չերկրաշարժից առաջ:

Նա հիշում էր այն լուսնյակ չերեկոսները, չերը ինքը չուր մոր կշտին սրահում նստած, ուշադրութեամբ լսում էր վերջինի պատմութիւնը լուսնի և չերկնքի մասին: Սուսանը բառ առ բառ մտաբերում է ալդ պատմութիւնը, վորին այժմ ևլ հավատում է: Նա հավատում է, վոր չերկինքը առաջ չերկրին շատ մոտ է չեղել, այնքան մոտ. վոր մարդու ձեռքը հասել է. բայց մի անգամ մի կին չերեխայի տեղը սրբել է լավաշով ու գցել դուրս: Աստված տեսնելով, վոր կինը իրան տրված առաջին պարգևը, հացը, ալդպես ապականում է, բարկացել է, չերկինքը վերցրել է ու հեռու քաշվել: Իսկ լուսնի մասին Սուսանը մտաբերում է, վոր նա, այսինքն լուսինը, Մարիամ աստվածածնի աղջիկն է չեղել առաջ: Թե նա զարմանալի գեղեցկութուն է ունեցել, այնպիսի գեղեցկութուն, վոր մարդիկ նրա չերեսին մոտիկ անել չեն կարողացել: Թե ով վոր ուղեցել է մոտիկ անել, նրա աչքերը լուսնի և գեղեցկութունից կուրացել են: Թե մի որ Մարիամ աստվածածինը, լոշ թխելու համար խմոր հոռնցելիս նրա քաղցած վորդիքը հավաքված են չեղել իրանց մոր շուրջը: Սրանց մեջ չեղել է և աղջիկ Լուսինը: Լուսինը շատ անհամբեր աղջիկ է չեղել: Նա գնացել է չիկել ու չուր մոր, Մարիամ աստվածածնի գլուխը ցավացրել, թե «չուտ արա, մայրիկ, շուտ արա, լոշ թխիր, քաղցած եմ»: Վերջապես, Մարիամ աստվածածինը համբերութիւնից դուրս է չիկել, բարկացել է և խմորաթաթաթ ձեռքով մի ապտակ է տվել Լուսնի գեղեցիկ չերեսին: Խմորի կտորները կպել են լուսնի չերեսին ու մինչև այժմ ևլ չորացած մնում են:

— Այ, դոբթ վոր հրեն, քանի-քանի տեղեր արատներ են մնացել,—ասաց ինքն իրան Սուսանը, նայելով լուսնի չերեսին:

Հետո իսկուչն նա մոռացավ լուսինը, և այս անգամ նրան զբաղեցրին ուրիշ հիշատակներ: Անցան և այս հիշատակները, նրանց փոխարինեցին ուրիշները: Սակայն այս բաղմաթիվ խառնիխուռն հիշողութիւնների մեջ կա մի ուրիշ միտք, վորի շուրջը պտտում են մլուսները, վորը հանգիստ չի թողնում Սուսանին և վորից նրա սիրտը բարախում է: Կա մի ելակի կենդանի պատկեր, վոր չի հեռանում նրա աչքերի առջևից: Ահա նա, գլխաբաց ու վոտարոբիկ դեմ ու դեմ գտնվող թթնու գազաթը բարձրացած, և ճարպիկ կատվի նման բարակ ճլուղերին կպած, չուր փոքրիկ ձեռներով թուլթ է քաղում: Նա հագած է սպիտակ չթից կարած արխալուղ, վորի բարակ փեշերը չերեկոյան զովարար հոգմի թեթև շարժումից ուրի մեջ ֆոֆոում են:

— Սեյրան, Սեյրան, պինդ կանգնիր, վոր չընկնես.— աղաղակում է ծառի տակից Սուսանը, գլուխը վեր բարձրացրած:

Բայց Սեյրանը չի լսում: Քաղցրահամ պտուղը զրավել է նրա

ուշը, և նա շտապով հատ-հատ պոկելով ալդ պտուղը, լցնում և ար-
խալուղի գրպանները:

— Սեյրան, Սեյրան, ինձ համար ել թութածի, մենակ-մենակ մի
ուտիլ,— կրկին աղաղակում և Սուսանը:

Սեյրանը դարձյալ ուշադրութուն չի դարձնում. նա, կարծես, բո-
լորովին մոռացել էր չուր սիրելի Սուսիին: Ծառի տակ կանգնած
Սուսանի սիրտը քիչ էր ֆնում տրաքի: Նա անհամբերութամբ չուր
փոքրիկ վոտերը խփում և գետնին ու գեղեցիկ ուտերը թափահարում,
սուտ-սուտ լաց և լինում. — «Ըմ, ըմ, չեմ ուզում, ինձ ել տուր, ը՛րըը»:

Վերջապես, Սեյրանը լցրեց չուր չերկու գրպանները և, արագու-
թամբ ցած իջնելով ծառից, մոտեցավ Սուսանին, վոր քալած թութը
նրա հետ բոժանի:

Այս չերեակալութամբ էր հափշտակված Սուսանը, չերբ հան-
կարծ չուր աջ ուսի վրա զգաց մի ինչ-վոր ձևով թեթև հարված:

Նրա մտածմունքները փարատվեցին: Խորը քնից սթափվածի
նման արմուկները քաշեց պատշգամբի ճաղերից, իրանն ուղղեց
և նաչեց հետ: Նրա դեմ ու դեմ կանգնած էր մի միջահասակ պատա-
նի, թուխ դեմքով, սև աչք ունեցով: Պատանին գլխաբաց էր. նա
հագած էր ամառային կապտադուլն թեթև տրխալուղ, վորի կոճակնե-
րը բաց էլին կրծքի կողմից:

Սուսանը առաջին վայրկյանին չճանաչեց պատանուն և վախե-
ցած կամենում էր ճիչ արձակել: Բայց մինչև նրա ուշքի գալը, պա-
տանին չերկուղածութամբ, ձայնը փորը զցած, ասաց.

— Սուսան, սոս, ձայն մի հանիր, չես եմ:

— Սեյրան, դժև չես, ինչ ես ուզում, ինչժև չես չեկել այս ուշ գի-
շերին:

— Սոս, սոս, բարձր մի խոսիր, քաշվինք այն կողմը, հետո
կասեմ:

Սեյրանը զգուշութամբ բռնելով Սուսանի թևից, տարավ նրան
պատշգամբի մի անկյունը, վորտեղից չեր չերևում սենյակի ներսը:

Սուսանը չհակառակվեց: Նա գրեթե անգիտակցաբար հետևեց
Սեյրանին: Կարծես, մի ինչ-վոր ներքին անբացատրելի ուժ ստիպում
էր նրան հպատակվել պատանուն:

— Ինչ վոր ասելու չես, շուտ ասա ու վնա:

— Միքիչ համբերիր, շունչս տեղը դա, հետո, — ասաց Սեյրանը.
խոր շունչ քաշելով:

— Մայրս դուրս կգա, կտեսնի, ել վնչ իմ հալին, շուտ ասա:
Սուսանը սկսեց զողալ:

— Յեկեկ եմ քեզ տեսնելու:

— Վախենում եմ, Սեյրան, լավ ժամանակ չես չեկել:

— Ուրիշ ժամանակ չեյի կարող: Սիրտս ուզում եր տրաքի, վոր քեզ այսքան ժամանակ չեյի տեսնում: Քանի անգամ ուզեցել եմ թագուն, գողի պես, քեզ մոտ գալու, բայց հարմար ժամանակ չեմ գտել: Խնչպես ես, Սուսան, ասա տեսնեմ:

— Սուսանին զցել են տուն ու գոները չերեսին կապել, ել նրա չերեսը չես կարող տեսնիլ, մինչև... մինչև...

— Մինչև մեր պատկվելը, չե՞: Խնչ են խոսում ծնողներդ, չե՞ր պիտի նշանդրեք անեն:

— Դա չեմ իմանում, բայց մի բան եմ նկատում, Սեյրան, հոր ու մորս մեջ:

— Խնչ,—հարցրեց Սեյրանը վախեցած:

— Կասես, նրանք իմանում են, վոր մենք տեսնվում ենք:

— Եհ, աչքիդ ե չերևում:

— Ձե, Սեյրան, մեկել որը խոհանոցից տուն ելի մտնում, նրանք իմ մասին ելին խոսում: Հալըս տաքացած եր, չես վոր մտա, սուս աբալ: Բայց մինչև ներս մտնելս—միքանի խոսքեր հասան ալանջիս: Հալըս ասում եր. «ալ կնիկ, հրես ասում եմ, աչքերդ չորս արա, թե չե,—բեարուսչութուն կլինի համ»:

— Եհ, քեզ համար չի ասել, չերևի:

— Ձե, չե, անցյալ որը չմուշկ կարող Յեղիայի աղջիկն ել մի ել-համ արալ:

— Սուսամբարը:

— Հա', շատ սատանան ե:

— Սուս ե, չես չեմ հավատում:

— Ձե, Սեյրան, ել մի դար ինձ մոտ:

— Ձեմ կարող, սիրտս կճաքի: Միթե՞ չես խղճում ինձ:

Սուսանը, պատասխանի փոխարեն, մի խորը հառաչանք արձակեց կրծքից:

— Քանի վոր ուսումնարանում ելի, աչնտեղ ելի տանջվում,—շարունակեց Սեյրանը: Վարժապետի ասածհիդը գլուխս չեյին մտնում, ամեն որ դուրս ելի փախչում, վոր քեզ տեսնեմ: Հիմա չեկ հորդ դուքանումն ե սիրտս ճաքում: Շատ ժամանակ, վոր միտս ես ընկնում, շըշկլվում եմ ու մեկ ել տեսնես ասիղը մատս մտալ: Հալըդ ել, հո, աստված ազատի, նրա մոտ մի սխալ չի կարելի անել, աչնքան ե թակում, վոր կարծես մարդու հոգին ուզում ե քթի ծակով հանել:

— Քեզ ել ե թակում:

— Հենց ինձ ու մեկ ել լեղրորդ: Ասում ե, չես ձեզ շատ եմ թա-
կում, վոր մյուսները տեսնեն և իմանան, թե իրանց ել սիրելուց եմ
թափում: Սուսան, մեջքումս վողջ տեղ չի մնացել, կապույտ-կապույտ
գոյեր են կոխել: Նեղացել եմ, Սուսան, ուզում եմ, դուրս գամ հորդ
մոտից, բայց վախենում եմ, վոր դուրս գալով, քեզանից զրկվիմ: Ախ,
չերբ պիտի վերջանա մեր բանը:

— Բարեկենդանից առաջ չի կարող զուլի գալ:

— Ի՞նչ ես ասում: Ութ ամիս պիտի սպասեմ:

— Ճար չկա, հայրս փող չունի, փող և հավաքում հարսանիքիս
համար:

Սուսանը կրկին հառաչեց:

— Ինչ ու չես ծիծաղում, Սուսան:

— Մարդու սիրտը պիտի ուրախ լինի, վոր չերեսն ել ծիծաղի:
Միքանի վայրկյան տիրեց լուսթյուն:

— Միտդ ե, Սուսան, մեր չերեխալությունը, — հարցրեց հանկարծ
Սեյրանը:

— Ինչպես այն լուսինը: Տես, սիրտս ինչպես թրթռում և մոր-
թած ծտի պես, դա ինչի՞ցն ե:

Սուսանը, այս ասելով, բռնեց Սեյրանի ձեռը և զրավ չուր ձախ
կողքին: Նրա սիրտը բաբախում եր: Սեյրանը, մի ձեռը զրած նրա
կողքին, մյուսը զգուշութամբ բարձրացրեց և սկսեց քնքշությամբ
շօյել նրա գանգուր մազերը: Յեթե Սուսանը նույնպես չուր ձեռքը
դնեք Սեյրանի ձախ կողքին, կարող եր զգալ, ինչպես և բաբախում
վերջինի սիրտը: Անցան միջանի վայրկյաններ, նրանք լուռ ելին:
Սուսանը չեր նայում Սեյրանի չերեսին, բայց վերջինը նայում
եր: Որիորդի ձեռները պատանու ուսերի վրա դողում ելին: Դուրեկան
և քաղցր եր նրա համար այս դողը: Մի ինչ-վոր կախարդական հե-
ղուկ տարածվելով նրանց չերակներին մեջ, ախորժելի զգացմունքներ
եր պատճառում: Իսկ մի դյութիչ զորություն ալո ըոպելին կաշկան-
դել եր նրանց լեզուները: Սակայն լուռ ելին լեզուները, իսկ սաստիկ
բաբախող սրտերը նույն միջոցին ինչ-վոր զաղանիք ելին հաղորդում
իրարու:

Անցավ մի քաղցր ըոպե, մի ըոպե, վոր պարունակում եր չուր մեջ
չերկու պատանիների գոյության խորհուրդը: Հանկարծ Սուսանը ձեռ-
ները քաշեց Սեյրանի ուսից:

— Վաչ, վարսս կտրվի, ի՞նչ եմ անում:

— Ի՞նչ պատահեց, Սուսան, — հարցրեց Սեյրանը, շփոթվելով:

— Գնա, հեռացիր, հերիք ե:

Սուսանը կամեցավ փախչել, բայց Սեյրանը բռնեց նրա թևից և չթողեց շարժվելու:

— Բաց թող, չեթե ինձ սիրում ես, մայրս դուրս կգա,—հակառակեց Սուսանը, աշխատելով ազատել չուր թևը Սեյրանի ձեռքից:

— Մոտեցիր, ականջիդ մի խոսք ասեմ, հետո փախիր:

Սուսանը կամա-ակամա հնադանդվեց նրան: Սեյրանը, թեքելով նրա գլուխը դեպի չուր կուրծքը, մի ջերմ համբույր դրոշմեց նրա թավ-շամորթ ալտերից մեկին:

— Եզուց գիշեր ել այս ժամանակ դրսում սպասիր,—ասաց նա շունչը կտրած և բաց թողեց Սուսանին:

— Այդ ինչ արիր, Սեյրան,—շշնջաց Սուսանը, անդիտակցաբար արխալուղի թևով սրբելով համբույրի տեղը:

Բայց Սեյրանն արդեն հեռացել էր:

— Այդ ինչ ձայն ե, — լսվեց հանկարծ պատշգամբի վրա, Սուսանի չեռից մի տղամարդու սուր և զորեղ ձայն:

Ձայնը պատասխան չստացավ:

— Դու չես, Սուսան, — ինչ էս անում ալտերդ, — կրկնեց նույն ձայնը:

Սուսանը լուռ էր:

— Ո՞վ եր այն փախչողը, ել, ել, ել, մի ես,—գոռաց նույն ձայնը, ավելի ու ավելի զորեղանալով, բայց պատասխան չկար:

Սուսանն չերկյուղից և ամոթից չկարողացավ խոսել: Նա, գունաթափված, պատի տակ մնաց արձանացած:

VIII

Հետևյալ որը առավոտ Մարիամ բաջին խոհանոցում հաց թխելու պատրաստութունն էր տեսնում: Նա մենակ էր, տանը վոչվոք չկար: Դեռ չերեկ չերեկո Մարիամ բաջին, հայտնելով Գյուլնազին, թե հետևյալ որը հաց պիտի թխի, խնդրել էր նրան, վոր գա իրան ոգնելու: Որը բավական անցել էր, բայց Գյուլնազը, վոր պիտի գար արևածագին, մինչև այդ ժամանակ չեր չերեում:

Մարիամ բաջին ալուրը մաղեց, շուրը տաքացրեց, աղաջուրն էլ պատրաստեց, բայց Գյուլնազը չկար: Վարար մի գնամ տեսնեմ ինչ իլավ, վոր չեկավ—մտածում էր Մարիամ բաջին,—ամա չե, ես գիշեր ճրագը չուրու սհաթի չերեքը-չորսը վառ եր, չերեի մարդը կար ե արել, ինքն էլ անքուն մնացել, խեղճ ե, թող քնի:

Վերջապես, Մարիամ բաջին տաշտը դրավ, վոչխարի մորթինե-

ըրեց մեկը ձգեց տակին, և չերեսին խաչակնքելով, չոքեց, վոր խմորը շաղախի: Բայց հենց նոր եր արխալուզի թևերը մինչև արմուկները ծալել և աջ ձեռի ցուցամատով պատրաստվում եր մի խաչ գծելու ալ-յուրի վրա, չերը Գյուլնազը ներս մտավ:

— Լուսւր քեզ տեսնողին, ա քա, ի՞նչ պատահեց, վորտե՞ղ մնացիր, շատ սպասելուց աչքերս ջուր դառան խոմ,—հանդիմանեց նրան Մա-րիամ բաջին:

— Բաշխիր, Մարիամ բաջի, գլուխս խառնվեց, չկարողացա շուտ գալ,—պատասխանեց Գյուլնազը, խոր հառաչելով:

— Ի՞նչ կա, ախչի, վոր աչքունքդ զահրել էս, հըմ, ի՞նչու չես սպրտանել,—հարցրեց Մարիամ բաջին, այս անգամ չերկու ձեռներով հենվելով տաշտի ծալրին:

— Ե՛հ, վնչինչ... աղաջուրը վորտե՞ղ ե:

Գյուլնազը շփոթված շալը գլխից քաշեց և, մի կողմը շարտելով, մոտեցավ ոջախին:

— Յերեսիս մտիկ արա տեսնեմ, ախ ու ուֆդ առանց պատճա-ռի չի, չես իմանում եմ:

Գյուլնազը չերեսը, փոխանակ Մարիամ բաջու կողմը, շուտ տվավ հակառակ կողմը: Նրա տխուր դեմքը, կարմրած աչքերը, տամուկ թերթերունքները ցույց ելին տալիս, թե նա քիչ առաջ արտասվել ե:

— Յերանի են կնկան, վոր զավակներ չունի, —ասաց Գյուլնազը, կրկին հառաչելով:

— Առաջինը, լեզուդ տակահան չորանա, վոր եգպիսի խոսքեր չասես, հետո քեզանից բան եմ հարցնում, պատասխան տուր:

— Մուսանս քեֆ չունի:

— Ի՞նչ, ինչ ասեցի՞ր,—հարցրեց Մարիամ բաջին, չուր ականջ-ներին չհավատալով:

— Յերեսիս տաքացրել ե, անկողնում ընկած ե, այս գիշեր չու-րու լույս դել ե խոսել:

— Յուրտ ե կպել, գիշերը մրսել ե, բաց ե քնել ի՞նչ ե, արչուն, արչուն, մեջքից, վզակոթից, կոներից արչուն հանել տուր, տղրուկներ դիր վրեն:

— Յերանի մրսած լինելու Ախ աստված, չեմ իմանում մեհակ իմ ճակատիս ես գրել դա, թե ինձպես մի ուրիշն ել կա:

— Միբող ճաքի, սիրտս ճաքացրիր, հըլը: Ախչի, դե շուտ ասա տեսնեմ, ի՞նչ ե պատահել, վա՛յ,—գոռաց, վերջապես, Մարիամ բաջին, համբերութունից դուրս գալով:

— Աստված գլխիս խոռվել պրծել ե, ինչ պիտի իլի Յերեկ, ես

կոտրած ձեռքովս սաղ որը ենքան լվացք ելի արել, վոր իրիկնադեմին ինձանոււմ ել հարաքլաթ չեր ֆնացել վոտքի վրա կանգնելու։ Ծրագը վառեցի թե չե, մի զահրուժար մուռափ աչքերիս կոխեց։ Գլուխս տըմտըմալով, ես պատին եմ պատին կպչելով մի կերպ իրիկնահացը պատրաստեցի, իրան ու չերեխեքոցը հաց ուտացրի։ Դե չորեքշաբթի չեր, պաս որ եր, խաշխաշով չլավ ելի չեփել, ինքս ել միքանի պատառ դրի բերանս, հետո շորերս հագիս քաշվեցի մի կողմ, գլուխս դրի բարձին, վոր քիչ հանգստանամ։ Սմբատս ել չերեկ տասը բեռ ճախ եր կոտրել, շատ նեղացած եր, նա չեկ պառկեց։ Ծրագը վառ եր, ինքը նստած աշակերտի հետ կար եր անում։ Սուսանս ել թոռի «մեխակին» եր գործում։ Ախչի, աչքերիս աղաջուր ածելին, վոչ քնելի։ Հենց նոր խուփ ելի արել, մեկ ել տեսնեմ ականջիս մի ձայն հասավ, մի ձայն, վոր կասես թե մարդ են խեղդում։

— Հը՛մ, հըմ, հըմ,—արտասանեց Մարիամ բաջին, նստած տեղը դանադան տահամբեր շարժումներ անելով։

— Զարգանդած՝ քնից վեր թոռ ոճի կծածի պես, շարունակեց Գլուխնաղը։— Մարիամ բաջի՛՜ վոչ տեսնես, ես քոռացած աչքերս բաց արի թե չե, մեկ ել տեսնեմ—բնչ տեսնեմ։

Գլուխնաղը արխալուղի թևով սրբեց արտասուքը, վոլ խեղդում եր նրան և չեր թողնում ազատ խոսելու։

— Փուչիկդ ճաքի, Գլուխնաղ կնիկ, սիրտս պատառ-պատառ արիք, մի անգամ ասա, վերջացրու ելի։

— Ինքը..... եմ եմ եմ տնաստվածը, տեսնեմ, Սուսանիս թեից բռնած, ուժով ներս և քաշում, դռուլով ու վոտները գետնին խփելով։

— Այ մարդ, բնչ պատահեց,—հարցնում եմ լիս վախեցած, տեղիցս վոտքի թռչելով։

— «Առ՝, ան անհամուռ աղջկանդ։ Առ, աչքդ կոխիր ու մի քար ել վրեն դիր, ան»։

— Այս վոր ասում ե, հառաչ տալով, խեղճ չերեխիս ճընթո շորի պես շարտում ե ինձ վրա։ Մարիամ բաջի, նրա աչքերը կարմրել էին, ինքն ել հրսից մի սպրտնել եր, ինչպես ես ալլուրը։ Են վոր Սուսանս ե, ել նրանում ջան չկար, կասես գերեզմանից դուրս լեկած լիներ։ Հետո...

— Հետո, հետո, հետո,—կրկնեց անհամբերութլամբ Մարիամ բաջին։

— Հետո, Մարիամ բաջի, ախ, ել բնչ հետո։ Թշնամիդ, աչքիդ գրողը եմ սհաթին Գլուխնաղի տեղը չլինեք։ Են անաստվածը, եմ քարասիրտը, եմ եմ մոլթանին մի ձեռով բռնեց Սուսանիս մաղերից ու մեկել ձեռով սկսեց նրա գլխին կարկուտի պես թափել...

— Ո՛ք, ջան, ջան բալաս, մի ասի, վոչ լսեմ, քոռանամ,— բացա-
կանչեց Մարիամ բաջին, չերկու ձեռները ծնկներին խփելով։

— Ել ինձանում կենդանութուն չմնաց,— շարունակեց Գյուլնա-
ղը։— Վաղ տվի առաջ, վոր չերեխիս առնեմ գազանի ճանկից, ամա
ինչ կարող եյի անել։ Աչքերը մարդ չեյին տեսնում, նա կրծքիս մին
կոփեց, մին կոփեց, վոր շունչս կտրվեց, վայր ընկա։

— Զան, ջաան, ջան բալաս։

— Ուք, Մարիամ բաջի, Գյուլնաղը են միտութին տեղն ու տե-
ղը հողին փչեր հաղար դաթ լավ կլիներ, քան աչքերը բաց տեսներ,
ինչ-վոր տեսավ։ Զալլաթբաջին կոնատակին Սուսանիս չերեսը հալա-
վիդ ոռնգի պես կապուտ կապտել էր։ Աչքերն ել արցունի շանախներ
եյին դառել, հենց եյիր իմանում, վոր աչք ե, պիտի դուրս պրծնին։

— Ախար, աչ քարասիրտ, Խնչ ե արել,— հարցնում եմ չես, մա-
զերս քանդելով, կուրծքս պատռելով, Տես, աչս ել չեղունգներիս տե-
ղերը։

Այս ասելով, Գյուլնաղը շապկի չեղրը չետ քաշեց, ե նրա սալի-
տակ կրծքի վրա չերեացին միքանի արցունոտ գոլեր։

«Խնչ ե արել... նամուսս ցեխի մեջն ե գցել, անունս տափն ե
կոխել, փափախս վոտնատակ ե արել, աչ Խնչ ե արել։ Դուրս ե չեկել
գիշերվա կիսին Հաչրապետի տղի հետ սովբաթ ե անում, պաշպշվում
ե։ Այ ինչ ե անում»։

Լսելով չուր վորդու անունը, Մարիամ բաջին մի ձիչ արձակեց։
Գյուլնաղը շարունակեց.

«Սուտ բան ե, աչքիդ ե չերեացել, աչ մարդ,— ասում եմ չես,
գլխապատառ մեջ ընկնելով, վոր չերեխիս առնեմ նրա դարմախ-դար-
մախ ձեռներից։

«Կորիք, կորիք, հեռացիր դու շ...շ... աղջիկ,— բղավում ե վրես։
Չես հավատում, ելի չես հավատում, չես քեզ ասում եյի, ասում եյի,
վոր ականջովս ե ընկել, սաղ քաղաքում խոսում են։

Այս վոր ասում ե, մի ձեռով չերեխիս մազերից բռնած, մյուս
ձեռով կրծքիս մի պինդ կոպում։ Ել նրանից դեն ինչ ե լինում, ինչ
չի լինում, վոչինչ չեմ իմանում։ Աչքերս մթնում են, ուշքս գնում ե,
ընկնում եմ։ Շատ եմ մնում թե քիչ, աստված գիտե, մեկ ել աչքերս
բաց եմ անում, տեսնում եմ, վոր Սմբատս չերեսիս ջուր ե շաղ տալի։
Սուսանս մազերը թափված, կապտած չերեսով անձրևի պես արտասուք
ե թափում աչքերից։ Ինքն ել, չիբուխ քաշելով, գիժ կովի պես պտույտ-
պտույտ ե անում։

— Անունդ սե քարին գրվի, Սեյրան տղա,— աղաղակեց հանկարծ
Մարիամ բաջին, կրծքին խփելով։

— Լեզուդ պապանձվի, մի ասի, մի ասի, այ կնիկ,—ասաց Գյուլնազը, կրկին արտասովելով։

— Ձասեմ, բայ թնչ անեմ։ Նա, նա, են սե չերեսը բայ մեզ ուղում և խալտառակ անի։ Բայ ուղում և ևս քաղաքի մեջ, խալխի բերանում մեզ բերանի ծամոն շինի։ Վայ քո որին, Մարիամ կնիկ։ Սեյրան տղա, թե տուն կգաս, կտեսնես թե քո գլխին ինչ ուրիշ բերել կտամ։ Դո հերդ ևս լեզին խմողը չի, նա կթափի գլխիդ։ Ասում ելի ևս գիշեր, վոր հալդ հալ չեր, Սեյրան տղա։

— Դու լինես, են աստոծը, Մարիամ բաջի, չլինի չիմանամ, վոր Սեյրանին մի բան ասես, չես հենց դրանից եմ վախենում, տաքարյուն տղա չե, ով գիտե, ինչ կանի, ինչ չի անի։ Բարխուդարը առանց են ել չերդումաճաք իլավ, վոր մարդիդ պիտի ասի։ Դու լինես ետորվա որը, Մարիամ բաջի, ենպես արա, վոր ևս բանը քնի, թե չե Շամախին կլինի, մին ել մենք, մի մատ մեզը կդառնանք խալխի բերանում։

Մարիամ բաջին արխալուդի թեկերը կրկին քաշեց չուր տեղը, մազերը ուղղեց, բարձրացալ տեղից, փեշերից ալյուրի փոշին թափ տվավ և ասաց։

— Վերկաց փոտքի, վեր կաց գնանք չերեխիս մոտ։

— Ինչ գնաս, տաքացած ընկած ե... որը անց և կենում, հացդ կմնա։

X Ձահրումար ուտեմ հացի տեղ, վեր կաց, ասում եմ։

Գյուլնազն և Մարիամ բաջին գնացին Սուսանի մոտ։

Սուսանը պառկած եր անկողնում։ Յերբ Մարիամ բաջին և Գյուլնազը ներս մտան, նա մի վայրկյան գլուխը հանեց վերմակի տակից, նայեց նրանց, և կրկին փաթաթվելով, չերեսը պատին շուռ տվավ։ Սուսանի ճակատը մինչև հոնքերը փաթաթված եր թաշկինակով, նրա թշերի վրա չերեում ելին կապույտ բծեր— Բարխուդարի տված ապտակների հետքերը։ Յերբ նա մի վայրկյան վերմակի տակից նայեց, արտասուքից ուռած աչքերը փալկեցին դառն թախծությամբ։

Մարիամ բաջին նստեց Սուսանի բարձի մոտ, ձեռը դրավ նրա ճակատին, և չուր գեմքին փորձառու բժշկի լրջութուն տալով, ծանր չեղանակով ասաց։

— Կրակի պես երվում և չերեխիս ճակատը։ Ել մի ուղացնի, Գյուլնազ, դալլաք Հապանին կանչել տուր, վոր աբյուն բաց թողնի խղատակից։

Հետո Մարիամ բաջին զգուշությամբ չեռ քաշեց Սուսանի չերեսից վերմակը և սկսեց հարց ու փորձ անել։

— Մարիամ բաջին ցավդ առնի, վճի տեղդ ե ցավում, աչքերդ ինչձե չես խփել, դուռխդ չի՞ դըմդում:

Սուսանը չպատասխանեց, միայն տնքտնքալով վերմակը կրկին քաշեց չերեսին և սկսեց հեկեկալ խեղդված ձայնով:

— Լաց մի լինիր, բալաս, կլավանաս, ինչ կա, փառք աստուծո, ինչ տանեք, հերը աղջկան կթակի ելի, մենք ել քեզ պես շատ ենք թակվել ու հիվանդացել:

Բայց այս անգամ Սուսանի արտասուքի պատճառը չուր մարմնի ցավը չեր, այլ նա տանջվում եր բարոյապես: «Յերանի թե՛ չես ել ձեզ նման թակվելի, խայտառակվեցի, աստված», մտածում եր նա:

Մարիամ բաջին և Գյուլնաղը մի քանի ըոպե խոսեցին, խորհեցին, վիճաբանեցին և վերջը այն չեղրակացուծկան չեկան, թե անպատճառ և առանց հետաձգելու հարկավոր ե դալլաք կանչել:

IX

Բարխուդարը առավոտը բազար գնալիս, Հալրապետին պատմեց չերեկվա անցքը: «Թե վոր տղիդ կապը չքաշես, — ավելացրեց նա, — վոր մին ել ես դալթները չանի, ել վոչ չես, վոչ դու, Հալրապետ. մեր բարեկամուծթուհը կկտրվի մինչև հավիտենական դուռը»:

Լսելով այս խոսքերը, Հալրապետը բազարի մեջ մնաց տեղն ու տեղը: Նա մի քանի վալրկյան վոչ կառողացավ շարժվիլ, վոչ կարողացավ խոսիլ, միայն դուռխը ծոնց դեպի աջ ուսը, հոնքերը վեր քաշեց, աչքերը չոնց, ծնոտը լախացրեց և ապշած սկսեց նայել Բարխուդարին, վոր այդ միջոցին մի քանի քալ առաջ եր գնացել: Տեսնելով վոր չուր հարևանը կանգնեց, ինքն ել չետ նայեց և նրա հալացքը ընկավ ուղիղ Հալրապետի դեմքին:

— Հը՛մ, ցուրտ ե, բոս, սառած կմնաս բոս չեի: Ականջներդ բոց արա ու լավ լսիր, թե վոր լակոտիդ ջլովը ձեռդ չառնես, մեր բանը վերջացած ե:

Հալրապետը դարձյալ վոչինչ չպատասխանեց: Նա մի քանի վալրկյան ես դարմացած մտիկ տվավ ու վաղեց:

«Գնաց, վոր տընդըդի, թո՛ղ տընդըդի, անխ, թե իմ ել ձեռս կընկնես, Սեյրան լակոտ, սաղ թիքադ ականջդ կթողնեմ», — սոաց Բարխուդարը և շարունակեց չուր ճանապարհը:

Հալրապետը, գնալիս, ինքն իրան խոսում եր, զանազան հիշոցներ եր տալիս, հայտնի չեր ո՛ւմ, և ձեռներով ու գլխով անսովոր շարժումներ անում: Անցորդները տեսնելով նրան, կանգնում ելին ու մտիկ անում դարմացած, «գժվե՛լ ե ես մարդը, ինչ ե» կրկնելով:

Վերջապես, Հայրապետը հասավ տուն։ Սեյրանը տանը չեր։ Հայրապետը մտավ խոհանոց Մարիամ բաջուռն տեսնելու, բայց նրանք ևս այնտեղ չգտավ։ Նա կամեցավ անմիջապես գնալ Բարխուդարոնց տուն, բայց հետո փոշմանեց և, մի քանի քալ չանցած, կրկին վերադարձավ չուր սենյակը։

Քառորդ ժամից հետո ներս մտավ Մարիամ բաջին։

— Քեզ նման կնկա սիրտը պիտի հանեմ, շամփրին քաշեմ ու թեթ կրակի վրա դես խորովեմ, դեն խորովեմ, վոր բալքա սիրտս հովանա, — գոռաց Հայրապետը, հարձակվելով չուր ամուսնու վրա։

Մարիամ բաջին իսկույն հասկացավ նրա բարկության պատճառը։

— Յես ինչ մեղավոր եմ, աչ մարդ, վոր իմ գլուխս ևս ծակում։

— Բաս չես եմ ծնե՞լ են լակոտին, հըմ, չես եմ ծնե՞լ։

— Ծնողը ի՞նչ հող ածի գլխին։

— Սև հող։ Մեղավորը դու չես, բաս թվ եւ Դու չես, վոր նրա հետ աղաչանք-պաղատանքով ևս խոսում։ Դու չես, վոր փայտը ձեռս վերցնելիս, գլխապատառ մեջտեղ ես մտնում, վոր չես են, են շնի՞նչի խրատեմ։ Հըմ, գնա, դեհ հիմա սաղ քաղաքում խալտառակվիր, ըր՞ը չես քո եդ, եդ, եդ, մեղա քեզ տեր ամենակարող, հը՞մ, ասա տեսնեմ, ինչե՞ս չես ծնել։

Հայրապետը, վերջին հարցը կրկնելով, ուսերը վեր քաշեց, մոտեցավ Մարիամ բաջուռն, բռնեց նրա թիկունքից և սկսեց թափահարել, անդադար կրկնելով. «Ինչե՞ս չես ծնել»։

— Խաթի բալի մեջ չընկա՞նք։ Ա՛յ մարդ ֆիքր արա, տես ինչեր ևս դուրս տալիս, խելքդ վճրատեղ ևս թողել։

— Խելքս փափախիս տալիս եւ։ Մին ել եմ հարցնում, ախար ինչե՞ս ծնեցիր, հըմ, ինչե՞ս, վոր եսորվա՞ս որը ինձ Բարխուդարի մոտ սե չերես թողնի՞, համ, աչ չես քո են... տեսեր աստված։

Մարիամ բաջին, տեսնելով, վոր չուր ամուսինը շատ և չերկարացնում, չերեսը շուռ տվավ ու դուրս չեկավ։ Հայրապետը մինչև չերեկո աչս կողմ աչն կողմ շուռ տվավ, դես վազեց, դեն վազեց, մինչև վոր իրիկնադեմին Սեյրանը չեկավ տուն։

Առանց մի խոսք ասելու, առանց վորև և հարց ու փորձի, Հայրապետը մի մեծ կռալ խլեց, վոր հարձակվի չուր վորդու վրա։ Վերջինը հենց սկզբից հասկացավ շարժողության պատճառը, փախավ դուրս, և ամբողջ որն ու գիշեր չվերադարձավ տուն։ Բայց և այնպես նա չ'աղաթվեց պատժից։ Հայրապետը մյուս որը չերեկոյան բռնեց Սեյրանին և այնքան ծեծեց, վոր ինքը հոգնեց, իսկ ծեծվողը ուշաթափվեց։

Սուսանի հետ տեսնվելուց հետո Սեյրանը այլ ևս դադարել եր հաճախել Բարխուդարի խանութը։ Նա վախենում եր, բայց վոր ամենազխտվորն ե, ամաչում եր յերեալ ահարկու «ուստալի» աչքին։ Առավոտը նա դուրս եր գալիս տնից, վերադառնում եր յերեկոյան։ Հայրապետը ամեն որ շարունակում եր գործածել խրատելու սովորական միջոցը—ծեծը։ Մարիամ բաջին աշխատում եր խելքի բերել Սեյրանին յուր մայրական քնքույշ խրատներով։

— Այ գեղա, ալ գեղա, խնայիր մեզ, անուններս տալի մի կոխիր, խելքի չնկ, գնա բանիդ։

— Կթակի, չեմ ուզում։

— Հուրսը քնել ե, լավ ե, բաշխել ե, մի վախենար։

— Հըմ, մի վախենար։ Սմբատն ասում ե, ամեն որ տնունս լսելիս, բեզերը կրծոտում ե։ Ձե, չեմ ուզում, լավ ե քաղցած մեռնիմ, քան թե նրա յերեսը տեսնեմ։ Յես թակից չեմ վախենում։

— Բաս ինչից ես վախենում։

— Ամաչում եմ, ամոթ ե։

— Մին բան ես բռնել, վոր չ'ամաչեմ, սե յերես գեղա։

Սեյրանի համար ամենացավալի բանն այն եր, վոր չարագուշակ յերեկոյից հետո չեր կարողանում տեսնել Սուսանին, հարցնել, իմանալ նրա դրութիւնը։ «Ո՛վ գիտե, կարելի չե նա նեղացած ե ինձանից, վոր չես համբուրեցի՝ և այսքան չարչարանքների պատճառ գարձա»,—ասում եր ինքն իրան Սեյրանը։ «Բայց չե, այստեղ համբուլը չի գլխավոր պատճառը. ասում են, վոր Բարխուդարը վաղուց ե իմացել մեր տեսնվելը»։ Ահ, մի անգամ ել նա տեսնե Սուսանի-յերեսը, հարցնե, իմանա նրա միտքը, հետո ինչ ուզում են, թող անեն նրան...

Յեւ այս նպատակին հասնելու համար գիշեր ցերեկ նա մտածում եր, տեսակ-տեսակ ծրագիրներ եր կազմում։ Ամեն յերեկո մութն ընկնելուց հետո, նա վազում եր ու թագնվում Բարխուդարանց տան պատերի տակ, վոր գուցե Սուսանը բակը դուրս գալու ժամանակ, նրան հանգիալի։ Բայց իզուր, Սուսանը չեր յերևում, կարծես նա չկար աշխարհում։ «Չիինի թե հիվանդ պառկած ե անկողնում»,—մտածեց մի որ Սեյրանը։ Բայց հետևյալ ոըը նա կողմնակի կերպով հարցրեց այս մասին Սմբատից, և վերջինի խոսքերից յերեաց, վոր Սուսանը վաղուց ե առողջացել։

Այսպես Սեյրանը մի ամբողջ ամիս անցկացրեց։

Կեսօրվա ժամի մեկն եր։ Արեգակը կիզում եր։ Այն փողոցը, ուր գտնվում եին Բարխուդարի և Հայրապետի տները, դատարկ եր։ Մի-

այն չիրքեմն այս կամ այն տան դռներից դուրս եր գալիս շալի մեջ
փաթաթված մի կին կամ որիորդ և շտապով մտնում հարևան տներից
մեկը, ձեռքում շալի տակ մի ափսե պահած: Նա այսորվա չեփած կե-
րակրից յուր հարևանի համար «դռնի փալի» (հարևանի բաժին) և տա-
նում:

Արեգակի տաքությունից նուշնիակ թափառական շները քաշվե-
նային փողոցի կիսախարխուլ սլատերի ստվերի տակ և, լեղունները
մինչև արմատը դուրս բերած, «լահ կյին թակում»: Ոգուտ քաղելով
նրանց թուլացած դրությունից, շանաճանճերը վրա թափված, անխնա
կերպով կծուտում ենին նրանց: Շները անդադար թափահարում ենին
իրանց դնները, վար ճանճերին փախցնեն. «Տը՛ղ» թողնում ենին ճան-
ճերը մի վայրկյան և կրկին նստում իրանց տեղը, վոր նորից սկսեն
ծծել խեղճ կենդանիների արյունը:

Մերթ ընդ մերթ փողոցի մեյամադձոտ լուսնունը ընդհատում
եր ամբողջ քաղաքին ծանոթ, բուխարու հին գդակներ դնող, կարճա-
հասակ, չալ միրուքով, սպիտակ ատամներով, հաստ ու կարմիր շըր-
թունքներով, հնդիկ Բաշիրի հաստ ու խուպոտ ձաչնը: «Քոհնա փը-
փախ, քոհնա փըփախ»,—գոռում եր նա, կանգնելով այս ու այն տան
դռների առաջ և, հոնքերը վեր քաշած, նայում դեպի բակը: Բակե-
րում խաղացող մանուկները, լսելով նրա փարորինակ ձաչնը, «այ
բաշի, այ գադաշ, դարա Բաշիրը չեկել և, վոր մեզ տանի դեի մոտ», աղա-
ղակում ենին նրանք ու փախչում ենին ներս: «Ղարա Բաշիրի» ձաչին
հետևում եր նուշնիակ ամբողջ քաղաքին հայտնի «թեփ առնող» Թե-
դիի ձաչնը: Ահա հրեն եեն, Թադին, մի չվալ թեփ շալակած, մեջքից
չերկու ծալ ծոված, տնքտնքալով անցնում և այս փողոցից դեպի
մյուսը, ուժասպառ ձաչնով բացականչելով. «ոաթտող քափաակ ոլան»:
Յեկ Թադիի ձաչնը, վոր, կարծես, հորի խորքից և դուրս գալիս, տա-
րածվելով «Պարաբա շահարի» առանց այն ևս մոռալ սվերակների
վրա, կրկնապատկում եր նրանց մոռալությունը:

Մարիամ բաշին այդ ժամանակ իրանց բակում պատի ստվերում
նստած կար եր անում, տմտըմալով: Նա նստած եր չերեսը դեպի
բակի փլատակված պարխալը դարձրած: Բակում ուրիշ վոշ վոք չկար,
միայն խոհանոցի առջև հավաքվել ենին հավերը ու աքաղաղները և
կուտկուտում ենին գետնին թափված խաշած բրինձները և չերքեմն կըշ-
կչալով իրարու կտցահարում:

— Դիլշադ, Բիլշադ, այ անտեր մնաք, ու՛ր, մարդու սիրտ կճա-

բացնեք դուք,—բացականչում եր շուտ-շուտ Մարիամ բաջին հավերի վրա, չուր կշտին դրած բարակ ճիպոտը գետնին չրփացնելով:

Մարիամ բաջու միտքը այդ ըոպեյին դրադված եր, այդ պատճառով երնա շուտ-շուտ բարկանում հավերի վրա, վոր խանդարում ելին նրա մտածմունքները:

Մի բանի ըոպե կարելուց հետո, Մարիամ բաջին հանկարծ ասեղը ցցեց կարի մեջ, մատնոցը մատից հանեց և կարի հետ շարտելով մի կողմ, ձեռը մեկնեց մինդարի տակ, վորի վրա ինքը նստած եր ծալտպատիկ: Նա աչնտեղից դուրս բերավ մի հին շորի փոքրիկ կապոց և բաց արավ նրա կշկուռները: Դուրս թափվեցին կապոցի միջից մի բուռն չորացած ու սևացած սիսեռներ: Մարիամ բաջին վեր առավ քթախոտամանը, ցուցամատի և բուլթ մատի ծալերով դուրս բերավ աչնտեղից մի պտղունց քթախոտ: Մի չերկու անգամ ախորժակով քաշեց, փռշտաց, հազաց ու չերեսին խաչակնքեց, ասելով, «տեր աստված, դու չարը խափանես, բարին առաջ բերես»: Հետո, նա քթախոտամանը կրկին դրավ չուր տեղը, կրկին չերեսին խաչակնքեց, այս անգամ չերեք անգամ, և ջերմեռանդությամբ սկսեց «նոխուլթ բացել», աչխնքն սիսեռների վրա հմալել, քթի տակ տըմտըմալով. «իլի—չիլի դա, տեր ամենակարող աստված, իմ Սելրանիս բախտը իլի, թե վոր չերեսխիս վերջը բարի չե, ես նոխուլթը բաց դուրս գա, թե չե շառ ե, փակ դուրս գա»:

Այս ասելով, Մարիամ բաջին աջ ձեռի ափով չեոթն անգամ տրորեց սիսեռները և մատերի ծալերով բաժանեց չերեք մասերի: Նա աչս կողմը դարսեց, աչն կողմը դարսեց սիսեռները, մի տեղ ավելացրեց, մի տեղ պակասացրեց, հետո կրկին խառնեց ու մեկ ել բաժանեց, աչս անգամ իննը տեղ: Աչնուհետև նա ձեռները սիսեռներից հեռացրեց, դեմքին լըջուլթյուն տվավ և, նաչելով նրանց, սկսեց ինքն իրան խոսել:

«Դա բաց ճանապարհն ե, ես մեկն ել Սելրանս ե, տես, տես ինչպես ե կանգնել ֆիքրի մեջ կորած: Հա, սա չիլ Սելրանիս առաջ մեկը կանգնած ե, ով լինի, հը՞մ: — Հալբաթ Սուսանս ել Հետո, դե սրանք ել Սելրանիս ընկերներն են, ուֆ, աստված, ինչպես են չարերի պես չերեսխիս պատել չորս կողմից: Ձեղ տեսնեմ, վոր բերեզներդ ջուր լինի ու ձեռներիդ մեջ թափվի, չարար լինչ եք ուզում չերեսխիցս: Հա, լավ, բաս ես մեկը ով ե, տեր աստված, վոր եդպես չերեսխիս առաջը կապում ե սև թելի պես: Ուֆ, քո աչքն ել հանեմ, վորտեղից դուրս պրծար դու: Ո՞վ պիտի իլի, աստված, հըմ»:

Մարիամ բաջին, աջ ձեռի մատները ծռելով, դրավ ծնոտի վրա, իսկ ցուցամատով ծածկելով բերանը, խորը մտածողութիւն մեջ ընկավ:

«Ձեռ, չե՛, բաս նոխութը պակաս ե, ասաց նա ինքն իրան, ձեռը ծնոտից հեռացնելով: Մի-չորս, չերկու-չորս, չերեք-չորս, չորս-չորս: Դա չե՛լ հինգ-չորս, դա չե՛լ մին թաք: Դրուստ տասը-չորսը, մին թաք: Պակաս չի, մեկ ել բաց անհամ»:

Նա կրկին խառնեց սիսեռները և կրկին միևնույն տեսակ բաժանեց:

«Փիեե, ելի բերեղ դուրս չեկածը պըպկեց չերիխիս առաջ», ասաց Մարիամ բաջին և սկսեց չերրորդ անգամ բանալ: Հետո նա չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, վերջապես, մինչև տասնուհինգ անգամ բաժանեց և բաց արավ: Վերջապես, Մարիամ բաջին հոգնեց, ինքն իրան բարկացավ և սիսեռները հավաքեց:

«Անտեր ֆուսա, աչ նոխութ, մի խեր խարար չես ասում, կորնը», ասաց, արագութեամբ մի կողմ շարտելով սիսեռների կապոցը, և կարը վերցրեց:

Այդ ժամանակ նա լսեց մի բարձրաձայն աղաղակ, վորից հետո իսկույն մի գլխարաց չերիտասարդ, գդակը ձեռում բռնած, ներս թռավ:

— Նամարգներ, ինձ մեծակ եք տեսել, սպասեցե՛ք, չիս ձեր գլխին մի ուլին բերեմ, վոր ճանաչեք, թե չես ո՛վ եմ,— գոռում եր չերիտասարդը, վազելով բակի մուռ կողմը, ուր խոհանոցն եր գտնվում:

Մարիամ բաջին հայացքը ձգելով չերիտասարդի վրա, սարսափեց և տեղն ու տեղը անշարժ մնաց: Նրա ձեռները թուլացան, և կարն ընկավ գետնին:

— Սեյրան, Սեյրան, աչ գեղա, ելի ռումի հետ, ելի ռումի հետ,— աղաղակեց նա, ուշքի գալով և տեղից վեր թռչելով:

Բայց Սեյրանը չեր լուռ: Նա վաղեց խոհանոց, մի չերկայն կարմրագույն փայտ վերցրեց, մի վալրկլանում չուխան հանեց, փաթաթեց ձախ թխին և թռավ փողոց: Մարիամ բաջին հետևեց նրան:

Փողոցում սպասում ելին չերկու առողջակազմ չերիտասարդներ նուշպես մի-մի փայտ ձեռներին և, իբրև վահան, ձախ թխերին չուխաները փաթաթած:

Սեյրանը գլխակոր վաղեց նրանց դեմ: Կոխիլը սկսվեց: Սեյրանը պաշտպանվում եր և, աջող վալրկլաններ գտնելով, հարվածներ եր տալիս չուր հակառակորդներին: Մեջ ընկավ վոտաբաց և գլխի մագերը փետելով, Մարիամ բաջին:

«Ա՛յ ձեր մեջքը տափին կպչի, աչ ձեր մերերը սեռում ֆուան, աչ ձեր աչքի լուսը ջուր դառնա, չերեսներդ թափվի, լինչ եք անում»:

Սեյրանի հակառակորդներից մեկը, փաշտի մի հարված տալով Մարիամ բաջու ուսին, չթողեց մեջ մտնելու։

— ՈւՖ, ջիգարդ դադվի, հառայ, ա՛յ հայ քրիստոնյաներ, երեսիս սպանեցին, վաչիս հասեք,—գոռաց Մարիամ բաջին և ուժասպառ ընկավ դեռնին։

Այդ վաչրկյանին կովոդներին մոտեցավ մի ուրիշ բարձրահասակ լերիտասարդ։ Դա նույնպես զրահավորված էր փաշտով։ Հասավ թե չե, լերիտասարդը Սեյրանի հակառակորդներից մեկի թեխն մի սաստիկ հարված տվավ։

— Ուխայ, ուխայ, բոչիդ մեռնեմ, Սմբատ, ուխայ, մին ել,—բացականչեց Մարիամ բաջին։

Հակառակորդի թեք թուլացավ, ձեռից փաշտն ընկավ, նա սկսեց փախչել։ Մյուս ընկերը անմիջապես հետևեց նրան։ Սեյրանն և Սմբատը վազեցին նրանց հետևից, բայց հակառակորդներն անհետացան փողոցի ծայրում։

Սմբատն և Սեյրանը հաղթության զգացմունքով վառված հետ վերադարձան։ Մարիամ բաջին չէր դադարում աղաղակել և մազերը փետտել։

— Հերիք ե, սո՛ւս արա, տեսար հո ինչ բերինք նրանց գլխին,—ասաց Սմբատը, փաշտը դնելով պատի տակ, վոր չուխան հագնի։—Թափվել են ինձ վրա, ուզում են, վոր սպանեն, բաս չես սուս անեմ։

— Ախար, ա՛յ մեռած, քեզ լ՞նչ ունեւ շառլատանների հետ, քեզ թի՛ ե ասում, վոր նրանց հետ խառնվեա։

— Քիչ խոսիր, մի քիչ ջուր բեր, վոր գլխիս արյունը լվանամ։ Մինչև այդ ժամանակ Մարիամ բաջին չգիտեր, թե Սեյրանի գլուխը վիրավորվել և փաշտով։ Տեսնելով նրա ճակատից հոսող արյունը, քիչ մնաց ուշաթափվել։

— Ես որվա որը վո՛ն լուսանար մորդ համար, Սեյրան տղա, ախար նոխութը զուր չէր թարս նշան տալիս,—գոչեց նա և վազեց խոհանոց ջուր բերելու։

X

Յերեկո չէր։ Մարիամ բաջին վշտացած հոգով ընթրիքի պատրաստություն եր տեսնում։ Հայրապետը դեռ խանութից չէր չեկել։

Սեյրանը, գլուխը կտրմիր թաշկինակով կապած, առանց չուխայի, սպիտակ չթից կարած բարակ արխալուղով նստած էր փողոցում, իրանց դռների առջև։ Սմբատը և մի քանի ուրիշ հարևան լերիտասարդներ նրան շրջապատած խոսում ելին ցերեկվա անցքի մասին։ Սեյրանի

դեմքը տխուր եր, աչքերը գետնին հառած: Նա խոսակցութեանը չեր մասնակցում:

— Ախար, ասդա, մին ասեք տեսնենք եդ դալմադալը ի՞նչի չեր, — հարցնում եր մի մոտ քսան ու չերկու տարեկան չերիտապարդ:

Դա հագած եր կարճիկ արխալուղ, վորի վրայից կապած եր լալն արծաթյա գոտի, սև մահուդյա չերքեակա բուզմաներով և վազմաններով, մի փոքր սովորականից լալն վարտիկ և չերկալն կտուցներով մաշիկներ: Նա գլխին դրած եր կոլորակ մեխակագուլն բուխարու գլակ: Նրա բեղերը սրած ելին և ծայրերը մկան պոչի պես բարակացրած: Բալց նա, ասուամենայնիվ, չեր դադարում ելի մատերի ծայրերով նրանց վոլորելու:

— Յես ինքս հենց ենտեղ ելի ելի, աչքիս առաջին ընկալ կոխվը, — պատասխանեց Սեյրանի փոխարեն մի ուրիշը:

Դա չել մի կարճահասակ չերիտասարդ եր նուլն ձեով հագնված և ծործորակը մաքուր սափրած պարսկական չեղանակով:

— Դե, լես մեռնեմ լոթիանա, մի նաղլ արա՛ տեսնենք, — դիմեց նրան մի չերրորդը, վորի գգակը ալնքան ծուռ եր դրած, վոր տեսնողը կկարծեր, թե հրեա պիտի գլորվի գետնին:

Կարճահասակ չերիտասարդը հագալով, բեղերը վոլորելով, սկսեց հանդիսավոր կերպով.

— Ադա, լես ելի, Սեյրանը-Սմբատը, Թափառողանց Ջահանգիրը, Շամչյանց Աթանուր, Ճատտի-Կոուրանց Յենգիբարը, Խնքյա թանց Թաթին, Թուրքունանց Փափանը, Բեդալյանց Մարտիրոսը, Սատանաբունդանց Պետրին: Դարամահլումը «ալթի դոդ» ելինք խաղում: Դեղողը Սըմբատն եր: Ճատտի-Կոուրանց Յենգիբարը մի մանեթ դրալ տափին, լողալողա ասեց Սմբատին, վոր մին բաշ նրա մանեթին գցի: Ադա՛, Սմբատի բախտը բերավ, դոչաղը ենպես գցեց, վոր հարի միջին դուռը բաց չորս դիրավ, ձեր արևը, վո՛չ եմալ վոչ պակաս: Յենգիբարի բերանը բաց մնաց, ախար մանեթ կասան հա, քիչ փող չիմանաք, մին դանա ջղջղալի Նիկալալ ա: Հ՛րմ. Խնչ անի, ինչ չանի, ճարը կտրված, մանեթը լես վերցրեց:

— Փահ, նամարդ քլոփողլի, — արտասանեց բեղերը սրած չերիտասարդը: — Հետո, հետո:

— Հետո, ել ինչ հետո: Սմբատը ասում ե. «ադա, ի՞նչ ես անում»: Յենգիբարը ասում ե. հանաք ելի անում, գիժ եմ, վոր եսքան փողով մին բաշ հաղ անեմ: Սմբատը թե՛ «դես տուր մանեթը ասում եմ, չես տալ, գլուխդ ձվի պես փշիր-փշիր կանամ»: Ճատտի-Կոուրանց Յենգիբարը թե՛ «ձայնդ կտրի, քո աթանցդ, անանցդ»: Դե, Խնչ ասեմ, ճա-

նաչում եք ելի Յենգիրարին, ուխը վոր բացեց, ել աստված ա-
ղատի: Ըհհ, տղերք, Սմբատի հուրսերը հավաքվեցին, ուշուհնցը ու-
շուհնցի չետեից: Յենգիրարը դա վոր լսեց թե չե, կատաղեց, կապուտ-
կապուտեց: Զատլմը ուխը բացեց, մի խոսք դուրս բերավ, վոր Սմբատի-
աչքերը արշուհնկոխեցին: Ասում ե. գնա հայասըղ աննամուս քրոջդ
Չուլովը հավաքի, վոր գիշերները Սեյրանի հետ...

— Փահ, ադա, չկարացաք հենց տեղն ու տեղը նրան քոնդա-
լա գցել, — ընդհատեց պատմարանի խոսքը գդակը ծուռ դրած չերի-
տասարդը, ուսերը վեր քաշած, ծնոտը ծեկով, աչքերը չեկով, և
ձեռները զարմացած առաջ տարածելով:

— Մի կանգնի գն ելի, ախար մի տես ինչ իլավ, հետո եե, —
շարունակեց պատմարանը: — Դե, Դյոխանց Սմբատին աթանց խոսք
ասիլ կլինի: Բիրդան նրա աչքերը կարմրեցին, արշուհնով լցվեցին:
Հենց նոր դանակը ուղում եր ջիբից հանել, մին ել տեսնենք, մինչև
դուրս բերիլը, Սեյրանը մին թշափիկ Յենգիրարի փորին: «Այ չես քո
աթանցը, անանցը, աթանց անեմ, անանց անեմ»: Յենգիրարը թախկ,
ձկնի պես, թիր լափաշվեց տափին: Ամա ելի շուտ վեր կացավ, փա-
փախը վերցրեց ու հայդա մին բաշ մինչև տուն: Նրա հետևից վաղ
տովով Սատանաբունողանց Պետրին: Մին մուռթ չքաշեց, մին ել տես-
նենք չերկուսն ել փետները սրած, վշալգլահ արած, չեկան փետ-
փետի կռիվ անելու: Սմբատն ու Սեյրանը, առանց բանը չերկարաց-
նելու, մին բաշ տուն: Նա չեր, վոր չեկան դրմզի-հոլ-հոլ դյազանագ-
ների կոթին թքեցին ու աջըղ նամարդների ուխը չիտ տվին, փախ-
ցրին մինչև խոնջանների կտրվելը: Ամա քրոփողլի Սատանաբունո-
ղանց Պետրին Սեյրանի մոր ուսին մի փեա կոփեց, խեղճ կնիկը տուն-
դուռուզի վրա նստեց:

— Փահ չես նրանց հերն անիծեմ, — գոչեց բեղերը մկան պոչի
պես սրած չերիտասարդը, — ադա նրանք մեր մահլի ջահրլների հետ
փետ-փետի կռիվ անիւ: Տղերք, նամուսը մերն ե, ել Փիքը անելու
տեղը չի: Դուք մեռնեք, լոթխանա, եղուց մի մահլադավասի սարքենք,
վոր սաղ քաղաքը զարմանա:

— Հարկավոր չե, չես առանց դրան ել փոշմանել եմ, — ասաց
Սեյրանը, լուր հայացքը գետնից չհեռացնելով:

— Յես ել եմ փոշմանել, — ավելացրեց Սմբատը:

— Ձեր բանը չի, դուք իսկի միք խոսիլ, տեղներդ դինջ նստե-
ցեք սուս ու փուս: Մենք բանը գլուխ կբերենք առանց ձեզ հլ, — մեջ
մտավ կարճահասակ չերիտասարդը, գիմելով Սմբատին և Սեյրա-
նին:

— Բոս վոր եղպես ե, լես գնամ քլոռամալս լեղեմ,—ավելացրեց
դդակը ծուռ դրած լերիտասարդը: Յերբ եք կոխվը սկսելու:

— Հենց եզուց կեսորից հետո,—միաբերան գոչեցին կարճա-
հասակ և բեղերը մկտն պոչի պես սրած լերիտասարդները:

Այդ միջոցին փողոցի ծալքում լերեկեցավ Հայրապետը, վոր, չու-
խալի տակ մի ինչ-վոր բան բռնած, գալիս եր տուն:

Սեյրանն և Սմբատը անհապաղ մտան տուն: Մյուսները նույն-
պես հեռացան իրանց տները, խորհելով. ինչպես վաղը կոխվ սկսեն և
վերջացնեն, վոր իրանց ամառի ջահիլները նամուսը տափը չկոխեն:

XI

Որը բոլորովին մթնեց: Մարիամ բաջին խոհանոցում ճարպի
մոմը վառեց և բերավ ներս: Հայրապետը նստած եր պատի տակ,
մինդարի վրա, մեջքը բարձին, մի վտտը ծալած, մյուսը մեկնած: Նա
մի ձեռքում լերկալն չիլուլան եր բռնել ու ծխում, մյուսում տերոզոր-
մյան եր չխչխկացնում:

Հայրապետը, ըստ լերեույթին, շատ տխուր եր: Յերբ Մարիամ
բաջին աշտանակը դրավ մեջտեղ, աղոտ լույսը ընկավ նրա վրա: Այդ
մշտապես ուրախ ու պալծառ գեմքը լերեք աչդհափ թթված չեր:
Մարիամ բաջին սովորական երբարի լերեկոն» կրկնեց լերկու տեղամ
և, Հայրապետից պատասխան չստանալով, հեռացավ սենյակի մի ան-
կյունը: Սեյրանը գրսուձն եր, վախենում եր, թե ամառում նա, բայց
չեր ուզում ներս գալ: Յերկու ամուսինները նստած ելին լուռ ու
մունջ: Մարիամ բաջին հալացքը չեր հեռացնում Հայրապետի ճակա-
տից, իսկ վերջինը առաստաղի մի կետից:

— Բարի լերեկո,—ներս մտավ մի բարձրահասակ մարդ:

— Այ աստուծո բարին, Բարխուդար:

Հայրապետը և Մարիամ բաջին բարձրացան տեղերից:

— Համեցեք, համեցեք, ախի Մարիամ, մի փափուկ մինդար բեր:

— Նեղություն մի քաշիլ, նստիր, Հայրապետ, լես ես պատի
տակն ել կնստեմ:

— Չե, բաս վոր եղպես ե, անցկաց, տեղումս նստիր, մեջքդ
բարձին տուր,—ասաց Հայրապետը, խորին պատկառանքով ցույց
տալով չուր տեղը:

Մարիամ բաջին սփռեց մի մինդար Հայրապետի տակ, և լերկու
հարեանները նստեցին:

— Ե՛հ փառք քեզ ասոված,—սկսեց Հայրապետը, աջ ձեռքը
քսելով ճակատին:

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա, Բարխուդար:

Վերջինը պատասխանելու փոխարեն Հայրապետի լերեսին նայեց և աչքերով մի նշան՝ արավ: Հայրապետը խկուլն հասկացավ, ինչ և նշանակում այդ նշանը:

— Մարիամ, վեր կաց, դուրս լիկ, — դարձավ նա չուր ամուսնուն: Մարիամ բաշին դուրս լիկավ:

— Յես չեմ սիրում, վոր լերը տղամարդիկ մի շատ հարկավոր բանի վրա խոսում են, կանաչք լսեն, — ասաց Բարխուդարը, ծխախոտի չորացած տերեւ ձեռների ավերում տրորելով, վոր չիբուխը լցնի:

Բարխուդարը խոսում էր սառն ու քիչ կոշտ: Նրա դեմքը արտահայտում էր տխրություն և բարկություն:

— Յես ել չեմ սիրում, Բարխուդար, կնիկարմատի բերանում վոսպ չի թրջվում, մի բան վոր լսեցին, աշխարհը լսեց:

Նկատելով չուր հարեանի սառնությունը, Հայրապետն ինքն ևս աշխատեց, վորքան կարելի լի, չուր դեմքին լրջություն տալ, և տվավ ել:

— Նդպես ե: Հայրապետ, լես չիկել եմ քեզ միքանի բաներ ասելու, թող հենց առանց պատեպատ ընկնելու սկսեմ, — ասաց Բարխուդարը, և չիբուխի ծայրը դրավ բերանը, մյուս ծայրը մեկնեց ճրագին, վոր ծխախոտը վառի:

-- Իմ զահլեն տանում են բազի մարդիկ, վոր իրանց ուղածը ասելու տեղ, սար ու քոլ են ընկնում:

— Խոսք չկա, Հայրապետ, վոր լավ միտդ և չերկրաշարժի լսեցնեն:

— Պարզ, ինչպես ես ճրագը:

— Մի՞տդ ե, վոր են չերեկո ճիասին հավաքված անցկացրինք:

— Հոմ:

— Նո՞ւ լիկ ե միտդ, թե ինչ խոսեցինք:

— Միտս ե, ամա ենքան ել պարզ չի, չե՞, հըմ, կոց, մի ֆիքը անեմ:

— Մենք խոսեցինք մեր բարեկամություն ու մեկ ել Սուսանիս ու Սեյրանի մասին: Մի՞տդ ե:

— Աֆարիմ, Բարխուդար, ութ-իննը տարի լի անցել, աֆարիմ, վոր եղպիսի միտք ունիս:

— Յես, Հայրապետ, են չերեկո խոսք տվի, վոր լիթե աղջիկս մեծանա — տղիդ տամ, — շարունակեց Բարխուդարը հանդիսավոր կերպով և ամեն մի բառ առանձին շեշտելով: — Են որվանից անցել և իննը տարի. հիմա, աստված պահի, տղադ մեծացել ե, իմ աղջիկն ել հասկացա և դառել: Ուրեմն թե իմ աղջկան, թե քո տղիդ պսակվելու

վախտն եւ Լյով: Ինչպէս դու չեղ ճանաչում ես, Հայրապետ, չես խոսքիս տերն եմ, թքածս լողողը չեմ:

— Իսկի դրան խոսք կ'ս, ինձանից հարցը ու քո բնութիւնը:

— Եղ պատճառով ել մի ամիս սրանից առաջ միտք ելի անում, վոր մի որ քեզ կանչեմ, խորհուրդ անենք, վոր եղ բանը վերջացնենք:

— Յես ել եմ ֆիքք արել, Բարխուդար...

— Կաց, խոսքս մի կտրել, ասելու բաներ շատ ունիմ, — ընդմիջեց Բարխուդարը չուր սովորական հրամայող ձայնով:

— Յես մեղա աստուծո, հրամայիր, — ասաց Հայրապետը, ձեռը գնելով շրթունքների վրա ի նշան խոնարհ լուսթան:

— Հայրապետ, տղադ, են Սկւրան լակտը, մի բան բռնեց, մի դալաթ արավ, վոր հիմա, միտս ընկնելիս արշուես խառնվում ե, դլուխս շուռ ե տալիս, աչքերս մթնում են: Ուզում եմ, վոր դանակը վերցնեմ, նրան հլ, աղջկաս ել ենպես կոտորեմ, վոր մեծ թիքաները ականջները մնան, բայց...

— Արժեն, արժեն, իմ արեւը արժեն:

— Մի ամսից տվելի չե, վոր ես բանը պատահել ե, ելի դադար չունիմ: Հեշտ բան չիմանաս, Հայրապետ, քանի վոր չերեխաներ ելին, չես ինքս ել ուրախ ելի, վոր իրարու սիրում ելին, չունքի են ժամանակը չեցին հասկանում: Բայց հիմա, Հայրապետ, չափահաս են, խելք ունին, պիտի հասկանան, վոր իրանց արածը խալտառակութիւն ե, բենամուսուլթիւն ե:

— Ել տանս ճոխ չմնաց բլաղգաթի մեջքին փշրած չլինիմ, վոր չի փոխվում, ի՞նչ անեմ:

— Լսիր, Հայրապետ, թող խոսքս վերջացնեմ: Ի՞նչ ելի ասում, հա, են որվանից դես Սկւրանը դուքան չի գալիս, չերես չունի: Շատ լավ ել անում ե, թե չե՝ հիմա վոսկորը փթում եր հողի տակ: Փողոցներում խառնվել ե լիրբ, կեղտոտ ջահիլների հետ ու որից որ փշանում ե: Դա հերիք չե, ինքը ջառ ու ջհաննամը, վոր փշանում ե, մեր տնունն ել ե կեղտոտում: ալս ե իմ ցավը: Ես չերեկո ըզգարից տուն եմ գալիս ներքեի փողոցով, տեսնեմ մի խումբ ջահիլներ, պատի տակ թագնված, լախլոթու չեն տալիս: Գլուխս քարշ արած անցնում եմ, բայց մի քիչ հեռացած. հեռացած, մեկ ել լսում եմ, ի՞նչ եմ լսում: Են լրբերից մինը բարձր ձայնով, չերեի ինձ լսեցնելու համար, ասում ե, ի՞նչ ե ասում, հըմ, գիտե՞ս, ասում ե. ալ, Սկւրանի հետ գիշերները պաշպշվող աղջիկը ես նամուսով դուռումս աղի աղջիկն ե, տեսեք, տեսեք, չի ամաչում վոչ սպիտակ մազերից, վոչ ել փափախից. ելի չերես ունի, բաղար ե դուրս գալիս: Հայրապետ, եղ վոր լսում եմ, խելքս

քիչ և մնում գլխիցս դուրս թռչի: Աչքերս արշուն և կոխում, մարմինս մի սառը քրտինք և պատում, ուզում եմ, չետ դառնամ ու եմ լրբերի գլուխը ջարդ ու փշուր անեմ: Բայց մեկ ել ֆիքր եմ անում, նահլաթ եմ տալիս չար սատանին, չերեսիս խաչակնքում եմ ու մի կերպ շարունակում ճանապարհս: Գալիս եմ մեր փողոց, եստեղ ել մի ուրիշ խաբար եմ լսում: Մեր հարեան «գդուլ» Մաթոսն ասում ե. «Եսոր Սմբատն ու Սեյրանը աղաջղավասի¹ չեն տրել ներքեի մահլի ջահլի-նեքի հետ»: Գալիս եմ տուն, Սմբատին միքանի սիլաներ եմ տալիս ու հետո հարցնում եմ կովի պատճառը: Սմբատը պատմում և Բանից դուրս և դալիս, վոր կռիվ սկսողն ելի տղադ և լեղել:

— Պահ քո տունը աստված չքանդի, ասում ես Սեյրանը,—գոչեց Հայրապետը, ավելի ու ավելի զայրանալով:

Բայց Բարխուդարը անուշադիր թողեց նրա հարցը: Նրա սառնութունը փոխվեց բարկութիւն: Մի կողմ ձգեց չիբուխը, վոր մինչև այդ ժամանակ անդադար ծխում եր:

— Հըմ, եդ վոր լսում եմ, բռնում եմ Սմբատի չերկու տկանջ-ներից ու դետնին խփում: Առանց դեռ, առանց դեն վոտերիս տակն եմ գցում նրան, ենքան կոխոտում եմ, վոր շունչը կտրվում ե: Մայրը գալիս և ու ձեռիցս առնում: Հայրապետ, դե հիմա դու ասա, եդ որե՞նք ե՞րբ և եդ իմ նամուսը վեր կառնի՞, վոր քո տղիդ խաթրու սաղ քաղաքում եղպես խաչտառակվե՞մ: Հըմ, ասել կլինի, վոր Բեռխանց Բարխուդարը որը ցերեկով բաց փողոցում չուր աղջկա վրա եղպիսի բաներ լսի: Բաս վոր եսպես և, չես իսկի մարդ չեմ, չես նամուս—դրիաթ չունիմ, բաս, բաս ես, ես, ես փափախը իմա չի, հը՛րը...

Բարխուդարը կատաղած վերցրեց գլխից չուր գդակը և բոլոր ուժով զարկեց գետնին:

Հայրապետը սպրտեց: «Նահլաթ քեդ չար սատանա, ես մարդը գժվեց, ձեր արեը վկա գժվեց», անցավ նրա մտքով: Նա կամեցավ մի բան խոսել, բայց վախեցավ և չհամարձակվեց առյուծի պես կատաղած Բարխուդարի առաջ բերանը բանալ:

— Բաս թող չեսիրս (գերի) Հնդստան դուրս գա, թող կնիկս ու բալաներս տկլոր չոյերը ընկնեն, չես ելի եդ բաները տանող մարդ չեմ: Հայրապետ, տղիդ կապը քաշիր, քաշիր, ասում եմ քեզ, են լըկրտվածի կապը, թե չե աստծուն և հայտնի, թե ինչ կանեմ նրան ել, աղջկաս ել, քեզ ել ու ինձ ել: Հերիք չե, վոր ինքը լրբացել և, հերիք չե, վոր տղիս ել հետս և փչացրել, լոթինների մինն և շինել, իմ անունն

¹ Փայտերով կռիվ:

եկ սաղ քաղաքում կեդտոտեց: Եղ իմ գերեզմանին ասել չի լինի: Բաս եգուցվա որը չես ել ի՞նչ յերեսով պիտի բազար դուրս գամ, չես, չես, Բարխուդարս, վոր մինչև որս խալխի վրա չեմ ծիծաղել: Յես, վոր ճշմարտութեան համար, անունս խտակ պահելու համար, ամենից հեռու չեմ քաշվում: Յես, չես, որ իմ նամուսիս գերի դառած մարդ. եմ, իմ հոժար կամքով Սիբիր կգնամ, եզ բաները դաբուլ չեմ անիլ: Ի՞նչ փող, ի՞նչ դովլաթ, ի՞նչ մեծ-մեծ տներ, չես թքել եմ դրանց վրա, հալալ քրտինքովս փող եմ աշխատում, կես քաղցած, կես կուշտ ապրում եմ, թե ինչ ե, նամուսս մաքուր պահեմ, նա չեկ Սեյրանի ու Սուսանի պես լակոտները կեդտոտում են: Բաս թո՛ւ ես բեղերիս, չես խակի տղա-մարդ չեմ:

— Ի՞նչ անեմ, Բարխուդար ջան, ի՞նչպես անեմ, վոր չեմ կարողանում ոգնել, — խոսեց, վերջապես, Հայրապետը դողդոջուն ձայնով:

— Ինչ անեհես, աչ ինչ արա: Տար, աչս զարհուժաուը հենց ես գիշեր մոխիր արա ու տղիդ աչքերը ածիր:

Այս ասելով, Բարխուդարը արխալուղի դրպանից դուրս հանեց մի բաց ծրար և շարտեց հաքեանի վրա: Յերը ծրարն ընկալ չայրապետի առջև, նա սարսափած չետ քաշվեց և միքանի վայրկյան ապշած նայեց թղթերին, ինչպես մի մարդ, վոր դաշտում զբոսնելիս հանկարծ չուր վտտի տակ տեսնում և ոճ: Վերջապես, նա զգուշութեամբ, դողդոջուն ձեռը մեկնեց դեպի ծրարը, կարծես, վախենալով, վոր նա պիտի կծի չուր ձեռը: Յուցամատի և բութ մատի ծայրերով բարձրացրեց գետնից ծրարը, մոտեցրեց ճրագին և հոնքերը վեր քաշելով, սկսեց գննել, յերբեմն հարցական հալացքներ ձգելով Բարխուդարի յերեսին:

— Կդարմանաս, բաս չես դարմանալ, կեր քո տնկած ծառի պտուղը, կեր...

— Դա, դա, Բարխուդար, դա, ախար, փիհե, նահլաթ քեզ չար սատանա, — մրմնջաց Հայրապետը, շարունակելով նայել ծրարին:

— Ձես իմանում, խեղճ մարդ, բարովագիր և քեզ վրա, Մոսկովից տղադ և գրում առևտուրի մասին, — պատասխանեց Բարխուդարը, հեգնորեն ժպտալով:

Հայրապետը սպրտնած շարունակում եր նամակը ձեռում շուռ ու մուռ տալ:

— Են թուղթը, վորի վրա Ավետարանի սուրբ խոսքերն են գրվել, եսորվա որը աշխարը ենքան փուչացել և, վոր Սեյրանի նման լրբերը եղպես կեդտոտում են: Կարդա ու ձեռդ կրծքիդ քսիլ, բախտավոր մարդ:

— Չորանամ չես, թե վոր մի բան հասկանում եմ ես թղթից:

— Կանչիր, կանչիր են լակոտին ու թող ինքը կարդա:

Հայրապետը, ծրարը ձեռում սեղմած, վազեց դուրս Սևրանին կանչելու: Բայց դեռ նրա մի վոտը սենյակումն եր, լերը հանկարծ ինքը, Սևրանը, լերեկեցավ չուր հոր դեմ ու դեմ:

— Ներս լեկ, — հրամայեց Հայրապետը չուր վորդուն, ինքը լեռ ու լեռ քաշվելով:

Սևրանը վազեց ներս, դիմեց հորը, խլեց վերջինի ձեռից նամակը. և փախավ դուրս: Այս ամենը կարճ միջոցում կատարվեց, վոր Հայրապետը չկարողացավ վորևե շարժում անելու: Նա մնաց միջանի վայրկյան տեղն ու տեղը: Բարխուդարի բարկությունը կրկնապատկվեց Սևրանի այդ անսպասելի վարմունքից. նա բարձրացավ տեղից:

— Տարավ բեռդդաթը, — արտասանեց Հայրապետը, ձեռները տարածելով առաջ:

— Թող տանի, ջուր անի, խմի, վոր սիրտը հովանա, շատ ե տաքացիր:

— Ախար, մարդ աստուծո, մի ասա տեսնեմ նա ի՞նչ թուղթ եր:

— Ինչ թուղթ եեր: Քեզ ու քո տղիդ... Նահլաթ քեզ չար սաթալել համ:

Բարխուդարը ատամները կրճտեց, բռունցքները սղմեց: Կարծես, նա պատրաստվում եր հարձակվել չուր հարեանի վրա և տեղն ու տեղը ջարդ ու փշուր անել: Հայրապետը, լերկնուղից թե բարկությունից, սաստիկ դողում եր:

— Բաս տղադ դիր ե գրում իմ աղջկա վրա ու ակռչկից ներս ե գցում, հա՛, եղպես ես խրատել նրան, հա՛:

— Դի՞ր, ի՞նչ գիր, Բարխուդար, լեռ խակի վոչինչ չեմ հասկանում, ի՞նչ ե գրում:

— Սարգիդ չի, իհարկե, չես հասկանալ: Ինչ ե գրում. գրում ե թե լեռ քեզ սիրում եմ, ասում ե, թե լեռ առանց քեզ ապրել չեմ կարող, չունքի, ասում ե, շատ եմ սիրում, ասում ե: Նս դիշեր, ասում ե, տասը ժամին դուրս լեկ, լեռ կգամ ձեր բակը, ու եմտեղ կտեսնվենք, ասում ե: Այ ինչ ե գրում, հասկացա՞ր, թե չե՛:

— Լավ ե գրում, զոչադ տղա, աչ լեռ քո են, են, են: Տեսնե՞մ եք ինչ դալաթներ ե անում: Համբերիր, Բարխուդար, համբերիր ու կտեսնես. թե լեռ նրան ինչպես շանսատակ կանեմ: Մեղավորը դու լեռ, Բարխուդար, թե վոր դու չբշրջտալիր, լեռ նրան ուսումնարան տվող չեիր: Զե՛, բաս կտալի, վոր ետրվա որին հասցնե՞ր մեղ:

— Յես եմ մեղավորը: Լեզուդ կապիր, թե չե՛... դեհ, սուս, սուս, Հայրապետ, ինչ վոր ե, ել որես դեն լեկար խոսելն ավելորդ ե: Լավ

լսիր, չես չեկել եմ քեզ ասելու, վոր ետորվանից դեն քեզ հետ բան չունիմ, պրծավ, գնաց: Դու չես իմանում, ինչ-վոր ուզում ես, արն: Մին ել, վոր չեթե տղիդ տեսնեմ իմ հանդավարում, տռանց դես, տռանց դեն, խանչալս փորն եմ կոխելու: Ել վո՛չ չես, վո՛չ դու: Տերը քեզ հետ:

Ավարտելով լուր խոսքերը, Բարխուդարը քալելը ուղղեց դեպի դռները: Հայրապետը, վոր չերեք չեր սպասում, թե բանը այդպիսով պիտի վերջանա, մնաց տեղն ու տեղը անշարժ: Նա անմիտ դեմքով, ձեռներն առաջ տարածած, մեջքից քիչ ծռված, նայում եր Բարխուդարի հեռացող քալելիին: Նա կամեցավ այդ վայրկյանին մի բան խոսել կամ գոռալ, խնդրել, աղաչել Բարխուդարին, առաջը կապել, վորպեսզի չթողնի դուրս գնալու, բայց չկարողացավ: Ինչպես կար, այնպես ել մնաց, մինչև վոր Բարխուդարը մի վտար դուրս դրավ: Այստեղ միամիտ մարդը ուշքի չեկավ, ձգեց գլխից դղակը մի կողմ, վազեց դեպի դռները և չերկու ձեռներով գրկեց Բարխուդարի մեջքից:

— Բաց թո՛ղ, թե չե...

— Բարխուդար, Բարխուդար, քեզ հետ կերած աղ ու հացը աչքերս կքողացնեն, թե Սեյրանի նման լակոտի խաթրու չես քեզանից խուղեմ: Կանգնիր, կանգնիր, Բարխուդար:

Բարխուդարը կանգնեց, չերեսը շուռ տվավ դեպի լուր հարևանը, նայեց վերջինի աղբսող դեմքին, նայեց, իսկույն գլուխը թեքեց կրծքին և չերկու ձեռներով սեղմեց նրան:

Ձե՛ վոր Բարխուդարը խոսք և ավել, չերդում և կերել՝ այդ մարդու հետ մինչև լուր կյանքի վերջը բարեկամութիւն պահել: Հիմա թո՛չ և անում, թո՛չ և անում, վտար դուրս և դնում նրա տանից, վոր ել մինչև հաճիտյան ներս չդնի: Միթե՞ այդ թքածը լիզել չե: Բայց ո՞վ և մեղավոր, Բարխուդարը: Ինչո՞վ: Բաս նրա նամուսը, տափը կոխո՞, ցեխի մեջ շարտո՞, վտանակոխ անո՞: Ձե, այս անկարելի չե, անկարելի չե, վոր «Սեյրանի պես մի լակոտ» նրա փափախը աղբի մեջ գլորի և աչնուհետե ելի նա վոտ կոխի աչն տունը, ուր ապրում և այդ լակոտը: Վո՛չ, Բարխուդարը ավելի հեշտ կհամաձայնվի կտորել Սեյրանին ել, լուր աղջկան ել, իրան ել սատանաների փաչ անել, բայց զաքուլ չի անիլ, վոր լուր ականջները ալսորվա խոսքերի պես խոսքեր լսեն:

Մինչ այդ ամենն անցնում ելին Բարխուդարի մտքով, Հայրապետը ապշած մտիկ եր տալիս նրան, չհամարձակվելով խոսք անգամ արտասանել:

— Ասել եմ, պիտի կատարեմ, թե չե՝ նամուսս ինձ կխեղդի,

Մնաս բարով, Հայրապետ, — ասաց հանկարծ Բարխուդարը և շտապով դուրս չեկավ:

— Կանգնիր, մի փախչիր, — լավեց դրսից, և չերկու չերխտասարդական ձեռներ ուժով Բարխուդարին ներս հրեցին:

Դա Սեյրանն էր:

— Լսիր, մարդ, խիր, միքանի խոսք ասեմ, ու հետո ուր-վոր ուզում ես գնա:

Սեյրանի կողմից այդ անսպասելի հանդգնությունը այն ազդեցությունը ունեցավ Հայրապետի վրա, վոր խեղճ մարդու լեզուն այս անգամ բոլորովին «փետացավ», ինչպես ինքը հետո պատմում եր Մարիամ բաջուն: Նա չուխալի թևերն ուսերին գցեց, ձեռները պահեց քերանի դեմ, իրանը ծռեց և ասաց. ալ քեով... փը... փը... Բայց չկարողանալով արտասանել ուղած բառը, կրկին չուխալի թևերը ցած գցեց և մի կողմ նայելով, ուր վոչ վոք չկար, ավելացրեց. «տեսնում եք ես լակոտին, նահլաթ չար սատանին հն»: Մինչդեռ Հայրապետը զանազան անհամբեր շարժվածքներ եր անում, Սեյրանը, Բարխուդարին ներս հրելով, կանգնել եր դռան առաջ, կարծես, դիտմամբ, վորպեսզի վերջինը «չփախչի»:

— Հրես ասում եմ, մարդ, ջառը ջահաննամը դու չել, քո բարեկամությունն ել, մենք քեզ կարոտ չենք: Բայց Սուսանը իմա ե, դու Սուսանին ինձանից չես կարող խել, դու նրան ինձ ես բաշխել, դու չերզվել ես և թքածդ լղող մարդ չես: Լսում ես, Սուսանը իմա ե, իմա...

Սեյրանն այդ խոսքերը արտասանում եր բարձր ձայնով, գրեթե գոռալով:

— Կտրիր ձայնդ... լակոտ, թե չե գլխիդ ողողը շների փայ կանեմ, — խոսեց, վերջապես, Բարխուդարը, ատամները կրճտելով և բոռնցքները ամուր սեղմելով:

— Ագա, ադա, լեզուդ կուլ տուր, տեր մեղա քեզ աստված, — մեջ մտավ Հայրապետը, մոտենալով լուր վորդուն:

— Դո բանը չի, — կտրեց լուր հոր խոսքը Սեյրանը: — Մեկ ել եմ ասում, Բարխուդար, աղջիկդ, Սուսանն իմա ե, դուք կարող եք կովել, թշնամանալ, բայց Սուսանն իմա ե: Հն, Սուսանն իմա ե, ով վոր նրան իմ ձեռից ուզենա խել, չես նրան, իմանում եք ինչ կանեմ, իմանում եք, չես նրա փորը ձկան փորի պես ջրբըղ-ջրբըղ կճղեմ: Տեսնում եք...

Մեջքի կողմից, չուխալի տակից Սեյրանը դուրս հանեց մի մերկ դաշույն, վոր իսկույն պսպղաց ճրագի լույսից:

Հայրապետը թուլացավ, Բարխուդարը մնաց նույն դրութւան մեջ ինչպէս առաջ:

— Ուրախացիր, Հայրապետ, փառավորվիր, վոր դրա պէս տղա, ունես,—ասաց նա, գդակը գլխին դնելով, վոր դուրս գնա:

Սեյրանը մնաց անշարժ: Նա չէր սպասում, թե չուր սպաննալիքը այգպիսի անհաջող ազդեցութիւն կունենա Բարխուդարի վրա: Նա կարծում էր, թե վերջինը տեսնելով չուր հուսահատութիւնը, կվախենա և կզղջա:

— Սպասիր, մի դնար, չես թնչ եմ արել, ու ի՞նչ տղից եմ վատ: Հըմ, թնձ ես շառլատան ասում: Յես թնչ մեղավոր եմ, թնչ մի մեծ հանցանք եմ գործել, մի քանի անգամ Սուսանին տեսնելով: Սիրտս ուղում էր, չեկա, տեսա, դա թնչ մեղք է, վոր դրա պատճառով այգքան ինձ չարչարում էք: Հայրս ծեծել է ինձ ու փողոցները գցել, դու լի, այգ հասակի մարդ, չես ամաչում, չեկել ես ու ասում, «մեր, բարեկամութիւնը ետրվանից կտրվում է»: Ինչ ուղում ես արա, բաց Սուսանին իմ ձեռիցս մի խլիր, թե չէ՝ աստված է իմանում, վոր այս խանչալը նրա չել, իմ ել սխալը կմտնի:

— Դաշիր, ասում եմ քեզ, ալ տալար, լակտիդ կտալը: Նահլաթ, նահլաթ, աչքերս արյուն և կոխում, հոգին քթի ծակերից դուրս կբերեմ:

— Ադա, կտրիր ձայնդ, դուրս չեկ, կորիր, քեռփո... — գոռաց, վերջապէս, Հայրապետը, հարձակվելով չուր վորդու վրա և բռնելով նրա կոկորդից:

— Հեռացիր,—հրեց ձախ ձեռով չուր հոր կրծքին Սեյրանը: Վնչ քեզանից եմ վախենում, վոչ ել նրանից: Ի՞նչ էք ուղում ասել:

Հայրապետը կրկին մոտեցավ նրան և, այս անգամ բռնելով չերկու ձեռներով նրա փեշերից, ասաց.

— Համեցեք, համեցեք աղբեր, դուրս կորիր ելի, չեմ ուղում, դու իմ վորդիս, դու իմ սոնկս չես, աղբեր, կորիր ելի, փնեն...

— Թո՛ղ, չես կելվ չեմ անում, թող վոր սրտիս ուղածն ասեմ...

Հայրապետը նրա բերանը սեղմեց մի ձեռով, իսկ մյուսով սկսեց նրա գլխին բռնեցքներ տալ:

Ներս վազեց Մարիամ բաջին, ճչալով և գլխակոր ընկալ չուր ամուսնու ու վորդու մեջ: Սեյրանը մի հարված տվալ չուր հոր կրծքին, ազատվեց նրա ձեռից ու դուրս փախալ, գոռալով.

— Կտոր-կտոր կանեմ չես այն մարդուն, վոր կհամարձակվի Սուսանին խլել իմ ձեռքից:

— Պարծեցիր, պարծեցիր, Հայրապետ, լավ տղա ունես: Մնաս բարով,—ասաց Բարխուդարը և գդակը դնելով դուրս չեկալ:

— Դանդվեց տունս,—բացականչեց Հայրապետը և թուլացած ընկալ մինդարի վրա:

Բարխուդարի և Հալրապետի բարեկամութեան թիւը կտրվեց: Յերկու ընտանիքները, վոր այդքան սիրում էին, վոր այդքան ընտելացել էին իրարու, չերկար տարիներ միասին ապրելով, անջատվեցին:

Գյուլնազը, ցերեկները մենակ նստած, մտաբերում էր այդ հին բարեկամութիւնը, մտաբերում էր և շատ անգամ լաց լինում: Բայց նա դեռ հուշ ունէր, վոր դարձյալ կարող է վերականգնել այդ բարեկամութիւնը: Նա կարծում էր, թէ Բարխուդարը այդ արել է պատահած անցքերից հուզված լինելով, թարմ տպավորութեան ներքո, առանց մտածելու: Սակայն անցան շաբաթներ, անցավ մի ամիս, վերջապես, չերկու, չերեք ամիս, և Գյուլնազը տեսավ, վոր չուր ամուսինը չի կտրվում: Վերջապես, մի որ նա վճռեց համարձակորեն խոսել նրա հետ, մտաբերելով նրան չուր չերդումը և Սուսանի ու Սեյրանի մասին տված հաստատ խոսքը: Այս խոսակցութեան հետևանքն այն չեղավ, վոր մշուս որը Բարխուդարը վարձեց մի վորմնադիր և պատվիրեց՝ չուր տունը Հալրապետի տնից գալթի կողմից բաժանող պարսպի փլատակված մասը նորոգել: Այդ մի թշվառ որ էր, նամանականգ Մարիամ բաջու և Գյուլնազի համար, վորոնք իրանց ամուսիններից գաղտնի միանալով, չերկար ու բարակ «ախ ու վախ» քաշեցին, արտասվեցին և հեռացան իրարուց:

Այս հանգամանքը, այսինքն պարսպի վերանորոգումը, կրկնապատկեց Սեյրանի հուսահատութիւնը: Նա, վոր նույնպես Բարխուդարի կողմից սպասում էր կամավոր հաշտութեան, այժմ տեսնելով, վոր ամեն ինչ վերջացած է, քնաց շվարած:

Ուրեմն Սուսանին ուժով նրանից խլեցին: Նա այլևս չուր սիրելցյալի չերեսը չեր տեսնելու: Բայց ինչ է մտածում ինքը Սուսանը նրա մասին: Պետք է նրա հետ խոսել: Սակայն ի՞նչպես տեսնել նրան, ցերեկները դուրս չի գալիս, գիշերներն էլ նույնպես փակված է: Միթե՞ հավիտյան զրկվեց Սուսանից, միթե՞ այլևս չի՞ տեսնելու նրա պեղնեղիկ դեմքը, չի՞ լսելու նրա քաղցր ձայնը: Ինչպէս, ո՞վ է ասում: Ձե, հենց այս շաբաթ, հենց այս քանի որերս Սեյրանը պիտի տեսնե նրան, պիտի իմանա նա չել տանջվում է, թէ չե: Ախ, չեթի Սուսանը նրան սիրում է, նա գիտե ինչ կանե: Ի՞նչ կանե: Յեթի Բարխուդարը չկտորվի, նա Սուսանին կառնանգե: Բայց վոչ, վոչ: Նախ հարկավոր է աշխատել, վոր բանը խաղաղութեամբ վերջանա:

Այս մտածումներնորով էր զբաղված Սեյրանի գլուխը նույն որերը, չերք վորմնադրի ձեռքի տակ չարագուշակ պարխաչն արագ-արագ

բարձրանում եր: Սեյրանը հանգստութիւնն չուներ, գիշեր ու ցերեկ մտածում եր Սուսանի մասին, մտաբերում եր այն լերեկոն, լերը վերջին անգամ խոսելով Սուսանի հետ, համբուրեց նրան: Չարարնախ համբուլը: Միթե դժւ լեղար պատճառը այդքան դժբախտութիւններէ: Միթե՞ ինքը, Սեյրանը չե միակ մեղավորը: Ի՞նչ եր ուղում ճա Բարխուդարից, վո՛ր այդ մարդը այն լերեկուցից հետո հրավիրե՞ր նրան լուր մտո, համբուրե՞ր ճակատից և ասեր. «դոչադ տղա, լավ ես անում, վոր իմ աղջկան գիշերները համբուրում ես»: Ինչպես չե, մի բան ել ավելի: Վոչ, վոչ: Սեյրանը շատ վառեց, չհամբերեց. ան անդուշութիւն: Ի՞նչպես նա չկարողացաւ առաջուց մտածել այդ ամենը. աչքերն արլուն ելին կոխէլ: Դա բավական չեր, նա Բարխուդարի հետ ել կոշտ վարվեց այն գիշեր: Ո՛վ գիտե, կարելի չե, լիթե նա մեջ տեղ ընկած չլիներ, Բարխուդարը կփռմաներ և ելի կշարունակեր լուր բարեկամութիւնը:

Այսպիսի մտածմունքներով պաշարված, մի լերեկո Սեյրանը իրանց բախում գլուխը կրծքին թեքած շրջում եր հետ ու առաջ: Նա մտածում եր, վոր մի հնար գտնի այդ լերեկո Սուսանի հետ տեսնվելու: Յերկար, չերկար նա պատեց այս ու այն կողմ, վերջապես, կանգ առավ պատի տակ: Նրա աչքին ընկավ մի շարժական սանդուխք, վոր ձգված եր պատի տակ: Սեյրանի գլխում մի միտք ծագեց: Միքանի բողե անշարժ կանգնեց, ինքն իրան կրկնելով. «անեմ թե չե, անեմ թե չե»: Ի՞նչ վոր լինում ե, թո՛ղ լինի,—ասաց, վերջապես, վճռական լեղանակով, մոտեցավ սանդուխքին, բարձրացրեց լերկու ձեռներով և զգուշութեամբ պարսպի դեմ կանգնեցրեց: Կառվի արագութեամբ նա բարձրացավ պարսպի գլուխը և սկսեց նայել դեպի Բարխուդարենց տունը: Դռները բաց ելին, ճրագը վառ եր: Բարխուդարը մեջքը պատին տված, նստած, չիբուխ եր ծխում: Դուռնաղը նույնպես նրա դեմ ու դեմ նստած կար եր անում: Սմբատը և Սուսանը չեյին լերեկում:—Յերեկ, նրանք քնած են,—մտածեց Սեյրանը, միևնույն ժամանակ Սուսանին վորոտնելով: Հանկարծ սինյակի դռների սլամի վրա նշմարվեց մի կանացի կերպարանք: Սեյրանի սիրտը թռթռաց: Նա իսկույն ճանաչեց Սուսանին:

Ինչպես ե դեղնել, լղարել, լերեկ խեղճը, հիվանդ ե: Դուրս ե գալիս, ձեռում օփսեներ կան, գնում ե խոհանոց: Ի՞նչ անեմ, թուչեմ, առաջը կտրեմ: Բայց չե, կվախենա: Ի՞նչ անեմ, եհ, ինչ վոր լինելու չե, թող լինի, ել ուրիշ հարմար ժամանակ դուցե չունենամ:

Մի անխթարթում Սեյրանը պարսպի գլխից թռավ Բարխուդարանց բակը: Պարիսպը բավական բարձր եր: Սեյրանի ընկնելու աղ-

մուկը հասավ Սուսանի ականջներին, և վերջինը, վախեցած, գլուխը բարձրացրեց։ Տեսնելով, վոր մի մարդկային կերպարանք մոտենում և իրան, Սուսանը կամեցավ ներս փախչել, բայց Սեյրանը նրա առաջ կարեց։

— Սուսան, Սուսան, աղաչում եմ, պալանիք ինձ, գլուխս կտրիր, դեմ գցիր, բայց չհրկու բռայե ինձ լսի՛ր։

— Ելի դձև չես, Սեյրան, ի՞նչ ես ուզում, հեռացիր։

— Ձեռն կարող, չես կգժվիմ, չոլերը կընկնեմ, սիրտ առւր ինձ։

— Գնահ, չեթե ինձ սիրում ես, կիլ դուրս կգան, — պատասխանեց Սուսանը, չերկյուղից դողալով։

Սեյրանը բռնեց նրա ձախ ձեռը։

— Ինձ վաճառում ես, Սուսան։

— Սուսանը լեզու չուներ, Սուսանը աչքեր չուներ, Սուսանը այս աշխարհում չի, Սուսանը մեռել և, դե, ձեռ քաշիր, — պատասխանեց որիորդը թուլլ և դողդոջուն ձայնով։

Սեյրանը չհավատաց լուր ականջներին։ Միթե՞, միթե՞, նա այս խոսքերը լսումի՞ մի կենդանի արարածի բերանից, միթե՞ դա Սուսանն և կանգնած լուր առջև։ Նրան թվում էր, թե այդ հուսահատական ձայնը խավարի միջից և, արձակում և մի ուրվական։ Բայց ահա Սուսանը, ահա նրա ձեռը, վոր սեղմած պահում և լուր ափերի մեջ։ Սեյրանը։ Սուսանն աշխատում և դուրս խլիլ լուր ձեռը, Սեյրանը բաց չե թողնում։ Նա ավելի ու ավելի սեղմում և և փոքր առ փոքր մոտեցնում լուր շրթունքներին։

— Գիտեմ, վոր քեզ շատ են չարչարել, Սուսան, ներիր ինձ, մեղավորը չես եմ։ Մեղավորը չես եմ և չեկել եմ քեզ ազատելու։

— Ազատելով։ Ի՛նչ, Սուսանին աստված միայն կարող և ազատել այս աշխարհից։

— Ձե, չես քեզ կազատեմ, կփախցնեմ։ Յես քեզ եմ սիրում, դու չել ինձ։ Այնպես չէ։ Գնանք ուրիշ քաղաք, Սուսան, գնանք, փախչենք։

— Փախչե՛լ, բայց թող ինձ, Սեյրան, դու գժվել ես։

— Ձե, խելքս գլխումս ե, չես հասկանում եմ, ինչ եմ ուսում։ Դու ինձ խոսք տուր, չես հենց այս շաբաթ կփախցնեմ քեզ։ Յես շատ ընկերներ ունեմ, նրանք ինձ կոգնեն։

— Տեսնում ես, վա՛ր Սուսանը մեռած և, վճրտեղ պիտի տանես նրան։ Տես ի՞նչ որն եմ ընկել։

Նրանք կանգնած ելին խոհանոցի դռների առաջ։ Ճարպի մոմը, վոր վառվում էր ներսում, թուլլ կերպով լուսավորեց Սուսանի դեմքը, չերը վերջինը չերեսը շուռ տվավ դեպի խոհանոց, վորդեհադի

ցուցց տա Սեյրանին չուր դեմքը: Սուսանը նիհարել էր, դեղնելու նրա առաջվան բոցավառ աչտերը հալվել էին, կաշին թուլացել էր ու տեղ-տեղ ծաթլվել: Նրա շրթունքները կապտել էին և սեղմվել, իսկ խոշոր աչքերի մեջ փալլում էր խորին հոգեկան տանջանք: Յիբը Սեյրանը նրա չերեսին նայեց՝ մարմնով անցավ մի սարսուռ: «Տեր աստված, տեր աստված, Սուսանը ձեռիցս դուրս է գալիս», անցավ նրա մտքով, բայց նա աշխատեց զսպել չուր չերկվուղը:

— Գնա, գնա, Սեյրան, թող ինձ, վոր ցավերովս խեղդվեմ ու մեռնեմ:

— Գնալով, իհարկե, կգնամ, քանի վոր դու ինձ չես սիրում, ել ինչու պիտի մնամ,— պատասխանեց Սեյրանը դառնացած:

Տիրեց մի քանի վայրկյան լուռթյուն:

— Սուսան, հենց միայն մի խոսք, մի խոսք ասա, ասա, վոր դու ինձ չես սիրում, ել այնուհետև չես գիտեմ:

— Աղաչում եմ, գնա, Սեյրան, հայրս դուրս կգա:

Սուսանը անդադար նայում էր սենյակի դռներին:

— Գնա, մոռացիր ինձ, Սեյրան:

— Ի՞նչ, մոռանամ: Հըմ, հասկացա, ուրեմն որս լավ տեղ մի՞նաց-րի: Ուրեմն Սեյրանը քո աչքից այնքան ընկել է, վոր դու վախց-նում ես ելի: Լավ, Սուսան, չես կգնամ, բայց ի՞նչ վոր ինձ պատահի, մեղքը քո վզին:

Այս ասելով, Սեյրանը դեմքը շուռ տվավ, վոր հեռանա: Սուսանը բռնեց նրա թևից. նա իսկույն կանգ առավ: Կարծես, Սեյրանը հենց սպասում էր, վոր Սուսանը չի թույլ տա իրան հեռանալու:

— Լսիր, Սեյրան: Տեսնում եմ, վոր դու նեղանում ես ինձանից: Քանի վոր այդպես ե, թող կարճառոտ պատմեմ քեզ միտքս, դու կհասկանաս ինչու համար եմ ասում, վոր դու ինձ մոռանա: Գնանք խոհանոց, աչտեղ վտանգավոր ե:

Սուսանը բռնեց Սեյրանի ձեռից և քաշեց ներս: Նա ափսեները գետնին դրավ, մաղերը ուղղեց և, չուր նիհարած ձեռը դնելով Սեյրանի ուսին, սկսեց.

— Սեյրան, չես քեզ սիրում եմ, ուզում ես՝ հավատա, չես ուզում՝ մի հավատա, բայց չես քեզ սիրում եմ: Մտիկ արա ինձ, դա քո սերնդ, վոր ինձ աչս որն է դցել: Բայց չես պարտավոր եմ, վոր քեզանից բաժանվեմ:

— Սիրում եմ, բայց պարտավոր եմ բաժանվել,— կրկնեց Սեյրանը դառը հեգնանքով:

— Համբերիր, լսիր մինչև վերջը: Գիտես, վոր հայրս, լեթե նրան

սպանեա, կախ տաս, քեզ աղջիկ տվող չի: Այդ դու պիտի լավ հասկանաս, լեթե նրան ճանաչում ես: Գալով փախչելուն, դա մեր կողմից հիմարութիւն կլինի, վոր վոչ դու չես կարող անել. վոչ ել չես կանեմ: Մեր փախուստը անպատիվ կանի մեր ծնողների անունը, վոր առանց այն ել իմ պատճառով անպատիւած ե: Յես չեմ ուզում, վոր ինձ համար ծնողներս ամոթից սկերեմ մեան ուրիշների առաջ: Յես գիտեմ, վոր հայրս հինց մեր փախչելու որն իրան կախ կտա: Նա ալդպիսի մարդ ե, չես ճանաչում եմ նրան: Բոլխանց Բարխուդարը նամուսի գերի չի: Թող չես չարչարվեմ, տանջվեմ, սառը գերեզմանը մտնեմ, այդ ինձ համար ավելի լավ ե, քան թե հորս խաղտառակութիւնը: Ծճարիտ ե, նա ինձ թախում ե, աչքով աչք չունի ինձ տեսնելու, բայց չես սիրում եմ, վորովհետեւ հայրս ե: Գիտեմ, Սեյրան, ինչ ասել ե ծնողներ: Լնով մտածիր. նրանք ինձ լույս աշխարհ են գցել, մեծացրել են, լավ թե վատ կրթել են, այս հասակին են հասցրել, վերջապես, նրանք ինձ սիրում են: Չեմ հավատում, վոր սիրում են: Չե, սիրում են ե շատ են սիրում: Սեյրան, մտիկ արմ հորս չերեսին, տես այս կարճ ժամանակի մեջ նա ինչպես ե փոխվել, ծերացել, լղարել, փորը մեջքին ե կպել, թշերը ներս են ընկել, աչքերը խորը փոսերի մեջ կորել, մեջքը չերկու դաթ ծովել: Դա իմ պատճառով ե: Այն որից, չերբ ձեզ հետ կարել ե բարեկամութիւնը, վոչ մի անգամ կուշտ փորով հաց չի կերել, վոչ մի անգամ մորս հետ կարգին չի խոսել: Որը ախ ու վախով ե անցկացնում, հանգստութիւն չունի, մարդու չերես չի ուզում տեսնել, կարծում ե, վոր ով վոր պատահի, պիտի իրա չերեսին խոսի: Գիշերները մի տեղ նստել չի կարողանում, չիքուխը բերնին, ծխում ե ծխում մինչե կես գիշեր, առանց խոսելու: Դե, հիմա դու ինքդ ասա, Սեյրան, բաս դա մեղք չե՞ մեր կողմից:

— Իսկ մայրս, ախ աստված, ինչ ե մնացել նրանում: Խեղճ կնիկը հորս չերեսին մտիկ անելով, մի կտոր մոմի պես հալվում ե: Առաջվա այն գոգալ կնիկը կուչ ե չեկել, պառավել ե, հինց իմանաս, վոր այս չերեք ամիսը նրա համար չերեսուն տարիներ են չեղել: Մայրս քեզ սիրում ե, Սեյրան, շատ ե սիրում: Խեղճ կնիկ, նա շատ չարչարվեց, վոր հորս կակդացնի, բայց չիլավ, չկարողացավ հորս ծռել: Ո՞վ կարող ե ծռել Բոլխանց Բարխուդարին, չերբ բանը նրա նամուսին ե վերաբերում: Հիմա, տեսնելով, վոր ել ճար չկա, խեղճ կնիկը լռել ե, ցավերը թաղցրել կրծքի տակ. այդ ցավերն աչոր մըղ մըղ ուտում են նրան: Տեսնում ես, Սեյրան, տեսնում ես այս ամենը. հիմա ինքդ դատիր, չես ինչ անեմ: Մտիկ եմ տալիս նրանց չերեսին՝ ջիգերս ե կտրատվում, սիրտս ե մղկտում, ախր չե վոր նրանց ցավե-

րի պատճառը լեւ եմ: Ձե, Սեյրան, ինչ ուզում ես արա, բայց լեւ
չեմ կարող նրանց այս հալումը թողնել ու քեզ հետ գալ, ինչ ե, վոր
լեւ պիտի ուրախ ապրեմ: Թող լեւ չարչարվեմ, մեռնեմ, միայն թե
ծնողներիս չսպանեմ:

Սուսանն ամբողջ ժամանակ խոսում եր թույլ, հանդարտ, բայց
դողդոջուն ձայնով: Նրա շարժվածքի, արտասանութեան մեջ չերևում
էր ներքին դառն հոգեկան տառապանք: Յերբ նա կանգ առավ, Սեյ-
րանը լուր ձեռքն հեռացրեց նրանից, թեքեց գլուխը կրծքին ե, վըշ-
տալի ու հուսահատական չեղանակով արտասանեց.

— Կորավ Սեյրանը, փչացավ, ել ի՞նչ որվա համար ե ապրում,
վոր Սուսանը նրան չի սիրում:

— Սուսանը Սեյրանին չի՞ սիրում: Մտիկ տուր, Սեյրան, Սու-
սանի չերեսին, մտիկ տուր ու հետո ասա: Տես, Սուսանը ի՞նչ որն ե
ընկել ու մտածիր, ում պատճառով:

— Դու քո հոր նամուսը ինձանից շատ ես սիրում: Յես այդպես
չեյի իմանում, լեւ կարծում եյի, վոր քո աչքում այս աշխարհում
Սեյրանից թանգ բան չկա, բայց, ինչպես տեսնում եմ, խաբված
եմ լեղել:

— Յես քեզ ամենը ասացի, Սեյրան, դու ինձ չես հավատում:
Վնաս չունի, իմ մահը քեզ մի որ կհավատացնի:

— Ինչո՞ւ լեւ մեռնում, ապրիր, փառք աստուծո, ի՞նչ կա, լսել եմ,
վոր քեզ համար նոր նշանած են ճարել ե շուտով պիտի պսակեն,—
ասաց Սեյրանը դառն հեգնութեամբ:

— Ծջմարիտ ե, բայց վոչ թե մենք ենք ճարել, ինքն ե ճարվել:
Յես չեմ ել ճանաչում նա ով ե, ի՞նչ մարդ ե, բայց լեւ գլուխս քաշ
արած պիտի նրան գնամ, պիտի ծնողներիս կամքին հնազանդվեմ:

— Պիտի գնամ, պիտի հնազանդվեմ,—կարողացավ միայն կրկնել
Սեյրանը:

— Հա, Սեյրան, լեւ պիտի անպատճառ պսակվեմ: Դու գիտես,
վոր մեր անգղուշութունը սաղ քաղաքում խայտառակել ե իմ անունը:

— Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

— Այն, վոր լեւ մեկի վրա պիտի պսակվեմ, ծնողներիս ե իմ
անունից լվանամ այն կեղտը, վոր իզուր տեղից կպցրել են ինձ չար
լեզուները:

— Յեվ ուրիշի՞ վրա պիտի պսակվեմ:

— Յեթե քեզ վրա պսակվեմ, մարդիկ կասեն «կոտրված ամանը
կոտրողին տվին, վոր ինքը կոծկի»: Հասկանո՞ւմ ես, թե չե: Յես
կպսակվեմ ուրիշի վրա ե չերբ կհաստատվի, թե լեւ «կոտրած աման»

չեմ, աշնուհետե կանցնեն միքանի ամիսներ, ամենաշատը մի տարի, դու ինձ կտեսնես հողի տակ:

— Միրոս, սիրոս հենց վկայում եր, վոր դու ինձ չես սիրում,— կրկնեց Սեյրանը դառնագին, չերկու ձեռներով լուր գլխին խփելով:

— Համբերիր, կտեսնես:

— Համբերեմ, վոր տեսնեմ ինչպես իմ սիրածին ուրիշն և առնում, չե, Սուսան, այդ տանջանքը չես տանել չեմ կարող:

— Դե, հերիք ե, Սեյրան, ել ուրիշ ասելիք չունեմ: Մի բան եմ խնդրում քեզանից, Սեյրան, չեթե ինձ սիրում ես, այսուհետե ել ինձ վրա նամակներ չգրես: Այն որվա քո նամակը իմ ձեռը չեր ընկել: Դու չերխալարար պատուհանից ելիր ներս գցել հենց այն ժամանակ, չերբ հալըս պատուհանի առաջ կանգնած եր: Նա վերցրեց նամակդ և տվավ չեղորոս կարգալու: Յես նրա մեջ գրված տողերի չափ հարվածներ ստացա: Դե, ել այսուհետե չսխալվես: Յես առանց նամակի չել գիտեմ քո գրությունը: Յեկ, մոտեցիր, վերջին անգամ մնաւ բաժնով անենք:

Սուսանը ուժով թեքեց Սեյրանի գլուխը դեպի լուր կուրծքը և մի տաք համբուլը դրոշմեց նրա ճակատին: Արտասուքի չերկու խոշոր կաթիլներ, գլորվելով նրա վաղաթառամ չերեսով, ընկան Սեյրանի այտերի վրա:

— Դարասիրտ աղջիկ, քանդեցիր տունս, մնաս բարով, ինչ վոր ինձ պատահի, այսուհետե մեղքը քո վրին,—ասաց Սեյրանը, չերեսը շուռ տվավ և խոհանոցից դուրս չեկավ:

— Մի նեղանար, համբերիր և կտեսնես, գնաս բարով,—պատասխանեց Սուսանը խեղդված ձայնով:

XIII

Վերավորված սրտով, փշրված հույսերով Սեյրանը բաժանվելով Սուսանից, տուն չվերադարձավ: Նա դժվարությամբ բարձրացավ պարսպի վրա, ցած իջավ սանդուխքով դեպի իրանց բակը, սանդուխքը կրկին դրավ լուր առաջվա տեղը, դուրս չեկավ փողոց:

Դիշերից՝ բավական անցել եր, փողոցներում վոչ վոք չեր չերե՛վում: Սեյրանն լուր քայլերն ուղղեց դեպի ներքին փողոցը: Նա գնում եր գլխակոր, թուլլ և անհաստատ քայլերով, անգիտակցաբար, առանց ինքն իրան հարցնելու, թե ուր և գնում և ինչո՞ւ չե գնում:

Ուրեմն այդպես, Սուսանին նրա ձեռից խլում են և տալիս են Գոչարյանց Ռուստամին, այն «սե չերես», «այլե՛ծառ», «սատանայի»

կերպարանք ունեցող» Ռուստամին: Իսկ Սուսանը, նա չէլ հոժար և
գնալու, նա վախենում և Սեյրանի հետ փախչելուց: Դատարկ բան և,
նա սուտ և ասում, թե չուր ծնողների նամուսն և պահում: Վոչ, նա
չի սիրում Սեյրանին, չի սիրում: Եթե սիրեր, ուրախութեամբ ձեռը
կտար նրան և կասեր. «հա, տար ինձ, Սեյրան, ուր վոր ուզում ես,
չես քոնն եմ, չես վոչ վոքից չեմ վախենում»: Քիչ են պատահել այդ-
պիսի բաներ, քիչ և պատահել, վոր տղան աղջկան փախցնի նրա
ծնողներից: Քարասիրտ աղջիկ, դու հոգի չունիս, սիրտ չունիս, չես
իմանում, թե Սեյրանը ինչքան և չարչարվում քեզ համար: Ձե, լեթե
դու իմտնայիր, այդպիսի պատասխան չելիր տալ: Դու կընկնելիր Սեյ-
րանի գիրկը, լաց կլինեցիր, արտասուենքով կողոզելիր նրա ձեռները,
կաղաչելիր, կաղաղատելիր, վոր քեզ ազատի քո հոր ճանկերից, վոր
դուք միասին ապրեք: Ախ, Սուսան, Սուսան, այս ինչ որի հասցրիր
Սեյրանին. ուրեմն դու մոռացար այն գիշերվա խոսքերդ: «Սեյրան,
չես քեզ սիրում եմ և հավիտյան չեմ մոռանալ»: Վորտեղ մնաց քո
այդ սերը, հիմա ինչո՞ւ Սեյրանի վիզը կտրեցիր և գիշերվա կիսին
զցեցիր փողոցները:

— Ուր եմ գնում և ինչո՞ւ, խելքս, կարծես, տեղը չի, — արտա-
սանեց հանկարծ Սեյրանը, ընդհատելով չուր մոռած ունեցները:

Նա փողոցի մեջտեղում կանգ առավ և նայեց չուր չորս կողմը:
Վոչ վոք և վոչինչ չկար, բացի գիշերային խավարից: Մի քանի վայր-
կյան նա մնաց կանգնած, հետո գարձյալ շարունակեց չուր ճանա-
պարհը: Ի՞նչեր և մտածում նա, հը՞մ, մի՞թե Սուսանը կարող և մո-
ռանալ Սեյրանին, մի՞թե չի սիրում: «հապա ինչո՞ւ չե այդ որն ընկել,
այդպես լղարել, մաշվել»: Վճրտեղ և այն առաջվա Սուսանը: Նա չկա,
նրա միայն կմախքն և մնացել: Ախ, տե՛ր աստված, ինչպես և փոխ-
վել խեղճ աղջիկը այս չերեք մամվա մեջ: Աչքերը փոսերի մեջ են
թաղվել ու պլոզվել, այն առաջվա կարմիր թշերը նարնջի պես գեղ-
նել են, այն առողջ մարմինը հավել և, փորը մեջքին և կպել, վիզը
բարակել և: Ձե, չե, Սեյրանը չարաչար սխալվում և, Սուսանը
նրան սիրում և՛ և սերն և, վոր խեղճ աղջկան այդքան փոխել և: Բայց
ի՞նչ սեր և այդ, վոր չի կարողանում հաղթել ուրիշ մնացյալ զգաց-
մունքներին, — ծնողական սիրուն: Ինչո՞ւ Սուսանը այնքան կամքի
ուժ չունի, վոր վոտնակոխ անելով հասարակական կարծիքը, արհա-
մարելով ավանդական նախապաշարմունքները, ընկնի չուր սիրեկա-
նի գիրկը և վայելի այն չերջանիկ որերը, վոր շատ քիչ մահկանա-
ցուններին և վիճակված այս անցավոր աշխարհում: Փախչել, փախցնել,
հըմ ի՞նչ եմ ասում, ի՞նչ եմ դուրս տալիս, փախցնել: Մի հարցնող լի-

նի, թէր կարող եմ լինա նրան փախցնել և ինչպէս Վոչ փող ունիմ, վոչ ել մի արհեստ գիտեմ, վոր կարողանամ պահել թե՛ նրան և թե՛ ինձ: Ինչ անխելքութիւն, ինչո՞ւ լինա արհեստ չսովորեցի, վոր աշտորվա որը ինձ հարկավոր ե գալիս: Եհ, զրա մասին ալժամ ուշ ե մտածել: Այո, ուշ ե, թէր գնա ալժամ Սեյրանը, տեր աստված, ինչ անի, ռւմը գանգատվի: Միթե՞ գնա հոր առաջ չոքի, մեղա գա, աղաչի, պաղատի, վոր նա մի կերպ Բարխուդարի հետ հաշտվի: Հը՛ր, ինչ կլի չալրապետը չուր վորդու խոսքը: Ասենք թե, նրան խղճալով, լսեց ել, միթե՞ խեղճ մարդը կարող ե աշտուհետե մի բան անել: «Առանց ինձ ել, նա չերեք ամիս ե, վոր ամեն կերպ աշխատում եր հաշտվելու: Բայց ի՞նչ արավ: Բարխուդարը: Ո՞ո, Բարխուդարը առելու ե, նրան մոտենալ չի կարելի, թեկուզ աշխարհը տակնուվրա լինի—նա չուր թքածը լիզող մարդ չի: Քանի պարիսպը չկար, Սեյրանը հուլասուներ, իսկ ալժամ շինվեց աչն և մենչն հովիտլան կմնա նրա ու Բարխուդարի մեջ, ինչպես մի անհաղթելի խոչընդոտ բարեկամութիւն: Ի՞նչ, ի՞նչ ասաց, Բարխուդարը չուր ասածի մարդ ե, թքածը լիզողը չի, հաստատ կամք ունի: Չե, հապա ութ-իննը տարի սրանից առաջնրա տված խոսքը: Այդ ե միթե՞ նրա հաստատակամութիւնը, աղապէս ե կատարում նա չուր տված խոստումը: Պարծենկոտ մարդ, ինչո՞ւ մոռացար քո խոսքը, ալդ միթե՞ անագնավութիւն չե»:

Սեյրանը կրկին կանգ առավ. և մի քանի վայրկյան նաչեց չուր չորս կողմը: Հետո դարձալ շարունակեց չուր ճանապարհը և կրկին սկսեց մտածել ու ինքն իրան խոսել. «Տեր աստված, տեր աստված, ի՞նչեր եմ դուրս տալիս, ո՞վ ե Բարխուդարը, ի՞նչ եմ պահանջում լինա նրանից: Չե վոր նա հալը ե, աչն ել հին, վաթսուս տարեկան մարդ. միթե՞ լինա լինելի նրա տեղը, ուրիշ կերպ կվարվելի: Չեմ կարծում: Նա ասում ե «նամուսս չի վերցնի, վոր աղջիկս մի տղայի հետ գիշերները սովրաթ անի, մարդիկ թքով կհանեն աչքս»: Ծշմարիտ ե, վոր «մարդիկ թքով նրա աչքը կհանեն»: Մարդիկ, մարդիկ, դուք, ո՞ո, դուք պատրաստ եք ամեն մի վայրկյան, ամեն մի քայլափոխում մրոտել, ցեխ քսել ուրիշների չերեսին և ալդ ձեզ բավականութիւն ե պատճառում, վորովհետե քաջութիւն ե տալիս ձեզ ներողամտութիւնը վերաբերվելու ձեր սեփական կեղտոտութիւններին: Բարխուդարը մինչն հիմա իրան ձեր կեղտից ազատ պահելու համար ձեզանից հեռու լե ապրել, չի խառնվել ձեզ հետ, և դուք, ալդ տեսնելով, իհարկե, նրա հպարտութիւնը տանել չելիք կարող: Դուք գիշեր ու ցերեկ մտածում ելիք ինչպես անեք, վոր մի արատ գտնեք նրա կյանքում,

վորպեսզի նրան ձեզ հետ հավասարացնեք: Աշխատեցիք և ձեզ հաջողվեց ել գտնելու: Դուք չնչին լուծ մի մեծ ուղտ շինեցիք: Բայց տեր աստված, ձվ, ձվ...»:

Սեյրանը աչտեղ հանկարծ լերկու ձեռներով մի հարված տվավ գլխին և մնաց մեխված փողոցի մեջտեղում: Կար մի կետ, մի նշանավոր խնդիր, վորի մասին նա մինչև այդ ժամանակ չեր մտածել և չեր ել հիշում մինչև անգամ: Բայց ահա՝ նույն վայրկյանին, չերնա անիծում եր մարդկանց, նույն վայրկյանին այդ խնդիրը ծագեց նրա գլխում: Սեյրանը սկսեց ուժ տալ չուր հիշողութան մի ինչ-վոր բան մտաբերելու: Մի քանի րոպե մնաց այդ դրութան մեջ: Ստեպ-ստեպ նա գլուխը բարձրացնում եր և, ձեռները ողի մեջ տարածելով, կրկնում. «ձվ, ձվ լինի, ձվ լինի»: Հանկարծ նա ձեռները վրկին լսվեց գլխին և, սկսեց ինքն իրան խոսել այնքան բարձր ձայնով, վոր չեթե մեկը քսան քալ նրանից հեռու լիներ կանգնած, հեշտութամբ կարող եր լսել և հասկանալ նրա խոսածը:

«Վայ իմ գլխին, թնչու լեմ ապրում, ել ինչ չերեսով եմ ուրիշներին մեղադրում, քանի վոր չես անալիտան եմ և միակ մեղավորը, — ասում եր նա, չուր գլխի մազերը փետտելով և շրթունքները կրծտտելով: Լեզու, քեզ ստեղծողին ինչ ասեմ, պիտի չորանալիր, տակհան լինելիր ինչպես մի փալտի կտոր, վոր այն որը ջահիլների մեջ չխոսելիր: Սեյրան, աստված քո բողազդ կապեր, վոր այն սեպցած որը, սրանից չերեք ամիս առաջ, ընկերներդ հետ քեֆ անելիս, այն լեղին չլակելիր: Ինչ արի չես, ինչ արի, իմ ձեռքովը տունս քանդեցի: Կեր, կեր, Սեյրան, հախդ ե... բայց, տեր աստված, ախար չե՞ վոր չես ուրիշ կերպ եմ ասել, չե՞ վոր չես միայն ասացի: Շուտով չես ել եմ պսակվելու Քյոխանց Բարխուդարի տղջկա հետ»: Յհ, հերիք եր, հերիք եր, չար լեզուների համար հենց այսքանն ել բավական եր, ճութը տվի նրանց ձեռը, և ահա նրանք մի մեծ կծիկ են փաթաթել: Ինչ անեմ հիմա, թնչ կարող եմ անել: Վոչինչ, ուշ ե, անցյալը չի կարելի չետ բերել...»

Սեյրանը շվարված հայացքը խավարի մեջ ձգեց չուր չորս կողմ: Նա բավական հեռացել եր իրանց թաղից և այժմ գտնվում եր ներքին փողոցներից մեկի ծալում, ուր քաղաքի հին չեկեղեցին եր գլտնվում: Աչտեղ վոչ վոք չկար. նա մոտեցավ պատին, մի բավական մեծ քար շուռ տվավ և նստեց նրա վրա:

Պարզ չերկնքում աստղերը փայլում ելին: Սեյրանը բարձրացրեց չուր գլուխը և սկսեց նայել չերկնքին: Ինչեր ելին անցնում այս բոպելին նրա գլխով: Բուռն զգացմունքների ճնշման ներքո նրա միտ-

քը չերերվում էր, ինչպես մի փոքրիկ մակուշկ լայնատարած ծովի ալիքների մեջ: Ծնողներից անարգված, սիրելիից մերժված պատանին այնքան վշտացած էր կյանքից, վոր նա չուր գոյության համար չեր տեսնում վոչ մի հենարան: Մի ահագին ծանրութուն ճնշում էր նրա սիրտը, և նա ուժ էր անում ազատվելու այդ ծանրությունից, բայց իզուր: Վորպեսզի գեթ մի քանի բոպե փարատի չուր դառն մտածմունքները, Սեյրանը սկսեց չերգել մի ինչ-վոր ժողովրդական չերգ: Նա սկսեց ուրախ չերգ, բայց մի քանի բառեր չարտասանած, չեղանակը փոխվեց և թուլլ ու հազիվ լսելի ձայնով սկսեց մտմտալ խիստ տխուր չեղանակ: Թե ինչ՞նչ և ի՞նչպես Սեյրանը ուրախ չեղանակը այդպես շուտ փոխեց տխուր չեղանակի, այդ ինքն էլ չգիտեր, Բայց նա այդ էս չերկար չերգեց: Մի քանի բոպե մտմտալուց հետո, նա ճակատը սեղմեց չերկու ձեռներով և հալացքը բեռեց գետին:

— Ձե՛, չե՛, ռվ ե ասում, վոր չես կորած, փչացած եմ, արտասանեց Սեյրանը,— հանկարծ ձեռները ճակատից հեռացնելով:— Սուտ ե, չես դեռ կենդանի չեմ, ռվ ե ասում, թե Սուսանը ձեռիցս դուրս չեկավ, այդ էլ սուտ ե: Կտանջվեմ, կչարչարվեմ, վոտաբաց, գլխաբաց չոլերը կընկնեմ, բայց չեմ թողնիլ, վոր իմ սիրականին իմ ձեռքից խլեն, և նա չել ռվ, հըմ. Գյուշարանց մուստամը: Հողը գլխիդ, Սեյրան, բաս դու մարդ չե՛ս, բաս քո նամուսը շները կերել են...

Նա կքկին դուլիւր բարձրացրեց, նայեց այս կողմ այն կողմ և կրկին ձեռը դրավ ճակատին:

— Գլուխս, կարծես, տաք ջրի մեջ խաշվում ե, ճակատիս թե չերը տրաքվում են: Ինչպես եմ դողում, այդ ի՞նչիցն ե, տեր ասոված: Յուրտ ել չի, վոր ասեմ թե մըսում եմ: Ծակատս, ճակատս ալրվում ե: Իսկ սիրտս, ոոո, նա մորթված ծախ պես թրթռում ե, կարծես, ուժ ե անում, վոր դուրս գա կրծքիս տակից:

Նա ձեռը դրավ ձախ կողքին:

Ջարմանալի բան, հենց միևնույն չերեկո, չերը Սեյրանը Սուսանի հետ ուրախ-ուրախ խոսում էր, ելի թրթռում էր նրա սիրտը: Ինչ՞նչ, այն ժամանակ հո այս ցավերը չունեի: Բայց վոչ, այն ժամանակվա թրթռոցն ուրիշ էր և այսպես չեր թրթռում, չեր նեղացնում, տանջում նրա հոգին, ինչպես այժմ: Վոչ, այն ժամանակ նրա համար քաղցր, դուրեկան էր այս թրթռոցը, իսկ հիմա... ոոո... կարծես թե միևնույն սիրտը չե:

Սեյրանը նայեց չերկնքին: Յերկինքն էլ, աստղերն էլ, ամենն էլ փոխվել են նրա աչքում: Ախ, ինչպես այն չերեկո ուրախ-ուրախ փծաղում ելին նրա չերեսին այս աստղերը, իսկ հիմա վորքան թրթ-

ված դեմքով են նայում նրա վրա: Միթե նրանք ել ծաղրում են Սեյրանին:

Խաղարի միջից մի թուլլ ձայն հասավ Սեյրանի տկանջներին, և նրա մտածմունքները փարատեց: Փողոցի մյուս անկուռից եր լսվում ալն ձայնը: Այդ թառի մեղմ հնչյուններ ելին, վորոնք պարսկական չերզիի հանդարտ կլկլոցների հետ խավար մթնոլորտի մեջ տարածվելով, հասնում ելին Սեյրանին: Վորտեղ և ալդ ուրախութունը, ինչպիսի բան և Վորտեղ վոր և, թառը մոտ տեղումն են ածում, բայց ձայնը, կարծես, խեղդված և և գետնի տակից և դուրս գալիս:

Սեյրանը բարձրացավ տեղից և դիմեց դեպի ալն կողմ, վորտեղից գալիս եր չերաժշտութւան ձայնը: Այս ու ալն կողմ նայելով, նա հասավ փողոցի հանդիպակաց անկուռնը: Այստեղ նրա հայացքը ընկավ դեմուգեմ շինութւան ներքին հարկում գտնվող մի ցած նկուղի վրա: Սեյրանը նկատեց, վոր նկուղի փոքրիկ պատուհանից դուրս են թափվում աղոտ լուսո ճառագայթներ: Սա գինետուն եր, անշուշտ չերաժշտութւան ձայնը ալստեղից եր դուրս գալիս: Իրավ վոր, նա վորքան մոտենում եր գինետան, ալնքան չերաժշտութւան ձայնը գորեղանում եր: Վերջապես, Սեյրանը բոլորովին մոտեցավ և կոացած սկսեց զգուշութամբ պատուհանից դեպի ներս նայել: Այս միջոցին չերաժշտութւունը դադարեց: Բարձրացավ գոռում, գոշում, աղաղակ:

— Ագա հուռում:

— Ագա հուռաւ, հափ-հափ...

— Կոճերի կենացը:

— Կոնծեցեք:

— Թամրադ, մի բաժակ ելեն Մադրասի գինուց ածի: Հափ-հափ հուռ...

— Խամուշ, խոսքը թամադինն և:

Մի քանի վայրկյան աղմուկը դադարեց: Սեյրանը պատուհանից նկատեց, վոր ներսում, սեղանի շուրջը նստած չերիտասարդներից մեկը բարձրացավ վոտքի վրա, մի բաժակ գինի ձեռում պահած:

— Թամադան և, տեսնեք ինչ և խոսելու,— մտածեց Սեյրանը և ալանջը սեղմեց պատուհանի ճեղքին:

— Տղերք, լես մեռնամ լոթիանա, ևս թասն ել խմեք մեր ևն ջահիլի կենացը, վորը վոր ինքն ևստեղ չի, ամա սիրտը ևստեղ և, հափ-հափ:

— Սուս, աղա թամադա, ամոթ չիլի հարցնիլը, եդ ինչ ջահիլ և:

— Կուժ. ծախողի տղան:

— Սեյրանը:

— Հա:

— Յես եսենց նամարդ, բենամուս ջահիլի կենացը չեմ խմիլ, վոր սապուենած թոկ ել գցես վզովս:

— Պատճառը:

— Պատճառը, վոր նա մեր դաստի անունը խալտառակեց:

— Ինչո՞վ խալտառակեց:

— Հարսնացվին ձեռքից առնում են, հալասըզի պես աչքերը բաց, սուս և արել:

— Յես ել կասեմ ինչ և ասում, կոնծիր, աչ բոշքողաղ ան, հըմ, կթողենք իսկի մեր դաստի ջահիլի ձեռքից աղջիկ առնեն, Սեյրանի կենացը, հափ-հափ, հուռում:

— Ապա հուռում,— կրկնեցին բոլոր հանգիստականները, բարձրացնելով մի խառն աղմուկ:

Յերաժշտութունը կրկին սկսվեց:

Սեյրանը հեռացավ պատուհանից, դիմեց գինետան դռներին և սկսեց ծեծել դռները:

Մի բոպելից հետո դռները բացվեցին, և նա անմիջապես ներս մտավ:

XVI

Մինչ Սեյրանը չուր մտածմունքների մեջ գիշերվա կիսին թափառում եր փողոցներում, Սուսանը ևս մտածում եր: Բաժանվելով Սեյրանից, նա մտտեցավ ոջախին, ուր կաթսայի մեջ չեռում եր ջուրը, վորով նա ալիտի ափսեները լվանար: Նա կաթսան վերցրեց, դրավ գետնին և, նրա մոտ սփռելով մի վոչխարի մորթի, նստեց ու սկսեց չուր գործը:

«Նա չի հավատում, վոր չես նրան սիրում եմ,— մտածում եր Սուսանը, ափսեները մի առ մի թողնելով ջրի մեջ, վոր թրջվեն:— Զի հավատում, վոր ալսպես հավելուս, մաշվելուս, ալսքան տանջանքիս պատճառը ինքն և և միայն ինքը»:

Սուսանը մի խոր հառաչանք արձակեց կրծքից, հիշելով, թե ինչպես Սեյրանը նեղացած, դառնացած բաժանվեց իրանից: Ո՞վ գիտե, նա դուրս չեկավ, ուր գնաց. ո՞վ գիտե, չուր անբախտ գլուխը թուր կտանի: «Ախ աստված, ախ աստված, քո ձեռով կապել ես, քո ձեռով ել բաժանում ես մեզ», ասաց Սուսանը, նալելով խոհանոցի սեացած առաստաղին: Ինչո՞ւ, ի՞նչ մեղք են արել, վոր աստված ալգքան բարկացել և նրանց վրա և ալսպես պատժում ե: «Ե՛հ, մեռնեմ քո սուրբ դորությունին, ինչ անեմ, թող քո կամքը լինի, դու ուղում ես մեղ

չարչարել և չարչարում ես: Ինքդ մեղ ստեղծել, ալս աշխարհն ես դրել, մեր կրծքի տակ սիրտ ես դրել, վոր ալդ սիրտը ալսոր մեղ մըղ-մըղ ուտի, այ, ինչպես այն վորդն և ուտում փտած, սեպցած կոճը ներսից»:

Սուսանը աջ ձեռը բարձրացրեց դեպի խոհանոցի առաստաղը, վորտեղից լսվում եր վորդի կրչկրչալու ձայնը:

— Ուֆ, ուֆ, սիրտդ մաշվի, դու չե՛լ մի կողմից ես մաշում ինձ, ձայնդ կտրելու: Կրակ և չեղել մինչև որս ինձ համար ալս մի կտոր միսը: Այն որից, չերը չես ինքս ինձ ճանաչել եմ, չի պատահել, վոր մի անգամ ուրախ լինելի: Տխուր ելի այն որերն ել, չերբ Սեյրանը ձեռքիցս չեր դուրս չեկել, տխուր ելի այն դիշերն ել, չերբ մեր պատըշ-գամբի վրա խոսում ելինք: Յես հենց առաջուց դիտելի, վոր այսպես պիտի վերջանա մեր բանը. իմ սիրտն եր ասում այդ»:

Ոջախի մեջ այրվում ելին չորացած փայտի կտորտանքը, իրանց պղնձագուլն և մուլլ լուսով ողնելով ճրագի աղոտ լուսավորության: Սուսանը նստած եր ուղիղ ոջախի դիմացը: Կրակի լուսավորությունից նրա մաշված դեմքը ստացել եր ավելի վշտալի, ավելի մեկամաղ-ձոտ տեսք: Նրա ցամաքած շրթունքների վրա խաղում եր մի դառն ժպիտ, մի ժպիտ, վոր արտահայտում եր ջախջախված սրտի սուր կակիծը:

— Մեղա քեդ, տեր ասոված, մեղա քեդ,—ասաց Սուսանը, չերեսը խաչակնքելով,—մտքովս տեսակ-տեսակ բաներ են անցնում, վախենում եմ, վոր դու կպատժես ինձ:

Յերբ նա ուսումնարանումն եր, մի եր կույսը խոսելով աշխարհի ստեղծագործության մասին, ասաց, թե ասոված նտի քան մարդուն ստեղծելը, աշխարհն և ստեղծել ու պատրաստել նրա համար: Հետո մարդուն ստեղծելով, ասել և նրանց. «Այդամ ու Յեվա, ես ամենը, վոր տեսնում եք, ծով ու ցամաք, կենդանիներ ու թռչուններ, բոլորը-բոլորը ձերն և. դուք եք նրանց տերն ու թագավորը, հրամայեցեք ու նրանք ձեզ կհնազանդվին»: Յեթե եղպես ե, չեթե կույսի ասածը ճշմարիտ ե, ինչու ասոված մի բան խնայել և մարդուց, ինչու նա չի ասել. «մարդ, քո սիրտն ել քոնն ե. նրան ել կարող ես հրամայել ու նա չել քեզ կհնազանդվի»: Ահ, չեթե ասոված այդ ել ասեր, մարդը այսորվա պես այսքան չեր տանջվիլ ու այսքան մեղքեր չեր գործիլ: Ասում են, թե խելոք մարդիկ իրանց սրտի ձայնը չեն լսում, ամեն բան խելքով են անում. չերանի ալգպիսիներին: Սուսանի խելքն ասում ե. «ախի, որես դենը Սեյրանին չպիտի սիրես, վորովհետե քո հոր նամուսն այդպես ե ուղում». խելքն ասում ե, բայց սիրտը հակառակում ե: Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ:

Ձկարողանալով իր հարցին պատասխանել, Մուսանը մի ձեռում օտփսեն, մյուս ձեռում սրբիչը, ձգեց լուր հալացքը ոջախի կրակի վրա, վոր չընթալով շարունակում եր ալըվել: Մոտ մի բոպե նա այդ դրութւան մեջ անթարթ աչքերով նայում եր կրակին: Հետո, նա կրծքի վրա թափված թանձր մազերը հետ ձգելով, շարունակեց սրբել օտփսեները:

— Ձե, չե, ինչքան վոր միտք եմ անում, ելի իմ ասածն ե դուրս գալիս: Վերցնենք հենց հորս, նա հո հիմար չի, նա հո լուր ասածի վրա հաստատ մնացող մարդ ե, բայց տեսնում եմ, նա չեւ ինչ-վոր անում ե, ելի խելքով չի անում, սրտով ե անում: Ասում ե, թե «նամուսիս համար եմ կտրել իմ բարեկամութլունը Հալրապետանց հետ»: Մի հարցնող լինի, թնչ ասել ե նամուս: Իմ կարճ խելքովս չես հասկանում եմ, վոր նամուսը մարդուս սիրտն ե: Ձեմ: Հն, հալրս ասում ե «սիրտս մղկաում ե, չերբ լսում եմ, թե քաղաքում ինձ վրա բաներ են խոսում»: Միրտս, սիրտս, սիրտս, ամենքն ել իրանց սրտի վրա չեն գցում իրանց ցավերի պատճառը: Հալրս ասում ե. «չես իմանում եմ, վոր ինչ վոր աղջկաս վրա խոսում են, սուտ ե, բայց ելի ամոթից կարմրում եմ, չերբ վոր լսում եմ»: Ինչո՞ւ չե կարմրում, չեթե չի հավատում:—Վորովհետե սրտին դուր չի գալիս: Այո, հալրս ել, նրա պես մարդն ել չի կարողանում իրա սրտին տիրանալ ե այսոր ինքն ել ե տանջվում ու մեղ ել ե տանջում: Ձե, ամեն բան մարդու սրտիցն ե կախված: Մեղա քեզ աստված, մեղա քեզ աստված, մեղ շատ իրավունքներ ես տվել, բայց մեր սրտի իրավունքը ձեռումդ ես պահում: Լավ, թող քո կամքը լինի: Յես գիտեմ, վոր ինչքան ել ուզենամ Սեւրանին մոռանալ, չեմ կարող: Մի անգամ վոր նա մտել ե սիրտս, մեկ ել այնտեղից դուրս կգա հոգուս հետ:

Մուսանը կուռը բարձրացրեց ե արիալուզի թևով սրբեց արցունքը:

— Ինչ ուզում ես արա, աստված, քո կամքը սուրբ ե, բայց մի բան եմ խնդրում, խնայիր ինձ ե իմ ծնողներին ե այս խնդիրս կատարիր: Դու ինձ այնքան ուժ տուր, վոր կարողանամ ապրել մինչեւ այն ժամանակ, վոր ինձ պսակեն Ռուստամի կամ մի ուրիշի հետ, հետո մի քանի ամիս ել ապրեմ, վոր իմ ծնողներին ե իմ անունից ջնջեմ դուր տեղը կպած կեղտը: Այնուհետե չես ինքս հոժար կամքովս իմ հոգին քեզ կտամ, ինչու վոր չես առանց Սեւրանի ապրողը չեմ: Սեւրանիս համար ել խնդրում եմ, աստված, վոր նրա սրտից ինձ դուրս բերես ու խեղճ տղին չփչացնես:

Մուսանը բարձրացավ տեղից, օտփսեները մաքրեց, չորացրեց ե

հավաքելով միատեղ, դուրս չեկալ խոհանոցից: Դեռ սենյակի դռներին չհասած, նրա ականջին հասավ ծնողների խոսակցության ձայնը:

Յերկար ժամանակ եր, վոր Բարխուդարը չեր խոսում Գյուլնազի հետ: Սուսանը շատ դարմացավ, լսելով նրա խոսակցութունը և խիստ հետաքրքրվեց իմանալու, թե ինչու վրա չեն խոսում, չկաճենալով միեկույն ժամանակ խանդարել ծնողներին:

Նա ափսոսները դրավ մի կողմ, իսկ ինքը թագնվելով բաց դռներից մեկի հետևում, սկսեց ուշադրութամբ լսել:

— Տասն անգամ ասել եմ, հիմա վերջին անգամն եմ ասում, անկնիկ, վոր չես արածս քեզանից լավ եմ հասկանում,—ասում եր Բարխուդարը ծանր և ամեն մի բառը առանձին շեշտելով:—Իմ խելքը քամին չի տարել, վոր աչքերս բաց-բաց ինքս ինձ ավելի խալտառակեմ: Ի՞նչ կասեն լսողներն ու տեսնողները, քեզ եմ հարցնում, չեթե աղջիկս Հալապետի տղի վրա պսակեմ: Ձե՛ն ասիլ, վոր եղ մարդու աղջիկը մի կտոր կեղտոտ շոր եր, տվին կեղտոտողին, վոր ինքը լվանա: Կասեն ու մի բան ել կավելացնեն: Դու ճանաչում ես մեր քաղաքացիներին, գիտես, վոր նրանք ինչքան են սիրում վրտների տակ կոխտեղ են մարդուն, վոր մի անգամ սկզբիլ ու ցեխի մեջ և ընկել: Խելքի չեկ, թող մեր չերեսի արուսը մի կերպ պահենք:

Վերջին խոսքերն արտասանելու ժամանակ Բարխուդարը ձայնը իջեցրեց, չնայելով վոր սենյակում բացի Գյուլնազից վոչ վոք չկար, վորովհետև Սմբատը խանութի աշակերտի հետ մյուս սենյակում քնած էին:

Լսելով չուր հոր վերջին խոսքերը, Սուսանի ամբողջ մարմնով մի դող անցավ:

— Մեռի՛ր, տափը մոխր, Սուսան, ել ի՛նչ չերեսով ես ապրում, տես վորքան ընկել ես հորդ աչքում: Տեր աստված, տեր աստված, միայն քեզ ե հայտնի իմ անմեղութունը, և դու հախը նահախին չես տալ:

— Վիզս կկտրեմ, գլուխս շների առաջ կդցեմ, թե վոր աղջիկս ես ճրագի լուսի պես խստակ չլինի: Հավատացիր, Բարխուդար, վոր Սուսանը անմեղ և հրեշտակի պես,—պատասխանեց Գյուլնազը նույնպես հազիվ լսելի ձայնով:

— Հավատում եմ, բայց զնա դու քաղաքին ել հավատացրու: Յերկու ձեռներ ունիմ, չերկուսի բերանը կկապեմ, բաս մնացածի՛նը:

— Հապա ինչպե՛ս կապենք, Բարխուդար, չար լեզուները, վոր մեր չերեխային տանջանքներից ազատենք:

— Յես մի անգամ ասել եմ, պրծել:

— Վոր պիտի Քոչարյանց Ռուստամին տանք:

— Թե նա չեւ չեղավ, մի ուրիշին:

— Բարխուդար, պարզն եմ ասում, Սուլանա Սելրանին ե սիրում, նա ուրիշի հետ ապրել չի կարող:

— Ադն, ջառ ու ջահաննամը վոր սիրում ե, չես ել իմ պատիվս եմ սիրում: Թող տասը Սելրան-Սուլանաներ փչանան, միայն թե անուհս կեղտից սրբվի:

Տիրեց լուսթլուն:

Սուլանը դռան ճեղքից ներս նայեց: Գլուխազը արտասովում եր: Վերջին չերեք ամիսները նա մի անգամ ել չեր արտասովել, չնայելով իր գտն վշտերին: Աղի արցունքները բուռն զորութեամբ մի անգամից դուրս թափվելով նրա խորը թաղված աչքերից, կարկառի պես գլորվում էին նիշար ու մաշված չերեսով:

Բարխուդարը չեր արտասովում: Բեղերը վոլորելով և չերքեքն կոծոտելով, նա մոլոր հայացքով սենյակի կոճերին եր նայում:

— Մայրս լաց ե լինում, հայրս վհչ,— մտածեց Սուլանը: Բայց ինչպես հայրս սպրտնել ե, ինչպես նրա պոռոնները կապույտ կապտել են: Ոհո, քեզ պես մարդն արտասովել չգիտե, քո ընավորութունից հետո չե սրտի վշտերը արտասովքով արտահայտելը: Դու քո արցունքները բաց ես թողնում ներս, սրտիդ մեջ, վոր ավելի բորբոքեն ցավերդ: Ոհո, չես իմանում եմ, դու մորիցս շատ ես տանջվում, այդ չերեում ե քո վառված աչքերից: Խեղճ մարդ, ինչո՞ւ չես քո որը սեպանում: Տեր աստված, մի հնար ցույց տուր, վոր չես իմ ծնողներին ազատեմ այդ տանջանքից: Յեկ, ներս վազեմ, ընկնեմ հորս առաջ, արտասովեմ, ներողութուն խնդրեմ, ամեն բան նորից պատմեմ, ասեմ... ասեմ. սխալվել եմ, հայր, բաշխիր: Բայց ոհո, ինչպես ասեմ, ինչպես չերեսս կպատի նրա առաջ աչքս խոսելու և ինչ մեղք ունիմ:—Ձե, ավելի լա՞ն ե, չես հենց վաղը առավոտը մորս հետ առանձին կխոսեմ: Յես մորս կհավատացնեմ, վոր Սելրանին չեմ սիրում, թե ուզում եմ ուրիշին գնալ: Այդ ամենից լա՞ն ե, խեղճ կնիկը կհաճատանա, ել չի չարհարվի:

— Լսի՛ր, ինչ եմ ասում,— ընդհատեց լուսթլունը Բարխուդարը,— լաց լինելով բան չես կարող առաջացնել, լա՞ն ե մեր գլխի հոգսը խելքով տեսնենք: Բանը վաղ թե ուշ պիտի վերջացնենք: Շըպպանիկ ե, ինչ զարհու՞մար ե, վոր ասում ես շաբաթը հինգ անգամ գլխիդ ե դալիս Ռուստամի կողմից, եզուց կամ մյուս որը թե վոր մեկ ել չե՛կավ, ասն, վոր չես զարուլ եմ Սուլանին տալու:

— Ռուստամի՞ն:

— Հա, հենց Ռուստամին: Թե վոր ուզում են, թող հենց ես քանի որերը նշանը բերեն, վերջացնենք: Ել լերկարացնելու տեղը չի, դու լի խելքդ գլուխդ հավաքիր, ֆիքր արա, տես հարսանիքի համար ինչ վոր հարկավոր ե, առնեմ բազարից: Լսեցի՞ր: Դա վերջին խոսքս ե:

— Շըպպանիկը լերկու շաբաթ ե, վոր վտոր մեր տնից՝ կտրեր ե,— պատասխանեց Գյուլնազը, աչքերը սրբելով:

— Պատճառը:

— Հալրաթ Ռուստամի մոր ականջն ել լցրել են ելի:

— Հըրմ:

— Հապա, տեսնում ես մեր բանը վորտեղ ե: Դեհ, չես ել հենց եդ պատճառով եմ ասում, վոր Սեյրանին տուր, Սեյրանին տուր ելի...

Բարխուդարը լռեց. գլուխը թեքեց կրծքին: Նա մի քանի վայրկյան գլուխը պահեց ձեռների ափերի մեջ և կրկին բարձրացրեց:

— Դու եզուց Շըպպանիկին կանչել տուր, չես նրա հետ կխոսեմ:

— Բարխուդար, լավ բան չես տնում:

— Յեթե գլուխդ սիրում ես, սուս արա, թե չե...

— Փառք քեզ, աստված,— հառաչեց Գյուլնազը:

— Դու ինձ կտորել չես կարող, բանը վճռված վերջացած ե: Լավ իմացիր, հրես, ասում եմ. գլուխը քո լուրով կանեմ ամենքին:

— Բարխուդար...

— Կտրիր ձայնդ, հաշտարդ, արյունս գլխովս ե տալիս:

Գյուլնազը թաշկինակը դեպի աչքերը տարավ և սկսեց հեկեկալու Սուսանը ներս մտալ:

XV

Առավոտ եր: Արեգակը նոր-նոր դուրս գալով շրջակա փոքրիկ սարի հետևից, վսեմաբար բարձրանում եր, շառագուռնելով հորիզոնը: Նրա ծիրանագույն լույսն ընկնելով քաղաքի հակառակ կողմում գտնվող ավելի բարձր սարերի վրա, հանդարտությամբ ցած ե իջնում գազաթ-ներից, հետզհետե փոխելով լուր գույնը և ավելի ու ավելի պարզվելով: Ահա վերջապես նա հասավ սարերի ստորոտը, վորի մակերեսը հավասար և հալոց և ուռսաց նորաշեն չեկեղեցիների գմբեթներին: Ահա գմբեթների վրակեղոծ խաչերը արեգակի ճառագայթների տակ փայլում են նույն արեգակի նման:

Քաղաքի ընակիչները քնից զարթել են և շտապում են իրանց գործին: Փողոցները փոքր առ փոքր կենդանություն են ստանում: Դյուղացիները բեռնած եղերը իրանց առաջ գցած, քշում են փողոցից

փողոցը: Դրանք մրգավաճառներ են, վրոնք անդադար դռնում են
բարձրաձայն «այ գողալ (հոն) առնող, մանը չերկու շահի, աչ խիար
(վարունգ) առնող, հարյուրը մի արասի» և այլն և այլն: Գյուղացիներ-
ի ձայնին հետևում է քաղաքի մրգավաճառի ձայնը, վորը ահա սև
թուղով լցված մի ահագին տաշտ գլխին անցնում է, ստեպ-ստեպ
կրկնելով. «սարահիի, աչ խարա ինջիր»: Յերբեմն-լերբեմն բացվում
են այս ու այն տան դռները և մի կին կամ մի որիորդ շալով փաթա-
թած դուխը դուրս է ցցում: Նախ և առաջ նա նայում է աջուձախ և
տեսնելով, վոր ոտար մարդ չկա փողոցում, մի սղնձյա սկուտեղ ձե-
ռում դուրս է գալիս փողոց: Շալի տակից նա ձեռով է նշան-անում
մրգավաճառին: Մրգավաճառը մոտենում է, մի քանի բոպե շարու-
նակվում է սակարկութունը. վերջապես, գնողը մի քանի սև փողեր
ձգելով մրգավաճառի առաջ, միրգ է կշռել տալիս, սկուտեղը լցնում և
շտապով ներս սկզվում: Ահա արհամարական ժպիտը չերեսին, բեղերը
անդադար փոխելով, աջուձախ մտիկ անելով, ուղիղ փողոցի մեջ տե-
ղով գնում և չուր խանութը նոր հարստացած մանրավաճառ թաշովը:
Նա բուխարու գդակի տեղ գլխին դրել և ֆուրաշկա, իսկ չմուշկներին
փոխարեն՝ հագել և չմորոպական կոշիկներ: Կոշիկները ճրճոռում են,
և թաշովը, դիտմամբ և սալահատակի տվելի հարթ և մեծ քարերի
վրայով գնում, վոր այնտեղ ավելի քարձր ձայն հանեն չուր կոշիկնե-
րը: Ամեն անգամ վորտեղ փոխելիս դրնդ-դրնդում են նրա ձեռի բա-
նալիները, չըխկ-չըխկ կաշվում է ժամացույցի քողը արծաթե քամարին
և դրանց ձայները խառնվելով կոշիկների ճրճոռոցների հետ, կատար-
յալ մի համերգ է նրա համար: Յեվ թաշովը, աչդ համերգով հափշտակ-
ված, աչքերը վառված, ընթանում է առաջ ծանր և հպարտ քայլերով:
Թաշովի չտեխից, կեղտոտ թաշկինակի մեջ փաթաթած հաց ու պանի-
րը կոնստակին դրած և մի կապ կխակար չումուշկներ ուսովը
ձգած, գալիս է կոշկակար թամբազը: Ահա թամբազը հավասարվեց
մանրավաճառին, քիչ հեռացավ հետ ու հետ, մի վայրկյան կանգնեց,
չերեսը դարձրեց նրան, ձեռները կրծքին դարսեց և «բարի լույս աղին»
ասելով, գլուխ տվավ: «Աստուծո բարին, ուստա», — պատասխանեց ման-
րավաճառ թաշովը, առանց նայելու «ուստայի» չերեսին և առանց ընդ-
հատելու չուր կոնցերտը:

Ամենքը իրանց գործին ելին շտապում: Իսկ մեր Հայրապետը,
չնայելով վոր առավոտները սովորաբար ամենից վաղ եր գնում խա-
նութը, դեռ փողոցում չեր չերեռում: Նա դեռ տանն եր:

Թեև վոր չուխան ուսերին ձգած, սրածայր գդակը գլխին, նա
անցուղարձ եր անում սենյակում, անդադար ներս ծծելով չիբուխից

դառն ծխախոտի թուէնավոր ծուխը և կրկին ահագին քուլաներով դուրս թողնելով սենյակի խոնավ ողի մեջ:

Նրա գունասպառ դեմքը, կնճոված ճակատը, ծռմոված շրթունքները, դողողուն ձեռները, անհաստատ և անկանոն քայլվածքը, այս բոլորը, բոլորը հաստատում են, վոր նա գտնվում և հողեկան սաստիկ խռովության մեջ: Ժամանակ-ժամանակ, չերբ նա չիրուխը հանում է ընդանից և ծուխը բաց թողնում, նրա ծռմոված շրթունքներով սահում է մի դառն կսկծալի ժպիտ: Այդ վայրկյաններին ծերունու անորոշ հայացքը, կարծես անգիտակցաբար, ընկնում է Մարիամ բաջու վրա, վոր նստած է սենյակի մի անկյունում:

Մարիամ բաջին չեր նայում չուր ամուսնուն: Սովորականին հակառակ նրա գլուխը բաց էր և կարճիկ մազերը անկանոն կերպով սփռված էին ուսերի վրա: Դուխը կարմիր թաշկինակով փաթաթած, նրա դեմոզեմ անկողնի մեջ պառկած էր Մեյրանը: Նրա փակաչքերից, սեղմված շրթունքներից չերևում էր, վոր քնած էր: Մարիամ բաջին անգաղար հառաչելով, ախ ու ուժի քաշելով, շուտ-շուտ չուր ձեռը դնում էր նրա ճակատին և կրկին հետ քաշելով, կրկնում: «տաքացրել է» թաշկինակի տակից Մեյրանի ճակատի վրա փայլում էին արյունի կարմիր կաթիլներ, վոր չորացել էին ու կպել կաշվին: Նրա չերեսը ուռած էր և տեղ-տեղ կապտած:

Յերբ վերջին անգամ Մարիամ բաջին գլուխը դարձրեց դեպի չուր վորդու չերեսը և համոզվեց, վոր նա քնած է, զգուշությամբ բարձրացավ տեղից:

— Դուրս չեկ, չերեսդ լվա, գլուխդ կարգի բեր, հիմա կգան, կհավաքվեն կեղծավորները ու ելի կսկսեն սուտ-սուտ ախ ու վախ քաշել,— խոսեց Հայրապետը ցած ձայնով, չերեի, նուչնպես չկամենալով խանգարել Մեյրանի քունը:

— Զահաննամ, վոր կգան, դարդս խո նրանք չեն,— պատասխանեց Մարիամ բաջին, խորը հառաչանք արձակելով կրծքից և ուղղելով գլխի մաղերը.— Ախար, այ մարդ, ելի դու կարգին չես ասում, թե ի՞նչպես է պատահել ես անցքը չերեխիս:

— Խոցոտված սրտիս մատ մի կոփիլ, աստված սիրես,— պատասխանեց Հայրապետը, չերեսը շուռ տալով չուր ամուսնուց:

— Յերադան աստված, դու. նրանց հախին դաս, դու. նրանց ծնողներին ել ես որին հասցնես:

— Իսկի խալիս համար անեծք մի անիլ, վոչ նրանք են մեղավոր, վոչ ել ծնողները:

— Հապա ձվ ե չերեխիս չախլախ արեկ ու ես որը գցել:

— Ինքը, հախն եւ Թոդ շարչարվի, տնքտնքա, խելքը գլուխը կգաւ չըմ, ինչ սոնկ ե՞, «խելքը գլուխը կգա»։ Յեթե եշի պոչը տափին կհասնի, դաշել կխելութանաւ Սեւրան, ուրիշ անեծք չունեմ, տաւ աստված, վոր դու լիլ ինձ պես հալը լինես ու քեզ պես տղի ձեռին տանջվես։ Ես ի՞նչ որ ե, ի՞նչ ապրել ե, տեր աստված, մի անգամ մո հոգիներս ու ազատիբ ելի։

— Հերիք ե, ա՛յ մարդ, քիչ սիրտդ մըդ-մըդ մաշիր։ Ելի որհնչալ լինի տատված, վոր չերիխի կենդանի լին բերել, վոր սպանած լինեցին, ի՞նչ պիտի անելինք։

— Յերանի չեր, վոր սպանելին ու պրծներ, մենք ել ազատված կլինելինք։

— Ու՛ֆ, լեզուդ չորանաւ։

— Ձե՛, բաս մնալուչե, հսոր կենդանի լին բերել, վաղը կամ մյուս որն ել աստուծո կարող դորուխչամբ կամ գլուխը կբերեն, կամ փորը ծխով լցված։

Մարիամ բաջին, վորպեսզի չլսի չուր ամուսնու կսկծալի խոսքերը, հեռացաւ սենյակի մյուս անկյունը ու աջնտեղ սկսեց չուր հագուստը կարգի բերել։

— Հրես ասում եմ, աստուծով մի որ կլինի ու դու լիլ կտեսնես,— շարունակեց Հայրապետը, կարծես, դիտմամբ, վոր ավելի ու ավելի վշտացնի Մարիամ բաջու սիրտը։ — Այն որից, չերբ ընկերացել ե լրբերի, գողերի, հարբեցողների, թուղթ խաղացողների, պապիրոս քաշողների հետ, ել չես նրանից ձեռք եմ քաշել, ասել եմ, «հե՛յ, գահի բուննան ողուլ չխմաղ¹»։ Իմացար, Հիմա նրա ավետարանը կարդացված ե, թող սատիւ ու շների կերակուր դառնա ելի, փինե Ձե՛, չեմ ուզում, չեմ, չեմ ուզում ջանք, գեոգում եմնեց ազին, վոր գիշերվա կիսին տնից փախչում ե ու մտնում գինետուն մոր կաթը կարածների հետ լակում, կովում ու շտն պես ենքա՛ն թակվում, ջարդ ու փշուր լինում, վոր փախստով են տուն բերում։ Տար, տար քեզ լինի, խիրը տեսնես, չես նրանից ձեռ եմ քաշել, չախաս թափ եմ տալիս։

Իսկույն Հայրապետը աչս ասելով չերկու ձեռներով բռնեց չուր արխալուղի ոձիքից և թափահարեց։

— Հրես ասում եմ, հենց վոր աչքերը բաց արավ, ուշքի չեկավ, ասա նրան, վոր ել աչքիս չերկա։ Թող դուրս գա, կորչի վորտեղ վոր ուզում ե, չես նրա հետ ել բան չունիմ։ Հասկանում ես։ Յես նրա հալը չեմ, իմացար, չես, կուժ ծախող Հայրապետա, ել որես դեն նրա հալը չեմ, պրծաւ գնաց։ Հրես չես ել կգնամ Կունդուստոր, սեկլասա-

¹ Ձե, ել սա վորդի չի դուրս գա։

քիմ կասեմ, վոր նրա անուշը դավթարից հանի դուրս: Հետո կդամ
նաչառնիկի մոտ ու ամեն բան նրան մին-մին նաղլ կանեմ, եսպես,
ենպես, Սեյրանը տղաս չե, վաստալամ, շուռ թամամ...

— Պրծավ գնաց, իմ բանս ել դրսավեց, լարիս ել մահլամ գրիր:
Քիչ ենք խաչտառակվել, դու լի գնա կունդուստորի-մունդուստորի,
սկլատարի-մկլատարի դավթարը գցիր անուններս: Հայրապետ, շուն
ե, դեղ ե, լիբր ե, փչացած ե, ինչ-վոր ե—ելի տղադ ե, ելի հայրն ես,
դու պիտի մի կերպ ես Հար ճանապարհից հեռացնես նրան:

— Ձեմ ուզում, ջանք, չեմ ուզում ելի, վոր նա տղաս լինի:
Տար վզովդ գցիր, չես բան չունիմ, չես ձեռներս լվանում եմ, թող
գնա չոլերն ընկնի: Նա չէր պատճառը, վոր Բարխուդարը քսան-չե-
րեսուն տարվա բարեկամութունը մի որում քիրթ կտրեց ինձ հետ:
Նա չէր պատճառը, վոր խեղճ մարդու աղջկա անուշը սաղ քաղաքում
ընկավ, ինքն ել խաչտառակ իրավ: Ձե, չե, չե, չեմ ուզում, նա իմ
տղաս չի ելի, փրիկե, նահլաթ քեզ...

— Քո խեղճ Բարխուդարին թող խեղճ ոճ կծի,—ընդհատեց Հա-
րապետի խոսքը Մարիամ բաջին,—թող նրա սիրտը տասը դանակ
միասին խրվեն, թող աստծուց մահ խնդրի, մահը ձեռովդ իլի, ինքը
փրաղա, վաղ տա, վաղ տա, չհասնի: Նա, նա, են քրոփակ Բարխու-
դարն ե չերեխիս ես որին հասցրել:

Մարիամ բաջին այս թունավոր անեծքը արտասանեց աչքերը
դեպի չերեխին քարձրացրած և ձեռներով անդադար կրծքին խփելով:
Հայրապետը, դեմուդեմ կանգնած, բարկացած նայում եր նրա չերե-
սին, մի ձեռով չիբուխը քիչ բերանից հեռու բռնած, մյուսով ստեպ-
ստեպ գգակը գլխին սեղմելով:

Յերբ Մարիամ բաջին չուր անեծքն տվարտեց, Հայրապետը
կամեցավ մի ինչ-վոր բան խոսել, բայց կատաղութունից չկարողա-
ցավ վոչինչ ասել: Նա չիբուխը խրեց գոտում, ձեռները քաշ ձգեց և
գլուխը աջ ու ձախ շարժելով, շարունակեց մտիկ անել ամուսնու բե-
րանին:

Այս պատկերից հետո Մարիամ բաջին կուցավ, վերցրեց գետ-
նից շալը և գլխին փաթաթելով, ասաց.

— Տափին դիպչեն բախտավորները: Ուրիշները առավոտվա ժա-
մաթամքի աղոթք են անում, չես անեծք եմ թափում բերանիցս:

— Ինչու վոր ոճ ես, ոճի արգանդին դուրս չեկած,—ասաց Հա-
րապետը, կրկին չիբուխը գոտուց դուրս հանելով:

— Դու լի ցավիս վրա ցավ մի ալելուացի, աստված սիրես:

— Ձայնդ կտրիր, մութանու աղջիկ: Լեզուդ կծած պահիր, թե

և ամենի աջըրը քեզանից դուրս կըսերեմ,—բարկացա՛մ կրկին Հայրապետե՛ր, այս անգամ մոտենալով Մարիամ բաջուռն և չիբուխը բարձրացնելով նրա գլխին:

— Հանիր, հանիր, թնչ ուզում ես արա, ել որես դեն ինձ համար սև ու սպիտակ մին ե: Ձե, սիրտս երվի, խորովի, մի անեծք ել Հանեմ սաքաքի համար, համա:

— Մարաբը դու ինքդ հա:

— Մարաբը քոփակ Բարխուդարն ե: Թող, թող աղջկանը տանի տա հայասըդ Սանամի լակոտ Ռուստամին: Ինչո՞ւ չի տալ, հարուստ, սովորաբար... հը՛մ, հըմ... չարադան աստված, դու հախը նահախին տվողը չես: Շատ չի քաշիլ, չես կտեսնեմ Բարխուդարին փոշմանած, գլխին թակելիս:

— Շատ ես լեզվիդ դող տալիս, հա, փիեե, —գոչեց Հայրապետը, դարձյալ կանգնելով չուր ամուսնու դեմուդեմ:

Մարիամ բաջին չերեսը շուռ տվալ նրանից:

— Ձե, տեսնում եմ, վոր դարիդ շատ ե ընկել, բաս, վոր եդպես ե, մո, ազրեր, դա—քեդ, նա—ինձ, հա, ջանըմ, դա—քեդ, նա—ինձ:

Այս ասելով Հայրապետը վերցրեց չուր գլխից գդակը և Մարիամ բաջու գլխից—շալը: Գդակը գրավ ուժով Մարիամ բաջու գլխին, իսկ շալը ձեցեց չուր գլխին:

— Հիմա, համեցեք, չես մեղա աստուծո, դու մարդություն արա որես դեն, չես կնիկուլթյուն կանեմ:

— Յարաբ, աստված, ես մարդուն մի ծախ խելք ելիր տվել, եդ ել ինչո՞ւ խլցիր,—ասաց Մարիամ բաջին, գդակը գլխից մի կողմը շարտելով և չուր շալը Հայրապետի գլխից քաշելով:

Գդակն ընկավ անկողնի վրա: Սեյրանը դարթեց:

Նա վերմակը չետ քաշեց և գլուխը բարձրացրեց: Հայրապետը մոտեցավ, վոր գդակը վերցնի անկողնի վրայից: Մի վայրկյան հոր ու վորդու հայացքները հանդիպեցին իրարու: Հայրապետն արագութեամբ չերեսը շուռ տվալ, վոր վորդու չերեսը չտեսնի: Սեյրանի դեմքը արտահայտում եր հոգեկան տարորինակ տանջանք: Արդյոք, վճիռն եր այս վայրկյանին վշտացալ պատանու մեջ գորեղ—խղճի խալթոցը ծեբուռնի ծնողներին պատճառած ցավերի մասին, թե սեփական տանջանքը:

— Զուր, —արտասանեց Սեյրանը թուլլ ձայնով:

Մարիամ բաջին շտապեց բավականացնել նրան: Սեյրանը նկատեց թե ինչպես հալը իրանից չերեսը շուռ տվալ դզվանքով, նրա չերեսը շառագունվեց:

— Առ, խմիր, — ասաց Մարիամ բաջին, ջրով լի բաժակը մոտեցնելով վորդու բերնին:

— Վերականգնե՛ք քեզ, — հարցրեց, լերը Սեյրանը բաժակը ագահութեամբ դատարկելով չես դարձրեց:

— Գլուխս, — արտասանեց Սեյրանը և, կրկին վերմակը՝ գլխին քաշելով, պառկեց:

— Մի քիչ նստիր, խոսիր, վոր քեֆդ բացվի, բալաս, հերիք և քնածդ, — շարունակեց Մարիամ բաջին, խնամքով ծածկելով լուր վորդու վրաները վերմակի ծալքով:

— Նստել չեմ կարող, գլուխս ցավում է:

— Յերեսդ դես պարանիւր ու խոսիր:

— Ձեմ ուզում, չեմ ուզում, թող, — գոչեց Սեյրանը, գլուխն ավելի խորը թաղելով վերմակի տակ:

— Ձեմ ուզում, հըմ, չերես ունիս, վոր ուզես, ամոթից պիտի խեղդվես, վոչ թե խոսես, — մեջ մտաւ Հայրապետը, վոր այդ ժամանակ չերեսը մոռս կողմ դարձրած չիբուխ եր լցնում: — Ադա, ամաչում ես իսկիւն, — շարունակեց նա, մոտենալով Սեյրանի անկողնին, — ամաչում ես, թե՛ չերեսիդ մեռունը լափ թափվել և ու սկզբած կաշին և մնացել, հըմ...

— Ողորմի քո հորը, այ մարդ, ողորմի ռիսը պորտիդ, սնւս արա, սնւս արա, թող տեսնենք գլուխներին ինչ ոլին և դալիս, — աղերսեց Մարիամ բաջին:

— Այ քրոփողի աղջիկ, չե՞ս թողնելու, փիւն, փիւն, ինչ ես գլխիս չաքուչ դառել, խեղդվեցի հո, — դուստը Հայրապետը Մարիամ բաջու վրա: — Ասն, ասն, անառակ տղա, ասա տեսնում, դա ինչ ոլիններ են, վոր դու մեր գլխին բերում ես, հըմ:

Սեյրանը լուռ եր:

— Ձես խոսում, լեզու չունես, լալացել ես, հըմ, լալացիր, այ սասնի դողանըն բոչնի սնսուն, բելա բոչնի սնսուն, Սեյրան ողջան:

— Մնահուն, սնահուն, հն, սնահուն, — չերեք անգամ կրկնեց Մարիամ բաջին վշտացած ձայնով:

Վերմակը շարժվեց և, Սեյրանը գլուխը դուրս հանեց: Նա քիչ բարձրացավ և ձախ կողմով հենվելով անկողնին, մի քանի վարկյան նայեց հոր չերեսին և կրկին ծածկվեց ու ընկավ:

— Ի՞նչ ես ուզում, բալաս. — հարցրեց Մարիամ բաջին:

— Հըմ, ուզում ելիր, վոր մի բան հաջես. հաջիր, անառակ:

— Յեթե չես լալ վորդի չեմ, դու չել ինձ համար մի որինսավոր

¹ Քեզ ծնողի վիզը կտրվի, այն, վիզը կտրվի, Սեյրան տղա:

հայր չես,— փնթփնթաց Սեյրանը, գլուխն ավելի խոր թաղելով վերմալի տակ:

Հայրապետը լսեց այս խոսքերը:

— Լսեցիր, աչ կնիկ, տես, տես, բեզդաղը ջուրիաթ ել ունի...

Նա չկարողացավ խոսքն ավարտել, չուխան ուսերից մի կողմ ձգեց, չիրուխն աջ ձեռում սեղմեց և ատամները կրճտելով, սկսեց բո-
լոր ուժով վոտները գետնին խփել:

— Հայրապետ, Հայրապետ, խելքդ գլխիդ հավաքիր,— մեջ մտավ Մարիամ բաջին:

— Կարբիր ձայնդ դու, հըմ, հարամդադա, համարձակվում ես հորդ գլխին չաքձւչ բանեցնել, Դուրս, դուրս, ասում եմ, հենց ես սհաթիս դուրս, ոձի դավակ:

Հայրապետը հարձակվեց Սեյրանի անկողնի վրա, վերմակը խեց և մի կողմ շարտեց:

Մարիամ բաջին ընկավ ամուսնու վոտների առաջ:

— Աման դըր, աման, աչ մարդ, տու՛նա մի քանդիլ, խեղճ եմ...

— Շորերս, շորերս, չես չեմ ուզում ել այսուհետև ձեր վորդին լինել, դուրս եմ գալի հենց այս բուպելիս:

Այս ասելով, Սեյրանն արագությամբ վոտի կանգնեց անկողնի վրա:

Բաց թողնելով ամուսնու վոտերը, Մարիամ բաջին այս անգամ չոքեց վորդու առաջ, մաղբեր փետտելով:

— Սեյրան, Սեյրան, խնայիր վոտքի վրա չորացած մորդ բամբակ մաղերը, խնայիր,— գոչեց խեղճ կինը աչքերից աղի արտասուք թափելով և մաղբեր տարածելով վորդու վոտերի առաջ:

Հայրապետը մնաց անշարժ: Նրա ալիխառն գլուխը և ձեռները բարկությունից դողում էին: Կարծես մոր աղերսանքն աղդեցին Սեյրանի վրա: Թշվառ պատանին, տեսնելով նրան այդ դրության մեջ, նույնպես մնաց անշարժ: Նրա ձեռները թուլացան և քարշ ընկան կողքերին, իսկ գլուխը թեքվեց կրծքին:

— Բաց թող, բաց թող, գնա, տեսնեմ, վճռեղ ե գնալու, թնչ կարող ե անել առանց ծնողների,— խոսեց Հայրապետը, այս անգամ քիչ մեղմացած:

— Ձե, չեմ թողնիլ, միսը չեղունգից բաժանել, հայրը վորդուց ջոկել: Ձե, չե, առաջ վիզս կտրեցեք, հետո ջոկվեցեք:

— Մատաղ լինես, Սեյրան տղա, քո ծերացած մորդ, թե չե աստծուն ե հայտնի, վոր մեծ թիքադ ահանջդ կմնար ձեռումս:

— Թող մնա, այսուհետև Սեյրանի համար վողջ մին ե ինչ ել

Վոր լինի: Յեա ել մորս եմ խնայում, բայց իմացիր, վոր ել որես դեն
յես այստեղ մնալ չեմ կարող: Կթողնեմ այս տունը հենց այն բողբոջին,
չերբ վոտներս կարող կլինին տեղից շարժվիլ:

Այս ասելով, Սեյրանն ալլես չկարողացավ վոտքի վրա կանգնել:
Բոլորովին ուժաթափվեց և ընկավ անկողնի վրա:

— Տանջիր աստված, տանջիր, պապակիր ինձ, ինչքան ուզում
ես,—բացականչեց Մարիամ բաջին, վերմակը քաշելով Սեյրանի վրա:

Այդ վայրկյանին դրսից լսվեցին վոտների ձայներ: Մարիամ
բաջին շտապեց կարգի բերել չուր ցիրուցան լեղած մաղերը և հա-
գուստն ուղղել:

Հայրապետը դռներից դուրս նայեց և խկուչն դեպի ներս շուռ
գալով, ասաց. «սատանաների նախիրն չեկավ, վեր կաց վոտքի»:

Ներս թափվեցին մի խումբ կանաչ և խաչաձև մուկ չարշովների
մեջ փաթաթված, տնքտնքալով, ծանր հառաչանքներ արձակելով, ախ
ու վախ քաշելով:

Հայրապետը չուխան հագավ և դուրս դնաց:

Մարիամ բաջին առաջ շարժվեց, վոր հյուրերին ընդունի:

I

Քաղաքի վերին արվարձանի միջին բաժնում, Բարխուդարի և Հայրապետի տներից բավական հեռու, մի ընդարձակ և ուղղագիծ փողոցի ծայրում գտնվում էր միհարկանի մի տուն: Այդ տունը նոր էր և, ենչալես չերևում էր պատերի ճերմակ և տաշած քարերի դեռ մաքուր գույնից, կառուցված էր չերկրաշարժից հետո:

Դա Քյոչարանց Ռուստամի տունն էր:

Գինեատում Սելրանի կուվելուց ուղիղ չերեք որ անցած, կեսորվա դեմ, այդ տան ներսում նստած էր Ռուստամի մայրը—Սանամ խանումը: Տունը բաղկացած էր ընդամենը չերկու կես չեվրոպական ու կես ասիական վոճով կահավորված սենյակներից: Սանամը մոտավորապես չերեսունուհինգ տարեկան միջահասակ մի գեր, առողջ և կարմրադեմ կին էր, թեև տարիքը արդեն կնքել էին նրա չերեսին պառավութան անկասելի կնճիռները: Նա հագնված էր վոչ աչնքան շքեղ և վոչ էլ շատ աղքատ, բայց բավական մաքուր, աչնպես, ինչպես սովորաբար հագնվում են Շամախում միջին կարողության տեր կանաչք տանը: Սև սատինից կտրած լաչն շրջագրեստ, կապտադուչն մետաքսյա շտպիկ լաչն թևերով, Բաղդադի գուլնզգուլն շալից կտրած արխալուղ—ահա նրա հագուստը: Արխալուղի թևերը հասնում էին միաչն մինչև արմունկները, իսկ աչս տեղից սկսվում էին զառքոֆից տերևաձև ծալքերով ուրիշ թևեր: Սանամը մեջքին կապած էր նուչնպես մետաքսից գործված գոտի, վորի մութ-կապույտ գուլնը նշան էր նրա արխութան: Իսկ նրա գլխի պաճուճանքը բաղկանում էր տեղական բարակ նրբագործ, մետաքսյա նախշուն թաշկինակից, մաշիշակագուլն թոռից և մի սևագուլն բրդե շալից: Աչս բոլոր պաճուճանքի տակից գլխին անմիջապես կապած էր ճութղին, վորի տակից չերևում էին հինալով ներկած մազերը:

Սանամ խանումը մենակ էր: Նրա միակ վորդին, Ռուստամը

գտնվում էր ոտաբուժյան մեջ: Յերկրաշարժից հետո, չերբ առևտուրն ընկավ Շամախում, Ռուստամը հավաքել էր չուր ապրանքները և գաղթել Թեյմուր-խան-Շուրա, ուր արդեն չերեք տարի չէր ապրում եր: Վոդովհետ Սանամը բացի Ռուստամից ուրիշ զավակ չունեիր, մի առանձին դառնութիւն էր նրա համար միակ վորդու բացակայութիւնը: Մի ծանր սուգ էր Սանամի համար այն որը, չերբ Ռուստամն ուղևորվեց դեպի ոտաբուժիւն: Խեղճ մայրը բոլոր չուր հնարները գործ դրավ, բոլոր չուր պերճախոսութիւնն սպառեց, վորպեսզի վորդուն համոզի չթողնելու հայրենի քաղաքը: Վոչինչ չոգնեց:

— Շամախում առևտուրը հաց չի տալիս, հիմա չեկ հարկավոր ե: վոր բախտս ջոկ քաղաքներում վորձեմ ուրիշների պես,—ասում էր Ռուստամը:

— Ինչ՞եւ չես ուրիշներին մտիկ անում, բալաս, նրանք արխառենին, քեզ պես մեն-մենակ չեն: Դու վոր գնում ես, բաս ինձ ումթ ումուղին ես թողնում:

— Կգնամ Շուրա, գործերս քիչ ժամանակում կարդի կրեմն ու հետո կգամ, քեզ եկ ինձ մոռ կտանեմ:

— Այդ էր պակաս, ծերութիւնս որերում ոլքա-ոլքա ընկնեմ, վոր այս փտած չորացած վոսկորներս զարիբ չերկրներում ցիր ու ցան լինեն: Լա՞վն է այստեղ պապերիս ոջախի մոտ, քաղցած, ծարավ մեռնեմ, քան զարիբութենում վոսկի արծաթի մեջ ապրեմ: Քի՛նչ եմ անում վոսկի տաշտը, չեթե մեջը պիտի արլուն թքեմ:

— Չեմ իմանում, ինչ քաղցր բան կա Պարարաշահարի մեջ: Տեսնում ես, վոր քար քարի վրա չի թողնում աստված: Գիշեր ու ցերեկ սիրտներս չեղի պես հալվում ե, թե հենց այս ե—պիտի տակն ու վրա լինի: Լավ չէ, վոր մի անգամ այս անիծված քաղաքից դուրս գնանք ու պրծնենք:

— Մի ասի, վորդի, մարդուս հայրենական հողը քաղցր ե, ունի քաղցր: Մարդ, վոր սովորել է նրան, ել չի կարող ուրիշ հողում ապրել: Տեսնում ես, բալա, ծիծեռնակներին: Աստվածութիւնը եմենց ե ստեղծել են պատիկ արարածներին, վոր նրանք եկ իրանց ոջախը սիրում են:

— Սիրում են, բայց տեսնում ես, վոր նրանք եկ հիմա թողել են իրանց բունը ու թռել ուրիշ քաղաքներ:

— Կգան, ելի կգան, իրանց կարճ խելքով հասկանում են իրանց պապական ոջախի գինը: Վոր սպանես, նրանք ուրիշ տեղ չեն գնալ, ելի իրանց հին բները կգան: Հիմա, բալաս, ծիծեռնակը թռչուն լինելով, վոր եղբան սիրում ե իր բունը, հապա մամրղը:

— Տասն անգամ ասել եմ, ելի ասում եմ, վոր պապական հող, հայրենական ոջախ, չգիտեմ ել ինչ գիրթ ու գիրիլ, դրանք դատարկ բաներ են: Մարդու պապն ել, հայրն ել, ոջախն ել աչնտեղ ե, ինչ տեղ աշխատանք կա, փող կա: «Ուր հաց, աչնտեղ կաց»: Շամախում հաց չկա, չկա ու չկա: Ել մի լերկարացնի, ասածս արած ե, կարճ կապիր:

Այս խոսքերից հետո Սանամ խանումը այլևս չկարողացավ հակառակել Ռուստամին, ճանաչելով վորդու բնավորութունը: Մի ուր նա դառն արտասուքով ճանապարհ դրավ միակ զավակին ոտարութուն:

Յեւ ահա չերեք տարի չեր, վոր Ռուստամը Շամախուց հեռացել եր, և այս չերեք տարվա ընթացքում Սանամը մի անգամ ևս չեր տեսել նրա չերեսը: Ծանր և վշտալի չեր նրա համար մենակութունը: Նա նամակ նամակի չետեից եր ուղարկում, աղաչում եր, խնդրում եր, վոր գոնե մի անգամ, կորճ միջոցով, վորդին գա մոր հետ տեսակցելու: Ռուստամը միշտ պատասխանում եր, թե այս ամսին կգա, մյուս ամսին կգա, այս գործը վերջացնի—իսկույն կուղեորդի, մյուսը վերջացնի—կգա: Յեւ այսպես նա ամբողջ չերեք տարի խոստանում եր ու չեր գալիս:

Վերջին ժամանակները Սանամը շատ ուրախ եր: Ռուստամից չերկու ամիս առաջ մի ուրախալի նամակ եր ստացել: Այդ նամակով վորդին հայտնում եր մորը, թե հերիք ե ինչքան ինքն ազապ մնաց, հիմա տանտեղիկ և հարկավոր, «չունքի, փառք աստուծո, գործերս լավ են գնում» և այլն: Հետո նա խնդրում եր մորը, վոր շուտով մի լավ աղջիկ ճարի Շամախում և ճարելուց հետո, իսկույն գրի իրան, վոր գա պսակվելու:

Ռուստամը հարսնացվի ընտրութան ըրոր իրավունքները տալիս եր մորը:

Սանամը հենց մի աղջկաի պատվերի չեր սպասում: Նա նամակը ստացած որը, իսկույն, առանց ուշացնելու, «զարանգիդի» (հարսնախոս) Շրպալանիկին կանչեց և պատվիրեց, վոր մի «լավ, գոգալ, խելոք, բան անող, կարդացած, հայալու» աղջիկ ճարի Ռուստամի համար: Յերկար մտածեց, լերկար խորհրդակցեց Շրպալանիկի հետ: Քաղաքի բոլոր աղջիկերանց տնունները տվավ մի առ մի, բոլորին քննեց, քննադատեց, հետադրոտեց: Մեկը գեղեցիկ եր, բայց շնորհ չունեիր, մյուսը խելոք եր, բան անող, կարդացած, բայց տգեղ եր, չերբորդը ամեն կողմից լավ եր, հարմար եր—գեռ պսակի եր, չորբորդի քիթն եր ծուռ, հինգերորդի մազերն ելին կարճ, ծնողը զլախ» և այլն և այլն: Մի խոսքով, քաղաքում ել աղջիկ չմնաց, վոր Սանամը չի տրնտ-

դեր: Մի ամբողջ ամիս այս հարցով նա տանջեց յուր գլուխը, մինչև վոր, վերջապես, յերկար աշխատութիւնից հետո, վիճակն ընկավ Բարխուդարի աղջիկ Սուսանի վրա:

— Ի՞նչ աղջիկ է, ի՞նչ աղջիկ է, ի՞նչ բոյ ունի, ի՞նչ աչքեր ունի,—ասում էր Սանամը մի որ Շըպպանիկին Սուսանի մասին: Բարխուդարի կինը, Գյուլնազն էլ, մարալի պես գլոցալ է: Աղջիկն էլ մորն է չեկել, ամա խելոքութիւնով, չես իմանում եմ, մորից տասնապատիկ խելոք է, չունքի, դե, կուչսի ուսումնարանում է կարգացել: Զատկին չես ժամումը բռնեցի, վոր միքիչ խոսացնեմ, խեղճն ամաչելուց կարմրեց, հոշնեց, լիզուն կտրվեց, չկարողացավ խոսել: «Աֆարիմ աղջիկ», ասացի մտքումս: Շըպպանիկ, ջահթ արա բանը գլուխ բերելու, հետո չես եմ իմանում, թե քո պարտքից ինչպես դուրս կգամ:

Շըպպանիկը հենց այսպիսի բաներ ճրագով էր փնտռում: Այդ որից սկսած նա այլևս հանգստութիւն չէր տալիս Բարխուդարի ընտանիքին: Շարաթն չերեք, չորս անգամ, «վախտ, բեվախտ», նա վազում էր Գյուլնազի գլխին խնամախոսութեան, բայց բանը գլուխ չէր դալիս: Վերջին յերկու շաբաթները Շըպպանիկն այլևս չէր չերեվում Բարխուդարանց կողմերում: Սանամի բարեկամները իմանալով, վոր նա մտադիր է յուր վորդու համար Քլոխանց Բարխուդարի աղջիկ Սուսանին ուղեւու, մի որ հովաքվեցին նրա գլխին:

— Ախչի Սանամ, դա ի՞նչ ենք յսում, դժւ վորտեղ, Գյուլնազի հայտագ, կապը կտրած, չոլերն ընկած աղջիկը վճրտեղ: Ա. կնիկ, չէս լսել, նա ի՞նչ սոնկ է, ի՞նչ բաներ է արել կուժ ծախող Հայրապետի տղի հետ:

— Ի՞նչ է արել,—զարմացած հարցրեց Սանամը, վոր առաջին անգամն էր յսում այդ լուրը:

— Վնչ, վնչ, էլ ի՞նչ պիտի անի, մագս կտրվի, էլ բան է մնացել, վոր չանթ,—պատասխանեց Սանամի տալը, «քյանդուկ» Սանանը վոր ինքն իրան Շամախու ծանրաբարո կանանցից մեկն էր համարում:—Բան է մնացել, վոր չանի, էլ գիշերները շոլերում սիլիկ-բիլիկ տնել, պաչպչվել, դուջդուջվել:

— Հետո, հետո:

— Հետո, էլ ի՞նչ հետո, իմանում ես էլի, ջահիլ տղա, ջահիլ աղջիկ, աչ հնչ, հաալ:

Յեւ «քյանդուկ» Սանանը խորհրդավոր կերպով շարժեց յուր գլուխն աջ ու ձախ:

— Վնչ, տունս չքանդվի, լավ էր առել աստված խելքս:

— Բնս, բնս, սաղ քաղաքում մի մատը մեղր կշինեի՞ն քեզ էլ,

տղիդ ել, կլազտելին հա կլազտելին: Մի խստակ անուն ունիս, ուզում
ես, վոր կեղտոտե՞ս, խելքի չեկ, խելքի...

Նույն օրը Սանամը Շըպպանիկին հրամայեց ալլահ չգնալ Գյուլ-
նազի մոտ և մինչև անգամ վոչ-վոքի չել չհայտնել, թե Գյուլնարանց
Սանամը կամեցել և Գյուլնարանց Գյուլնազի աղջկան չուր տղի համար
ուզել: Այնուհետև, նա դարձաւ Շըպպանիկի ոգնութեամբ, սկսեց
վորոնել մի ուրիշ հարսնացու: Յերկու շաբաթ եր, վոր նրանք մոտ-
ծում էին այդ մասին, բայց մի ուրիշ հարմար աղջիկ չէին գտնում:

Ահա հենց այդ մտքով եր զբաղված Սանամի ուզեղը և այժմ: Նա,
մեջքը պատին տված, նստած եր պարսկական գորգերով զարդարած,
թախտի վրա չերեսը դեպի բակը և հմայում եր խաղաթղթերով: Ուղիղ
մի ժամ եր, վոր նա հմայութեամբ եր պարապած և այդ մի ժամվա
ընթացքում անսովազն տասն անգամ թղթերը դարսած և հավաքած
կլինեք, բայց վոչ մի անգամ կամակոր թղթերը ցույց չտվին Սանա-
մի ուզածին պես: Վերջապես, նրա ձեռներն հոգնեցին թղթերը շատ
դեռ ու դեռ բաժանելուց, և նա բարկացած հենց նոր կամենում եր
հավաքել և մի կողմ գնել թղթերը, չերը դրսից մի կանացի ձայն լսեց:
Մեկը թուրքերեն լեզվով չերզում եր և ծափահարում: Սանամն, առանց
տեղից շարժվելու, նայեց դուրս, և նրա դեմքը մի առանձին զարմանք
չարտահայտեց, չերը տեսավ չերգեցող ծափահարողին:

— Այ բռնամ, ալ ջանըմ, դիլ, դիդիլ, դահրի դադահ, դիլ, դիդիլ,
չըթ-չըթ, ալ սադուլ, ալ սադուլ,— ներս մտավ մի բարձրահասակ, նի-
հար կին, պարելով և ձեռները գլխիվերև աղեղնածև պահած՝ չերկայն
ու բարակ մատներով «չըրթմա» տալով:

Իս «զարանգիզի» Շըպպանիկն եր:

— Դիլիլի, դիլիլի, դիլիլիլի, դիլիլի, պարով խանմիս, պարով
նրա տուն ու տեղին,— սկսեց Շըպպանիկը մաքուր տեղական բառա-
սով, առանց վորեւ խառնուրդի:

— Պարով, մին ալ պարով.— շարունակեց նա,— հազար պարով,
ալ բռնամ, հի՛նչ ես անըմ, հի՛նչ ես շինիմ, հինչա պլանի՞ չես: Գի՛ֆըդ,
հալդ, ովհալդ: Հը՞մ, դամադը չաղ ալ: Ասա, դե ալի, տխըր քանի՞ վախա
ա քու լուս չերեսդ չամ տեսնըմ:

Սանամը վոչինչ չպատասխանեց, միայն միքանի վայրկյան նա-
յեց Շըպպանիկի չերեսին, խաղաթղթերը դրեց մինդարի տակ և շորե-
րի ծալերը քաշեց ներքև, վոր ծածկի աջ վտտի հաստ և մասլի սրունդը:

— Հըմ, խոսիր դե ալի,— դարձաւ սկսեց Շըպպանիկը, շալը գըլ-
խիցը վերցնելով և մի կողմ շարտելով:

Նա կանգնեց ուղիղ Սանամի դեմուդեմ և ձեռները դրավ կող-
քերին:

— Չե՞ս խոսելու, հի՞նչ կա, լարար, աչքունդ փայլիզվան պես կախեա քիցյալ, ալի եշիդ հով ամ կադ ասալ:

— Թողնում եմ, վոր խոսեմ, կրակ բռնածի պես ներս ես մտել թե չե, ել լեզուդ բռնը չի մտնում: Կարկուտի պես հենց թափում ես հա,—պատասխանեց, վերջապես, Սանամը, տեղից բարձրանալով:— Ախար մարդ ես, մարդու աղջիկ, չեկել ես, քաղաքավարի նստիր ու հետո լեզվիդ ղու տուր ելի:

— Չամ լալանալու, լալաբանդ իլիլու քի: Աստոծ մարդիս լիզու ա տվալ, վոր խոսի ալի: Չոփուռանց Նունիզը չամ քի, վոր նստամ—քիթիվ անըմ:

— Հերիք ե, նստիր ու պատմիր, տեսնեմ ի՞նչ խաբար ես բերել, աղջիկ ես, թե՞ տղա:

— Հալա մին լլավ զակուսկա շինի, քի մին քեֆս պլացվի, փորս վեց-վեց ա անամ:

Շըպպանիկն չուր փորին խփեց յերկու ձեռներով, ցուլց տալու համար, թե հերավի փորը դատարկ ե:

— Ուֆ, փորդ տրաքի, այ Շըպպանիկ, վո՞չ կշտանաս:

— Վալլահ, լլուցլունչում ամ, լլուցլունչում, ալի հանց ղուռղուռում ե. «տուր, տուր, տուր»: Փոր չի քի, բաշի բալա չա գլխիս ալի: Անտեր մնա նա, հալլա:

Սանամը գնաց մյուս սենյակը Շըպպանիկի համար «զակուսկա» պատրաստելու:

Շըպպանիկն յերգելով և «չըթմա» խփելով հետեց նրան:

II

Մոտ քառասուն տարեկան կին եր Շըպպանիկը թուխ դեմքով, մեծ քերանով, լայն ծնոտով, ուղղագիծ քթով և խորամանկ աչքերով: Շաբաթը մեկ անգամ նա ձեռներն ու գլուխը հինալով ներկում եր:

Շամախու կանանց սովորութիւնն հակառակ, նա միշտ, ամառ թե ձմեռ, շրջում եր առանց չարշավի, մի հոսարակ կիսամաշ բրդե շալով, վորի տակից անկանոն կերպով միշտ սփռված ելին ուսերի վրա նրա վոչ աչքան յերկուցն մազերը: Յուր արտաքին տեսքով նա նմանվում եր թափառական գնչուհու: Նրա անունը քաղաքում կնքել ելին «ղաւրաչի Շըպպանիկ»: Սակայն «ղաւրաչի» մականունը նա ստացել եր վոչ աչքան չուր արտաքին տեսքի, վորքան բնավորութիւնն համար:

Շըպպանիկն չուր ամուսնու և յերկու զավակների հետ ապրում եր քաղաքի հետ ընկած փողոցներից մեկում, մի աղքատիկ տան մեջ,

վոր բազկացած եր ընդամենը մի խզճուկ սենյակից, փոքրիկ խոհանոցից և հավաքնից: Նրա ամուսինը — նիհար, կարճահասակ, նեղ ճակատով, ուռած ու կապտած թշերով, կարմրած և պղզված աչքերով — զուռնաչի Տատունը արբշիռ մեկն էր: Նա հարբում եր առավոտները, հարբում կեսօրներին, հարբում եր գիշերները, մի խոսքով. «վախտ րեւխտ» նրա համար միևնույնն էր, միայն թե փող ունենար: Վորտեղ վորկորչեր Տատունը — կարող էլիր այս կամ այն գինետանը գրտնել: Բսան տարեկան հասակից նա գինետանն էր անցկացրել չուր կյանքը և աչտեղ եր գլխավորապես զուռնաչություն անում: Շատ քիչ եր պատահում, վոր նրան հարսանիքատուն կամ մի ուրիշ զվարճատեղ տանելին, վորովհետև նրա ձեռները կարողություն չուներին զուռնան բերանում ուղիղ պահելու: Յեւ ալք վոչ այն պատճառով, վոր նա միշտ հարբած եր լինում, ալլ առհասարակ, արթուն ժամանակն էլ մի կտրգին ածող չէր: Սակայն ինքը Տատունն էլ ալք մասին շատ չէր հոգում, չերեք չէր աշխատում, վոր մեկը իրան հրավիբի հարսանիք: Նրա համար միևնույնն էր ուր վոր փչեր զուռնան, միայն թե «փչեր» և մեկ էլ վոր մի քանի շահիբ-բիստի ստանար արաղի ու գինու համար: Նա միշտ զուռնան գրպանում ուներ, վորպես-զի հարկավոր լեղած ժամանակ էլ նեղություն չքաշի տուն վաղելու: — Տատուն ապեր, մին փիլի, — բռնում էին նրան փողոցի ջահիլները:

— Բաշ չուստա, — պատասխանում եր նա և չերկայն ու չուղաթաթախ արխալուղի գրպանից դուրս հանում դուղուկը:

Նա փառավոր կերպով ծալապատիկ նստում եր փողոցի մեջտեղում, չմուշկները հանում, առջևը դնում: Հետո գլխի ահալին փափախն ուղղում եր, ծռում եր այս կողմ այն կողմ, վոր, եհ, բան է, զուռնան փչելու ժամանակ, չընկնի ու չխանդարի: Այնուհետև ծփանը գրտնում եր գուգուկի ծալրին, պինդ պնդաճնում ու սկսում: Բայց վայ այն սկսելուն: Մինչև զուռնան դրստելը, մինչև բերանը դնելը, մինչև մատերով զուռնաչի ծակերը գտնելը, անհամբեր ջահիլները նրա գլխին մի քանի փամփեր էլին տալիս:

Վերջոպես, Տատունը մի կերպ բոլորը պատրաստեց, և ահա նրա հոնքերը վեր քաշվեցին, ճակատը ծալերով ծածկվեցին, աչքերը չըռվեցին ու կարմրեցին, թշերն ուռան, կապտեցին, հը՛ր, սկսվեց մշտական «Մհարի» լեղանակը: Բայց, ալաղ, մեկ էլ տեսար, վոր նրա վըղակոթին «գըլակ» մի բուռնցք հասավ, և զուռնան փափախի հետ միասին թռավ փողոցի մեջ տեղը:

— Այ, հլմիշ, անամոթ, անմեռուն, ալի հի՛նչ ևս մահրաքաղ

սարքալ, վեր կաց, տուն կորի, — բղավում և Շըպպանիկը և, չուր ամուսնու կռնից բռնելով, շարտում մի կողմ, ինչպես մի կեղտոտ լաթ:

— Ալի, ալի, ալի, ա կնիկ, չանի, չանի... տեր մեղա, հախ միան, տեր... չանի հինչ մի անում, աչ ոձի ճուտ, չես թողնելու, վոր քլասիրութչունա տնեմ, — չերկյուղածութչամբ փնթփնթում և Տատունը, փափախը թափ տալով:

Բայց Շըպպանիկը չի թողնում նրան չերկար խոսելու: Նա մի ձեռով բռնում և ամուսնու չուխալի փեշերից, իսկ մյուս ձեռում դուռնան բռնած, նրա գլխին տալով, քաշում և ուղիղ մինչև տուն:

Այստեղ սկսվում և մի ուրիշ տեսարան:

Շըպպանիկը սեղմում և Տատունին սենյակի մի անկյունում և, փափախը սեղմելով բերանին, կարկտի պես թափում և նրա գլխին հարված հարվածի չետկից: Փոքրիկ մարդն ուղում և գոռալ, ոգնութչան կանչել, բայց չի կարողանում, վորովհետև նրա բերանը փափախով սեղմված է: Նա ուժ է անում աղատվելու կնոջ ճանկերից, դարձյալ չի կարողանում: Շարահատչալ մի կերպ ձեռքն է առնում Շըպպանիկի մաղերը: Ամբողջ մարմնով նա կախ է ընկնում նրանց վրա և խեղդված ձայնով, շնչասպառ ասում է. «աթանց, աթանց, հա, լոսոլի, սիրտս երվեց»:

— Բրնխ տուր, — գոռում և Շըպպանիկը, գլուխը թափահարելով և վրտներով աքացի տալով Տատունի փորին:

— Դու բրախ տուր, չես ալ բրախ տամ, — պատասխանում և Տատունը, ավելի պինդ քաշելով կնոջ մաղերը:

Յեվ այսպես շարունակվում է, մինչև վոր չերկուսն ել հողնում են և իրարու աղատում: Յերբ Շըպպանիկին հարցնում ելին, թե ինչու չես առդչափ անգութ վարվում չուր ամուսնու հետ, վորին պիտի իսկապես ուրիշ կանանց պես հպատակվի — նա պատասխանում էր.

— Հինչ անամ, ա քյուր, ա մեր, գիշեր ցերեկ լալըմ տ, աշխատածը գինի-արաղի չա տամ, տուն մին կոպեկ չի պերըմ: Յես ալ բախտավար ախր կնիկ ամ, տուն ու տեղ ունամ, իմ աշխատածս ալ հերիք չի անըմ:

Նշանավոր դեր էր կատարում Շըպպանիկը: Քաղաքում, նա հայտնի չեր ամենքին, ծերունիներից սկսած մինչև ամենփոքր մանուկները: Առանց հարցնելու, համարձակորեն նա մտնում էր ամեն տուն, ամեն ընտանիք և, պիտի ասած, վոչ վոք, ծանոթ թե անծանոթ, նրան չեր արգելում:

Շըպպանիկը, ինչպես քաղաքի մեջ ամենահայտնի «զարանգիդի» (միջնորդ), ամենքին հարկավոր էր, և ամենքը վոր և է բանով կարե-

վորութիւնն ունեւին զեպի նա: Մեկը տղա ունի նշանելու, մյուսը հասած աղջիկ, փեսացու չե վսրոնում, չերրորդը հարսանիք ունի, կանացք պիտի հրավիրի, չորրորդը կնուռք ու հինգերորդը մեռելատեղի ե: Թե ուրախութեան, թե տխրութեան դեպքում Շրպպանիկը հարկավոր մարդ ե: Ինքը Շրպպանիկը ամենից ավելի չեղ զգում չուր կարեւորութիւնը և միշտ աշխատում եր, վոր ուրիշներին ևս հասկացնե չուր արժանավորութիւնը: Նա ամենքի հետ անխտիր վարվում եր համարձակ, վոչ վոքից չեր վախենում, չեր ամաչում, վոչ վոքի առաջ չեր լռում: Իսկ չեթե պատահում եր, վոր վախենում եր, ամաչում եր կամ լռում եր, խորամանկութեամբ եր անում աչգ և անշուշտ, վոչ առանց նպատակի:

Բայց շատերն ելին վախենում Շրպպանիկից, մանավանդ այնպիսիները, վորոնք տանը չափահաս որիորդներ ունեւին: Այդպիսիների աչքում Շրպպանիկը մի տեսակ չաստվածուհի չեր, վորի գերբնական ուժը կարող եր չուր կամքի համեմատ ստորացնել կամ բարձրացնել քաղաքի աչքում աղջկերանց անունը: Յեթե Շրպպանիկն ուզում եր մի աղջկա վարկը վաչը գցել քաղաքում, նրա համար շատ դժվար չեր աչգ անելու, թեկուզ աղջիկը լիներ անմեղ, անաբատ:

«Յեա նրան մին մատ արախութունան ամ ճընանչըմ կապը կըտրածն ա, վոր թալը չկա: Մախկդի պես ա կըփչըմ մեծերի չեքեսին: Իրեւսի մեռունը գեղաները լստալ ան»:

Ահա ինչ խոսքերով եր Շրպպանիկը մրոտում խեղճ որիորդին: Դեհ, որիորդի քարը ծովի հատակը գլորվեց, ել վոչ մի տղա չի վստահանալ նրան մոտենալու, և որիորդը ստիպված ե չերկար տարիներ ապրել չուր ծնողների մոտ կուսական կյանքով: Սրա հակառակ, չեթե Շրպպանիկն ուզում եր մեկի վարկը բարձրացնել — թեկուզ աղջիկը լիներ հաշմանգամ, տգեղ — նա աչքքան կդովիր նրա գեղեցկութիւնը, «շիրուշնորքը», «բոյուբուստթը», մինչև վոր զոռով կբանար նրա համար բախտի դուռը: Մի խոսքով, Շրպպանիկի լեզուն մեծ նշանակութիւն ունեւր քաղաքի աղջկերանց համար: Ահա ինչու նրան աչքքան պատվում ելին ընտանիքներում: Ահա ինչու, չերբ նա մեկի դռներից ներս եր մտնում, տանտիկինը նախ և առաջ անհրաժեշտ եր համարում նախազգուշացնել չուր աղջկերանց, վոր դրանք համեստ և զգուշ վարվեն Շրպպանիկի ներկայութեամբ:

Սանամը նրա համար պատրաստեց ձվածեղ և ինքն ել նստեց նրա հետ միասին ուտելու:

— Տղադ հի՞նչ ա գիրիմ, — հարցրեց Շրպպանիկը, ձվածեղի պատահներն ագահութեամբ կլանելով:

— Սաղ սալամաթ ե, ջանիդ դուա կանի:

— Հի՛սփ ա դալու, նրան պսականք, ա չես նրա չինար բոլին մեռնամ:

— Պիտի գրող լինի, վոր գա, հի:

— Հինչի՞ չես գիրիմ:

— Ի՛նչ չերեսով դրեմ, սաղ քաղաքը չորացել ե, մի աղջիկ չի ճարվում չերեսիս համար:

Սանամը հետաքրքրությամբ նայեց Շըպպանիկի չերեսին, մի բավարար լուրի սպասելով նրանից:

— Զի չորացալ.— պատասխանեց Շըպպանիկը, հոնքերը վեր քաշելով և կրկին ցած գցելով:

— Ե՛հ — արտասանեց Սանամը, հառաչելով:

Շըպպանիկը մի քանի պատառներ ևս կլանելով, անձեռնոցիկով սրբեց բերանը ու հետ քաշվեց:

— Շնորհակալութուն:

— Անուշ լինի:

— Դեհ, շուտ արա, սլաֆրան հավաքիր, կողքիս նստիր, պան ունամ քեզ հետ,— ասաց Շըպպանիկը հրամայական չեղանակով:

Սանամը իսկույն հավաքեց սեղանը, տարավ մլուս սենյակ և վերադարձավ ու նստեց Շըպպանիկի մոտ:

III

— Ասա տեսնեմ ի՛նչ բան ե, խեր լինի,— ասաց Սանամը, հետաքրքրությամբ նայելով Շըպպանիկի չերեսին:

Շըպպանիկը մաղբրը չերեսից հեռացրեց, գլուխը քիչ թեքեց դեպի ուսը և, ուղիղ Սանամի չերեսին ժպտալով, ասաց.

— Աղջիկը ճարվալ ա:

— Դորթ ես ասում, Շըպպանիկ, ռ՛վ ե, ռ՛ւմ աղջիկն ե,— հարցրեց Սանամը, ուրախութունից ուսերը վեր քաշելով և չուր հաստ իրանը ծռելով դեպի Շըպպանիկը:

— Դուռնիս գողալին, խաների-բեգերի թոռնը, սաղ քաղաքի աչքը, ջին-ջավահիր, մարալի պես գոկչակ, խանըմ խաթուն, ռ՛վդար...

— Ո՞վ ե, ռ՛վ ե:

— Մի խեղճ, անըմով, պատվով հորումոր աղջիկ: Մի թառլան զուշ, մին գլողալ, քիիի... ալ հինչ ասամ:

— Սիրտդ ճաքի, տրաքի, ալ Շըպպանիկ: Ո՞վ ե, ումի՞ աղջիկն ե. անուն չունի:

— Բլուլբլուլ, բլուլբլուլ, բլուլբլուլ...

— Ուֆ, կրակ բռնես, հերիք ե, — վերջապես, համբերութիւնից դուրս դալով, բղավեց Սանամը, աջ ձեռը զարկելով Շըպպանիկի ուսին:

— Ասամմ, — հարցրեց Շըպպանիկը, խորամանկորեն նայելով Սանամի լերեսին:

— Ասմ, ասմ:

— Հի՞նչ կտաս:

— Ինչ-վոր խոստացել եմ:

— Ալի նմ:

— Ո՞վ:

— Հայալու, արքսուլու, Գլուխալի աղջիկ...

— Սուսանը, — ընդհատեց Սանամը:

— Հա, հանց Սուսանը:

Հանաքներդ մի կողմ դիր, ողորմի հորդ, հանաքի ժամանակ չի, Շըպպանիկ, ասա, տեսնեմ, ո՞վ ե գոված աղջիկդ:

— Հանաք չամ անըմ, մինիկ տղիդ արեւ վկա:

— Խելքդ տեղը չի, Շըպպանիկ:

— Քալաֆիդ ճոնդը կորցուրալ ես, պան ամ ասըմ, դու. հանց եղդ ես քշըմ: Իմ խելքս զլխմըս ա: Ձիմ մացա, չիմին հարց ու փորձ արի, սուտ, սուտ, լափ սուտ:

— Սուտս վճրն ե, սաղ քաղաքն ե խոսում:

— Բարբրադ իլի միր քաղաքը, հինչպես քի հանց բարբրադ ա իլիմ: Հախ միալն տերը քանդի դշուշմանի տունը, վոր խեղճ աղջկան տնըմը նահախտան կոտորալ ա:

— Ո՞վ ե դուշմանը:

— Կուժ ծախողի տղան, ան մին վիժա բոլի տեր մեռածը: Սեյրանը, Սեյրանը, Սեյրանը: Ան դալուն տափին կպած Սեյրանն ա նահախ տեղան չով արալ սաղ քաղաքում, քիի «Բարխուղարի աղջիկը իմ հարսնացուս ա, աթանց ա, անանց ա, ֆլան ա, բեշմաքան ա»:

— Նահախս վճրն ե, դորդ ե: Սուսանը Սեյրանի հարսնացուն ե: Ասում են մի մատ լերիխերք են լեղել, վոր ծնողները նշանել են:

— Դե, հենց պանն ալ տալ ալի: Հենց Սեյրանի ցափն ալ տալա, քիի առաջ բեշիկքչարթմանա ան արալ, հիմի չան տաամ, պրծալ քինաց:

— Պատճառն ի՞նչ ե, վոր հիմա չեն տալիս:

— Հի՞նչ պիտի իլի: Սարաբը նալ ա, քի Հալրապետի տղան, ան մեռած Սեյրանը, հիմիկվանան, վոր մին վիժա բոլ ունի, անքան շառ-

լատանացալ ա քի, վոր—մեռալ ամ արարիչ աստու բոյին—յա ինքի մինին կապանի, Սիբիր կիքինա, յա ալ չուրան կապանան: Բարխուդարը, Գյուլնազը գիժ ան, քի նրա պես հելվարին աղջիկ տաան: Ոխտը քաչալ աղջիկս իլի, մինի մազը նրան չամ տալ չես, դու հի՞նչ ես խոսըմ, չամ մանըմ իսկի:

— Ձեմ իմանում, ելի խելքս բան չի կտրում:

— Հի՞նչ խելքի պան ա, շատ պարզ, շատ աշկարա նաղլ ա: Մուկուկ որը քիշերվան կեսին մտալ ա շիրաչիխանա, անքան կոնծալ ա, վոր ճանբալակուկուշ ա դառալ: Յետով ընկերների հետնան կոխլ ա արալ, գլխ-մլոխը չախչախ ան արալ, հիմի տունումը ընկած տընքալընքըմ ա:

— Խեղճ աղա, խեղճ հեր ու մեր:

— Խեղճ ոձ կծի խեղճ աղին:

— Այ ախչի, այ ախչի, ինչպես ես զմիշ անում, վոր հոր ու մոր մինիկ տղի համար անեծք ես անում:

— Հըմ, գուլլախորով իլի նա, վոր խեղճ աղջկան անըմը սաղ քաղաքի բերանն ա քիցալ: Նա չալ հի՞նչ աղջկան, վոր ասորվան լյուսի պես լյուս ա, չերկնքի հրեշտակի պես սուրբ ա:

— Ախար Հալապետի տղան թի՛նչ միտք ունի, վոր նահախ տեղից Բարխուդարի աղջկան խաչտառակ ե անում: Ձե, Շըպպանիկ, մեջ տեղ ելի մին փուտ կա:

— Աղջիկն իսկի փուտ չունի: Ասըմ-ես, Սեյրանը հի՞նչ միտք ունի. միտքը նա չա իլալ, քի վոր անմեղ աղջկան անըմը չով անի քաղաքում, հինչ ա, քի մին դանա տղա Չուրխաթ չանի նրան ուզիլ, վոր վերջը չուրան վիզին ֆնա: Իմացմր: Առա ես, հիմի անկոջիդ քամակը թե տեսնես, Սուսանին ալ կտեսնես, առա ես, առ ել...:

Վերջին խոսքերն արտասանելու ժամանակ Շըպպանիկը չերկու ձեռներն մատերը չուց ե ճանգ արալ դեպի դուրս, Սեյրանին վերաբերելով:

— Հիմա թի՛նչ անենք, Շըպպանիկ, սուտ թե դորթ, ես ձայնը դուրս ե չեկել են մարդու աղջկա վրա: Յես ել, դրուստն ասեմ, իսկի ինքս չեմ ել հավատում, վոր են հոր ու մոր աղջիկը վատ-վատ բաներ անի, ինչու վոր նրան զնդանի մեջ են պահում: Տանից չեն դուրս բերում, վոր աստուծո լույսն ել ե տեսնի, ինչպես կարող եր Սեյրանի չերեսը տեսնել: Դուրուստն ասեմ, Շըպպանիկ, դորթ ե, չես նրանից ձեռն վերցրել, բայց սիրտս իսկի չի կտրվում: Գիշեր ու ցերեկ նրա պատկերը հենց աչքիս առաջ կանգնած ե: Ախար են բոյ ու բուսաթը, են շիր ու շնորքը, են գեղեցկությունը վմր աղջիկն ունի:

— Իսկի հո՞վ, իսկի հո՞վ, մին դանա չա, թալը չկա: Յես ալ հենց անդուր ամ ասըմ քի ցեքա պաց չ՝ոդնանք ալի: Ախար, տաի տեսնամ, անանց աղջիկ հի՞նչ տեղան ես կարող քիթանալ, հո՞վ ունի:— Իսկի հո՞վ, իսկի հո՞վ: Սաղ քաղաքի աղջկերանց ճընանչըմամ, մին-մին դընդըղալամ, ուզում ես չիմին մին-մին մատներովս համբըրամ: Առա, դա քեզ Շավալիի թոռը—թամբալ, ալբեժառ. դա քեզ Յեզյանց Խանըմի աղջիկը—մեջքան դաթված, կարճ, վոր հենց իմանաս հաջուշ—մաջուշներտն իլի: Հաջուշ—մաջուշը նա չա, վոր աշխարհքի վերչըմը պիտի կչա: Հա, դա քեզ Ագրիփաչանց Մամադի աղջիկ Սապանը—հի՞նչ ա, իսկի չերեսին թիքիլի ալ չի: Ալ հո՞ր մինը ասամ,— առա, դա քեզ...

Շըպպանիկն չերկար ժամանակ մի առ մի թվեց Շամախու չափահաս աղջկերանց անունները առանձին-առանձին: Բանից դուրս չեկտով, վոր միակ բացառութիւնը կազմում եր Սուսանը:

— Ալի, ալի Սուսանը, ալի Գյուլնաղի աղջիկը: Քաղաքը չորացալ ա, նրանից սլա ուրիշը չկա ու չկա: Ա' կնիկ, ցեքա բաց մի թողնիլ,—կնքեց Շըպպանիկը չուր ատենաբանութիւնը, մի սպառնողական հալացք ձգելով Սանամի չերեսին:

Այդ հալացքը նշանակում եր, թե չեթե վերջինը հրաժարվի Սուսանին չուր վորդու համար ուզելուց, հետո շատ ու շատ կափսոսի:

Սանամը գլուխը թեքեց կրծքին և ընկավ մտածողութեան մեջ: Շըպպանիկը լոնց և սկսեց աչքերի տակով խորամանկութեամբ նայել նրա չերեսին, կարծես, կամենալով թափանցել նրա միտքը: Մի քանի րոպե շարունակվեց այդ լուսթյունը: Վերջապես, Սանամը գլուխը բարձրացրեց, ծոնց դեպի աջ ուսը, ձեռները իրարու վրա դարսեց և դրավ կրծքին:

— Ձե, Շըպպանիկ, ինչքան Ֆիքր եմ անում, ելի տեսնում եմ, վոր բանը գլուխ չեկող չի,—ասաց նա խորհրդավոր կերպով:

— Սաբմըրը,—հարցրեց Շըպպանիկն չուր դեմքի վրա խաղացնելով մի կեղծ դարմացական ժպիտ:

— Յես ինքս, ինչպես ասացի, չեմ հավատում, վոր Գյուլնաղի աղջիկն ես բաներն արած լինի Սեյրանի հետ: Բայց...

— Հը՛ւ՛:

— Դժվար ե աղջկա կոտրված անունը սաղացնել: Հախ-նահախ՝ Սուսանը ընկել ե քաղաքի աչքում, չես թե վոր ուզեմ նրան, խալիսը աչքերս թքով կհանի: Դու գիտես, վոր աղգահաններ, բարեկամներ կան: Ձե, Շըպպանիկ, չեմ կարող չես ես վարսս նրանց ձեռից ազատել,—վերջացրեց Սանամը, աջ ձեռով առաջ քաշելով գիսակներից մինը և ցույց տալով Շըպպանիկին:

— Յեա ալ կոստամ—հինչ ես ասիլլու։ Ղեկիդդ կտրվի, ազգականներ, բարեկամներ, Քլան-բեշմաքան։ Քլանդուկ-Մանանը չի բարեկամիդ մինը։ Հըմ, չես նրա բարեկամ աչքը հանամ, հալլա։ Մի ինջի-միջ իլիլ ինձանա, Մանամ խանըմ, վոր բարեկամիդ աթմանց ուշունց ամ տամ, շունքի չես իմանըմ ամ—հով ա բարեկամդ, հով ա հարակամդ։ Քլանդուկ Մանան, Թուխիկ-Մուխիկ, Քլան-Ֆատան, դրանք չիմ, ա կնիկ, գլուշմաններդ ան, գլուշմաններդ։ Տակադ բիշտի ան տամ, հալ մի ուղիլ Գուլնադի աղջկան, հալ բիարուռ կիլիս, աթմանց, հալ անանց։ Ականջներդ լնով բացիր, լնով լիսի, նրանք չիմ քու փխիդ ան ուղոււմ, իրանց գլխն ան քորըմ։ Թուխիկը քեզ բիթիմ ա, վոր չուգես Սուսանին, ամա ինքը տական ջահթա անըմ, քի լուրան ադի հետի ուղի։ Հըմ, հի՛նչ կա, դարմանձում ես։ Բնաս, բնաս, աթմանց ան քու բարեկամներդ։

— Բայց ինչպե՞ս կկապեմ նրանց բերանը։

— Դա Շըպպանիկի վրա քիցիր, չիմ վիզիս դիր, չիմ։ Տես չես հինչպիս կկապեմ լա Քլանդուկ-Մանանի, լա Թուխիկ-Մուխիկի, սաղ քաղաքի բերանը։ Զիմի, չիմի ուխը կցեխամ, զու բանիդ կաց։ Ինձ ճընանչըմ ես քի, փառք ասուռ, Շամախին մին ղազան ա, չես ալ շի-րեփ, խառնի հա խառնի։

— Շըպպանիկ, չես շատ եմ վախենում, վոր մեր խտակ անունը...

— Հլունչքու ասոր Շըպպանիկի ցեքով փիս բան չի չեկալ, ումուդ ամ, վոր որաս դանն ալ չի կչալ։ Սաչ ամ ազարթմիշ արալ աթմանց բաներըմ, գլու ինձ մին ցեքով ես փռնալ հի՛նչ ա։ Ալ չաթուն մի չեր-կարացնիլ, չես հինչ քի ասըմամ, ինձի լիսի, չետով թող մեղքը իմ վիզիս փա։

— Շըպպանիկ, բա Ռուստամը։

— Հը՞մ։

— Կրակի կտոր ե, վոր իմանա, ո՞տ, թիքա-թիքա կանի մեղ։

— Ալ չես նրա կրակի կտոր բուլին մեռնամ, հալլա։ Ախլի, ախլի, նա հի՛նչ ա մանըմ ոխտը ստրի չիտըմը, քի խտեղ Սեյրանի պես հեշ-վարաները հի՛նչ ան խոսըմ լուրան հարսնացվի վրա։ Մին ալ, քի ախըը հանց ասըմանք, քի սաղ Քքաղաքն ա իմանըմ, սաղ քաղաքն ա իմանըմ։ Հմիլ ա ասըմ։ Յես ասքան շուռ ամ կչամ, իսկի մին տեղ չի լիսեցի Սուսանի անըմը։ Մինիկ Քլանդուկ-Մանանը, Թուխիկ-Մուխիկներն ան խոսըմ, մին ալ մին քանի աղղիդյառները, ալ հմիլ ա խոսըմ։

— Յես ինչ գիտեմ, վոչինչ չեմ հասկանում, չես թափաքալի կնիկ

եմ: Շըպպանիկ, դու քո աստվածդ, իմացիր, վոր հոգի ունես անեղ դատաստանի առաջ տալու:

— Թող Շըպպանիկի հոգին քառասուն հազար սատանաների փաշ իլի, անլամ նա քեզ մուխանաթություն ա ուզում անի:

— Թող լինի:

— Հառուր հզար սատանի պուխ կըճըճեխամ, Համ Թողնիլ, քի ձեր մատին փուշ մտնի: Դե, վերկաց մին քիչ մը բարա բեր, վոր բերանս քաղցրացունամ, չետով քինամ, բանը վերջացունամ:

— Ի՞նչ ես վռպում, մի քիչ համբերի, վոր Ֆիքը անեմ:

— Այ Ֆիքը անիլ տեղը չի, քանի տաք-տաք ա, բանը վերջացրու քինա: Յես երեկ ասոր Բարխուդարանց տունումն ամ իլալ, ղորթը ասամ, իսկի ինքը, Բարխուդարը, ռազի չեւ իլիմ, վոր տղիդ աղջիկ տա: Աղաչանք, պաղատանք արի, ախրըր մին Թահար խոսկ առի...

— Ի՞նչ, աղաչել-պաղատելս վժիճն ե: Ասում ե «փուստանիկին դրին խալիլ վրա, թող իլալ»: Հիմա չես Բարխուդարի աղջիկն ուղեցի, մնաց նրա նազ անելը, աչ երի հն:

— Երի հա չի, Սանամ խանմ, մի նեղանալ, դե Բարխուդարն ալ մարդ ա, ախրը չի ասիլու, քի Վ՛ը, առն, վիզովդ ամ քիցիմ աղջկանս, տնր: Մին քիչ նազը-բաղ կանի ալի, բաս հի՛նչ: Ամա դու արխալին իլի: չես բանը քութահ ամ արալ: Դու հանց ասոր նշանի մատանիքը հազիր արա, մին ալ տղիդ գիր գրի, վոր շուտով կլա, ալ չչետանա: Գիրիւր եե, վոր չչետանա, ասիւր, «Երեսդ» թըջած ա, չեկ իստեղ վեր արա: Ամա լալ կանես, Սանամ խանըմ, վոր նա հինչ ա, ան դահրմարի անըմը, վոր թեկով քինչամ ա: Նա ալի, վոր աս տարի ան շինալ:

— Տեպե՛շ:

— Հա, հա, ան սատանի քյարխանան, վոր տալմ ան մին սահաթըմ համ խաբար ա տանըմ, համ բերըմ: Դե լսո՛ւ, ինչպես ուզում ես, անանց արա: Ամա հանց ասոր վերջացրու բանը հա: Դեհ, ախրըր ասացի, վեր կաց մը բարա բեր, վոր բողազս քաղցրացունամ:

— Ո՛ւֆ, բողազդ վորդնը գնի:

Սանամը բարձրացավ տեղից, գնաց մյուս սենյակ: Մի քանի բողբուջի հետո նա վերադարձավ մատուցարանը ձեռին, վորի վրա փոքրիկ ափսեներով դրած ելին չերկու տեսակ մուրաբաներ և մի բաժակ ողի:

— Աստոծ շաննո՛ր անի, գշուշմանի աշքը քոռանա,— բացականչեց Շըպպանիկը, դատարկելով ողիի բաժակը և իրարու հետից մի քանի գդալ մուրաբա կուլ տալով:

— Յես ինչ գիտեմ, տա տատված, վոր վերջներս խեր լինի,—
արտասանեց Սանամը, հառաչելով:

— Դեհ, հալալիդա, ֆեսս բարով: Յես վաղ տամ Դյուլնազի
գլխին, վոր նրա հետնան ալ բանը քլութահ անամ: Դյուլ, հինչպես
ասացի, Սանամ խանըմ, մին կողոր գիր գրիր, ան ստանի թելով խըր-
կիր աղիդ, վոր ալբա ալ լըղի ընկնի: Մնաս բարով:

Շըպպանիկը շալը ձգեց գլխին և դուրս չեկավ:

Սանամը մուրաբաները տարավ մյուս սենյակը, հետո չեկավ
թախտի վրա նրտեց և մտածողութան մեջ ընկավ:

IV

Այդ որից ուղիղ հինգ շաբաթ եր անցել: Աշնանային մի ուշ
չերեկոյ չեր: Հոկտեմբերի հորդառատ անձրևներից կիսախարխուլ Շա-
մախուռ լացն, բայց կեղտոտ փողոցներում գոյացել էին անտանելի
ցեխ և բազմաթիվ մանր ճահիճներ: Յեղանակը բավական ցուրտ եր:
Թանձր մառախուղը, հասնելով մինչև չերկրի մակերևույթը, քաղաքը
պատել եր անթափանցելի խավարով: Ամեն ինչ խաղաղ եր, ընակիչ-
ները արգեն վաղուց քնած էին: Փողոցներում տիրում եր լուռություն,
վոր, չերքեմն ընդհատվում եր գիշերային պահապանների քնաթաթախ
ձայներով: Այդ ժամանակ քաղաքի կենտրոնում գտնվող գինեհաններից
մեկում հավաքված եր չերիտասարդական մի խումբ: Սրանք, թվով
մինչև ութ հոգի, մի կիսամաշ և՛ կեղտոտ սեղանի շուրջը նստած
«քեֆ ելին անում», այսինքն արաղ ու գինի էին խմում և խորոված
ուտում: Տիրում եր մի այնպիսի խառնաշփոթ և խլացուցիչ աղմուկ,
վոր, կարծես, այստեղ մի ահագին բազմություն կար: Մեկը, բուխա-
րու գդակը բերանին պահած, չերդում եր ինչ-վոր պարսկական չերդ:
Մյուսը չերկու ձեռներով խփում եր սեղանին և բերանով շվացնում,
իրրև թե չերգեցողի հետ ներդաշնակութուն պահելով: Յերբորդը
կարմրած դեմքով, վառված աչքերով, գինով լի բաժակը ձեռին,
վոտքի կանգնած, գոռում եր ինչքան ձայնում ուժ կուր, ինչ-վոր «կե-
նաց» առաջարկելով: Մի ուրիշը տաքացած վիճաբանում եր չուր մո-
տը նստած ընկերոջ հետ այնպիսի ձայնով, վոր, կարծես, խոսակիցը
կես վերստ հեռու լիներ:

Այս բոլոր խառնաշփոթ, անճոռնի և ալլանդակ ձայները միա-
նալով ծխախոտի և խորովածի թանձր ծխով և ըմպելիքների շոգով
տոգորված խոնավ մթնոլորտի մեջ, անախորժ աղդեցություն էին
անում մարդու վրա: Իսկ միջահասակ, հաստափոր, աչքերը ճարպ կո-
խած գինեվաճառը մի առանձին ղորություն եր տալիս այդ աղմուկին:

Կեղտոտ գոգնոցը փոքրին կապած, նա գինետան մի տնկյունում խորովածի շամփուրները պտտեցնում եր ճղվզող կրակի վրա և հաստ ու խալոտ ձաչնով անդադար գոռում. «փահ, փահ, ի՛նչ քլաբաբ ա, քեֆ արեք, մեռնեմ ձեզ պես ջահիլների դամազին, հափ-հափ, ադա, հուռում»։ Յեւ գինեկաճառի դորեկ ձաչնը սրընթաց անցնելով գինետան իամարած և առաստաղի տակով ճնշում եր մյուս ձաչները։

Այս ընդհանուր խառնաշփոթությանը չէր մասնակցում միայն մի չերիտասարդ։ Նա արմուկները սեղանի մի տնկյունին հենած, գլուխը ձեռների ափերի մեջ դրած, անշարժ նստած եր։ Գինետունը լուսավորվում եր առաստաղից քարշ արած մի կանթեղով, վոր ծածկված եր հարյուրավոր ճաճերով։ Կանթեղի դեղնագույն լույսը, հազիվ թափանցելով թանձր մթնոլորտը, չերիտասարդի կոների արանքով ընկել եր նրա նիհար և դեղնած դեմքի վրա։ Նա աչքերը սեղանին հառած՝ ինչ-վոր մտածողության մեջ եր։ Ընկերների ակմուկը, կարծես, նրա ականջներին չէր հասնում։

— Ադա, Յենգիբար, մի բաժակ դինի թափիր եդ նամարդի գըլխին, ինչու չե մոսփըմ, ես գիշեր մեր քեֆը նա հարամ արավ,— գոռաց բեղերը վոլորած մի չերիտասարդ, դառնալով դեպի մի ուրիշը։

— Բացվիր, ադա, Սեյրան, բացվիր բահարվա վարդի պես, իսկի ֆիքր մի անիլ, հորես նրանք կպան, մի քիչ կոնժիր, վոր սիրտդ պընդանա,— ասելով, դարձավ Յենգիբարը Սեյրանին և, բռնելով նրա գլխի մազերից, գլուխը վեր բարձրացրեց։

— Մի բաժակ գինի, մեծը, մեծը ածեցեք, տվեք Սեյրանին, չես, ինչպես թամադա, հրամայում եմ,— շարունակեց սրած բեղերով չերիտասարդը, ինքն ևս չուր բաժակը նորից լցնելով։

Բանի մի վաչրկչանում Սեյրանի առջև շարվեցին գինով լի մի քանի բաժակներ։ Սեյրանը մտիկ տվավ նրանց և գլուխը շուռ տվավ։

— Խմիր, ասում եմ, թե չե՝ գլխիդ ածել կտամ,— հրամայեց թամադան։

— Չեմ ուզում,— մըմնջաց Սեյրանը, բաժակը իրանից հեռու դնելով։

— Ինչո՞ւ։

— Միրաւ խառնում ե, — պատասխանեց նա թուլլ ձաչնով։

— Դատարկիր, ասում եմ, թե չե՝ ձեռքիցս չես պրծնիլ, հը՛մ։

Սեյրանը մի բաժակ դատարկեց։

— Աթանց, քամիր, բաժակդ ել թարս պարանֆր, աչ ջան։ Դա իմ կենացը, դե մի՛նն ել վերցրու, ասում եմ քեզ, կուժը գլխիդ չեկավ հա՛ա։

Սեյրանը լերկրորդ բաժակը դատարկեց:

— Հա, աթանց, ալ ղոչչաղ Սեյրան, տղամարդ ես, տղամարդ, հափ հափ, հուռում:

Սեյրանը, բաժակները զզվանքով մի կողմ դնելով, դարձալ զլուխը թեքեց կրծքին:

Նրա կարմրած աչքերի արագութեամբ խաղացող ընդերքից, ծոմովող շրթունքներից, կակաղող լեզվից չերևում էր, վոր զլուխը խիստ տաքացած է: Պակաս չեին հարբած և մլուաները: Բայց դրանք դեռ մեծ հաճութեամբ շարունակում էին բաժակները դատարկել, այն ինչ՝ Սեյրանը վերջին բաժակը խմեց այնպիսի տհաճութեամբ, չուր դեմքն այնպես թթվացրեց, վոր, կարծես, քինաքինա չեր խմում:

Աղմուկը քանի գնում այնքան դորեղանում էր: Ամենաչնչին սլառճառներից սկսվում էին տաք վիճաբանություններ: Թամադան անդադար կենացներ էր առաջարկում և, միևնույն ժամանակ, աշխատում էր հանգստացնել վիճաբանողներին: Բայց վոչ վոք ուշադրութուն չեր դարձնում նրա վրա, ամեն մեկը չուր ձայն էր լսում և չուր համար խոսում:

Գինետան դռները հանկարծ բացվեցին, և ներս մտավ մի բարձրահասակ չերիտասարդ, վոր բռնած էր աջ ձեռում մի չերկայն փայտ: Նա գլխին դրած էր ձմերուկաձև, կարմրագույն մորթիա գդակ, վորի ծայրերը հոսնում էին նրա փոքրիկ և խորամանկ աչքերին:

— Շուտ արեցեք, աղս, — ներս մտավ թե չե, գոչեց չերիտասարդը շնչասպառ ձայնով:

— Դուրս չեկան, — հարցրին գրեթե միարեւոյան բոլոր հանդիսականները:

— Հո հա, փետներդ վերցրեք, — պատասխանեց չերիտասարդը, ձեռի փայտը անհամբերութեամբ զարկելով գինետան հատակին:

Մի բոպե տիրեց լուռութուն: Ամենքը տարակուսութեամբ նայում էին իրարու չերսին:

Սեյրանն արագութեամբ վեր թռավ տեղից և, շուտ ու մուռ գալով, սրան ու նրան դիպչելով, դիմեց դեպի դռները: Լրաբեր չերիտասարդը վաղեց դռների առաջ, ձեռները աջ ու ձախ տարածեց և, կուրծքը դուրս ցցելով, կտրեց նրա ճանապարհը:

— Կանգնիր:

— Հեռու, — բացականչեց Սեյրանը, չերկու ձեռներով հրելով չերիտասարդի կրծքին:

— Մի վռագիր:

— Բաց թող:

— Համբերիր, միասին դուրս կգանք,—հակառակեց լրարբերը, չուր ուժեղ ձեռներով տեղն ու տեղը պահելով գինու զորութիւնն իջեցնելով Սեյրանին:

Սեյրանը շուռ չեկավ և մի հայացք ձգեց չուր ընկերակիցներէ վրա: Վոչ վոք չէր շարժուում չուր տեղից: Լրարբերը կրկին փափտով դարկեց հատակին և գոռաց.

— Շուտ արեք դե, թե չէ՝ տուն կհասնեն, հետո ել բանը բանից անց կկենա:

Անցան միքանի լուռ վայրկյաններ ևս: Վերջապես, թամաղի դեր կատարող չերիտասարդը բարձրացավ տեղից, վազեց գինետան մի անկուռնը, վերցրեց մի չերկայն փայտ և փափախը սեղմեց գլխին: Հետո նա կանգնեց գինետան մեջ տեղում և հանդիսավոր չեղանակով արտասանեց հետեւյալ խոսքերը.

— Տղերք, դուք—ձեր նամուսը, զոչչադ պահեցեք ձեզ, սրտներդ դալի նման: Վաչ են նամարդի գլխին, վորը չերես շուռ կտա նրանցից. ասում եմ, փախչողի թափան-թիրիքը կթափեմ... տեսնում եք, դրանով համ:

Այս ասելով, նա չուխալի փեշը չետ ծալեց, մեջքը շուռ տվավ չերիտասարդներին և ցույց տվավ գոտիից քարշ արած դաշուհնը:

— Դեհ, վերցրեք փետներդ, հալդա,—ավարտեց նա չուր խոսքը և գոռալով դուրս վազեց:

Բարձրացավ մի խառնաշփոթ աղմուկ: Ամենքը մի-մի փայտ խլեցին: Միքանի բոպելում խումբը, շուռ ու մուռ գալով, իրարու դիպչելով, դուրս թափվեց: Դինետունը դատարկվեց:

Սեյրանն ամենից առաջ եր դուրս չեկել:

V

Մառախուղն ավելի թանձրացել էր: Փողոցների անկյուններում ցցված լապտերների լույսը, հազիվ թափանցելով գիշերային խավարը, սփռվել էր ցեխոտ ճահիճների վրա և փայլեցնում էր նրանց կեղտոտ մակերևույթը:

Գաղաքի կենտրոնում գտնվող «հին ժամ» անվանված չեկեղեցուց քիչ հեռու, փողոցի ծալքում չերեցավ մի զորեղ լույս, լսվեցին զուռնալի և նաղարալի (թմբուկ) խլացուցիչ ձայներ: Այս լույսի և չերաժշտութեան հետ միասին դիմում էր առաջ կանաճ, աղամարդկանց և մանուկների մի բավական մեծ խումբ: Ժամանակ-ժամանակ զուռնալի ձայնը խլանում էր բարձրաձայն կրկնվող ուրախ բացա-

կանչուեցանք, շնորհակալ եմ քեզ համար, որ ինչպէս ասացիր, ինչպէս ասացիր, ինչպէս ասացիր:

Սուսանի հարսանիքի հանգիստն էր: Նորահարսը վտարեց իր փաթեթը, որ մետաքսեայ խաչատաճաճով չարշովի մեջ: Նրա լերեսն ամբողջապէս ծածկված էր թանձր քողով, տեղական սովորութեան համեմատ: Մոտ քսան ու հինգ տարեկան մի միջահասակ լերեւորտաբոց գալիս էր նրա ձախ կողմով: Նա հագնված էր վաղ լեւորտաբոցի և վաղ ասիական լեւորտաբոցի կամ ասիական ասիական, նրա իրանն ասիական լերեւորտաբոցի, իսկ վտարներն ու գլուխը լեւորտաբոցի: Մոխրագույն ատլասայա նորահարսը արթնալու, վտակա բարակ գոտի, նուրբ սեպուղի մահուկից կտրած վեցերկա, մեծ ֆուրաշկա, նեղ անդրալարտիկ և ճոճաւան կոշիկներ:— այս էր նրա հագուստը: Նրա լայն թիկունքից, բարձր և բազմակի գույն ցնկած կրծքից, հաստոսկոր լերեւորտաբոց, սուր աչքերից, ամուր բազմակից լերեւորտաբոցից և լերեւորտաբոցից ուս և ամբողջութեամբ: իսկ արեգակի տաքութեամբ նրա աչքով թուր զեմքը, հաստ և քիչ տափակ քիթը, խորը խորշերի մեջ թաղնված մեխակագույն բոլորակ աչքերը և խորշ սև ունքերը մի քիչ անախտի և ոտարոտի տպավորութեամբ ելին անուամբ մարդու վրա: Նրա լերեսը մաքուր սպիտակ էր, նորարարույս, բարակ, սեպուղի բեղերը խնամքով սրած: Առհասարակ տխուր, դաժան մարդու բազմակի տպի մի կերպարանք էր:

Սահմանի վորդի Ռուստամն էր, Սուսանի նշանածը:

Յերկար չենք պատմիլ, թե ինչպէս գլուխ լեւորտաբոց և Ռուստամի նշանակիլ և, վերջապէս, հարսանիքը: Միայն այսքանը հարկավոր է ասել, վոր այս բանում գլխավոր դեր կատարողը դարձաւ «գարանգիդի» Շրպապանիկն էր:

Կիսով չափ համոզելով Սահմանին, վոր սա յուր վորդու համար Սուսանին ուղի, Շրպապանիկը հենց նույն որից սկսեց գործ դնել բոլոր յուր հնարները, վորպէսդի բանն անհաղաղ վերջացնել: Նախ և առաջ նա գնաց Սահմանի ազգականների և բարեկամների, «Թուխիկ-Մուխիկի» մոտ, վոր ամենքի առաջ Սուսանին արդարացնի: Թեև Բարխուդարը նրան չէր խնդրել, վոր այդքան աշխատի յուր աղջկա մասին և միայն կիսարեւոյն մի թեթիկ ակնարկութեամբ էր արել, սակայն այսքանն էլ հերիք էր Շրպապանիկին: Նա շատ էր լսել, ինքն էլ անձամբ փոքր ինչ ծանոթ էր Բարխուդարի բնարավորութեանը և գիտեր, թե ինչ նշանակութեամբ ունի մի թեթիկ ակնարկ Բարխուդարի պէս մարդու կողմից: Այս պատճառով Շրպապանիկը հանգստութեամբ չուներ, ամբողջ չէր քնեց շաբաթ աչքտեղ ու աչքտեղ, սրա ու նրա մոտ վաղեց, գործ դրավ բոլոր յուր խորամանկութեանը, սպասեց բոլոր

հնարագիտութիւնը, լեզվի բոլոր ուժը, մինչև վոր բանը հաջողեցրեց:

Միքանի կողմնակի հանգամանքներ ևս քիչ չնպաստեցին Շրպապանիկին: Բանն այն է, վոր այդ ժամանակները Շամախի լեկել եր մի ոտարաքաղաքացի լերիտասարդ վաճառական: Հայտնի չէր ինչպես, Շրպապանիկի գլուխը մտել էր, վոր իբր այդ լերիտասարդը լեկել և «Շամախու գլուխներան մինին դափմիշ» անելու, այսինքն պատկերելու նպատակով և փնտռում և մի գեղեցիկ ու խելով աղջիկ: Շրպապանիկը մի որ ձեռները հինալով ներկեց, մազերը կարգին սանրեց, լերեսը Ղաղանի սապոնով լվացավ, սնդուկից դուրս բերեց նոր շալը, ձգեց գլխին ու, հայդա, լերիտասարդի մոտ:

Նա ծանոթացավ վերջինի հետ, միքանի բաժակ թեյ խմեց նրա մոտ, զննեց, քննեց, հարց ու փորձ արավ նրան, թե ով է, ինչ տեղացի լե, ինչ գործի լե, վորքան կարողութիւն ունի և այլն: Բանից չերեկեցավ, վոր լերիտասարդը գանձակեցի լե, պարապում է մետաքսի տուտուրով և բավական կարողութիւն ունի: Թե նա Շամախի լե լեկել առևտրական գործերով և վոչ թե պատկերելու, թե ինքն արգեն պատկերած և և լերեք մտադրութիւն չի ունեցել լերկորդ կին ունենալու, «չունքի առաջին կնիկը կոխի կանի, համ ել, դեհ, հայ քրիստոնիսլի որևնքով մի մարդ լերկու կնիկ չի կարող պահել» և այլն և այլն:

Տեղեկանալով այս բոլոր մանրամասնութիւններին, Շրպապանիկը քիթը քաշ, «քլոռ ու փոշման» դուրս լեկավ լերիտասարդի մոտից, բայց առ ժամանակ վճռեց վոչ մի մարդու չհայտնել, թե ինքը սխալված է լեղել: Նա նպատակ ունի: Անմիջապես Շրպապանիկը վազեց Սանամի գլխին և սուտ-սուտ, շունչը փորը գցելով, հաղորդեց նրան: — «Ա կնիկ, հա՛նց աս սահաթին ան գենջեցի տղի մոտան ամ գամ: Փող, դովլաթ, սկիւ պես: Ինքն ալ մի գլուխ ալ, մին գլուխ ալ, մի բոյ բուսաթ ունի, քիթի, վոր դու ալ, պառավ տեղովդ, տեսնես — քեֆդ կգա, կսիրահարվես: Ինձի թափշուր արավ, վոր մին լավ աղջիկ ճարեմ նրա համար: Հիթսուն դանա ջրնգալի նիկոլայներ խոստացավ ինձ: Յես նրա մոտ Գլուխաղի աղջկան թարեֆ արի, խեղճ մարդու բերանը բաց մնաց, ասեց. «հենց նա ինքն ա իմ ուզած աղջիկը»: Հիմի, ա կնիկ, ալ ինձ խոսացնել չի իլիլ, ասիր, տեսնամ, ագլամ ուզում ես տղիդ հետի Սուլանին — ուզիր, ագլամ չես ուզում — ալ ան մարդու աղջկան բանդուվանի մի քիցիլ, թող քինամ ան տղի հետի քլութահ անամ, բանը քինա»:

Սանամը Շրպապանիկի խոսքերին հավատաց և մի որ ժամանակ խնդրեց, վոր մտածի: Մյուս որը Շրպապանիկը կրկին ներկայացավ

նրան, և այս անգամ Սանամը վճռողարար ասաց, վոր ցանկանում և Սուսանին ուզելի Շրպպանիկը վոտք ու ձեռք ընկավ, չերկու որում նշանդրեքը գլուխ բերավ։ Սանամը հեռագրել տվավ, Ռուստամը չերկու շաբաթից հետո հասավ Շամախի, և ահա արդեն նրա հարսանիքն էր այդ գիշեր կատարվում։

Սուսանի մյուս կողմով գալիս եր կնքահայրը—Ռուստամի վաճառական ընկերներից մեկը։ Իսկ Ռուստամի կողքով գալիս եր Սըմբատը, իբրև հարսելորալոր։ Սրանց հետևից գալիս էլին հանդիսականները, վորոնց մեջ ամենից առաջ չերկում էին Գյուլնազը և Սուսանի ընկերուհի Սուսամբարը։

Սուսամբարը Սուսանի համար ուղեցուցի գեր եր կատարում, վորովհետև վերջինի չերեսը ծածկած եր թանձր քողով։ Նա վուչինչ չեր տեսնում կամ հազիվ կարողանում եր նշմարել «Ախչի գլուխդ այս կողմ պահիր, ախչի, կռներդ ծռիր, մեջքդ դրստիր, ախչի, չարշովդ հովաքիր»,—քչիչում եր անդադար Սուսամբարը։ Սուսանը հլու հնազանդությամբ կատարում եր նրա բոլոր պատվերները։

Սուսամբարը նորապսակի պարտականութունները անգիր գիտեր, վորովհետև դեռ մի ամիս չկար, վոր ինքն անցել եր այդ բովով։ Թե ով եր Սուսամբարի նշանածը և ինչպես եր պատահել, վոր նա պսակվել եր—այս մասին մանրամասն տեղեկություններ հայտնի չէին։ Միայն մի առավոտ Սուսանը լսեց լուր մորից, վոր վերջապես Սուրամյարին նշանել են և չերկու որից հետո պսակելու չեն մի տարաքաղաքացի մարդու վրա։ Անշափ ուրախացավ Սուսանը լուր ընկերուհու ալդ անսպասելի բախտավորության վրա, բայց նույնը չի կարելի տեսլ Սուսամբարի վերաբերմամբ։ Յերբ Սուսանը շտապեց շնորհավորելու Սուսամբարին—վերջինը, կրծքից մի խորը հառաչանք արձակելով, պատասխանեց.—«Ինչ պսակվել և, չգիտեմ, ծնողներս կռնիցս բռնել են ու անտեր շորի պես շարտում են մի անձանթ ու անհայտ տղի շինքին»։ Այսպես թե այնպես, Սուսամբարը նորահարս եր։

Հանգեսը ծովեց դեպի այն փողոցը, ուր գտնվում եր Ռուստամի տունը։ Խլացուցիչ գուռնան անընդհատ փչում եր «Նազարաչին» չերկու բարակ, տաշած, սրածալր փայտերով անդադար խփում եր կռնատակին բռնած նաղարայի չորացած կաշիին, թնդացնելով մառախուղը։ Հանկարծ հանդիսականների հետևից լավեց մի ինչ-վոր գոռոց և միևնույն վայրկյանին ուռմբի չափ մի քար թռավ հանդիսի մեջտեղը։ Քարը դիպավ ջահ պահողի թևին, վորի ձեռից ջահն իսկույն ընկավ և հանգավ։

Այդ անսպասելի դեպքը խառնաշփոթութուն գցեց հանդիսա-

սկանների մեջ: Սկսվեց իրարանցում: Կանայք բարձրացրին ճիչ ու գոռոց, տղամարդիկ շվարվեցին: Ու անթափանցելի խավարի մեջ իրարու հանձնելով, վոչ վոք չեւ հասկանում ինչ և կատարվում: Ամեն մեկը վախենալով, մի վորեւ հանկարծահաս վտանգից, պաշտպանողական դիրք բռնեց: Ընդհանուր խառնաշփոթութիւն մեջ մանավանդ շփոթվել էին նորապսակները, և Սմբատը, Սուսամբարն ու Գյուլնազը:

Աղմուկը շարունակվում եր, լսվում եին սպառնալի խոսքեր, անվայել հիշոցներ, և վոչ վոք չգիտեր ի՞նչ և հախճուղը և ում դնի: Վորոշվում եր միայն մի չերիտասարդի անկապ հիշոցները:

— Զահը վառեցեք, — բացականչեց Ռուստամը լուր սուր, զորեղ և անհողող դձախով:

Զահ պահողը, մի կողմում ընկած, տնքտնքում եր: Հանդիսականներից մեկը իսկույն մի լուցկի վառեց: Սև նավթի մեջ թաթախված ցնցոտիները բոցավառվելով, լուսավորեցին տեսարանը պղնձագուլն և ծխախառն լուսով: Գյուլնազը, Սուսամբարը և Սմբատը չէին հեռացել նորապսակներից: Առաջին չերկուսը Սուսանին կպած, պատրաստ էին իրանց մարմով պաշտպանել նրան վտանգի դեպքում:

— Ինչո՞ւ չեք փախչում, էյ, էյ, կանգնեցեք, էյ նամարդներ, էյ վախկոտներ, — գոռում եր մեկը հանդիսականների հետեւում դեպի փողոցի մշուս կողմը, վորտեղից լսվում եր մի խումբ փախչող մարդկանց վոտնաձայնը:

Հետո գոռացողը չերեսը շուռ տվով դեպի հանդիսականները և սկսեց դարձյալ հիշոցներ տալ: Այս անգամ նրա հիշոցները վորոշվում էին: Նա հախճում եր առանձնապէս Ռուստամին տասնյակ փողոցային կեղտոտ խոսքերով: Հախճողը մի չերիտասարդ եր: Զահի լուսո ճառագայթները լուսավորեցին նրան: Նա գունատ եր ինչպէս դիակ: Հագուստը վոտից ցզլուխ շաղախված եր ցեխով, մազերը ցիր ու ցաւ, աչքերը վառված: Աջ ձեռին պահած եր մի չերկայն փայտ, ձախ թևի վրա փաթաթած եր չերքեզկան: Նա կամենում եր առաջ շարժվել, բայց չեւ կարողանում, վոտները չէին հնազանդվում: Նա սաստիկ հարբած եր, այնպէս վոր կանգնած տեղը ամբողջ մարմնով տատանվում եր, ինչպէս մի լարախաղ պարանի վրա:

— Վոչինչ չկա, գուռնան փչեցեք, առաջ գնանք, — խոսեց բարձր ձայնով Սմբատը և ինքը շտապով վազեց դեպի հիշոցներ տվող չերիտասարդը: Նա խից վերջինի ձեռից փայտը, բռնեց նրա թևից և հեռացրեց հանդիսականներից:

— Այդ ի՞նչ պատահեց, ի՞նչ եր տղան, ի՞նչ եր ուզում, — հարցնում եր անդադար Ռուստամը շրջապատողներին: Յե՛վ վոչ վոք նրան մի վորոշ պատասխան չեւ տալիս:

— Ե՛հ, դատարկ բան ե, գիշերվա շառլատաններէց մեկն եր,—
ասում ելին միայն:

— Բայց ո՞վ եր, կարելի չե լիս ճանաչում եմ. անո՛ւնը:

— Թուրք եր,—պատասխանեցին, աշխատելով անհայտութիւն
մեջ պահել յերիտասարդի անունը:

— Ախ, տեր աստված, այդ լո՛ւն կրակ եր, լիս ճանաչեցի. նա
ինքն եր,—քշփչաց Սուսամբարը Սուսանի տկանջին:

— Ո՞վ եր,—հարցրեց նորահարսը հազիվ լսելի ձայնով:

— Սեյրանը:

— Սեյրան,—կրկնեց Սուսանը թույլ ձայնով և ուշաթափվեց:

— Սուսան, Սուսան, ուշքի չեկ,—բացականչեց Գյուլնազը, դրկե-
լով լուր տղջկան:—Ա՛յ ջամահաթ, բախտ վախեցա՛մ, բախտ ձեռքիցս
դուրս չեկա՛մ, ոգնեցե՛ք:

Այդ նոր, անսպասելի դեպքածը հանդիսականներին բոլորովին
շփոթացրեց այս անգամ: Զուռնայի ձայնը կրկին ընդհատվեց, և աս-
մենքը մոտեցան նորապսակներին:

— Զուր, Զուր բերե՛ք՝ յերեսին սրսկելու,—դռու՛մ եր Ռուստամը
մի ձեռով նորահարսին գրկած:

Այն գինետունը, ուր մի փոքր առաջ Սեյրանն լուր ընկերակից-
ների հետ հարբելէր, դեռ ևս փակ չեր: Սմբաւը, հեռվից նկատելով
ճրագի լույսը, վազեց անմիջապէս անտեղ, վոր Զուր բերի:

Սուսանի յերեսից քողը քաշեցին: Զահի լույսը լուսավորեց նրա
դունաթափ դեմքը: Անցան առաջին վայրկյանները, և Սուսանը հան-
կարծ ալքերը բաց արա՛ւ: Նրա դողդոջուն շրթունքներից դուրս թռա՛մ
մի խոսք, և նա կրկին ուշաթափվեց: Հանդիսականներից վո՛չ վոք չլսեց
այդ խոսքը, բացի Գյուլնազից ու Սուսամբարից: Սեյրանի անունն
եր: Ռուստամը ևս լսեց այն, լսեց և Գյուլնազի ու Սուսամբարի վրա
տարակուսական մի խորը հայացք ձգեց: Գյուլնազի և Սուսամբարի
վրա այդ հայացքը սառսուռ աղղեց, և նրանք միաժամանակ գլուխ-
ները կրճճեցին թեքեցին, իրանց դեմքերը Ռուստամի սրատես աչքե-
րից թագցնելու համար:

VI

Մինչ խավարի մեջ տեղի ունեւր այդ տեսարանը, գինետնում
կատարվում եր մի ուրիշը: Յուր արշալանքի անհաջող հետևանքից
հուսահատված, Սեյրանը կրկին վերադարձա՛մ անտեղ: Գիշերվա կի-
սին նա ուրիշ ապաստանարան չգտնելով, թախանձաքով խնդրեց, ա-
ղաչեց գինեվաճառին, վոր սա թույլ տա իրան՝ գինետանը գիշերելու:

Թուլացած մարմնով, վշտացած հոգով և փշրված սրտով, Սեյրանը քաշվել եր մի անկյուն և այնտեղ, մի կտոր կեղտոտ շորի պես շնթռված, մտածում եր։ Ի՞նչ եր մտածում նա—Վոչինչ։ Ըմպելիքների շոգու մեջ խաշված ուղեղն ինչ կարող եր գործել այդ ժամանակ մի հողմած գլխում։ Այն տեսարանը, վո՞ր մի քանի բոպե առաջ կատարվեց փողոցում և վորտեղ ինքը գլխավոր գերակատարն եր, այժմ նրան չերազ եր թվում։ Նա չեր կարողանում պարզ հասկանալ կամ չերհակացել, ինչ եր պատահել և ինչու համար ինքը կրկին գինետանն և դտնվում։ Ընկերների խառնրալուծությունը և անպնդվելի մեծ դաժանելով փախչելը, անվայել ու կեղտոտ հիշոցները, վոր ինքն ուղղեց նորապսակներին, Թուստամի հաղթութունը, Սուսանի գլուխը խոնարհած չուր ճակատադրին հնազանդվելը—այս բոլորը, իրարու խռնվելով, անթափանցելի քառս կլին գոյացրել անարգված և ստորացած պատանու գլխում, շնչված, հազթված, վոչնչացած այդ մտքերի ծանրության տակ, նա թավալվել եր և ուժ չուներ չուրտեղից շարժվելու, ինչպես չուր շուրջը ընկած դատարկ գինետեղից մեկը։

Այդ դրության մեջ եր Սեյրանը, չեր գինետան դռները բացվեցին, ներս թրավ Սմբատը։ Նա բարձրացրեց աչքերի ծանրացած կոպերը։

Սմբատը թախանձանքով խնդրեց գինեվաճառին մի փոքր շուր։ Գինեվաճառը շտապեց կատարելու նրա խնդիրը։ Յերբ Սեյրանի հացացքն ընկավ Սմբատի չերեսին, կարծես, ելնկտրական թելի ծայր կպավ նրա մարմնին։ Մի վայրկյանում նա ուժի գալով, բարձրացավ տեղից։ Սմբատն ևս չուր կողմից նկատեց նրան։ Մի քանի վայրկյան չերկու նախկին ընկերները իրարու չերեսին մտիկ արին, ամեն մեկը, կարծես, սպասելով ինչ պիտի ասե մյուսը։

— Եե... շուռուն...շ...—սկսեց Սեյրանը, բայց, չկարողանալով արտասանել ուղած խոսքերը, գլուխը կրծքին թեքեց և բերանից դուրս թափեց գինու փրփուրը։

Սմբատի դեմքով սահեց մի ժպիտ, վոր արտահայտում եր կես զգվանք, կես խղճահարութուն դեպի չուր ընկած ընկերը։

— Ադդա, գրգըլուխդ կփշրեմ,—դարձալ թոթովեց Սեյրանը և, աջ ձեռի բռունցքը սեղմելով, կամեցավ առաջ շարժվել, չկարողացավ։

Սմբատն այս շարժումից հասկացավ նրա միտքը։ Սակայն ինքը տեղից անգամ չշարժվեց։ Սեյրանը կրկին մի քանի վայրկյան թոթովեց, և այս անգամ նրան հաջողվեց արտասանել մի ինչ-վոր անվայել խոսք։ Սմբատը պարզ լսեց նրա բերանից թրած այդ անվայել խոսքը, վոր սաստիկ վիրավորական եր նրա համար։ Մի վայրկյանում

նրա ականջները կարմրեցին, պոռչները սպրտնելով սկսեցին ցնցողաբար դողալ։ Նա մի կողմ դնելով գինեվաճառից ստացած ջրով լի կուլան, սեղմեց չուր բռունցքները և, կարծես, պատրաստվում եր հարձակվել Սեյրանի վրա։ Գինեվաճառը դարձացավ։ Նա մի քանի վայրկյան, բերանը բացած և կարմրած աչքերը չռած, նայում էր մերթ Սեյրանին, մերթ Սմբատին, ձգտելով չեղիւ պատանիների այդ տարորինակ գաղտնիքը թափանցելու։ Սեյրանը, մի ձեռը սեղանին հենած, մյուսը ամուր սեղմած, աչքերը Սմբատի կմբին հառած, անդադար տատանվում եր, չերբեմն արտասանելով ինչ-վոր անհասկանալի խոսքեր։

— Ամաչիր, ամաչիր, Սեյրան, տես ինչ որն ես ընկել քո հիմարությունով, — խոսեց, վերջապես, Սմբատը և նույն վայրկյանին, մտաբերելով չուր քրոջ դրությունը, վերցրեց ջրի կուլան, չերեսը շուռ տվավ, փոր դուրս դնալ։

Սեյրանը մի քանի քայլ հետեց նրան և կրկին կանգ առնելով, պոռաց բարձր ձայնով, վորքան ուժ ուներ.

— Կանգնիր... չես չեմ ուզում...

Սմբատը կանգնեց և չեա նայեց։

— Հա, չեմ ուզում կեղտոտ շորը, չեմ ուզում լպստած պատառը, տարեք ու շների առաջը գցեք, — արտասանեց Սեյրանը այս անգամ բավական պարզ։

— Յերգվում եմ, Սեյրան, այս գիշերվա սուրբ պսակով, վոր վոտներին տակ քեզ շանսատակ կանեմ, չեթե այդ աղտոտ լեզուդ փորդ չես քաշի, — պատասխանեց Սմբատը, ատամները կրճտելով և նորաբույս բեղերը կրծոտելով, վոր դսպի չուր կատաղությունը։

— Սուրբ... սուրբ, հ՛մ, չե, կեղտոտ, ինչպես, ալ, տեհա, ըմպողդ... կեր...

Այս անգամ Սմբատի համբերությունը սպառվեց։ Նա ջրի կուլան կրկին սեղանի վրա դրավ, հարձակվեց, բռնեց Սեյրանի կոկորդից և սկսեց խեղդել։

Գինեվաճառը բղավելով մեջ ընկավ, վոր նրանց բաժանի։ Սեյրանը Սմբատի ճանկերում նման եր քաղցած կատվի թաթերում ընկած չնչին մկան։ Նա շնչասպառ, մեջքից ծովեց և թուլացած չեղիւ ձեռներով քարշ ընկավ Սմբատի մազերից։

— Հեա լղիբ թքածդ, ասա — մեղա աստուծու, թե չե, Քրիստոսը վկա, հոգիդ այս րոպեյին սատանաներին կշարտեմ, — գոռում եր Սմբատը, մատներով Սեյրանի վիզը շղթայած և անդադար թափահարելով նրա գլուխը։

Սկըրանում խոսելու ուժ չեր մնացել։ Նրա լեզուն դուրս եր ընկել, կտորմած աչքերը չուկել ելին, կարծես, քիչ եր մնում, վոր դուրս պրծնելին։

— Այ աղբեր, դա ինչ կրակ եր, վորի մեջը գցեցիր ինձ։ Ձեռքաշիր, աստված սիրես, ինչ ես սպանում խեղճ տղին,—բացականչում եր գինեմաճառը, աշխատելով Սմբատի ձեռները հեռացնել Սիւրանի կոկորդից։

— Բաց եմ թողնում, դնա, աղատում եմ, առանց այդ ես դու փչացել ես, թող դուր ձեռներս չկեղտոտեմ,—ասաց Սմբատը ե, բաց թողնելով Սկըրանին, փրկու ձեռներով յետ հրեց նրան։

Սկըրանը յետ ու յետ դնալով թափալվեց պատի տակ, ինչպես ուժեղ ձեռքից արձակված մի բրդյա գնդակ։ Նա կրկին կամեցավ բարձրանալ, բայց այս անգամ Սմբատն ուշադրութուն չգարձրավ նրա վրա ե, ջրի կուլան վերցնելով, շտապով դուրս գնաց։

VII

Մինչ Սմբատի հասնելը Սուսանին արդեն ուշքի ելին բերել։ Ջուռնան կրկին սկսեց փչել, ե հանդեսը առաջվա կարգով շարժվեց առաջ։ Քառորդ ժամից հետո հասան Ռուստամի տուն ե ծանր քաշներով մտան բակը։ Այստեղ նորապսակների դեմ դուրս թափվեց կանանց ե տղամարդկանց մի ուրիշ խումբ, վորի գլխին կանգնած եր Սանամը մետաքսյա հագստով զուգված ու զարդարված։

Սանամի դեմքի վրա խաղում եր մի զվարթ ժպիտ։ Նրա՝ յերիտասարդական կենդանությունից վաղուց զրկված՝ աչքերը փայլում ելին ներքին գոհունակությամբ։ Արդարեւ նրա ուրախությունն անսահման եր։ Ձեք վոր նրա իղձը կատարվում եր ե, վերջապես, նրա միակ ու սիրելի վորդին պսակվում եր։ Նրա մայրական սիրտը զարկում եր միայն ե միայն չուր վորդու բախտավորությամբ։ Յեթե կար մի ուրիշ անձնավորություն, վոր թեեւ ուրիշ զգացմունքներից դրրդված, բայց նույնչափ այդ գիշեր ուրախ եր, վորչափ Սանամը—այդ Շրպպանիկն եր։ Այս անգամ նա ձեռները մինչեւ բազուկները ե գլխի կարճիկ մագերը ներկել եր հինալով մի առանձին հողացողությամբ։ Յերբ հարսանիքի հանդեսը ներս մտավ, Շրպպանիկը իսկույն դուրս ընկավ նորապսակների դեմ ե, յերկայն բազուկները վեր քաշելով, սկսեց պարել զուռնայի չեղանակով։

— Աստոծ շաննոոր անի, ալ ողուլ, Շրպպանիկը չինար բոլիգ մատող,—բացականչեց նա, ընկնելով Ռուստամի վզովը ե մի քանի անգամ համբուրելով նրա ճակատն ու թշերը։

Հետո, բաժանվելով Ռուստամից, շարունակեց պարելը։

— Ղալթաղի ածեցեք, ադա,—հրամայեց նա զուռնաչիներին և, կռնատակից հանելով մի ափսե, պահեց յուր գլխից վեր, պարը շարունակելով։

Սանամը ծոցից քսակը հանեց և մի բուռն արծաթադրամ թափեց բաժակակալի մեջ։ Չորս կողմերից հանդիսականները հետևեցին նրան, և մի քանի բոպելում Շրպականիկի ափսհն լեցվեց պղնձե, արծաթե և թղթե զրամներով։ Յերածիշտների վառված աչքերը ազահուլթյամբ ճանապարհ դրին այդ փողերը մինչև Շրպականիկի գրպանը, վորտեղից վերջինի աջ ձեռը հեռանալով, մի վիրավորական նշան արավ զուռնաչիներին։ Վերջապես, Շրպականիկը ասպարիզից դուրս չեկավ, յուր հնձով բավականացած, և նրա տեղը մեջ մտավ պառավ Սանամը։ Յերածիշտները իրարու աչքով արին և ավելի սաստկացրին զուռնաների ծվծվոցը։ Սանամը յուր հաստիկ մարմինը լիլիաացնելով և մինթանայի փեշերը ֆուռացնելով, սկսեց պար գալ։ Ռուստամը հընդանոց թվթադրամի ծալքը թքով թրջեց և խփեց յուր մոր ճակատին։ Սուսանն յուր լղարած, դողդոջուն ձեռով հանեց մի կապույտ թղթադրամ, ամոթխածությամբ դրավ յուր սկեսրոջ ափի մեջ։ Հանդիսականները վոգեհրվեցին, և ամեն մեկը շտապեց յուր լուման ասպարեզ հանել։ Սանամը հավաքված փողերը հանձնեց զուռնաչիներին և դուրս չեկավ ասպարիզից։ Այնուհետև հանդիսականներից մեկը մի մեծ ափսե բռնեց նորապսակների գլխին, և ներկա լսողները մի առ մի հերթով ձգեցին իրանց նվերները։ Վորը ձգեց թուղթ փող, վորը վոսկի, վորը մի վորևե վոսկեղեն կամ արծաթեղեն, վորը մի վորևե հազատացու և այլն։ Վերջապես, զուռնան դադարեց և հանդիսականները ներս մտան ընթերելու։

Սուսանին տարան կանտնց բաժինը, վոր Սանամի հարևանի տանն էր, իսկ Ռուստամը միաց տղամարդկանց բաժնում։

Իրև նորահարս, Սուսանը, քաղաքի ավանդության համաձայն, պարտավոր էր ամբողջ ընթրիքի ժամանակ վորտքի վրա կանգնած մնալ։ Բայց այս անգամ այդ ավանդության դեմ մեղանչեցին։ Հանդիսականներից մի քանիսը, վորոնք ներկա էին այս գիշերվա անսպասելի անցքին և Սուսանի ուշադնացուլթյան ականատես, համոզեցին վերջինին և նստացրին սենյակի ծալքում, հատուկ յուր համար պատրաստած փափուկ մետաքսյա մինդարի վրա։ Գլուխապն և Սուսամբարը նստեցին նրա կողքին, մեկը—աջ, մյուսը—ձախ։ Ընթրիքի ժամանակ Սուսամբարը անդադար քչփչում էր Սուսանի հետ թագուն, այնպես վոր վոջ վոք նրանց լսել չեր կարող, մանավանդ վոր բոլորը զբաղված էին ավելի ուտելով, քան նորահարսով։

— Խեղճս գալիս և նրա ծնողներին, հիմա լես դիտեմ ինչ որ ունի ևն նրանք,—ասում եր Սուսամբարը:

— Չեմ իմանում, թե այսքան մեղքերիս համար ինչ պատասխան պիտի տամ ահեղ դատաստանի առաջ,—քչփշտց Սուսանը:

— Դժւ ինչ մեղավոր ես:

— Չե, Սուսամբար, մեղավորն լես եմ, հորս տանջողն ել լես եմ: Են, յերկնային թագավոր, փառք քո զորութիւնին, փառք, ինչ պիտի անեմ:

— Ինքդ քեզ մի տանջիր, առանց այդ ել վրեղ մի վստկոր և մնացել ու մի կաշի:

— Յերանի կլիներ, վոր աչն ել շուտով հողի տակ փտեր, լես ել կհանգստանայի, կհանգստանային ուրիշներն ել: Մտիկ տրա, Սուսամբար, կողքիս նստած մորս, մտիկ արա նրա լերեսին, տես, թե նա ինչ որն և ընկել: Տես, խեղճ կնիկը կռները ծոցում ծալած մոտո աչնպես և նստել, վոր, կարծես, իմ թագման հանդեսն և կատարվում այստեղ: Ուրիշները ուտում են, խմում, ուրախանում, բայց նա, կտեսս, մշուս աշխարհ և թռել: Ախ ծնողներ, ծնողներ, սպանեցի լես ձեզ իմ հիմարութեամբ:

Այս խոսքերն արտասանելիս Սուսանի աչքերից դուրս թափվեցին արտասուքի առատ կաթիլներ և վողողեցին նրա մաշված ու վաղաթառած լերեսը: Նա արտասուքը խեղդեց, նրա կուրծքը ծանր շնչառութիւնից սկսեց բարձրանալ ու ցածրանալ աչնպես, վոր, կարծես, թշվառ նորահարսը մահվան մահիճում լիներ: Հանդիսականներն այդ չնկատեցին, բացի Սուսամբարից: Չեր նկատում նույնպես և Գյուլնազը, վոր, աչքերը սեղանի մեջտեղին հառած, արձանացած, նստած եր: Նրա աչքերը կորցրել էին իրանց նախկին կրակոտ փայլը, և կենդանութեան մի թույլ նշան եր մնացել նրանց մեջ: Նրա պղծած լերեսը տեղ-տեղ ծածկվել եր կնճիռներով, և մի խորը գիծ նրա վոսկորացած ճակատի մեջտեղով ուղղագիծ անցնելով, բաժանում եր կուչկուչված հոնքերը իրարուց:

— Սուսամբար,—շնչաց կրկին Սուսանը:

— Հըմ, խոսիր, հոգիս, ինչ ես ուղում,—հարցրեց Սուսամբարը, թեքվելով դեպի նրա ականջը:

— Մի բան վոր հարցնեմ, ճշմարիտը կպատասխանեմ:

— Սուսամբարը չէր և քեզ սուտ ասել, վոր հիմա տսի,—պատասխանեց Սուսամբարը խորը հանդիմանական չեղանակով:

— Ճշմարիտ ե, վոր ասում են, թե աստված ինքնասպանի հոգին առանց դատաստանի չե հանձնում սատանաներին:

— Այդպիսի բաների վրա խոսելու ժամանակ չե, հարսանիքդ ե:

Մեղք ե, Սուսան, մի խոսիր:

— Չե՞, Սուսամբար, թե ինձ սիրում ես—պատասխանիր:

— Դատարկ-դատարկ քիչ խոսիր, քեզանից կխուզվեմ:

— Աստծուդ սիրես, դու—քո միակ չեղորորդ արեւը:

— Ո՛ւՖ, դե իհարկե այդպես ե:

— Ի՞նչպես, ինքնասպանները դժոխքն են ընկնում:

— Հա՛:

— Թե մեղք ել չունենան, արդար լինե՞ն:

— Ել արդարս վորն ե: Սպանութիւններից հետո ել ինչ արդարու-

թիւնն մնաց:

— Ուրիշի չի սպանում հո, իրան ե սպանում ելի:

— Հասկա ինքը մարդ չի՞:

— Բայց ինչո՞ւ առանց դատաստանի:

— Հերիք ե:

— Ասա, չեթե ինձ սիրում ես:

— Ինքնասպանի համար դատաստան չկա: Մենք արարիչ աստուծո պատկերով ենք ստեղծված: Մարդասպանը աստուծո պատկերն ե սպանում ու նրա դատաստանով ե դժոխք գնում: Բայց չեղոր մարդ ինքն իրան ե սպանում, նա գիտէս ինչ ե ասում աստծուն:

— Ի՞նչ:

— Տես, ասում ե, ով աստված, քեզանից այնքան ամաչում եմ, վոր քո պատկերովդ ինքս ել չեմ ուզում ապրել:

— Մեղա, մեղա, քեզ, տեր աստված, դու չարը խափանես,— շնչաց Սուսանը հառաչելով և չերեք անգամ չերեսին խաչակնքելով:

— Ինչո՞ւ համար ելիր հարցնում:

— Հենց այնպես:

— Տեսնում ես, վոր մեր տերտերներն ել ինքնասպանին որենքով չեն թաղում: Հիմա դու ասա. վոր մի մեռել առանց «համբիսկի» թաղվի, ել նա լինչ չերեսով պիտի ահեղ դատաստանի առաջ կանգնի:

— Փառք քեզ աստված, դու բարին առաջես,—ասաց կրկին Սուսանը և հետո ընկավ մտատանջության մեջ:

Մինչդեռ կանանց բաժանման մեջ նորահարսը չուր ընկերուհու հետ զրադված եր այս մռայլ խոսակցութեամբ, տղամարդկանց բաժնում նորափեսային ուրիշ միտք եր տանջում:

Ինչո՞ւ համար ելին այն մարդիկ հարձակվում նորապսակների վրա: Ո՞վ եր այն տղան, վոր հիշոցներ եր տալիս: Սեյրան... Սեյրան, այդ ի՞նչ անուն ե, վոր Սուսանի բերանից լսեց Ռուստամը: Յերեի,

Սուսանի բարեկամներին մեկն եր, վոր հարսանիքատանը հարբել եր, Սուսանի ծնողների հետ կռվել ու լեկել, վոր ճանապարհին վոխը նորապսակներին հանի։ Ձե, ալդպես չե, ալստեղ մի բան կա, վոր վոչ վոք, վոչ վոք չի ուզում ասել Ռուստամին։ «Թուրք եր, շառլատանների մեկն եր», ասում են, փիւն, նա հալերեն եր խոսում, Բնչպես թե թուրք եր։ Ձե, անպատճառ մի թագուն բան կա, Ռուստամի սիրտն ել վկայում ե ալդ։ Ձե, Ռուստամը անպատճառ պիտի իմանա, թե չե—սիրտը կտրաքի։

Ալդպես եր մտածում նորափեսան, սեղանի շուրջը պտույտ գալով և հանդիսականներին զանազան ծառայություններ անելով։ Նա չուր՝ կասկածանքով լի՝ հայացքը ձգում եր հերթով հանդիսականներից ամեն մեկի վրա և խորը նայում, կարծես, կամենալով կարգալ նրանց դեմքերի վրա դադտնիքը։ Բայց հանդիսականների դեմքերն վոչինչ չեկին արտահայտում, բացի ուրախ տրամադրությունից պինու ու արագի աղբիցությամբ։ Ռուստամը մանավանդ ստեպ-ստեպ նայում եր Սմբուտին, վոր, գլուխը կրծքին թեքած, ընթրիքին չեր մասնակցում։ Յնրբ Ռուստամը նայում եր, Սմբատը խուլս եր տալիս նորափեսայի գննող հայացքներին։ Ռուստամի սուր աչքերը Եղ չեկատում ելին, նկատում և կրկնապատկում նրա կասկածը։—«Նա ինչ՞եւ հաց չի ուտում, հը՞ւմ, ինչի՞ վրա չե մտածում։ Նա չերեսիս ել չի ուզում մտիկ անել, տես, տես, ինչպես ե աչքերի տակով մտիկ անում։ Տեսեք, տեսեք, պստիկ-պստիկ պատառներ ե դնում բերանը ու ծամում, իբրեւ թե ուտում ե։ Ձե, մի բան կա, վոր հացը ըողադովդ ներս չի գնում։ Հը՞ւմ, Բնչ բան ե, բա չես չկարողանամ իմանալ։—Ձե, չես պիտի իմանամ, պիտի իմանամ...

Մինչդեռ այդ կասկածավոր մտածմունքները չարչարում ելին Ռուստամին, խնձուկքը հետզհետե կենդանանում եր։ Սկսվեցին կենալներ։ Թամադան մի կարճահասակ, նիհար, կարմրադեմ, հաստ և շեկ բեղերով մի մարդ եր։ Դա մի հին գրագիր եր, վոր չերկար տարիներ քաշքշվել եր պետական հիմնարկություններում։ Ինչպես Շրպպանիկն եր Շամախում հայտնի և նշանավոր վորպես «զարանգիրդի», ալդպես և այս հին չինոֆիլին եր հայտնի իբրեւ թամադա։ Վոր հանդիսում, վոր հարսանիքում, վերջապես, Բնչ ուրախության տեղերում վոր լիներ, նա միշտ թամադա չեր ընտրվում, և այս պատճառով քաղաքում նրան կոչում ելին վոչ չուր անունով, այլ—«թամադա-կըճի»։ «Թամադա-կըճին» նախ և առաջ հրամայեց խմել նորապսակների կենացը։

— Թագավոր-թագունհի կենացը, հուռա,— գոռաց նա, բաժակը բարձրացնելով։

— Հափ հափ, հուռահ, — կրկնեցին հանդիսականները, բաժական-
քը պարպելով:

Հետո «Թամադա-Կըճին» հրամայեց կրկին լեցնել բաժականքը:

— «Կնքահայր-Սոլդուշի» կենացը, — դարձալ դոռաց նա:

— Հուռահ:

— Մեկել լեցրեք բաժականքը:

Հանդիսականները լեցրին իրանց բաժականքը:

— Ղոսպողա, — սկսեց Թամադան, — եքստըրըննի որշիկ կանա-
նի կենացը:

— Եքստըրըննի, եքստըրըննի, հափ-հափ հուռահ, — բացական-
չեցին միաբերան ըոլոր հանդիսականները և կրկին դատարկեցին ի-
րանց բաժականքը:

Այնուհետև Թամադա-Կըճին մեկ ել լեցրեց բաժակը, բարձրացավ
վոտքի, ձախ ձեռը դրավ կողքին և կարճիկ իրանը դուրս ցցեց:
Հանդիսականները հետևեցին նրա որինակին:

— Ղոսպողահ, դահ, — սկսեց Թամադան մի առանձին շեշտադրու-
թյամբ:

— Զահ, — կրկնեցին ըոլոր հանդիսականները:

— Զգարովիե, — շարունակեց Թամադան:

— Զգարովիե, — կրկնեցին ըոլորը:

— Նաշեդո:

— Նաշեդո:

— Սմբատա:

— Սմբատա:

— Բարխուդարիչա:

— Բարխուդարիչա:

— Վիպիոմ:

— Պիպիոմ:

— Հափ-հափ հուռահ, — ավարտեց Թամադա-Կըճին:

— Հուռահ, — կրկնեցին հանդիսականները:

Յեւ ախպես, հանդեսը կենդանացավ, լերաժիշտները վոգեկորվե-
ցին: Թառի լարերը պարսիկ նվագողի թանձր հինալով ներկած բա-
բակ մատների տակ լեղու ստացած, մի առանձին վոգեկորությամբ ե-
լին արտահայտում արևելյան Մուսալի հառաջանքները: Շիրադի լեը-
գեցողի լալն կոկորդից ինքնուրույն ներդաշնակությամբ դուրս ելին
հեղվում անմահ Հաֆըսի սիրահարական խոսքերը: Փոքրիկ դանգակ-
ներով զարդարված դահիրան անդադար պտույտ եր գալիս լեըգեցողի
ձեռում:

Վերջապես, ընթրիքն ավարտվեց, և հարրած հանդիսականները շուտ ու մուտ գալով վերկացան և սկսեցին հերթով պարել: Զպարողները և պարով չհետաքրքրվողները քաշվեցին դահլիճի այս ու այն տնկյունը և խումբ-խումբ հավաքված սկսեցին խոսել ու զվարճանալ: Ամենքն ուրախ ելին, ամենքի դեմքերի վրա փայլում եր բերկրութուն, բացի չերկուսից—Սմբատից և Ռուստամից:

Սմբատը մեն-մենակ հեռացած դահլիճի մի անկյունը, ծխախոտ եր քաշում: Ռուստամը գիծ վոչխարի պես անհանգստութիւնով պարտում էր դահլիճի չորս անկյունները: Կասկածը հետզհետե նրա մեջ գորեղանում եր անսպասելի կերպով, չնայելով, վոր ընդամենը մի քանի ժամ եր, վոր նրա մեջ ծագել եր այն: Նա կասկածում եր ամենքին և ամեն բանի, կասկածում եր Սմբատին, կասկածում եր հանդիսականների ամեն մի առանձնախոսութիւնը, կասկածում եր մինչև տագամ չերաժշտութիւն այս ու այն չեղանակը: Յերբ նա տեսնում եր, վոր հլուրերից չերկուսը առանձնացած խոսում են, իսկույն մտածում եր.—«Անպատճառ ինձ վրա չեն խոսում, ախ, չեթե իմանայի ինչ են խոսում»: Յեւ նա զգուշութիւնով մոտենում եր խոսողներին և, չերեսը նրանցից դարձնելով, թագուն ականջ եր դնում: Բայց չերբ խում եր, վոր խոսակցութիւնը բոլորովին մի ուրիշ առարկայի մասին ե, նույն զգուշութիւնով հեռանում եր, ինքն իրան ասելով. «գիտեմ ինձ վրա ելին խոսում, բայց, չերևի, ինձ տեսան, խոսքը փոխեցին»:

Մի անկյունում նրա ականջին հասավ մի խոսք, և նա մնաց մեխված տեղն ու տեղը: Այս անգամ խոսողները չերկու չերիտասարդներ ելին, վոր գինու ազդեցութիւնից հազիւ կարողանում եին վոտքի վրա կանգնել: Ռուստամը կանգնած եր նրանց չետևում, այնպես վոր չեր նկատվում:

— Դեղ ասում եմ մինչև կոկորդը, աչ մինչև այստեղ,—ասում եր խոսողներից մեկը, ձեռով ցուցց տալով չուր կոկորդը:

— Ա՛, քիշի, չե՛, ցըը՛ ցըը՛:

— Դու մեռնես, չեթե սուտ ասեմ:

— Հապա նրան թողած, ի՞նչի դրան չեկավ:

— Փահ, չերեխա չե՛ս, հապա հերը:

— Զուգե՛ց:

— Զե՛ն:

— Խեղճ աղջիկ, հիմի ով ե իմանում, սիրտը բլթըլթըմ ե:

— Հը՛մ, իսկի խոսք կա՛մ, չտեսար ինչպես սիրտը գնաց:

— Տեսա, ինչպես չե, նրան ել տեսա:

— Տղմն: Ամա նամարդ ընկերները լավ փախան հաս:

— Յես ելի չեմ հավատում, վոր աղջիկը...

— Դու իսկի ջահիլութուն չես արե՞լ: Ազն, ջահիլ աղջիկ, ջահիլ տղա, հըմ,—ասաց չերիտասարդը, գլուխը խորհրդավոր կերպով շարժելով:

— Աստված մի արասցե, վոր Ռուստամը իմանա հա:

Յերաժիշտները կրկին պարելու չեղանակ հնչեցին, և խոսողները շտապեցին պարի հանդեսը:

Ռուստամի դեմքը թղթի գույն ստացավ, աչքերը վառվեցին, շրթունքները կապտեցին, ծնկները թուլացան, և քիչ մնաց թափափվելու դահլիճի հատակի վրա:

— Ի՞նչ եմ տնում, տղամարդ չեմ, ի՞նչ ե,—ասաց նա ինքն իրան, աշխատելով անտարբեր ձևանալ:

Նա բեղերը և շրթունքները կրծոտելով, մի քանի վայրկյան մնաց անշարժ:

— Ձե՛, ելի համբերութուն և հարկավոր, կարելի չե սուտ ե,—ասաց նա կրկին ինքն իրան,—կարելի չե այս մարդիկ նրանց թշնամիներն են: Համբերութուն, լոթանասուն և չերկու ժամ համբերութուն: Տեր աստված, տուր ինձ կարողութուն համբերելու:

Այս ասելով, Ռուստամը շտապեց դեպի հանդիսականները:

· VIII

Հարսանիքի չորրորդ օրն եր և առավոտ: Գյուլնազն և Բարխուդարը վաղուց արդեն զարթել էին քնից: Իսկ Սմբատը մյուս սենյակում դեռ ևս քնած էր: Սովորականից դուրս այսօր նրան լերկար միջոց չեին զարթեցնում քնից, թեև խանութ գնալու ժամանակն արդեն անցել էր:

Բարխուդարն, չուր մշտական ընկեր չիրուլը բերանը դրած, շարունակ ծխում էր, սենյակում չեա ու առաջ քալելով: Գյուլնազը, պատուհանի դեմ նստած, նայում էր դեպի փողոց: Յերկու ամուսինների դեմքերն ևս արտահայտում էին խորին անհանգստություն: Բարխուդարն ամեն անգամ ծխի քուլաները բերանից բաց թողնելուց հետո, դուրս եր թողնում կրծքից մի խուլ հառաչանք, վորից հետո նա մի քանի վայրկյան կանգնում էր և չուր անորոշ հայացքը ձգում դեպի սենյակի առաստաղը: Գյուլնազը ստեպ-ստեպ չերեսը բոլորովին կապնում էր լուսամուտի չերկաթե վանդակի փեղկերին, կարծես, աշխատելով վորքան կարելի չե հեռու ու հեռու նայել: Յերբեմն Բար-

խուզարը մոտենում եր լուսամուտին և նույնպես անհամբերութեամբ դեպի փողոց նայում:

— Զի՞ չերեւում,— հարցնում եր նա Գյուլնազին տնդադար հագիլ լսելի ձայնով:

— Համբերիր, համբերիր, ալ մարդ, ինչ ե սիրտդ բերանդ ընկել... ուՖ,— խոսեց, վերջապես, Գյուլնազը: Շատ դարձանալի մարդ ես, ինքդ ասում ես. «չեմ հավատում», ելի հենց չեա հանգստանում: Յեկավ չեկավ մեկ չե՞, ի՞նչ ես վտաքի ձեռքի ընկել:

— Բեզ ու ինձ համար մեկ ե, բա խալիսը՞, բա ինչի՞մ կկապես նրա բերանը:

— Տունը քանդվի ես աղաթը դնողի, տունը քանդվի հաս: Տանջվիր, չարչարվիր, աչքդ ջուր արա, թե ինչ ե մի պոչը կտրված Շրպպանիկ պիտի գա ու քեզ աչքալուսի բերի: Բաս մեր աչքերը, բաս մեր սիրտը, մենք չե՞նք ճանաչում մեր չերեխին: Ո՞ւմ տանն ե մեծացել նա, խալիսը՞, թե՞ մեր աչքի առաջ: Զե, պիտի Շրպպանիկը մեջ տեղ լինի, չե, նրա մատը հենց խառն պիտի լինի: Վալ մեզ, վալ մեզ: Հերիք ե մի հուշտ, մի սխալ, հերիք ե մի որ բանը ուշանա, մեկ ել տեսար տղան կատաղեց: Մեկ ել տեսար տղի հոր ու մոր, բարեկամների, ազգականների լեզուն փորներն ընկավ, սառան, քարացան, կապտեցին ու հառաչ դարձադալ գցեցին. «ձեր տված աղջիկը եղպես ե, հա ենպես»: Տեր, տեր արարիչ աստված, տեր, մեղա քո դորութենին, դու դատիր, չերկնային անեղ թագավոր: Դատիր, տես, մեր բախտը, չերեխիս բախտը ում ձեռքումն ե:

— Հերիք ե, հերիք ե, ինձ համբերութեանից մի հանիր: Մտիկ արա դուրս, տես գալիս ե, թե չե:

Գյուլնազն չերեսը կրկին կպցրեց պատուհանի վանդակին:

— Վտադ կտարվի, վիզդ կտորվի, Շրպպանիկ կնիկ, դե չեկ ելի:

— Միրտս ասում ե, վոր ելի մի բան կա, ալ կնիկ, թեպես ես լույս ցերեկվա պես պարզ իմանում եմ ու հավատում, վոր խելի բան չկա:

— Համբերիր. անհամբերութեանից միքտդ ել, սիրտդ ել մոլորվում են: Իզուր տեղից վատ-վատ բաներ ֆիքր մի անիլ, ալ մարդ, հոգի ունես տալու անեղ դատաստանի առաջ:

— Հըմ, հոգի ունիմ: Հոգիս, Գյուլնազ, սատանաների բաժին կլինի, չեթե... չեթե չերկու սհաթ ել Շրպպանիկն ուշանա:

— Յերեսիդ խաչալնքիր, մեղա չեկ ասածուն, չարը մտքիցդ հանիր: ՈւՖ, աչքդ դուրս գա, Շրպպանիկ:

— Մտիկ տուր, մտիկ տուր, Գյուլնազ:

Բարխուդարի խոսակցութիւնն ու շարժվածքը վերին աստիճանի տխուր և հուսահատական ելին:

— Ախ, գալիս ե,—բացականչեց հանկարծ Գյուլնազը, վեր թռչելով:

— Թող գա: Չար, թե՞ բարի, խալտառակութիւն, թե՞ պատիւ: Գյուլնազը շտապով դուրս գնաց:

— Դիւ գլխի, ա՛յ ջան, ա՛յ շորոշ,—լսվեց դրսից Շրպպանիկի սուր ձայնը:

Բարխուդարը մի հառաչանք արձակեց կրծքից:

— Ներս վազ տուր, ա կնիկ, աչքդ լլուսի, խալաթս, ա կնիկ, ա մարդ, Շրպպանիկի գլխին մին թաղա շալ, չա չարշով, չա թոռ, չա արուշուտի քլալայադի:

Այդպես բացականչելով և պարելով ներս վազեց Շրպպանիկը:

Բարխուդարի մօտը դեմքի վրա միքանի վայրկյան փայլեց ուրախութեան մի ժպիտ այնպես, ինչպես լերբեմն ձմերալին մօտը լերկնքում արեգակն ե ամպերի տակից փայլում:

— Խալաթը գլխիդ ե,—բացականչեց Գյուլնազը, մի նոր և նուրբ բրդյա շալ ձգելով Շրպպանիկի գլխին:

— Արեւի՛ լուսի պես պարզ: Աստու հարաշտարակի պես սուրբ. առն, դա Սանամն ա խրկալ ձեզ աչքալլուսի:

Շրպպանիկը գրպանից հանեց և Գյուլնազին տվաւ մի մեծ կարմրափայլ նուռ, վոր դարդարված եր վոսկյա թերթիկներով և վրան միքանի մեխակներ ցցած: Բացի դրանից նա թաղուն Գյուլնազի ձեռքը դրեց և՛ մի ճերմակ լաթի կտոր, վորի վրա Գյուլնազը, մի խորհրդավոր հայացք ձգելով, իսկույն թաղցրեց փեշի տակ:

— Աս շալը կնկանդ խալաթը, բաս քո՛ւնը, ա մարդ,—դարձաւ Շրպպանիկը Բարխուդարին, համարձակորեն լերկու ձեռներով քոնելով նրա ունիքից:

Բարխուդարը ձեռք տարաւ լուր գրպանը, հանեց մի հինգ մանեթանոց թղթադրամ և յփեց Շրպպանիկի ճակատին, մի խորը հառաչանք արձակելով կրծքից: Այդ վայրկյանին, կարծես, վշտացաւ հոր կրծքից վալը ընկաւ մի ահագին ժայռ, և նրա նիհար ու դալկացած ծերունական դեմքը փայլեց քաղցր ժպիտով:

— Տեսնում ես, Բարխուդար, չես քեզ ասում ելի, վոր իմ լերեխան հրեշտակի պես անմեղ ե,—ասաց Գյուլնազը, ուրախութիւնից դողալով:

— Բարխուդարը քեզանից լավ եր իմանում, վոր անմեղ ե, թող մարդկանց լեզուները չորանան: Որես դեն ել չես պարզերես եմ աշ-

խարհում,—բացականչեց Բարխուդարը և սկսեց ծխախոտի չոր տեղեկները ափերի մեջ տրորել, վոր չիբուխը նորից լեցնի:

— Կուժ ծախողանց Սեյրանի բիրիկը շուր իլի, թող հիմի դուռնանները ճաքեն, տրաքեն,—բղավեց Շրպպանիկը, կրծքին յերկու ձեռներով խփելով:

— Դեհ, Շրպպանիկ, դնանք,—հրավիրեց Գյուլնազը:

— Բինանք, քինանք, հանց աս մընուլթիս քինանք, խնամիանք քեզ ան սպասըմ:

Գյուլնազն անցավ մյուս սենյակ, հագուստը փոխեց և Շրպպանիկի հետ շտապով դնաց Սանամանց տուն:

Բարխուդարը մնաց միայնակ: Նա մոտեցավ մյուս սենյակի դռներին, բաց արավ, նայեց ներս և կրկին փակեց: Հետո նա լետ դարձավ, արխալուղի թևի միջից դուրս հանեց մի բավական յերկայն պարան, վորը շատ սապոնված լինելուց փայլում էր: Հետո գդակը գլխից վերցրեց, դրավ մի կողմ և պարանը ձգեց հատակի վրա լուր վոտների տակ: Նախով աջ ու ձախ, Բարխուդարը չոքեց պարանի առաջ, յերեսը դեպի արևելք, ձեռները խաչաձև դարսեց կրծքին և, գլուխը քիչ թեքելով դեպի աջ ուսը, աչքերը հռեց սենյակի առաստաղին: Նա ազդթում էր:—«Տեր, ամենակարող աստված, տեր, ամենակարող աստված, շնորհակալ եմ, հաղար անգամ շնորհակալ եմ, վոր դու քո կարող զորութլունով ազատեցիր ինձ ևս չար մտքից: Փառք քեզ, մեծ և քո զորութլունը: Դու չթողիր, վոր իմ մեղավոր հոգին սատանաների բաժին լինի: Բաշխիր, տեր աստված, բաշխիր, չար սաթախելը ինձ մոլորեցրել էր, աչքերս սևացրել էր, լես քեզ մոռացել ելի: Յերեսառ անմեղ եր, անմեղ եր, լես ել հավատում ելի մոռումս, բաց ել չարը ինձ միջանի սհաթ համբուրութլունից հանեց, մոլորեցրեց: Ումուդ եմ, վողորմած աստված, վոր հիմա կբաշխես, մեղա լեմ գալիս, առաջիդ չոքած ազդթ եմ անում, վոտներդ լիղում եմ»:

Բարխուդարը գլուխը թեքեց կրծքին և արխալուղի թևով սրբեց աչքի արտասուքը: Այնուհետև նա կրկին գլուխը բարձրացրեց և մի բոպե ևս փնթփնթաց քթի տակ և, գդակը ծածկելով, բարձրացավ տեղից: Նրա դեմքն աշժմ խաղաղ և հանգիստ էր: Նա պարանը շալըրտեց մի անկյուն:

Նորապսակների տանը հյուրերն հավաքվել էին: Դրանք Ռուստամի ամենամոտիկ բարեկամներն և ազգականներն էին, վորոնք

Սանամի հրավերով լեկել ելին հարսանիքն ավարտելու: Չնայելով վոր առավոտյան դեռ տասնութակ ժամն եր, սեղանն արդեն պատրաստ եր, և հյուրերը շարվել ելին նրա շուրջը: Ռուստամն ացժամ ևս վտոքի վրա ծառայում եր հյուրերին: Իսկ Սուսանը մյուս սենյակումն եր, ուր ժողոված ելին կանաչք:

Գյուլնազը Շրպալանիկի հետ մտավ կանանց բաժանմունքը: Սուսանն չերեսն հաստ քողով ծածկած նստած եր սենյակի մի ծալքում, հանդիսականներից բավական հեռու: Նրա մոտ նստած եր Սուսամբարը: Յերբ Գյուլնազը ներս մտավ, Սուսամբարը քչիչաց Սուսանի աշխարհին, և վերջինն չուր հագուստն ուղղելով, հանդիսավոր կերպով վտոքի կանգնեց: Ուրախ ժպտոն չերեսին, Գյուլնազը մոտեցավ նրան և մի ջերմ համբույր դրոշմեց չուր սիրելի աղջկա ճակատին:

— Շաննոոր իլի, շաննոոր իլի, ուրախութենով ապրեն, աճեն, բազմանան,— բացականչեցին հանդիսականները գրեթե միաբերան:

— Շոբս, այ եթո, դյուսմանն գյոզի էյոռ ոլսուն¹,— մեջ մտավ Շրպալանիկը, վոր չուր դերը չերեք չեր մոռանում:

Գյուլնազը մի թղթադրամ խփեց Շրպալանիկի ճակատին, հանդիսականները հետևեցին նրա որինակին:

Ներս մտավ Ռուստամը: Գյուլնազը դիմավորեց և նրա ճակատը նուշպես համբուրեց: Ռուստամն ամաչելով և կարմրելով թեքեց չուր գլուխը և հարգանքով համբուրեց Գյուլնազի աջ ձեռը: Դա մի հանդիսավոր բոպե չեր, վոր անցավ խորհրդավոր լուսթյամբ: Շրպալանիկն եր, վոր չուր սովորական չերգով ընդհատեց այդ լուսթյունը:

Սկսեցին ճաշել: Ռուստամն անցավ տղամարդկանց բաժանմունքը: Այժմ նա ուրախ եր, նրա չերեսին այլևս չեր նշմարվում անհանդիստ մոալլությունը, ինչպես հարսանիքի գիշերը:— «Ախ, չաբ լեզուներ, չաբ մարդիկ, ինչ բաներ ելիք հնարում մի անմեղ արարածի անունը կեղտոտելու համար»,— կրկնում եր նա ինքն իրան:

Շրպալանիկի ուրախությունն անսահման եր: Նա իրան համարում եր որվա հերոսուհի, վորովհետև խիղճը հանգիստ եր: Անդադար մոտենում եր Սանամին և ուրախ-ուրախ քչիչում: Ինչ ելին խոսում նրանք—այդ միայն իրանք գիտեցին: Սակայն Սանամի հարաբերության մեջ նշմարվում եր խորին շնորհակալություն դեպի Շրպալանիկը: Հանգիստ եր նուշպես և Գյուլնազը: Նա մի առանձին քնքշությամբ եր նայում Սուսանին:

Բայց ամենից ուրախ, գոնե ըստ չերեւելին, եր Սուսամբարը: Նա անընդհատ ծիծաղում եր, չերեքն ծափահարում, դանազան սրա-

¹ Թշնամու աչքը կուրանա:

խոսութիւններ անում և հանդիսականներից սրան ու նրան ծաղրում։
Իսկ մանավանդ նա ակնարկում եր Շրպպանիկին, վոր չեր կարողա-
նում, ինչպես ինքն եր ասում, «լպտածի ոֆտից գալ»։

— Շրպպանիկը վոր կա, մի մեռել լվանող ժամհար ե,— ասում եր
Սուսամբարը,— ինչ մեռել վոր ասեք, լողացնում ե։ Մեռելն արքայու-
թիւն կզնա, թե դժոխք, այդ նրա գործը չե, միայն թե մեռելահախը
ստանա։ Ձե, Շրպպանիկ։

— Լվացած մեռալներս չիմ արքայութիւն ան քինամ,— պատաս-
խանեց Շրպպանիկը։

— Ինչպես չե, հըմ, հիմա այնքան աներեսն ես, վոր կասես թե
Սուսամբարին ել արքայութիւն ես ուղարկել։

— Հանց մեջումն ես նստած քի, ա բախտավար։ Հիչ ա իլալ,
մարդդ ել փող, ել դովաթ, ել տուն, ել տեղ, շիր ու շնորք, ի՞նչն ա
պակաս չարար։

— Մարդս հարուստ ե, բայց մի կտոր բան կա, վոր չի կարո-
ղանում առնել։ Դրան ի՞նչ կասես։

— Յարար նա հի՞նչ բան ա։

— Այ, այստեղ վոր կա։

Սուսամբարն այդ ասելով, աջ ձեռը դրավ յուր ձախ կրծքին։

— Սիրտը՞դ։

— Հա, մի կտոր միս, վոր մարդս չի կարողանում առնել ին-
ձանից։

— Հալբաթ շատ թանգ ես ծախում։

— Եժան, բայց մարդս շատ ժլատ մարդ ե։ Նա որական տանն
անգամ բարկանալուց և ամեն սուտվոտ քացախած լերեսը վրես ծոե-
լուց ավելի վոչինչ չի տալիս։ Շատ եժան չի, Շրպպանիկ։ Դո իմա-
նալով, քանիսի՞ն ուղարկած կլինես այդ արքայութիւնը։

Սուսամբարի այդ խոսքը հանդիսականների մեջ ձգեց մի փոք-
րիկ աղմուկ։ Այս ու այն կողմից սկսեցին ծաղրել, ծիծաղել, բարկա-
նալ և հանդիմանել Սուսամբարին։

— Նոր-նոր հավեր են դուրս չեկել, չերկաթի ձվեր են ածում,—
ասաց մեկը։

— Ով ե տեսել ինչչո՞ւ որս, վոր կնիկը մարդին ուրիշների մոտ
բամբասի,— ավելացրեց մի ուրիշը։

— Ախար դե կարդացած ա, բաս շնորքը շանց չտամ, վիշտ, չերե-
սիդ մեռուներ թափվի, հալլա,— մեջ մտավ չերբորդը, քիթ ու պոռնոգը
մի կողմ շուռ տալով։

Դա Սանամի տալով աղջիկն եր, մի բավական չափահաս կին։

— Յես դրուստն եմ ասում,—շարունակեց Սուսամբարը: — Դուք ձեր ցավերը ինչքան ուզում եք թագցրեք ձեր կծքի տակ, վոր այնտեղ սիրտներդ մըղմըղ ուտի հա ուտի: Դու չես խնամի, — դարձավ նա Սանամի տալոջ աղջկան, — դու չես Շըպպանիկի լվացած մեռելներից ես, ասա տեսնենք, որական քանի անգամ ե Ազրահիլը մեջքիդ վրա փխավ ուտում: Մի վախենար, չես շատ լավ եմ իմանում, գլխիդ մահերի չափ մարմնիդ վրա ճիպոտի կապույտ դոլեր կան: Բայց դու հենց ելի դրան ու նրան ասա — չե: Ումը վոր հավատացնես, ինձ հոչես կարող:

— Յես իմ մարդիս ապրանքն ամ, դուլն ամ, նա իմ գլխիս տերնա, հինչ վոր ուզում ա, անըմ ա, քեզ հի՛նչ դոռ ա հասնըմ: Թե վոր նա ինձ թագըմ ալ ա, սիրելուցն ա թագըմ:

— Խոսք չկա, սիրելուցն ե թախում, բաս: Հըմ, թքեմ են սերի վրա, վոր ճպոտի լեզվովն ե խոսում. տար, տար այդ սերը քեզ լինի վոտքով ու գլխով, խնամի ջան: Կնոջ ապրուստը, որը ինչ ե, վոր լուր մարդու աչքում մին ձիու պատիվ ել չունի: Մարդդ ձիուն որական աչքան թումարում ե, խոշորեշ անում, ճակատից ու աչքերից պաչում, ինչքան վոր ճիպոտն ե քո մեջդ պաչում: Թագցրու, թագցրու ինչքան ուզում ես, ելի ճոթը դրսուլն ե:

— Հըմ, խրատողիդ չերեսին կպչես հալլա, ախր դարափալթար կուլսից ինչ ելիր սովորելու: Առա են:

Այս ասելով Սանամի տալոջ՝ աղջիկը բարկացած, աջ ձեռի հինգ մատները չոեց ե Սուսամբարին ճանգ արավ: Հալտնի չեք ինչպես կվերջանար այս վիճաբանութունը, գուցե կռիվ դառնար, չեթի Շըպպանիկը չընդհատեր:

— Լավ ա, ա կնանիք, լցուզյուններիդ փորներդ քաշեցեք, ձեզի չան կանչալ, քի մարդի ուրախութունը հարամ անեք, — ասաց Շըպպանիկը ե, դահիրան վերցնելով, սկսեց ածել ու չերգել: Սուսամբարն այժմ թեքվեց դեպի Սուսանի աղանջը ե սկսեց քչփշալ:

— Հիմա դրանք կասեն, թե դու չես բախտավոր կնիկ ես: Չեն իմանում, վոր սիրտդ ու հոգիդ նրա մոտն ե, մարմինդ են տլիլ Ռուստամին, վոր չարչարվես ու տանջվես:

— Խոցոտված սրտիս աղ մի շաղ տուր, Սուսամբար:

— Միրտս կսկծալուց եմ ասում, մի վախենար: Յհ, հինչ պիտի արած, ճարդ կտրված պիտի վիզդ ծռես ու տանես ինչ-վոր ճակատիդ գրած ե, հո աստուծո հետ չես կարող կռիվ անել:

— Ուզո՞ւմ ես դրուստն ասեմ, Սուսամբար:

— Ասա:

— Յես ել առաջվա պես չեմ տանջվում:

— Ճարդ ինչ, պիտի սովորես ելի:

— Չեմ սովորիլ, բայց վոր ասում եմ չեմ տանջվում, ինձ համար չեմ ասում, իմ բանը պրծած ե:

— Ո՛ւմ համար ես ուրախ:

— Ծնողներին համար, հենց վոր նրանց աղատեցի, ել, կարծես, չես ցավ չունիմ: Տեսնում ես, մալրս ալսոր ինչպես ուրախ ե, տես, հենց նրա ուրախ լինելն ե ինձ հանգստացնում: Խեղճ կնիկ, մի տարի չեր, վոր հավիած ու պշկած չերեսդ ծիծաղ չեր տեսնում:

Այս խոսքերն արտասանելու միջոցին Սուսանի աչքերից կրկին ընկան արտասուքի մի քանի կաթիլներ և թրջեցին նրա ալտերը: Նա հանեց արխալուղի գրպանից մետաքսյա թաշկինակը և սրբեց չերեսն ու աչքերը: Թեպետ նա արտասովում եր, բայց չեր հեկեկում, և նրա մաշված կուրծքը չեր բարձրանում ու ցածանում, ինչպես հարսանիքի չերեկու:

— Հերիժ ե, Սուսան, արտասուքիդ կաթիլները ասեղների պես ծակոտում են կոտրված սիրտս: Որես դեն լացդ անոգուտ ե, հիմա զոռով քեզ համար պիտի ուրախություն ստեղծես:

— Սուսամբար, մի բան խնդրեմ:

— Հրամայիր:

— Շարաթը մի քանի անգամ կզնաս մեր տուն, վոր մորս ժամանակը ուրախ անց կենա:

— Աչքից չ՛րա:

— Հորս մասին ել տեղեկություններ կրերես ինձ:

— Լավ:

— Մի բան ել եմ ուզում ասել, քաշվում եմ:

— Ինձ հետ ել ես նաղ ու ըաղ անձեմ, Սուսան:

— Լավ, կասեմ: Հարսանիքի գիշեր, վոր չես ուշաթափվեցի, Սմբատը վաղ ե տալիս մի մոտիկ գինեւոտն ինձ համար ջուր բերելու: Այնտեղ նա պատահում ե Սեյրանին, կովում են, Սմբատը թակում և Սեյրանին: Այս բանն չերեկ ինքը, Սմբատը պատմեց ինձ: Սուսամբար, չեթե ինձ սիրում ես, հենց ալսոր գնա նրանց տուն ու Սեյրանի մասին ինձ համար տեղեկություն բեր: Սեյրանին թագուն տես, ինձանից բարեիր և ասա, վոր չես ելի առաջվա Սուսանն եմ: Աշխատիր սիրտ տալ, կարելի չե մոռանա ինձ և մի կերպ ճանապարհի գա, թեպետ խելքս չի կտրում, վոր նա փոխվի: Ասա, թող ինձ ների, վոր չես ալսքան չարչարեցի իրան: Իմացմիր: Այս իմ վերջին խնդիրն ե, Սուսամբար:

Սուսանը թեև շնջելով, բայց չուր խոսքերը արտասանում եր ծանր և անհողդողդ լեզանակով, ամեն մի բառ առանձին շեշտելով և իրրեմն խոր հառաչելով։ Յեմ թեպետ արտաքուստ խաղաղ եր, սակայն նրա աչքերի մեջ լերևում եր խորին հուսահատութիւն։ Նա թաշկինակը տարավ դեպի աչքերը և սրբեց տամուկ թերթերունքները։ Հանդիսականները չեղին նկատում, թե Սուսանի լերեսքողի տակ ինչ ե կատարվում։ Նրանք զբաղված էին ճաշով։

— Դեհ, Սուսամբար, ել ուրիշ խոսք հունիմ,— շարունակեց Սուսանը,— ինչ վոր խնդրեցի— կկատարես, աղաչում եմ։ Հիմա մի քիչ կերակուր տուր, վոր մորս մոտ ուտեմ։

Սուսամբարը վեր կացավ տեղից և վտանավորին հրամայեց մի ավսե փլավ բերելու։ Սուսանը քողի տակ սկսեց ճաշել։

Վերջապես, ճաշն ավարտվեց։ Հանդիսականները վերջին անգամ շնորհավորեցին նորապսակներին և հարչուր տեսակ աղոթքներով մաղթեցին նրանց բախտավորութիւն ու ցրվեցին իրանց տները։

Մեղրամիսն անցավ, Ռուստամը ճանապարհ ընկավ Թեյմուրխան-Շուբա չուր առևտրական գործերով։

X

Չմեռն եր, հյուսիսային քամին կատաղությամբ ձյունի խոշոր ու չորթ քուլաները սրածից հալաքելով, դարնում եր Հայրապետանց տան դռներին ու պատուհաններին։ Յերեկո լեր։ Մարիամ բաջին մինչև մեջքը քրտինի տակ խրված, առջևը մի սկուտեղ դրած, բրինձ եր մաքրում։ Նա ընթիրքի համար պիտի փլավ պատրաստեր, վոր դեռ առաւփտյան բազար գնալիս պատվիրել եր Հայրապետը։ Չնայելով, վոր որը բավական մթնել եր, Մարիամ բաջին ճրագը վառել չեր։ Նա ուզում եր բրինձը ընտրել, վերջացնել ու հետո տեղից վեր կենալ։ Սենյակում բացի նրանից վոչ վոք չկար։ Դռան ճեղքերից ձյունի կարկտանման հատիկները, ներս սրընթալով, կիտվում էին կիսամաշ կարպետների և փսիաթներով ծածկված հատակի վրա։ Յերեմն-յերեմն քամին ալնալես սաստկանում եր, վոր վղղալով, կարծես, ուզում եր սենյակի դռները դուրս հանել կրունգից։

Վերջին ամիսները Մարիամ բաջին բավական փոխվել եր։ Ծերութիւնը այդ կարճ ժամանակում նրան միանգամայն հաղթել եր։ Նրա նիհար բազուկները հալվել էին ու կպել կողքերին, լերեսի դունասպառ կաշին խորշումել։ Կուչկուչվել եր աչքերի տակ, պնչերի շուրջը և ծնոտի վրա։

Մի տարուց ավելի չեր, վոր նա դադարել էր գլուխը հի-
նալով ներկելուց: Նրա գլխի մազերը այժմ չերկու գույն ունեւին—
արմատից սկսած մի մառնաշափ՝ ձերմակ, իսկ այս տեղից մինչս
ծալըը՝ կարմիր: Այդ մի տեսակ դաժանութիւն էր տալիս նրա դեմ-
քին: Նա մտածում էր չուր միակ զավակի մասին, մտածում էր, և
նրա սիրտը կսկծում, վորովհետև չերկար մտածողութիւնից հետո վոչ
մի ուրախալի չեղբակացութեան չէր հասնում:

— Եսոր դրուստ վեց շաբաթ է, վոր նա գլուխ և վերցրել ու
գնացել դարբնութիւն, — ասում էր ինքն իրան Մարիամ բաջին հա-
ռահելով: — Վերտեղ և գնացել, — վոչ չես գիտեմ, վոչ Հայրապետը, վոչ
եւ մի ուրիշը: Սեյրան, Սեյրան, թաթափիլ անեն քախտավոր մե-
րերը, նրանք եւ աղա ունեն դարբն տեղերում, չես ել ասում եմ, վոր
ունիմ: Եւ, կյանքս մաշվել է, մի մազ դառել, եսոր եգուց նա չիլ
կկտրվի: Յերկնային թագավոր, արեւ մայր և մտնում, ելի դու ինձ
չես խնայում: Ի՞նչ անեմ, ելի փառք քո դորութենին, ելի թող քո
կամքը լինի:

Մարիամ բաջին մի հայացք ձգեց սենյակի առաստաղին և չերե-
սին խաչակնքեց: Հետո նա մի քիչ իրանից հեռացրեց բրնձի սկու-
տեղը, ձեռները ծալեց, դրավ քրտինի ծալքում և գլուխը դրավ կռների
վրա: Անցավ մի րոպե, նա գլուխը բարձրացրեց, սկուտեղը տուջ
բաշեց և դարձյալ սկսեց ինքն իրան խոսել:

— Տերեւ ծառից, մազը մարդու գլխից առանց քո հրամանի չի
ընկնում, տեր աստված: Ինչ լինում է, քո կամքովն և լինում, որհնչալ
լինիս դու և որհնչալ լինի քո կամքը: Ամենքին եւ քախտավորեցրիւր,
ամենքի բանն եւ զրստեցիւր, ինչո՞ւ, ետրաբ, չես լի՞նչ մեղավոր ելի,
վոր դու ինձ ես որին հասցրիւր: Ինչո՞ւ համար՞ ետրաբ, աստված, իմ
սեղին հեռացրիւր ինձանից, զցեցիւր չոլերը, քամքախտացրիւր: Ասա,
վերտեղ ե նա, լի՞նչ գործի չե: Ինքն ասաց, թե մի տղի հետ ընկերա-
ցել և ու նրա հետ գնում է Ղուբա, վոր լաղգու շալեր առնի ու բերի
եստեղ ծախելու: Ի՞նչով և առնելու: Հայրապետը փող չի տվել նրան,
ինքն եւ տափ դատարկ էր, մին սև զրուշ եւ մոտը չուներ: Ինչքան
ֆիքք եմ անում — բան չեմ հասկանում: Ինքն ասում էր, վոր Ղուբա
չ և գնում, հիմա մեկն ասում և Դերբենդումն է, մյուսը՝ Շուբումն է,
մի ուրիշը՝ Պետրովսկումն է, եւ չգիտեմ ինչ: Ետրաբ, իմից կարող
եմ մի դրուստ խաբար իմանալ, ի՞նչ կասի ինձ: Հայրապետին խոսեց-
նել չի լինում, Սեյրանի անունը տալիս նրա ջինները հովաքվում են:
Եւ, ետրադան աստված, ելի դու, ելի քո փեշիցն եմ բռնում, դու հա-
լը նահախին չես տալ: Իմ չերեխաս մեղավոր չեր, նրանք փչացրին,

խելքից հանեցին: Սաբարի տունը քանդվի չուր գլխին, հա, քանդվի սաբարի տուն ու տեղը:

Յեւ Մարիամ բաջին վերջին խոսքերն արտասանելու ժամանակ գլուխը կրկին բարձրացրեց, նայեց առաստաղին և աջ ձեռով մի քանի անգամ կրծքին զարկեց: Այդ բուպելին նրա աչքերը, դեմքն և առհասարակ բոլոր շարժվածքը լցված էին խորին սրտմտությամբ: Քանի վոր Սեյրանը Շամախուէն եր, քանի վոր նա Մարիամ բաջու աչքի առաջն եր—Մարիամ բաջին սակավ անգամ եր դժբախտության հանցանքը ուրիշների վրա ձգում: Նա մեղադրում եր չուր վորդուն, նրան եր համարում բոլոր անցքերի գլխավոր պատճառը: Իսկ չեթե պատահում եր, վոր Մարիամ բաջին մի ուրիշին մեղադրեր, այդ լինում եր աչն ժամանակ, չերը Սեյրանին հանդիպած եր լինում մի նոր դժբախտություն, ինչպես աչն առավոտ, չերը Սեյրանը գիշերով գինեւտանը թակվել եր: Այժմ, չերը Սեյրանն ոտարության մեջ եր, այժմ Մարիամ բաջին չուր վորդուն անմեղ եր համարում և գրեթե անպայման անմեղ: Այժմ նա հավատացած եր, վոր Սեյրանը անբախտացել և վոչ չուր «գժություններն», այլ ուրիշների պատճառով:

— Ուֆ, Բարխուդար,— շարունակեց Մարիամ բաջին, կրծքին խփելով,— Բարխուդար, ես չերեկո ժամտժամքին կուրծք եմ թակում ու աստված կանչում, վոր նա քո հախին գա: Հա, Բարխուդար, կնիկըդ որս ընկնի: Հա, տափը փուշ դառնա, դու վոտաբաց լինիս, ինչտեղ վոտ կոխես, քեզ ծակծակի: Հա, կսկծալի հառաչդ, դադ ու բիդադդ, աման ալլահդ չերկինք բարձրանա, աստծու ականջին չհասնի: Դու, դու, քլաֆթառ, դու ես որին հասցրիր բալիս: Հըմ, հիմա լինչ ցավ ե կպել քեզ: Իսկի: Հիմա բախտավոր աներ ես, փեսա ունես, կնիկդ պապար-պապար և անում առաջիդ, աղջիկդ դառ ու դաւաբֆի, վոսկի ու արծաթի մեջ ե ապրում: Աղջկադ մի ձեռը չեղում, մյուսը՝ մեղրուէն և, եսոր եգուց ել մինը կըցգնի, բաներդ ել լավ կըբստովին:

Ավարտելով այս մենախոսությունը, Մարիամ բաջին կրկին լռեց և խորասուզվեց մտածողության մեջ: Այդ ժամանակ քամին ալիլի սաստկացավ, պատուհանի ապակիները սկսեցին շարժվել իրանց տեղերում: Դռները բացվեցին և ուժգին թափով փակվեցին, ներս թողնելով ձյունի ալիքները:

— Ուֆ, աշխարհը քարուքանդ իլավ: Յերկնքի փարդան ճղվել և, աստծու բարկությունը գլխներին և թափվում: Ի՞նչ տեղ մնաց ես մարդն, յարաբ: Կիրակի գիշեր ե, չերի ժամ և գնացել աղոթք անելու: Եսրաբ, հիմ համար ես աղոթք անում: Անխդճմտանք մարդ, սիրտդ խաշխաշ հարելու քարի պես պնդացել և ու սե սեացել, չի ցավում մինիկ չերեխիդ համար:

Մարիամ բաջին միքանի վայրկյան ևս լռեց:

— Յերեկ լերեկոյան Սուսամբարը ևստեղ եր: Լավ կնիկ և, խեղճը ինքն ևլ լաց իլա՛վ: Նա ինձ սիրտ եր տալիս: Բայց ինչքան հարցրի, նա լել մի դրուստ խաբար չկարողացա՛վ ասել Սեյրանիս մասին: Խնչ կպատահի, ետրաբ, չեթե Սեյրանը Շուրայումն ե: Հակառակի պես, Լն գլուխախորով Ռուստամն ևլ ե Շուրայում: Յարաբ, Սեյրանս ինչ կասի նրան, Լն մեռածն ևլ, թիկնամեջը տափին կպածն ևլ ինչ կանի: Սեյրանս տաքարչուն տղա, Ռուստամն ևլ հյուրսաթափ Ագրահիլի ճուտ և, ով ե իմանում, դարիբ քաղաքում լերեխիս գլխին ինչ ոչին կբերի:

Մարիամ բաջին բրինձը վերջացրեց, սկուտեղը մի փոքր իրանից հեռացրեց և քրտինի լերեսը ձեռով մաքրեց բրնձի հատիկներից: Հետո նա մի ձեռը սննչակի հատակին, մյուսը քրտինի ծալքին հենելով, ուզում եր բարձրանալ, չերբ դուռը հանկարծ բացվեց և զգուշութչամբ ներս մտա՛վ ձուռնով սպիտակացած չարշովի մեջ փաթաթված մի բարձրահասակ կին:

— Ողորմի աստված:

Մարիամ բաջին զարմացած լետ նայեց և կրկին նստեց տեղը: Ներս մտնողը Գյուլնազն եր: Միքանի վայրկյան լերկու բարեկամները նայեցին միմյանց, թեև մութը թույլ չեր տալիս պարզ վորոշելու իրարու գեմքը: Մարիամ բաջին ճանաչեց Գյուլնազին:

— Ողորմի աստված, — կրկնեց Գյուլնազը, չարշովը գլխից հանեց և ձուռնը թափ տվա՛վ:

Մարիամ բաջին զարմացական հայացքով նայեց նրան վոտից ցղուլիս և կոպիտ ձայնով պատասխանեց.

— Վոչ—ողորմի ծնողացի:

Այս ասելով, նա բրնձի սկուտեղը առաջ քաշեց և ինքն իրան տմտաց. «չարաբ, վճիբ քամին ե աներեսին ևս կողմ քշել»:

— Մի զարմանալ, Մարիամ բաջի, քուլիդ լեկել ե քեղանից հալ-ովհալ իմանալու, — շարունակեց Գյուլնազը, ուշադրութչուն չդարձնելով Մարիամ բաջու կոպիտ պատասխանի վրա:

Նա չարշովը մի կողմ ձգեց և, առանց հրավիրվելու, նստեց քրտինի ծալքին:

— Տափին տիպչեն ետրաբ քուլը ունեցողները, չես քուլը չունեմ, — ասաց Մարիամ բաջին, լերեսը Գյուլնազից շուռ տալով և մազերն ուղղելով:

— Մի հուրսոտովիլ, վեր կաց, ճրագը վառիր, վոր լերեսդ տեսնեմ, քանի ժամանակ ե կարոտել Լմ:

— Դուրս լեկ, բանիդ գնա, չես բալղուշ Լմ, սիրում Լմ մեն-մե-

նակ խավար տեղում նստելու Խավարած սրտիս, սեացած որիս ճրագի լույսից ինչ ճար: Թող ճրագը ջուլտ-ջուլտ վառի նա, վորի սիրտն ել ճրագի պես վառ ե, իմը շտուց ե խավարվել:

— Մարիամ բաջի, դու լինիս—մինիկ Սեյրանիդ արեւը, կծված մի խոսիր: Լսիր, մտիկ տուր ինձ, տես իմ սիրտը ուրախ ե, հետո ինձ նախատիր:

— Յարաբ միզդ ե պակաս, թե մմիդ: Ինչ կա, չեկել ես գլխիս, չեմ իմանում, մի տարուց հետո ի՞նչպես իլավ, վոր միտդ ընկանք:

— Վոչ աղս ե պակաս, վոչ մաղս, ինձ պակաս ե քո բարեկամութիւնը,—պատասխանեց Գլուխաղը, ավելի ու ավելի մեղմ չեղանակով:—Աստծուն ե հալտնի, ես մի քամբտխտ տարին ինձ ինչ ե նստել: Մարիամ բաջի, ասելն ավելորդ ե, առանց քեզ վոչ կերածս եմ իմացել, վոչ իմածս: Քունս աղի ու լեղի չե իլիլ, գիշեր ու ցերեկս ախուվախով եմ անցկացրել:

— Իմացանք, կարճ կտրիր:

— Յես չեկել եմ, Մարիամ բաջի, աղաչելու քեզ, վոր դու նահալթ տաս չար սատանին ու ինձ հետ հաշտվես:

— Ի՞նչ, հրեա վազ կտամ:

— Իմանում եմ, դու շատ նեղացած ես, Մարիամ բաջի, բայց...

— Ձեռ քաշիր, աստված սիրես, ձեռ քաշիր: Ձեմ իմանում, ել Մարիամի ինչն ե մնացել, վոր դու նրա հետ բարեկամութիւն անես: Գնա մօտիւ աղջկադ ծոցը ու բախտավոր ապրի, ինչ գործ ունես մեզ պես ասածու ու մարդու աչքից ընկածների հետ:

— Դուզմանս չլինի ենպես բախտավոր, ինչպես վոր իմ աղջիկն ե: Հըմ, ցավերս չես իմանում: Աղջիկս որից-որ մոմի պես հալվում ե, վախս նա չե, վոր շուտով ձեռքիցս դուրս գա:

— Մի վախիր, չի մեռնիլ աղջիկդ, հալա շատ ու շատ կապրի, տիզ կլինի ու պատին կկաշի,—պատասխանեց Մարիամ բաջին դառն հեգնութեամբ:—Կարելի չե նշանածի ֆիքրն ե անում. պրել տուր, վոր դա, աղջկադ քեֆը կբացվի,—ավարտեց նա արհամարհական չեղտնալով:

— Հերիք ե, Մարիամ բաջի, եդ խոսքերովդ երված սրտիս աղ ես շաղ տալիս: Խնայիր ինձ, չես իմանում եմ, վոր դու կսկծալուց ես եղպես խոսում, բայց մեր ովհալն ել իմացիր:

Դուլխաղն աչս խոսքերն արտասանեց աչնպիսի դառն և խղճալի ձայնով ե աչնպիսի վշտալի հառաչանք արձակեց, վոր Մարիամ բաջու խիղճը մի վայրկյան արթնացավ:

Մարիամ բաջին ճրագը վառեց և մեջ տեղ դրավ: Մոմի աղտո լույսը լուսավորեց Դուլխաղի վոսկորացած չերեսը, սպրտնած աչտերը,

ցրտից կապտած շրթունքները և նիհարությունից ավելի ներս թաղ-ված աչքերը: Մարիամ բաջին միքանի վայրկյան նայեց նրա չերեսին, լուռ ու մունջ վերցրեց բրնձի սկուտեղը և գնաց խոհանոց: Շատ չքաշեց, նա՞ կրկին վերադարձավ, նստեց լուր առաջվա տեղը:

— Յերեք որ և Սուսանա ինձ տանջում և լուր աղաչանք ու պա-դատանքով,—սկսեց դարձյալ Գյուլնազը,—խնդրում եմ, վոր քեզ մոտ դամ: Մարիամ բաջի, չերեսս չեր պատում, քաշվում ելի: Յերեխառ ասում եմ. «Թող բաշխի ինձ Մարիամ բաջին, վոր չես նրան եղքան չարչարանք եմ տվել: Եհ, չեմ իմանում, ինչ չերեսով պիտի ասածու առաջ դուրս գամ»: Տեսնում եմ, Մարիամ բաջի, հիմակվանից եմ կյանքի համար և ֆիքր անում չերեխառ, այս բախտավոր լինել եմ:

— Երված սրտիս եղ եր պակաս: Գնա, եղ խոսքերը ասա եմ մարդուն, վորի սիրտը փիհ և կոխած, իմը շտուց և հալվել, չես լինչ կարող եմ անել աղջկադ համար:

— Մարիամ բաջի, դու շատ բան կարող ես անել չերեխիս հա-մար: Հենց վոր նրա աչքն ընկնի աչքիդ, հենց վոր դու առաջվա պես նրա չերեսին մի ուրախ ծիծաղեցիր, իմացիր, վոր վարդի պես կբացվի ու ծաղի պես փարվազ կանի: Յերեք որ և, վոր ինքը հենց քեզ վրա չե խոսում, քեզ և ցանկանում տեսնել:

— Ասիլդ:

— Ասիլս, վոր նահլաթ տաս չար սատանին, չարշով գցես ու ինձ հետ միասին...

— Նրա դուլլուղին վազ տամ, հա՛, Լավ, աչքիս վրա, հրես ես սհաթիս, ըմ, ամաչես վարսիցդ, ամաչես,—ասաց Մարիամ բաջին կես հեգնորեն և կես բարկացած:

— Դու լինես—Մեյրանիդ արեւը, չերեխիս մի սպանիր:

— Ինչ ես դատարկ-դատարկ դուրս տալիս, չես հո չերեխիդ Ալ-րահիլը չեմ, վնչ, կրակ-ալովի մեջ ընկա ելի, տե՛ր աստված:

— Դու ու քո աստվածը, Մարիամ բաջի, հենց մի սհաթով գնանք:

— Ձեռ քաշիր, դու—ես ժամաժամքը:

— Որհնչալ լինի քո վողորմությունը, աստված,—բացականչեց Գյուլնազը, մի աղերսող հայացք ձգելով Մարիամ բաջու չերեսին:

Այդ ժամանակ դռները կրկին բացվեցին, և ներս մտավ Հալրա-պետը ձյունի մեջ կորած:

— Բարի չերեկո, ողորմի աստված,—ասաց նա, Գյուլնազին չնկատելով և փափախը գլխից հանելով, վոր ձյունը թափ տա:

Գյուլնազը շալը քաշեց բերանին, վերկացավ և հարգանքով գլուխ տվավ Հալրապետին:

— Ողորմի ծնողացդ,—պատասխանեց Մարիամ բաջին և նույնպես վոտքի կանգնեց:

Հայրապետն, աչքերը կուչ բերելով, նայեց Գյուլնազին:

— Բարով, ա կնիկ, լուսը քեզ տեսնողին,—ասաց նա մի տյնպիսի բարեկամական լեզանակով, վոր, կարծես, վոչինչ չեր անցել նրանց միջով:

Գյուլնազը գլուխը շարժեց ի նշան շնորհակալութան:

— Նստիր, նստիր, տեսնենք: Եհ, փառք քեզ աստված: Քեչան գյուլնա—գյուլն հաթմազ, ջալտսոն գյուլն գյուլնա: (Անցած ուրին ուր չի հասնի, լեթե ուրերը իրարու կապես):

— Հըմ, եդ վճր աստծուց ե, վոր մեզ միտդ ես գցել, Գյուլնազ խանում,—շարունակեց նա, նստելով քրսինի կողքին և Գյուլնազին նույնպես հրավիրելով, վոր նստի:

— Հըմ, աստ տեսնենք, լինչպես ե լեղել վոր մեզ միտդ ես գցել,—կրկնեց Հայրապետը:

— Մենք ձեզ իսկի մտքերիցս չենք հանել, վոր մեկ ել նորից միտ գցենք,—համարձակվեց շշմալ Գյուլնազը:

Հետո նա շալը քաշեց լերեսին, մի ծնկան վրա նստեց քրսինի մյուս անկյունում:

— Բաս եղպես,—ասաց Հայրապետը և տրխալսդի գրպանից հանեց թամբաքուրի քիսան, գոտիից դուրս քաշելով չիրուխը, վոր լեցնի:

— Որհնյալ լինի աստված: Գյուլնազ ջան, անցավ գնաց մեր առաջվա բարեկամութունը, աչ հաչ, հաչ: Հիմա լել վոր միտս ե ընկնում, ծուխը քթիցս ե դուրս գալիս:

— Արխային կաց, լեկել ե, վոր բարեկամութուն հաստատի նորից: Ձե, ել անցածն անցավ, կոտրված շուշան սաղացնել չի լինի,—մեջ մտավ Մարիամ բաջին:

— Դրուստ ես ասում, Մարիամ, բայց ելի մարդու սրտին հովութուն ե ժամանակ-ժամանակ հին բարեկամներին տեսնելը: Ինչ անեմ, թուրքի խոսքը ուրինալոր ե, ասում ե. «աթանն բիր ողլի, ողա քոռ ողլի»... (Հորը միակ տղան, այն ել փուչ): Սեյրանն իրան ել փչացրեց, ձեր անունն ել սաղ քաղաքով չով արավ դուր տեղը, մեզ ել, հո տեսնում ես, Գյուլնազ, ինչ ուրի գցեց:

— Ողուլը իսկի մեղավոր չե, աստված սաբաբի գլխին քար գցի:

— Քո բանը չե, Մարիամ, դու լեզուդ կծած պահիր: Հերիք ե, հերիք ե, ինչքան ինձ փչացրիր, աչ կնիկ:

— Մարիամ բաջին դրուստ ե ասում,—մեջ մտավ Գյուլնազը,—մեղավորը Սեյրանը չե, մենք ենք: Եհ, դե անցած բան ե, մոռացեք, բաշխեցեք:

— Վոչ դուք եք մեղավոր, վոչ ել մենք: Աստված եղպես եր ուզում ու եղպես ել արավ, հիմա բանը բանից անցել ե, բախտավոր լինեք: Թող Սուսանդ դարնան ծառի պես ծաղկի, կանաչի:

— Ծնորհակալ եմ, բարով Սելրանիդ ել պսակենք: Եգուց թող Մարիամ բաջուն հետս տանեմ աղջկաս մոտ:

— Աչքիս վրա, ուզում ես— չես ել կգամ,— համաձայնվեց Հայրապետը:

— Ըհ, առսրդի տղա առսրդ,— բացականչեց Մարիամ բաջին, աչքերը չռելով և մի սպառնական հայացք ձգելով լուր ամուսնու վրա:

— Արշունս մի պղտորի՛լ, քեզ ասում եմ, աչ կնիկ, թե չե, նահլաթ հար սատանին հա:— Գլուխաղ ջան, ինձանից բարեիր Բարխուդարին ու ասա, վոր չես ելի նրան բարեկամս եմ համարում:

— Սմբատիս աղեը վկա, վոր հենց ինքն ել ձեր ֆիքքն ե քաշում: Վերջին ժամանակները խեղճ մարդը ձեր հոգսից վոտքի վրա չորացել ե:

— Իմանում եմ, իմանում եմ, ինչպես չե, ոհո, Բարխուդարին չես լավ եմ ճանաչում, նրա սիրտը շատ բարի չե: Տեսնում ես, Մարիամ կնիկ, չես քեզ ասում ելի, վոր նա կակուղ մարդ ե, հենց դու հակառակվում ելիր, թե չե, չե, չե:

Հայրապետն վոգևորվեց:

— Գլուխաղ ջան, ասա Բարխուդարին, վոր հենց եգուց մեր տուն շնորհ բերի: Թող դա, վոր մեր հին մեղքերը քաղենք:

— Յարար, աստված, ես մարդի խելքը ինչո՞ւ քամուն տվիր,— կրկին մեջ մտավ Մարիամ բաջին, չերեմը դեպի առաստաղը դարձնելով:

— Յադի չե գլխիս ելի, չաղի, մին ես լեզուդ ներս քաշես, աչ իժ ոձի դավալ. մեղա քեզ, սատանան ասում ե, վոտներիդ տակը գցիր ու շանսատակ արա ելի:

— Թեկուղ մորթես, ելի սուս չեմ անելու:

— Լեզուդ տակուիկից կհանես:

— Հանիր, բայց քանի վոր բերանումս ե, խոսելու չիմ: Բաս չես սուս անեմ, ել ով պիտի խոսի, աչ մարդ, հը՞մ: Տունս քանդեցին, բալիս չողերը գցեցին, ավարա արին վաթանից, մեղ ել ես որին հասցրին: Հիմա չարչով ե գցել ու չեկել գլխներիս, կեղծավորութուն ե անում, բաս չես սուս անեմ: Չե, չես եղպես բարեկամներին չեմ ուղում: Գնա, գնա ինքդ ելի առաջվա պես Բարխուդարի վոտները ջուր արա ու խմիր: Գնա, ելի մի բաժակ արագով խաբվիր: Ինչ ուզում ես արա, չես չերես չեմ պարանի նրանց, թե վոր վզեցս ել քաշեն:

Մարիամ բաջու դառն ու կծու խոսքերը այս անգամ Հայրապետին բոլորովին համբերութունից հանեցին: Նա փափախը գլխից վերցրեց, մի կողմ դրավ, վեր կացավ կանգնեց, սպրդեց, կապտեց, ատամները կրճտեց և, բռունցքները սեղմելով, ուզում եր հարձակվել կնոջ վրա, բայց այդ վայրկյանին մի դեպք պատահեց: Քամին կատաղի դորութչամբ դրսից զարկելով, բացեց սենյակի դռները: Կրկին ներս թափվեցին ձյունի բուռն ավիքներ: Ճրագը հանգավ և խավարը տիրեց սենյակում: Մարիամ բաջին և Գյուլնազը մի թեթև ճիչ արձակեցին: Հայրապետը տեղն ու տեղը մնաց անշարժ: Մի քանի վայրկյան բոլորը լուռ էին: Վերջապես, Հայրապետը դռները ծածկեց:

— Լղաճաք—լղապատառ լինիս, այ քամի,—ասաց Մարիամ բաջին և մոմը վառեց:

— Տեսնում ես, աստվածն ել ե բարկանում գլխիդ քո եղ չար լեզվի համար,—գոչեց Հայրապետը:

— Դու քո աստվածը, մի նեղանար,—սկսեց հորդորել Գյուլնազը Հայրապետին:—Ինչ անենք, վոր ասում ե, սիրտը կծկծում ե, թող սրտի աղուն թափի, հանգստանա:

— Դուրս լեկ, կորիք, քեզ հետ ել բան ու գործ չունիմ,—գոչեց Մարիամ բաջին խեղդված ձայնով և շտապով գնաց խոհանոց:

— Ստանի ծնունդ ե ելի, եհ, չես քեզ բերողին ինչ ասում հա,—գոռաց նրա հետևից Հայրապետը և նստեց լուր տեղը:

Գյուլնազը չարշովը վերցրեց, վոր գնա:

— Իսկի չնեղանաս, Գյուլնազ ջան, չես նրա քիթուպուռնը ջարդ ու փշուր կանեմ, շատ ե կատաղել: Ասա Բարխուդարին, վոր չես ելի պատրաստ եմ նրա հետ բարեկամութուն անելու:

— Շնորհակալ ենք: Բայց Մարիամ բաջու քեֆին չգիպչես, խեղճ ե, սիրտը ցավում ե: Տես, թե վոր կարող ես, խելքի բեր, վոր միասին ինձ հետ գա աղջկաս մոտ:

— Աչքիս վրա, արխային կաց:

Գյուլնազը մի քանի անգամ համեստութչամբ և խորին հարգանքով գլուխ տվավ Հայրապետին ու դուրս գնաց: Հայրապետը չիբուխը նորից լցրեց, վառեց ճրագից և սկսեց ծխելով շրջել սենյակում հետ ու առաջ:

XI

Փետրվար ամսի սկիզբն եր, ձմեռվա ամենասաստիկ ժամանակամիջոցը Թեյմուր-խան-Շուբադում: Մի խիստ լերեկո լեր: Յերկնքից իջնող ձյունը, հյուսիսային Դաղստանի բարձրագագաթ սարերից փչող

մբրիկից հայածվելով, խաժար մթնադրոտի մեջ պատոււմ եր կատարի ալիքների պես:

Շուրալի արեւելյան կողմում կար մի կեղտոտ քարվանսարա: Այդ քարվանսարալի ոթեաններից մեկում նստած եր մի չերիտասարդ: Ոթեանն ուներ մի փոքրիկ դուռը ու մի փոքրիկ պատուհան և լուսավորվում եր հասարակ թիթեղյա կանթեղով, վոր դրած եր փսխաթներով ծածկված խոնավ հատակի վրա: Դռնից կարկուտանման ձուռնը սարսափելի քամու զորութլուռնից ոթեանի դռան և պատուհանի ճեղքերից ներս մտնելով, զարկում եր չերիտասարդի կերպարանքին: Ոթեանում սաստիկ ցուրտ եր: Բացի կանթեղի թուլ ջերմութլուռնից, չկար ուրիշ վառելիք, վոր մեղմացներ այդ ցուրտը: Այս պատճառով չերիտասարդը վոտից ցզլուին փաթաթված եր սև լափուռջի մեջ: Ներս թափվող ձուռնը հալաքով եր լափուռջիի վրա և ծածկել սպիտակ սավանով: Ֆոտոպենի դեղնագուշն լուսը, հաղիվ հաղ կանթեղի մրտա ապակու միջով թափանցելով, սփռվել եր չերիտասարդի դեմքի վրա: Հոգեկան դառն տանջանքի, ծանր վշտերի խոր կնիք եր դրոշմված այդ դեմքի վրա:

Սելրանն եր:

Ինչո՞ւ համար ե չեկել նա Շուրա, ի՞նչ մտադրութլուռն ունի:

Ասում են առանձնութլուռնը առհասարակ մարդու տրամադրում և լուր մաքերի հետ խոսելու: Սելրանը մեն-մենակ նստած սառն ոթեանում, թաղված եր խորը մտածողութլան մեջ: Նա քրքրում եր լուր մոտիկ անցյալը, քննում, քննադատում եր այն բոլոր փորձանքները, վոր վերջին ժամանակները անցան նրա գլխով: Յե՛վ չերբեմն իրերեմն սկսում եր ինքն իրան խոսել մի աչնալիսի բարձր ձայնով, վոր չեթե ոթեանում մեկը լիներ, կարող եր լսել նրա խոսքերը:

— Վորքան մտածում եմ, վորքան գլուխս տրաքացնում եմ, միևնույնը, միևնույնը, միևնույնը,—մտածում եր Սելրանը:—Սուսան, Սուսան, քորածած խղճմտանքով արարած, լավ խաբեցիր ինձ, լավ դիտատակիս բարձ դրիր: Հա, շատ լավ, շատ լավ խաբեցիր: Բաց չե, սպասիր, սպասիր, շատ չերկար չի քաշիլ. լես, հըմ, լես ի՞նչ...

Սելրանը ձեռը դրավ ճակատին և մի քանի րոպե լոնց:

— Այլեր, այլեր փառավոր,—շարունակեց նա, ձեռը ճակատից հեռացնելով: Պարծենում ես, հա՛: Պարծեցիր, բաց աչն ել իմացիր, վոր ինչ ել լինի, ելի հոգիդ իմ ձեռքումն ե. լես չեթե ուզենամ, կարող եմ հենց վաղը, հենց այս գիշեր փոխել քո բախտը: Դու իմ ծնողների կլանքը թունավորեցիր, մորս զրկեցիր լուր միակ զավակի չերեսից, ինձ չոլերը բաց թողեցիր, վոր դու աչսոր հանգիստ տանդ

նստե՛հ: Ձե, դու քո հոր նամուսն կյիւրութեամբ պահե՛լ: Իրավունք ունես: Բայց ի՞նչ ես մտածում: Մի՞թե կարծում ես, վոր չես նամուսն չունեմ: Մի՞թե կարծում ես, վոր չես այնքան փչացած եմ, վոր չեմ կարող պատիվս պաշտպանել: Յերեխա չես, խեղճ, չես ճանաչում Սեյրանին... «Ապրիւր, սպասիր և կտեսնես, թե Սուսանը քեզ ինչպես ե սիրում և ինչպես նա կգոհվի քեզ համար»: Այդ քո բերանից դուրս չեկած խոսքերն են: Հապա ինչու այդպես շուտ մոռացար ինձ: Ռուստամի հարստութիւնը, տուն ու տեղը, վոսկի-արծաթը, զառ ու զառքո՞՞քը քեզ շացրին, հա՛ւ, Լավ, ինձ կյիւր խաբում, հա՛ւ:—Սպասիր, համբերիր, շատ ել խարվող մարդ չիմանաս Սեյրանին: Դու ուզում եյիր քո և քո ծնողների իբրեւ թե ընկած անունը ուրիշների աչքում բարձրացնել, նրանց նամուսը մաքրել և այդ պատճառով ել ինձ թողիր ու գնացիր Ռուստամին: Լավ, բաս Սեյրանը, նրա նամուսը: Չլինի թե կարծում ես, վոր նա վոչինչ չի հասկանում: Ինքդ քո անունը ուրիշների բերանից ազատեցիր, իսկ իմ անունը կեղտոտեցիւմ, գցեցիր սաղ քաղաքի բերանը: Խեղճ վողորմելի, կարծում ես, վոր այսքանն ել հասկանալու խելք չունի՞՞ Սեյրանը, հա՛ւ: Տեր աստված, տեր աստված, մի՞թե չես այնքան փչացել եմ, ընկել եմ, վոր ել վոտքի կանգնելու կարողութիւն չունիմ»:

Սեյրանը գլուխը քիչ թեքեց դեպի մեջքը և լուր անորոշ հայացքը մի քանի րոպե հառեց ոթեանի առաստաղին, վորի փտած ու սևացած կոճերը կտուրի ծանրութիւնից ծռվել էին ու ճաքճքել: Նա մտածում եր, թե ինչպես ինքը խայտառակվել և լուր ընկերների առաջ, թե ինչպես այդ ընկերները ամեն անգամ լուր չերեսին կրկնում էին Շամախում. «վախկոտ ես, անազնիվ ես, նամուս չունես, վոր աչքերդ բաց հարսնացվիդ քեզանից խլեցին, ուրիշին տվին» և այլն և այլն:

— Դարդուշանց եմիրը, եմիրը, տես ինչքան ընկել եմ, վոր նա չեւ ե ինձ ծաղրում: Նա չեւ մինչև անգամ ինձ վրա լեզու չե բանեցնում, փահ. փափախդ ցեխի մեջ ընկնի, Սեյրան ջահիլ հա,—ասաց նա, չերկու ձեռներով մի ուժգին հարված տալով գլխին, վոր ծածկված եր Դադաստանի մոխրագույն չերկարամազ «շուլլահիւղ»:

— Հարցնող լինի, թե ել այսուհետե ի՞նչ չերեսով եմ ապրում: Ծնողներիս աչքից ընկած, Շամախու մեջ խայտառակված, ընկերներիս մոտ ծաղրի ու ծիծաղի առարկա դարձած, ել ի՞նչ չերեսով եմ մտիկ անում ուրիշներին: Շամախում չկարողացա ապրել, դուրս չեկա, Դուբա գնացի: Խեղճ մայր, դու հիմա հավատացած ես, վոր առուտուր և անում: Խեղճ պառավ, խեղճ պառավ, ծնվեցի թե չե—որդ սևացավ:

Սեյրանը բարձրացավ տեղից և սկսեց փոքրիկ ու նեղ ոթեանի շերկայնութեամբ շրջել չեւ ու առաջ:

Տեր աստված, տեր աստված, ինչեր են խոսում հիմա ջահիլները Շամախում: Ինչ պիտի խոսեն, ամեն անգամ Սեյրանի անունը տալիս լերեանները ծռում են ու թքում. ոհ, ճակատը ամոթից քրտնում է, չերը մտաբերում է նրանց: Հիմա ամենքը, հավաքված գինետներից մեկում, խմում են: Մինը ուզում է նրա կենացը խմել, մյուսը չի ուզում խմել, «չունքի նա նամարդ, բենամուս է, մեր դաստի անունը բնարուս արավ սաղ քաղաքում»: Ժշմարիտ է, իրավունք ունեք ասելու. նա խայտառակ արավ ձեր դաստի անունը: Բայց սպասեցե՛ք, Սեյրանը շատ ել բենամուս ջահիլ չէ, սպասեցե՛ք և կտեսնեք:

Դրսում քամին շարունակ փչում էր: Սեյրանը մոտեցավ պատուհանին և սկսեց նայել դուրս, դեպի քարվանսարալի բակը: Մի քանի րոպե շարունակ նա մտիկ արավ, թեև նրա աչքերը պատուհանի սառցապատ ապակիների միջով վռչինչ չեյին կարողանում վորոշել դրսում: Հետո նա լերեսը շուռ տվավ և կրկին սկսեց շրջել հետ ու առաջ, այս անգամ բավական հաստատ և կանոնավոր քայլերով:

— Յերեկ չես բաղարում տեսա քո մարդուն, Ռուստամին,— շարունակեց մտածել նա,— տեսա, արլունս գլխովս տվավ: Յես ուզում եյի մոտենալ, խանչալս փորը կոխել, փորոտիքը դուրս թափել: Ուզում եյի փողոցի սպիտակ ձուռնը ներկել նրա կարմիր արլունով, վոր սիրտս հովանար: Բայց չես աչդ չարի: Զկարծես, վոր վախեցա նրանից, Սուսան, չե, չարի, վորովհետև հիմա մտածում եմ, վոր նա այնքան մեղավոր չէ, ինչքան վոր դու չես մեղավոր, Սուսան: Յեթե չես վրեժ եմ ուզում հանել, լա՛վն է ձեր լերկուսից հանեմ, թե չե՛մ ինչն Ռուստամի արլունը ինձ չի հովացնի: Հըմ, իմանում եմ, Սուսան, դու ինձ այնքան մոռացել ես, վոր սրան ու նրան ել հավատացրել ես, թե Սեյրանին իսկի լերեխայութունից չես ճանաչել: Այդ չես գիտեմ վոր ասել ես, հենց ընկերներս ել աչդ պատճառով են ինձ այդքան ծաղրում: Շրպպանիկին ծնողներդ գցել են քաղաք, վոր ալստեղ ու ալստեղ ասի, թե «կուժ ծախողանց Սեյրանը դուր տեղն է դրան ու նրան ասել, թե Սուսանը նրա հարսնացուն է չեղել, ալդպես արել, այնպիս արել» և ալլն և ալլն: Առաջինը՝ չես վո՛չ վոքի չեմ ասել իմ բերանով այն բաները, ինչ-վոր խոսում են քաղաքում: Յերկրորդը՝ թե վոր խոսում են, սճւտ են խոսում, Սուսան: Սճւտ է, վոր դու իմ հարսնացուն ես չեղել լերեխայութունից, սճւտ է, վոր չես քե՛ղ հետ խոսել եմ, տեսնվել եմ: Ամեն ցավերից ազատվել ես, հանգիստ ապրում ես, հիմա ուզում ես Սեյրանին սուտ դուրս բերել հմա: Լավ, շատ

լավ, Սիւրանն ել խելք ունի, հիմար չե: Թող շահաւատան, թող ծաղ-
րեն, ինչքան ուզում են, բայց լիս շուտով, շատ շուտով ամենքին
ցուլց կտամ, կհաստատեմ, թե լիս սուտ չեմ ասել, թե ինչ վոր խո-
սում են, գոնե նրա կեսը, կիսի կեսը ճիմարիտ ե: Թող մաքող, Ռուս-
տամը, վոր հավատացած ե, թե լիս շառլատան եմ, թող տեսնի, ով ե
շառլատան:

Սիւրանը կրկին նստեց, քառորդ ժամի չափ գլուխը ձեռքերին
հենած, ֆիաց անշարժ: Հետո նա դարձյալ վեր կացավ տեղից և կրկին
սկսեց շրջել հետ ու առաջ, այս անգամ ավելի արագ և ավելի ամուր
քայլերով:

— Լիրուհս գլխովս ե տալիս, աչքերս մթնում են, չերբ մտածում
եմ, թե ինչեր են խոսում ինձ վրա ընկերներս: Չե, անպատճառ լիս
պիտի վրեժս առնեմ: Ել վճիռ որվա ջահիլն եմ, վոր պսորվա որն ել
իմ նամուսը չկարողանամ ցուլց տալ: Հա, վճույած ե: Յես դեռ Շա-
մախումն եմ մտածել այս բանը, թե չե՛ ել ինչո՞ւ համար եմ չոլերն
ընկել, ինչո՞ւ համար եմ Շուրա լեկել: Բայց, տեր ասաված, տեր աստ-
ված, ինչպիս հանեմ վրեժս, ինչպիս հաստատեմ, վոր լիս, վոր լիս...

Սիւրանը կրկին կանգնեց պատուհանի առաջ և սկսեց նորից
դեպի դուրս նայել: Հետո նա լերեսը շուռ տվալ և մի քանի վայր-
կյան անթարթ աչքերով նայեց աղտալուղս կանթեղին:

— Հա, ինչպիս հաստատեմ, վոր լիս... վոր լիս... նահլաթ քեզ-
չար սատանա,—ասաց նա, ճակատին մի ուժգին հարված տալով և
հետո անպիտակցաբար նայեց մեջքին կապած դաշույնի կոթին,—
ինչպիս հաստատեմ, վոր լիս Սուսանի հետ սիրահարական կապ եմ
ուռնեցել, ինչպիս...

Մի քանի անգամ նա ինքն իրան կրկնելով «Ինչպիս, ինչպիս»,
կանգնեց ոթեանի մեջտեղում և, աջ ձեռը դաշույնի կոթի վրա դնե-
լով, իսկ ձախը—ճակատին, թաղվեց մտածողութւան մեջ: Դարձյալ մի
քանի րոպե լել նա այդ դրութւան մեջ ֆիաց:

Յերբեմն նա ձախ ձեռը ևս հեռացնելով ճակատից, դնում եր
դաշույնի կոթի վրա և աչքերը հառում ոթեանի առաստաղին: Այդ
ժամանակ նա, շրթունքները կրծոտելով, ստեպ-ստեպ արտասանում
եր հատ ու կտոր խոսքեր, որինակ—«աչքերը», «ուսը», «սե մազ»,
«կուրծքը» և այլն և այլն:

Հանկարծ գլուխը քարշ ձգեց, ձեռները հեռացրեց դաշույնից և
սառն ողի մեջ կրծքից արձակեց մի ծանր հառաչանք: Կարծես, նրա
ուսերից այդ հառաչանքի հետ միաժամանակ ընկալ մի ճնշող ծան-
րություն: Հետո նա զարմանալի արագությամբ մոտեցալ ոթեանի ան-

կլուներն, վերցրեց այդ տեղից մի ինչ-վոր բան և շտապով կոխեց լեր-
կայն արխալուղի գրպանը: Այդ վալրկյանին նրա թթված դեմքի վրա
սահեց կիսով չափ անախորժ և կիսով չափ խորամանկ մի ժպիտ, նրա
շրթունքները դողացին, ճակատի կնճիռը բացվեց և աչքերը փալեցին
չարախնդիր կայծերով:

Քամին շարունակում էր փչել անասելի գորությամբ. ոթեանի
պատուհանը և դռները փոքր եր մնում, վոր խորտակվելին:

— Հենց այս րոպեին, ուշացնել հարկավոր է: Յեթե մի քիչ
ուշանա, ելի, ելի կսառչեմ: Ծեծիր լերկաթը, քանի վոր տաք եւ Հա
հա հա, կարծում ես վոր աղատվեցի՞ր, պրծանք, հապա տեսնենք:

Սեյրանը շուլլահին պինդ սեղմեց գլխին, դաշույնը մեջքի վրա
ուղղեց և միքանի անգամ շոշափեց գրպանը ու դիմեց դեպի դռները:

— Թող ինձ ճանաչեն, վոր չես չեմ կարող այս անպատվությու-
նը տանել: Յես նրա խանութը ճանաչում եմ, այստեղից շատ հեռու
չեւ Նա իմ յերեսը չի տեսել, ինձ չի ճանաչում, անպատճառ ինձ կըն-
դունի, կհլուրասիրի: Նա պինի ու արագ էլ ե ծախում, չես կխմեմ,
կհարբեմ նրա գինով և հետո, հետո, իհարկե, գինու փողերը կվճարեմ,
հա հա հա...

Այս ասելով, Սեյրանը ոթեանի դռները բաց արավ և շտապով
դուրս գնաց: Նա անցավ քարվանսարալի բակը, դուրս լեկավ փողոց
և անհետացավ ձյունի խառն ալիքների մեջ, վոր կատաղի գորությամբ
կռվում էին մթնոլորտի մեջ:

XII

Քարվանսարան դռնվում էր մի բավական ընդարձակ հրապար-
ակի վրա: Այդ հրապարակից քառորդ վերստաչափ հեռու, մի բավական
ընդարձակ փողոցի ծալքում, կար մի խանութ, վոր լերեք դռներ ու-
նեւ: Ռուստամի առևտրական խանութն էր: Ինչպես արդեն մեզ հայտ-
նի չե, Ռուստամը Շուրալում միքանի տարի լեր պարապում էր վաճա-
ռականությամբ: Յերկու տեսակ ապրանքներ եր նա ծախում: Առա-
ջինը հադուստեղեն, այն ե՝ մահուդ, չիթ, կտավ և ուրիշ սուլնանման
կտորներ, լերկորդը՝ ուտելիք և ըմպելիք, այն ե ողի, գինի, չուդ,
բրինձ և ուրիշ՝ զանազան տեսակի խմիչքներ և մանր-մուկ պարա-
պաներ: Պանութը բաժանված էր նույնպես լերկու մասերի մի տախ-
տակչա պատով ներսի կողմից:

Նույն ժամին, լերք Սեյրանը չուր ոթեանից դուրս վաղեց, Ռուս-
տամի խանութի լերեք դռներից մեկը կիսով չափ բաց եր: Այդ ըմպե-

իքների բաժինն եր: Այստեղ Ռուստամը միքանի շամախեցիներէ հետ ընթրում եր: Սեղանի գլխում նստած եր ինքը Ռուստամը: Նրա աջ ու ձախ կողմերում նստած էին չերկու առևտրական ընկերներ, վորոնցից մեկը մի միրքավոր չերիտասարդ եր լեզգու հագուստով, մյուսը՝ առանց միրուքի միջին տարիքով մի մարդ եր Շամախու հագուստով: Սրանց մոտ նստած էին չերկու ուրիշ հյուրեր, վորոնք Շամախուց նոր եին Շուրա չեկել: Դրանցից մեկը առողջակազմ և հաստ չերեսով մի չերիտասարդ եր մոտ չերեսուն տարեկան, մյուսը մի պատանի—կես-ասիական ու կես-չեվրոպական հագուստով:

Ռուստամի ընթրիքն այդ չերեկո սովորականից միքիչ ճոխ եր: Նա հյուրասիրում եր չուր նորեկ համաքաղաքացիներին: Թե Ռուստամի և թե հյուրերի գլուխները բավական տաքացած էին գինով: Ռուստամի ընկերները վողեւորված խոսում էին նորեկների հետ, հարց ու փորձ էին անում զրանց իրանց հայրենիքի, ընտանիքի, ազգականների և ուրիշ բաների մասին: Յուր ընավորութեան համեմատ, Ռուստամը ամենից սակավ եր խոսում: Միայն չերեմն նա ևս հատուկտոր հարցեր եր տալիս նորեկներին և հատուկտոր պատասխաններ ստանալով, կրկին լռում եր:

— Ասում են, վոր կուժ ծախողանց Սեյրանն ել և այստեղ, ճըշմարիտ ե,—հարցնում եր նորեկ պատանին:

— Յես չերեկ լեզգի բազարում տեսա նրան, խանչալ եր առնում,—պատասխանեց Ռուստամի ընկերներից մեկը:

Ռուստամը լսելով «Սեյրան» անունը, աչքունքը թթվեցրեց և մի հարցական հայացք ձգեց նորեկ պատանու վրա: Վերջինն այս չընկառեց:

— Ուզում եմ նրան տեսնել,—կրկին խոսեց պատանին:

— Ի՞նչ գործ ունես նրա հետ,—հարցրեց միրքավոր և լեզգու հագուստով չերիտասարդը, աչքի տակով նայելով Ռուստամի չերեսին:

— Նրա մայրը ինձ խնդրել ե, վոր միքանի խոսք ասեմ նրան:

— Եղուց կարող ես լեզգի բազարում տեսնել, կարծեմ միշտ այստեղ և լինում:

— Ի՞նչ գործի չե:

— Չեմ իմանում: Յերեկ չես իրանից հարցրի, վոչինչ չասաց, աչքունքը ծոց և հեռացավ:

— Շատ ե հպարտացել, կասես, վոսկու մազան և գտել, բայց ի՞նքը քաղցած գլուտում ե, հագին հալով չունի,—ավելացրեց ամմիրուք առևտրականը:

— Ասում են շալ առնելու չե չեկել,—մեջ մտավ հաստերեսանի նորեկը:

— Յավերսիդ:

— Հալլը փող տված կլինի ելի:

— Հոր մոտ նրա անունը տալ չի լինում, ինչ փող, — մեջ մտալ պատանին: — Յես դուրս գալուս ուր հարցրի, ասում եմ. Հալլապետ ապեր, Սելրանին վոր տեսնեմ Դադստանում, ինչ ասեմ: Նա չերեսիս ծուռ մտիկ տվալ ու ասաց. «Կասես, վոր աշտեղից ել դինը կորչի, վոր անունը չլալի»:

— Լալ փչացալ ալդ տղեն, — կրկին մեջ մտալ անմիրուքը:

— Փչացալ, — կրկնեց հաստերեսանին:

Ռուստամը գլուխը թեքեց կրծքին և ձեռը ճակատին դրալ: Անմիրուք տուտականը սալեց նրա վրա և դարձալ խոսողներին:

— Խալխի ցալը մեզ չեն տվել, թողեք Սելրանին, քեֆ արեք, տեսնենք:

— Ռուստամ ջան, այս ել քո կենացը, — ասաց նա մի բաժակ գինի ձեռին:

— Քո կենացը, — կրկնեցին ամենքը միտերեան և բաժակները դատարկեցին:

Դրսից մեկը չերկու անգամ դռներին զարկեց:

— Ո՞վ ես, — հարցրեց Ռուստամը, մոտենալով դռներին:

— Աստուծո հյուրը:

Դռները բացվեցին, և Սելրանը չերես առ չերես հանդիպեց չուր ամենաավոխերիմ թշնամուն, Ռուստամին: Սելրանը Ռուստամին շատ անգամ եր տեսել, այնինչ՝ վերջինը Սելրանին թեև Շամախում տեսել եր, բայց չեր ճանաչում, չգիտեր, վոր նա չե չուր հակառակորդը:

Առաջին վաչրկյանին Սելրանը շփոթվեց, տեսնելով չուր սրտին ամենատեղի կերպարանքը: Բայց նա կարողացալ իրան զսպել:

— Ո՞վ ես, — կրկին հարցրեց Ռուստամը, միևնույն ժամանակ չկտրելով անկոչ հյուրի ճանապարհը:

— Մի դարիք տղա, — պատասխանեց Սելրանը, հալացքը ձգելով խանութում նստողների վրա:

— Աչքիս վրա տեղ ունի ամեն մի դարիք, — ասաց բարեկամաբար Ռուստամը, Սելրանին ներս թողեց և դռները կրկին ծածկեց:

— Ոհո, Սելրան ջահիլ, դժւ վորտեղ, ալստեղը վորտեղ, — բացականչեց լեզգու հագուստովը:

— Սելրան, — կրկնեց Ռուստամը անգիտակցաբար և հալացքը քեռեց այդ անունը կրողի վրա:

— Ռուստամ, ինչ ես սառել, չէս ճանաչում: Դա մեր շամախեցի կուժ ծախող Հալլապետի տղեն ե, համեցեք արն, ինչ ես կանդնել, — շարունակեց լեզգու հագուստովը:

Ռուստամը տեղից չշարժվեց։ Նա զարմացած նայում էր հերթով բոլորի լերեսներին։ Սեյրանը ձյունի մեջ կորած չափունջին մի կողմը շարտեց, համարձակ քայլերով շարժվեց առաջ և, առանց Ռուստամից հրավիրվելու, մոտեցավ սեղանին և նստեց նստարանի վրա։ Պատանին մոտեցավ նրան և, ձեռք մեկնելով, ասաց.

— Շամախուց նոր եմ լեկել, մալրդ շատ բարե արաց և ասաց, վոր...

— Ենորհակալ եմ,— ընդհատեց Սեյրանը, անփութ կերպով սեղմելով պատանու ձեռք և լերեսը մի կողմ շուռ տվավ ակնակա, վոր վերջինը ստիպվեց լռելու։

Վերջապես, Ռուստամը ուշքի լեկավ և ընդունելով իր նախկին դիրքը, ստոնասրտութամբ նստեց սեղանի առաջ։

— Այ տղա, Համարձու՞մ, նոր գինի, Սեյրանը մրսած կլինի, թող քիչ տաքացնենք նրան,— հրամայեց լեղզու հագուստով միրքավորը։

— Հն, գինի տվեք, լես շատ եմ ծարավ,— ասաց Սեյրանը, գլխից ձյունաթափախ շուլլահին վերցնելով և մի կողմը ձգելով։

Գանուլի փոքրիկ և աշխուժ գործակատար Համբարձումը մի բուլեյում մեջտեղ դրավ լերկու լիք շշեր, չնայելով վոր սեղանը լիքն էր կիսատ շշերով։

— Կոնձիր, ներսդ տաքացրու, վոր դուրսդ ել տաքանա։

Սեյրանը, կարծես, հենց մի ակապիսի առաջարկութան էր սպասում։ Նա վերցրեց բաժակը, դատարկեց, վերցրեց լերկորորդը, նույնպես դատարկեց և դրավ սեղանի վրա։

Ռուստամը լուր հալացքը նրանից չէր հեռացնում։ Մյուսները նույնպես զարմացած նայում էին նրան։ Միրքավոր լերիտասարդը, այդ նկատելով, բարձրացավ տեղից և հալանեց։

— Ով վոր չի ճանաչում, թող ճանաչի։ Դա մեր շամախեցի կուժ ծախող Հալրապետի տղին է, մի քեֆ անող ջահիլ։ Դրա նման տղերք քիչ կան, Ռուստամ, լես լերկու տարի առաջ Շամախում մի լավ քեֆու՞մ եմ ճանաչել։

Ռուստամը կրկին նայեց Սեյրանին և լռեց։ Իսկ Սեյրանը, նշատողների վրա ուշադրութուն չդարձնելով, կրկին համարձակորեն լրցեց լերկու բաժակ և դատարկեց։

Այ ապրես, ապրես, Սեյրան ջահիլ, տղա լես, վոր առանց նազի բանդ շինում ես,— բացականչեց միրքավոր լերիտասարդը։ Հետո նա աչքով արավ հանդիսականներին, և սրանք, մի-մի բաժակ լցնելով, սովորական խոսքերով շնորհավորեցին Սեյրանի գալուստը և դատարկեցին։

Խնջուլքը տաքացավ, և ամենքը սկսեցին իրարու լետևից բաժակները լցնել և դատարկել, բացի Ռուստամից, վորը Սեյրանի ներս մտնելուց հետո լուռ եր և վոչնչի ձեռք չեր տալիս:

— Հայրապետ ապորը լիս ճանաչում եմ, ինչպես չե, նա հորս հետ լավ բարեկամ ե, մեր տուն դատիկ, ջրորհնեք շնորհավորելու չեք դալիս,—մեջ մտավ հաստ լերեւով լերիտասարդը, վոր Շամախուց նոր եր լեկել:—Տղերք, մի լավ կոնծենք Սեյրանի կենացը:

— Իրան լերկու-լերկու խմեցրեք, վոր մեր չափին հասնի,—ավելացրեց միրքավոր լերիտասարդը:

Բացի Ռուստամից, ամենքը Սեյրանի կենացը խմեցին: Սեյրանը լերեք բաժակ գինի իրարու լետևից դատարկեց իրրե ի նշան խորին շնորհակալության:

Գառորդ ժամից հետո խնջուլքը բոլորովին տաքացավ: Միրքավոր լերիտասարդը սկսեց անկարգ-անկանոն պարսկերեն լերգել, կամ, ուղիղն ասած, դուռլ խիստ անախորժ ձայնով: Մյուսները սկսեցին խոսել, վիճաբանել, բացի Ռուստամից, վոր լուռ ու մունջ լերբեմն գինու բաժակը մոտեցնում եր շրթունքներին ու դարձյալ լետ դնում չխմած:

Սեյրանը նույնպես լուռ եր, սակայն նրա գլուխը տաքացել եր, աչքերի բլրերը արդեն փալլում էին:

Ռուստամը, վորի առնական ըրրա դեմքը պատել եր սովորական մռալություն, արմուկները դրավ սեղանի ծայրին, գլուխը հենեց ձեռների ափերին և մնաց անշարժ: Նա մտածում եր.

«Դա նա լի: Միրտս վկայում ե, վոր այստեղ մի բանկա ելի: Բայց ի՞նչ բան պիտի լինի: Նա հո սուտ եր, սուտ եր: Հը՛մ:—Ձե, անցյալ ուրը Գլամադանց Մուրադը մի ակնարկ արավ խոսելու ժամանակ. «Սեյրանը լեկել ե, սոված շունը կատաղած ե լինում, մուղալիթ կաց համ», ասաց նա: Սեյրանը իմ կնկա առաջվա փեսացուն ե: Այդ լիս անցյալ շաբաթ եմ իմացել: Սուսանի ծնողները նրան Սեյրանից կտրել ու ինձ են տվել: Մեր քաղաքի աղաթն ե, մեկի վրա նշանել ու հետո ուրիշին տալ: Այստեղ դարձանալի բան չկա: Բայց սիրտս, չգիտեմ ինչու, ելի ասում ե, թե անպատճառ մի բան պիտի լինի: Ի՞նչու համար ե նա գիշերվա կիսին լեկել: Վնչ բարեկամներ ենք, վնչ ազգականներ ե վոչ ել իրարու ճանաչում ենք: Մեկ ել վոր նա խմանում ե, թե լիս ով եմ: Տեր ասաված, չեմ հասկանում, չեմ հասկանում: Յեկել ե, սուտ ու փուտ նստել ու խմում ե: Կասես, տասը տարի ինձ հետ ընկերություն ե արել: Ի՞նչ լրբություն, ի՞նչ աներեսություն, հը՛մ, թե՛ վերկենամ, կոնից բռնեմ—դուրս ձգեմ: Տես, ինչպես ե ճակատի

տակից, աչքերը պլզած, մտիկ անում ինձ: Մարդ կարողանա իմա-
նալ, թե ինչ ե մտածում: Տեր աստված, շան պես ե լակում: Հարբել
ե, աչքերը պլպլում են: Խնչու չե այդքան խմում: Խնչու չե ընկերնե-
րիս դեմքը փոխվել, ինչու չեն կասկածանքով մտիկ անում ինձ ու
նրան: Համբերեմ, յերևի, բանը շուտով կայարգվի, գուր չե յեկել նա
այստեղ: Ելի սիրտս ոձ կծեց, ելի հարսանիքի գիշերվա տանջանքը...

Այսպես մտածելով, Ռուստամը մատների արանքով մտիկ եր ա-
նում հերթով մերթ Սեյրանին, մերթ մյուսներին:

Վերջապես, միրքավոր յերիտասարդը վոռքի կանգնեց և ասաց.

— Տղերք, գիշերը անցնում ե, ժամանակ ե տուռ գնալու, բա-
ժակներդ լցրեք, վոր մեր թանգազին Ռուստամի կենացը մեկ ել խմենք,
շնորհակալութիւն ասենք ու ցրվենք:

Ամենքն անհապաղ կատարեցին միրքավոր յերիտասարդի առա-
ջարկութիւնը, մի-մի բաժակ լցնելով և վոռքի յեկնելով:

Սեյրանն անշարժ եր:

— Ռուստամ, աստված մինդ հաղար անի,— ասաց բարձր ձայնով
և հանդիսավոր յեղանակով նույն միրքավոր յերիտասարդը:— Տղերք,
միաբերան աստծուց խնդրենք, վոր նա շուտով Ռուստամին մի լավ
ղոչ տղա պարգևի:

— Ամեն, ամեն, տեր աստված,— կրկնեցին միաբերան բոլորը:

Սեյրանը լուռ եր:

— Սեյրան, վերկաց, ի՞նչ ես թմրել,— գոչեց միրքավորը:

Սեյրանը թուլացած իրանն ուղղեց և բարձրացավ տեղից:

Միրքավորը մի բաժակ գինի լցրեց և առաջարկեց նրան:

— Ա՛ռ, խմիր և աստծուց խնդրիր, վոր նա մի լավ վորդի բաշ-
խի Ռուստամին: Հը՛, շուտ արա, ի՞նչ ես պառավ կնկա պես թուլացել:

Սեյրանը բաժակը վերցրեց և մի հայացք ձգեց բոլորի վրա: Նա
կաղդուրեց իրան և գլուխը հպարտ բարձրացրեց վեր: Հետո նա աջ
ձեռը դրավ դաշուչնի կոթի վրա և ձախ ձեռով բաժակը գլխից վեր
բարձրացնելով, արտասանեց.

— Աղա թամաղա, ինչպես հրամայեցիր, յես ել ցանկանում եմ
պարոն Ռուստամին յերկար կյանք, առողջութիւն, հարստութիւն,
տուն, տեղ, ձեզպես ընկերներ, ինձ պես հյուր... հուռում:

— Հուռում,— կրկնեցին միայն Շամախուց յեկածները:

— Այ զոչաղ, լավ ճառ ասել գլխես հնա, բարեկամ,— բացական-
չեց միրքավորը:

Ռուստամն լուր աչքերը չեր հեռացնում Սեյրանի յերեսից:

Սեյրանը շարունակեց:

— Աղա թամադա, ինչպես հրամայեցիր, չես ել խնդրում եմ աստծուց, վոր նա Ռուստամին պարգևի մի լավ դոչադ տղա զավակ: Մաղթում եմ, վոր այդ տղան լինի լուր նման շնորքով, աշխատող և... քաջ...

— Ամեն, ամեն, տեր աստված,—կրկին բացականչեցին Շամա-թուց նոր լեկածները:

— Վարդապետի լեզու ունի,—մեջ մտավ անմորուս առևտրա-կանը, վոր ամենից քիչ եր խոսում:

— Սարգիս վարապետի աշակերտ կասեն դրան հա, լավ ճանաչե-ցեք,—ավելացրեց միրքավոր չերիտասարդը:—Հըմ, Սեյրան, ել ասելիք ունի՞ս, ասա:

Սեյրանը շրթունքները կրծոտեց և ձեռը ավելի ամուր սեղմեց դա-շուշնի կոթին:

Ռուստամի զննող հայացքը բևեռված եր նրա վրա:

— Տա աստված, վոր Ռուստամի տղան աչքունքով ել, չերեսով ել իրան պես լինի, վորովհետև...

— Հը՛մ,—բացականչեց անհամբերությամբ միրքավորը:

— Հը՛մ,—արտասանեց անգիտակցաբար Ռուստամը:

— Վորովհետև... վորովհետև... նահլաթ քեզ չար սատանա:

— Վորովհետև գինին շատ զուռ և անուժ գլխիդ,—միջամտեց կըր-կին անմիրուք առևտրականը:

— Թողեք, թողեք, վերջացնի,—հրամայեց միրքավորը:

— Վորովհետև չես գիտեմ, վոր Ռուստամի տղան, հաստատ գի-տեմ, վոր նա... նահլաթ չար սատանին:

— Հը՛մ,—շեշտեց միրքավորը:

— Հը՛մ,—կրկին արտասանեց Ռուստամը:

— Կարճ կապիր,—ավելացրեց միրքավորը:

— Վոր Ռուստամի տղան կամ աղջիկը (այդ աստված ե իմա-նում), վոր պիտի շուտով ծնվի...

— Ձե, շատ ե չերկարացնում:

— Վոր պիտի շուտով ծնվի, չե թե իրան՝ Ռուստամին կնամանի, չե, չերես-մերեսով, աչքունքով կնամանի կուժ ծախող Հայրապետի տղա Սեյրանին, ինձ, ինձ...

Վերջին խոսքերն արտասանելով, Սեյրանը բաժակը առանց դա-տարկելու շարտեց հատակի վրա: Գինու շիթերը ընկան հանգիսական-ների չերեսին, իմիջի այլոց և մի կաթիլ Ռուստամի ճակատի վրա:

Հանգիսականները զարմացած նայեցին Սեյրանի չերեսին:

Ռուստամը ինչպես կար կանգնած, նուշնալես և մնաց, միայն նրա դեմքը մի վայրկյանում փոխվեց, կտավի պես սպրդներով:

Քառորդը բոպեցի չափ տիրեց լուսթլուն։ Վնչ վոք չհասկացավ Սեյրանի խոսքերի միտքը։

— Բաժակը ի՞նչ եր արել քեզ,— ընդհատեց խորհրդավոր լուսթլունը անմիտուք առևտրականը։

— Բաժակը՞։ Յես բաժակը փշրելով, փշրում եմ այն մարդու պատիվը, վորին դուք այդքան պատվում եք և վորն այդ բաժակի տերն ե։ Ռուստամը մի քալ առաջ շարժվեց դեպի Սեյրանը, բայց կրկին կանգնեց և աջ ձեռը առաջ տարածելով, շնչառապառ ձայնով ասաց.

— Պարոն Սեյրան, չես քեզ չեմ ճանաչում, առաջին անգամն եմ տեսնում լերեսդ։ Ասա, ինչո՞ւ համար ես չեկեմ իմ խանութը և ի՞նչու չես այդ անպատիվ խոսքերն ասում։

— Անպատիվ մարդը անպատիվ խոսքերի չե տրժանի։ Յես չեկեմ եմ, վոր քեզ ճանաչեցնեմ այստեղ չեղողներին (նա մատնացուցց արավ հանդիսականներին)։ Բենամուս ջահիլ, չես քեզ խոսք ասեցի, դու նրա միտքը չհասկացար։ Յե՛ք ուզում ես, կարող եմ պարզ ասել...

— Սեյրան, ի՞նչ ես դուրս տալիս, գինին քեզ գժվեցրել ե, — ընդհատեց միթքավոր չերիտասարդը։

— Այդ քո բանը չի, քաշվիր։ Յես վորքան ել վոր հարբած լինեմ, գիտեմ ինչ եմ խոսում։

— Դուրս չեկ, կորիր, թե չե, աստված գիտե, արլունս գլխովս ե տալիս,— գոռաց Ռուստամը այնպիսի կատաղի ձայնով, վոր հանդիսականները սարսեցին։

— Թող կորչի այն մարդը, վորի նամուսը աղբի մեջ ե թաղված։ Ռուստամ, աչքերդ բաց արա, չես Սեյրանն եմ, այն Սեյրանը, վոր քո ընտանիքում չերկրորդ հայր կլինի շուտով։ Գնա, գնա, քաշիր չոլերը ընկած կնոջ կապը և հետո սիրտ արա ինձ հետ խոսելու։

Ռուստամը վազեց դեպի խանութի պատը։ Մի վաչրկյանում նա խլեց չերկայն դաշուհնը, մերկացնելով հարձակվեց Սեյրանի վրա։

Հանդիսականները շփոթվեցին, բարձրացավ խառնաշփոթ աղմուկ։ Միթքավոր չերիտասարդը մեջ ընկավ և քաջությամբ կտրեց Ռուստամի առաջը։

— Թող թիքա-թիքա անեմ շուն շան լակոտին, թո՞ղ, ասում եմ,— գոռաց Ռուստամը, աշխատելով դուրս պրծնել անմիտուքի գրկից։

— Կնիկը պիտի մի մարդ ունենա, թող մեզանից մեկը մնա,— ասաց Սեյրանը, նույնպես մերկացնելով չուր դաշուհնը։

— Կծիր լեզուդ, թե չե չես ել համբերութլունից դուրս չեկա,— գոռաց նրա վրա անմիտուք չերիտասարդը։

Շամախուց նոր չեկածները Սեյրանին բռնեցին։

— Թո՛ղ, ասում եմ, թե չե՛ փորդ կխրեմ,— բղավեց կրկին Ռուստամը:

Սելբանը դաշուհնը դրեց պատանի մեջ, մոտեցավ խանութի անկուռին, վերցրեց լափուռջին, ձգեց թևին և դուրս վազեց, բացականչելով:

— Յեթե չես հավատում, գնա, գնա, բաց արա կնոջդ կուրծքը և մտիկ տուր սև խալին, սև խալին, սև խալին...

— Տրաքեց սիրտս, բնց թողեք ասում եմ, խալը, խալը, կրծքի սև խալը, ու՛Ֆ...

Ռուստամը թուլացավ միրքավորի գրկում, դաշուհնն ընկավ նրա ձեռքից:

— Բռնեցե՛ք, մի թողնե՛ք, վոր փախչի, լես նրան կտոր-կտոր պիտի անեմ,— դուռաց միրքավորը: Նա հանեց լուր դաշուհնը և դիմեց դեպի դռները:

— Իդուր ե, նա կորավ, գնաց,— բռնեցին նրան նորեկները:

— Ջուր, ջուր բերե՛ք, խեղճ աղան մեռնում ե,— բացականչեցին չորս կողմից, Ռուստամին շրջապատելով:

— Չեմ մեռնում, փոքր ջուր, սիրտս ալըվեց,— փշրված ձայնով արտասանեց Ռուստամը, գլուխը բարձրացնելով:

— Ուշքի չեկ, Ռուստամ, կորավ այն լակոտը,— ասավ միրքավորը, բռնելով Ռուստամի թևից:

— Վո՛չ վո՛ք չի հավատում նրա կեղտոտ խոսքերին,— մեջ մտավ հաստերես լերիտասարդը:

— Նա ինքն անպատիվ և չեղել առդ քաղաքում, ուզում եր ջիգրը քեղանից հանի,— ավելացրեց պատանին:

— Սավադ,— դարձավ Ռուստամը միրքավոր լերիտասարդին, վոտքի կանգնելով և աշխատելով զսպել լուր վրդովմունքը,— Սավադ, վադ տուր, հենց այս րոպեին մի ձի վաբձիր, հու փողը, ահա:

Նա հանեց գրպանից փողի քսակը և մեկնեց Սավադին:

— Ի՞նչ ես անում,— հարցրեց զարմացած վերջինը, քսակը չընդունելով:

— Լավ խաբեցին, լավ քանդեցին տունս: Յես աննամուս եմ, ախ մալը, մալը, մեղավորը դու չես, կեղտոտեցիր անունս: Կրծքի խալը, հըմ, Սուսան, ալդալե՛ս հա՛ն, դու անառակ...

— Ռուստամ, գժվել չես, ինչե՛ր ես դուրս տալիս,— ասացին ամենքը միտձայն, - անմեղ կնոջդ մասին ինչ բաներ ես մտածում, խելքի չեկ, նա արդար ե:

— Ինչով իմանամ, վոր արդար ե: Յո՛թ սարերի չեսունում ի՞նչ

գիտեմ, նա ինչեր և անում: Կրժքի խալը, ո՞ոո, այդ լավ նշանն է, սե... խալը, խալը...

— Լավ նշանն է, ճշմարիտ և, — կրկնեց անմիջապես:

Ռուստամը նայեց նրա լերեսին և ավելի սալրդնեց:

— Ինչ եմ անում, — ասաց նա ինքն իրան: — Տղամարդ ես, փելքի լեկ, Ռուստամ, ուշքդ հավաքիր, նամուսդ տափը չի մտել: Տղերք, լեթե ինձ սիրում եք, լեթե իմ ընկերությունը ձեզ համար գին ունի, աղաչում եմ, հենց այս րոպեին ինձ համար մի ձի վարձեցեք:

— Հերիք և, Ռուստամ, ինչ լերեսալուծություններ ես անում, — հակառակեց Սավադը:

— Ծիշտ ես ասում, հերիք և, այսուհետև ամեն բան վերջացած և, բայց ձի վարձիր, գիտես, ձի վարձիր:

— Թող լուսանա, հետո կվարձենք, քիչ հանգստացիր, կապույտ կապտել ես բարկությունից:

— Անիծվեն ձեզ պես քահանայերը, — կատաղեց կրկին Ռուստամը և դեպի դուրս վազեց:

— Բռնեցեք, բռնեցեք, տղերք, — գոչեց Սավադը, վազ տալով Ռուստամի չտեսից:

Ամենքը, բացի խանութի գործակատար Համբարձումից, հետևեցին նրան, անհապաղ միասին դուրս թափվելով:

Ձյունը շարունակում էր բրդել լեռկնքից, քամին սաստկացել էր: Ռուստամն անհետացավ ձյունի ակիքների մեջ:

XIII

Առավոտ էր. քամին դադարել էր, ձյունն չէր գալիս: Ձյունային թույլ արեգակն չուր մեղմ ճառագայթները սփռել էր ձյունի սպիտակ սավանով ծածկված Շուրալի շրջակա դաշտերի, սարերի և անտառների վրա:

Սելրանն չափունջու մեջ փաթաթված և ոթևանի մի անկյունում կուչ չեկած, ծխում էր: Նրա անքնությունից և հարբեցողությունից ուռած ու կարմրած աչքերը հառված էին ոթևանի հատակի մի կետին: Խղճալի չէր այդ րոպեին նրա կերպարանքը: Խիտ և կեղտոտ մազերը խճճվել էին ու սփռվել նրա նիհար ճակատի վրա: Նրա գունազուրկ դեմքը, սղմված շրթունքները արտահայտում էին ներքին հոգեկան ալիկոծություն: «Ինչ արի չես, տեր աստված, ինչ արի», — կրկնում էր անդադար ինքն իրան, բոլոր շնչով ներս քաշելով և կրկին բաց թողնելով ծխախոտի թանձր ծուխը: «Ինչպես ծնվեց իմ գլխում այդ չար

միտքը», — ասում էր նա, չերբեմն լուր ձախ ձեռը ևս հանելով լափունջու տակից և նայելով մատների ծալերին:

Ստեպ-ստեպ նա գլուխն և ուսերը ցնցողաբար շարժում էր, ինչպես մի մարդ, վոր մտաբերում և մի քստմենի և զզվելի տեսարան:

Բայն, նա դողում է, նրա մաղերը ցցվում են, չերբ միտն և ընկնում այն գիշերվա լուր վարմունքը: Այդ ինչ մի չար ուժ էր, վոր ստիպեց նրան զիմել այդ սարսափելի միջոցին: Տեղ աստված, տեղ աստված, ի՞նչ հետևանք կունենան Սեյրանի խոսքերը, ի՞նչպես կտանի Ռուստամը այդ խալտառակութունը: Ո՜հո, Սեյրանը գիտե, գիտե, նա լսել և Ռուստամին ինչ բնավորութիւն տեղ մարդ է: Ասում են, թե նա հենց այս գիշեր ճանապարհ և ընկել դեպի Շամախի: Ի՞նչու: Հըմ, ինչու: Ով լինել Ռուստամի տեղը, վոր մի բոլակ մնար: Նա կատաղի, ինքնասեր, կխավալենի լեզգիներին մեջ ապրած մարդ է, նա համբերել չեր կարող, մանավանդ ուրիշների մոտ, մանավանդ լուր ընկերների մոտ, վորոնց հարգանքը նա միշտ վայելել և իրրե մի պատվասեր, մի նամուսով մարդ:

Սեյրանը ծխախոտը ձգեց մի կողմ, լափունջին քաշեց ուսերին, բարձրացավ տեղից և սկսեց ոթեկանում շրջել հետ ու առաջ:

— Հապա, այ ինչ ասել և նամուս, — շարունակեց ինքն իրան խոսել Սեյրանը, — Ռուստամն անպատճառ զնաց տեղեկանալու, ստուգելու իմ հայտնած գաղտնիքը:

Գաղտնիքը ստուգվելու չե, նա տեսնելու չե Սուսանի կրծքի խալը: Ոհ, չեթե հնար լինել այդ խալը հենց այս բոլակին ջնջելու: Այն ժամանակ ինչո՞վ կվերջանար բանը: Այն ժամանակ Սեյրանն ինքը կկորչեր: Բայց, արդո՞ք, տվելի լավ չէ՞, վոր Սեյրանն ինքը կորչի, քան թե, քան թե, այո, մի անմեղ, մի անարատ արլուն թափվի: Չե, արդեն ուշ և, բանը բանից անցել է: Ռուստամը տեսնելու չե խալը, իսկ տեսնելուց հետո ինչ կանի նա — այդ Սեյրանի համար շատ պարզ է:

«Ուֆ», — խորը հառաչեց Սեյրանը, աջ ձեռով մի ուժգին հարված տվավ ճակատին և մնաց ոթեկանի մեջ տեղում անշարժ: Սուսան, այդ ի՞նչ չարութիւն էր, վոր նա արավ քեզ, չէ՞ վոր դու արդար ես, ինչպես մի անմեղ չերեխա, մաքուր ես, ինչպես այսորվա արեգակի լույսը: Ի՞նչ տեղ հասցրեց քեզ քո հավատարմութիւնը:

Ձե՞ վոր նա Սուսանին սիրում էր, չէ՞ վոր հենց այս սերն էր, վոր տանջում էր նրան: Բայց ինչպես պատահեց, վոր մի ասմվա ընթացքում այդ սուր սերը սուր ատելութիւն փոխվեց: Ո՞վ էր մեղավոր, ո՞վ էր Սեյրանին փոխողը: Մի՞թե այն ներքին փտած, զզվելի վորդը, այն թունավոր ոձը, վոր «ինքնասիրութիւն» և կոչվում: Տեղ

աստված, տեր աստված, միթե կարելի չէ տղայես ցույց տալ ինքնասիրություն: Վոչ, վոչ, տղայես շներն ել չեն անում: Այդ վրեժխնդրություն չեք, այդ վախկոտություն եք, կեղտոտ վախկոտություն: Սեյրանը լսել եր և ինքը դեռ մի շարաթ առաջ աչքով տեսել եք, թե լեզգիին ինչպես ե վրեժխնդիր լինում չուր հակառակորդից: Լեզգին չուր թըշնամուն սպանում ե յերես առ յերես կանգնելով նրա առաջ, և սպանում ե չուր վրեժը հանելու համար, ճշմարիտ վրեժը: Լեզգին տղամարդ ե, տղամարդու հետ ե կովում և ինչպես ե կովում լափունջու վրա: Լեզգին չերեք կնոջից վրեժ չի հանում, թեկուզ այդ կինն իրան մինչև հոգու խորքը վերափորած լիներ: Իսկ Սեյրանը, նա ումից ե հանում չուր վրեժը—Մի թույլ արարածից, Սուսանից: Ինչեւ, ինչեւ և մեղավոր Սուսանը, ի՞նչ ե արել Սեյրանին—Վոչինչ, վոչինչ, տեր աստված, նա մի խեղճ աղջիկ եր, ծնողները տվին իրանց ցանկացած մարդուն, և ինքն ել դնաց: Ի՞նչ կարող եք անել: «Ձե, Սեյրանը վատ բան արավ, շատ վատ բան, ասիք ասի վոչ, վոչ, վոչ չեք անի: Սի աստված, միթե այնքան ատելի չեք, քո աչքում, այնքան դու նրան մոռացել եք, վոչ դոնե մի վայրկյան այդ չերեկո նրան չմտարեցիր: Ի՞նչ անե հիմա, ի՞նչպես արածը հետ դարձնե, թքածն ի՞նչպես լիզե: Կիզե, կիզե, չեթե միայն այդ կարելի լինի: Ծանր մեղք ե, շատ ծանր, Կայհնի սպանությունից ել ծանր, Հուդայի մատնությունից ել աններելի և դժվելի: Վոչնչացրու նրան, տեր աստված, վեր առ այս աշխարհի չերեսից, հոգին ուղարկիր դժոխք, բաժանիր սատանաներին: Հա, բաժանիր և հրամայիր, վոչ ասեղներ ծալրերին ցցած խորովեն դեհնի կրակի մեջ: Սեյրանը գարշելի արարած ե, արժանի չե այդ պատժին: Բայց վոչ, սպասիր, միթե արժանի չե, միթե միակ մեղավորը նա չե...

Սեյրանը մոռեցավ ոթեանի պատուհանին և սկսեց նայել դեպի քարվանսարայի բակը: Նրա անորոշ հայացքն անշուշտ եր բակում գտնվող մի առարկայից դեպի մյուսը: Նա մերթ մտիկ եր անում դատարկ, փեղինաթաթախ սալերին, վորոնց մոտ կապած ձիերը, գլուխները մի մսուրի մեջ մտցրած, դարձան ելին ուտում, չերքիմն խըրխնջալով, մերթ մտիկ եր անում տախտակյա ծածկոցի կտուրին, վորի տակ մի խումբ սալապաններ, խարուկի շուրջը տաքանալով, խոսում ելին ու ծիծաղում: Մոտ քառորդ ժամ նա մնաց այդ դրության մեջ, Հանկարծ չերեսը շուռ տվավ, ձեռները խաչաձև դարսեց կրծքին,

¹ Դադասանում կատարի թշնամիներն չերեմս յաինջին սփռում են գետին և նրա վրա մենամարտում են սրերով: Հակառակորդը չեթե վրան յափունջուց դուրս դրավ, համարվում ե հաղթված, չերկնտ, անաղնիվ: Այդ սովորությունը այժմ հետքահետե թուլանում ե:

գլուխը թեքեց դեպի աջ ուսը և սկսեց ինքն իրան խոսել:—Ծնվեցի թե չե, —այս աշխարհում մի բախտավոր, մի հանգիստ որ չտեսա և սպասում եմ, այսուհետև տեսնեմ: Այսուհետև, չե՛րբ բանը բանից անցել ե, չե՛րբ հուլանքս մեռել են: Չե, վորքան վոր մտածում եմ, ուրիշ չկը չկա, բացի մեկից»:

Արտասուքի կաթիլները դուրս գլորվելով նրա աչքերից և սահելով նիհար լերեսով, թրջեցին նորաբույս միւրուքը: Նա հանեց արխալուղի զրպանից մի մեծ թաշկինակ և նրանով ցամաքեցրեց աչքերը:

Մնացեք բարով, ծնողներ, ֆաա բարով, մայր: Նա ձեզ այնքան չարչարել ե, վոր լեզուն անգամ չի պատում ներողութուն խնդրելու: Քսան տարով դուք շուտ ծերացաք նրա պատճառով: Կերեցեք և դուք, Բարխուդար, Դյուլնազ և Սմբատ, հա, նա ձեզ ել շատ տանջեց: Հա, Բարխուդար, նա քեզանից ներողութուն և խնդրում, նա քո տնունը իզուր տեղը Շամախում կոտրեց: Ով վոր լինեք քո տեղը ուրիշ կերպ չեք կարող անել: Հիմա Սելրանը գիտե, վոր այդ բոլորի մեղավորը ինքն ե: Սուսան, Սուսան, քեզ ի՞նչ ասի, քեզանից ի՞նչ լերեսով ներողութուն խնդրե: Մեղքն այնքան ծանր ե, վոր ներողութուն խնդրելն անգամ մի ուրիշ հանցանք կլինեք: Բայց ի՞նչ անե: Դու անպատճառ զոհվելու լես նրա չար ստախոսութւանը, հըմ, ի՞նչ անե:

Հանկարծ գլուխը բարձրացրեց:—Ե՛հ, վճռված ե, ել չերկար մտածել հարկավոր չե, փշրված ամանը չի կարելի սաղացնել, իսկ կոծկել նա չի ուզում: Մնում ե միայն մի միջոց, և այդ միջոցը նրա ձեռին ե: Ահա:

Նա չափունջին ուսերից ցած գցեց, կանգնեց ոթեանի մեջտեղում և դաշուչնը մերկացրեց:

Այդ ժամանակ նրա աչքերը փայլեցին կատաղի հրով, շրթունքները սեղմվեցին, քնթի պնչերը փքվեցին: Նա մտիկ արավ դաշուչնի այս լերեսին, այն լերեսին և կոթը ավելի ու ավելի աջ ձեռում սեղմելով, փոքր առ փոքր բարձրացրեց: Նա դաշուչնի ծայրը պահեց կրծքից մի փոքր ներքև, ձախ ձեռը հենեց կողքին և լուր հայացքը դարձնելով աջ ձեռին, վորով սեղմած ունեք դաշուչնի կոթը, տասց:

— Առանց հաղորդվելու, տեք աստված, տալիս եմ իմ հոգին Սաթայելի ձեռը: Խանչալ, անցյալ որը քո ծախողը դովում եր քեզ, լես քեզ մինչև այժմ չեմ փորձել, տեսնե՛ք ինչպես ցուլց կտաս հուշարդ:

Սելրանի ձախ ձեռը թուլացավ, ընկավ կողքին, աջ ձեռը դողաց, և հանկարծ դաշուչնն ընկավ ոթեանի հատակի վրա սուր ծայրով և խրվեց գետնի մեջ:

— Չե, չեմ կարող, աստված չի թողնում:

Նա վերցրեց դաշույնը և շարտեց ոթեանի մի անկյունը:

— Դու չես կարող Սուսանին մահից ազատել, — ասաց նա, — չիլով դաշույնին:

Դեռ ժամանակ կա, ժամանակ կա սխալը ուղղելու: Այս րոպեին, հենց այս րոպեին վարձել մի ձի և շտապել Ռուստամի չեռերից: Նա կարող է հասնել նրան: Կհասնե, ճամարտութունը կպատմե, կասե, վոր սուտ ե ասել, կասե, վոր հարբած եր: Այդ լավ պատճառ ե— հարբած լինելը: Տեր աստված, գոնե այս անգամ նրան միտդ բեր, այս անգամ ողնիր, իսկ հետո ինչ ուզում ես— կանես: Արարիչ աստված, քո ձեռին ե ամեն բան, կարող ես Ռուստամի ձիու մի վտուր ճանապարհի կիսում կոտրել կամ Սեյրանի ձիուն թեկեր տալ:

Նա յափուկջին կրկին ձգեց ուսերի վրա, վեր առավ դաշույնը, դրեց պատյանի մեջ, չերեսը չերեք անգամ խաչակնքեց և դուրս գնաց:

Դրսում քամի չկար, արեղակ եր, բայց չեղանակը սաստիկ սառն: Սեյրանն ուշադրութուն չգարձնիլով չուր հագուստին, դիմեց դեպի հրապարակի ծայրը և անհետացավ նեղ փողոցներից մեկում:

XIV

Այդ որից ուղիղ մի շաբաթ եր անցել:

Իրիկնադեմ եր. փետրվարի թույլ արեգակն արդեն հորիզոնից ցած իջնելով, մայր եր մտնում: Շամախու կիսախարխուլ շինութունները, հողի և քարի կուլտերով ծածկված կեղտոտ ու ցեխոտ փողոցները ներկայացնում եին հոգեմաշ տեսարան: Ցերեկվա աշխատանքից հոգնած և թուլացած բնակիչները դանդաղությամբ դիմում եին իրանց տները:

Որը շաբաթ եր: Վերջին չերկրաշարժի հարվածից ջախջախված վաղեմի չեկեղեցու զանգերը ժամհար Մովսեսը զարկելով հնչեցնում եր բավական ներդաշնակ: Սպիտակահեր ծերունիները, հենվելով իրանց ձեռնափայտերի վրա, պառավ կանաչը չարշոյների մեջ փաթաթված, կուզկղալով դիմում եին դեպի աստուծո տաճարը, իրանց սովորական աղոթքը կատարելու:

Տերտերները, առժամանակ փողոցում հավաքված, չեկեղեցու դռների առաջ միջանի բարեպաշտների հետ խոսում եին ու դանդաղում ժողովրդի վրա, վոր չեկեղեցի չի հաճախում: Նաչեցեք այս կողմ, հա մեջ տեղում կանգնած ե տեր Արրահամը, չերկու ձեռները գավազանի ծայրին հենած և չերկայն ու չալ միրուքն առաջ ցցած: Նա թե խոսում ե, թե մտքում համրում և չեկեղեցի մտնողների թի-

վր: Ահա, տերողորմյան ձեռում պտտացնելով, մոտեցավ «մոլթանի Գոսպարը»: Որհնչեա տեր,—ասաց նա և թեքելով գլուխը, ցույց տվավ տերտերին լուր մաշված փափախի ծալրը:—«Աստված որհնի,—պատասխանեց տերտերն և իսկույն քնթի տակ ավելացրեց աչք-ունքը ձեռնով. «դենըժկան լեկավ»: Մոլթանի Գոսպարը միշտ դանձանակ եր զցում քառորդ կոպեկից վոչ ավելի. այս պատճառով տեր Արրահամը ատում եր և «դենըժկա» անվանում նրան:

Վերջապես, փոքր առ փոքր բարեպաշտների թիվը շատացավ, տերտերները քաշվեցին ներս, վոր ժամերգութլունն սկսեն:

Սանամը, վոր Շամախու ամենալեկեղեցասեր պառաջներից մեկն եր, դանգակների ձայնը լսելով, իսկույն չարշովը գցեց գլխին:

— Սուսան, մինչև հետ գալս, չալը պատրաստիր, վոր ցրտից պամ, մի լերկու բաժակ տաք-տաք խմեմ,—հրամայեց նա, դռներից դուրս գնալիս:

— Աչքիս վրա,—պտտասխանեց Սուսանը և շտապեց կատարելու լուր սկեսրոջ հրամանը:

Անցավ մի քառորդ ժամ Սանամի դուրս գնալուց, Սուսանը պնաց խոհանոց, ինքնալեռը կրակ գցեց և կրկին վերադարձավ սենյակը:

Պսակվելուց հետո առաջին վեց շաբաթվա ընթացքում Սուսանի առողջութլունը բավական կազդուրվել եր: Նրա նիհարած և վաղաթառամ լերեսի վրա կրկին սկսեցին լերկալ նախկին կայտառութլան նշանները: Բայց ավագ, այդ բարեփոխութլունը լերկար չտեսեց: Անցան առաջին շաբաթները, նա կրկին սկսեց թառամիլ, և այս անգամ ավելի արագ:

Սանամն այդ նկատում եր:

— Ախչի, ի՞նչդ ե պակաս, վոր որեցոր եղպես հալվում մաշվում ես,—հարցնում եր նա ստեպ-ստեպ:

— Չեմ իմանում,—պատասխանում եր Սուսանը, ամեն անգամ ծանր հառաչելով:

— Ախար ելի:

— Ով և իմանում, կարելի չե նրանից ե:

— Ինչից:

— Պատճառավոր...

— Դրժւստ, լերկուհոգիս ես:

Յեւ վախպիս, վերջապես, Սանամը գտավ լուր հարսի մաշվելու պատճառը և դադարեց անհանգստացնելու նրան լուր միատեսակ և ձանձրացուցիչ հարցերով:

Յերբ Սուսանն առանձնացավ սենյակում, նստեց թախտի վրա և սկսեց նիհարած ձեռներին նայել:

— Դրուստ ե, շատ եմ լղարել, մատերս չոփեր են դարձել, վոսկորներս համրել կարելի չե,—ասում եր նա ինքն իրան, ձեռները սղմելով և բանալով:

Մի ըոպելի չափ նա պարապեց լուր ձեռներով, հետո դրավ կոնաստակին և ընկավ մտածմունքի մեջ:

Դեռ չերեկ գիշեր Սուսանը Սեյրանին չերազում տեսավ: Ինչպես փոխվել եր Սեյրանը, վորքան ուրախ և զվարթ եր, Սուսանն չեր նրան տեսավ ուրախ, ինքն ել ուրախացավ: Նա մոտեցավ լուր սիրեցյալին, բռնեց նրա ձեռից, ուղեց վոր խոսի, բայց սիրեցյալը մի ծուռ հայացք ձգեց Սուսանի վրա, ձեռը խլեց, չերեսը շուռ տվավ և, առանց մի խոսք ասելու, հեռացավ: Արտասուքն աչքերին Սուսանը նայում եր Սեյրանի յետևից, բայց նա ուշադրութուն չեր դարձնում, գնում եր ու գնում: Նա, կարծես, փախչում եր Սուսանից, ինչպես մի զարհուրելի գաղանից: Սուսանը բարձր ձայնով գոչեց նրա չետեվից. «Սեյրան, մի փախչիր, չես եմ, չես եմ, Սուսանդ եմ»: Սեյրանը միքանի վայրկենաչափ չերեսը դարձրեց Սուսանին: Ով տեր աստված, վորքան զարհուրելի չեր նրա դեմքը: Նրա աչքերն աչրվում եին, բերանից կրակ եր դուրս գալիս, ինչպես թոնրից: Նա աջ ձեռը բարձրացրեց դեպի չերկինք, մի բառ արտասանեց, բայց ի՞նչ եր այդ բառը—Սուսանը չլսեց: Հետո Սեյրանը կրկին չերեսը շուռ տվավ Սուսանից և սկսեց փախչել: Սուսանը վազ տվավ, վոր հասնի, բայց ինչպես կարող եր հասնել նրան: Սեյրանը վազ և տալիս ինչես ձի Սուսանին մինչև անգամ այնպես թվաց, վոր Սեյրանը մեջքից ներքև ձի չեր, իսկ վերևը մարդ: Տեր աստված, տեր աստված, այդ ի՞նչ և նշանակում, ի՞նչպես բացատրել այդ չերազը: Յերեկ առավոտյան գոռալով ու սարսափած Սուսանը զարթնեց քնից և իսկույն բաց արավ «Եֆիմեղեն» ու մտիկ տվավ:—«Որը բարի չե, չերազը քառասուն որն կատարի»:

Քառասուն որ, ախ ինչ ուշ, ի՞նչպես պիտի կատարվի: Տեր աստված, դու չարը խափանես, բարին առաջացնես:

Սուսանը չերեք անգամ չերեսը խաչալնեց:

Սեյրանը նրանից խուլիլ և—այս նա գիտե: Բայց մի՞թե այժմ ատում ե: Անկարիլի բան ե: Ձե, Սուսանը չի հավատում, վոր Սեյրանը նրան ատելիս լինի: Սեյրանն ատել չի կարող, չի կարող. նա սիրում ե, սիրում ե խելագարի պես: Այդ և վատը, այդ և Սուսանի անտանելի ցավը: Մայրն ասում ե, վոր Հայրապետն այժմ ուզում ե

հաշտվել Սուսանի հոր հետ, վոր նրանք ելի առաջվա պես շարունակեն իրանց բարեկամութիւնը: Իսկ Մարիամ բաջին չի ներում Սուսանին, նա չի ուզում հաշտվել: Քանի-քանի անգամ Սուսանն յուր մօրն ուղարկել է, վոր նրան յուր մօտ բերի, բայց չի չեկել: Խեղճ կնիկ, չեթե դու ամեն բան հասկանայիր, չեթե դու Սուսանի ցավերն իմանայիր, կարելի չէ, վոր քո վորդին այսօր «ոլքա-ոլքա չընկներ»: Ասում են, վոր նա Շուրալումն է Ինչո՛ւ չէ գնացել, ի՞նչ գործ ունի այնտեղ: Մտգերը փշաքաղվում են, մարմինը զարգանդում է, չերբ միտն է ընկնում, վոր Սելրանն այնտեղ կարող է Ռուստամին պատահել: Հա, չերկուսն էլ, չերկուսն էլ կկործանվեն, տաքարյուն տղերք են: Հազար անգամ չերանելի կլինի Սուսանը, չեթե նրանց տեղը ինքը կործանվի: Սելրանը, չերկի, ուզում է Ռուստամից հանել յուր վրեժը: Բայց ինչո՞վ է մեղավոր խեղճ Ռուստամը: Տեր աստված, տեր աստված, հերիք է ինչքան Սուսանին պահեցիր, մոռնում նրա հոգին, ազատիք նրան վերջապես:

Սուսանը կռները հենեց ծնկներին և գլուխը դրավ ձեռների ափերի մեջ: Յեւ այդ ժամանակ նրա առաջ սկսեց պատկերանալ յուր անցյալը: Նա մտաբերեց յուր մանկութիւնը, չերբ Սելրանի հետ մառ որերը գլխաբաց արեգակի տակ «տիկին-տիկին» եր խաղում: Նա հիշեց չերկրաշարժի օրը, չերբ ինքը Սելրանի հետ մնաց հողի տակ: Յերանի, հազար չերանի, չեթե հենց այն օրը մեռներ, ինչո՞ւ նրան ազատեցիր, աստված: Ինչո՞ւ: Վոր նա ինքն էլ չարչարվի, ուրիշներին էլ չարչարե՞, համ:

Հետո Սուսանը մտաբերեց ուսումնարանական կյանքը, հիշեց գեղնած ու պշկած Հերիքնաղին, վոր որական հինգ անգամ ստիպում եր յուր աշակերտուհիներին «Հայր մերը» կրկնել և ամեն անգամ ինքը, չերեսը դեպի ազոթարան չոքած, ձեռները կրծքին ծալած, աղոթում եր, կապտած շրթունքները շարժելով: «Մեռավ խեղճ կնիկը, գնաց այն աշխարհ, նրա հոգին հիմա արքայութիւնումն է: Հա, չերանի քեզ, կույս, վոր դու այս ցավերը չես քաշել, աշխարհից հեռացած և աստծուն նվիրված»:

Այնուհետև Սուսանը մտաբերեց յուր ընկերուհիներին: Սուսամբարն ասում է, վոր ինքնասպանի հոգին առանց դատաստանի դժոխքն է ուղարկվում: Վայ Սուսանին, վայ Սուսանին, սատանան քանի-քանի անգամ և ուզեցել նրան խաբել: Սպանի իրան և բացի իրանից մի ուրիշ անմեղ անարատ հոգի՞, ո՞՞ո, այդ դժվար է, շատ դժվար է:

Ինքնասպանութիւն միտքը սարսափեցրեց Սուսանին: Նա այդ քանից վախեցած, բարձրացրեց գլուխը և սկսեց անգիտակցաբար նա-

յել սենյակի առաստաղին: «Ի՞նչ մեղք ունի այն փոքրիկ արտրածը, վոր դեռ նոր պիտի աշխարհ ընկնի»:

Միքանի վայրկյան այս մտքով դրադված, Սուսանը նայում եր առաստաղին: Հետո նա գլուխը թեքեց կրծքին և կրկին սկսեց մտիկ անել յուր նիհարած ձեռներին:

— Ձե, շատ եմ մաշվել,—ասաց նա ինքն իրան,—շատ եմ մաշվել, սրտիս թոթոցն ել սաստկացել է: Որեւորով հաց չեմ ուտում: Տեր աստված, տեր աստված, չե՞ վոր այդ ել ինքնասպանութունն է: Դեհ, հերիք ե, հերիք ե, ինչքան տանջեցիր, լերեսդ ինձ դարձրու, մի խոռվիր գլխիս, աղաչում եմ...

Սուսանը չոքեց, դողդոջուն ձեռները պարզեց դեպի լերկինք և սկսեց աղոթիլ: Նա մահ եր խնդրում աստծուց: Նրա կապտած, արյունաքամ շրթունքները ցնցողաբար դողդողում էին, նրա աչքերի մեջ փայլում եր խորին մռայլութուն: Յերբ նա գլուխը վեր բարձրացրեց, լերկար դիտահները թափվեցին նրա վոսկորացած ուսերի վրա:

Այդ դրության մեջ Սուսանը նմանում եր այն վանական անարատ կուսին, վոր նյութական աշխարհից հրաժարված, ձգտում ե հոգիանալ և համբարձվիլ լերկինք, հոգիների սփերան...

XV

Դարձյալ լեկեղեցու դանդերը հնչեցին: Քաղաքի հյուսիսային կողմում, դեպի Դուրա քաղաքը տանող ճանապարհի վրա լերեկեցավ մի ձիավոր լեզգու շուլլահին գլխին սեղմած և սև յափունջու մեջ փաթաթված:

Ռուստամի ձին հոգնած եր և հազիվ կարողանում եր փոխել յուր վոտները: Յոթհարող որն եր, վոր նա Շուրալից դուրս եր լեկել: Յոթն որ շարուրակ, առանց վորեւ տեղ հանգստանալու, նա ճանապարհ եր գալիս:

— Լավ կորավ, լավ փչացավ քսանկյոթ տարում աշխատած անունս,—կրկնում եր նա անդադար, մտրակելով ձիուն և անցնելով Դադաստանի սարերը ու դաշտերը:

Յեվ այդ մտքով հափշտակված, ինքն յուր մեջ խորասուզված, Ռուստամը ուշադրութուն չեր դարձնում վոչ քամուն, վոչ ձյունին ու բուքին և վոչ ել վորեւ վտանդին:

Վերջապես, ահա նա հասել Շամախի, կես ժամ ևս, և ահա նա կանգնած կլինի Սուսանի դեմ ու դեմ: Սակայն, զարմանալի բան: Յոթն որ նա անհամբերութամբ շտապում ե Շամախի հասնելու, յոթն որ ե, վոր նրա միտքը կաշկանդված և միայն և միմիայն շուտ տեղ

հասնելու ցանկութեամբ: Իսկ ալժմ, լերը նա գրեթե Շամախու մէջ է, ալժմ, կարծես, ալլես չի շտապում: Մի միտք, վոր մի բոպե, գեթ մի վալրիկան նրա գլխով չի անցել ալն ժամից սկսած, լերը նա կատաղած դուրս թռալ խանութից,—ալժմ հանկարծ ծնվեց նրա ուղեղում, ալժմ, լերը ընդամենը միայն կես ժամ է մնում, վոր պիտի ամեն ինչ պարզվի:

— Ինչ պիտի անեմ, լեթե Սեյրանի ասածը հաստատվի,— ասաց նա հանկարծ ինքն իրան և, ձիու սանձը քաշելով, կանգնեց ճանապարհի մեջտեղում:

Նա բարձրացրեց լուր գլուխը, նայեց դեպի քաղաք:

Բահ, հրես, լեկեղեցին էլ լերեում է, նա հասել է: Ինչու էլ լեկել, հըմ: Բահ, ինչպես թե ինչու էլ լեկել, միթե ալդ հայտնի չի: Յեկել է... հա, լեկել է իմանալու ալն, ինչ վոր ուղում եր իմանալ: Բալց լեթե իմացալ, լեթե ստուգվեց նրա ասածը, հետո: Հըմ, նահլաթ, նահլաթ քեզ չար սատանա...

Նա միքանի անգամ շարունակ կրկնեց «նահլաթ քեզ չար սատանա», նայելով մերթ լեկեղեցու գմբեթին, մերթ լուր ձիու բաշին: Վերջին անգամ «նահլաթ քեզ չար սատանա» արտաստեւելուց հետո, նա ձեռի ափով շուկեց ձիու բաշը, ասելով. «խեղճ հեյվան, խեղճ հեյվան, շատ ես հոգնել»: Մի բոպե ալդ գրութչան մեջ մնաց, հետո հանկարծ մտրակեց ձիուն, և ձին խրխնջալով սկսեց առաջ գնալ: Բալց միքանի քալ չանցած, նա կրկին քաշեց սանձը և կանգնեց: Այս անգամ նա ալ ձեռը հենեց թամբի դնդի վրա, մեջքը քիչ թեքեց և ընկալ մտածողութչան մեջ: Անցալ միքանի բոպե ես, և նա, իրանը ուղղելով, կրկին նայեց դեպի քաղաք: Ալդ ժամանակ թուլ կերպով նրա ալանջներին հասալ լեկեղեցու դանգերի ձայնը: Դողոցի նման մի բան անցալ նրա մարմնով, լերը լսեց ալդ ձայնը:

— Մալրս հիմա չարշովի մեջ վաթաթալած, լեկեղեցու սեւացած սլունի տակ կանգնած, աղոթք և անում ինձ համար, վոր «ղարիբ ու քաներում նրա միակ բալին աստված չար փորձանքներից հեռու պահի»:

Մտաբերեց մորն աղերսող դեմքով լեկեղեցու պատկերներից մեկի առաջ մոմ վառելիս, ձեռը դրալ աչքերի վրա, միքանի անգամ կրկնելով. «խեղճ մալր, խեղճ մալր»: Հետո ձեռը հեռացրեց ճակատից, վոտներով բոթեց ձիու փորին և առաջ գնաց: Անցալ մի հիսուն քալ, և դարձալ ձիուն պահեց:

Պետք է ճշմարտն իմանալ,—ալդպես չի կարելի: Պետք է իմանա, թե ով է այս բանում գլխավոր մեղավորը: Սահնք թե խալը... ուֆ, խալը...

Ռուստամը մի ապտակ տվաւ չուր ճակատին:

Ասենք թե խալը չերեցաւ Սուսանի կրծքի վրա, ասենք թե Սելրանի խոսքն ուղիղ դուրս չեկաւ: Հետո՞ Ո՞վ է մեղավոր: Սուսանը՞, Սելրանը՞, թե՞ մի ուրիշը: Սուսանին Ռուստամի համար չուր մայրն է ուղեւ. ուրեմն նրա մատն ել խառն է, ուրեմն նա չեւ է մեղավոր: Ջարանգիդի Շրպպանիկը միջնորդ է չեղել, ուրեմն Շրպպանիկն էլ է մեղավոր: Քանիսը՞, քանիսը, տեր աստված: Մայր, մայր, ինչո՞ւ դու կենդանի թաղեցիր քո Ռուստամին: Դրանով ես պարծենում, վոր նրան սիրում ես, ասի՞ր է քո մայրական խնամքը: Շրպպանիկ, հըմ, դու սատանաների աղբից գոյացած արարած, դու խորամանկ կնիկ, նոր շմլ եր հարկավոր քեզ, հմ: Լավ, շատ լավ, սպասիր, սպասիր, կստանաս: Ինչի՞ցն է վախենում, ումի՞ց: Լեզդիների մեջ ապրած մարդու սրտում «վախ» ասած բանը ի՞նչ է անում: Ձե, նա չի վախենում, նա կնիկ է, տղամարդ է: Գնա, գնա, հեյլան, տար տիրոջդ: Ռուստամը մտրակեց ձիուն և հասավ քաղաքի ծայրին: Որը դեռ չեր մթնել, չերք նա մտաւ փողոցները: Նրան սկսեցին հանդիպել ծանոթ դեմքերը, բայց, խորասուզված չուր մտքերի մեջ, վոչ վոքի վրա ուշադրութիւն չեր դարձնում: Այս ու աչն կողմից ծանոթները, նրան տեսնելով, դանադան նշաններով սկսեցին վողջունել դալուստը: Նկատում եր թե վոչ այդ բարկները, բայց անտարբերութեամբ մի հայացք ձգելով բարեկողների վրա, առանց պատասխանելու անցնում եր: Յերբ հասավ իրանց փողոցի ծայրին, ալստեղ կրկին պահեց ձիուն:

Հասել է, տեր աստված, ջնջիր Սուսանի կրծքից այդ նշանը, վոչնչացրու խալը, չեթե միայն կա, ապա թե չէ—նրա աչքերը կտեսնեն: Մի կողքնիր Ռուստամի հոգին, տեր, մի թողնիր, վոր նա դժոխքի կերակուր դառնա, նա չի ուզում, չի ուզում արլուն թափել: Ոհ, չեթե կարելի լիներ ծակել նրա սիրտը, միջի արլունով ջնջել Սուսանի կրծքի այդ խալը, վոր նա չտեսնէ:

«Սիրտս վկայում է, վոր կա այդ խալը Սուսանի կրծքի վրա», — ավարտեց Ռուստամը և, ձիուն մտրակելով, հասավ իրանց դռներին: Նա արագութեամբ ցած իջաւ ձիուց և, մի ուժգին հարված տալով դռներին, բացարաւ և ձիու սանձը ձեռին ներս մտաւ:

Ռուստամը գլուխը վեր բարձրացրեց, և նրա հայացքը ընկաւ պատշգամբի վրա կանգնած մի կանացի կերպարանքի վրա: Այդ ժամանակ, կարծես, մեկը սաստիկ հարված տվաւ նրա հետևից: Ձիու սանձը ընկաւ նրա ձեռից, և ինքը մի քանի քայլ առաջ գնաց ու կանգնեց: Կանացի կերպարանքն անշարժ կանգնած նայում եր: Ռուստամը առաջ գնաց, բայց, ձիուն մտրակելով, նորին չետ դարձաւ, սանձը վերցրեց և ձեռով նշան արաւ կանացի կերպարանքին:

Սուսանը չհավատաց աչքերին, նա չհավատաց, վոր լուր առջև կանգնած և ամուսինը։ Սակայն լերկար չտեսց լերկմտութունը, նա ուշքի չեկավ, մի ինչ-վոր բառ արտասանեց բարձր ձայնով և պատըշ-դամբից գլխակոր ցած իջավ։ Ամուսնական պարտավորութիւնն էր, թե մի ուրիշ դպացունք, Սուսանը մի ուրախ ժպիտ չերեսին դիմավորեց Ռուստամին։ Բայց վոր այդ ժպիտը կեղծ էր և ակամա—այդ լերկում էր Սուսանի աչքերից, վորոնց արտահայտութիւնը չեր համապատաս-խանում նրա շարժումներին։ Նա վազեց դեպի Ռուստամը։ Բայց չերբ հալացքն ընկավ վերջինի ալլալված դեմքի վրա, չկարողացավ առաջ շարժվիլ և կանգնեց միքանի քայլ հեռու։

— Ո՞ւր ե սկեսուրդ, — հարցրեց Ռուստամն լուր կոշտ և անհող-դողդ ձայնով։

— Ժամուռն ե, — պատասխանեց Սուսանը, ձեռները կրծքին խա-չելով և գլուխը քարշ ձգելով, ինչպիս կախողանի դատապարտված մի հանցավոր։

Ռուստամը ձիու սանձը բռնեց և տվավ Սուսանին։

— Ո՞վ կա տանը։

— Մենակ եմ, — պատասխանեց Սուսանը, սանձն առնելով։

— Մենակ ես։

— Մենակ եմ։

— Հըմ։ Լավ, տար ձիուն, կապիր ախոռում, դարի ու դարման ածիր առաջը, շատ ածիր, իմացմը։

— Աչքիս վրա, — պատասխանեց Սուսանը և շտապեց ամուսնու հրամանը կատարելու։

— Հետո շուտով տուն չեկ, — ավելացրեց Ռուստամը, չափունջին ուսերից ձգելով թամբի վրա։

Յերբ Սուսանը ձիու սանձը ձեռին քիչ հեռացավ, Ռուստամը նայեց նրա լետից և ինքն իրան ասաց. «Ինչ անմեղ ե ձեացնում իրան»։ Հետո՝ արագութեամբ բարձրացավ պատշգամբ և առանց հան-վելու, ցեխոտ կոշիկներով մտավ սենյակ։ Նա մոտեցավ և նստեց պո-տի տակ շինած թախտի վրա, չերեսը դեպի բակը։ Մի բոպե չանցած, դրսից լսվեց Սանամի ձայնը։

— Դրուստ ես ասում, ախչի, վորտեղ ե, վորտեղ ե, դե, ասա, ախչի, սիրտս ճաքեց, տրաքեց քիւի։

Ռուստամը, լսելով այդ ձայնը, քթի տակ ասաց ինքն իրան. «Ուրախացել ե»։

Սանամը գլխակոր ներս վազեց։

— Ռուստամ, բալաս, դո՛ւ չես...ըհ չես քո վոտների տակին թար-

Թափիլ անեմ, վուչ լես բուլիդ մեռնեմ, բարով, հազար բարով ես լեկել: Մոտեցիր, մոտեցիր, վոր մի պաչեմ եդ սիրուն աչքերդ:

Այս ասելով, կարողալ մայրը հարձակվեց զավակի վրա, վոր համուշներով ծածկե նրա լերեսը: Բայց սիրեցչալ զավակը հրեց մոր կրծքին և լերեսը մի կողմը շուռ տվավ:

— Ախշի, մազս կտրվի, տղաս չի թողնում, վոր իրան մոտենամ, աչ տղա, չես ամաշձւ: Թող պաչեմ, ախար քանի՞ վախտ ե պոռչներս կաշոտել են: Ախ, քոռանամ լես, խելքս աստված առել և զլիքս, ախար դու ցրտից ես գալիս: Ախշի, Սուսան, շուտ արա, սմալարը տունը, չայ շինի, վոր լալաս տաք-տաք միքանի բաժակ խմի: Ռուստամ, բալաս, ասա, խոսիր, քեֆդ, հալլ: Հըմ, մի տեսնեմ, լղարել ես, թե չաղացել, հըմ, ինչձ ևս խոսում, հա, քար կտրվեմ, ցրտից ես լեկել...

Յեւ այսպես, միամիտ Սանամը գուրգուրում եր լուր զավակին, ուրախութիւնից զանազան պտուղներ անկով նրա շուրջը: Նա իրարու հետեից հարցեր եր առաջարկում և, Ռուստամից պատասխան չըստանալով, ինքն իրան պատասխանում եր:

Սուսանն ինքնալեռը ներս բերով և սկսեց շտապով թեյ պատրաստել: Սանամը չարշովը շարտեց մի կողմը, ճրագը վառեց և դրով սեղանի վրա: Ծրագի լույսը տարածվեց Ռուստամի տխուր ու գունատ դեմքի վրա: Նա լուռ և շփոթված պտտում եր ցեխոտ կոշիկներով անկյունից-անկյուն:

Մինչև այդ ըոպեն միամիտ Սանամը չեր նկատել լուր վորդու տխրութիւնը, իսկ լերը նրա հալացքը ընկավ Ռուստամի լերեսին, խեղճ կինը ապշեց:

— Հըմ, չե, ախար, հըմ, աչ տղա, թող տեսնեմ, աչ տղա, ի՞նչ ե, ինչձ աչք-ունքդ թթվեցրել ես,—հարցրեց նա շփոթված, ձեռներն առաջ տարածելով:

— Հոգնած եմ,—պատասխանեց, վերջապես, Ռուստամը:

— Հանգստացիր, հանգստացիր, զավակս, Սանամը քար ու քլասագ կտրվի. նա տաք տեղ նստի, դու ձլուն ու ձմեռ չոլեր ընկնես: Քար կտրվի Սանամը, քար: Հանգստացիր, տեղերդ պատրաստեմ, հա:

— Պատրաստիր:

— Առաջ շորերդ փոխիր, քրտնած ես, կմրես: Չայ խմիր, հաց կեր ու հետո: Ախշի, Սուսան, հըր կորար, չայ բեր, փլավ լեփիր:

Սուսանը լերկու բաժակ չայ բերով: Ռուստամը իրարու լետեից զատարկեց և կրկին հրամայեց, վոր անկողին պատրաստեն:

— Դու հեռացիր մլուս սենյակը,—ասաց նա Սանամին:

— Ի՞նչ, Ի՞նչ ասացիր, հեռանամ,—հարցրեց Սանամը դարմացած, վորպես թե նրան մի անկարելի բան ելին առաջարկում:

— Գնա, թող քիչ հանգստանամ, եզուց կխոսենք:

— Ձե, գլուխդ ցավո՞ւմ ե, ցո՞ւրտ ե կպել, բեր տեսնեմ, դու ինձանից թագցնո՞ւմ ես:

Սանամը մոտեցավ Ռուստամին և ձեռը դրավ նրա ճակատին:

— Ձեռ քաշիր, ասում եմ,—բացականչեց Ռուստամը, հրելով մոր կրծքին:

— Տաքացած ես, բեր, խալդար կապենք վզիդ,—շարունակեց Սանամը, ինքն ել չհասկանալով, թե ինչ ե խոսում:—Տեսա՞ր, տեսա՞ր, Սուսան, ես առավոտ ասացի՞, վոր չերազ եմ տեսել, ասացի՞, վոր կամ չերխառ դալու չե, կամ գիր ենք ստանալու: Ռուստամ, քեզ ես գիշեր չերազումս մի ճերմակ ձիու վրա նստած տեսա, ճերմակ ձին դովլաթ ե: Հա՛, դու չափացնում եիր, չես ել չտեսիրդ...

— Լավ ե, լավ, եզուց, եզուց կպատմես, ձեռ քաշիր,—ընդհատեց Ռուստամը մոր շատախոսութիւնը:

— Ի՞նչ անեմ, ուրախութիւնից ինքս ել չեմ իմանում ինչեր եմ դուրս տալիս: Մուրաբա կուզե՞ս:

— Ձե. չեթե ինձ սիրում ես, այս գիշեր մի խոսեցնի:

— Հա, հոգնած ես, բալաս, հա, թող տեղերդ պատրաստեմ,—ասաց Սանամը և մոտեցավ անկողնին, վոր Ռուստամի համար անկողին պատրաստի:

Ամբողջ աչք խոսակցութեան ժամանակ Սուսանը ինքնայետի քով կանգնած, ձեռները ծոցում ծալած, մտիկ եր անում մերթ Ռուստամին, մերթ Սանամին: Յերբ Ռուստամը նայում եր, Սուսանը իսկույն աչքերը ցած եր գցում:

Սանամը պատրաստեց անկողինը և չերկու բաժակ թեյ խմեց, անդադար նայելով չուր վորդու չերեսին և չհամարձակվելով վորեւ հարց առաջարկել նրան: Սուսանը թեյ չեր խմում. շարունակ նայում եր ամուսնուն, կարծես, ձգտելով նրա դեմքի վրա կարդալ այն, ինչ վոր մտածում եր Ռուստամը:

Սանամը մի անգամ ես փորձեց վորդուն մոտենալ և խոսեցնել, բայց այս անգամ Ռուստամը նրան վճռողաբար հրամայեց, վոր իրան հանգիստ թողնի ու հեռանա մշուս սենյակ:

Դառն եր Սանամի համար ալդպես շուտով բաժանվել չուր վորդուց, բայց տեսնելով, վոր հնար չկա հակառակվելու, վախենալով, վոր մի գուցե ավելի բարկացնի Ռուստամին, հնազանդից և տհաճութեամբ հեռացավ չուր սենյակը: Սանամի և Ռուստամի սենյակները իրարուց բաժանվում ելին մի բավական ընդարձակ նախադավթով:

Առանձնանալով Սուսանի հետ, Ռուստամը դուռը կողպեց և հրամայեց Սուսանին ինքնաշենքը մի կողմ դնել: Սուսանը կատարեց հրա հրամանը և, քաշվելով սենյակի մի անկյունը, ձեռները խնայած և ծալեց կրծքին և դարձյալ սկսեց նայել լուր ամուսնուն: Մի ժամի չափ Ռուստամը լուռ ու մունջ շրջեց սենյակում: Սուսանը կամենում էր խոսել, հարցնել Ռուստամին նրա տխրության պատճառը, բայց ամեն անգամ, չերբ հայացքը ձգում էր նրա յերեսին, լեզուն կապվում էր: Վերջապես, Ռուստամը դադարեց լիտ ու առաջ շրջելուց և հանկարծ շոբերով և դաշույնը մեջքին պառկեց անկողնի վրա:

— Մոտեցիր ինձ, — հրամայեց նա Սուսանին:

Սուսանը դողալով մոտեցավ անկողնին և կանգնեց նրա առջև, գլուխը խոնարհած:

— Ձիուն գարի ու դարման տվի՞ր:

— Տվի:

— Շատ:

— Շատ:

— Հը՞մ, — ասաց Ռուստամը և լռեց:

— Ինչ փափուկ անկողին է, Սուսան: Այդ համար է:

— Սուսանին այնքան դարմացրեց այդ տարորինակ հարցը, վոր չիմացավ ինչ պատասխան:

— Ձեռ լսում:

— Հը՞մ, — հարցրեց Սուսանը, ավելի ու ավելի դարմանալով:

— Ո՞ւմ համար է, ասում եմ, այս անկողինը:

— Քեզ համար:

— Ինձ համար: Շատ շնորհակալ եմ... հապա... անեծք քեզ չար աստանա:

Սուսանը դողալով մի քալ լիտ քաշվեց:

— Ինձ համար է:

— Քեզ համար:

— Հապա մյ՞հար:

— Ի՞նչ մյուսը:

— Մյուս անկողինը՞:

Սուսանը այս ու այն կողմ նայեց, աշխատելով խուսա տալ Ռուստամի զննող հայացքից:

— Ձեռ իմանում:

— Ի՞նչ:

— Յես քեզ հարցնում եմ, թե...ըմ...անեծք քեզ չար սատանա... հարցնում եմ, վերտեղ ե լերկրորդ անկողինդ:

— Սուսանը լուռ եր:

— Ձեռ լսում:

— Ի՞նչ ես ասում,—հարցրեց Սուսանը դողդոջուն ձայնով, մի-
հնուլն ժամանակ ապշած նախելով Ռուստամի ուսերին:

— Յես հարցնում եմ, թե ե լերկրորդ անկողինդ,—կրկնեց Ռուս-
տամը:

— Ձեռ հասկանում:

— Ձեռ հասկանում ինչ եմ ասում...այն մլուսը, վոր, վոր...

Ռուստամը չկարողացավ ավարտել լուր խոսքը: Բարկությունից
նրա շունչը սպառվում եր: Նա նորից սկսեց շրջել չետ ու առաջ: Նա
մտածում եր. «Սատանա, ինչպես կարողանում ե անմեղ ձևանալ իմ
առաջ, իրեկ թե վոչինչ չի հասկանում»:

Միքանի բռնեց Ռուստամը շրջեց, հետո մոտեցավ անկողինն և
պառկեց, առանց հանվելու, այնպիս, ինչպես ներս եր մտել: «Անեծք
քեզ չար սատանա, անեծք—կրկնում եր նա մտքում— լեթե խալը
տեսնեմ... հետո, տեր ասաված, հետո: Կարելի չե նա տեսել ե լերե-
խալության ժամանակ, կարելի չե նա լերկրաշարժի որն ե տեսել, լերե
նրանք միասին հողի տակն են մնացել: Կարելի չե ինքը չի տեսել,
այլ լսել ե լուր մորից, վոր նկատած կլինի բաղնիքում կամ մի ու-
րիշ տեղ, մերկ ժամանակը: Ձե, չե, հապա հարսանիքի գիշերվա անցքը,
հապա այն լերկու ջահիլների խոսակցությունը: Որիորդ ժամանակ,
հըմ... Այս մեկը սուտ ե, չեա իմացա: Ինչ վոր պատահել ե, պսակվե-
լուց հետո չե լեղել: Յես ի՞նչ գիտեմ, չոթը սարի չետեում, թե նա աչա-
տեղ ինչեր ե արել: Իսկ մաչրս, մաչրս հիմար պառավ ե, տանը չի
նստել: Ու՛ֆ...

Յեվ Ռուստամը արձակեց կցծքից մի դառն հառաչանք: Քառորդ
ժամ նա այդ դրության մեջ մնաց, անդադար հառաչելով:

Սուսանը նրա լերեսը չեր տեսնում, միայն պատի տակ կանգ-
նած, ձեռները ծոցում ծալած, լուռ ու մունջ, անորոշ հայացքով նա-
լում եր սենյակի պատերին, առաստաղին, հատակին:

Հանկարծ Ռուստամը բարձրացավ տեղից:

— Նստի՛ր,—հրամայեց նա Սուսանին:

Սուսանը անշարժ եր:

— Նստի՛ր, քեզ ասում եմ:

Սուսանը նստեց:

«Հարկավոր ե քիչ ել համբերել»,—ասաց ինքն իրան Ռուստամը և
սկսեց կրկին հետ ու առաջ շրջել:

Մի ժամի չափ ևս նա շրջեց, հետո մոտեցավ սենյակի դռներին, բաց արավ և, աջ ու ձախ նայելով, կրկին փակեց դռները և հետ դարձավ։ Նա մոտեցավ թախտին և նստեց, վրաները քարշ ձգելով։

— Չեմ պատասխանում,— դարձավ նա Սուսանին, վոր դեռ նրստած եր թախտի վրա մի քիչ հեռու լուր ամուսնուց։

— Ի՞նչ։

— Ասա, վո՞րտեղ ե մյուս անկողինդ։

— Ի՞նչ անկողին։

— Վորի վրա, անառակ կնիկ, դու քնում ես Սեյրանի հետ։

Սուսանը վեր թռավ տեղից և ապշած նայեց նրա չերեսին։

— Սեյրանը,— կարողացավ միայն արտասանել նա և մնաց տեղն ու տեղը կանգնած։

— Հա, Սեյրանը։ Դու նրան չեմ ճանաչում, չեմ ճանաչում կուժ ծախող Հայրապետի տղա Սեյրանին։

Սուսանը լուռ եր։

— Պատասխանիր, լիբր, շան դավակ, պատասխանիր ճանաչում ես,— կրկնեց Ռուստամը, աշխատելով ձայնը շատ ել չքարձրացնել։ Նա վեր թռավ տեղից և, բռնելով Սուսանի թևից, կրկնեց մի քանի անգամ. «չեմ ճանաչում, չեմ ճանաչում»։

— Սեյրանին ճանաչում եմ,— վերջապես շնջաց Սուսանը թույլ կերպով։

— Ո՞վ ե նա։

— Մեր հարևանի տղան։

— Հարևանիդ տղան և քո, և քո, և քո չերկրորդ մարդը, չե՞... Ռուստամի շնչառությունը քանի գնում, այնքան սաստկանում եր, իսկ ձայնը խեղդվում։

— Ի՞նչ ես խոսում,— մրմնջաց Սուսանը, ապշած նայելով Ռուստամին, վոր նրա թևը բռնել եր ձախ ձեռով։

— Յես ո՞վ եմ,— հարցրեց Ռուստամը, ուղիղ Սուսանի աչքերին նայելով։

— Դու Ռուստամին ես։

— Դո ի՞նչն եմ։

— Իմ մարդը։

— Սուտ ես ասում, անիծված կնիկ, քո մարդը Սեյրանն ե, Սեյրանը, Սեյրանը։ Սոստովանվիր, ասում եմ, թե չե...

Այս ասելով նա բաց թողավ Սուսանի թևը, դաշույնը մերկացրեց, մի չերկու քայլ հեռացավ և կանգնելով նրա դեմ ու դեմ, ասաց. — տեսնո՞ւմ ես։

Կանթեզի լուսավորութեան տակ դաշուհնը փալկեց ինչպես կալծակ:
Սուսանի մարմնով մի սառսուռ անցավ, բայց հանկարծ նա,
զարծես, մի բան մտարեցելով, ուշքի չեկավ և ասաց.

— Հիմա հասկացաւ Ռուստամ, քեզ չար լեղուները խաբել են:
Սեյրանին չես ճանաչում եմ, նա իմ առաջվա փեսացուն եր, ծնողներս
քեզանից առաջ նրա հետ ելին ուղում պատկել:

— Դու նրան սիրել ես, անիծված, խոստովանվիր, վողջ քաղաքն
ե ասում:

— Սիրել եմ և ալժմ ել սիրում եմ: Բայց, Ռուստամ, չես անմեղ
եմ, անմեղ եմ անկողնիդ առաջ, ինչպես այս ճրագի լույսը:

— Սիրում ես, բայց անմեղ ես, լուր, լիր, դու նրա հետ գործ
ես ունեցել, խոստովանվիր, թե չե—չես կհաստատեմ:

— Թող իմ հոգին դժոխքի կերակուր դառնա, չեթե չես սուտ
եմ ասում: Յես Սեյրանին սիրում եմ, բայց նրա հետ գործ չեմ ունե-
ցել,—պատասխանեց Սուսանն ավելի և ավելի անհողդողդ ձայնով:

— Ինքը Սեյրանն և ասում:

— Անկարելի չե:

— Սուտ չեմ ասում, անիծված, ինքը Սեյրան և ասում:

— Սեյրանը, ախ, տեր աստված, նա սուտ և ասել:

— Սուտ չի ասում: Բնց տրա կուրծքդ:

Սուսանը չհասկացավ Ռուստամի միտքը:

— Հետ քաշիր շապիկդ, բաց տրա կուրծքդ, ասում եմ, թե չե՝
արջուհս գլխովս ե տալիս:

Սուսանը անզգայաբար, դողդոջուն ձեռներով հեռացրեց իրա-
րուց շապիկ եղրերը: Կանթեզի լույսը ընկավ Սուսանի կրծքին և
լուսավորեց նրա բամբակի պես սպիտակ ստինքը:

Ռուստամը դաշուհնը ձեռում, կողքին քարշ գցած, մոտեցավ
Սուսանին և գլուխը թեքելով նրա կրծքին, նայեց:

— Խալը, խալը, նա ճշմարիտ և ասում, ահա խալը...

Բացականչելով այս խոսքերը, ատամները կրճտելով, նա հար-
ձակվեց Սուսանի վրա, սղմեց նրա իրանը լուր ամուր բազկով, բե-
րանը կպցրավ կրծքին և տզրուկի պես բոլոր շնչով սկսեց ծծել նրա
մարմինը:

Սուսանը զգաց սաստիկ կսկիծ: Նա ձեռները բարձրացրեց, վոր
սլաշտպանվի, բայց աջ ձեռը ամուր դիպավ դաշուհնի սուր բերանին
և վիրավորվեց: Լավեց մի թեթեւ ճիչ, և Սուսանի անշնչացած դիակը
դուրս պրծնելով Ռուստամի գրկից, գլորվեց հատակի վրա: Մի ձե-
ռում արյունոտ դաշուհնը բռնած, իսկ մյուս ձեռը ոգի մեջ տարա-

ծած, Ռուստամը նայում էր Սուսանի անշնչացած դիակին: Ջարհու-
րելի չեր նրա դեմքը, արյունալի աչքերը վառվում էին այլովորդ ա-
ծուխի կտորների պես: Նրա հաստ շրթունքներից կաթում էին Սու-
սանի կրծքից ծածած արյուննի կաթիլները:

Այդ դրության մեջ Ռուստամը նմանվում էր սովածությունից
կատաղած մի գայլի, վոր առաջին հարվածով անշնչացնելով գառնու-
կին, պատրաստվում է նորից հարձակվելու, վոր չուր սուր ժանիք-
ներով հոշոտե վողորմելի զոհը: Անցան մի քանի վայրկյաններ: Ռուս-
տամը դաշուհնը մի կողմը շարտելով, չոքեց Սուսանի դիակի մոտ և
գլուխը թեքելով, սկսեց զննել նրա կուրծքը: Կարմիր արյունը դուրս
բղխելով նրա կծած սեղից, վողորում էր Սուսանի մարմարիոնի պես
ճերմակ կուրծքը: Ռուստամը դրպանից հանեց թաշկինակը և արյունը
սրբեց:

— Խալը, խալը, կրծքի խալը, ահա: Յես սխալվեցի խալը աչ-
տեղ ե, չես մշուս կողմն եմ կրծոտել:

Այդ ժամանակ Սուսանը թեթև կերպով շարժվեց: Նրա աչքերի
ծանրացած կոպերը հետ քաշվեցին և բիբերը բացվեցան:

— Անմեղ եմ, անմեղ եմ, աստված, քեզ հայտնի չե, ներիր իմ
մեղքերը և հետո առ հողիս:

Սուսանի աչքերը փակվեցին, և նա մնաց անշարժ:

Ռուստամը նայում էր նրա դեմքին: Հանկարծ նա արագությամբ
վեր թռավ տեղից և, դաշուհնը հատակից վերցնելով, վորոտաց:

— Ծանաչիր, անիրավ, լեզդի Ռուստամն եմ չես, տես ումն ես
խաբում, չար Հուլիանոս: Յես Ռուստամն եմ, Ռուստամը, բռնամուս
չեմ, նամուս ունիմ:

Դուրս թռավ վողորմելի զոհի կրծքից մի ահարկու ձայն, և աչ-
նուհեակ տիրեց լուսթյուն:

Սենյակի դռները դղրդացին և գոռալով ներս թռավ Սանամը:

XVII

Առավոտ էր: Շամախու ամբողջ հալ բնակչութունը խուռն բազ-
մությամբ դիմում էր դեպի արևմտյան կողմը: Բաղաքի ալն փողոցը,
ուր գտնվում էր Սանամի տունը, արդեն բոլորովին լիքն էր խառնի-
ճաղանճ ամբոխով: Մեծ թե փոքր, կին թե տղամարդ, ամենքը դիմում
էին դեպի Սանամի տունը, վոր այդ ժամանակ ներկայացնում էր
սիրտ մորմոքող տեսարան:

Վոստրիկանները աշխատում էին հետ մղել ամբոխը, բայց ամեն-
քը ձգտում էին մի կերպ առաջ շարժվել:

— Հայիֆ, հայիֆ են գլողալը, — լսվում եր այս ու այն կողմերից:

— Ասում են, վոր ինչքան գլողալ եր, ենքան ել լալ հոգի ունեւր:

— Խեղճ վողորմելին անմեղ տեղը փչացալ գազանի ձեռքին:

— Ռուստամը խելի մեղավոր չէ, — մեջ մտալ մոտ քսան ու չերկու տարեկան մի չերիտասարդ չեմբուկական ձեռք հագնւած:

— Հապա:

— Մեղավորը մեր քաղաքի վատ սովորութիւնն է: Յերեսը կապած աղկկան տալիս են մի անծանոթ աղալի: Տղան ուրիշներէ խոսքին հավատալով, ուրիշներէ խոսքերով ել կարծիք է կազմում չուր կնոջ մասին: Յեթե մեկը մի ծուռ բան է ասում, թեև սուտ, նրա աչքերը արջունով լցվում են, խելքը կորցնում է և ահա ալդպես է անում:

— Ե՛հ, աստված ինչ վոր գրել է մեր ճակատին, պիտի կատարվի, մնացալը դատարկ բան է, — ընդհատեց չերիտասարդին մի քառասուն տարեկան մարդ:

— Հայիֆ, հայիֆ:

Այսպիսի և ուրիշ նման ցավակցական դարձվածներ ելին լսվում անդադար ամբոխի միջից:

Սենյակներից մեկում հատակի վրա ձգված եր Սուսանի արջունաշաղախ և արջունաքամ դիակը: Պատուհանի վերին ապակիներից տռափոխյան լուսո ճառագայթները խուռն ամբոխի վրայով հազիվ ներս սահելով, լուսավորում ելին դիակի բաց չերեսը: Խաղաղութիւն հրեշտակը չուր թեկերը տարածելով այդ պայծառ չերեսի վրա, հովանավորում եր նրան մի տեսակ մուլ ստվերով: Պարսկական շքեղանկար պորքը, վոր սփռված եր դիակի տակ, ծածկվել եր Սուսանի արջունով: Դիակի շուրջ հավաքվել ելին Սուսանի ծնողները, աղգականները, բարեկամները և մոտակա հարեանները: Գլուխազը, անսպասելի տարաբախտութեան հարվածով փշրված մայրը, չոքել եր չուր զավակի անշունչ դիակի գլխի կողմում և վողբում եր: Նա փետտում եր չուր ալիսառն մազերը և կեղեքում կուրծքը չեղունգներով: Յերբեմն դուրս եր թռչում կրծքից մի կատաղի վալրենի գոռոց, և ամբոխը սարսռում եր ալդ ձայնից: Դիակի աջ կողմում կանգնած եր ծերունի Բարխուդարը ձեռները ծոցում խաչաձև ծալած: Նրա գունասպառ դեմքի վրա կենդանութեան չեթե մի նշան կար, այդ նրա խոցոտված սրտի կսկիծը արտահայտող աչքերն ելին, վորոնք բեկտված ելին Սուսանի խաղաղ և հանգիստ դեմքի վրա:

Դիակի ձախ կողմում նստած եր Սուսամբարը: Ի՛նչ եր անում Սուսամբարը, — այդ վոչ վոք չեր կարող հասկանալ: Նա մերթ կատաղաբար համբուրում եր չուր դժբախտ ընկերուհու չերեսը, մերթ ան-

հագուլթյամբ լիզում եր նրա փակ աչքերը, լերեսը, ձեռները, գլուխը և մերթ հեռու քաշվելով, փետտում եր յուր մազերը և սուր լեզունգնե-
րով կեղեքում մերկացած կուրծքը:

Սուսամբարի լետեից լերկու լերիտասարդներ աշխատում էլին
հետ մղել Սուսանի դիակից Սմբատին: Սմբատի դեմքը ահոխի լեր:
Նրա կուրծքը բաց եր և մազերը խճճված ու ճակատին թափված: Նրա
վառված աչքերը փալլում էլին կատաղի հրով, և նա անդադար գո-
ռում եր:

— Բայց թողեք, անիծվածներ, բայց թողեք, չես պիտի խեղդեմ,
պիտի շանսատակ տնեմ, Ռուստամ... Ռուստամ...

Բայց լերիտասարդները Սմբատին իրանց գրկում սեղմած, աշխա-
տում էլին մի կողմ քաշել նրան:

Սուսանի դիակի վռտներն կողմում չոքած եր Մարիամ բաջին:
Արտասուքի բուռն կաթիլները դուրս թափվելով աչքերից, վողողում
էլին նրա նիհար ու պղկած լերեսը: Նա անդադար վոսկորացած ձեռ-
ները բարձրացնելով, մերթ ծնկներին եր խփում, մերթ մերկացած
կրծքին:

Մարիամ բաջու հետեից պտույտ եր գալիս Հալրապետը: Միա-
միտ ծերունին, կարծես, չեր կարողանում հասկանալ, թե ինչ և կա-
տարվում և ինչ և պատահել: Նա զանազան տարրորինակ շարժումներ
եր անում: Նա շարժում եր յուր ալեխառն գլուխը, ձեռները տարա-
ծում ողի մեջ, շրջում եր ալս ու ալն կողմ, սրան ու նրան զանազան
անհասկանալի հարցեր առաջարկելով: Նա գոռում եր, գոչում, և վոչ
վոք նրա վրա ուշադրութուն չեր դարձնում:

Մինչ դիակի շուրջը կատարվում եր այդ տեսարանը, Սանամի
ննջարանում տեղի ուներ մի ուրիշը: Յերկու վոստիկաններ սենյակի
դռներում կանգնած, հետ էլին մղում Սանամին, վոր գոռալով, մազե-
րը փետտելով, կուրծքը ճանկոտելով, գլխամոլոր ձգտում եր ներս:
Նրա լետեից խոնվում եր ամբոխը մեծ բազմությամբ:

— Անիծվեք, գլուլախորով իլեք, բաց թողեք, բալիս լերեսը
տեսնեմ, նրան տանում են...

Իսկ թիչ եր անում այդ վողբերգության գլխավոր դերակատարը,
Ռուստամը: Նրա ճակատագիրը պարզ եր Ռուստամի աջ կողմում
կանգնած եր վոստիկանապետը, ձախ կողմում մի փոքրիկ սեղանի
շուրջը նստած եր քննիչը: Սատեպ-ստեպ ակնոցները ուղղելով, քննի-
չը խոժոռ դեմքով նայում եր հանցավորին և զանազան հարցեր ա-
ռաջարկում:

Ռուստամը լուռ եր և գլուխը քարշ ձղած: Նա, կարծես, քննիչի

հարցերը չէր լսում: Քննիչը տեսնելով, վոր Ռուստամը համառութեամբ լռում և և բացի «յես եմ սպանել»-ից, վռչինչ չի ուղղում պատասխանել, դրիչը դրավ սեղանի վրա և ասաց վոստիկանապետին.

— Տարեք ընտրել, պահեցեք մի առանձին տեղ մինչև իմ գալը: Ռուստամին դուրս տարան: Բալց նա հենց նոր եր վոտը դրել պատշգամբի վրա, ամբոխի միջից հանկարծ լսվեց մի աղաղակ, և նույն վարկյանին ճանապարհի հագուստով մի չերիտասարդ առաջ վազեց:

— Սեյրանը, ախ, դու Հուլիանոս, թողեք շանսատակ անեմ, — գոռաց Ռուստամը, կամենալով վազել դեպի չերիտասարդը:

Վոստիկանները նրան պահեցին:

Սեյրանը բացականչում էր.

— Բռնեցեք Ռուստամին, մի թողնեք մոտենալ Սուլանին: Յես սուտ եմ ասել, սուտ, խաբել եմ: Սուսանը անմեղ և, անմեղ և հրեշտակի պես. խալը մալրս և տեսել բաղնիսում, յես չեմ տեսել:

— Նա անմեղ էր, հողիս ել կորավ, — բացականչեց Ռուստամը և թուլացած ընկավ վոստիկանների գիրկը:

Ամբոխը Սեյրանին ճանապարհ տվավ, Սեյրանը վազեց ներս, ուր ձգած էր նրա անմեղ սիրեկանի արյունաքամ դիակը:


Անցավ մի րոպե, և դրսում չեղողները լսեցին մի թնդյուն:

Այդ ատրճանակի ձայնն էր:

— Բալաս վայ, բալաս վայ:

Այդ Մարիամ բաջու ձայնն էր:


1884 թ. Թիֆլիս:



ԶՈՒՐ ՀՈՒՅՍԵՐ

ՎԵՊ

1887



ԶՈՒՐ ՀՈՒՅՍԵՐ

I

Թիֆլիսի ժողովարանի ամառալին ընակարանում ընտանեկան լերեկույթ եր: Ուղիղ տասը ժամին, լերը ալգին կիսով չափ լցվել եր լերկու սեռի հանդիսականներով, ընդարձակ ճեմելիի ծալրում լերեկույթ ամբողջ քաղաքին հայտնի Միքայել Հալարյանը:

Նախ քան առաջ դալը, նա քանի մի վաչրկյան կանգնեց դալար պատատուկով վարագուրված վանդակապատի մոտ, կուրծքը դուրս ցցեց, նալեց զբոսնող հասարակությանը: Հետո նա աջ ձեռով ուղղեց սպիտակ մետաքսաւ փողկապը, վորի վրա պսպղում եր ադամանդյա խոշոր գնդասեղը, հարթեց ձյունի պես ճերմակ ժիլետը, վորի վրա փալում եր վոսկե ժամացույցի բարակ վոսկե շղթան, շփեց a la Բուլանժե խուզած միրուքը և, գլուխը բարձր պահած, ծանր, հանդարտ և, կարծես, ակամա քալելով առաջ ընթացավ:

Նա հասավ ալգու միակ ավաղանին, ուր ուղիւզ գծով դեպի վեր խփող շատրվանից, մանր անձրևի պես, թափվում եր հստակ ջուրը: Նա կանգնեց, մտիկ արավ շատրվանին, մտիկ արավ ջրի շողափալ շիղերին, ավաղանի մեջ սև ստվերների նման լող տվող ձկներին, գլուխը թախծությամբ շարժեց և լերեկը չիտ դարձրեց: Յերբեմն նա աջ կամ ձախ ուսի վրայով նալում եր անցողաբաժողներին և պատասխանում լուր ծանոթների բարեններին, հագիվ արժանի համարելով շարժել լուր սևագուլն, ամուր գլխարկի լեզրը:

Նա նուէն ակամա քալելով անցավ և մտավ ժողովարանի ոտտոնդան:

Յերեկույթը հետզհետե ալստեղ եր կենտրոնանում: Շուտով պիտի սկսեյին լեվրոպական պարերը, առ ժամանակ նվագում էլին ասիական լերաժիշտները: Մի սպա դես ու դեն վազվզելով, պարողներ եր հավաքում: Որիորդների մի մասը կավալերներ գրավել եր, շատե-

ըը դեռ սպասուեմ ելին: Յերեկուլթը վերջինն եր ամառվա շրջանում, շուտով ժողովարանը պիտի տեղափոխվեր ձմեռային բնակարան: պետք եր վերջին անգամ լիռանդով պարել, զվարճանալ: Մայրերը շարեշար նստած ելին դահլիճի աջ ու ձախ կողմերում և զգաստ աչքերով դիտում ելին աղջկերանց, ստեպ-ստեպ ուղղելով իրանց «թասսակրավը», աչսինքն գլխի ապարոշները: Ամեն մեկը հենված եր չուր փակ հովանիի կոթի վրա, ինչպես սովորաբար հենվում ե ցուպի վրա չուր զառնուկներին արթուն աչքով հսկող հովիվը:

Հալարչանը կանգնած եր արևելյան յերաժշտության սիրահարների շարքում: Նվագվում եր այն լեղանակը և յերգվում եր այն յերգը, վոր հատուկ սիրում եր Հալարչանը: Այս առանձին պատիվը նա վայելում իր իրեւ ժողովարանի իննը վերակացուներից մեկը և, վոր պլխավորն ե, իբրեւ հարուստ, ամուրի, առատաձեռն Հալարչանը:

Յեկ վորքան վոգեկորված եր թուրք յերգիչը: Նրա սաթի պես սև աչքերը կարմրել ելին, պսպղում ելին, ինչպես վառված ածուխի կտորներ և կոկորդալին ուժի ծալրահեղ լարվելուց վզի յերակները կապտել ելին, ուռել և դուրս ցցվել: Ավարտելով պարսիկ բանաստեղծի խոսքը մերթ մեղմ, մերթ զիլ և առաձգական կլկլոցով, նա քանի մի ակնթարթ լուում եր, շունչը խանգարվում եր, կուրծքը ուժգին բարձրանում եր և նիհար կոկորդի չոր վոսկորը դողդողում: Նա գլուխը դահիբի յետևից վեր եր ցցում, լայն բաց արած թոքերը լցնում եր դահլիճի ծանր, սղմված ոգով և ձայնը ավելի բարձրացնում: Քեմանի և թառի լարերի հնչուկները ներդաշնակ հետևում ելին նրա քմածին ձայնի անկանոն ելեկշներին:

— Աֆերիմ, աֆերիմ,—սովորաբար ասում եր Հալարչանը, խրախուսելով մերթ յերգչին, մերթ նվագողներին:

Բայց այս անգամ նա չուր գովասանքը Հարոսասանեց, մի քանի վայրկյան լսեց յերգչին, ապա քայլերը ուղղեց դահլիճի խորքը, մի փոքրիկ սանդուխով բարձրացավ վերև, դեպի աջ:

Այստեղ թղթասերները, չորս-չորս հոգի նստած կանաչ սեղանների շուրջը, խաղում ելին, խորասուզված իրանց զբաղմունքի մեջ, ինչպես որվա առևտուրը յերեկոյան համարակալի վրա գումարող վաճառականներ: Շատերը նրանցից լուռ ելին, չելին նայում իրարու յերեսին: Յերեմի միայն հատ-հատ անհասկանալի բառեր ելին արտասանում և, քաղցած գալլերի նման, խոժոռ հալացքներ ձգում մեկզմեկու ձեռների վրա: Կարծես, այդ մարդիկ անհաշտ թշնամիներ ելին, չար ճակատագրի կամքով ասպարեղ ելին դուրս յեկել իրարուց վրեժ առնելու: Գրեթե ամեն մի սեղանի մոտ կանգնած կամ նստած ելին

հետաքրքիր չեղոքներ, մարդիկ, վոր միշտ սիրում են ուրիշների բախտի ընթացքին հետևել, գուցե սեփականը չունենալու պատճառով:

Հալարյանը մոտեցավ այդ սեղաններից մեկին, աջ ձեռը դրեց չորս խաղացողներից մեկի ուսին, ձախը դրեց մյուսի ուսին: Առաջինը հաստ ուսեամբ զարանոցով, ճարպալի աչքերով, կոշտ շրթունքով, սև աչքունքով, ցցված փորով լերեսուն ու հինգամյա զվարճասեր Ախշարումյանն էր: Յերկրորդը իշխանատոհմ Սրաֆիոն Սահարունին էր—ժողովարանի ուղի ու ծուծը կազմող վերակացուններից մեկը: Դի մաքուր հագնված ջենտլմեն, կարճ միրուքով ու մազերով, կարմրադեմ, աչքերի տակի կաշին կուչկուչված: Քինթը արծվանման, շրթունքը ջրալի, վարդագույն, ավելի գեր քան նիհար, մոտ հիսուն տարեկան մի տղամարդ, վորի գեմքի վրա վաղուց շուպլ, անկանոն կյանքը դրոշմել էր լուր անջնջելի հետքը:

— Ուշացել ես,—ասաց իշխանատոհմ Սահարունին լուր խուլ, խզված ձայնով.—վեր կենամ:

— Այսոր խաղալու ցանկութունն չունիմ,—պատասխանեց Հալարյանը և ձեռները վերցրեց բարեկամների ուսերից:

— Մոսիո Վախվախյան,—դարձավ նա հանկարծ իշխանի կողքին կանգնած մի մարդու, վոր չեր մասնակցում թղթախաղին:

Մոսիո Վախվախյանը, վոր քառասուն տարեկան մի տղամարդ էր, մաքուր սափրած լերեսով, լիք-լիք թշերով, արդեն գդակը վերցրած սպասում էր Հալարյանի ուշադրությանը, կես-բարեկամական և կես-շողոքորթ մի ժպիտ լերեսին:

— Ի՞նչպես ե պարոնիս ամենաթանգագին առողջութունը,—մեջքից խոնարհ թեքվելով, կրկնեց նա միևնույն հարցը մի քանի տարբեր խոսքերով և, բավարար պատասխան ստանալով, շարունակեց:—Շատ ուրախ եմ, հիմա նորին պալծառապալությունը ձեր մասին եր հարցնում, ասացի, չերևի, կգա:

— Ինչո՞ւ տխուր ես,—հարցրեց Ախշարումյանը, նայելով Հալարյանի լերեսին:

— Յես...տխուր չեմ...—պատասխանեց Հալարյանը, տատանվելով, —մոսիս Վախվախյան, գնանք այգի:

Մոսիո Վախվախյանը ուրախ-ուրախ հետևեց նրան և գուրս չեկավ ճեմելիի վրա: Նա, անդադար պտույտ անելով Հալարյանի շուրջը, մերթ անցնում էր աջ, մերթ ձախ կողմ, ինչպես հարմար էր վերջինին:

— Այն ել լսած կլինեք, վոր Ամբակումովը մեռել և ու ազգին չերկու քսան թուման, չերկու շահի ու վից կոպեկ և թողել,—խոսեց

մոսիո Վախվախյանը, Հալաբյանին զվարճացնելու նպատակով,—կը-
տակել է, վոր այդ փողով չերեք ուսումնարան բաց անեն ու տասներ-
կու ստիպենդիանտ պահեն ազգի պայծառութիւն համար:

Յեվ նա մի քայլ առաջ գնալով, չերեսը մի կողմ դարձրեց, քնթի-
տակ ծաղրեց ու հայհոյեց հանգուցյալին:

— Հին հեքյաթ ես ասում, մոսիո Վախվախյան,—ասաց Հալաբ-
յանը,—չես քեզ ասել եմ, վոր միշտ նոր-նոր լուրեր պատմես ինձ:

— Այ նոր լուր, ընձ, ան կողմ մտիկ արեք:

Յեվ այս ասելով, մոսիո Վախվախյանը ցույց տվեց մի գեղեց-
կադեմ շիկահեր կնոջ, վոր մի տղեղ կնոջ թևից բռնած գալիս եր դեմ
ու դեմ:

— Այդ ել թող,—հկատեց Հալաբյանը, ուշադրութիւնն չդարձ-
նելով գեղեցկադեմ կնոջ վրա:—Յեթե կարող ես, զվարճացրու ինձ,
մոսիո Վախվախյան, չես տխուր եմ:

— Տխուր,—կրկնեց մոսիո Վախվախյանը զարմացած,—դուք
վոր տխուր եք, չեմ պիտի ուրախ լինեմ: Այ, այսպես ե աշխարհիս
բանը: Ձեր լէնչն ե պակաս, ասեք տեսնեմ, փող, խելք, առողջութիւն,
ազատ ապրուստ, դժեք ել եք տխրում: Բաս վնչ ինձ նմաններին,—
ավելացրեց նա, խորին հառաչելով:

— Դու ամենարախտավոր մարդն ես:

— Յեւ...

— Բախտավոր ես, վոր հոգս ու ցավ չունես: Յետ գնանք. այս
մարդկանց չերեսը հազար անգամ տեսել եմ և ձանձրացել:

Նրանք մտան դահլիճ: Յեվրոպական պարերը առ ժամանակ
ընդհատվել էին: Խուռն բազմութիւնը կազմել եր մի փոքրիկ շրջան,
ուր ցանկացողները պիտի ասիական պարեր պարեին:

Յերաժիշտները նվագում էին, թմբկահարը բարակ ձողերով ուժ-
գին զարկում եր թմբուկի չորացած կաշվին, չերգիչը—գահիբիչին,
հանդիսականները ծափահարում էին, ասպարիզում պարող չկար:

Հանկարծ խրոխտ քայլերով մեջ մտավ մի բարձրահասակ, գե-
ղեցիկ կերպարանքով վրացի չերիտասարդ իշխանազն յուր ազգային
մետաքսալ բազմեղանգ հագուստով: Դա հայտնի չեր Թիֆլիսում իրրե
ամենալավ պարիչ: Ծափերը ավելի սաստկացան: Իշխանազնը յուր
նուրը, մետաքսից կարած, ծալերը սուր և կրունկները բարձր մաշիկ-
ները դահլիճի վողորկ հատակին քսելով, սահեց առաջ: Ամբոխը չետ
ու չետ քաշվեց, ասպարեղը լայնացավ: Իշխանազնը մի պտույտ գոր-
ծեց, մոտեցավ, մեջքից թեքվեց և մորթե կարճիկ գդակը ձեռին բռ-
նած, գլուխ տվեց մի հայ որիորդի:

— Բրնովո, բրնովո, — գոչեցին միաբերան այս ու այն կողմից, վորոնց թվում ամենից բարձր մոսիո Վախվախյանը:

Որիորդը գլխով բացասական նշան արավ: Յանկանում եր նա պարել, պետք ե խնդրելին, և խնդրեցին, այսինքն մի քանի չափահաս տեղացի կանաչք բոլնեցին նրան և ուժով ներս մղեցին:

Քանի մի վալրկյան իշխանազնը և որիորդը հուշիկ քալիւրով պտտեցին այս կողմ, այն կողմ, առաջ չեկան, չետ քաշվեցին, շուռ չեկան դեպի չետ, և սկսվեց Դադստանի պարերից մեկը: Մի պար, վոր տոնքան վալրենի չե թվում չեվրոպացուն և այնքան շարժում, դղբդում և ասիական մարդու սրտի զգայուն թելերը:

Մի պար, ուր զգացվում ե կրակոտ լեռնականի արյան ուժգնությունը, սրտի կատաղի զարկը, հոգու անվեհերությունը, զգացումների սաստկությունը:

— Տաշ, տաշ, տաշ, — գոչում ելին հանդիսականները:

— Տաշ, տաշ, տաշ, — գոռում եր մոսիո Վախվախյանը, վոգեւորված ծափահարելով:

Շնորհալի թեկերը մեղմիկ և քնքուշարար շարժելով, չերբեմն աջ, չերբեմն ձախ ձեռք կողքին դնելով, գլուխը հեղաբար ուսին թեքած, որիորդը լողում եր շեղաձև, ինչպես մի թեթև մակուցիկ անդորր ծովի մակերևույթի վրա: Նրա չեռակից, մեջքը ստեղծվ ինչ կորացրած, աչքերը վառ, սլանում եր իշխանազնը, վերպես մի թևատարած բազե, վոր ձգտում եր չուր մագիլներով վորսալ անմեղ թռչնիկին:

Դահլիճը թնդում եր, դեմքերը ուրախ-ուրախ փայլում ելին, ամբոխը խռնվում եր առաջ ու առաջ, շրջանը հետզհետե սղմվում եր, թմբուկի ձայնը ավելի ու ավելի սաստկանում եր: Հանկարծ որիորդը կանգնեց, ձեռները ցած գցեց, իշխանազնը սկսեց նրա դեմ կատաղի պտուշտներ գործել: Մի կետի վրա, նա կրունգները ուժգին թափով զարկում եր հատակին, ցցվում եր վրտների մատների վրա, քաշանում եր, բարձրանում, ժպտում եր որիորդի չերեսին և մի կրակոտ շարժում գործելով, կրկին սկսում եր շրջաններ անել, վորպես մի մանկական պտուտակ:

— Դուք հավանճւմ եք այդ աղջկա պարիլը, — լսեց Հալաբյանը, վոր ամբոխից քիչ հեռու մոսիո Վախվախյանի հետ կանգնած, անորոշ հայացքով նայում եր պարողներին:

Նա չետ մտիկ արավ, և չերես առ չերես հանդիպեց չուր ծանոթ տիկին Սոփիո և որիորդ Նատալիա Սադափյաններին:

Նա գլխը վերցնելով, սեղմեց տիկնոջ և նրա աղջկա ձեռք:

— Ատելով ատում եմ հավլաբարցիներին, — նկատեց որիորդը:

արհամարհանքով ժպտալով, — մեջ են ընկնում պարելու, ախ ել իմ, իշխան Մարգուլաձեի հետ: Ախ, ինչ գեղեցիկ տղամարդ է, չես սիրահարվեցի բոլորովին: Այստեղ տոթ է, մամա, գնանք այգի, — դարձավ նա չուր մորը և, բռնելով վերջինի թևից, շարունակեց խոսել Հալաբյանի հետ:

Մոսիո Վախվախյանը, հեռվից բարեկեցիկ, չհամարձակվեց մոտենալ և ակամա հեռացավ Հալաբյանից: Ամուրին խուռն բազմության միջով հետևեց չուր ծանոթ դամբերին և կրկին դուրս չեկավ նրանց հետ այգի:

Տիկին Սոփիոն նիհար, դեմքի մանր գծերով, միջահասակ, չեռանդուն բերանով, ալեխառն մազերով հիսուն տարեկան մի կին երտեղական հագուստով: Նրա քայլվածքը, ծանր շարժվածքը, արհամարհական հայացքը արտահայտում էին մի անընկճվելի գոռոզութուն: Նույն գոռոզութունն չերևում էր և նրա դատեր, Նատալիայի, դեմքի վրա, միայն ավելի մեղմ, շնորհիվ չերիտասարդ տարիների: Այդ միջին հասակով, բարակ կազմվածքով, մոտ քսան և ութ տարեկան աղջիկը չուր մոր համապատկերն եր ներկայացնում: Աչքերը փոքրիկ, կապուտակ, շրթունքը սեղմված, քինթը ուղղադիժ, սրածայր, ճակատը տափարակ, սև-սև խիտ հոնքերը քնթի արմատի մոտ միախառնված, կարմրախալտ աչտերը նիհար, ծնոտը փոքր ինչ դուրս ցցված, մազերը ագուալի փետուրի պես սփ-սև — ահա Նատալիայի կերպարանքը: Կորսելի մեջ ամուր սեղմված մեջքը պնչափ բարակ էր, վոր, կարծես, կարելի չեր լերկու ձեռի մատների ծայրերով գոտեորել նրան: Մուգ-կարմրագույն հագուստը ծայրե ի ծայր սքողված էր նուրբ ծաղկանկար մետաքսյա հյուսվածքով: Մորենագույն թավշյա ուսնոցակը, թեպետ լորելով կոնքերը մինչև արմուկները, ծածկում էր նրա թիկունքը և կրծքի մի մասը: Ահագին սպիտակ փետուրով զարդարած բացդեղնագույն գլխարկի լայն չեզրը, աջ կողմից դեպի վեր ծոված, տեաանելի չեր կացուցանում նրա գլխի մի մասը, նեղ ճակատը և հարթ ու տափարակ ճոնքը:

— Շատերը ինձ նախատում են, թե ինչու շատ քիչ եմ գալիս ժողովարան, — խոսում էր նա Հալաբյանի հետ, — ասացեք խնդրեմ, ինչ կա այստեղ: Նայեցեք այս մեկի հագուստին, նայեցեք աչնմյուսի գնացքին և, վերջապես, այդ դեմքերը... Ֆի... ափսոս չե՞ «Կրուժոկի» հասարակութունը:

— Դիմ քարվանսարի բազազների աղջկերքն էն ու կնիկները, — հարեց տիկին Սոփիոն, շրթունքը արհամարհանքով ծռելով:

— Ափսոս Մարոն այստեղ չի, — շարունակեց Նատալիան, — վոր այդ անհայտ չերիտասարդներից մեկի հետ չերկար ու բարակ խոսեր:

Նա ցուլց Կովեց մի խուժը համալսարանական ուսանողների, վոր նստած էլին ճեմելիի նստարաններից մեկի վրա:

Մարտանունը, կարծես, սթափեցրեց Հալարչանին, վոր մինչև այդ վայրկյան լուռ լսում եր մոր և դստեր պարսավանքը հանդիսականներին:

— Որիորդ Մարիամը, — ասաց նա հետաքրքրված, — լճրը կգա:

— Ով գիտե, նա Դիլիջանը խիստ և հավանել, կգո շուտով, թե՛ չե, — պատասխանեց Նատալիան, ըստ չերեւթին ակամա:

— Ինչո՞ւ համար ելիք հարցնում, — հարցրեց տիկին Սոփիոն Հալարչանին:

— Հենց այնպես, — պատասխանեց Հալարչանը, տեսնելով, վոր լուր հարցը դուր չեկավ վոչ որիորդին, վոչ տիկնոջը:

Նրանք կրկին վերադարձան ոտտոնդա, և այստեղ Հալարչանը, ներում խնդրելով տիկնոջից և որիորդից, հեռացավ: Նա մոտեցավ մի վաճառականի, մի քանի վայրկյան խոսեց, հետո մոտեցավ մի իրավաբանի, հետո մի բժշկի: Վոչ վոքի հետ նա չերկար չեր խոսում: Առհասարակ նրա տրամադրությունը սովորականը չեր:

— Ի՞նչ տխուր և այս չերեկո, — ասաց նա, թախծութեամբ լի հայացքով նայելով դոսնող բազմութեանը:

Տասն ու վեց տարի չեր, վոր Հալարչանը այցելում եր այդ ժողովարանը, և այդ չերկար տարիների ընթացքում հասարակական ղվարձարանը քառասուն ու չերեքսմյա ամուրիի համար դարձել եր մի տեսակ ընտանիք: Այստեղ եր նա, ցերեկվա աշխատանքից հետո, չերեկոները հանգստություն վայելում: Գալիս եր միևնույն ժամին, գնում եր միևնույն ժամին: Ձմեռը ժողովարանի տան պայծառ լուսավորված ընդարձակ սենյակները, ամառը նրա աչգու միակ ճեմելին, միևնույն հասարակությունը, կանաչ սեղանների մոտ նստած միևնույն քնահարթ դեմքերը, ուռած աչքերը, այս ու այն կողմ պտտող ծուլ և համառ սպասավորները, բոլորը, բոլորը նրան այնքան ծանոթ էլին, վորքան լուր ընտելարանի կահ-կարասին, լուր վրաջի հագուստը: Տարբերությունն այն եր, վոր կահ-կարասին և հագուստը հնանալիս նա փոխում եր, այնինչ՝ ժողովարանը նրա աչքում մնում եր անփոփոխ: Յեվ չեթե վորեւե նորմուծություն լինում եր, չեթե չերևում էլին նոր դեմքեր, շուտով ձուլվում ու միանում էլին հների հետ, և նա դարձյալ տեսնում եր մի տաղտկալի ամբողջություն: Տաղտկալի և միևնույն ժամանակ այնքան ընտանի մի շրջան, վորից բաժանվելը նրա համար կնշանակեր բաժանվել լուր կյանքի մի ընտեկան մասից, զրկվել գոյություն մի անհրաժեշտ տարրից:

Իսկ ց չերեք նա այնքան ձանձրացած չեր, վորքան այդ չերեկո։ Ի՞նչ եր պատճառը—ինքն ել տակավին չեր կարողանում վորոշել։ Մի քան պարզ եր, վոր նրա տխրութունը սկսվեց ժողովարան գալուց մի քանի ժամ առաջ։ Իրիկնադեմ եր. նա կանգնած եր չուր տան առաջ, վորողցի անկունում և խորհում եր, թե ռւր և ինչպեա անցկացնի չերեկոն, վոր ավիլի զվարճալի լինի։ Այդ րոպեչին հանկարծ նրա առաջով անցավ այն հասարակական կառքերից մի՛նը, վոր քանում են քաղաքի և մոտակա ամառանոցների միջև։ Կառքի մեջ նստած եր մի մարդ չուր կնոջ և բաղաթիլ չերեխաների հետ, վոր ամառանոցից վերադառնում էլին քաղաք։ Հալարչանը նայեց սլացող կառքին, լսեց չերեկու մանուկների և մի փոքրիկ աղջկա ուրախ քրքիջը, և հանկարծ մի անորոշ զգացում համակեց նրա սիրտը։ Նրան տիրեց մի թախծութուն։ Որը մի՛նեց, այս թախծութունն ավելի սաստկացավ, իսկ ականջում դեռ հնչում եր ուրախ ընտանիքի քրքիջը։

Յեվ այս տրամադրությամբ նա չեկավ ժողովարան։ Նա ախորժակ չունեի վոչ թուղթ խաղալու, վոչ ընթերցարանում չերդիծարանական թերթերով չուր միտքը զբաղեցնելու և վոչ չերաժտությամբ զվարճանալու։ Նա այնքան տխուր եր, վոր կամեցավ դուրս գալ ժողովարանից սովորական պահից չերեք ժամ առաջ։ Նա արդեն քայլերը ուղղել եր դեպի դուրս, չերը նրա առաջը կտրեցին իշխան Սահարունին, Ախարումչանը և մոսիո Վախվախյանը։

Նրան գրեթե ուժով նստեցրին ընթրիլու ալդու ծառերից մեկի տակ։ Ճեմելին հետզհետե դատարկվում եր, ընտանետեր հանդիսականները ցրվում էլին, մնում էլին պարողները, ընթրողները, ազատ ու աղափները ու մի քանի կանաչք, վորոնց ամուսինները դեռ չեին վերջացրել թղթախաղը կամ ճնարդին։ Այս կանանց թվումն եր և՛ մի առողջ կազմվածքով, կարմիր ալտերով, գեղեցիկ և չերիտասարդ կին, վոր մի չերիտասարդ պարոնի հետ նստած եր Հալարչանի խմբից վոչ այնքան հեռու։

Իշխան Սահարունին չուր կրքոտ աչքերը հառեց առողջադեմ կնոջ վրա։

— Շարմանտ, ձերդ պաթառափալլութուն,— դարձավ մոսիո Վախվախյանը իշխանին,— ճանաչո՞ւմ եք։

— Ո՞վ ե, ո՞վ ե,— հարցրեց հետաքրքրված հաստապարանոց Ախարումչանը։

— Յերեք քսան ու վեց տարեկան քավթաուի մի անտիկա,— պատասխանեց մոսիո Վախվախյանը։— Վհնց եք, պարոն Ախարումչան։

— Յե... վ՛րվվվ,— մոնչեց Ախարումչանը, աչքերը պսպղացնելով

և չուր խոշոր ու սպիտակ ատամներ լերին շարքով սեղմելով ներքին
սև շուրթը:

Այդ վայրկյանին նրա ամբողջ կերպարանքը ներկայացնում էր
մի մարմնացած վավաշտութուն:

— Կեցցեն տխմար ծերերը, կեցցեն չերիտասարդ կանայք,—
գոչեց իշխան Սահարունին, գինու բաժակը դատարկելով:— Չհեկ,—
դարձավ նա սպասավորին, վոր վորսալին շան պես պտուկտ-պտուկտ
էր անում ամուրիների սեղանի շուրջը,— գինին սեղանից պակաս չլինի:

Այս չերկդիմի ակնարկների ժամանակ Հալաբյանը, չերեսը հետ
դարձրած, նայում էր մի ուրիշ կողմ: Հարևան սեղանի մոտ նստած
ընթրում էր չերեսուն ու հինգ տարեկան մի տղամարդ չուր չերիտա-
սարդ կնոջ հետ: Հալաբյանը ճանաչում էր այդ ամուսիններին: Մարդը
քաղաքային վարչության մեջ մի հասարակ պաշտոնյա չեր, չերեք տա-
րի առաջ պսակվել էր և չուր Հափավոր ռոճիկով կառավարում էր ըն-
տանիքը: Ամեն չերեքշաբթի չերեկո մարդ ու կին դալիս էլին ընտա-
նեկան չերեկույթ, զրոսնում էին իրանց փոքրածիվ ծանոթների
հետ, առանձին ընթրում և թև թևի գցած գնում:

Արմուսկները սեղանին հենած, մարդը ծխելով զվարճախսում էր.
կինը պաղպաղակ էր ուտում: Վոչ վոքի վրա ուշադրութուն չելին
դարձնում. նրանց նայվածքը արտահայտում էր փոխադարձ սեր, հա-
վատարմութուն և փաղաքշանք: Համակրելի չեր թվում Հալաբյանին
մանավանդ չերիտասարդ կնոջ ժպիտը: Այդ տեսակ քաղցր, գրավիչ
չերտնութուն արտահայտող մի ժպիտ նա չուր կյանքում չեր տեսել:
Բազմազգի, բազմալեզու ամբոխի մեջ այդ զույգը նրան թվում էր ա-
մենից չերջանիկը և անհոգը:

«Ի՞նչ է նրանց խոսակցության առարկան», մտածեց նա, հառա-
չելով:

Հանկարծ կինը քահ. քահ ծիծաղեց, վոտքի կանգնեց: Մարդը
վճարեց ընթրիքի համար, չերկու անգամ համարեց սպասավորի հետ
բերած փողը, խնամքով գրեց գրպանը, առավ կնոջ թևը և ուրախ-
զվարթ խոսակցելով, դիմեցին դեպի դուրս:

«Կզարթի՛ր կտեսնի չես մոտը չեմ, լաց կլինի... ախ, հոգյակս
լիտն»:

Այս խոսքերը պարզ հասան Հալաբյանի ականջին, չերը զույգը
անցնում էր նրա մոտով:

«Լեռներ նրանց չերեխան և», մտածեց նա և այնքան նայեց զույգի
հեռից, մինչև նա բոլորովին նա անհայտացավ:

— Չանջողվեց,— ձայն տվեցին միաբերան Իշխան Սահարունին
և Ախշարումյանը:

Հալարւանը վերաւորվեց. իերկդիմի ալնարկութունը իերջանիկ զուգին եր վերաբերվում:

— Զարմանալի լե,—արտասանեց նա և դանակ-պատառաքաղը վերցրեց ընթրիքը շարունակելու:

— Խնչն ե զարմանալի,—ասաց իշխան Սահարունին,—զարմանալի լե, վոր նետդ քարին կպավ:

Հալարւանը դողարեց ուտելուց և մի հանդիմանական հալացք ձգեց իշխանի լերեսին:

— Գիտեք, պարոններ,—դարձավ նա յուր սեղանակիցներին լուրջ լեզանակով,—լեթե մի որինավոր մարդ լսի մեր խոսածը, կզգվի:

Սեղանակիցները զարմացած նայեցին միմյանց լերեսին. ինչ եր ոչանակում հանկարծակի փոփոխութունը մի մարդու, վոր լերքեք ընկերական կատակների նկատմամբ բծախնդիր չեր լեղել:

— Ներողութուն,—գոչեց իշխան Սահարունին,—լես չիմացա, վոր նրանք ազգականներդ են:

— Վոչ ազգականներս են, վոչ ել ծանոթ եմ ալդ զուգի հետ,—պատասխանեց Հալարւանը,—լես ուզում ելի նկատել, վոր առհասարակ մենք... Բայց թողնենք, պարոններ... Այս լերեկո իմ տրամադրութունս լավ չե:

— Վոչ, պետք ե ասելիքդ վերջացնես,—համառեց իշխան Սահարունին,— ինչ ելիր ուզում ասել, վոր մենք... ինչ...

— Վոր մենք մեր լեզուն մաքուր չենք պահում, վոր մենք բամբասում ենք, վոր մենք զրպարտում ենք ուրիշներին, վոր վերջապես, մենք վոտից մինչև գլուխ փչացել ենք...

Այս ասելիս Հալարւանը աչքան հուզվեց, վոր պատառաքաղը խփեց ափսեղին:

— Ո՞ր, անմեղ դառն, ո՞ր, սուրբ ճգնավոր,—գոչեց իշխան Սահարունին ծաղրաբար,—աբի փեշերդ համբուրեմ, արի: Այդ վճիռ բաղնիսում ես այստր լվացվել, վճիռ վարդապետից ես ալդ քարոզը սովորել... հա հա հա հա... Միթե, ճշմարիտ, դու չիլ հավատում ես, թե Սահարունին աչքան ծեր ե, վոր պիտի պառավի պաս պահի: Ո՞՞վիլ, վարդապետ, իսկ չես... լես փող, գինի ու կին, մանավանդ կին, ահա իմ հավատամքը: Ատանդե, ատանդե, դու ուզում ես, վոր Սահարունին չզվարճանա ահա ալդ տեսարանով: Նայիլ, նայեցեք, պարոններ:

Նա ձեռով համարձակ ցույց տվեց մի ծերունի, վոր անցնում եր սեղանի մոտով: Առողջակազմ լերիտասարդ կնոջ մարդն եր դա, «նարդին» վերջացրել եր և ձեռները մետաքսա «արխալուղի» գրպանը դրած, գնում եր ամուսնու մոտ, վոր դեռ միևնույն տեղում նստած սիրալիլ խոսում եր յուր լերիտասարդ կավալերի հետ:

— Ամօթ քեզ, ամօթ քեզ, Սահարունի, քնած ես, չես տեսնում նոր աքաղաղներին, — գոչեց իշխանը և կրծքի խորքից մի ախ քաշելով, դարձավ մոսիո Վախվախյանին, — Սերգո, սաղանդարներին կանչիր այստեղ:

Սերգոն վաղուց եր սպասում ալդ պատվերին: Նա վազեց դահլիճ: Յերեկույթը գրեթե վերջացել եր, պարողներ չկային, ասիական լերաժիշտները աղատ ելին, չեկան, նստեցին ամուրիների սեղանի մոտ և մի նոր լեռանդով սկսեցին նվագել իշխանի պատվիրած լեղանակները:

Գիշերվա լերկու ժամից անցել եր արդեն, չերբ Հալաբյանը առաջինն ասաց, թե տուն գնալու ժամանակ ե: Նա վճարեց ընթրիքի փողը ամենի փոխարեն: Իշխանը վերավորվեց:

— Ձերդ պաշտօնափալուծյուն, մի նեղանաք, ընկերուկյուն ե, այսոր մեկը, եզուց մյուսը, — միջամտեց մոսիո Վախվախյանը և խուկուչն մտքումը ավելացրեց, — Սերգոն ել մեջտեղ ձրի կուտի, աչ քո տիրոջ նամուսը դետինը մտնի...

Քանի մի րոպե անցած մի կառք Հալաբյանին տեղափոխում եր չուր բնակարանը: Թանձր փողիով լի փողոցներով կառքը անցնում եր ահագին դղրդոցով և ծանրաքայլ: Դա անիվները քալքալված, զսպանակները ծանգոտ, ծածկոցը գուլնից զրկված աչն կմախքներից մինն եր, վոր փողոց են դուրս բերում միայն կես գիշերից հետո: Յերկու նիհար ձիեր հաղիվ կարողանում ելին նրան քարշ տալ իրենց հեռեից, տնքալով, հաղալով և գլուխները վալք ու վեր շարժելով: Յերբեմն նրանք կանգնելու տրամադրություն ելին ցուլց տալիս: Կառապանը վոտքի չեր կանգնում և չերկար մտրակով հարվածում դանդաղ կենդանիներին:

— Կոնց, — գոչեց Հալաբյանը բարկացած, չերբ կառքը սկսեց արդեն Հափից դուրս անխնա տորբել, ձգելով մի կողքից մյուսի վրա և մեջքը խփելով քաշի պես ամուր կաշվե բարձին:

Նա ցած իջավ, վճարեց կառքի վարձը և մնացյալ ճանապարհը շարունակեց վոտով: Յերբեք նա ալդ անախորժ տրամադրությամբ տուն վերադարձած չեր: «Ի՜նչ կյանք ե, ի՜նչ ապրուստ ե, մտածում եր նա, որինավոր մարդիկ իրանց գլուխը բարձին դրած հանգստանում են, չես քարշ եմ գալիս փողոցներում»:

Յեվ քանի մոտենում եր բնակարանին, աչնքան կատաղությունը սաստկանում եր: Նա նոցում եր աջ ու ձախ Սոլովակի տների մուկ պատուհաններին, և գիշերային ընդհանուր լուությունն ու խավարը ճնշում ելին նրա սիրտը:

Նա հասավ մի ուղիղ և բավական լայն փողոց, կանգնեց մի չերկհարկանի տան առջև: Նա մտաւ սեղմեց պատի մի կետին: Փոքր անցած, դռները կարծես ինքն ըստ ինքյան բացվեցին, նա ընդարձակ մաքուր սանդուխով բարձրացավ տան վերին հարկը:

Գավթի դռների մոտ նրան դիմավորեց մի կարճահասակ մարդ, վոր շտապում եր բռնի մատներով կապել չուր չերկայն արխալուգի կոճակները: Դա նրա վաղեմի ծառան եր, զազախեցի Թաթոսը, նրա չորս սենյակից բաղկացած բնակարանի մի միակ շնչավորը, վոր ամեն գիշեր պարտավոր եր չուր տիրոջ առաջը դուրս գալ, վորքան ևս նա ուշ վերադառնար:

Հալարչանը լուռ թուլլ տվեց Թաթոսին վերարկուն հանել, մտաւ ներս—մի կես-չեվրոպական և կես-ասիական ճաշակով կահավորված սենյակ: Նա հոգնած, թուլացած, գլուխը խառն ի խուռն մտքերով լի, նստեց տաճկական թախտի վրա և մեջքը տվեց փափուկ բարձին:

Թաթոսը, սենյակի մեջտեղում կանգնած, ձեռները կրծքին դրած, սպասում եր: Նա պիտք ե հանել տիրոջ կոշիկները, հագցնել հոգաթափները, չերկար ծխաքարը տար նրան, սպասել մինչև ծխել վերջացնելը, ճանապարհ դնել ննջարան, և այնուհետև միայն ազատ եր: Բայց, չտեսնված և անսպասելի բան, պարոնը փոխանակ չուր սովորական հրամանները տալով, մի բարկացրոտ հայացք նետեց Թաթոսի վրա և բարձրաձայն գոռաց.

— Կորիւր աչքիցս:

Ծառան մի քանի վայրկյան ապշած մնաց, մտիկ արավ չորս կողմ, չետ ու չետ քաշվեց և վախեցած դուրս չեկավ:

— Հիմար, անմիտ, աննպատակ կյանք,—ասաց Հալարչանը, մնալով միայնակ չուր ընդարձակ և լուիկ սենյակում:

II

Առավոտյան տասն ու մեկ ժամն եր: Թաթոսը վաղուց սպասում եր չուր տիրոջ զարթնելուն: Մի քանի անգամ նա զգաստ քայլերով մոտեցավ ննջարանի դռներին, ականջ դրեց, ձայն-ձուռն չեր լսվում: Մի անորոշ չերկմտութիւն ծագեց նրա գլխում. ի՞նչ մի տարրերնակ փորձանք և պատահել պարոնին արդյոք, վոր գիշերը այնքան բարկացած եր և մինչև այժմ դեռ չի զարթնել:

Նա կրկին մոտեցավ ննջարանի դռներին, և այս անգամ չուր կոլորակ, խիտ մազերով սև միրուքը ցցելով, սկսեց դռան բանալիի անցքով նայել դեպի ներս: Նա կարողացավ տեսնել միայն չուր տիրոջ ամառային վերմակի սպիտակ ծալրը:

— Տեր աստված, — ասաց նա, վերջապես հուսահատվելով, — չլինի այդ մարդը տնմաս մեռավ:

Նա լճեց ներս մտնել, և հանկարծ լսեց չուր տիրոջ հաղալու ձայնը: Նա ներս շտապեց: Հալարչանը մի կռան տրմունկը կարապի փետուրով լցրած սպիտակ բարձին հենած, ծխում եր: Նրա թավամազ կուրծքը կիսով հափ բաց եր, աչքերի շրջանակները կարմրած, կուպերը մի քիչ ուռած: Անկողնակալի մոտ գտնվող փոքրիկ, բոլորակ, սեպուչն սեղանի վրա դեռ վառվում եր ննջարանի փոքրիկ դամբարը: Մոխրամանը լիքն եր ծխախոտի մնացորդներով, սենյակի մթնոլորտը տոգորված եր թանձր ծխով:

Այս բոլորը ցույց էլին տալիս, վոր Հալարչանը կամ ուշ ե քնել, կամ շատ վաղ և դարթնել: Հատակի վրա դեռ ու դեն սփռված էլին նրա շորերը ու կոշիկները: Այս տեսակ անկարգությունն թաթոսը առաջին անգամն եր տեսնում չուր տասնամյա ծառայությունն ընթացքում:

— Քանի՞ ժամն և, — հարցրեց Հալարչանը դանդաղ և խոսյոտ ձայնով:

— Կեսորին մոտ և:

— Հարցնող չեղե՞լ ե:

— Վոչ:

Հալարչանը ծխախոտը հանգցրեց և կրկին գլուխը բարձին դնելով, վերմակը քաշեց կրծքին:

— Ծառա չեմ հրամանքիդ, սամովարը չերեք անգամ կրակ եմ գցել, — համարձակվեց հայտնել թաթոսը:

— Չորրորդ անգամ կրակ գցիր:

Թաթոսը ձեռները փորի վրա դարսեց, հետ քաշվեց և կանգնեց պատի տակ: Մի բուպե չանցած, նա չկարողացավ զսպել չուր լեզուն:

— Լվացարարը այսոր առավոտյան շորերդ բերել և, կփոխե՞ք:

Հալարչանը լուռ եր: Նա, գլուխը կրծքին թեքած, նայում եր ձեռների մատներին: Նրա ուռած կուպերը, թառամած ալտերի գունատությունը, ճակատի խոշոր կնճիռները կրկին կասկածի մեջ ձգեցին թաթոսին: Յեղ անհանգիստ ծառան կամեցավ անպատճառ իմանալ չուր տիրոջ տարադեպ տրամադրություն հիմքը:

— Աղա, — ձայն տվեց թաթոսը, մի քայլ առաջ դնելով:

Աղան չպատասխանեց:

— Աղա, — կրկնեց թաթոսը համառորեն և մի քայլ ևս առաջ գրեց, — աղա, ցավդ առնեմ, խոմ հիվանդ չե՞ք:

Հալարչանը քնից հանկարծակի դարթնողի պես գլուխը բարձրացրեց ու ձեռը ուժգնակի անկողնակալի ծալրին խփելով, վորոտաց:

— Կորիբ, անպիտան:

Թաթոսը լերկլուզից ուսերը վեր քաշեց, ձեռները տարածեց աջ ու ձախ և հետ ու հետ քաշվելով, կամացուկ դուրս սլկվեց: Նա մուսսենյակուսն ել չմնաց, գնաց խոհանոց և նստեց սնդուկի վրա:

— Այդ մարդը կամ գժվել է,—ասաց նա, լերկլուզածությամբ լուր սպրդնած լերեսը խաչակնքելով,—կամ արևը մայր մտնելիս պիտի գժվի:

Հալաբյանը վոտքի կանգնեց և սկսեց հազնվել, առաջին անգամ առանց ծառայի ոգնության: Նա լուր գլուխը ծանրացած եր զգում, վոսկորները մի տեսակ թմրած: Ամբողջ գիշերը նա համարյա չեր քնել: Այն մտքերը, վոր հղացել էին նրա գլխում նախընթաց որը, խուլ գիշերին, միայնակ դրության մեջ, ավելի հուզեցին նրան: Յերկար ժամանակ նա շրջում եր ննջարանում, անդադար ծխելով և մերթ ընդ մերթ կրճից արձակելով ծանր հառաչանքներ:

Մինչև լիբրը նա պիտի ամուրի մնա, ահա այն պարզ առանցքը, վորի շուրջը պտտում էին նրա խառն ի խուռն մտքերը: Ինչհետև համար է նա Հալաբյան ազդանունը անհաստությունից հանել և գրել ամբողջ Թիֆլիսի բերանը. նա, վոր մի աննշան վաճառականի վորդի լեր: Միթե նրա համար, վոր այսօր կամ վաղը այդ ազդանունը ջնջվի աշխարհի լերեսից առանց մի հետք թողնելու: Իսկ նրա հարստությունը— թվ պիտի ուտի նրա մահից հետո: Նրա քրոջ շուրջ վորդինեբը, ինչպես շատ աղախի շուպլներ ուտում են իրանց քեռու կամ հորջերորդ արյունը քրտինքով ձեռք բերած կարողությունը: Ինչհետև, ինչ իրտություն:

«Քսան տարեկան հասակից սկսած վոսկոր կոտրեմ, ասում եր նա, հորս թողածը տասն անգամ ավելացնեմ, հավաքեմ, հավաքեմ, հանկարծ մի որ մեռնեմ, և շների ու գայլերի քոթին դառնամ: Վոչ, ամենևին: Այդ իմ գերեզմանիս վրա չիլ ասել չի լինիլ: Վոսկորներս ել հողի տակ հանդիստ չեն մնար: Հալաբյանի հարստությունը պետք է Հալաբյանները ուտեն: Իմ սերունդս պիտի շարունակվի վորդուց վորդի: Վորքան հիմար եմ չեղիլ չես, վորքան հիմար: Ինչ ոգուտ իմ անցյալից, հար եմ ծախսվել իմ հազարները... Շուրջ, անպիտան կյանք: Այն ուրախ քրքիջը, ծնողի այն քաղցր ժպիտը... վորքան բախտավոր էլին լերեում նրանք,—երկնից ամուրին, մտաբերելով լերեկվա լուր տեսած ընտանիքը, վոր վերադառնում եր ամառանոցից, միթե չես չպիտի» վախելեմ այդ բախտը: Իսկ այն համեստ գուզը, վոր ամեն լերեքաբերի գալիս է ժողովարան: Ահա լերջանիկ մարդ, աղքատ և լերջանիկ, Իսկ չի... մինչև լիբր միայնակ բուռն նման կյանք վարեմ...

Քաղաքական և... Թող իշխան Սահարունին ծիծաղի, թող նա շարունակի Ախշարունիանի հետ լուր... անառակ կյանքը... Ձգվեցի... զգվեցի...

Յեվ այս մաքերի ծանրութունից նրա հուզված նյարդները չենին հանդատանում։ Յերկար ժամանակ նրա մարմնի վիթխարի ստվերը սահում եր ննջարանի պատերի վրա, մերթ հասնելով առաստաղին և մերթ ընկնելով հատակի վրա։

Հանկարծ նրա ճակատի կնճիռները բացվեցին, դեմքը մի վայրկյան փալկեց։ Նա վերցրեց ննջարանի փոքրիկ դամբարը, անցավ կեսապիտեան և կես-լեվրոպական ճաշակով կահավորված սենյակը, հանեց գրպանից բանալիների կապոցը և բացավ լուր գրասեղանի արկղիկը։ Այնտեղ մի թղթի մեջ փաթաթված էին մի խումբ լուսանկարներ։ Նա կանխեղը դրեց սեղանի վրա, բաց արավ փաթեթը, նայեց մեկին, մյուսին։ Միմյանց չեղանց զանազան անձանց պատկերներ ընկնում էին նրա ձեռքից սեղանի վրա։ Վերջապես մեկը մնաց նրա մատներին արանքում։ Նա սկսեց նայել, նայել լերկար ժամամանակ, խորասուզված դեմքով այդ փոքրիկ լուսանկարին։ Կարծես, այնտեղ նա ձգտում եր կարդալ լուր ապագան, լուր բախտը, վերջապես լուր ամբողջ ճակատագիրը։ Ի՞նչ եր այդ... Մի որբորդ, վորբ հետ նա վաղուց ծանոթ եր, վորին նա հավանում եր և բոլոր լուր ծանոթ որբորդներից վեր եր դասում։ Նա լուսանկարը շուռ տվեց այս կողմ, այն կողմ, մոտեցրեց դամբարի լույսին, և նրա շրթունքը չերկու անգամ հաղիվ լսելի շշուկով արտասանեցին.

«Մարիամ»։

Հետո նա լուսանկարը դրեց մի առանձին թղթի մեջ, սեղանի մի ալլ արկղիկում թաղցրեց, հեռու մյուսներից։

Յերբ նա անցավ ննջարան և պատկեց անկողին, արդեն լույսը ակտել եր բացվել։ Նա քնեց չերկու ժամ միայն և զարթնեց լուր սովորական ժամին։ Այլևս նա չկարողացավ շարունակել քունը։ Նա զգլանքով հիշեց լուր առավոտյան մանր-մուշր սովորությունը, ծանր ու հոնդարտ լվացվելը, հագնվելը, հայելու առաջ խնամքով սանրվելը, և նրա մարմնին տրեց մի ծուլութուն։ Նա կկամենար ամբողջ որը անկողնից չվերկենալ։ Յեվ հենց այդ ժամանակ ներս և մտնում անմիտ ծառան և հիշեցնում նրա ամուրի, միայնակ, աննպատակ կյանքը։

Դռների ձայնը ընդհատեց նրա մտքերը։ Նա հետ նայեց, և կրկին տեսավ ծառային զգաստորեն և չերկուղով ներս մտնելիս։

— Ի՞նչ ես ուզում,— կոշտ ձայնով հարցրեց նա, ժխտի կոճակները կապելով։

Թաթոսը լուռ մոտեցավ և տվեց նրան մի ալցետոմա։

Հալարյանը նայեց ացետոմսին և իսկույն հրամայեց ծառային հյուրին ընդունել:

«Այդ մարդը նրա հորեղբայրն է, իմ բարեկամը, պետք է ավելի բարեկամանալ», ասաց նա և դուրս չեկավ մյուս սենյակ:

Բազկաթոռի վրա նստած եր չեվրոպական տարադով՝ հագնված հիսուն ու հինգ տարեկան մի մարդ: Մի թեև ավելի առն մաղերով, բայց շատ առույգ ծերունի, վորի ամբողջ կերպարանքից բուրում էին լեռանդ, համարձակութուն, տոկունություն և հնարագետ խելք: Նրա սափրած չերեսը, թանձր ընչացքը, մեծ գլուխը, բարձր և լայն ճակատը, թավ հոնքերը, բերանի անկյուններում վորոշ գծավորված խորշերը և վերջապես, սուր ու փայլուն աչքերը գործնական կյանքին անձնատուր մարդու աղղեցություն էին գործում: Յերբ Հալարյանին տեսավ, նրա դեմքի վրա իսկույն չերեսն չեկավ մի խորին բարեկամական ժպիտ:

Դա հայտնի կապալառու Նիկողայոս Սադափյանն էր:

— Ներեցեք, պարոն Միքայել, վոր ձեզ նեղություն եմ տալիս, — ասաց նա, վրտքի կանգնելով քսան ու հինգ տարեկան չերիտասարդի աշխուժությունը:

— Խնդրեմ, խնդրեմ, ձեզ համար չես միշտ պատրաստ եմ, պարոն Նիկողայոս, — պատասխանեց Հալարյանը և հարզանքով սեղմեց իրանից հասակով բարձր Սադափյանի մեծ ու փափուկ ձեռքը: — Նստեցեք, խնդրեմ:

Սադափյանը նստեց չուր տեղը և մի քանի սովորական հարցերից հետո, անմիջապես դիմեց չուր ացեղություն նպատակին:

— Ձեր ոգնություն կարոտ եմ, պարոն Միքայել, — ասաց նա ժպտալով:

— Պատրաստ եմ ծառայել, ինչքան կարող եմ, ծխեցեք, խընդրեմ, — առաջարկեց Հալարյանը սիգարների արկղիկը, վոր բաց դրած էր սեղանի վրա:

— Յես չերեք փողի պակասություն չեմ քաշել, — շարունակեց Սադափյանը, — բայց գործերս անքան մեծացրի, վոր հիմա ստիպված եմ բարեկամներիս ձեռք մեկնել: Դեռ մի չերեք որից հետո վեց-յոթ հազար ռուբլի չե հարկավոր. ունեք ազատ փող:

Հալարյանը բարեկամաբար ժպտաց և, մի վայրկյան մտածելուց հետո, պատասխանեց.

— Չունենամ ել, ձեզ համար ուրիշից կվերցնեմ, պարոն Նիկողայոս: Եե, չեթե ձեզ ել փող չտամ, ռեմ պիտի տամ:

Սադափյանը տեղից քիչ բարձրացավ և գլուխ տվեց Հալարյանին:

— Տոկոսի մասին չեմ խոսում,—ասաց նա,—ինչքան կամքդ է, նշանակիր վեց ամիս ժամանակով:

— Իսկ լեթե առանց տոկոսի տամ,—հարցրեց Հալարյանը:

— Ձեմ վերցնիր,—պատասխանեց Սաղափյանը,—բարեկամութուններ իրան կարգին, գործն ել իրան կարգին: Յես առևտրական կանոններից չեմ կարող շեղվել:

Հալարյանը վռչինչ չասաց: Նա գիտեր, վոր Սաղափյանը կեղծում է, վոր նա չէր հրաժարվիլ գուցե, լեթե առանց տոկոսի փող տվող լիներ նրան:

Թաթոսը ներս բերեց տրծաթյա սկուտեղի վրա դրած մի բաժակ չալ, կարագ, հաց, սեր և լերկուղով դրեց չուր տիրոջ առաջ:

— Ինչո՞ւ մեկն ես բերում,—հանդիմանեց Հալարյանը,—չե՞ս տեսնում, վոր հյուր կա:

— Հյուրը առավոտյան ութ ժամին և չալ խմում,—ասաց Սաղափյանը,—շնորհակալ եմ, չի հարկավոր:

Ծառան դուրս չեկավ:

— Այժմյան լերիտասարդները,—շարունակեց Սաղափյանը, վերջին բառը առանձին շեշտելով,—գիշերը ցերեկ են դարձրել, ցերեկը գիշեր: Ութ ժամից սկսած վոտքի վրա լեմ, պարոն Միքայել, ալ ինչ ասել է բնտանիքի տեր լինել:

Յերիտասարդ բառը դուր չեկավ Հալարյանին և միևնույն վայրկյանին նա մի կողմնակի հայացք ձգեց դեմ ու դեմի պատին քարշ առած հայելու մեջ:

Ոոսակցությունը շարունակվեց նույն լեղանակով: Սաղափյանը սկսեց գանգատվել չուր դրության վրա: Ծերության որերում ինքն չուր գլուխը խառնեց մեծ գործերի մեջ, դարձյալ մի նոր կապալ է վերցրել, ոգուտ շմատ աչք տերունական կապալներից, բայց ինչ անի, վոր նեղություն ել շատ կա:

— Մեկը անում եմ, մյուսը մոռանում,—հարեց նա,—մարդս առանց սրտացավ մարդու միձեռանի չե: Գործակատարներին հավատալ չի լինում, մեկ անում են, լերկու գողանում: Հավատացեք, պարոն Միքայել, լեթե չես ձեզ պես մի աղնիվ ընկեր ունենալի, միլիոններ կարող եյի աշխատել:

— Ինձ նման ծուլ ընկերը ձեզ միայն միասել կարող է,—պատասխանեց Հալարյանը,—մարդ պետք է մի գործ սիրի, վոր կարողանա սրտով կաշել: Կապալների գործերը ինձ այնքան ձանձրացրին, վոր չես վերջը թողի: Ինչ վոր ունիմ, այսուհետև այն ել ինձ բավական է, պարոն Նիկողայոս: Բայց ձեր աւածը ճշմարիտ է, վոր մի լավ ոգնական է հարկավոր ձեզ:

— Վոր չունիմ սրտացավ մարդ, ինչ անեմ,—գոչեց Սաղափյանը, ձեռները ծնկներին խփելով։

— Ձեր լեղբոր վորդին, ալ ձեզ սրտացավ մարդ։ Ինչո՞ւ նրան չեք խառնում ձեր գործերի մեջ։

— Թուրքներն,—արտասանեց Սաղափյանը, հեգնաբար ժպտալով,—եհ, պարոն Միքայել, դուք նրան չեք ճանաչում։

— Յես նրան ճանաչում եմ, պատվական տղա չե, պատասխանեց Հայաբլանը։

Սաղափյանը գլուխը շարժեց աջ ու ձախ։

— Պարոն Միքայել,—ասաց նա, աջ ձեռով շփելով աչքերը, ինչպես լերբեմն անում է մարդ, վորի ասածը լավ չե հասկանում խոսակիցը,— լես, ճշմարիտ է, ծերացել եմ, բայց հին մարդ չեմ։ Հավանում եմ նոր ժամանակի խելոք լերիտասարդներին. նրանք մեղանից դիտուն են, շատ բան են սովորում, նրանց իմացածի քառուրդը ինձ նմանները չեն իմանում։ Բայց մի բան կա, վոր ինձ դուռը չի գալիս, վոր ասում եմ, ինչ թագցնեմ։ Ծուլլ են մեր ուսումով լերիտասարդները, պարոն Միքայել, աշխատանքից փախչող են։ Խոսք բացվեց, ասեմ։ Այդ լեղբորս վորդին հենց վոր Թուսաստանից լեկավ, լես նրա հետ խոսեցի։ Ասացի, ահա վորդի, ուսումդ վերջացրիր, հիմա, ի հարկե, մի գործ պետք է ճարես քեզ համար։ Չե՞. լավ։ Լսիր, ասացի, դու բժիշկ չես, վոր քեզ համար պրակտիկա ձեռք բերեմ, ինժիներ չես, վոր լերկաթուղու՝ մը քեզ մի պաշտոն գտնեմ իմ ծանոթների միջոցով, է, իրավաբան ել չես, վոր գնաս սրան ու նրան Սիրբի ուղարկես։ Ի՞նչ ես։ Ֆիլոլոգ—խտորիկ, լեզվագետ եմ, ել չգիտեմ, պատմաբան եմ, ասում է։ Ի՞նչ գործ կարող ես կատարել։ «Յես, ասում է, միտք չունիմ ծառայելու, լես պետք է գիտությամբ պարապվեմ։ Իսկ չեթե, ասում է, ծառայելու լինիմ, միայն վարժապետ կարող եմ լինել»։ Վաճժապե՛տ. ի՞նչ պիտի տան քեզ վարժապետության համար, ասացի, չե՞մ տեսնում, վարժապետները քաղցածութունից իրանց թեկերն են կրծում։ Արի, ասացի, վորդի, քեզ չեքք անգամ ավելի ուժեղ տամ, իմ գործերիս մեկ մասը վրադ առ։ Յես քո հայրը, դու իմ վորդին։ Ի՞նչ կասեք, պարոն Միքայել, լավ հորեղբայրը զրանից ավելի՞ կաներ չուր լեղբոր վորդու համար։

— Չընդունեց։

— Քինթը վեր քաշեց,—շարունակեց Սաղափյանը միշտ հեգնական լեղանակով։—Յես, ասում է, «ա՜նընդունակ եմ առևտրական գործերում, լես չեմ կարող վաճառական կամ կապալառու լինել»։ Տեսնո՞ւմ եք. քաղցած ապրիկ կարող է, սրան ու նրան գլուխ տալով ամսական

հիսուն-վաթսուն մանկեր համար ծառայել կարող է, ազատ, ինքնագլուխ վաճառական լինել չի կարող: Ահա, այս ել մեր ժամանակի ուսում առած խելոք լերիտասարդները: Հիմա լել կանգնել ե. «չես ուզում եմ լերկու տարով արտասահման գնալ, վոր կատարելագործվեմ»: Այս ել իմ լեզբոր «դողին», վորին դուք պատվական տղա լեք համարում: Ձե, պարոն Միքայել, ուսումն ել առանց խելքի կոպիկ չարժե: Մարդուն առաջարկում են հարստության ճանապարհ, փախչում ե, թե, չգիտեմ, լես ալլ չեմ հավանում, ալն եմ հավանում: Կամ աշխարհիս լերեւին մի բան, վոր փողից ավելի հավանելի լինի, ասացեք, կամ:

— Նոր լերիտասարդներից շատերի համար կա,— պատասխանեց Հալարյանը:— նրանք փառասեր են, անունը, հռչակը փողից բարձր են համարում:

— Անուն, հռչակ,— գոչեց Սաղափյանը,— հավատացեք, ձեզ ե ինձ աչնպիսի դեներալներ ու իշխաններ են նախանձում, վոր նրանց վտաի փողին չեմ հասնիլ լես: Ինչո՞ւ. վորովհետեւ անունը մարդուս փորը չի կշտացնում:

Միանգամայն համոզված, վոր չուր ասածը զուտ ճշմարտություն ե, Սաղափյանը թիկն տվեց բազկաթոռին ե չուր հալացքը ձգեց աստտադին: Միքանի վալրկյանից հետո նա ավելացրեց.

— Բալց թող ինչ ուզում ե անի, լես իրավունք չունեմ արտահետ նրա վրա: Յես իմ պարտքս կատարեցի, պահեցի, մեծացրի, ուսում տվեցի, հիմա ազատ ե: Թող գնա, վորտեղ ուզում ե, լեկուղ քրոջն ել տանի, ինչպես ասում ել ե, վոր պիտի տանի հետը:

— Քրոջը, որիորդ Մարիամին,— գոչեց Հալարյանը, չկարողանալով դպիլ չուր զարմանքը ե հետաքրքրութունը:

— Հապա՛,— պատասխանեց Սաղափյանը, քմծիծաղ տալով,— իբր թե ստացած կրթութունը պակաս ե: Ասացեք, խնդրեմ, մեր ժամանակի որիորդին ավելի լ՛նչ ե հարկավոր, գիմնադիպում ուսումը ավարտել ե, ֆորտսերեն գիտե, պարել, պիանինո ամել, մինչև անգամ լերգել գիտե: Խո՞ւմ չի՞ կարող գնալ աղվակատ կամ ինժիներ դառնալ: Բժիշկ պիտի դառնա... ատելով ատում եմ բժիշկ կանանց: Նրանք կանալք չեն, նրանք կես տղամարդ են... Եե, խոսքով լեղա ու ուշացա,— ավելացրեց նա հանկարծ, ժամացույցին նայելով,— մեկին կես ե մնում: Ներեցեք, պարոն Միքայել, լես մինչև ճաշ միքանի տեղեր ունիմ գնալու:

Յեվ նա բազմազբաղ մարդու դեմքով վտաի կանգնեց ասելով,

— Ուրեմն հույս ունենամ փողերի մասին:

— Համարեցեք, վոր ձեր գրպանումն են,— միամտացրեց Հալարյանը,— վաղը ուղարկեցեք ձեր գործակատարին, վոր ստանա:

— Հա՛, կիրակի որը կսպասեմ ձեզ ձաշին, — ասաց Սաղափյանը, — կինս այսօր ասաց, վոր չերեկ ձեզ ժողովարանում տեսել ե ու հանդիմանել: Իրավունք ունի, պարոն Միքայել, շատ ուշ-ուշ եք գալիս մեր կողմերը: Բարեկամությունը այդպես չի լինիլ, մի փոքր ել մեզ վրա ուշադրություն դարձրեք: Կիրակի որը անպատճառ մեր տանն եք, խոսք տալի՞ս եք:

— Ուրախությունք, — պատասխանեց Հալաբյանը, հարգանքով ճանապարհ դնելով չուր հյուրին մինչև նախագավիթ:

Նա վերադարձավ, և ձեռները վարտիկի գրպանները դնելով, սկսեց քայլել հետ ու առաջ մտահույզ դեմքով:

«Աննաման ե, աննաման ե, չկա նրանից լավը ամբողջ Թիֆլիսում, կրկնում եր նա չուր մտքում: Ի՞նչ ասաց այդ մարդը, մի՞թե նա պիտի գնա արտասահման: Մի՞թե լին պիտի թողնեմ, վոր այդ բախտը փախչի իմ ձեռքից: Հետո, ո՞վ կարող ե նրա նման ինձ դուր գալ: Վոշ-վոք: Զարմանալի բան ե, կարծես, վորքան մտածում եմ այդ աղջկա մասին, այնքան ավելի լեմ հավանում: Յես, վոր քառասուն ու չերեք տարիս շուտով կլրանա...»:

Բնազդմամբ նա մոտեցավ հայելուն և սկսեց գննել իրան վոտից մինչև գլուխ: Յերբեք նա ինքն իրան այնքան ծեր, թառամած, տգիղ չեր չերեկացիլ, վորքան այս անգամ պատկերացրեց անողոք հայելին: Աչքերի տակի թառամած կաշին, բերանի անկյուններում վորոշ գծավորված խորշերը, վերջապես, ճաղատ, փայլուն գլուխը, միրուքի սպիտակ թիկերը, ծերություն այս բոլոր անջնջելի նշանները վհատեցնելու հափ ազդում եին: Նա ինքն իրանից խորշելով, չերեսը հետ դարձրեց հայելուց և հուզված սկսեց կրկին անցուդարձել:

Նախագավիթից լսվեց մի ծանոթ ձայն, և նույն վայրկյանին դռները զգույշ բանալով, ներս մտավ մոսիո Վախվախյանը կամացուկ:

— Մի բոպե, միայն մի բոպե շնորհեցեք ինձ, — ասաց նա, կարմիր ձեռները միմյանց այնպես շփելով, վոր կարծես ցրտից սառել եին:

Յե՛վ սիրալիր ժպիտը չերեսին, մեջքից խոնարհ թեքվեց, բռնեց Հալաբյանի աջը և սեղմելով չուր կրծքին, շարունակեց.

— Յերեկ ժողովարանից շատ տխրած դուրս չեկաք: Բնությունս վատ ե, պարոնս, շատ վատ ե. հենց վոր բարեկամներիցս մեկին մի քիչ տխուր եմ տեսնում, սիրտս, ասես, սև ե կապում: Կարելի՞ չե հարցնել ձեր առողջության մասին:

— Առողջ եմ և ուրախ, — պատասխանեց Հալաբյանը հակիրճ:

— Ոո, փառք աստուծո, հիմա հանգստացա, — գոչեց մոսիո Վախվախյանը, ձեռը քսելով կրծքին: — Ի՞նչ եք կամենում, ծառայի՞ն, — աս-

վկայցրեց նա, Հալարջանի մի թեթև նշանից գուշակելով նրա միտքը, —
այս վայրկյանիս:

Նա անմիջապես դուրս վաղեց և ծառային կանչեց ներս:

— Դեհ, ցտեսութիւն, ել գործ չունեմ, — ասաց նա, վերին աս-
տիճանի խեղճ չեղանակով:

— Սպասիր, միասին դուրս կգանք, — պատվիրեց Հալարջանը, և
ծառայի հետ անցավ ննջարան:

Մնալով միայնակ, մոտիկ Վախվախյանը դեռ ու դեռ նայեց, վեր-
ջրեց սեղանի վրա դրած սիգարներին մեկը, խնամքով ծայրը կըտ-
րեց. վառեց, թիկն տվեց բաղկաթոռին, վոտը վոտի վրա ձգեց և սկսեց
ծխել: Նրա դեմքի քաղցր արտահայտութիւնից և աչքերի բիբերի
ժպտուն փայլից կարելի չէր գուշակել, թե վորքան ախորժելի ազդե-
ցութիւն և անուամբ նրա շնչափողի վրա արտասահմանից հատկապես
Հալարջանի համար բերված հովանւան սիգարի ծուխը: Մոտիկ Վախ-
վախյանը, իբրև նուրբ ախորժակի տեր, գիտեր հազվագլուտ բաների
ճաշակը: Թանձր ծուխը բերանից դեպի առաստաղը բաց թողնելով,
նայում էր նրա ողածն հոսանքին և հրճվում, ինչպես կարող է հրճ-
վել բուն ճարտարագետը մի գեղեցիկ բանով: Յեւ այդ վայրկյանին
նրա կոյորակ, մասլի գլուխը արտադրում էր հետևյալ գաղափարը.
«Ժխողն ևլ ահա այս տեսակը պիտի ծխի, թե չն գրպանիս դարմանը»...
Ոճֆ, մոխրին նայեցեք, բամբակ ե»...

Հանկարծ նա մոտտանջության մեջ ընկավ: Իսկապես նրա աչքե-
լութիւնը մի շատ գործնական նպատակ ուներ: Նա չեկել էր իմանա-
լու, արդոք Հալարջանը մի վորևէ ծանոթ ընտանիք հրաւիրված չէ
ճաշի: Յեթե վոչ, չեղանակը հրաշալի չէ, կարելի չէ Միքայիլյան փո-
ղոցի ալիքներից մեկում, Բուռի ամուսնի, մի լավ «սուկի» խորովել տալ:

Հալարջանը դուրս չեկավ մաքուր հագնված, մոտեցավ, վոր հա-
յելու առջև փողկապը ուղղի:

— Որից որ բացվում եք վարդ ու մանիշակի պես, — գոչեց մո-
տիկ Վախվախյանը, վոտքի թռչելով և իբրև հիացած նայելով վոտից
մինչև գլուխ հարուստ ամուսնին: — Ա՛յ ինչու չեն կանայք սիրահար-
վում: Յերեկ ժողովաբանում մի գեղեցիկ կնիկ իրան մարդուն հարց-
րեց ձեր մասին «Ի՞նչ ե այդ համակրելի տղամարդը»: Արեւ վկա, աշան-
ջովս լսեցի: Ասում եմ ելի, վոր աստված տալիս է, ամեն կողմից է
և տալիս, հապա, ինչո՞ւ մի քոսոտն ել ինձ համար չի տսում, թե «հա-
մակրելի» չեմ:

Յեւ տեսնելով, վոր իր հաճոյախոսութիւնը մի ժպիտ շարժեց
Հալարջանի չերեսի վրա, նա հանեց գրպանից մի արծաթեյա տուփ և
խուփը բանալով, պահեց նրա առաջ, ասելով:

— Գլխի ցավի համար խիստ լավ ե:

— Վարպետ ես, Սերգո, — ասաց Հալարյանը, ցուցամատի ու բուժմատի ծայրերով վերցրեց մի պտղուց քթախոտ, մեջքից թեքվեց, վոր նոր կարված սև սյուրտուկը հասկանալի, և ախորժակով քաշեց:

Քթախոտ քաշելը Հալարյանի քմահաճութուններից մեկն էր, վոր սակայն մտաբերում էր շատ քիչ անգամ և այն ել մոսիո Վախովախյանին տեսնելով: Վերջինը միշտ չուր գրպանում պահում էր լիք տուփը հատուկ նրա համար:

— Այսոր միասին կճաշենք, — ասաց Հալարյանը, — իսկ այժմ դնանք Կավկազ հյուրանոցում մի թեթև նախաճաշիկ անենք:

III

Մի ամպամած առավոտ Անդրկովկասի չերկաթուղու կառախումբը կանգ առավ Թիֆլիսի կայարանում: Յերկրորդ դասի մի կառքից, շատ ճանապարհորդների թվում, դուրս չեկավ և՛ մի չերիտասարդ, մի որիորդի հետ թեակցած: Բեռնակիր մշակներից մեկը դուրս բերեց նրանց ճանապարհի իրեղենները — չերկու բարձ, մի կաշվե արկղ, մի պլեդ և մի կապ կազմած ու անկազմ գրքեր:

Որիորդը ձեռում բռնած ունիւր կիսաթառամ ծւղիկները մի փունջ, վորից նա ստեպ-ստեպ հոտ էր քաշում: Շտապ և ուրախ խոսակցելով, չերիտասարդն ու որիորդը պլատֆորմի վրա խոնված խիտ բազմության միջով անցան կայարանի մյուս կողմը: Հետաքրքիր դիտողը, նայելով այդ թև թևի տված մի զույգ արարածներին, զննելով նրանց վարվելու ձևերը և մանավանդ կերպարանքը, կգուշակեր քույր ու չեղբայր լինելը. այնքան հասարակ էին այդ ձևերը, այնչափ նման էին նրանք միմյանց:

Յերեցը չեղբայրն էր, կրտսերը քույրը — արագաշարժ և ճկուն, մոտ քսան ու չերկու տարեկան մի որիորդ: Նրա, չերկար ու սև արտեանունքների մեջ պարփակված, պարզ գույնի խոշոր աչքերի մեջ վառ-վող չերիտասարդական կենդանի հուրը մի պրավիչ զվարթութուն էր տալիս սակավ ինչ արեակեղ չերեսին: Նա միջին հասակից քիչ բարձր էր, վոչ նիհար, վոչ գեղ, համաչափ կազմվածքով: Հագած էր նա համեստ մոխրագույն ասվյա զգեստ, նույն գույնի մահուդի կարճ վերարկու: Պանամի գեղնագույն գլխարկից քարշընկած թափանցիկ, սպիտակ շղարշը, քողավորելով նրա շագանակագույն պերճ մագերը, ընդգրկել էր նրա մեջքը ոճապտուկա ձևերով: Յերիտասարդը բարձրահասակ էր, դեմքի մեղմ գծագրությամբ, բարեհամբույր, ավելի թուխ

դուլնով, կարճիկ խուզած միրուքով ու մաղերով: Նա հագած եր մոխրագույն կարճ պիղջակ, նույն գույնի վարտիկ, վորի ծալքերը մտքըած էին ճանապարհային փալուռ կոշիկների լերկար անկարուղի մեջ:

Նրանք նաեւսին կալարանի առջև խմբված կառքերից մինը: Յերիտասարդը ասաց փողոցի անունը, կառքը սլացավ դեպի քաղաքի կենտրոնը:

— Դարձնալ Թիֆլիսումն ենք, — ասաց որիորդը հառաչելով:

— Յե՛վ ալքքան ուշ, — հարեց չերիտասարդը, անհանգիստ ձևով ուղղելով լուր ուսին զցած փոքրիկ պալուսակը:

— Իսկ իմ կարծիքով, վաղ, — հակասեց որիորդը, — և ինչո՞ւ համար — չգիտեմ: Ախ, ինչ տեսարաններ, ինչ անտառներ, ինչ ձորեր, ինչ հրաշալի լեռներ թողինք այնտեղ:

Այս ասելով, որիորդը միքանի անգամ արագ-արագ հոտ քաշեց լուր ձեռում բռնած փնջից: Յե՛վ նույն վայրկյանին մի դուրեկեան պալծառ ժպիտ սահեց նրա քնքույշ շրթունքների վրա, դուցե չերփնեւանգ ծաղիկների անուշ բուրման ազդեցութունից:

— Ուզում ես ինձ հավատացնել, վոր քեզ վոգեորդը միայն տեսարաններն էին, — արտասանեց չերիտասարդը, և նրա բարի աչքերի մեջ փալեց չեղբայրական անուշ հեղնութունը:

Որիորդի արեակեղ այտերը ավելի շառագունեցին: Նա հոնքերը սեղմեց, չերեսը շուռ տվեց մյուս կողմ:

— Էս, մի ամաչիւր, Մարո, — շտապեց ավելացնել չերիտասարդը, ժպտալով: — Դու գիտես, վոր Մելիք-Բարսեղյանը իմ լավ ընկերն է, չես նրան սիրում եմ: Բայց մի մեղադրիլ ինձ, վոր քեզ աչքպես շուտ բաժանեցի նրանից: Յես ավելի չեցի կարող մնալ Դիլիջանում:

— Ինչո՞ւ, — հարցրեց որիորդը հետաքրքրված չեղբոր վերջին խոսքերով:

— Ինչո՞ւ, — կրկնեց չերիտասարդը, — միթե դեռ ելի չես հավատում իմ վճռին: Յես պետք է պատրաստվեմ շուտով ուղևորվելու արտասահման:

— Դարձնալ արտասահման, — ասաց որիորդը թախծորեն, — ախ, Ռուբեն, թող ալք մտադրութունդ: Դու հեռանալը ինձ վախեցնում է, մնացի՛ր Թիֆլիսում:

— Ինչ, միթե դու ուզում ես, վոր չեղբայրդ թերթես մնա:

— Թերթես, — զոչեց որիորդը զարմացած:

— Այո, թերուս, — պատասխանեց չերիտասարդը դրական չեղանակով, — վորովհետև գրպանում համալսարանի դիպլոմ ունենալը դեռ ուսումնական լինել չի նշանակում: Դեռ շատ բան է մնում սովորելու, ո՞ո, շատ բան:

Վերջին բառերը արտասանելիս չերիտասարդի պալծառ դեմքը մթաղնեց հոգսերի ստվերով:

— Դու կարելի չես ճշմարտն հասցում,— խոսեց որիորդը,— չես դեմ չեմ: Կամենում եմ, վոր դու կատարելագործվես, վորքան կամքդ ե: Բայց քեզանից բաժանվելը, Ռուբեն, չես քանի անգամ քեզ ասել եմ արդեն, ծանր ե ինձ համար, շատ ծանր:

— Քեզ առաջարկում եմ և խնդրում, վոր հետս գաս, բայց դու համառութուն ես անում: Ինչո՞ւ—չեմ իմանում: Հավատացիր, վոր լավ կլինի քեզ ինձ համար և թե քեզ համար:

— Շատ լավ կլինի,— կրկնեց որիորդը, հառաչելով,— կցանկանալի, հոգով կցանկանալի, բայց...

— Դարձյալ բայց,— գոչեց չերիտասարդը մի քիչ հուզված,— և քերքեք չես ուզում հալտնել ինձ ալդ պատճառը:

Այս ասելով, նա դժկամակութամբ նախեց քրոջը: Վերջինը լուռ եր:

— Ձլինի թե,— շարունակեց չերիտասարդը, ձայնը դարձյալ մեղմացնելով,— չլինի թե արդեն ալնքան դրավել ե քեզ նա, վոր չես ուզում հեռանալ նրանից...

— Ռուբեն,— արտասանեց որիորդը խորին հանդիմանութամբ,— ալդպիսի կատակ մի տնիլ հետս, նա... նա... չես պատճառը, և չի չել կարող լինել... Իմ պատճառը ավելի ծանր ե, քան կարծում ես...

— Ի՞նչ ե ուրեմն,— գոչեց Ռուբենը, աչքերը սևեռելով քրոջ չերեսին:

Որիորդը մի քանի վալրկյան լռելուց հետո, կրկին հառաչեց:

— Թողնենք ալդ խոսակցութունը,— ասաց նա:— Ահա հասնում ենք տուն: Աշխատիր ուրախ հանդիպել մեր ազգականներին: Դեհ, դարձյալ թթվացրի՞ր աչքունքդ, դրա համար ես ուզում ինձ հետդ արտասահման տանել, վոր միշտ տխրես. շնորհակալ եմ:

Ասաց որիորդը և, վիրավորված ձևանալով, չերեսը դարձրեց մի կողմ:

Կառքը Գուռ գետի աջ կողմի քաղաքամասը անցնելով, մտել եր արդեն կենտրոնական փողոցները:

Գուռը և չեղրալը լուռ ելին: Ռուբենը մի ծխախոտ վառեց և սկսեց ծխել, անորոշ հալացքով նաչելով լուր չերկար կոշիկների ծալրերին: Իսկ քույրը, փունջը ծնկների վրա դրած, մտիկ եր անում աջ ու ձախ տներին, վոր միմյանց չետեից անցնում ելին: Ընդամենը չե րեք ու կես ամիս բացակա չեր չեղել Թիֆլիսից, և այժմ ամեն ինչ նրան փոխված եր չերևում, թե փողոցներն ու տները և թե անցու-

դարձող մարդիկ: Նա, աշխատելով հաղթել չուր մեջ ծագած բուպեպ-
կան թախիծը, աչքերով վորոնում եր ծանոթ դեմքեր: Մինչդեռ չեղ-
րալըր դադատուկ նայելով քրոջ կիսադեմքին, նկատեց նրա պայծառ
ճակատի վրա աչն տխուր ամպը, վոր չերբեմն հայտնվում եր, չերբ
նա փորձում եր խոսք բանալ իրանց դրուժխան մասին:

Կառքը կանգնեց չերեքհարկանի նորաշեն, մոխրագուլն ներկած
մի մաքուր տան առաջ:

— Այս բուպեպին չես կհամբուրեմ իմ սիրելի Լիզային ու Գաբո-
լին, — գոչեց որիորդը և աշխուժ կերպով վալը ցատկեց կառքից:

Մինչ Ռուբենը կառապանի վարձը կտար ու իրեղենները ցած
կրերեր, նա փունջը ձեռին արագութեամբ բարձրացավ չերկրորդ հար-
կը: Մարմարոնչա լայն և փայլուն սանդուխի վերևում որիորդին դի-
մալորեց մի ութ տարեկան աղջիկ սև աչքունքով: Որիորդը գրկեց
նրան, համբուրեց միքանի անգամ և, թևից բռնելով, շտապեց առաջ:

— Որիորդ, չեկաք, վերջապես, — գոչեց, դեմ ու դեմ վազելով,
ռուս աղախինը, և ուրախ-ուրախ բարեկեց:

Նախագավթում որիորդի առաջը վազեց մի տասը տարեկան
պատանի գիմնադիական համազգեստով: Որիորդը նրան ել գրկեց,
համբուրեց և տարավ ներս:

Մի քառակուսի, ճաքուր պարկետով, գեղեցիկ վոսկենկար պաս-
տառով զարդարված բավական մեծ սենյակի մեջ տեղում, կոլորակ
սեղանի շուրջը նստած թեյ ելին խմում Նիկողայոս Սադախյանը, չուր
կինը — տիկին Սոփիոն և աղջիկը — որիորդ Նատալիան:

— Մարիամ, — գոչեցին միաբերան վերջին չերկուսը մի տեսակ
անընական ուրախութեամբ:

Մարիամը հերթով փաթաթվեց կանանց պարանոցին և միքանի
անգամ ջերմաջերմ համբուրեց նրանց, մանավանդ Նատալիային:

— Հանդարտ, մագերս քրքրեցիր, — ասաց Նատալիան, գլուխը
չետ դարձնելով:

Մարիամը սեղմեց հորեղբոր ձեռը: Հարց հարցի չետեից նա ա-
ռաջարկում եր մերթ մեկին, մերթ մյուսին: Կարծես, նա տարիներով
չիր տեսել չուր ազգականներին, այնքան անկեղծ եր նրա ուրախու-
թյունը:

Ներս մտով չեղբայրը և տեսարանը մի քիչ փոխվեց: Նա հան-
դարտ մոտեցավ, սառն և քաղաքավարի բարեկեց: Բոլորը առողջ ելին:
Միայն որիորդ Նատալիան հայտնեց, հառաչելով, թե գլուխը սաստիկ
ցավում և:

— Դրա ճարը չես գիտեմ, — գոչեց Մարիամը, վերցնելով չուր
փալիսած փունջը, վոր համբուրվելու միջոցին դրել եր պատուհանի

վրա:—Ահա, նաոտ, թեև մի քիչ թառամել են, բայց հաղվագուտ ծաղիկներ են: Իմ մորաքրոջ աղջկա, Մարգարիտի, վերջին նվերն եւ չուր ձեռովն ե քաղել իրանց պարտիզից: Այնքան սիրեցի, վոր Դիլիշանից մինչև աչստեղ բերի:

— Կարծես, Թիֆլիսում քիչ կա,—ասաց որիորդ Նատալիան մի տեսակ արհամարհանքով,—շնորհակալ եմ, դու շատ բարի չես, Մարո, դիր ահա այն բաժակի մեջ:

Մարիամը փունջը դրեց առաջվա տեղը և չուր գծկամակութունը թագցնելու համար, կրկին թեքվեց և սկսեց խոսել չուր շուրջը պտույտ-պտույտ անող փոքրիկ աղջկա և պատանիի հետ:

— Ինչ՞եւ ին՞չ չես տալիս ծաղիկները, չես կպահեմ իմ սեղանիս վրա,—ասաց աղջիկը, Մարիամին գրկելով:

Մարիամը տվեց նրան փունջը:

— Մամա, թույլ տուր այսոր տանը մնամ,—ասաց պատանին:

— Ինչ՞եւ,—հարցրեց տիկին Սովորոն:

— Ուզում եմ Մարոյին ու Ռուբենին տեսնել:

— Լո՛ր, —գոչեց մայրը, աչքունքը խոժոռելով,— Մարոն ու Ռուբենը չեն փախչում, կարող ես հետո չել տեսնել: Կանչիր ծառային, վոր քեզ տանի ուսումնարան: Դու չել,—դարձավ նա փոքրիկ Լիզային,—ծաղիկները դիր տեղը ու գնա դասդ սովորիր:

Պատանին և աղջիկը ահամա ու տխրագեմ հպատակվեցին իրանց մոր խտտածայն հրամանին, կրկին ու կրկին ընդունելով Մարիամի համբույրները և զգվանքը:

— Իմ սիրելիներս,—ասում եր որիորդը, մերթ դառնալով Գաբույին, մերթ Լիզային,—չես ձեզ ամեն որ հիշում ելի: Գնացե՛ք, գնացե՛ք, ելի չես ձերն եմ:

Վերջապես, նա նստեց թեյ խմելու և սկսեց պատմել, թե ինչպես և ժամանակ անցկացրել Դիլիշանում: Նիկողայոսը, հայտնելով, վոր գործ ունեւ, շտապով գուրս չեկավ:

— Դիտենք, գիտենք, շատ ուրախ են անցել որերդ, առանց մեզ,—նկատեց Նատալիան Մարիամին մի չերկդիմի չեղանակով:

— Դու չես կարող չերևակայել, Նատո,—շարունակեց Մարիամը վոգևորված,—թե ինչ ուրախ որիորդ եւ մեր մորաքրոջ աղջիկը: Գեղեցիկ, կրթված, համակրելի, նրա նմանը Թիֆլիսում չես չեմ տեսել:

— Իհարկե, Յերեանում մայրաքաղաքի կրթութունն ստացած էլիինի,—ասաց որիորդ Նատալիան ծաղրաբար:—Բայց, սիրելիս, ինչ՞եւ միայն այդ աղջկան ես գովում, միթե ուրիշ գովելու մարդ չկամք աչնտեղ: Իսկ այն չերխտասարդ բժիշկը, վորի հետ դու վաղուց, շատ վաղուց, ծանոթ ես:

Մարիամը մի մեղմ հանդիմանական հայացք ձգեց Նատալիայի չերեսին և վռչինչ չպատասխանեց։

— Ի՞նչ սեպեկ ես, Մարո,— փոխեց լուր խոսքը Նատալիան, ներքուստ նախանձեղով Մարիամի գեմքի գրավչութանը,— մի բանի նման ես, բայց չգիտեմ ինչի։

— Գնահուհու,— հաբեց Մարիամը անկեղծաբար։

— Կալ, լալ, կեղծ համեստություն մի անիլ,— գոչեց Նատալիան կծված ձայնով,— ինքդ շատ լավ իմանում ես, վոր... գեղեցիկ ես, ի՞նչ հարկավոր ե կոտորատվել։ Ախ, տեր աստված, տրաքեց գլուխս, ներքի հոգիս, չես ալլես նստել չեմ կարող։

Ասաց Նատալիան և անմիջապես վերկացավ գնաց լուր սենյակը։

— Գնա, ոգնիր, վորդի, նա հիվանդ ե,— ասաց տիկին Սոփիոն Մարիամին։

Որբորդը հետևեց Նատալիային։ Տիկինը քնաց Ռուբենի հետ։

— Հանդուցյալ մալրդ, միտս ե, միշտ ասում եր. «Մարոս շատ կրակոտ աղջիկ ե լինելու»,— խոսեց տիկինը,— այժմ կատարվում ե նրա խոսքը։ Տեսնում ես, Ռուբեն, քույրդ ինչպես ե թռչկոտում, աչդ լավ բան չե, լալ բան չե։

— Յերանի թե միշտ այդպես լինեիր,— նկատեց Ռուբենը, վսր մինչև աչդ բոպե լուռ եր,— լալ ե կրակոտ լինել, քան թմրած։

— Ո հո հո, վորդի, մի ասիլ,— գոչեց տիկին Սոփիոն,— աղջիկը պիտի մի քիչ ել ամաչկոտ լինի։

— Ամաչկոտ,— կրկնեց Ռուբենը դարմացած,— չես կարծում եմ, վոր Մարիամի պես ամաչկոտ աղջիկ շատ քիչ կա։

Տիկինը տարակուսաբար գլուխը շարժեց։

— Յես չեմ ասում, թե նա չերեսըաց ե,— արտասանեց նա խորհրդավոր ձայնով,— բայց ելի...

— Ասացե՛ք, տիկին, չեթե մի բան գիտեք,— հետաքրքրվեց Ռուբենը,— չեթե մի պակասություն ունի Մարիամը, չես նրա չեղբայրն եմ, պարտական եմ նրան հորդորել, վոր ուղղի իրան։

— Խոսքս այն չերիտասարդի մասին ե,— պատասխանեց տիկինը,— այն բժշկի, վորին զարնանը մի քանի անգամ մեր տունը բերեք։ Մարիամը գրել եր Նատալիային, վոր նա չել Դիլիջանտևն և։ Ի՞նչ եր անում այնտեղ։

— Վռչինչ, չեկել եր մի ամիս այնտեղ ապրելու։

— Նա չել ձեզ հետ Թիֆլիս չեկալ։

— Վռչ, բայց շուտով կգա։

— Հը՛մ,— տրտասանեց տիկինը, գլուխը չերերելով,— նա այստեղ ե քնալու։

— Չգիտեմ, առ այժմ նա Յերեանումն և բժշկութիւնն անում: Բայց ի՞նչ կլիք ուղում ասել Մարիամի մասին, այդ շատ հետաքրքրական է:

Տիկինը միքանի վայրկյան լռելուց հետո, պատասխանեց.

— Այն կլի ուղում ասել, վորդի, վոր լսել եմ, թե Մարիամը... Էհ, ինչ թագցնեմ... սիրում է այդ տղային ու...

— Ո՞ւ... — արտասանեց Ռուբենը, մի անորոշ ցնցումն զործելով:

— Ու խոսք է տվել նրան գնալու:

Ռուբենը մի հոգոց հանեց կրծքից և ժպտաց: Նա, կարծես, ավելի մի ծանր լուրի վեր սպասում:

— Չափահաս ազջկա զրուկունքը, վորդի, շատ դժվար է,— շարունակեց տիկինը զորովագութ մոր լեզանակով,— հպետք է նրան մի բոսի աչքից հեռացնել, թե չէ, ով գիտե... Ասելս այն է, վորդի, լեթե այն տղան լավ տղա չէ, բեր շուտ-շուտ մեր տուն, կարելի չէ մենք էլ հավանենք, Մարիամի համար փեսացու ընտրենք ու շուտով պսակենք:

— Այդ նպատակով, տիկին, ներեցեք ասել, չես վաղ մի ընկերոջս չեմ բերիլ այստեղ,— պատասխանեց Ռուբենը հաստատ ձայնով:— Փեսացու ընտրելու իրավունքը Մարիամինն է, ում կհավանի, նրան կուզի:

— Համ,— արտասանեց տիկինը, շրթունքը սեղմելով, աչքերը լայն բանալով և գլուխը բարձրացնելով,— իմացա, ուրեմն չես հորեղբայրդ վոյլո՞նչ, ուրեմն մենք իրավունք չունի՞նք այդ գործի մեջ խառնվելու:

Ռուբենը զգաց չուր խոսքերի խստութիւնը տիկնոջ համար: Նա շտապեց մեղմել նրանց ազդեցութիւնը:

— Ձեր իրավունքը իմից մեծ է, տիկին: Բայց առ այժմ ամուսնանալու հերթը Նատալիայինն է, պղտիկ քույրը մեծ քրոջից առաջ ընկնել չի կարող:

— Նատալիայի մասին չես հոգս չունեմ,— պատասխանեց տիկինը դեռ բավական կծված ձայնով,— նրա համար փեսացուներ միշտ կան, վորին հավանեմ, նրան կտամ: Ե՛հ, թողնենք, դու, չերեի, ասե՞քուն ես մնացել չերեկ գիշեր,— ավելացրեց նա, հանկարծ վրոգի կանգնելով,— գնա, հանգստացիր ու շորերդ փոխիր, թե չէ մի մարդ ներս կմտնի, ամոթ է այդ կոշիկներով չերեալ...

Ռուբենը, վոր ինքն արդեն կամենում էր շուտով հեռանալ տիկնոջից, շտապեց չուր սենյակը և, դռները ծածկելով, առանձնացավ:

Նա փոխեց ճանապարհային հագուստը և, նստելով սեղանի մոտ, անձնատուր չեղավ չուր մտածումներին:

Ութ տարի չեր, վոր նա չուր քրոջ հետ հորեղբոր հովանավորութեան ներքո ելին: Այսինքն այն որից, չերբ մեռավ նրանց հայրը: Այն ժամանակ քույր և չղբայր դեռ դիմնադիտուէն ելին: Հազիվ նրանց փափուկ սիրտը ամոքվել եր մոր մահից հետո հինգ տարի անցած, ճակատագիրը չերկրորդ հարվածը տվեց տասնույոթ տարեկան պատանուն և տասնուչորս տարեկան աղջկան:

Ամբողջ գիշեր նրանք ականատես ելին իրանց հոր կյանքի վերջին խավար ժամերին: Մահճակալի մի կողմում կանգնած եր Ռուբենը, մյուս կողմում Մարիամը և Նիկողայոսը: Միքանի անգամ մեռնողը այն որվա ընթացքում, զգալով մահվան մերձավորութունը, վրտսեր չղբոր ներկայութեամբ կրկնեց, թե չուր զավակների նշութական դրութիւնը համարյա միանգամայն ապահով և թողնում:

— Դու միամիտ կաց, վորդի, հորեղբայրդ կկարգադրի ձեր գործերը, — ասաց նա Ռուբենին:

«Նիկողայոս, քեզ եմ հանձնում իմ զավակներին: Սիրիւր և պահպանիր»:

Նիկողայոսը գլուխը կրծքին թեքեց և արտասուքը հաղիվ զսպելով, պատասխանեց.

— «Յես նրանց չեմ բաժանիլ իմ ընտանիքից, կպահպանեմ մինչև իմ վերջին որը»:

Այս ելին այն խոսքերը, վոր Ռուբենի ներկայութեամբ, փոխանակեցին չերկու չղբայրները:

Այն ժամանակ Ռուբենը չգիտեր ալդ անորոշ խոսքերի բուն իմաստը. բոպելի դառն վիշտը պատանու ուշ ու միտքը մթնացրել եր: Նա վողբում եր չուր ծնողին: Հիշում ե նա ալժմ ես, վոր ձմեռն եր, վոր դրսում չոր քամի չեր փչում, չերկիրը ծածկվել եր սառնամանիքով: Դավթի տերեւթափ աղացիան չուր սառած ճուղերը զարկում եր փակ լուսամտի փեղկերին: Ռուբենը ձեռները կրծքին ծալած, կանգնած եր սենյակի այն կիսախավար անկյունում, ուսկից լսվում եր մեռնողի ծանր հառաչանքը: Սենյակ մտնում ու դուրս ելին գալիս, անլուր ստվերների պես, ինչ-վոր մարդիկ: Չե հիշում նրանց դեմքերը Ռուբենը: Մտարերում և այն, վոր մեկը բռնած նրա թևից, աշխատում եր հեռացնել մահճակալից, շշնջալով.

«Թող խեղճ մարդը հանգստանա»:

Այդ մեկը տիկին Սոփիոն եր: Բաց Ռուբենը մի քալլ անգամ չհեռացավ: Նրա աչքերը հառած ելին այն հողագուշն դեմքի վրա, ուր մահը ծավալել եր չուր խավար ստվերը: Մերթ բացվում ելին, մերթ փակվում ալդ խոշորացած աչքերը, վորոնց պաղած շրջանակները ճեշապակի գուշն ելին ստացել:

Հանկարծ մեռնողը հետ ձգեց վերմակի ծալքը, բարձրացրեց չուրթուլ ձեռը, վորքան կարող էր՝ Ռուբենը և Մարիամը միաժամանակ բռնեցին այդ պաղ ձեռը, մեռնողի քարացած շրթունքի վրա սառավ վերջին խոսքը.

«Միրեցեք միմյանց»:

Անջնջելի կերպով այդ պատվերը դրոշմվեց վորդու սրտում: Այնուհետև ամեն ինչ խավարվեց Ռուբենի աչքում, չերբ տեսավ, թե ինչպես չերկու անձանոթ կանաչք, դրկելով, դուրս բերեցին սենյակից ուշաթափ Մարիամին:

Յեւ ահա ութ տարի չե անցել այդ սգալի դիշերից: Այն ժամանակից շատ բան է փոխվել: Մարիամը, աճելով որբատուրե, այժմ Հափահաս որիորդ է դառել: Հոր հիշատակը նրան պատճառում է մի թախիծ, մորը նա հիշում է շատ մութն կերպով: Նրա առողջ բնավորութիւնը հաղթող հանդիսացավ որդիական վշտին, ժամանակը ամոքեց որիորդի սրտի վերքը: Իսկ Ռուբենը, անձնատուր լինելով ուսմանը, ավելի շուտ միխթարութիւն գտավ աշնտեղ: Սակայն նա չմոռացավ չուր ծնողների հիշատակը և հոր վերջին պատգամը: Նա սիրում էր քրոջը: Սիրում էր, վորպես փափկասիրտ չեղբայր, վորպես մեծ և հովանավորող: Սրտաշարժ էր այն տեսարանը, չերբ նա առաջին անգամ բաժանվեց Մարիամից Ռուսաստան դնալու համար: Ավելի սրտաշարժ էր նրանց վերջին հանդիպումը, չերբ Ռուբենը արդեն ուսումն ավարտած վերադարձավ հայրենիք չորս ամիս առաջ:

— Ռուբեն, Ռուբեն,—գոչեց Մարիամը, փաթաթվելով չեղբոր պարանոցին վերջինի առանձնասենյակում,—սիրում ես ինձ:

Ռուբենը սիրով և անձնվիրութեամբ համակված չուր դեմքը հետ դարձրեց: Նա թափցրեց չուր զգացումների արտաքին նշանները, վորոնց դեմ էր միշտ:

— Գիտեմ, վոր սիրում ես,—շտապեց ավելացնել Մարիամը հուզված,—ուրեմն մի անգամ ել ցուլց տուր սերդ, ինձ մի. թողնիլ միայնակ: Առանց քեզ իմ կլանքը տխուր է անցնում:

Ռուբենը դեռ Ռուսաստանում վճռել էր չերկու տարով արտատահման դնալ, աշնտեղ չուր մասնագիտութեան մեջ կատարելագործվելու նպատակով: Նա լրացրած չեր համարում չուր ուսման պաշարը դեթ այնչափ, վորչափ հարկավոր էր չուր վորոշած նպատակին ծառայելու համար կլանքում: Նա հայտնեց չուր վճիռը Մարիամին: Գուրը վորչինչ չասաց, հառտչեց, գլուխը շարժեց, և չեղբայրը նրա աչքերի մեջ նկատեց արտասուքի նշուլներ: Նա ընկավ մտատանջութեան մեջ. թողնիլ անկատար չուր վճիռը—չեր կարող, այնքան նա ընտե-

դացիկ եր ալդ վճռին, անուշադիր մնալ Մարիամի աղերսանքին—ալե-
լի դժվար եր։ Այն ժամանակ նրա գլխում միտք հղացավ քրոջն ևս
տանել չուր հետ։ Արտասահմանում Մարիամը անգործ չի մնալ, կշա-
քունակի չուր ուսումը, կսովորի վորեւ մի մասնագիտութիւն, կդա-
նա աղատ, չուր ուժերով կյանքի դժվարութիւնների դեմ կռիւնու-
պատրաստ անկախ կին։ Յերբ նա այս միտքը հայտնեց Մարիամին,
վերջինը մի քանի վայրկյան վռչինչ չպատասխանեց, մտածեց և հե-
տո ասաց։

— Յեթե անպատճառ ուզում ես գնալ, գնա միայնակ, իսկ չես...
չեմ կարող...

Վռչինչ թախանձանք չկարողացավ ստիպել նրան բացատրելու
պատճառը, թե ինչու չե ուզում կատարել չեղբոր առաջարկութիւնը։
Միշտ և ամեն ժամանակ նա խուլս եր տալիս ալդ մասին խոսելուց
և միայն շարունակ խնդրում եր Ռուբենին մնալ Թիֆլիսում։

«Քուլրս մի գաղտնի հոգս ունի, ինձ չի հայտնում,—մտածում
եր Ռուբենը,—բայց չես կիմանամ, անպատճառ կիմանամ»։

Որը բավական անցել եր արդեն, չերբ նա տնից դուրս չեկավ
մի փոքր զբոսնելու։ Նա պատահեց չուր ընկերներից մի քանիսին և,
մի չերկու ժամ նրանց հետ անցկացնելով, մոռացավ ծանր մտքերը։

Յերբ նա վերադարձավ տուն, Սադափյանները, սեղանատանը
հավաքված, սպասում էին նրան ճաշի։ Նիկողայոսը հրավիրեց նստել
չուր քով և շատ սիրով ու բարեկամաբար սկսեց խոսել նրա հետ։
Ինչպես զբաղված մարդ, վորի միտքը միշտ դեպի չուր գործերն են
ուղղված, Նիկողայոսը ընտանեկան խնդիրների մասին շատ քիչ եր
խոսում տանը։ Նույնպես նա Ռուբենի հետ խոսում եր հատ ու կտոր,
և վորովհետև Ռուբենն ևս խոսելու տրամադրութիւն չունեի, շուտով
չերկուսն ել լռեցին։

Մարիամը զբաղված եր պատանի Գաբուի և փոքրիկ Լիզայի հետ,
վորոնք աջ ու ձախ կողմերում նստած, վայելում էին նրա սիրալիր
փաղաքշանքը։

— Մարո, ջուր տուր։

— Մարո, աղ տուր։

Ասում եր մերթ մեկը, մերթ մյուսը, և Մարիամը անդադար դա-
նում եր աջ ու ձախ, կերակրելով չուր սիրելիներին։

Նստալիան շարունակ զանգատվում եր գլխացավից, քիչ եր ու-
տում, պախարակում եր չուր քանջուր կերակուր և իմերել սպասա-
վորի միջոցով հանդիմանութիւն եր ուղարկում ուս խոհարարին։
Վերջին կերակուրը բերելիս նա վերկացավ տեղից և անցավ չուր սեն-

յաղը: Դա նրա քմահաճութուններից մեկն էր, վորի համար հայրը հանդիմանում էր նրան և փոխարենը միշտ հանդիմանվում Սոփիոյից:

— Խեղճ իմ Նատո, տանջվում ե ալսոր, ինչ՞ու հենց միայն նա չէ հիվանդանում այս տանը.— ասաց տիկին Սոփիոն և շտապեց լուր աղջկա հետևից:

Այսպես անցավ Սաղապիանների ճաշը, Նատալիայի շնորհիվ, ամենի համար սառն, անախորժ:

Նույն օրը իրիկնադեմին Ռուբենը, դրսից տուն վերադառնալով, Մարիամին հանդիպեց լուր սենյակում: Որիորդը տնային սպիտակ հագուստով նստած էր սեղանի մոտ, գլուխը ձեռների մեջ դրած, արմուկները հենած սեղանին: Նրա առջև դրած էր մի բաց գիրք: Նա չէր կարդում, այլ աչքերը հռոտ լուսամտի կողմ, նալում էր գեպի դուրս:

— Դարձյալ ի՞նչ չերազների մեջ ես, — ասաց Ռուբենը կատակով: Մարիամը մի քիչ շփոթվեց, չերեսը հետ դարձրեց և ժպտաց: Սակայն այս անգամ նրա ժպիտը աչքքան արհեստական էր և բռնազրոսիկ, վոր Ռուբենի տրամադրութունը հանկարծակի փոխեց: Նա քրոջ աչքերի մեջ կարդաց մի նոր դառնութուն:

— Մարիամ, — գոչեց նա, բռնելով քրոջ ձեռը. — դու վրդովված ես չերեւում, ի՞նչ ե պատահել:

Մարիամը ձեռը մեղմիկ խլեց չղբորից և լուր խուլ ու անորոշ հայացքը կրկին բաց լուսամտի կողմ դարձնելով, ձգեց դիմացի չեկի-ղեցու արծաթափայլ դմբեթի վրա, ուր շողշողում էին մալր մատող արևի վերջին ճառագայթները:

— Դու. ինձ չե՞ս պատասխանում, — շարունակեց Ռուբենը, ավելի հետաքրքրված նայելով քրոջ երեսին:

Ջվարթագեմ, ուրախ, դեթ արտաքուստ անհոգ որիորդը անճանաչելի չեր դարձել այդ բոպեյին: Նա վոչ միտյն չպատասխանեց, այլ և խույս էր տալիս չղբոր հայացքից:

— Յերգվում եմ մեր ծնողների հիշատակով, — գռչեց Ռուբենը, նստելով նրա մոտ, — չեթե դու չես հայտնիլ ինձ գաղտնիքդ, կվիրավորվեմ սաստիկ:

Մարիամը նայեց չղբորը, հաղիվ զսպելով արտասուքը, վոր ձգտում էր դուրս հոսալ նրա խոշոր աչքերից:

— Ռուբեն, — խոսեց նա, վերջապես, վրդովված ձայնով, — չերեք ամիս ե դու ինձ անդադար հարցնում ես իմ դրութան մասին: Մինչև այժմ չես աշխատում ելի լուել, վոչինչ չհայտնել քեզ: Բայց այլ ես անկարող եմ այժմ: Ռուբեն, ինձ այս տանը հալածում են...

Մի վայրկյանում Ռուբենի աչքերը մթնեցին, գլուխը պտտեց, նրան պաշարեցին միմյանցից դառն, միմյանցից վատ կասկածներ։ Նրա քրոջը հալածում են, թվ, ինչո՞ւ, ի՞նչ մեղքերի համար։

Մարիամը չկարողացավ նրա անկանոն հարցերին միանգամից պատասխանել։ Նա գանգատվեց միայն Նատալիայի վրա։ Ամեն քալում ալդ աղջիկը աշխատում է վորեն դառնություն պատճառել նրան, տեղի և անտեղի ծաղրում է, հնարում է նրա մասին զանազան պատմություններ, արտահայտում է զանազան անհամեստ կասկածներ։ Յերբեք Նատալիան անկեղծ չէ լեզվել նրա հետ, չերբեք պարզ սրտով չէ վարվել։ Յերբ Մարիամը ուրախ է — Նատալիան տխրում է, չերբ տխուր է — ուրախանում է, և միայն այն նպատակով, վոր Մարիամին վշտացնել։ Կարծես, նա չերզվել է ամեն տեսակ վատություն անել նրան։ Ինչո՞ւ, — չգիտե Մարիամը։ Նա, վոր միշտ սիրով և վերաբերվել Նատալիային, ինչպես լուր մեծ քրոջը։

— Ախ, Ռուբեն, — շարունակեց Մարիամը, աչքերը սրբելով, — ախոր նա չափից դուրս անսիրտ էր։ Դու տեսար, ինչպես նա ընդունեց ինձ, ինչպես սկսեց հետս խոսել, չերկու շաբաթ չերեսս չտեսնելուց հետո։ Դու գուցե հավատացիր, վոր նա գլխացավ ունե։ Վոչ չես իմացա, վոր սուտ է։ Նա ինձ տեսավ և խսկուն գլխացավ բռնեց։ Ծաշից հետո գնացի սենյակս։ Նա չեղլուր սենյակումն էր։ Կանչեց ինձ լուր մոտ, հարցուփորձ արավ Մելիք-Բարսեղյանի մասին։ Յերանի նամակումս գրած չլինելի, թե նա չեղ Դիլիջանումն է։ Սկսեց հետս անվաչել կատակներ անել։ Ախ, աստված, ամօթից չեմ կարող պատմել, թե ինչեր ասաց։ Յեթե լսելիք, Ռուբեն, ականջներդ պիտի փակելիք։ Յես համբերեցի։ Նա չդադարեց։ Առաջին անգամը չե անում ինձ հետ տգեղ կատակներ։ Հենց վոր մի նոր չերիտասարդի հետ ծանոթանում եմ, նրա չարախոսությունը արդեն պատրաստ է։

Մինչ Մարիամը պատմում էր այս բոլորը, Ռուբենը վրդովված, շրթունքը ներքին ալեկոծությունից սեղմած, ճակատը ամուր բռնած, լսում էր։

— Իսկ մայրը, — արտասանեց չերիտասարդը խեղդուկ ձայնով։ Մարիամը վարանեց իսկուն պատասխանել։

— Գիտեմ, — ասաց Ռուբենը, — առանց քո ասելու չեմ գիտեմ։ — Այս տան մեջ քեզ վոչ վոք չի սիրում, վոչ վոք...

— Վոչ, անարդար մի լինիլ, Ռուբեն, — ընդհատեց Մարիամը, — չես հարգում եմ մեր հորեղորորդ։ Նա չեթե չի սիրում, չի չեկ ատում։ Բայց ինձ սիրողներ էլ կան այս տանը, և հենց նրանք ելին մինչև այժմ ինձ մխիթարողները — Լիզտն ու Գաբոն։

Մի քանի վայրկյան տիրեց լուռթյուն: Ռուբենի սիրտը ուժգին բարախում էր հուզմունքից: Նա սաստիկ վարանման մեջ էր. պետք է դուրս բերել Մարիամին այդ տանից, աղատել նրան Նատալիայի և Կիրիլ Սոփիոյի հալածանքից, այս անվիճելի չե:

— Յե՛վ դեռ այս բոլորից հետո դու ուզում ես, վոր լես քեզ այստեղ թողնեմ և գնամ, — գոչեց նա զայրացած, — վոչ, Մարիամ, դու պիտի դաս ինձ հետ, այլ ես քո համառությունը ինձ խաբել չի կարող: Մարիամը դառնությամբ հռուչեց:

— Մտածիր, Ռուբեն, ասաց նա թախծալի ձայնով, — Քեզ ես գնում և ինձ ել տանում — մի ոտար, հեռավոր չեղիլիք. Քե՛ս հաշվով, ինչ միջոցներով:

— Ի՞նչ միջոցներով, — կրկնեց Ռուբենը զարմացած, — միթե այդ հարցին ել պատասխան ե հարկավոր:

— Այս, հարկավոր ե, — ասաց Մարիամը գրական լեզանակով, — և հենց այդ ե, վոր լես չեմ ուզում զայ քեզ հետ և վոչ ել քո գնալից կը յանհալի, չեթե միայն կարող ես գնալ...

Վերջին դարձվածը կրկնապատկեց Ռուբենի զարմանքը:

— Յեթե միայն կարող եմ գնալ, — մեքենաբար արտասանեց նա, — մի կարող ե ինձ արգելիլ: Վերջապես, ի՞նչ ես ուզում ասել, պարզ խոսիր Մարիամ:

— Այն եմ ուզում ասել, Ռուբեն, — պատասխանեց քույրը, — վոր նախ քան մի տեղ գնալի, դու պետք ե պարզեա մեր ժառանգական գործերի դրությունը: Հասկանո՞ւմ ես:

— Մեր ժառանգական գործերի դրությունը պարզ ե: Մեր հանգուցյալ հայրը մեր ժառանգությունը հանձնել ե յուր լեղրորը: Մենք ապահով ենք. ապրում ենք մեր կարողությամբ և արտասահման կը գնանք մեր հայրական փողերով:

— Այո, հայրական փողերով, — շեշտեց Մարիամը մի տեսակ հեղնությամբ, — ո՛ւր ես այդ փողերը:

— Ասացի, վոր մեր հորեղբոր մոտ:

— Գիտե՞ս հաստատ, խոսե՛լ ես նրա հետ, կա՞ արդեոք, չեթե կա, վորքան ե, բավական ե մեր ծախսերին, ահա ինչ ե հարկավոր պարզել, Ռուբեն: Այս չիմացած, դու չպիտի վոչ մի տեղ գնաս, չեթե ինձ սիրում ես, չեթե ինքնասիրություն ունես:

Ռուբենը մի վայրկյան ապշած նայեց քրոջ չերեսին: Ապա ձեռը տարավ ճակատին, աչքերը սևեռեց սեղանին և մտաւտանջության մեջ ընկավ:

— Սպասիր, — ասաց նա, տատանվելով, — դու իմ սիրտս մի ինչ

վոր կասկած ձգեցիր, Մարո... Այո, դու ճշմարիտ ես ասում... լես պիտի խոսեմ մեր հորեղբոր հետ... Միթե... Բայց վոչ, լես պարզ հիշում եմ հանգուցյալ հայրիկի խոսքը... Նա մեզ չքավոր չի թողել: Ինչ և իցի, ճշմարիտ ես ասում, պեաք և պարզել, և շուտով, հենց այս քանի որը, հենց վաղը գուցե:

— Շտապել հարկավոր չե,— ընդհատեց Մարիամը, չուր սրտի դառն գաղտնիքը հալտնելուց հետո փոքր ինչ հանդարտված,— այսքան ժամանակ համբերել եմ, ելի կհամբերեմ: Սպասիր հարմար առիթի և մի որ անկեղծարար խոսիր մեր հորեղբոր հետ: Յես չեմ ուզում, վոր մենք... ձրիակերի անուն ստանանք... Համբերիր, մի ստիպել ինձ ավելի խոսել առ այժմ: Ինչ վոր ասացի, բավական ե, մնացյալը հետո...

Այս ասելով, Մարիամը վերկացավ տեղից և հանդարտ գուրս լեկավ յնղբոր սենյակից:

Ռուբենը վոչինչ չասաց և վոչ խնդրեց քրոջը չզնալ: Յերկար ժամանակ նա խորհում էր քրոջ ասածների մասին:

Յերբ ծառան սովորական ժամին ներս մտավ, տիկին Սոփիոյի կողմից հրավիրեց ընթրիքի, նա ձեռով բացասական նշան արավ...

IV

Որը կիրակի լեր: Որիորդ Նատալիան սեփական կառքով գուրս լեկավ գրոսնելու: Անհարմար համարելով միաջնակ գրոսնելը, մայրը ստիպեց նրան Լիդային և Գարոյին ել հետը նստեցնել: Մարիամը և Ռուբենը նույնպես տանը չեկին:

Տիկին Սոփիոն զբաղված էր տնային գործերով: Այդ որը նրանց տանը պիտի ճաշեին Հալարյանը և իշխան Մահարունին:

Նիկողայոսը չուր առանձնասենյակում միաջնակ նստած, ակնոցը աչքին դրած, քրքրում էր ինչ վոր թղթեր, կարդում էր, գրում և լերբեմն համարակալի վրա հաշիվներ անում: Նկատելի լեր, վոր վերջին որերը նա սաստիկ զբաղված է, սովորականից ավել լերկար էր մնում առանձնասենյակում: Ամեն որ նոր-նոր մարդիկ են գալիս նրա մոտ, խոսում, վիճում են ցածր ձայնով: Գալիս են շուտ-շուտ և՛ նրա գործակատարները: Նիկողայոսը նրանց հետ վարվում է կոպտարար, գոռում է, հանդիմանում և վրդովված ճանապարհ դնում:

Նա պարտադրում էր կապալներով և Թիֆլիսի առևտրական շրջաններում հռչակված էր իբրև հաջողակ, լեռանդուն, որինակելի «գործավար»: Յեվ այս հռչակը հարստության հետ նա վաստակել էր վերջին տասնուհինգ տարվա միջոցում միայն:

Կար ժամանակ, վոր նա մի հասարակ մահադավաճառ եր, քաղաքի մի կենտրոնական քարվանսարայում, չուր մեծ չեղորոհ հետ, պահում եր մի փոքրիկ խանութ: Գեորգը—Մարիամի և Ռուբենի հայրը—կառավարում եր խանութը: Նիկողայոսը, ավելի լերիտասարդ, լեզվանի և աչքարաց լինելով, կտտարում եր դրսի գործերը, գնում եր Ռուսաստան, հարաբերություններ եր պահում ոտար գործարանատերերի հետ և այլն:

Մի օր Նիկողայոսը կանգնեց, թե ուզում ե խանութը փակել և ուրիշ գործերի ձեռնարկել: Գեորգը առևտրի մեջ չերկչոտ մարդ եր, ամեն մի նոր բան նրան կտակած եր պատճառում: Բայց նա մեծ հավատ ուներ գեպի Նիկողայոսի առևտրական հանճարը: Թույլ տվեց նրան գնալ չուր ընտրած նոր ճանապարհով: Իսկ ինքը, խանութը մի քանի տարի միայնակ կառավարելուց հետո, փակեց, չուր մասը զուտ վողով վերցրեց և հեռացավ:

Բախտը հաջողեց Նիկողայոսին նոր ասպարիդում: Առաջին մի քանի տարվա ընթացքում նա կրկնապատկեց չուր դրամագլուխը: Հետո վրա հասավ արևելյան պատերազմը և նրա չեռանդի համար մի նոր ասպարեղ բաց արավ: Նա ընդարձակեց չուր գործերը: Իսկ Գեորգը չուր փողերը պետական թղթերի վերածեց, նրանց տոկոսով սկսեց խաղաղ ու համեստ կյանք վարել, կնոջ մահից հետո փափագ չուներ նալով պարտաել վորեև բարդ գործով:

Յերկու չեղորոհ հարաբերությունները բարեկամական ելին, թեև ընտանիքներն ապրում ելին առանձին: Մի օր, միասին ճաշելուց հետո, Նիկողայոսը, հոգեկան ուրախ տրամադրության միջոցին, խոսում եր չուր գործերի մասին: Հանկտրծ նա դարձավ Գեորգին և հարցրեց—

— Վորքան տոկոս ես ստանում վողերիցդ:

— Հարյուրին հինգ,—պատասխանեց Գեորգը:

— Հենց այդ—գուցե Նիկողայոսն անկեղծ զարմացած:—Հարյուրին տասը կտամ, կուզե՞ս,—ավելացրեց նա անփուլթ կերպով:

Գեորգին հրապուրեց այդ առաջարկը, մանավանդ վոր նա չուր չեղորոհ ազնվության մասին կասկած չուներ: Հենց նոր քառասուն հազար ռուբլու տոկոսաբեր թղթերն անցել ելին Նիկողայոսի ձեռքը, չերը Գեորգը հիվանդացավ, տասն օրից հետո մեռավ թոքերի բորբոքումից: Փոխառության վերաբերմամբ քանի մի պաշտոնական ձեռք անկատար մնացին, և մեծ չեղորոհ վողերը կրտսեր չեղորոհ մոտ մնացին առանց գրավոր ապացույցների:

Նիկողայոսը հանգուցյալի վորբերին բնակեցրեց չուր տանը:

Հենց այդ ժամանակ նա, չուր կնոջ թախանձանքով, մի նորա—

չեն տուն զնեց քաղաքի կենտրոնում: Լինելով գործնական, հաշվադետ մարդ, նա անշարժ կարվածները «մեռած դրամագլուխ» եր համարում: Բայց Սոփիոն վաղուց ցանկանում եր անպատճառ լուր սեփական տանն ապրել: Նա լսել անգամ չեր ուզում, թե ամուսինը Սարգիսի հետ ընկած մի փողոցում կիսախարխուլ մի տուն ունի հորից ժողանդած:

Յեւ այս Սոփիոյի առաջին պահանջը չեր մերժն, վոր կատարեց Նիկողայոսը: Նա սիրում եր կնոջը լուրովի, համարում եր նրան ժամանակակից կին, վոր գիտե մարդկանց առաջ պարզերես անել մարդու անունը: Պակաս չեր նպաստում այդ սիրունը և այն հանգամանքը, վոր Սոփիոն իշխան Սահարունիների տոհմիցն եր, այն ե՝ Սրապիոն Սահարունիի հարազատ քույրը:

Նա ազատութիւն եր տվել Սոփիոյին տան համար անել, ինչ-վոր խելքը կտրում եւ Իսկ Սոփիոն գիտեր լուր անելիքը, մանավանդ աղջկա վերադերմամբ: Վոչինչ նա չխնայեց Նառայիացի համար, բացի մի բանից. նա ասում եր «գուվերնանտկաներին», ուստի վճռել եր չվարձել:

— Այդ փքված հնդուհայերը, — ասում եր նա, — գալիս են, մարդու տանը տիրանում են ու...

Բայց և այնպես նա թշնամիներին տրաքացնելու համար վարձեց մի պառավ Ֆրանսուզի, մի տարի պահեց, հետո արձակեց: Յեւ արձակեց կռվով, վորովհետեւ ուսարունին հանդգնել եր Սաղափյանների տան հարուստ կահ-կարասին անճաշակ համարել:

Վերջին տարիները Նիկողայոսն ընտանեկան ծախսերի վերաբերմամբ փոքր առ փոքր ժլատանում եր: Յերբ Սոփիոն փող եր ուզում, նա ձեռք տատանվելով եր գրպանը տանում, գլուխը խորհրդավոր շարժում եր և կրկնում.

— Սոփիո, ծախսերդ թեթեացրու:

— Սուս, — պատասխանում եր Սոփիոն կատակով, և ամեն անգամ մատները ծալերը շփում ամուսնու իստակ սափրած չերեսին:

Նիկողայոսի ժլատանալը անհիմն չեր — նրա գործերը ձախ ելին ընթանում, մանավանդ վերջին տարի: Յերկու անգամ իրար լեռեից նա խոշոր մնասներ կրեց կապալներում: Նա փողի պակասութիւն զգալով, սկսեց դիմել սրա ու նրա ոգնութեանը, այնպես վոր Հալաբյանն առաջինը չեր, վորին նա ձեռք մեկնեց: Բայց նա զգուշութեամբ թաղցնում եր կնոջից լուր ձախորդութիւնն այն մտքով, վոր Սոփիոն լուր աղմուկով իդուր պիտի արշուն վրդովեր:

Դուները հանգարտ բացվեցին, ներս մտաւ Սոփիոն և անխուստեց Նիկողայոսի զրասեղանի մոտ:

— Ասա, տեսնենք, — արտասանեց վերջինը, թեկերը դնելով լուր ատաջ ցրված հաշվեթղթերի վրա:

Սոփիոն ժպտաց: Նիկողայոսը հասկացավ:

— Այսոր վռչինչ մի խնդրիլ ինձանից, — ասաց մարդը և շարունակեց պարապել ընդհատված գործերով:

Սոփիոն շրթունքն ամուր սեղմեց, ծնեց մի կողմ, հոնքերը վեր բաշեց և գլուխը շարժեց աջ ու ձախ:

Այս ձևով եր նա սովորաբար ծաղրում ամուսնու թուլլ ընդդիմադրությունը:

— Ձեմ տալ, ասում եմ, — կրկնեց Նիկողայոսը, մի փոքր ձայնը խստացնելով:

Ջարմանքից Սոփիոյի դեմքը չերկարացավ և փոքրիկ աչքերի փայլուն բիբերն անշարժ մնացին դեղնափայլ շրջանակներում:

— Հետո, — արտասանեց նա:

— Հետո, փող չունեմ, Սոփիո, հավատացի՛ր, վոր չունեմ:

— Հանաքը մի կողմ թող, ձեռքդ գրպանդ տար:

— Չունեմ, ասում եմ:

— Յեթե դու ծուլանում ես, ինքս կհանեմ փողամանդ, — ասաց Սոփիոն և, վտառի կանգնելով, մոտեցավ ամուսնուն: Բայց Նիկողայոսը կատակ չեր անում: Նա բռնեց կնոջ ձեռքից, հետ մղեց և հրավիրեց նստել լուր տեղը:

— Ո՛հ, — բացականչեց տիկինը միանգամայն ապշած, — չլինի թե դու ինձ ուզում ես փախցնել:

Ասաց նա և, կեղծ վերավորված, չերեսը շուռ տվեց իբր թե դուրս դնալու: Բայց չերբ տեսավ, վոր ամուսինը լուռ է, հետ դարձավ և կրկին նստեց:

— Նիկո, — ասաց նա լրջորեն, — լավ իմացիր, ով վոր մեծամեծների հետ ուզում է ծանոթանալ, նա մեծ սիրտ էլ պետք է ունենա:

— Թող, աստված սիրես, — դռնեց Նիկողայոսը, — ծանոթներ, ծանոթներ, քանդեցիր տունս քո ծանոթներով: Այնքան ունենք, վոր ել ով ասես գալիս և այս տուն, ով ասես, բարեւում ե ինձ դրսում, շատերի անունն էլ չեմ հիշում:

Սոփիոյի տոհմական ինքնասիրությունը վերավորվեց: Ինչ, մի-թե նա, պայծառափայլ Սահարունիների դուստրը, աջնալիսի մարդկանց է ընդունում լուր տունը, աջնալիսի ծանոթներ է ձեռք բերում, վոր դուր չմոռնալիս նախկին «բազազին»:

Ո՞վ և Սադափյան տնունը բարձրացրել, ով է այս տունը իշխանների, չինովնիկների, լուսավորվածների համար բաց արել:

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, բոլորը դու չես արել,—
ընդհատեց Նիկողայոսը կնոջ խոսքը,—հիմա բավական է, ել չեմ ու-
զում: Մինչև այժմ մենք ուզում ելինք սրա ու նրա հետ բարեկամանալ,
այժմ թող ուրիշները աշխատեն մեզ մոտենալ: Վերջան մեզ ծանր
պահենք, այնքան մեր պատիվը կբարձրանա:

— Հիմա այդպես ես խոսում, համա,—գոչեց տիկինը հեզնաբար,—
դու չեղիր, վոր ասում ելիր՝ մարդ պետք է միշտ չուր գլխից վերև
նալի, վոչ թե ցած... Դու չեղիր. հիմա փողեցիր: Շատ լավ, ծանր
պահիր, տեսնենք վժիր կոմսուհին չերեսիդ մտիկ կանի: Հասկանում
ես, ինչ եմ ասում:

— Ի՞նչ, ո՞վ, ի՞նչ ես ասում,—զարմացած արտասանեց Նիկո-
ղայոսը:

— Յես ուզում եմ կոմսուհի Նավալիխինայի հետ ծանոթանալ,—
պատասխանեց տիկինը դրական չեղանակով:

Նիկողայոսը ապշած նայեց կնոջ չերեսին: Այն անունը, վոր հի-
շեց Սոփիոն, շատ և շատ բարձր էր նրա դիրքից ու շրջանից: Վոչ
միայն ծանոթանալ, չերեակալել անգամ չեր կարող, թե չերբեք բախտ
կունենա չերես առ չերես տեսվել նրա հետ: Յեվ հանկարծ Սոփիոն
ասում է, թե այդ կնոջը կարելի չե ստիպել անգամ, վոր այցելի Սա-
գափյաններին: Ի՞նչպես:

— Մեծ բան է,—բացատրեց Սոփիոն սառնորեն,—չեթե նա կոմ-
սուհի չե, չես իշխանի աղջիկ եմ: Պապերս վրաց թագավորների հետ
մի «հազարփեշից» գինի չեն խմել, կոմսուհիները ո՞վ են իմ մոտ:
Ականջ դիր. կոմսուհի Նավալիխինան մի բարեգործական ընկերու-
թյան նախագահ է: Ով վոր պատվավոր անդամ է գրվում, նրան կա-
րեթով այցելութուն է անում: Հասկացար: Հիմա չես ուզում եմ, վոր
Նատոս պատվավոր անդամուհի գրվի: Լսո՞ւմ ես: Մի շարաթ սրանից
առաջ կոմսուհին Փափգիսովի կնոջ մոտն է չեկել: Միրոս քիչ ֆնաց
տրաքի, չերը վոր լսեցի: Հիմա դու ինքդ ասա, մենք Փափգիսովի-
րի՞ց ել հետ պիտի մնանք:

Ավարտելով չուր խոսքը, տիկինն աչքերը սեեեեց ամուսնու աչ-
քերի մեջ, ապաստելով նրա պատասխանին: Նիկողայոսը քանի մի վալը-
կյան մտածեց և հետո սեղանի արկղը բանալով, հանեց մի հատ աղեղ-
նագույն թղթադրամ և, դնելով սեղանի վրա, ասաց.

— Սրանից ավելի տալ չեմ կարող, ինչ ուզում ես, արա:

Սոփիոն արհամարհանքով շարտեց թղթադրամը: Նա վոտքի
կանգնեց:

— Մուրացկան եմ, ի՞նչ եմ,—գոչեց կատաղած,—վերցրու, չեմ
ուզում, տար չեղրորդ աղջկա համար հագուստ գնիր:

Առաջին անգամը չե՛ր Նիկողայոսը կոնջ կողմից այս տեսակ կծու ակնարկներ լսում չու՛ր չեղբոր վորերի վերաբերմամբ: Բայց չե՛րք մի առանձին ուշադրութիւն դարձրած չե՛ր: Այս անգամ Սոփիոյի խոսքը ազդեց նրա վրա: Ազդեց իբրեւ հանդիմանութիւն, և վո՛չ իբրեւ վերավորանք չու՛ր հարազատ չեղբոր աղջկա համար:

Նա աչքերը լաջն բաց անելով, նայեց կոնջը վոտից ցղլուխ և արտասանեց:

— Սոփիո, բավական և՛:

Վո՛չ նրա սուր հայացքը, վո՛չ ձայնի սաստողական հնչյունը չունեցան ցանկալի ներգործութիւն: Ընդհակառակը Սոփիոն ավելի գրգռվեց:

— Ասում եմ ելի, տա՛ր քո չեղբորդ վորդիների համար ծախսիր,— կրկնեց նա, ձևուր խփելով սեղանի ծայրին,— չեմ ուզում, վո՛չ չես, վո՛չ իմ աղջիկը կարոտ չենք քո վողորմութիւնդ: Նրանց ուտեցրու, հագցրու, նրանց պահիր իշխանի վորդիների պես ու ինձ ասա. «Մախսերդ պահասեցրու»: Պակասեցնե՛մ: Լավ: Համեցե՛ք. առաջ դու դուրս բեր այդ ձրիակերներին իմ տնից, հետո ինձանից պահանջիր:

— Իմ չեղբոր զավակները ձրիակերներ չեն, նրանք ապրում են իրանց հոր փողով, խստորեն և հանդարտ արտասանեց Նիկողայոսը:— Յես նրանց իրավունք չունիմ այս տնից դուրս բերելու, քանի վոր... Նրանց ժառանգութիւնը իմ մոտ և՛ Յեթե ուզում ես դուրս բերել, գտիր ու տուր քառասուն հազարը, նրանք, առանց քո ասելու չե՛լ, կգնան...

— Այ դրողը տանի նրանց միքանի հազար թումանը, ինչպես վոր տարել ե, — ընդհատեց Սոփիոն և ավելի ու ավելի գրգռվելով, շարունակեց նույն չեղանակով:

Միմիայն Մարիամի վրա ավելի չե՛ ծախսվել, քան նրա հոր թողածը, իսկ Ռուբէնը, վոր ութ տարի ուսում և առել: Վո՛չ, վո՛չ, բավական ե, պետք ե ճանապարհ դնել նրանց, թե՛ վո՛չ, վերջին չքավորութիւն կհասցնեն Սոփիոյին ու նրա զավակներին: Ինչ՞եւ, ինչ իրավունքով, թվ ե մեր ժամանակում չու՛ր հարազատներին թողած, չեղբոր վորերի համար գլուխ կոտրում: Սե լինել աջն որը, չե՛րք Մարիամը վոտ գրեց Սոփիոյի տունը: Այն որից Նատոյի բախտն ել կապվեց, տարին տարի չետից անցնում ե, նա պառաւում ե, չկա մի որինավոր մարդ, վոր նրա վրա աչք դնի: Մարիամը կապել ե նրա ճանապարհը. ով ասես, նրա վրա չե՛ ուշադրութիւն դարձնում: Ինչ՞եւ...

Այս ասելով, տիկինը կրկին նստեց գրասեղանի մոտ, և աչքերը տնկեց Նիկողայոսի չեքսին: Նրա բարակ շրթունքը կապտել ելին,

Թեթե դողդողում ելին: Թվում եր, վոր սպասում եր մի թույլ հակա-
ճառութչան, և այն ժամանակ պատրաստ եր ավելի կատաղել:

Սակայն Նիկողայոսը չխոսեց: Նա նաեւ ժամացույցին, շտապով
համաքեց հաշվեթիթերը, վերցրեց սեղանի վրա ընկած հարլուրանոց
թղթադրամը, վաւեց սեղանի արկղիկում, բանալին դրպանը դրեց և
վերկացավ տեղից, ասելով.

— Վաղը կստանաս ուղածդ, այժմ չունենմ:

Նույն վայրկյանին հանկարծ նրա դեմքը տարօրինակ ալալվեց:
Նա բռունցքը սեղմած խփեց սեղանին և խեղդուկ ձայնով գոչեց.

— Մնանկացրիր ինձ, սնանկացրիր...

Գոչեց և արագ քալերով դեպի դուրս շտապեց, դռները ուժգնա-
կի ծածկելով չուր լետեից:

Տիկին Սոփիոն ապշած նաեւց նրա լետեից:

— Այդ մարդը խելքը կորցրել ե,— ասաց նա լսելի ձայնով,—
միքանի մանեթի համար աղքատ կատաղել... Կոպիտ, անտաշ, ալսու-
հետե իշխան Սահարունիի աղջկա հետ պիտի աղպես վարվես... Սպա-
սիր, լես քեզ ցույց կտամ, թե ով եմ...

Կեստովա լերկու ժամից անց Նիկողայոսը վերադարձավ տուն,
հետը բերելով չուր հլուրերին: Հալարչանը ներս մտավ սովորական
զվարթ տրամադրութչամբ: Իբրև վաղուցվա ծանոթ, նա այնքան ըն-
տելացել եր Սադափչանների ընտանիքին, վոր ալցերի ժամանակ մի
ստանձին ձևականութչուն չեր պահպանում: Յեւ ալ շատ հավանելի
լեր Նիկողայոսին:

Տիկին Սոփիոն ընդունեց նրան ուրախ ժպիտը լերեսին և հանդի-
մանեց բարեկամաբար, վոր ուշ-ուշ և ալցելում:

Ամբողջ մի տարի լեր, վոր նա Հալարչանին չուր մտքում Նա-
տալիայի համար փեսացու լեր ընտրել: Այս ընտրութչունը պայմա-
նավոր եր: Այն որից, լերը տիկնոջ հուսերը թուլացան ավելի արժա-
նավորին գտնելու, սկսեց զիջումներ անել և ի վերջո՝ նրա ուշումիտ-
քը կանգ առան թերմաշ ամուրիի վրա: Հալարչանը, լեթե սպա չեր,
լեթե մի մեծ պաշտոնյա չեր, փող և դիրք ուներ: Յեւ Սոփիոն քանի
մտածում եր ալս մասին, այնքան ամուրին բարձրանում եր նրա աչ-
քում: Այս առթիւ նա մի ու խոսեց չուր աղջկա հետ և ուրախութչամբ
տեսավ, վոր Նատալիան վոչ միայն ընդդիմադրութչուն չի ցույց տա-
լիս, ալ և, կարծես, ուրախ և:

Յեւ իրավ, քանութչամյա որիորդը հարուստ ամուրիի մեջ տես-
նում եր քանի մի հատկութչուններ, վոր հավանելի ելին նրան:—
Հալարչանը տակավին ծեր չի, նա ունի ծանր ու հպարտ գնացք,

խորխտ ու դուրս ցցված կուրծք, նա դիտե ճաշակով հազնվել, վաշե-
լուչ խոսել կանանց հետ, արժանավորութեամբ պահել իրան հասարա-
կական շրջաններում: Փորձի համար Նատալիան մի անգամ պատկե-
րացրեց իրան նրա հետ թե թեի տված մանգալիս և տեսավ, վոր հեռ-
վից նայողի մեջ մի այդ տեսակի դուլդ կարող և հարգանք դարձեցնել:
Ինչ անենք, վոր ճաղատ և Հալարյանը, գլխի մաղերը կանանց հա-
մար են դարդ, տղամարդը ճաղատ գլխով ավելի պատկառելի չե: Իսկ
նրա հարստութեւնը, վորի մասին որիորդը մի փոքր առասպելական
գաղափար ուներ:—Ահա այն ամենագլխավոր հրապույլը, վոր բարձր
եր նույն իսկ իշխանական ծագումից: Նատալիան չուր ոժիտը մի
ամենաչնչին բան եր համարում այն ապրուստի համար, վոր չերա-
զում եր տասնութեց տարեկան հասակից սկսած: Միայն Հալարյանը
կարող եր իրագործել այդ լերադը.—գոնե այսպես եր մտածում որիոր-
դը: Ահա ինչու նա բացարձակ համաճութուն եր տալիս չուր մոր
միտումներին: Յեւ մայրը, խրախուսված այս համաճութունից, ամեն
կերպ աշխատում եր ձեռքից բաց չթողնել չուր վորսը, վորին նա
վերջինն եր համարում: դիտելով դստեր հեռզհետե թառամող դեմքը:

Հյուրերը գալուց միքանի ըոպե անցած ներս մտավ Նատալիան
զուգված, դարդարված: Հետո չեկան Մարիամը ու Ռուբենը, և իշխան
Սահարունիի գլխահախոսութեան շնորհիվ հյուրասենյակը ազմեց:

Տիկին Սոփիոն նկատեց, վոր Հալարյանը միայն միքանի ըոպե
ուշադիր չեղավ դեպի չուր դուստրը. հետո ամուրին դարձավ Մարիա-
մին և սկսեց նրա հետ խոսել: Նա ներքին հուզմունքից շրթունքները
կրծեց և մոտեցավ Հալարյանին:

— Ինչու մասին եք այդպես տաք-տաք խոսում,—հարցրեց նա
պարզ:

— Խոսում ենք Ռուբենի արտասահման գնալու մասին,—պա-
տասխանեց Հալարյանը,—այժմյան չերիտասարդները շատ ազաւ են,
ինչքան գիտութեւն են ստանում, չեն կշտանում:

— Այդ մասին հետո,—ասաց տիկինը շեղակի նայելով Մարիամի
չերեսին,—գնանք ճաշիլու, բավական և ինչքան քաղցած պահեցինք ձեզ:
Նա առաջ գնաց, և հյուրերը հետեցին նրան դեպի սեղանատուն:

Ճարպիկ տանտիրուհին այնպես հմուտ կարգադրեց, վոր ճաշի
սեղանի մոտ Հալարյանի մի կողմում իշխան Սահարունին նստեց,
մյուս կողմում Նատալիան, դեմ ու դեմ Նիկողայոսը: Իսկ Մարիամին
և Ռուբենին հրավերեց նստել չուր մոտ, առաջին աջ ու ձախ կողմե-
րում տեղավորելով Գաբուին ու Լիզային: Բայց... ապարդյուն ջանք:
Ամուրին սկզբից մինչե վերջ այնչափ ուշադրութեւն դարձրեց չուր

հարեանուհու վրա, վորչափ պատշաճ եր տնքադաքավարի չլինելու համար: Ամեն մի հաջող վայրկյանից ողուտ քաղելով, նա նատալիայի ուսի վրայով նայում եր Մարիամին, վոր զբաղված լինելով Գաբուով ու Լիդայով, չեւ նկատում նրա համառ հայացքները:

Տիկին Սոփիոյի սիրտը խռովեց, ալլ նա չհուսահատվեց: Աչքով արավ իշխանին, վոր կենացներ առաջարկի: Այս ևս չօգնեց: Վոչ նորին պայծառափայլության չուրաքանչյուր բաժակի վերաբերմամբ արտասանած սովորական խոսքը, վոչ տիկնոջ և Նիկողայոսի անսովոր հարգանքը չգրավեցին Հալաբյանին: Լուռ եր նա և չեթե խոսում եր, միայն հարկից ստիպված:

Ճաշը ավարտվեց: Տիկին Սոփիոն հյուրերին հրավիրեց դահլիճ, վոր Սազափյանների տասնույնըկու սենյակների մեջ ամենահարուստ զարդարվածն եր: Դեպի փողոց նայող հինգ բարձր և լայն պատուհանները սքողված ելին թանձր ու ծանր մետաքսյա մուգ-կարմրագույն վարագույններով, վոր ծառաները նոր մաքրել ելին և քարշ արել: Մի անկյունում դրած եր տաճկական թախտը, մետաքսյա նրբանկար և վոսկեգործ կապերտով ծածկված: Չինական ձևով մանր քանդակված և փղոսկրով դրվագած քանի մի աթոռակներ շրջապատել ելին վոսկեհյուս բարձերով զարդարուն թախտը: Մի ալլ անկյունում դրած եր ավելի մեծ մի թախտ, զարդարված բուն պարսկական ճաշակով: Դիմ ու դեմի անկյունում մորենագույն թավիշով ծածկված լսվորակալան բաղկաթոռները և բազմոցներն ելին տեղավորված: Իսկ այնտեղ, դահլիճի խորքում, վարագույնների հովասուն ստվերի տակ, հպարտ կանգնած եր նատալիայի ահագին դաշնամուրը, վորի կափարիչի վրա անկանոն սփռված ելին վոսկեկազմ նոստատները: Այս ու այնտեղ շարված ելին կոլորակ, սևագույն սեղաններ: Մեկի վրա դրած եր ալյուստմսերով լի չինական վազը: Մյուսները ծանրաբեռնված ելին թանդագին փնջամաններով, ալբոմներով և հարյուր տեսակի մանր-մուշր արդ ու զարդով: Բացի կանթեղներից և պղնձի մոմկալներից, պատերի վրա քարշ արած ելին մոտ տասը մեծագիր նկարներ, վորոնց վոսկեգործ շրջանակները ավելի թանգ արժեքին, քան իրանց մեջ ամփոփածը:

Տանտիրոջ հարստության և տանտիրուհու ճաշակի մասին գաղափար տվող այս դահլիճն եր, վորի զարդը Փրանսուհի գուվերնանտի անճաշակ եր անվանել:

Նիկողայոսը հյուրերին առաջարկեց արթիկանտ: Հալաբյանը որիորդ Մարիամին լսնդրեց դաշնամուր նվագել:—Մի անտակտութուն, վոր կատաղեցրեց Սոփիոյին: Տիկինը գաղտուկ նայեց Մարիամի չե-

րիսին, և նայեց անպես, վոր որիորդը մերժեց Հալաբյանի խնդիրը: Իշխան Սահարունին, Նատալիայի թեւ առած, մոտեցրեց դաշնամուրին:

Նա հնչեցրեց ժորժ Բիզելի չերաժշտութիւնից մի կտոր, վոր այն ժամանակ խիստ տարածված եր Թիֆլիսի ընտանիքներում: Նրա խաղը գրավեց մի փոքր ժամանակ Հալաբյանի ուշադրութիւնը:

Տիկին Սոփիոն հանդարտ մոտեցավ, նստեց ամուրիի մօտ և սկըսեց շնջալ, թե վորքան Նատալիան սիրում և մուգիկը, թե ինչպես նա դուրին սովորում և ամեն մի նոր լեզանակ, թե քանի-քանի մարդիկ գովել են նրա առանձին ձիրքը: Զարմանում են, վոր նա բարեգործական նվազահանդեսներում չե մասնակցում: Հալաբյանը նույնպես գովեց, և այսպիսով անդիտակցաբար մեղմացրեց տիկնոջ ներքին ալեկոծութիւնը: Նրա հայացքը մի անգամ ևս դարձավ Մարիամի կողմը: Որիորդը մի փոքր հեռու նստած լսում եր իշխան Սահարունիի զլարճախոսութիւնը: Յերբեք նա այնքան սիրուն, այնքան գրավիչ չեր յերևացել Հալաբյանին: Ամեն ինչ նրա կերպարանքի մեջ գրավիչ եր: Յեւ հեք ամուրին ավելի ու ավելի զգում եր, թե դժբախտ կլինի չեթե չկարողանա հաղթել նրա հպարտութիւնը:

Նատալիան վերջացրեց նվագումը: Իշխան Սահարունին ծափահարեց: Հալաբյանը ընազգումով հետեց նրա որինակին:

Որը մթնեց, սպասավորը վառեց կանթեղները: Դանիէլ լուսավորվեց մի պաշտաւ, ուրախ լուսով, վորի շողքերը առանձին մի հրապուշտ սփռեցին Մարիամի վրա: Մի վալըկյան Հալաբյանը հիշեց չուր դատարկ ընակարանի կիսախաւար սենյակները որվա այդ ժամին, յերբ նա սովորաբար պառկած եր լինում անկողնում: Մի բուռն տառալութիւն զգաց նա դեպի այդ մօտ չկացաբանը, վոր չուր տաղտկալի մենութիւնն եր հիշեցնում: Նա կկամենար չերկար նստել դեմ ու դեմ այն արարածի հետ, վորի թովչութիւնը գրեթե կաշկանդել էր նրա հոգին: Այլ արդեն ուշ եր: Նա վոտքի կանգնեց:

— Ո՛ւր եք շտապում, — ասաց Նիկողայոսը, հակառակ չուր ցանկութիւն չկարողանալով հչուրի անսովոր սակավախոսութիւն պատճառն իմանալ:

— Արդեն մութն և, պատասխանեց Հալաբյանը և, դառնալով Սոփիոյին, ավելայցրեց. — ներեցեք, տիկին:

— Դուք ներեցեք, վոր չկարողացանք ձեզ զլարճացնել, — ասաց տիկինը մի առանձին լեզանակով, վոր արտահայտում եր մի տեսակ նուրբ հեգնութիւն: Յեւ, չուր մատների ծալրերը դնելով նրա ափի մեջ, ավելացրեց. — խնդրում եմ չմոռանաք մեզ...

— Տեսմը, — գռչեց տիկին Սոփիոն հուզված մտնելով ամուսնու չետեից ննջարան, — տեսմը, այդ քո լեղրոր աղջիկը ինչ է անում:

— Ի՞նչ ե անում,—հարցրեց Նիկողայոսը զարմացած:

— Կապում ու կտրում ե խեղճ Նատուխս ճանապարհը: Չե, թե-
կուղ ինձ խեղդես, չես իմ աղջկանս այս տանը պահելու չեմ: Կամ նա
կամ քո լեղրոր աղջիկը: Մեկի վրա ելի դրել հույսս, նրան ել ուզում
ե խելքեց հանի, այն ել թվ... մեր հացով ապրողը:

— Յեթե խոսքդ Հալարջանի մասին ե,—ասաց Նիկողայոսը սառ-
նորեն,—Մարոն այդ մարդուն այնքան ե հավանում, ինչքան ծիտը
կատվին:

— Հավանում ե, չի հավանում,—ասաց Սոփիոն գրգռված,— այդ
իմ գործը չե... քանի վոր նա այս տանն ե, իմ աղջկա բախտը կնպ
ե ու կապ...

— Գիտե՞ս ինչ,—ընդհատեց Նիկողայոսը, սլուրտուկը հանելով,—
չեթե ուզում ես ճշմարիտն ասեմ, քո աղջիկ մարդու տալու այդ հոգ-
սերդ ինձ մինչև այստեղ ձանձրացրել են, աչ, մինչև այստեղ.—նա
ձեռը դրեց կոկորդին:—Յես ավելի մեծ ցավ ունեմ, հասկան՞ում ես:
Գնա, ինչ ուզում ես արա, գլուխս մի ցավացնիլ:

Այս ասելով Նիկողայոսը պառկեց անկողին լուր սովորական քու-
նը վալեկելու:

Իշխան Սահարունին, փողոցում հասնելով Հալարջանին, հարցրեց.

— Այս չերեկո կլուրում կտեսնվի՞նք:

— Վոչ:

— Ինչ՞եւ:

— Վորովհետեւ ուզում եմ տանը մնալ:

— Հեր որհնած, քեզ ի՞նչ ե պատահել,—գոչեց իշխանը զարմա-
ցած:—Մի շաբաթ ե վոչ մի տեղ չես չերեում, տխուր ես, հետք խո-
սել չի լինում: Այսօր ել, կարծես, նորահարս լինելիք քրոջս տանը,
վոչ կարգին ճաշեցիր, վոչ խմեցիր, վոչ խոսեցիր... փիե... Յեկ այս
չերեկո կլուր, թե չե լուր կտարածեմ, վոր գժվել ես:

— Ինչ ուզում ես արա, միայն այս չերեկո ինձ հանդիստ թող,—
պատասխանեց Հալարջանը թույլ ձայնով,—չես մի փոքր տկար եմ...

— Տկար ես... նու այդ տկարութունը մարմնավոր չի, չես այդ
նկատում եմ...

— Յտեսութուն,—ընդհատեց Հալարջանը ե, շտապով սեղմելով
լուր ընկերով աջը, արագ քայլերով հեռացավ:

Քանի մի վայրկյան իշխանը ապշած նայեց նրա հետեից ե, գլու-
խը շարժելով, ասաց մտքում.

«Հըըմ, ուրի՞մն չես չեմ սխալվում, այդ մարդը սիրահարվել ե,

սիւմ վրա... Իհարկեւ, Մարիամի: Իհաճ, բոլորդը թափված արջ, լնով պտուղ եւ ուզում քաղել մաշված թաթերովդ: Նո՛ւ, բարեկամ, Մարիամը քո հավասարը չի... Յեթե վճռել եւ իսկապէս հիմարանալ, ահա Նատալիան, նրանից լավին արժանի չես»:

Անցնելով փողոցի մեկ մայթից մշուսի վրա, նա ավելացրեց:

«Այո, Նատալիան, լես Սոփիոյի միտքը հասկանում եմ այժմ, թե ինչու նա ինձ խնդրում ե շուտ-շուտ այդ մարդուն նրա տունը տանել: Եհ, իշխան Սահարունի, կարծեմ ազնվական արչունդ չի պղտորվիլ, չեթե քրոջդ աղջկա համար մոցիքլութիւն անես... Տրալլա, տրալլա տրալլալալա... տխմար ե նա, վոր մահմեդական չե ե ամուսնանում ե»...

Մի քանի բոպելից հետո մի սիրուն կռք իշխանին հասցրեց քաղաքի հետ ընկած փողոցներից մեկը: Կար աչտեղ մի փոքրիկ տուն, ուր մեկը անհամբեր սպասում եր նրան ե վորին իշխանը նոմ եր չե բկրորդ եր անվանում:

V

Յերեք որ շարունակ Սադափյանների տանը տիրում եր մի անյուր խռովութիւն: Տիկին Սոփիոն չեր խոսում վոչ Մարիամի ե վոչ Ռուբենի հետ, կամ խոսում եր, չերը միայն անհրաժեշտ եր, աւամա, կոշտ լեղանակով, առանց նրանց չերեսին նայելու:

Չարակամութիւնը հանդիստ չեր թողնում: Ի՞նչ, չուր սեփական տանը ամեն որ, ամեն ժամ աչքի առաջ ունենայ մի կենդանի խոչընդոտ չուր դստեր բախտին, ե կարողանմ սառնարչուն մնալ: Պետք ե դուրս վոնդել այդ աղջկան ել ու նրա չեղբորն ել: Այնպէս վոնդել, վոր նրանք իմանան, թե ինչ ասել ե առանց հարուստ աղքականների ոգնութիւն ապրելը: Այն ժամանակ Մարիամը ալլես չի հանդգնիլ չուր գլխից բարձր մարդկանց մասին չերաղել:

«Հա հա հա,—դառն ծիծաղում եր տիկինը չուրովի,—հարուստ մարդու կնիկ ե ուզում լինել: Դեռ կտրատւում ել ե... Նիկոն ել ասում ե, թե նա չի հավանում Հալարչանին... Չի հավանում, հա հա հա... սիւմ, սիւ...»:

Վերավորված եր ե՛ Նատալիան, թեւ պարզ չեր արտահայտում չուր սրտինը: Զգալուն ե դշուրադրգիւ որիորդը գեթ այնքան ինքնասեր եր, վոր աշխատում եր թագցնել չուր հոգեկան նվաստութիւնը: Բայց նախանձը կրծում եր նրա սիրտը, ե ամեն տեղամ չուր հակառակորդ համարածին հանդիպելիս, աւամա մի վորեւ նշանով կամ գեմքի շարժումով մատնում եր իրան:

Մարիամը տեսնում եր այս խուլ թշնամակա՛ն պալքաբը չուր դեմ: Յեվ համբերում եր: Վոչ մի խոսքով, Վոչ մի նշանով նա չցուց տվեց չուր սրտի դառնութիւնը: Ինչպես միշտ, նա հաբգում եր տիկնոջը գեթ արտաքուստ, ինչպես միշտ, վարվում եր նատալիալի հետ իբր կրտսեր քույր: Յեվ չեւ դգում, վոր աչսպիսով անգիտակցաբար արհամարհում և չուր հակառակորդի նախանձը, ուրեմն և ավելի զրգուում նրան, մանաթանդ ընդունելով նրան իբրև իրանից մեծ: Նա վեց տարով նատալիալից փոքր եր. մի հասարակ տարբերութիւն, վորի հետ վերջինը չեւ ուզում հաշտվել:

«Կարծես, բերանից կաթի հոտ և փշում,—ասում եր մտքում նատալիան, իրան տնչափահաս աղջիկ և ձևացնում: Հարցնող չկա վճրն և մեղանից գեմքով ավելի չերիտասարդ»:

Ասավոտ եր: Մարիամը սովորական ժամին զարթնած, շորերը հագնում եր: Յերկու որիորդների ննջարանները թեև առանձին էլին, բաց միմյանց կից: Շորերը հագնելուց հետո, Մարիամը հանկարծ անզգուշաբար կպավ չուր անկողնակալի մոտ դրած փոքրիկ և թեթև սեղանին: Սեղանը ընկավ բաց հատակի վրա և աղմուկ հանց:

— Լիզն, Գնրո, չեք թողնելու, վոր մի քիչ քնեմ,—ձայն տվեց չուր սենյակից նատալիան բարկացած:

Մարիամը մոտեցավ միջին դռներին և ժպտալով ասաց.

— Յես ելի, նատո, ներիր, Լիզան ու Գնրոն քնած են իրանց սենյակում:

Նատալիան արմունկը բարձին հենած, նայեց նրան արյունալի աչքերով: Դրավիչ եր Մարիամը այդ վայրկյանին չուր տնային թեթև հագուստով, սակավ ինչ գունատ այտերով, գեղեցիկ ուսերի վրա սփռված կակուլ ալեծուփ մազերով: Յեվ հենց այդ սիրունութիւնը ավելի զրգուեց չուր հակառակորդին:

Նատալիան գոռաց, և գոռաց այնպես, ինչպես մի բարի տիրուհի չերբեք չի գոռում չուր աղախնի վրա.

— Դուք միշտ այդպես եք, այ, ուրիշներին չեք թողնում քնելու, իսկ ինքներդ... Ախ, ատելի չեք, գեղեցիկ որիորդ, ատելի չեք...

Յեվ ատամները կրճտելով, գլուխը ավելի բարձրացրեց: Կարծես, պատրաստ եր կատաղի կատվի պես վեր ցատկել և չուր սուր ճանկերով կպչել հակառակորդի կողորդին: Մարիամի այտերը և ականջների ծալքերը շառագունեցին ներքին հուզմունքից: Նա չերեսը հետ դարձրեց արհամարհանքով:

Նույն վայրկյանին Մարիամի սենյակին կից սենյակի սյամում ջերեցեցան—նախ Դաբոյի, ապա Լիզայի զարմացած և չերկչուղած դեմքերը:

— Շուտով դուք ինձ այս սենյակից կփախցնեք,— գոչեց Նատալիան, նկատելով Մարիամի արհամարհական ժպիտը,— կփախցնեք իմ հոր անից։ Յես հանգստութիւնն չունիմ այստեղ ձեր ձեռքից, գոռոզ որիորդ...

Նրա ձայնին ներս չեկավ աղախինը, հետո Սոփիոն։ Տեսարանը այլ կերպարանք ստացավ։ Հերթը տիկնոջն էր։

— Լավ կլիներ,— դարձավ նա Մարիամին, տոանց նախապես գործի ելութիւնը տեղեկանալու,— վոր մի քիչ խոնարհ պահելիւր քեզ այս տանը։ Ի՞նչ կա ելի լուսը չբացված կռիվ ես սարքել։

Մարիամի աչքերի մեջ փայլեց արտասուքը։ Նա դողդոջուն ձայնով արտասանեց.

— Կռիվ սարքողը ձեր աղջիկն է։

Նատալիան վերմակը մի կողմ շարտեց և հերարձակ գլխով, կիսամերկ կրծքով նստեց անկողնի մեջ։

— Այդ թո՛ւն ասել ե, — գոռաց նա խեղդուկ ձայնով, — դու համարձակվում ես ինձ մեղադրել...

Յեւ աչնպիսի մի ճիշ արձակեց կրծքից, վոր, կարծես, մեկը հանկարծակի նրան հնոցի մեջ ձգեց։ Հետո նա չերեսը դրեց բարձին, սկսեց հեկեկալ, չուր սուր ատամներով կրծելով բարձի կտալը։

Տիկին Սոփիոն վազեց դուրս և քանի մի վայրկյան անցած, չուր ամուսնու թեից բռնած, քաշեց, ներս բերեց։

— Տես, վողորմած մարդ, բարեգործ մարդ, մեր հացը ուրիշներին տվող մարդ, — գոռում էր նա, չուր փոքրիկ աչքերի սուր բիրերից կայծեր թափելով, — տես լավութիւնդ տեղ թո՛ւն են անում։

Նիկողայոսը չգիտեր ամաչեր, վոր այդպես անժամանակ տեսնում էր իրան որիորդների կացարանում, թե զարմանար։ Նա հայեց բարձրաձայն հեկեկող Նատալիային և հարցրեց.

Ի՞նչ ե պատահել։

Մարիամը ամոթից չերեսը ծածկեց չերկու ձեռներով։

— Այն ե պատահել, — պատասխանեց Սոփիոն, — վոր աղջկաս որք սեւացնում ե քո չեղորոք եդ եդ, եդ... մեղա քեզ, տեր աստված...

Յեւ դեպի Մարիամի կողմ մի վիրավորական խոսք շարտելով, նա մոտեցավ Նատալիային, գրկեց, համբուրեց և սկսեց մխիթարել։

— Յես վոչինչ չեմ հասկանում, վոչինչ չեմ հասկանում, — գոչեց Նիկողայոսը, գլուխը չերերելով, և ականջները փակած դուրս գնաց։

Նույն ուր Մարիամը, հակառակ չուր ցանկութիւնը, չկարողանալով հաղթել չուր սրտի դառնութիւնը և միևնույն սեղանի մոտ ճաշի նստել տիկին Սոփիոյի և Նատալիայի հետ։

Անախորժ անցքը անհայտ մնաց Ռուբենին: Նրա սենյակը դռնը-
վում էր Սառափյանների ընդարձակ ընակարանի ծալքում: Դահլիճը,
սեղանատունը, նիկողայոսի առանձնարանը և նախագավթի պես մի
լայն միջանցք այդ սենյակը անջատում էին որիորդների ննջարան-
ներից:

— Վերտեղ և Մարոն,—հարցրոյց Ռուբենը Լիզալից, չերբ տեսավ,
վոր քույրը ճաշին չներկայացավ:

— Յուր սենյակումն ե, — պատասխանեց Դարոն, — կանչեցի, չեկավ:
Ռուբենը, ճաշը կիսատ թողնց, շտապեց չուր քրոջ մոտ: Պատու-
հանի առաջ կանգնած, որիորդը մտահուլզ դեմքով նայում էր ղեպի
զավթի:

— Մարոն,—գոչեց չեղբայրը և բռնեց նրա ձեռք:

Մարիամը մտքերից սթափվեց և չետ նայեց, ձեռով շփելով աչ-
քերը: Ռուբենը նրա կարմրած աչքերի մեջ նշմարեց արտասուքի թարմ
հետքը:

— Դու լաց ես չեղել,—հարցրեց չեղբայրը, ուղիղ նայելով նրա
չերեսին:

— Վոչ:

— Ինչո՞ւ չես ճաշում:

— Ախորժակ չունեմ:

— Մարոն,—գոչեց Ռուբենը, բաց թողնելով քրոջ ձեռը և մի
քալ հեռ դնելով,—զարձյալ ինձ խարճում էս:

Մարիամը խոր հոգոց հանեց կրճքից և ապա բռնելով չեղբոր
ձեռը, թախանձանքով ասաց.

— Յեթե ինձ սիրում ես, ալժմ վոչինչ մի հարցնիլ, վոչինչ: Գնա
ճաշդ վերջացրու և իրիկնադեմին սպասիր ինձ սենյակումդ: Անտեղ
կխոսենք:

Ռուբենը վոչինչ չասաց, և ասելու բան չունեի: Նա գուշակեց,
վոր զարձյալ վիրավորել են չուր քրոջ սիրտը: Բայց նա արդեն չուր
անելիքը վճռել էր — պետք էր անշուշտ և անհապաղ դուրս գալ այդ
տնից:

Արդեն հինգ որ էր, վոր նա արտակարգ հոգածության մեջ էր:
Արտասահման դնալու գաղափարը հետ մղեց չուր գլխում «առ ժամա-
նակ»: Տիկին Սոփիոյի պարզ արհամարհանքը, հորեղբոր անտարբեր
վարմունքը, Մարիամի որեց որ աճող թախիծը, ալս բոլորը դրդում
էին նրան՝ սեփական աշխատանքով ապրելու միջոցների մասին
մտածել:

Միևնուզն ժամանակ նա վճռեց չուր հոր թողած ժառանգության

մասին վերջնապես բացատրութիւն խնդրել հորեղբորից: Արդոք կամ մի բան, թե՛ ցնորք և այդ ժառանգութիւնը: Մի գուցե արդարեւ քուրը և ինքը ութ տարի շարունակ մի ավելորդ բռն են լնդել իրանց հորեղբոր ընտանիքի համար, նվաստ ձրիակերներ: Զրիակեր... միայն հենց այդ բառը սարսափեցնում էր նրան և ձգում անհուն մոտտանջության մեջ:

Սպասելով հարմար առթի հորեղբոր հետ խոսելու, նա վորոնում էր չուր համար մի պաշտոն: Չորս որ շարունակ նա սրան ու նրան դիմեց, վոչ մի տեղ չգտավ մի հարմար պաշտոն: Այն ժամանակ նա վհոեց նուշնիսկ մի ամենահասարակ գործ հանձն առնել: Վերջապես, մի դպրոցում նրան առաջարկեցին առժամանակ մի քանի դասեր, և նա ընդունեց: Հենց միևնույն որը քաղաքի աղքատիկ փողոցներից մեկում գտավ մի փոքրիկ բնակարան, լնրկու սենյակից բաղկացած: Բայց պետք էր նախապես այս բոլորի մասին խոսել Մարիամի հետ, և նա մտադիր էր նուշն որը խոսել:

Ռուբենի դուրս գնալուց հետո, Մարիամի մոտ լեկան Գարոն և Լիզան ձեռներում մի-մի աման կերակուր:

— Ինչ՞է ցես լալիս, Մարո,—ասաց Լիզան,—նառն քեզ հետ կուկեց նրամ համար... Տեսա, տեսա, դու մեղավոր չես, Մարո, ցես հայրիկին ել ասացի, վոր դու մեղավոր չես:

Յեվ փոքրիկ աղջիկը, ամանը դրեց սեղանի վրա, չուր փափուկ բազուկները փաթաթեց Մարիամի պարանոցին, ալտերը մոտեցրեց նրա շրթունքներին:

— Կեր, Մարո, քաղցած մի մնալ,—ասաց Գարոն,—մաման լակելին հրամայեց, վոր քեզ համար ջոկ սեղան բաց անի, մենք չթողեցինք: Այ, ինչ-վոր ուզում ես, ասա բերենք...

Մասաղ սրտերի անկեղծ սերը մխիթարեց Մարիամին, մեղմացրեց անախորժ զեպքի ծանր տալավորութիւնը, ջնջեց այն թեթեւ վոխը, վոր վայրկենաբար զարթնել էր նրա սրտում չուր վոսոխների դմ:

Իրիկնադեմին նա գնաց լնդրոր սենյակը: Դռներին չհասած, նա լսեց մի խոսակցութիւն ձայն: Ռուբենը միայնակ չէր: Որիորդը մի քանի վայրկյան կանգ առավ, ականջ դրեց: Սոսում էր Ռուբենը: հանկարծ նա լսեց մի ծանոթ ծիծաղ, և սիրտը սկսեց բարախել: Նա մոռացավ չուր մոքերը, արջան մի ուժգին հոսանք լաղաց նրա լնրակների մեջ: Դռների վրա նա ղգաց մի ալրող տաքութիւն: Զգաց նուշնպես, վոր ալտերը կարմրեցին:

Նա անգիտակցաբար մի քանի քալ հետ դրեց: Քանի մի վայրկյան տատանվեց—ներս մտնել, թե՛ վերադառնալ: Ծանոթ ձայնը կրկին

հնչեց նրա ականջին: Նա ուղղեց չուր հագուստը, կարգի բերեց գլխի ժադերը, ձեռը սեղմեց ձախ կրծքին: Այնտեղ, վորսված ճնճողուկի պես, թրթռում էր նրա սիրտը:

Նա դռները բաց արավ և ներս մտավ:

Ռուբենը նստած էր բաղկաթուռի վրա, արմունկը հենած գրասեղանին: Նրա առաջ անցուղարձ էր անում նա, վորի ձայնը ասնջան հուզմունք պատճառեց Մարիամին: Սեղանի վրա վառվող կանթեղը լուսավորում էր քսան ու չոթ, քսանութ տարեկան մի պնդակազմ միջահասակ չերիտասարդի լայն ճակատը, թուխ չերեսի բավական խոշոր գծերը, կարճ և ցանցառ միջուկը: Վոսկե շրջանակով պեղծունե թուլլ չեր ապլիս վորոշելու նրա աչքերի գույնը: Նա հագած էր ժամանակակից ձևի կարճ, սև սյուրտուկ, մուգ մոխրագույն վարտիկ և սրածալր կոշիկներ:

Տեսնելով Մարիամին, չերիտասարդը արագորեն ձեռները դուրս բերեց գրպանից: Ուրախության ժախտը չերևան հանեց նրա խոշոր, ապիտակ ատամների շարքերը:

— Հուսով եմ ներողամիտ կլինեք, վոր այսպես անժամանակ եք տեսնում ինձ այստեղ, — ասաց չերիտասարդը, մեջքից խոնարհ թեքվելով, և, բռնելով որիորդի աջը, ավելացրեց. — առհղջ եք.

— Շնորհակալ եմ, չէրը եք չեկել, հարցրեց Մարիամը, դարձյալ կարմրելով:

— Այսոր առավոտյան և շատ բարեններ եմ բերիլ ձեր մորաքրոջ կողմից, որիորդ Մարգարտից, Արշակից և ամբողջ ընտանիքից:

— Նրանք դեռ Դիլիջանումն են:

— Վոչ, Ֆերեկ միասին ուղևորվեցինք — նրանք Ֆերևան, չես — թիֆլիս:

— Ուրեմն...

— Այո, — ընդհատեց չերիտասարդը, գուշակելով որիորդի հարցը. — վճռեցի տեղափոխվել այստեղ և մշտական մնալ:

Մարիամը հաղիվ կարողացավ դսպել չուր ուրախությունը, լսելով չերիտասարդի վերջին խոսքերը:

— Այս բոպելին, — շարունակեց չերիտասարդը, — Ռուբենի հետ հենց այդ մասին ելինք վիճում, չերը դուք ներս մտաք: Ֆերևակայեցեք, որիորդ, ձեր չեղբոր կարծիքով, չես չափազանց սխալվում եմ, թիֆլիսը գավառից գերադասելով: Նա ասում է, թե չես պիտի մնալի Ֆերևանում...

Վերջին դարձվածը արտասանելիս չերիտասարդը ակնոցի բացած խազույն ապակիների միջով աչքերը սևեռեց Մարիամի չերեսին: Ֆեյ,

կարծես, այդ սուր հայացքից խուսափելով, որիորդը անցավ սենյակի կիսալուսավոր մի անկյունը, նստեց պատի տակ: Այստեղ նրա այլալվիլը մասամբ աննկատելի կարող եր մնալ Ռուբենից:

— Յերեք չես չեմ ափսոսել իմ կատարած գործերի մասին, — դարձավ չերիտասարդը Ռուբենին, — հուշս ունիմ, վոր այս անգամ եր չեմ ափսոսել: Ինքդ դատիր, Պետերբուրգից հետո գնալ և մի գլուղաքաղաքում ապրել — շատ և շատ անտանելի չե: Յես այդ զգացի ութ ամիս Յերևանում մնալով: Անհնարին ե անտեղ ապրելը, կրթված մարդը կարող և բոլորովին խեղդվել լուսավոր ողի պակասութունից:

— Իսկ այստեղ դու կխեղդվես այդ ողի շատութունից, — շեշտեց Ռուբենը հեգնաբար, — նեխված, ապականված ողի...

— Յես չեմ հասկանում քո ասածը, — արտասանեց չերիտասարդը և նույն վայրկյանին պինսնեն վերցնելով, չերևան հանեց հաստուկի կամարների տակ տեղավորված բաց-մեխակազուն, փոքրիկ, սակավ ինչ ցավադար, բայց սուր և խելացի աչքերը:

— Շատ պարզ ե Դու իբրև բժիշկ, ստիպված կլինես մրցել անթիվ արհեստակիցներիդ հետ:

Մեկիք-Բարսեղյանը — այսպես եր չերիտասարդի ազգանունը — կես ներողամտաբար և կես հեգնաբար ծիծաղեց, հանդարտ ուղղելով լուր նոր շապկի փայլուն ոճիքը:

— Տեսնում եք, որիորդ, — ասաց նա Մարիամին, վոր լուռ և հետաքրքրված լսում եր չերկու չերիտասարդների վիճարանութունը, — ձեր չեղբայրը ինձ ուղում ե հուսահատեցնել. — Գիտես ի՞նչ, — դարձավ նա Ռուբենին, — մրցումից վախեցողը չպիտի համարձակվի կյանքի ասպարեզ մտնել: Յես... չերեք այդ չերկուղը չեմ ունեցել: Ի՞նչ մըրցումի կարող և լինել իմ և իմ արհեստակիցներիս մեջ: Գիտության, թե՞ արհեստի Յեթի գիտության, այդ շատ ցանկալի չե և ոգտավետ ինձ համար: Յեթի արհեստի, այն ժամանակ չես միայն մի զենք կունենամ — բարեխղճութուն:

Մեկիք-Բարսեղյանը դարձյալ նայեց Մարիամին, և նրա սուր աչքերը վերջինի դեմքի վրա կարդացին խորին հետաքրքրութուն: Խրախուսվելով որիորդի լուռ հավանութունից, նա շարունակեց.

— Գուցե դու, իբրև ընկեր, վախենում ես, վոր չես այստեղ չեմ կարող մի կտոր հաց վաստակել: Բայց դու ինձ ճանաչում ես: Մի մարդ, վոր տասներկու տարի ապրել ե ցուրտ և խոնավ սենյակներում, կես կուշտ, կես քաղցած ստամոքսով, մի մարդ, վոր դառն հանգամանքների մեջ սեփական ուժերով ճանապարհ ե բաց արիլ լուր համար, այն մարդը կարող ե դիմանալ կյանքի հարվածներին: Չքա-

վորութիւնը, սիրելի Ռուբեն, — շարունակեց նա չեռանդով, — խնդրեմ վարպետ ե, նրա շնորհիվ լես շատ վաղ եմ կարգացել կլանքի խրատական եջերը: Այժմ, չերբ լես ուղիղ և պարզ ճանապարհի վրա չեմ, միթե ամոթ չի լինիլ, վոր փախչեմ մանր-մուննր խոշնդդտներից:

Մի անպիսի հաստատ ձայնով և վորոշ չեղանակով արտասանեց նա այս խոսքերը, վոր զժվար եր կարծել, թե այդ լոկ մի պարծենկոտութիւն ե: Հետոնա նստեց սեղանի մոտ և, թուլլովութիւն խնդրելով Մարիամից, մի ծխախոտ վառեց:

— Քո բարոյական ուժը ինձ վաղուց ե հայտնի, — խոսեց Ռուբենը ընկերական հարգանքով, — միշտ դու իմ աչքումս մշուս ընկերներիցս բարձր ես չեղել քո տոկունութեան և համբերութեան շնորհիվ: Են, ինչեկեց, դու քու գործը ավելի լավ գիտես, շնորհավորում եմ տեղափոխվելդ և ցանկանում եմ հաջողութիւն: Յերանի թե հանգամանքները մեզ չչեղեն կլանքի ուղիղ ճանապարհից:

— Համոզված չեղիր, վոր չեն շեղիլ, — գոչեց քփշկ Մելիք-Բարսեղյանը խորխտաբար: — Բայց այս խոսակցութիւնը միայն ինձ ե վերաբերում, — ավելացրեց նա, — չալիտի լեսական լինել: Ասա տեսնեմ, դժ ինչպես ես կարգադրել ապագադ: Գնձեմ ես արտասահման:

Այս հարցը սթափեցրեց Ռուբենին, ծանր մտքերը կրկին զարթնելով, վայրկենաբար մթազնեցին նրա ճակատը մի մոռլլ ստվերով: Նա նայեց Մարիամին, վոր միեւնույն տեղում լուռ նստած լուծ եր նրանց խոսակցութիւնը, և թախծալի ձայնով պատասխանեց ընկերոջ հարցին.

— Վհչ:

— Վհչ, — կրկնեց Մելիք-Բարսեղյանը, — ուրեմն, վերջապես, համոզվեցիր, վոր ավելորդ եր մտադրութիւնդ:

— Առ այժմ ստիպված եմ համոզվել: Հանգամանքները այդպես են պահանջում: Վճռեցի մնալ Թիֆլիսում, միայն վոչ այս տանը: Վաղ վանից լես բախտ պիտի ունենամ Մարիամի հետ ապրել առանձին րնա-կարանում: Հրավիրում եմ քեզ շնորհ բերել ամեն որ, չեթե ժամանակդ կների:

— Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը, — դարձավ Մելիք-Բարսեղյանը Մարիամին, ավելի ու ավելի հետաքրքրվելով:

— Յես վոչինչ չեմ հասկանում, հարցրեք իրանից:

— Այն ե նշանակում, — ասաց Ռուբենը, ըռնի ժպտալով, — վոր Մարիամը և լես արդեն չափահաս լինելով, ազատվում ենք մեր բարեսիրտ հորեղբոր խնամակալութիւնից:

Մի քանի վայրկյան տիրեց անհարմար լուութիւն:

— Եև, անշուշտ մի բան պատահել է,— արտասանեց Մելիք-Բարսեղյանը, դառնալով նախ Մարիամին, ապա Ռուբենին, — ինձ թվում է, վոր քո և հորեղբորդ մեջ...

— Վոչինչ չի անցել։ Յես ցանկանում եմ մի փոքր ծանոթանալ չքավորութուն ասած բանի հետ, ինչպես դու արդեն ուսումնասիրել ես նրան։ Վերջապես, լես ուզում եմ ազատ քաղաքացի լինել, քեզ պես, ուրիշների պես։ Ամոթ չե՞ աս հասակում հարուստ ազգականների խնամակալության տակ ապրել։

— Այդ խոսքերդ դարձյալ չեն պարզում այն, ինչ վոր կուզեցի իմանալ։ Միթե դու աղքատ ես։

— Ռուբեն, — ընդմիջեց Մարիամը հանդիմանական լեզանակով, — ինչ հարկավոր է այդ մասին խոսել, դու ձանձրացնում ես բժշկին։

— Ընդհակառակը, Ռուբենի վիճակը վորքան ձեռք, դուցես ավելի հետաքրքրում է և և՛ ինձ։ Ծշմարիտն ասած, դարձավ բժիշկը համառությամբ չուր բնկերովը, կատակ էս անում, թե՛ իրավ վճռել էս առանձին ապրել։

— Առաջմ ասածովս բավականացիր, — պատասխանեց Ռուբենը Մարիամի հանդիմանական հայացքից ստիպված, հարկավոր համարելով զսպել չուր լեզուն, — մանրամասնութունները հետո։ Վաղը չես կհայտնեմ քեզ մեր նոր բնակարանի տեղը։

Բժիշկը այլևս անքաղաքավարութուն համարեց չուր հարցուփորձը շարունակել։ Նա վճռեց փոխել խոսակցութունը։

— Յերեակայեցեք իմ դրությունը, — ասաց նա Մարիամին, կարծես, հանկարծ մի բան մտաբերելով, — փողոցում պատահեցինք, Ռուբենը ուժով ինձ բերեց չուր մոտ, լես կամենում ելի վաղը դալ և ձեր հորեղբոր ընտանիքն էլ տեսնել։ Այժմ, չեթե տիկին Սոփիոն իմանա, վոր լես չեկել եմ այստեղ գողնովի և առանց իրան տեսնելու դուրս չեկել, չե՞ նեղանալ ինձանից։

— Տիկին Սոփիոն տանը չե։

— Իսկ որիորդ նառալի՞ման։

— Վոչ վորք չկա տանը։

— Նու, այդ լավ է։ Խնդրեմ չհայտնեք նրանց, վոր լես այստեղ ելի։ Բայց ինչ եմ հոգս անում, չերևի, նրանք ինձ մոռացել են, տեսնեն, չեն ել ճանաչիլ, — այնպեցեց Մելիք-Բարսեղյանը այն ձևով, վոր չերևում էր, թե Սադոպիանների ծանոթութունը մի առանձին նշանակութուն ունի նրա համար։

Քառորդ ժամ անցած նա դուրս չեկավ սաստիկ մտառանջության մեջ։ Ռուբենի խոսքերը չուր դրության փոփոխման մասին ազդել ելին չերիտասարդ բժշկի վրա ավելի, քան կարող էր չերեակայել առաջինը։

— Ահա բախտավոր մարդ,— դարձավ Ռուբենը քրոջը, բժիշկը դուրս գալուց հետո,— մանկական և պատանեկան հակասում արդեն անցել և կյանքի այն դպրոցը, ուր դու և չես դեռ նոր պիտի մտնենք...

Մարիամը կանգնած էր պատի տակ և դեռ նայում էր դռներին, վորտեղից դուրս գնաց Մելիք-Բարսեղյանը։ Թվում էր, վոր նրան դարմացրեց չերիտասարդի ալդպես շուտ հրաժեշտ տալը և առհասարակ վարմունքը։

— Նստի՛ր,— շարունակեց Ռուբենը,— նստի՛ր, Մարիամ, և սառնասիրտ լսի՛ր։ Այսոր ճաշից հետո չես առաջին և վերջին անգամ վճռապես խոսեցի մեր հորեղբոր հետ։

— Խոսեցի՛ր,— կրկնեց Մարիամը մեքենաբար և նստեց սեղանի մոտ,— ի՞նչ իմացար։

— Իմացա, վոր դու զրկված ես քո ոժիտից, վոր մենք չքավոր ենք... Լսում ես, մենք չքավոր ենք...

— Յես այդ վաղուց գիտեի,— պատասխանեց որիորդը մի այնպիսի սառնությամբ, վոր միանգամայն դարմացրեց Ռուբենին։

— Ի՞նչ, դու գիտեի՛ր և ինձանից թագնում ելիր։

— Յես չեի կամենում քեզ հայտնել, դու տաք ընավորության տեր ես, գիտեի, վոր այդ լուրը քեզ վրա շատ վատ տպավորություն պիտի անի։ Այժմ, մենք աղքատ ենք և վաղուց։

— Ուրեմն դու գիտե՞ս, վոր մեր հորեղբոր գործերը ձախ են գնում, վոր նա պարտքերի տակ և ընկել, վոր նա զոհել է յուր խոշոր ձեռնարկություններին մեր հայրական ժառանգությունը։

— Նրա գործերի ձախորդության մասին չես վոչինչ չեմ լսել։ Բայց թե մեր հայրական ժառանգությունը ցորժ է, այդ ինձ վաղուց և հասկացրել տիկին Սոփիոն։ Ահա, Ռուբեն, ինչու համար ելի քեզ ասում այն որը, վոր դու նախ քան արտասահման գնալը, խոսես այս մասին մեր հորեղբոր հետ։ Ուրեմն նա սլարդ հայտնեց քեզ ամեն ինչ...

— Համարյա թե — նա ինձ վոչինչ չասաց, ասաց միայն, թե փողի սաստիկ կարոտություն ունե, թե ստիպված է ծախսերը պակասացնել։ Մնացյալը ինձ պատմեց այսոր իրիկնադեմին նրա գլխավոր գործակա-տարը։ Մի տարի չե, վոր սկսել է պարտքեր վերցնել։ Յերեք ամիս սրանից առաջ, կնոջից գաղտնի, գրավ է դրել այս տունը։ Հալաբյա-նից մի գումար է վերցրել, այժմ աշխատում է մի խոշոր գումար ել պոկել, ահա ինչու վերջին ժամանակ նրա հետ խիստ բարեկամացել և։ Մինչև անգամ Նատալիայի ոժիտի անունը կա, ինքը չկա։ Իսկ Նատալիան, իսկ նրա մայրը շարունակում են իրենց շռայլությունը։

Մի ինչ վոր կոմսուհու ծանոթության արժանանալու համար հար-
ջուրներ են վճարում։ չերեք որ և անհամբեր սպասում են նրա ալցե-
լությանը, դեռ չեն արժանացել։ Այսոր ճաշին մայրը կապվ խեղճ
մարդուն, թե հարկավոր և նատալիայի համար չերկու ձեռք նոր հա-
զուստ պատրաստել։—Մեկը պիտի հագնի մի մեծ պարահանդեսին, վոր
չեկող ամսի վերջին պիտի լինի, մյուսը մի հաշկական չերեկուլթի հա-
մար, վորի կարգադրին և լինելու ինքը նատալիան։ Մայր և աղջիկ
վճռել են պակասը լրացնել, մեր հորեղբոր տունը հիմնահատակ ա-
նել։ Մյուս կողմից քանդել են գործակատարները։ Այն շողոքորթ,
հյու Գասպարը, վոր տասը տարի ծառայել և, այժմ գրպանը լցրած
թողել և ու փախել։ Նույնպես քիչ թե շատ կողոպտել են և նրա ըն-
կերները։ Այս բոլորից հետո մեզ համար վոչինչ չի մնում, և մենք
չպիտի սպասենք մի բանի։ Լսիր, սիրելի Մարիամ, լես արդեն վճռել
եմ իմ անելիքը։ Վաղվանից լես դասեր եմ տալիս գայրոցում, ամ-
սական չերեսունուհինգ ուերով։

Վերջին խոսքերը մի վայրկյան կոտրեցին Մարիամի սառնասը-
րությունը։ Նա ապշած և գունատված նայեց լեղբոր չերեսին։ Զբա-
վորությունը անոելի կերպարանքով ներկայացավ նրան։ Խոնչ, նրա
չեղբայրն այնքան տարի աշխատելուց հետո, պիտի գնա և մի ամե-
նահետին գործակատարի, մի սպասավորի ոռճիկով ծառայի...

— Այդ... վոչ... անկարելի չե... այդ չափազանցութուն և, —
գոչեց նա, հուզված վոտքի կանգնելով։— Դեռ մի քանի ամիս սրանից
առաջ մեր հորեղբայրը քեզ հրավիրում եր չուր գործերը կատարել։
Նա տասն անգամ ավելի չեր խոստանում տալ։

— Այդ առաջարկությունը մի ծիծաղ եր իմ ուսման վրա։ Մեր
հորեղբայրը գիտությանը նայում և չուր տեսակետից։ Նա ծաղրում
եր, վոր ավելի ոգտավետը թողած, լես ընտրել եմ մի մասնագիտու-
թյուն, վոր չերեք չի կարող ինձ հարստացնել։ Նա չի կարողանում
հաշտվել այն մտքի հետ, թե մի ժամանակակից չերիտասարդ նյութա-
կանը կարող և դոնել դադափարականին։ Բայց բավական և քեզ այժմ
հետևի չե մեր իսկական դրությունը, Մարո։ Գնա, ուրեմն, պատրաստ-
վիր այս փարթամ տնից վաղը տեղափոխվելու մի անշուք բնակարան,
վորտեղ չգիտեմ, կկարողանամ մի ծառա պահել, թե չե...

Այս ասելով, նա անմիջապես բաց արավ պատի տակ դրած ըն-
կուղի պահարանը և սկսեց դուրս հանել չուր գրքերը։ Մարիամը նստեց
սեղանի մոտ, գլուխը ձեռների վրա դրեց և սկսեց հանդարտ լաց լինել։

— Սիրելի, թանգագին քույր,—գոչեց չեղբայրը, այլևս չկարողա-
նալով զսպել իրան,—մի լաց լինիլ, հավատացիր, վոր մենք այսուհետև

ալելի բախտավոր կլինենք... Հոգեկան խաղաղությունը բարձր համարիր այս տան շքեղությունից: Սիրտ առ, Մարո, լերեխա չես, քանի լեղրալիզ հետդ ե, դու լերեք անբախտ չես լինիլ...

Յեկ նա ներքին ալեկոծությունից դողդողացող ձեռներով քրոջ թանձրահեր գլուխը ջերմ սեղմեց լուր կրճքին: Մարիամը լսեց նրա սիրող սրտի ուժգին բարախումը, նախեց նրա գունատ լերեսին, և մի տարորինակ ցնցումն զգաց:

Հանկարծ նա զսպեց արցունքը, գլխով մի վճռական շարժումն արած, վռտքի կանգնեց և բռնեց լեղրոր բազուկը:

— Արա, ինչ ուզում ես, — խոսեց նա անհողդողդ ձայնով, — չես պատրաստ եմ հետևել քեզ: Այստեղ խաչտառակությունից հետո, չես այս տանը մնալ չեմ կարող: Ինձ նախատեսցին, ինձ հայհուցին, ինչպես մի ստոր աղախնի: Այդ դուռը տիկնոջ կծու խոսքերի մեջ չես լսեցի մեր անգին ծնողների անունը: Գնանք, հեռանանք այս շքեղ դժոխքից: Ութ տարի շարունակ չես ալստեղ իմ սրտի դառնությունները ծածկել եմ կեղծ և ուրախ ժպիտներով: Յես ծիծաղել եմ, լերբ պետք ե լաց լինելի, ուրախացել եմ, լերբ պետք ե տխրելի: Այժմ իմ արտասուքս ուրախության արտասուք համարիր: Այն, չես ուրախ եմ... Յես արդեն հափշտակվում եմ մեր նոր կյանքով, — շարունակեց նա ալելի լեռանգադին, — չես կապրեմ աղքատ, ինչպես հազարավոր ինձանից լավ որիորդներ ապրում են: Թող փորձեմ ուժերս: Անգործ, աննպատակ կյանքը ինձ համար վաղուց ե անտանելի դարձել, լսում ես, վաղուց: Յես ուզում եմ աշխատել, չես կարոտում եմ աշխատանքի: Թույլ տուր ինձ քո ընկերը, քո ոգնականը լինել... դու աշխատիր դրսում, չես կաշխատեմ տանը... և դրսում, չեթե կարող եմ: Ինչ վոր գիտեմ, կանեմ, չիմացածս կսովորեմ: Տնոր ինձ, Ռուբեն, տար, ուր ուզում ես, միայն թե ազատիր ինձ այս կանանցից, վոր գիշեր ու ցերեկ հալածել են ինձ՝ ամեղ քրոջդ...

Արտասանելով այս խոսքերը, նա թաշկինակով սրբեց լուր ալտերի վրա չորացած արտասուքի կաթիլները և ժպտաց լեղրոր լերեսին:

— Մարիամ, — գռչեց Ռուբենը, հափշտակված նրա հաստատակամությամբ, — դու ինձ ուրախացնում ես: Գիտեցի, վոր դու վեհանձն ես, գիտելի, վոր քո բարոյական ուժը մեծ ե: Շնորհակալ եմ, հաղար անգամ շնորհակալ եմ, դու ինձ մի նոր լեռանդովիր այդ խոսքերովդ:

— Մի բան միայն դժվար ե ինձ համար, — ասաց Մարիամը մեղամադձիկ ձայնով, — Գաբրիել և Լիզայից բաժանվելը: Ախ, վորքան սիրում եմ նրանց... Անմեղ լերեխաներ, լերեք չես ձեզ չեմ մոռանալ, և հուշս ունիմ, վոր դուք ես չեք մոռանալ ինձ:

Այդ լերեկո մինչև կես գիշեր Մարիամը զբաղված եր լուր շորերը կապկպելով:

Մելիք-Բարսեղյանի խոսքերը սնոտի պարծենկոտութունն չեկին։ Արդարեւ նա շատ վաղ եր կարդացել «կյանքի խրատական եջևերը», ինչպես ինքն ասաց։

Նա չքավոր ծնողների վորդի չեր. ուսանող ժամանակ հորից ստանում եր մի աննշան թոշակ, այնքան աննշան, վոր ավելի լավ ապրել չեր կարող, քան ինչպես ինքը համառոտ պատկերացրեց Մարիամի և Ռուբենի առաջ։

Բայց նրա համբերող, տոկուն և աշխատասեր բնավորութունը հաղթեց նյութական սուղ հանգամանքներին։ Նա փայլուն կերպով ավարտեց ուսման ընթացքը, բժշկության դիպլոմը գրպանում վերագարձավ հայրենիք Ռուբենից մի տարի առաջ։

Թիֆլիս հասնելով, նա փոխեց չուր տարազը, դեն ձգեց տասը տեղից կարկատած, ոձիքը կեղտոտ սլուրոտուկը, մի հարուստ ընկերից ձեռագարտ վերցրեց և հագավ նորաձև հագուստ։ Նա մի քանի անգամ այցելեց թատրոն, լերեկույթներ, պարահանդեսներ։ Մի չերեկո նա մի նվագահանդիսում տեսավ Մարիամին, վորի հետ դեռ դիմնադիստ ժամանակ ծանոթ եր Ռուբենի միջոցով։ Նա մոտեցավ, վերանորոգեց նախկին ծանոթութունը։

Վորքան փոխվել եր հինգ տարվա ընթացքում Մարիամը։ Նիհար, մեջքից քիչ կորացած, թխադեմ պատանուհին այժմ դարձել եր Թիֆլիսի կանանց դասակարգի գեղեցիկ զարդերից միինը։ Քանի վասիլը դիմնադիստ եր, մի տեսակ վեհերութուն եր տիրում նրան Մարիամին տեսնելիս։ Պատճառը վոչ այնքան որիորդի անձնավորութունն եր, վորքան այն պայմանները, վորոնց մեջ ապրում եր Մարիամը չուր հորեղբոր տանը։ Սաղափյանների հայտնի անունը, շքեղ ապրուստը ճնշում եկին չքավոր լերիտասարդին, և նա հարստութունից վախենում եր, վորպես մի անսովոր լերագից։ Ահա ինչու չերկու տարուց ավելի Ռուբենին այցելելով, նա չհամարձակվեց, բացի վերջինի սենյակից, մի ուրիշ անկուռն ճանաչել այդ տան մեջ և, բացի Մարիամից, մի ուրիշի հետ ծանոթանալ այդ ընտանիքում։

Այլ եր այժմ, չերբ նա ուսումն ավարտած բժիշկ եր։ Յերբեք նա Մարիամի մեջ այն զգացումը չեր զարթեցրել, չերբ առաջին անգամ որիորդը տեսավ նրան Ռուսաստանից գալուց հետո։ Այլևս դա այն տատամսոտ, վեհերոտ և ամեն մի խոսք ասելիս, կարծես, նույն իսկ Ռուբենի սենյակի կտհարասից ամաչող պատանին չեր։ Նրա առաջ կանգնած եր մի հասուն տղամարդ, դեմքը հանդարտ, անվրդով, հա-

լացքը համարձակ, լալն բացված ձակատով, ուր հնգամյա համառ պարագմունքները դրոշմել էլին մի վորոշ հետք:

Մարիամը շփոթվեց հենց միայն այդ կերպարանքը տեսնելով: Իսկ խոսվածքը, խրոխտ ձայնը, աչքերի սուր ու թափանցող նշույլը, վոր փայլում էր ակնոցի ապակիների միջով, այս բոլորը ազդու էլին այն որիորդի համար, վոր ճանաչում էր նախկին Մելիք-Բարսեղյանին: Վասիլը մի ամսաչափ մնաց Թիֆլիսում: Հաճախ նա հանդիպում էր Մարիամին, և հանդիպում էր միմիայն հասարակական տեղերում, վորովհետև որիորդը, հակառակ չուր ցանկության, մի անգամ էլ չհրավիրեց նրան Սաղաթյանների տուն, ուր ինքն իրան ևս հյուր էր համարում:

Ձմեռվա կիսին Մելիք-Բարսեղյանը զնաց չուր ծննդավայրը և դարնանը մի քանի որով դարձյալ Թիֆլիս լեկավ: Այդ ժամանակ Ռուբենն արդեն վերադարձել էր Ռուսաստանից: Բժիշկը խնդրեց նրան ծանոթացնել Սաղաթյանների ընտանիքի հետ. ծանոթացավ և սկսեց համարձակ ալցիել այդ տունը, վորի շքեղութունից առաջ վախենում էր: Մայիսի վերջին Ռուբենը և Մարիամը իրանց մորաքրոջից հրավեր ստացան ամառը միասին անցկացնել Դիլիջանում: Մելիք-Բարսեղյանը, վոր բժշկութուն էր անում Յերևանում, ամառվա կիսին մի որ հանկարծ չերեցավ հիշյալ ամառանոցում, վոր և շատ ուրախացրեց թե Մարիամին և թե Ռուբենին:

Այդտեղ որիորդը ավելի ազատ էր: Նա հեռու չէր Սաղաթյանների հսկող աչքերից, նա կարող էր չուր չեղորոք ընկերոջ հետ ստեղծ-ստեղծ տեսնվել: Յեվ ամեն որ չերեք հոգի գնում էին զրոսնելու չրջակա ծաղկավետ անտառներում: Այս զրոսանքների ժամանակ Վասիլը և Ռուբենը հաճախ չուրջ վիճաբանութուններ էլին ունենում զիտության, որվեստների, բնության և չերեմն իրանց ժողովրդի գրության, մի խոսքով այն խնդիրների մասին, վոր սովորաբար հետաքրքրում են նորավարտ չերիտասարդներին: Այս վիճաբանութունների ժամանակ Ռուբենը գրեթե միշտ վոգեորվում էր, տաքանում, աչն-ինչ Մելիք-Բարսեղյանը Մարիամին հիացնում էր չուր սառն, անշեղ տրամաբանությամբ: Յեվ թվում էր որիորդին, վոր չերիտասարդ բժիշկը ամեն բան զիտե, ամեն բան ուսումնասիրել և, ուստի այդ բանավոր պաշարների մեջ նա, իրավամբ թե վոչ, հաղթանակը Վասիլի կողմն էր դրում:

Յերեմն Մարիամը միջամտում էր նրանց վիճաբանությանը և անզիտակցաբար պաշտպանում բժշկի հալացքները:

Ռուբենը նկատեց այդ և զվաց, վոր քույրը անտարբեր չէ ղեւի

Մեկիք. Բարսեղյանը: Սակայն նրա անփորձ աչքերը տակավին չէին թափանցում որիորդի սրտի խորքը, ուր հետզհետե արմատ եր ձգում առաջին և վտանգավոր սիրո ծաղիկը: Մի բան. վոր Վասիլը արդեն զգում եր: Ամեն անգամ, լերը լերիտասարդ բժիշկը նայում եր Մարիամի աչլալվող լերեսին, նրա խոշոր աչքերի խորութեան մեջ կարդում եր լուր թովիչ ազդեցութիւնը կուստկան անարատ հոգու վրա: Յեւ զորավոր ուրախութեան նման մի բան թնդեցնում եր նրա սիրտը: Դա փոխադարձ սիրո կամ համակրութեան ձայնը չէր, դա չքավորի հպարտութեան զգացումն եր, չքավորի, վոր լերկարամլա նլութեան դաժան կլանքից հետո առաջին անգամ տեսնում եր հաբստութեան քաղցր ժպիտը:

«Բառասուն հազար,—կրկնում եր լերիտասարդը լուրովի,—այդ զումարով չ'նչեր չի կարող անել ինձ նման մի խեղճ մարդ»:

Յեւ նա սկսեց խրախուսել լուր անուշ հուլանքին: Նախ նա Մարիամին ցուց տվեց կեղծ անտարբերութիւնը, իբրե թե չէր նկատում որիորդի սերը: Գիտե՞ր, վոր այդպիսով ավելի պիտի վառի որիորդի սիրտը, ինչպիս շատ անգամ սառն ջուրը ավելի սաստկացնում ե կիզանում հեղուկի բորբոքված բոցը: Իսկ լերը բավական վառեց այդ հուրը, փոխեց լուր հարաբերութիւնը—սկսեց շատ հեռավոր նշաններով ցուց տալ փոխադարձ սեր: Այն ժամանակ նա դիմեց խորհրդավոր հառաչանքների, մեկամարդձոտ ժպիտների, տրտում հայացքների ոգնութեան:

Մի անգամ նրանք, մի ծառի տակ նստած, խոսում ելին: Ռուբինը բացակա չէր: Հասարակ բաներից խոսակցութիւնը փոխվեց մի աշնայիսի նլութի վրա, վոր վորքան հրապուրիչ եր Մարիամի համար, նուչնքան և լերկուղալի, վորովհետե չգիտեր, թե ինչով կվերջանա: Խոսում ելին մի սիրելին վեպի բովանդակութեան մասին, վոր Մարիամը նոր եր կարդացել: Ողտվիշով բոպելի տրամադրութիւնից, Վասիլը խոսքը հետզհետե մասնավորեց, և այսպիսով նա կարողացավ արտասանել հետևյալ դարձվածը.

— Յեա կլանքումս լերեք չեմ սիրահարվել... Բայց մի որ... պիտի ծծեմ այդ դառն բաժակը:

— Ինչո՞ւ դառն,—հարցրեց որիորդը, և նրա ձայնի մեջ բժիշկը զգաց սրտի ուժգին դարկը:

— Վորովհետե ով գիտե ճշմարիտ սիրել, նա տանջվում ել ե,— և միքիչ խորհելուց հետո, ավելացրեց.— իս այդ նախադուշակում եմ...

Նա չչարունակեց: Մարիամը չէր ետ շուտ տվեց: Որիորդի շրթունքը դողում ելին, կուրծքը բաբախում եր: Թալուտ ծառի հովասուն

աւովերի ներքո նկատելի չեր նրա աշտերի հանկարծակի դուռնաթափութիւնը: Նա չիմացաւ ինչպես, բայց չերբ կամեցաւ վեր կենալ ալն մտմոռապատ մեծ քարի վրայից, ուր նստած ելին, չուր ձեռը դգաց Վասիլի տաք ձեռների մեջ: Նա նախց չերիտասարդին, վոր, կարծես, նուշնչափ հուզված էր, ձեռը մեղմիկ դուրս սահնց և առանց մի բառ արտասանելու, շուտով անհետացաւ կանաչ թփերի հետևում:

«Նա փախաւ, նա հետ կգա...», ասաց Վասիլը, չերկար ժամանակ նստած մնալով միեւնուէն տեղում:

Այդ որից հետո Մարիամի դեմքի վրա նշմարելի չեր չերջանկութիւն մի մեղամաղձոտ ժպիտ, վոր առանձին մի հրապուշտ էր տալիս նրա կերպարանքին: Հաճախ նա սիրում էր առանձնանալ և անձնատուր լինել չուր մենավոր մտածումներին: Նա գիտեր, վոր դժվար է թագցնել Ռուբենից չուր և բժշկի մեջ տեղի ունեցած ալն նշանավոր չեղելութիւնը: Յեւ քանի-քանի անգամ նա կամեցաւ հայտնել, բայց համեստութիւն և ամոթի դպացումը կաշկանդում էր նրա լեզուն:

Նուշն որից հետո Մելիք-Բարսեղյանը ամեն մի հարմար րոպելով ուղտելով, աշխատում էր չուր սերը ավելի ու ավելի պարզել որիորդին, վոշ միայն լոկի նշաններով, ալ չերբեմն էլ խոսքով: Իսկ չերբ առանձնանում էր, հաճախ կրկնում էր հետեւյալ մենախոսութիւնը.

«Ո՞՞՞ չքավորութիւն, չքավորութիւն, շատ դառն էլինք փորձերը, չես հիմար կլինելի, չեթե չխրատվելի: Դու իմ խելացի վարպետն էս չեղել, բայց միշտ տտել եմ քեզ, ալ, միշտ: Վերջապես, մոտենում ես ալն որը, չերբ քեզանից պիտի վրեժս առնեմ»:

Հասկանալի չե ուրեմն, թե ինչու բժիշկը ալնքան հետաքրքրվեց, չսելով Ռուբենի անորոշ խոսքերը չուր և քոշ գրութիւն մասին: Յերկար ժամանակ նա չեր կարողանում հանգարտվել, վերադառնալով ալն հլուրանոցն, ուր իջկանել էր:

«Ձառանցում էր, թե՞ կատակ էր անում, մտածում էր նա, ձեռները գրպանում դրած, անցուդարձելով հլուրանոցի փոքրիկ սենյակում: Բնակարանը փոխում է. չեթե ճշմարիտ է, հուսով եմ, վոր ալդ ընակարանը Սադափյանների տան շքեղութիւնը պատվաբեր կլինի: Նա հիշեց չքավորութիւն տտելի, զպղբելի անունը... Անփորձ չերեխա, կարծում է, վոր կարող է ինձ նման գիմանալ... Յերբեք, չերբեք, և վոշ չես ուժ ունիմ այսուհետե գիմանալ չքավորութիւնը...»:

Մլուս որը, առավոտյան վաղ զարթնելով, նա սկսեց խորհել չուր անելիքի մասին: Նա չեկել և թիֆլիսում մշտապես հաստատվելու, ուրեմն պետք է շտապել գործերը վաղորոք կարգադրել: Նախ և առաջ հարկավոր է ընակարան վարձել, խոմ հլուրանոցում չի կարող չեր-

կար ընակվելի Պետք և բնակարանը որինսովոր կահավորել, վոր հի-
վանդը կամ հիվանդի համար հրավիրողը տեսնելիս՝ մի քիչ պատկառի-
շեփո պետք և տեղական բոլոր լրագրներում հայտարարութուն տպել-
թե քրթիշի, վոչ վոչ, բժշկապետ Մելիք-Բարսեղյանը հիվանդներին
ընդունում և այսինչ տեղ, այսինչ ժամերին...»։ Ուրեմն բնակարանը
պիտի լինի քաղաքի ամենահայտնի փողոցներից միում, վոր լրագր-
ներին կհանդիպեն ևս նշանակութուն ունենա։ Այնուհետև պետք և ծանոթ-
ներ ձեռք բերել, հանգստներ ալցելիլ, լավ-լավ ընտանիքներին մոտե-
նալ և այլն և այլն։

Այս բոլորի համար փող և հարկավոր։

Նա շոշափեց չուր փողամանը։ Այնտեղ դարսած ելին մի քանի
հարյուրանոցներ, վոր խնայել էր չուր ութամսյա սուղ «պրակտիկա-
ցից» Յերևանում։ Այս գումարը բավական և առաջին ծախսերի հա-
մար։ Իսկ հետո... պետք և աշխատել ու աշխատել։

Նա մտաբերեց Ռուբենի նախընթաց չերեկո ասածը տեղական
բժիշկներին մրցման մասին, և այս անգամ ընկերոջ նախադրուշութուն-
նը մի քիչ մտածութուն պատճառեց նրան։ Բայց վճշինչ... Հպիտի
մաղու հափ հուսահատվել, գլխավորն ալս ե՛լ հուսահատվել, մանա-
վանդ Մարիամի մոտ։ Սառնասրտութունը մարդու դորեղ աջակիցնե-
րից մեկն և, վհատութունը թուլասիրաների հատկանիշն և։

Այսպես մտածելով, բժիշկ Մելիք-Բարսեղյանը, տասն ու մեկ ժա-
մը լրացած, դուրս չեկավ հյուրանոցից, ընտրեց փողոցում մի նորա-
դուշն կառք, վարձեց և գնաց ալցելիլու չուր հին ու նոր ծանոթներին
և ընկերներին, վորոնց ցուցակը վաղորդք կազմել էր։ Յերեք ժամ ան-
ցած նա վերադարձավ և սկսեց ամփոփել չուր զանազան հակասական
տպավորութունները։ Մեկին տանը չեր տեսել, ալցետումս էր լիզել
մյուսին հանդիպել էր փողոցում (հակառակ չուր ցանկության), մի
քանիսը շատ մեծ սիրով ելին ընդունել և այլն։ Նա ամենին հայտնեց
թե չեկել և Թիֆլիսում հաստատվելու, թե և Յերևանում գործերը շա-
փից դուրս հաջող ելին։ Փորձի համար նա մեկին ասաց, թե Պետեր-
բուրգից հրավեր և ստացել համալսարանում մանկաբարձու-
թյան դա-
սեր կարգալու։ Այդ մեկը հավատաց, և բժիշկը նույնը կրկնեց ասե-
նի մոտ։

Նա չուր ալցերի միջոցին կարողացավ և՛ մի բնակարան վարձել...

Նոր միայն բժիշկ Մելիք-Բարսեղյանը ճաշելուց հետո պառկել էր
միջիջ հանգստանալու, չեր և չեկավ Ռուբենը։

— Վերջապես,— գոչեց բժիշկը, և, վտաքի կանգնելով, ընկերաբար
թոթվեց նրա ձեռքը։— Նախիր։

— Նստելու կամք չունեմ,— պատասխանեց Ռուբենը մի անպիշ-
տի զվարթ ձայնով, վոր միանգամայն չեւ համապատասխանում նախըն-
թաց որովա նրա հոգեւրանութեանը:— Յեկել եմ խոստումս կատարելու
համար, գնանք, շնորհավորիւ մեր ընակարանը:

— Ի՞նչ, դու ուրեմն չեւեկ կատակ չե՞լիւ անում...

— Իմ ասելու ձեռք պետք է հասկանալիւ արդեն, վոր կատակ
չեմ անում:

— Բայց, Ռուբեն...— արտասանեց բժիշկը շփարած...— ալդ տեսակ
բտենքին հեշտ չի կարելի հավատալ... Դու հարուստ ելիւ եւ աղքատա-
ցաւ:

— Գնանք, սիրելիս,— լեւ քեզ անտեղ կատամեմ:

Բժիշկը հագալ չուր նոր վերնազգեստը եւ անմիջապէս հետեց
ընկերոջը:

Նա ձեռնափաշտի ծալրը բարձրացրեց կտոք կանչելու:

— Ավելորդ եւ,— արդիւնց Ռուբենը,— շատ ել հեռու չեւ աչտեղից:
Նա տարաւ ընկերոջը քաղաքի արեւմտեան բարձրադիր եւ զառի-
շալար փողոցները, սուրբ Դավթի հրապարակի կողմ:

— Յոթ տարի ապրել եմ այս հոտած փողոցներում,— ասաց բը-
ժիշկը, չերկարատեւ լռութեանից հետո:

— Հիմա հերթը իմն եւ Անա մեր ընակարանը:

Նա մաշված եւ չերկար գործածութեանից կեղտի ծալքերով
շաղկապած գոներով ընկերոջը առաջնորդեց մի բավական մեծ բակ:
Յերեւում եր, ալդ տան ընակիչները, վորոնց թվում կային եւ շոր լվա-
նող կանալք՝ բավական անփութ ելին մաքրութեան վերաբերմամբ:
Դավթի իշխանութեանը հանձնել ելին հավելին եւ սագերին: Տեսնելով
չերկատասարդներին, ծուլ թոչունները մի սուր ազմուկ բարձրացրին
եւ ցրվեցին այս ու այն կողմ: Յերկու քաջասիրտ սագեր, թեւերը տա-
քածած, չերկար պարանոցները ցցած, առաջ վազեցին հլուրերին հան-
դիպելու: Այն գետնափոր խողովակը, վոր նշանակված եր կեղտոտ
ջրերի համար, վաղուց չեւ մաքրված: Փոսի վրա ձգված չերկաթի
վանդակի վրա կանգ եւ առել շոր լվանողների ածած սապնաջուրը:
Ալդ պղտոր եւ դարձահոտ ճահճի մեջ չերկու բադ լող տալով, կտուցնե-
րով սիրալին ցուլցեր ելին անում միմեանց: Մի պտուղ շուն դեմ ու
դեմ նստած, մեջքը տաքացնում եւ արեւի շողքերի տակ:

— Զգուշ կաց,— կատակեց Ռուբենը, ցուլց տալով գավթի մի
ծալից մինչեւ մշուսը քարշ արած թաց շորերը, վորոնց տակով պիտի
անցնելին նրանք:

Բժիշկ Մելիք-Բարսեղյանը չլիտեր դարմանալ, ծիծաղել, թե՛ վըշ-

տանալ չուր տեսածի վրա: Նա լուռ հետևում էր Ռուբենին, քալիւր շատ զգուշ փոխելով, վորպեսզի չապականի չուր նոր և մաքուր կոշիկները կեղտոտ քարահատակի վրա:

Նրանք վոռք դրեցին մի նեղ պատշգամբի վրա, վոր տարածված էր միհարկանի տան ամբողջ յերկայնութեամբ:

— Ահա և մեր նոր Պաղեստինը, — ասաց Ռուբենը, ընկերոջը առջնորդելով ընակարանը: — Այս իմ սենյակս է, — մշտնապէս ել Մարիամինն է: Յերկու սենյակ և այս փառավոր կահ-կարասին ամսական տասներուբլով, կարծես, — թանգ չի, հը՞մ: Մարիամ, — գոչեց նա դեպի մշտնապէս կողմը, դուրս չեկ, տես ի՞նչ և չեկել մեզ շնորհավորելու:

Մինչ Մարիամի չերևալը, Մելիք-Բարսեղյանը գիտում էր չուր տեսածը: Առաստաղը քաշ, պատերի պաստառը տեղ-տեղ պատառոտված, տեղ-տեղ կեղտոց սևացած, հատակի ներկը մաշված, դռները փոքր և միայն մի պատուհան — ահա Ռուբենի սենյակի տեսքը: Միքանի կիսամաշ վիհնայան աթոռներ, մի հասարակ սեղան, վորի վրա անկարգ-անկանոն սփռված էին Ռուբենի գրքերը, և մի անկշուռում մի փայտե անկողնակալ — ահա այդ սենյակի կահ-կարասին:

— Ներքի, — ասաց Ռուբենը, — դեռ կարգի չենք բերել: Առավոտից մինչև հիմա սրբում ենք, լվանում, հալաքում, — ելի չկարողացանք վերջացնել:

Մինչ բժշկի մի բառ արտասանելը, մշտնապէս զուրս լեկավ Մարիամը: Որիորդը հագած էր չուր հասարակ տնային հին հագուստներից մինը, թեկըր մի փոքր հետ ծալած, կրծքին կապած մի կապույտ գոգնոց և գլխին մի կապույտ թաշկինակ:

Գուցե Մելիք-Բարսեղյանը չուր կյանքում ամենքան ապշած չէր, վորքան այժմ, չիր տեսալ չերեկվա փաթեմութեան մեջ ապրող քնքուշ որիորդին այսոր մի հասարակ աղախնի վիճակում: Նա այնքան շվարփեց, վոր մոռացավ անգամ բարևել որիորդին, մնաց անշարժ կանգնած միևնույն տեղում:

Շփոթվեց նույնպէս և՛ Մարիամը: Վորքան և նա աշխատել էր անվրդով մտնել չուր նոր կյանքի ասպարեզը, վորքան նա նախապատրաստել էր իրան անխռով սրտով ընդունել բժշկին, չկարողացավ, սակայն, սառնարջուն տանել այդ ծանր բոլակն: Նա կարմրեց, գլուխը անորոշ շարժեց, իբրև բարևելով չուր հշուրին, և նույնպէս մնաց տեղում տեղը կանգնած:

— Յեթե չերազումս անգամ տեսնելի, կսարսափելի, — գոչեց Մելիք-Բարսեղյանը, սթափվելով, և մոտեցավ, վոր Մարիամին ձեռ տա, — որիորդ, ի՞նչ և պատճառը ձեր այդ դրութեան:

— Մենք, — պատասխանեց Մարիամը, վորքան կարող եր ստանասիրտ: — Միթե Ռուբենը չի՞ պատմել ձեզ արդեն:

— Յես սպասում եմ այդ գաղտնիքի բացատրությանը, — դարձավ Վասիլը Ռուբենին, ձեռները պարզելով առաջ:

— Այժմ հավատում ես, ուրեմն, վոր ասածս կատակ չեր, — խոսեց Ռուբենը: — Բարեհաճիր նստել:

Բժիշկը նստեց և ուշադրությամբ լսեց ընկերոջ համառոտ պատմութիւնը, առանց մի բառ արտասանելու: Յերբ Ռուբենը ավարտեց չուր խոսքը, աջ ձեռը դրեց նրա ուսին և, ուրախ ու զվարթ ժպտալով, ասաց:

— Հավանում ես արածս:

Բժիշկը մի քանի վայրկյան մտածեց, շփեց չուր ճակատը և, վերջապես, դրական վոճով պատասխանեց.

— Վոչ: Վատ ես արել, շատ վատ ես տրել:

Ռուբենը, ինչպես լերեւում եր, չեր սպասում այդ տեսակ պատասխանի: Նա դարձացած նայեց ընկերոջ լերեսին:

— Ինչո՞ւ:

— Դու, — առաջ տարավ չուր խոսքը Մելիք-Բարսեղյանը, — փասել ես քեզ քո անհամբերությամբ: Իմ կարծիքով դու պետք ե թողնես այդ հիմարութիւնդ, — ներեցնք, որիորդ, — պետք ե թողնես և կըրկին վերադառնաս հորեղորդ տունը: Նա սնանկ չի և չի ցել սնանկանալ դուցե: Այսոր չես պատահարար նրա մասին խոսք ունեցա մի հայտնի մարդու հետ: Այդ մարդը աչստեղի բոլոր հարուստների դրութիւնը լավ ծանոթ ե: Նա ինձ ասաց, վոր Նիկողայոս Սադափլանի գործերը այս տարի անհաջող են, ճշմարիտ ե, բայց այդ անհաջողութիւնը ժամանակավոր ե: Նա փողի պակասութիւն ունի, բայց գործերը լավ են: Դա առևտրական մարդու կրիդիս ե, ամեն մեկին պատահում ե: Ինձ հավատացրեց այն մարդը, վոր հորեղբայրդ այնքան խելոք ե, վոր շուտով դուրս կգա չուր նեղ դրութիւնից:

— Հետո՞, — ընդհատեց Ռուբենը, վոր անհամբեր սպասում եր լսել ընկերոջ վերջաբանը:

— Դու, ուզում եմ ասել, — շարունակեց Մելիք-Բարսեղյանը, — շատ ես շտապել: Յեթե մինչև անգամ հորեղբայրդ սնանկ ել լիներ, չեթե նա չկարողանար մի կոպեկ անգամ տալ քեզ քո հոր ժառանգութիւնից, դարձյալ դու չպիտի հեռանալիր նրանից: Նա անուն ունի, Ռուբեն, ծանոթներ ունի, մեծ-մեծ բարեկամներ ունի, աչ քեզ ինչ ե հարկավոր... Դու նրա միջոցով կարող ես լավ կարիքս ստեղծել քեզ համար: Այդ կարիքերան դու մենակ, քո ուժերով, չերեք չես

կարող ունենալու Մնա իմ ընկերական խորհուրդը. գնահ, ներողութուն խնդրիր և կրկին մտիր նրա հովանավորութեան տակ:

Արտասանելով այս բանախոսութիւնը, բժիշկ Մելիք-Բարսեղյանը չուր ամուր գլխարկի մի ծալքը դրեց ծնկներին, մշուաի վրա հենեց ձեռները, սպասելով պատասխանի:

— Դու խորհուրդը, Վասիլ,— խոսեց մուրենը կես հեղնաբար և կես դառնագին ժպտալով,— արժե, վոր լսեր ինձանից ավելի մի խելոք մարդ: Դու շատ խոհեմ, գործնական միջոց ես առաջարկում ինձ, բայց... սիրելի Վասիլ, այլիս ուշ և, չես չեմ կարող քո այդ խելոք խորհրդով ոգտվել: Հորեղորոս ընտանիքի և մեր մեջ բարեկամական կապը արդեն կտրված եւ Յեթե դու այսօր ներկա լինելիր, չերք մենք տեղափոխվում ելինք այստեղ, կհավատալիր, վոր այդ կապը այլևս անհնարին և նորոգել:

— Ուրեմն դու կովեցիբր նրանց հետ:

— Յես լսեցի մի ծանր հանգիմանութիւն, չես լսեցի, վոր քուչրս և չես ութ տարի շարունակ ձրիակերներ ենք չեղել հորեղորոս տանը:

— Հորեղորոբիցդ լսեցիր:

— Վոչ, նրա կնոջից,— պատասխանեց մուրենը, շրթունքը կրծելով,— բայց այդ միկնուչին և, նա չեւ լսեց և լոնց, այո, լոնց...

— Բոպելի ազգեցութեան տակ մարդ շատ բան և ասում, շատ բան և անում, մուրեն, բայց հետո ափսոսում եւ Յես համոզված եմ, վոր չեթե դու վերադառնաս, ներողութիւն խնդրես, արկին Սաղապիւնը չուր խոսքը չետ կառնի և քեզ համբուրելով կընդունի...

— Վասիլ,— գոչեց մուրենը, ընդհատելով ընկերոջ խոսքը,— այդ գէւ չես խոսում, չես քեղանից այդ չելի սպասում: Վոչ, չես կարծում ելի, վոր դու կգովես իմ արած քալլը, կխրախուսես ինձ: Իսկ դու, կարծես, հանգիմանում ես ինձ, թե ինչու չքաւորութիւնը գերադասել եմ ձրիակերութիւնից և ուրիշների միջոցով ձեռք բերած կարիւրտից...

— Չքաւորութիւն, — կրկնեց բժիշկ Մելիք-Բարսեղյանը, թեթեւ ժպտալով և շրթունքը սեղմելով,— ինչո՞ւ, լեղրալը, ինչո՞ւ չքաւոր ապրել, չեթե վորեւ հնար կա ավելի լաւ ապրելու: Եհե, մուրեն,— ավելացրեց նա, հառաչելով և գլուխը չերերալով,— մի վոգեորվիլ, վատ բան և չքաւորութիւնը, լինի նա մշտական թե առժամանակա, ոո, չես գիտեմ ի՞նչ ասել և չքաւորութիւն: Իսկ ով ճանաչում և մարդուս այդ կոպիտ թշնամուն, նա հոգով պլտի աւտի, ինչպես չես ավժամատում եմ և սարսափում, չերք մտաբերում եմ տասներկու տարի կրած նեղութիւններաւ: Վոչ, վոչ, հեռու փախիր նրանից: Յեթե չես չերբեմն

գլործենում հմ իմ անցյալով, այդ չի նշանակում, թե այժմ կկամենալի կրկին ընկնել այդ Հարասիրտ պառավի ճանկերը: Հավատացիր, վաչ մի բան անքան վառնգավոր չի անհատի բարոյականութեան համար, վորքան չքավորութուն ասած բանը...

Մի թուլլ ճիշ ընդհատեց բժշկի խոսքը: Նա և Ռուբենը բնագլումով միաժամանակ նայեցին դեպի այն կողմ, ուր մինչև այդ վայրկյան անխոս նստած էր Մարիամը, և տեսան հետևյալը: Որիորդը կանգնած էր պատի տակ, մի ձեռը հենած աթոռի մեջքին, մյուս ձեռը կրծքին քնդած և ձիգն էր անում, կարծես, ուշը վրեն պահելու: Նրա չերեսի գունատութունը, հեղուկ գլխի չերերվիլը և կրծքի ուժգին բարախելը վախեցրին Ռուբենին: Շվարված չերտասարդը՝ շտապով մոտեցավ քրոջը, գոչելով.

— Մարիամ, լինչ պատահեց:

— Ընդհատիր այդ խոսակցութունը, ընդհատիր, խնդրում հմ,— ասաց Մարիամը շնչադեղ ձայնով և այնպես ցածր, վոր միայն չեղբայրը լսեց...

Յեվ թուլացած նստեց աթոռի վրա:

— Ներեցեք,— ձայն տվեց բժիշկը, վոտքի կանգնելով,— ձեր գեմքը ինձ... Ձլինի թե հիվանդ եք,— ավելացրեց նա, չուր արհեստը իսկույն գործադրելու պատրաստակամութեամբ:

— Յես... վոչ, վոչ հիվանդ չեմ...

— Բայց ձեր չերեսին գուշն չկա, դուք հիվանդ եք,— գոչեց բժիշկը և չուր արհեստին հատուկ սառնութեամբ բռնեց որիորդի բազուկը:

Կարծես, նրա ձեռի շփումից որիորդը մի առանձին կենդանութուն ստացավ: Նա ուղղեց իրան, ցնցողաբար դողացող ձեռով շփեց ճակատը և մի տարրերնակ հաչացք նետեց բժշկի չերեսին:— Մի հաչացք, ուր Մելիք-Բարսեղյանի նման սուր դիտողութուն ունեցողը չեր կարող չնկատել մի խորին հանդիմանութուն:

— Յես կարծում հմ, վոր դուք այսոր հափից դուրս շատ հոգնել եք,— ասաց բժիշկը, այդ հաչացքից շփոված, բաց թողնելով Մարիամի բազուկը,— առանց այլ և այլի ձեզ հարկավոր ե հանգստութուն, անպայման հանգստութուն:

— Ճշմարիտ ե, Մարիամ,— խոսեց Ռուբենը,— մինչև այժմ բան ես արել և ժամանակ ել չես ունեցիլ կարգին ճաշելու:

— Բարեհաճեցեք, ուրիմն,— հարեց Մելիք-Բարսեղյանը, աշխատելով անհողողող և խրախուսական ձայնով խոսել,— բարեհաճեցեք բժշկի պատվերը լսել և այսոր ել վոչ մի գործի ձեռք չտալ: Դուք

այդ տեսակ տնային ծանր աշխատանքին սովոր չեք, ահա ինչիցն է առաջացել ձեր թուլութիւնը:

— Այո, սովոր չեմ, — պատասխանեց Մարիամը, փոքր առ փոքր վերադարձնելով լուր սառնութիւնը, — բայց կսովորեմ: Առաջիկային հետեւեալ ինչ... պարոն Մելիք-Բարսեղյան... ձեզ անհանգստութիւն պատճառեցի... Յետ առողջ եմ, չես վոչինչ թուլութիւն չեմ զգում:

Յեւ նա փորձեց ուրախ ժպտալ, բայց այս բռնադրոսիկ ժպտը նմանեց մութ ամպերի տակից մի վայրկյան փայլող արևի անցողիկ շողքերին, վորից հետո կրկին մռայլեց որիորդի պալմառ ճակատը:

Բժիշկը դարձաւ նրան համոզել սկսեց, վոր պետք է լուր անսովոր ուժերի հետ խնամքով վարվի:

— Շնորհակալ եմ ձեր խորհրդի համար, շատ շնորհակալ եմ:

Որիորդի ձայնի մէջ բժիշկը զգաց մի նուրբ հեղնութիւն և քանի մի վայրկյան նա դարձաւ շաւրվեց:

— Գնա, հանգստացիր, Մարիամ, — հորդորեց Ռուբենը, — բժիշկը ճշմարիտ է ասում, դու անսովոր ես ծանր աշխատանքի...

Որիորդը վերկացաւ տեղից և մոլոր քալերով անցավ լուր սենյակը, նույն հեղնական ձայնով ասելով Մելիք-Բարսեղյանին.

— Ներեցեք...

— Տեսա՞ր, — դարձաւ Մելիք-Բարսեղյանը Ռուբենին, — տեսա՞ր, ահա այդ է աղքատութիւն առաջին պտուղը: Յետեւութիւն, ընկեր, հուսով եմ, վոր վաղը քեզ խելքացած կտեսնեմ: Աշխատիր, վոր Մարիամը խորհուրդս կատարի:

Վոչինչ չասաց Ռուբենը, լուռ ճանապարհ դրեց ընկերոջը մինչև գալիթ և վերադարձաւ: Նա Մարիամին կրկին տեսաւ լուր սենյակում:

Կանգնած փոքրիկ լուսամուտի առաջ, ձեռները կրծքին խաչաձև դրած, որիորդը նայում էր հեռացող Մելիք-Բարսեղյանի լիտից:

— Մարո, — ասաց Ռուբենը, ձեռք դնելով նրա ուսին, — վոչնու դու այնպէս ալլալվեցիր, ասա, ինձ թվում էր, վոր պատճառը քո հոգնածութիւնն էր:

Մարիամը գլուխը բարձրացրեց, և մի ծանր հառաչանք դուրս թռաւ նրա կրծքից:

— Չգիտեմ, չգիտեմ, — գոչեց նա, — աստված իմ, նա անկեղծ էր խոսում, թէ ուզում էր փորձել ինձ...

Արտասանելով Ռուբենի համար այս անորոշ խոսքերը, նա արագ քալերով անցավ կրկին լուր սենյակը և դռները ծածկեց լուր լիտից:

Յերբ դարմացած Ռուբենը մի քանի վայրկյանից հետո մտավ նրա մոտ, տեսաւ, վոր քույրը չերեսը բարձին դրած ուժղին հեկեկում է...

Տիկին Սոփիոն, վերջապես, արժանացավ անվանի կոմսուհու աշցին, թեև սպասածից բավական ուշ: Բախտավոր եր այդ որը նրա համար: Կոմսուհին միքանի հաճույական խոսքեր եր ասել Նատալիայի «գրավիչ տեսքի»: Սաղափառների տան «չքեղ և ճաշակով» կահ-կարասիի, տիկնոջ «որինակելի» բարեսրտության և այլ այդպիսի բաների մասին:

Յեւ Սոփիոն նրա չուրաքանչյուր խոսքը, մտքում դրոշմելով, պարծանքով կրկնում եր բոլոր ծանոթների մոտ: Բայց կար մի հանդամանք, վոր տիկնոջ այս ուրախության վրաստվեր եր ձգում:— Հալարյանը չեւ տեցելում նրանց, սկսած այն որից, չիր Մարիամն և Ռուբինը տեղափոխվել էին: Նա պատճառը հարցրեց ամուսնուց: Փոխանակ մի վորոշ պատասխան տալու, Նիկողայոսը հաջոյեց թե հալարյանին և թե բոլոր «նրա նմաններին»: Սոփիոն չգիտեր այս հաջոյանքի առիթը, ինչպես և չգիտեր, թե ինչու չուր ամուսինը առհասարակ զրգոված եր ամենի դեմ:

Նույն որերը Նատալիան չարաչար զբաղված եր չուր նոր հագուստներով: Ժամանակ անժամանակ նա վազում եր մադամ Կուրաժովի մոդային խանութը և շտապեցնում եր շուտով ավարտել գործը: չնայելով, վոր չերեկուլթները դեռ հոռու էին: Նա հրճվանքով պատկերացնում եր վաղորոք այն հանդեսը, վորի կարգադրին է հրավիրված լինելու:

— Ախ, մամա, մարդ ինչքան ուրախ է լինում, չիր բարի գործեր է կատարում: Գիտե՞ս, մենք իսկական բարեգործներ ենք. մենք ուրիշների պես միայն մեղ համար չենք ապրում: Տես, ուսուսաց ընկերութան պատվավոր անդամուհի, վրաց ընկերության պատվավոր անդամուհի հայուհւոյաց ընկերութան պատվավոր անդամուհի, բանտարկվածների չերեխաներին ոգնող ընկերութան անդամուհի... Ի՞նչ վոր մեկն ասեմ: Քանի՜ քանի խեղճ ու աղքատներ են ապրում մեր նվերներով: Այսպես չե՞...

— Յես ել հենց այդ եմ ասում հորդ եե,— հարեց տիկին Սոփիոն, — ասում եմ, ալ մարդ, չիթե մեղպեսներն ել չողեն, ել խեղճերը ինչո՞վ պիտի ապրեն:

— Յես շատ և շատ ուրախ եմ,— փոխեց խոսքը Նատալիան,— վոր, վերջապես, նպատակիս հասա: Անցյալ տարի որիորդ Ամքարովան գիմնազիստների ոգտին տված կոնցերտի կարգադրին եր, սիրտս քիչ եր մնում նախաձից տրաքվի: Ինչո՞ւ նա լինի, չես չլինեմ, ասում էի:

տարի լիս եկեմ... Ձգիտեմ ինչպէս շնորհակալութիւնս հայտնեմ քեզի Սրբափրոսինն Գիտես, նա չե աշխատել, վոր ինձ խնդրեն կարգադրիչ լինելու:

— Ե՛հ, — ընդհատեց մայրը արհամարհարար, — լեթե ինձանից հարցնես — շատ ել ուրախ չեմ: Հայերի բալի համար կարգադրիչ լինելը մի մեծ բան չե, վոր հպարտանանք:

— Մենք ել այնպես կանենք, վոր բալը մեր անվանը արժանի լինի:

— Իհարկե, իհարկե, — համաձայնեց մայրը լեռանդով, — մեր բալը ամենալավը պետք ե լինի, թող թշնամիները տեսնեն ու նախանձից խեղդովեն:

— Մամա, դու այդքան թշնամիներ, թշնամիներ ես ասում, մի են մեր թշնամիները, չի՞ կարելի իմանալ:

— Ով եհն, — կրկնեց տիկին Սոփիոն, աչքերը պլպլացնելով, — չես իմանում: Մեր թշնամիները նրանք են, վոր մեզ նախանձում են, վոր ինչ-վոր անում ենք, իրանք ել են ուզում անել, վոր մեր չարածն ել անում են: Յես ասելով ասում եմ այնպիսիներին, վոր ամեն տեղ մեջ են ընկնում: Ել ով ասես, բազադի, գինի ծախողի, պիսեր-միսերի կնիկ ու աղջիկ, գիփ ուզում են արխատոկրատկաների հետ վրտ ձգել:

— Լավ, մամա, լիս ինքս ել խոմ արխատոկրատկա չեմ: Ուրեմն, քո ասելով, լիս դեր չպիտի կատարեմ հասարակութեան մեջ:

— Ի՛նչ, դու լիս վոր արխատոկրատկա չես, ել թվ ե... Դու իմ աղջիկս ես, դու Սահարունիների՞ ցեղիցն ես, Սահարունիները քո ալք ասում ու մուտ իշխաններից չեն, հասկանո՞ւմ ես: Այս մեկը մտքումդ լավ պահիր, այն քո հայրդ ե, վոր պատիվս չի ճանաչում:

Խոսակցութիւնը տեղի ունեւ ճաշից չերկու ժամ առաջ՝ Նատալիայի սենյակում: Որիորդը հայելու առաջ դուզվում եր Նա պատրաստվում եր մոր հետ անվանի կոմսուհու մոտը գնալու: Այս ալցելութեան գլխավոր նպատակն եր՝ հասկացնել կոմսուհուն, վոր նա գեթ մի ժամով պատվե Նատալիայի բալը: — Մի միտք, վոր տվել եր նրան իշխան Սահարունին:

— Յերեակալում եմ, — շարունակեց խոսել Նատալիան, վերջին գնդասեղը ամրացնելով կրծքի մետաքսյա ապարոշին, — չերեակալում եմ, ինչպես որիորդ Ամքարովան պիտի նախանձի, չեթե կոմսուհին գա իմ բալը: Անցալ տարի, — ավելացրեց նա ծաղրաբար, — նրա հանգիսեականների մեծ մասը հոր պրիկաշիկներն ելին, հա հա հա:

Յեվ նա, լերեսը շուռ տալով, սկսեց հայելու մեջ զննել լուր բարակ մեջքը և բարձր տյուրնյուրը, վոր ժամանակի մողալի վերջին պահանջն եր:

— Ի՞նչ ել վոր անես, աղջիկս,—ասաց մայրը, ուղղելով լուր գտեր հագուստի փեշերը,—այն չերեկո պետք և աշխատես Հալաբլանին մոտդ պահել: Վորքան մտածում եմ, հալերի մեջ նրանից որինա-վոր մարդ չեմ գտնում: Վախենում եմ, վոր չիբսը լպստածը այն չե-րեկո անտեղ լինի ու ելի նրան լուր կողմը քաշի:

Նստալիան հասկացավ մոր խոսքը ու մասին եր: Այժմ տիկին Սոփիոն Մարիամի անունը ուրիշ կերպ չի հիշում, չեթե վոչ «չիբսը լպստածը»:

— Հա, լավ միտս բերիր,—գոչեց Նստալիան,—դու նրա բրա-կետն ու կոլիկն ուղարկեցի՞ր:

— Վոնց չե, վոնց չե,—արտասանեց Սոփիոն թունալից հեղնու-թյամբ,—հենց այս րոպե, հա հա հա, բրասլետն ու կոլիկն: Այն մի-քանի ձեռք հագուստն ել, վոր տարել և, շատ-շատ և նրա համար...

— Ձե, մամա, լավ չեա անում, ուղարկիր, թող չասեն, վոր մենք իրանց զրկում ենք, առանց այն ել չար լեզուները բամբասում են մեզ վրա:

— Քո գործը չե,—ընդհատեց մայրը վճռական լեզանակով,—դու ինձ մի բան ասա, ճշմարիտ և, վոր այն բժիշկը, Բնչալիս և անունը...

— Մեկիք Բարսեղյան...

— Հա, ճշմարիտ և, վոր սիրահարվել և այն լպստածի վրա:

— Այդ չեմ իմանում, բայց թե Մարոն նրա համար գտնած և, չեա հաստատ գիտեմ: Եհ, նրա ճաշակն ել...

— Ինչո՞ւ, մի ասիլ, նա իրան բանը շատ լավ և իմանում, ու-ղում և կամ հարուստ մարդու կնիկ լինել, կամ բժշկի:

Ներս մտավ աղախինը և, մոր ու գտեր խոսակցութունը ընդ-հատելով, հայտնեց, թե կառքը սպասում ե:

— Նեստորն ել հագնված պատրմաս և,—հարցրեց որիորդը:

— Այո:

Մայր և դուստր դուրս չեկան ծանր ու հպարտ քալիքով, առաջինը անընդհատ ուղղելով գլխի թաշկինակի տակից աչտերի վրա դուրս սփռվող ալեխառն մազերը, չերկրորդը կապելով մինչև արմուկները հասնող ձեռնոցների կոճակները: Փողոցի դռների առաջ սպասում եր տնային փաշլուն կառքը: Յերկու սևաթուշքի վիթխարի ձիերը անհամ-բեր կրծստում ելին իրանց սանձերը, վտանները ուժգնակի խփելով սալահատակին: Նեստորը, Սադափյանների իմերել ծառան, բռնեց լուր տիրուհիների թևից, նստացրեց կառք և ինքն ել կատվի արագու-թյամբ թռավ ու տեղավորվեց փառանեղ միութեքով և կուրծքը ու մեջքը բարձերով հաստացրած կառապանի կշարն:

— Կոմսուհի Նավալիխինայի տունը, — հրամայեց Նատալիան աչն-
քան բարձր ձայնով, վոր լսելի լինի այդ միջոցին մայթի վրա կանգ-
նած չերկու պարոններին:

Կառքը սլացավ:

Բառորդ ժամ անցած տուն վերադարձավ Նիկողայոսը մաստիկ
վրդովված: Նա շարտեց սպասավորին մի թղթադրամ, հրամայեց կա-
ռապանին վճարել և, վերադառնալով հանդերձակալի վրա, անցավ
ուղղակի չուր սենյակը:

«Խղճմտանք չկա այդ մարդկանց մեջ, — խոսեց նա ինքն իրան,
նստելով սեղանի մոտ և ձեռները ուժգին խփելով բազկաթոռի թևե-
րին, — բոլորի սիրտը քարացել է: Ասում են չունենք, չունենք: Սճուտ,
չես ճանաչում եմ ձեզ, ես, շատ լավ եմ ճանաչում: Դուք ուրախա-
նում եք, չերբ մեկը, վոր ձեզանից բարձր է, ձեզանից ցած է ընկ-
նում, դուք ուզում եք նրան վոտնատակ անել, խեղդել, սպանել: Նա-
խանձը ցնցի պես ուռում էր ձեր սիրտը, չերբ տեսնում ելիք, վոր
Սադափյանի թուրը չերկու կողմով ել կտրում է շիմա անհամբեր
սպասում եք, վոր ընկնեմ... Վոչ, վոչ, չեմ ընկնիլ, քանի աչքումս
լույս կա, գլխումս խելք, և լի ամենին չեմ կթողնեմ, ինչպես մինչև
որս չեմ եմ թողել»...

Նա բարձրացավ տեղից և սկսեց հուզված անցուդարձ անել: Նա
մտածում էր հիւր դիմել վորդ ստանալու համար: Մնում էր դարձյալ
Հալաբլանը: Բայց նա տվել էր արդեն տասնուհինգ հաղար, կտամ ելի:
Դեռ չերեկ Նիկողայոսը նրան ահնարել էր չուր գործերի գրության
մասին, հասկացնելով, վոր վորդ և հարկավոր միջանի մուրհակներ ա-
ղատելու բանկերից:

«Նա խոսքը կտուր գցեց: Նա չել չի հավատում ինձ. նա չել է
հեռու փախչում ինձանից աչն որից, չերբ չեղբորս վորդիները գուրս
են չեկել իմ տնից: Սոփիոն ասում է, նա աչք ունե Մաբիամի վրա.
Թող գլուխը քարին տա, ինչ ուզում է — անի, հիմ վրա ուզում է —
պսակվի, միայն ինձ ոգնի, իմն: Ախ, անիծված վորդ, վորտեղ ես մի
հիսուն հաղար... Հենց այսօր գործերս կղբստելի ու ամենի չերեսին
կթքելի»...

Նա վճռեց նամակով խնդրել Հալաբլանին: Այն, ինչ վոր բերա-
նացի դժվարանում էր ասել, գրչով հեշտ էր գրել: Առաջին տողերից
հետո նա կանգ առավ, ճակատը մռայլեց: Նա վորոնում էր աչնպիսի
դարձվածներ, վոր կարողանալին շարժել Հալաբլանի գուլթը: Յեղ
դտավ: Մարդս մարդով է ապրում, նեղութունը ամենի համար է,
կարոտողին ոգնելը աստծու պատվերն է: Աշխարհին հայտնի չե, վոր

Նիկողայոս Սադափյանը թղթամուլ չի, շառլատան չի։ Նա ազնիվ վաճառական է, ընտանիքի տեր է։ Նա հավիտյան չի մոռանալ այն մարդուն, վոր այս նեղ որին ձեռք կմեկնի նրան։

Նա ավարտեց նամակը, մատը սեղմեց պատի ելեկտրական դանդակի կոճակին։

— Տար այս նամակը, — հրամայեց նա սպասավորին, — տուր Հալարյանին։ Յեթե տանը չլինի, գտիր, վորտեղ վոր է։ Կաց, տիրուհիդ տոմն է։

— Վոչ, որիորդի հետ կտոքով գնացին։

— Լավ, գնա։

«Իշխանի աղջիկ է, սևփական կառքով, ծառային առաջը նստացրած «վիդիոներ» և անում գրաֆինյաններին։ Ա՛խ, Սոփիո, Սոփիո, ավաճա... հիմա չեմ իմանում, թե դու ով ես... դու քո աղջկա հետ քանդեցիր ինձ։ դու փչացրիր իմ հարստութիւնս»...

Յե՛վ նա, ատամները կատաղի կրճտելով, բոռնցքը աչնպես խփեց սեղանին, վոր ծայրին դրած հաշվեմատյանները թափվեցին հատակի վրա։

Նուզն պահին Հալարյանը չուր տանն եր մոսիո Վախվախյանի հետ։ Այդ որը նրա ծննդյան քառասուններեքամյա տարեդարձն էր։— Մի որ, վոր նա սովորաբար տոնում էր չուր ընկերների հետ քաղաքի առաջնակարգ հյուրանոցներից մեկում։

Տանը նա խնճուղներ սարքել չէր սիրում և հարմարութիւն էլ չուներ։ Առհասարակ նա բարվոք էր համարում դրսում լեռապատիկ ծախսել, քան սևփական խոհանոց պահել և ամեն առավոտ խոհարարի հետ նիստ կազմել որվա ուտելիքի մասին, ինչպես անում էին նրա ծանոթ ամուրիներից շատերը։

Սակայն, վերջին անգամ Սադափյանների մոտ ճաշելուց հետո, հանկարծ նա կամեցավ կերպարանափոխել չուր տնային կյանքը։ Նա կանչեց մոսիո Վախվախյանին, պատվիրեց մի հմուտ խոհարար և մի արագաշարժ սպասավոր վարձել, վերանորոգել տան կահ-կարասին, մաքրել, զարդարել։

Ինչ ասել կուզի, մոսիոյի համար ավելի հաճելի զբաղմունք չէր կարող լինել։ Յե՛վ նա մենակաց ամուրիի մուսլ կացարանում մի աչնալի շարժում բարձրացրեց, վոր Թաթոսը ֆնաց ապշած։ Խեղճ ծառան մի անասելի տրտմության մեջ ընկավ, չերբ չուր աղաչի տանը տեսավ, քացի իրանից, ուրիշ ծառաներ։

— Ի՞նչ հարկավոր էր պովարը, լակելը, լեռ չե՛լի կարող ամեն քան անել, — տրտնջում էր նա անդադար։

Տասն որ շարունակ Հալարլանը գրադված էր տնային վերանորոգութիւններով: Հաճելի չէր նրան տեսնել յուր տան մէջ այդ անսովոր կենդանութիւնը: Յերեկը նա, մոսիո Վախօվախանի ոգնութեամբ, կարգադրութիւններ էր անում, հրամայում էր, բարկանում էր: Յեռեկոյան փակվում էր առանձնասենյակում, կարգի չէր բերում յուր հին ու նոր հաշիվները:

Նա ունէր միքանի անշարժ կավածներ, սրան ու նրան մուրհակով սոված փողեր: Ո՞վ ինչ է պարտ, վճի խանութպանը վարձը ժամանակին չե տվել, վճի հետ պետք է նոր պայմանագրութիւն կապել և այլն և այլն, այս բոլոր գործերը զբաղեցնում էին նրան ամբողջ չերկոնները:

Այլևս նա ժողովարան չէր դնում: Ընկերները փողոցում տեսնելիս նրան հանդիմանում էին:

«Տկար եմ, գործ ունեմ»,—ահա այն անորոշ խոսքերը, վորոնցով նա արդարացնում էր իրան:

— Բայց մեզանից խոմ չե՞ս կարող փախչել,—ասաց մի որ Ախշարումյանը, յուր հսկայական ձեռը դնելով նրա ուսի վրա:

— Ո՛ւր պիտի փախչի,—հարեց իշխան Սահարունին,—շուտով ելի ծննդան օրն ե, քեֆ պիտի անենք: Հա, լավ միտս չեկավ, բարեկամ, չերազ ես տեսել ի՞նչ է, ասում են տունդ սարքել ես, ուրեմն այս անգամ տարեկարձք քեզ մոտ կտոնենք:

— Տոնեցեք, լեթե ուզում եք,—սպասախանեց Հալարլանը ակամա:

— Ի՛նչպես թե ուզում եք,—գոչեց Ախշարումյանը,—անհամբեր սպասում ենք: Այս անգամ մինչև հինգ շիշ շամպանյա չբաց անես, ձեռ չենք վերցնիլ քեզանից:

Դեռ վաղ առաւոտից Վախօվախանը սկսել էր յուր չեռանդուն գործունեութիւնը: Ծաշի պատրաստութիւնը և հյուրերին զվարճանելու իրավունքը նրան էին հանձնված: Նա անդադար վազում էր դուրս, պատվերներ էր տալիս խոհարարին և կրկին վերադառնալով, զբաղեցնում էր Հալարլանին, վորի վերջին ժամանակվա տաղաքութիւնը տակաւին նրա համար անբացատրելի չէր:

— Ամեն բան դրուստ ե,—խոսում էր մոսիոն հալերեն, ռուսերեն, ֆրանսերեն և վրացերեն բառերից կազմած մի ինքնուրույն բարբառով,—մեծ իշխանն էլ վոր գա, ամթով չենք քնալ: Մեկ պո՛վար ե, վոր գրաֆ Նավալիսինն էլ չունի: Մալոնեղ ե պատրաստում, մալո պոչտենիս:—Ել, Պետրե,—գարձավ նա նույն պահին ներս ծտնող սպասավորին,—ասա Անդրեյին, վոր այն իմ բերած որագույն մի լավ սիրուն կտրի միջից, հասկանա՞նք նա, այ այնպես:

Պատվերը ավելի պարզ կացուցանելու համար նա աջ ձեռը շեղակի քսեց ձախ ձեռի փիղի մինչև բաղուկը, շարունակելով.

— Թող փորոտիքը հանի, սառը տեղ դնի, լեւ կդամ ու կասեմ, թե ինչ պիտի անի:

Սպասավորը մի հեգնական ժպիտ լերեսին դուրս չեկավ:

— Ախ, շենի ճիրիմե, մի մտիկ արեք եմ,— դարձավ մոսիոն Հալարյանին, ցույց տալով դարդարուն հյուրասենյակը,— սալոն չի, բաս ի՞նչ է, փխոս, փխոս ու փխոս:

— Ինչո՞ւ փխոս:

— Ոոոո, մոն շեր ամի, արքայութիւնը առանց հրեշտակի. կլի-նի՞... Ի՞նչ սաղ կդա ալդ փափուկ խալիներին, հապո՞... աղունակի վրտներ: Չե՞, սճւտ եմ տսում:

Հալարյանը ժպտաց: Վախվախյանի ասածը, թեև կողմնակի, համապատասխանում էր նրա մտածմունքին: Նա արդեն գիտեր Մարիամի և Ռուբենի դուրս գալը իրենց հորեղբոր տնից: Այս իրողութիւնը նախ տխրեցրեց նրան. ի՞նչպես կարող է այսուհետև տեսնել որիորդին: Բայց չեք խամացավ, վոր Ռուբենը համարյա հետին տղքատության մեջ է, վոր Մարիամը զրկված է ոժիտից, մի նոր հույս ծագեց նրա մեջ: Այո, հպարտ որիորդը ալժմ կմեղմանա, չքավորի համար հարստության հրապուշտը մեծ է: Նա կխոնարհվի, անպատճառ կխոնարհվի:

Ներս մտավ Թաթոսը և հանձնեց Սադափյանի նամակը:

— Խիստ վաղ և շնորհավորում, ա՛յ,— գոչեց մոսիո Վախվախյանը ծաղրաբար, կարծելով, թե նամակը տարեդարձի առթիվ է գրված:

Հալարյանը կարդաց նամակը, աչքունքը թթվացրեց, հանդարտ բարձրացավ տեղից, դուրս չեկավ և անձամբ Սադափյանի ծուռաչին ասաց, թե պատասխանը վաղը կտա:

Ներս մտավ իշխան Սահարունին, ջրալի շրթունքի վրա խաղացնելով մշտական լեւ սիրալիւր և լեւ հեգնական ժպիտ: Նրա հետեից լերեցավ Ախշարումյանի բարձր հասակը, այնուհետև փոքրահասակ, սուր քթով ու ծնոտով, կոլորակ աչքերով մի շիկահեր մարդ, վորի տարիքը վորոշել անկարելի էր:

«Յեկնով»,— արտասանեց մոսիո Վախվախյանը, քթի տակ մըթմըթալով:

— Աստված, լերկինք վկա, ուժով բերեցին,— ասաց փոքրահասակ մարդը, յուր անկոչ դալուստը արդարացնելով տանտիրոջ առաջ: «Բեղզադն ես, վոր ընկերդ չկա», մտածեց մոսիո Վախվախյանը: Փոքրահասակ մարդը, վորին Դիգո ելին անվանում, հայտնի լեր

հարուստներին, մանավանդ — ամուրիներին, շրջանում այնքան, վորքան և՛ մոսիո Վախվախյանը: Մի ժամանակ նա ծառայել էր մաքսատանը: Նիկողայոս Սաղափյանին վերաբերող մի տարաբախտ դեպք պարզեց մաքսային վարչությունից զեղծումների մի շարք, վորոնց մասնակցել էր և՛ Գիգոն: Նրան վնասեցին և այժմ նա պարապում էր մանր-մուշր կապալներով, կատարում էր առևտրական միջնորդի դեր, անդամ էր մի բանկային մասնաժողովին, սիրում էր ընկերանալ զիրք ունեցող մարդկանց, նրանց հետ թողթ խաղալ: Մի խոսքով այն մարդկանցից էր, վորոնց մոսիո Վախվախյանը «ամեն տեղ քրիթ խող» էր անվանում: Այս պատճառով մոսիոն ատելով ատում էր նրան և փոխարենը միշտ ծաղրվում նրանից:

— Եհե՛, այստեղ միս, — գոչեց Գիգոն, հեգնելով Վախվախյանին, — առանց իշի գլխի հարսանիք չի լինիլ:

— Վոնց վոր առանց մկան պարկուռ չիլ հարսանիք չի լինիլ. — խոսքի տակ չմնաց Վախվախյանը, և նույն վայրկյանին սովորական հազը բռնեց նրա կոկորդից:

Հինգ ամուրիներ ճաշի նստեցին նոր կահավորված, մաքուր, լուսավոր սեղանատանը: Խոսակցությունը պատում էր Հալաբյանի բնակարանի վերանորոգության մասին: Իշխան Սահարունին գովեց նրա վարմունքը, վոր սկսել է «տնային կյանք» վարել, մինչև անգամ համբուրեց ճակատից: Հալաբյանը չէր հավատում նրա անկեղծությանը: Նատալիային չուր ընկերով «վզին կապելը» իշխանը դարձրել էր չուր համար մի լուրջ խնդիր: Սոփիոն հանգիստ չէր թողնում նրան, և նա կամենում էր մասամբ վճարել այն «փոքրիկ ձեռապարտքերի» փոխարենը, վոր ստեպ-ստեպ առնում էր Նիկողայոս Սաղափյանից:

Ծաղը ուրախ անցավ: Սահարունին խոսում էր ամենքի վերաբերմամբ, բացի Հալաբյանից: Մոսիո Վախվախյանը և Գիգոն միմյանց ծաղրում էին: Փոքրիկ մարդը խոսում էր այնքան արագ, վորքան արագ-արագ փակվում ու բացվում էին նրա աչքերի կողպերը:

— Տը տը տըր, տը տը տըր, — ծաղրում էր նրա շուտախոսությունը մոսիո Վախվախյանը, — տո դադար չիս տալու եղ կոտրած բարարանիդ:

Ախշարումյանը կենացներ էր առաջարկում: Վիթխարի ամուրին հիացած էր Հալաբյանի ճոխ և շքեղ ճաշով, ուտում էր այնպիսի ազահուսթյամբ, վոր, կարծես, գրագ էր չեկել: Նրա ամուր և լայն կզակի մեջ պես-պես համադամ խորտիկների, խորոված և խաշած ձկնի պատառները հալվում էին, թրջվելով Կախեթի ընտիր գինով: Տասն անգամ նա անուշ արավ Հալաբյանի կենացը, չուրաքանչյուր բաժակից

հետո ձեռքը քսելով կրծքին և փորին: Կարծես վոզելից հեղուկի համար ճանապարհ եր հարթում: Կանանցից հետո, լավ ուտել-խմելը նրա վշանքի առաջին զվարճութունն էր, վոր խլում էր նրա չեկամտի մի պատկառելի մասը: Նա հարուստ ընտանիքի վորդի չեր, վայելում էր ծերունի հոր լիուլի հավատարմութունը: Ամեն տարի գնում էր արտասահման և վերադառնում էր նորոգված ճաշակով: Ստամոքսի կատարը ունեցողներին ծաղրում էր, ինչպես և ծաղրում էր այն մարդկանց, վոր իրանց կշանքում «մի ազգի կանանց են ճանաչել»:

Յերը բոլոր բարեկամական կենացները վերջացան, Գիգոն առաջարկեց յուրաքանչյուրին խմել «յուր ընտրածի» կենացը: Նա ինքը միանգամից դատարկեց բաժակը և խփեց սեղանին:

— Մարսել—Պոլիս, Վիեննա—Փարիզ,— գոչեց Ախշարումյանը, չորս բաժակ իրարու չետեից դատարկելով:

Հալաբյանը զզվանքով հրաժարվեց այդ «կենացից»: Իշխանը աչքով արավ մոսիո Վախվախյանին: Վերջինը նույեց տանտիրոջը, քերանը սրբեց, հաղեց, դուրս վաղեց և իսկուչն վերադարձավ: Նրա չետեից մտավ սպասավորը, մի ձեռում բռնած մի սկուտեղի մեջ հինգ վարդածև գավաթներ, մյուս ձեռում թաց անձեռոցիկի մեջ փաթաթած մի շիշ:

— Ջան, ջան, մոսիո Վախվախյան,— գոչեց Ախշարումյանը:

Մոսիո Վախվախյանը հանդարտ լցրեց գավաթները շամպանիայով, այնպիսի խորհրդավոր դեմքով, վոր, կարծես, կրոնական սրբագործութուն էր արածը: Հանկարծ լավեց Գիգոյի կատվանման սուր ձայներ:

— Նեկտար ե և վոչ գինի՛ր...

Իշխանը լուցրեց նրան և, տեղից բարձրանալով, գոչեց.

— Առաջարկում եմ այս բաժակը այս տան ապագա տանտիկնոջ կենացը, հուռն...

Նրան ձայնակցեցին Գիգոն և Վախվախյանը:

— Կարելի՞ չե հենց այժմ իմանալ մեր հարգելի տանտիկնոջ անունը,— ասաց Ախշարումյանը:

— Խմի՛ր, ժամանակին կիմանաս:

Բոլորը այդ կենացը խմեցին հարգանքով: Հալաբյանը դժկամակութուն ցույց տվեց իշխան Սահարունուն, նրա կատակը անվանելով անտեղի: Ախշարումյանը պահանջեց շամպանիայի չերկրորդ շիշը, հետո չերրորդը: Ծաշը ավարտվեց: Զվարճացած հյուրերը անցան հյուրասենյակ: Թուղթ խաղալ վոչ վոք չկամեցավ: Հալաբյանի հրամանով սպասավորը բերեց մի շիշ «բենեդիկտին», և հյուրերը սկսեցին իրանց Վոկորդը մաքրել արբանայրերի հնարած անուշ հեղուկով:

Մոսիո Վախվախյանը քիչ եր խոսում, շատ եր հագում և փոքր ինչ տատանվում եր վոտքի վրա: «Նեկտար ե և վոչ գինին» ամենից շատ աղդել եր փոքրիկ Դիգոյի վրա: Նրա առանց այն ել թոթով լեզուն բռնեը շփոթում ելին: Նա չուր հարգանքն ու սերն եր բացատրում Հալաբյանին և իշխան Սահարունուն:

Ախշարումյանի սև ու խոշոր աչքերը պլպլում ելին, թշերը ուռել ելին, կարմրել, թվում եր, թե իսկույն պիտի կաշին տրաքվի և արյունը հոսի: Նա գոռում եր, մոսիո Վախվախյանի հետ կատակենը եր անում, Դիգոյին գնդակի պես շարտում եր այս ու այն կողմ, անհամեստ տկնարկություններ եր անում կանանց սեռի մասին, չքաշվելով թաթոսի ամոթխած և նոր սպասավորի լկտի հայացքներից: Նրա գաղանային կրքերը գրգռվել ելին:

— Վըվվվ, կենդանի-կենդանի կուտեմ,—ասում եր նա, ցուլց տալով պատին քարշ արած մի չուղաներկ պատկեր, վոք ներկայացնում եր ուսերը և կուրծքը բաց մի կին:

Հետաքրքիր մոսիո Վախվախյանը իշխան Սահարունիին մի կողմ հրավիրեց և հարցրեց.—ճվ ե պապա տիկին Հալաբյանը: Իշխանը խորհրդավոր կերպով ակնարկեց չուր քեռորդու անունը և խնդրեց վոչ վոքի չհայտնել «գաղտնիքը»: Դա նրա միջնորդության առաջին փորձն եր. շատ լավ գիտեր, թե ճվ ճվ, մոսիո Վախվախյանը գաղտնիքը պահելու սովորություն հունի: Մի րոպե չանցած մոսիոն «գաղտնիքը շնջաց Ախշարումյանի, հետո Դիգոյի ականջին:

— Ուրեմն ինչիս չշնորհավորենք,—գոչեց Ախշարումյանը:

— Վոչ, վոչ, հոգուտ մատաղ, մի ասեք, իշխանը հոգիս քնթիցա կհանի,—գողաչացրեց Վախվախյանը:

— Բայց ինչ պտուղ և գտե՛լ,—ծաղրեց Ախշարումյանը Հալաբյանի կարծեցյալ հարսնացվին,—Վիեննա լել չես տեսնի նրա նման գեղեցկուհի...

— Խը խը խը,—ծիծաղեց մոսիո Վախվախյանը, շաքարի պես հալվելով:

Իշխանը Հալաբյանին մի անկյուն քաշած, պախարակում եր ամուրի մարդու կյանքը: Նա ինքն ուրախ կլիներ չուր հողնած վոսկորների հանգստություն տալ ընտանեկան հարկի տակ, բայց արդին ուշ ե և նյութական դրությունն ել չի ներում: Ով կարողություն ունե, հիմար ե, վոք փախչում ե այդ խաղաղ կյանքից: Հալաբյանը ձևած կտրած և ընտանիքի վլուխ լինելու համար, Նա պետք ե ամուսնանա, նա ուզում ե ամուսնանալ, իշխանին վաղուց ե հայտնի նրա տրամադրությունը: Խոմ կատակով հառաջարկեց այն կենացը, խոմ իշխանը

գիտե, թե Հալաբւոյնը ում վրա աչք ունի: Այո, Նատալիան հրաշալի աղջիկ է, նմանը չկա ամբողջ Թիֆլիսում:

— Իշխան, — ընդհատեց, վերջապես, նրա խոսքը Հալաբւոյնը, — չեթե հարգում ես քրոջդ աղջկան, թող այդ խոսակցութիւնը, ամոթ է:

— Ինչպէս, դու կարծում ես, վոր արժանի՞ չես նրան, — արտասանեց իշխանը խորամանկութեամբ, — վախենում ես, վոր կմերժեն: Ոո, բայց չես վճռուել եմ: Յետ կաշխատեմ, իսկի մի վախենալ, գլուխս կտամ քո խաթրու ու բանդ կգրաստեմ:

Հալաբւոյնը չեղեալ մի կողմ դարձրեց և հեռացավ: Որը մթնում եր: Ախշարումւոյնը մոտեցավ, բռնեց իշխանի թեից և ուժով դուրս տարավ: Փոքրամարմին Գիգոն, վոր թախտի վրա նստած, կիսաթմրած գրութիւն մեջ եր, քայլամոլոր հետեց նրանց:

Մոսիո Վախվախւոյնը տեսնելով, վոր տան տերը որոշտում է և առհասարակ տրամագիր չե խոսելու, աւամա հրաժեշտ տվեց, ասելով.

— Գնամ, տեսնեմ վոնց եմ մթնացնում որս, աչքս իրի որն ել...

Հալաբւոյնը առանձնացավ ննջարանում: Նրա գլուխը պտտում էր, վոչ աչքան ըմպելիքներից, վորքան հշուրների աղմուկից, անկարգ-անկանոն խոսակցութիւններից: Այսպես, ուրեմն, մի անգամ ևս նա կատարեց նրանց հաճույքը: Այդ կլինի վերջինը: Յերբեք, չերբեք նա չուր տունը չի դարձնիլ անմիտ խնճուկների, անվաշիլ կատակների, կեղտոտ սրախոտութիւնների հանդիսարան:

Նա վաղը և չեթ կգտնի չուր ընտրածի ընտկարանը, իբրև աղնիլ մարդ արձակ-համարձակ կտռաջարկի չուր ձեռքը: Նա հարուստ է, Մարիամը աղքատ: Նա ամեն ինչ կգոհի Մարիամի համար, չեղբորը կուղարկի արտասահման, հոր և մոր գերեզմանների վրա փառավոր արձաններ կկանգնեցնի: Նա կտա նրան լիուլի ազատութիւն չուր տանը, թող ծախսի — ինչքան ուզում է, թող ապրի — ինչպես ուզում է: Նա կդարձնի Մարիամին կանանց դասի դարդ, ընդհանուր նախանձի առարկա, միջոց կտա նրան ժամանակակից կրթված տիկնոջ դեր կատարելու հասարակութեան մեջ, կարոտներին ոգնելու, բարեգործական ընկերութիւններին մասնակցելու, ուսումնարան պահելու: Այո, մինչև անգամ մի առանձին ուսումնարան կհիմնի Մարիամի անունով:

Հետևյալ առավոտ նա զարթնեց ուրախ տրամադրութեամբ: Այնց չուր շուրջը, ամեն ինչ պատրաստ եր, ծառաները մաքրել ելին սենյակները, կահ-կարասին փայլում եր, թանգապին, փափուկ, խալտարդետ գորգերը մի դուրեկան ազդեցութիւն ելին անում մարդու վրա: Սպասավորը հրամանի չիւր սպասում, խոհարարը արդեն բազար

եր դնացել, ամեն ինչ պատրաստ եր մի բախտավոր կյանքի համար։ Հալաբյանը մի առանձին յեռանդ եր ստացել։ Վճռված ե, այսոր նա կգտնի Ռուբենին, կբարեկամանա, կառաջարկի լուր ոգնությունը։

Հանկարծ նա հիշեց, վոր խոստացել ե պատասխանել Սադափյանի նամակին։ Մարդը սնանկանում ե, այսոր կամ եզուց նրա անունը պիտի խաչտառակվի, ինչպես գրում ե։ Զպիտի՞ ոգնել նրան։

Խնդրած գումարը մեծ եր, և Հալաբյանը ընկավ մտառանջության մեջ։ Նա սկսեց քննել Սադափյանին առաջին անգամ իբրեւ մարդ և մի տարրինակ ուրախություն զգաց, գտնելով նրա անցյալում շատ արատներ։ Սադափյանը չեր, վոր խեղճ Մարգարովի տան կաջքը բազար հանել տվեց և պարտքի տեղ ծախեց։ Նա չէր, վորի պատճառով մաքսատան չերեք չիւնովնիկներ դատի տակ ընկան և պատժվեցին։ Հըմ, նա չէր, վոր պոլկովնիկ Խարազովի տասը հազարը աչքերը բաց կուլ տվեց, և խեղճ ծերունին կաթվածահար լինելով, մեռավ։ Վերջապես, նա չէր, վոր լուր հարազատ չեղբոր վորդիներին գրկում ե... Ե՛հ, վոր մեկն ասես։ Հիմա այդ մարդը կանգնել և ու աղաչում ե, վոր ուրիշները իրան ոգնեն։

— Թեկուզ խեղզվի, դրա պես մարդուն ոգնելը մեղք ե,— ավարտեց լուր մտածութենիցը Հալաբյանը և հանգիստ խղճով պատուեց ու դեն ձգեց Սադափյանի աղերսալի նամակը։

VIII

Նոր բնակարան տեղափոխվելու հետեյալ որից արդեն Ռուբենը հանձն առավ լուր պաշտոնը։ Իպրոցի տեսուչը, վոր նրա նախկին ուսուցիչն եր, ընդունեց նրան ուրախությամբ և խոստացավ մոտիկ ապագայում ավելի հարմար պաշտոն։

— Աշխատելու սիր ունեցողը,— ասաց նա,— չերեք քաղցած չի մնալ։

Իսկ Ռուբենը, կամա թե՛ ակամա, պետք և ունանար այդ սերը։ Նրա վճիռը հաստատ եր։ Վոչ միայն չհետևեց Մելիք-Բարսեղյանի խորհրդին, այլ և արհամարհանքով եր հիշում լուր հորեղբոր տունը։ Այն տունը, ուր նրա միակ քույրը աչքքան տարի բարոյապես տանջվել եր։

Բայց նրան անհանգստացնում եր մի հանգամանք— Մարիամի անորոշ տխրությունը։ Իզուր այն չերեկո, բժիշկը դուրս գնալուց հետո, նույնպես հետևյալ և չերրորդ որը, փորձեց իմանալ նրա հանկարծակի ալլալման պատճառը։

— Հինց աշնպես, սիրտս նվաղեց, — պատասխանում եր Մարիամը անվրդով։

Հակառակ լուր խոստմանը, բժիշկը Հեկավ նրանց մոտ, վոչ հետեյալ որը, վոչ հետո։ Ռուբենը նկատում եր, վոր Մարիամը Հե խոսում նրա մասին, մինչև անգամ խուլս ե տալիս անուշը հիշելուց։

— Զարմանալի չե, — ասաց մի անգամ չեղբայրը դիտմամբ, — Վասիլը, կարծես, մեղ բոլորովին մոռացել ե։

— Յերեի, զբաղված ե գործերով, — պատասխանեց քուրը ե ուրիշ վոչինչ Հավելացրեց, հակառակ Ռուբենի սպասածին։

Քրոջ արտաքին անտարբերութունը ավելի շարժեց չեղբոր հետաքրքրութունը։ Այլևս նա համոզվեց, վոր Մարիամը կեղծում ե, վոր նրա տխրության բուն պատճառը կապ ունե Մեիթ-Բերսեղյանի հետ։

Հաղիվ մի շաբաթվա ընթացքում Մարիամը կարողացավ կարգի բերել նոր բնակարանը։ Նա աշխատում եր առավոտից մինչև չերեկո անդադար։ Նա համարյա վոչինչ հասկացողութունն Հունեք տնային տնտեսության մասին — վոչ չեփել գիտեր, վոչ կարել, վոչ մինչև անգամ լվանալ։ Հարկավոր եր մի խորհրդատու, մի ղեկավար։ Յիվ նա ստիպվեց դիմել հարևան կանանց ոգնությանը։ Մեկը նրան սովորեցրեց հասարակ սուպ պատրաստելը, մյուսը հանձն առավ սովորեցնել շոր լվանալու չեղանակը։ Ֆիզիկական աշխատանքի ծանրության տակ ճնշված ալդ գոհնիկ կանաչք հոգով խղճում ելին նրան, վորի կրթված ձեերից, քնքուլը կազմվածքից արդեն գուշակել ելին նրա հարուստ ընտանիքի զավակ լինելը։

Ամենից ավելի ցավակցութուն եր ցուլց տալիս պառավ տանտիրուհին։ Ստեպ-ստեպ նա մտնում եր ներս, անկոչ հյուրի պես ե Մարիամին ձանձրանում չոր մանրակրկիտ հարց ու փորձով։ Ո՞վ ե, վճռեղացի չե, ազգականներ ունի՞, քանի՞ տարեկան ե, չմրբ ե ուսումը ավարտել ե ալին ե ալն։ Ալդ կինը, վորին Մելանիա Պետրովնա ելին անվանում, Մարիամին կասկածելի չեթվում չուր ղեղնադուլն դեմքի անհամեստ արտահայտությամբ, չուր հինալած մազերով, չուր պատկառելի հասակին անվաչել ազատ ե համարձակ շարժումներով։

Մի որ Մելանիա Պետրովնան, պատշգամբի վրա տեսնելով Մարիամին սամովարի մեջ ածուխ ածելիս, մոտեցավ։ Նա բռնեց որորդի ծնոտից, վերե բարձրացրեց գլուխը ե, նայելով նրա գեղեցիկ աչքերին, արտասանեց.

— Ի՞նչ սիրուն ես, ափսոս...

Մարիամը զգովանքով լերեսը շուռ տվեց և առանց մի խոսք ասելու, մտավ սենյակի, Լուսամտից նա տեսավ, վոր պառավը կանգնած նաչում է, մի խորամանկ և հրող ժպիտ լերեսին: Նույն լերեկո նա մուրհենին հայտնեց, թե ցանկալի կլիներ մի ուրիշ բնակարան վարձել:

— Ինչո՞ւ:

— Բեղ համար շատ հեռու չե, — թագցրեց նա իսկական պատճառը:

— Ինձ համար հոգս մի տնիլ: Յեթե ուրիշ անհարմարություն կա, այն սառ:

— Անհարմարություններ շատ կան, — պատասխանեց Մարիամը, և հանկարծ միտքը փոխելով, ավելացրեց. — Բայց ով կտա մեզ ամսական տասը ուրբելով սրանից ավելի հարմար բնակարան...

Հաճախ նա միայնակ նստում էր լեզրոր սեղանի մոտ և լերկար-լերկար ժամանակ մնում խորասուզված մտածումների մեջ: Մի քանի որվա ընթացքում նա դարձել էր դարմանալի նյարդալին: Անսովոր աշխատությունից հոգնած, նա լերբեմն գրգռվում էր ամենաչնչին բաներից: Յերեկը նա սրբում էր, մաքրում, մի կերպ կերակուր էր պատրաստում, լերեկոները վերցնում էր մի վորեկ գիրք և նստում լուսամտի առաջ: Նա չէր կարողանում մի քանի էջերից ավելի կարդալ: Շուտով նրա աչքերը պղտորվում էին, դուխը պատում էր, գիրքը ընկնում էր ծնկների վրա, և նա մնում էր անշարժ, արձանացած:

Մոտ լերկու շաբաթ էր անցել, Մելիք-Բարսեղյանը չէր լերեում: Ուրեմն իդուր չէր Մարիամը կասկածում, ուրեմն իդուր չէր, վոր բժշկի այն սառն «ընկերական» խորհուրդը այնքան սարսափեցրեց նրան:

«Նա ինձ չի սիրում, վո՛չ, չի սիրում, պնդում էր որիորդը, հուսահատված դալարելով չուր մատները, — լեթե սիրեր, այնպես չէր խոսիլ»:

Ինչ, նա վերավորական չէ համարում Մարիամի համար վերադառնալ այն տունը, վորտեղից համարյա արտաքսել են նրան: Միթե՞ այդ էր սպասում նա այդ մարդուց: Նա վախենում է և չքավորությունից. նա, վոր ինքը չքավոր է չգել և վոր այնքան պարծենում է չուր անցյալ չքավորությամբ: Նա առաջարկում է չուր ընկերոջը մի այնպիսի քալ անել, վոր վախել չե ամեն մի քիչ թե շատ ինքնասեր մարդով:

«Տեր աստված, տեր աստված, միթե չես խաբված եմ, — շշնջում էր որիորդը ստեպ-ստեպ, — միթե իդուր ելին իմ բարձր հույսերը նրա մասին»:

Տոն որ եր: Ռուբինը ազատ եր պաշտոնից: Նա լուր սենյակում զրազված եր մի գրութիամբ, վոր սկսել եր նոր բնակարան տեղափոխվելու լերկորդ որը և վորին նվիրում եր լուր ազատ ժամերը:

Մարիամը լուր սենյակում, փոքրիկ, անշուք թախտի վրա նստած, սպիտակ կտավից վարագույր եր կարում լեղոր սենյակի լուսամտի համար: Ամբողջ գործը բաղկացած եր լերեք կարեղներից: Յերկու որ եր նա տքնում եր և չեր կարողանում վերջացնել այդ հասարակ կարը: Նրա անվարժ ձեռները դողդողում էին, ասելը շարունակ ծակում եր նրա մատները:

Հանկարծ նա Ռուբինի սենյակից լսեց Մելիք-Բարսեղյանի ձայնը: Նա տկտմա մի ցնցումն դեաց, ձեռները թուլացան, կարը ընկավ ձեկների վրա:

— Ան, վերջապես, չեկամ, — դիմավորեց Ռուբինը բժշկին:

— Հաղիվ ժամանակ կարողացա գտնել, — գոչեց բժիշկը շունչը կտրված, — հավատացիր, վոր մի բույն ազատ ժամանակ չունեսի:

Նա շտապով հանեց ձեռնոցները, նստեց աթոռի վրա: Ռուբինը լուր ձեռագիրը դրեց սեղանի արկղիկը:

— Այդ ի՞նչ ես թագնում, — հետաքրքրվեց բժիշկը, — ինչպես տեսնում եմ, դու չե՛լ զրազված ես: Պարապիր, պարապիր, բույն թանդ ե: Բայց վճռե՛ղ ե... որիորդը: Յուր սենյակում: Հույս ունեմ, վոր առողջ ե: Հը՛մ, ասա տեսնեմ, կատարեցի՞ր խորհուրդս, գնացի՞ր հորեղորդ մոտ:

Ռուբինը գլխով բացասական պատասխան տվեց:

— Իդե՛ւր, — արտասանեց բժիշկը, գլուխը ցավակցաբար շարժելով, — բայց ի՞նչ պիտի անես, ի՞նչ ես մտադիր անելու:

Գուցե նա դեռ շարունակե՛ր լուր հարցումփորձը: Բայց Ռուբինը այն ձևով եր պատասխանում, վոր միանգամայն առիթ չեր տալիս լերկարաբանութիւն: Բժիշկը սկսեց պատմել այն բոլորը, ինչ-վոր արել եր լերկու շաբաթվա ընթացքում:

Նա արդեն ծանոթացել է Թիֆլիսի մի քանի ընտանիքների հետ, դեպք ե ունեցել հանդիպելու լուր արհեստակիցներին: Նա շատ նուրբ, շատ քաղաքավարի արհամարհանքով մի քանի նկատողութիւններ արավ վերջինների մասին: «Պրակտիկան» նրանց փչացրել է, թեոքիան մոռացել են, գիտութիւնը բոլորովին չեն հետևում, չգիտեն բժշկականութիւնը ինչ հսկայական քայլեր է անում վերջին ժամանակ:

— Յերեակայի՛ր, — շարունակեց Մելիք-Բարսեղյանը, հեգնաբար ժպտալով, — մեկը, անունը չեմ ուզում ասել, բժշկում է մի թոքախտ

ուհեցող հիվանդի, Հիվանդը իմ քաղաքակիցներիցս ե, հեռու ազգա-
կան եւ Յերեկ նրա մոտ ելի, պատահմամբ ծանոթացա այդ բժշկի
հետ։ Անուհն հայտնեցի և մի կողմ քաշելով, հարցրի ազգականիս հի-
վանդության մասին։ Խոսեցինք, վիճեցինք։ Ի՞նչ հայտնվեց. այդ մար-
դը աասը տարի չե բժշկութուն, և անուամ, անուհն ունե, լերեակալի՛ր,
լերեակալի՛ր, չգիտե լուծել հոշակավոր Կոխի բաքտերիտ-բացիլները։
Ահա ձեր Թիֆլիսի եսկուլյապները, կարելի՞ բան և այդքան տղետ լի-
նել և անուհն ստանալ։

Հետո բժիշկը խոսեց չուր բնակարանի մասին։ Խիստ աղմկալի
տեղ ե վարձել. ստորին հարկում հյուաններ են բան անում, վերին
հարկում գիմնադիսաններ են ապրում, ամբողջ ոըը պարում են ու լեր-
գում։ Վերե աղմուկ, ներքե աղմուկ, աջ ու ձախ հարևաններով լի։

— Մի խոսքով, ինձ չեն թողնում, վոր պարապեմ։ Իսկ դու գի-
տես, առանց պարապմունքի, չես մեռած եմ։ Այժմ զբաղված եմ մի
թեթե գիտական. աշխատությամբ։ Գրում եմ մի բրոշյուր հասարակ
լեզվով։ Թեման շատ հետաքրքրական ե—«մանուկների եպիդեմիական
հիվանդութունների դանադան տեսակները, նրանց դեմ գործածելի
բացիոնայ միջոցները և առհասարակ ընտանիքների գիդիկնական-
սանիտարական պայմանների անհրաժեշտ կարեորութունը»։

Նա հիշեց մի լրագրի անուն, ուր առաջ պիտի տպվեր այդ գիտ-
ական աշխատութունը և հետո առանձին գրքուկներով հրատարակ-
վեր տժան գնով հասարակ ժողովրդի մեջ տարածելու համար։ Ռուբե-
նը ակնարկեց, թե մի քանի ոը առաջ այդ լրագրում կարդացել ե
«բժշկապետ Մելիք-Բարսեղյանի» մասին բեկլամի պես մի բան։

— Այնքան կովել եմ խմբադրի հետ, վոր լերեակալել չես կա-
րող,—պատասխանեց բժիշկը, սակավ ինչչփոթվելով։—Հիմարութուն,
ուրիշ վոչինչ, դու գիտես, վոր չես բեկլամներից փախչում եմ...

Դռների ձայնը ընդհատեց նրա խոսքը։ Մյուս սենյակից դուրս
լեկավ Մարիամը։

— Մեղավոր եմ, զգում եմ,—գոչեց բժիշկը, վոտքի կանգնելով,
—ինչ արած, բժիշկի արհեստը ծանր ե, պատասխանատու չե։

— Իսկ չես կարծում ելի, վոր ինձ ել հիվանդներից մինը կհա-
մարեք,—արտասանեց Մարիամը մի առանձին, տեսովոր լեղանակով։

— Ի՞նչ, դուք հիվանդ եք։ Նո՛ւ, Ռուբեն, դու ինձ ինչո՛ւ լա-
րեցիր, այդ ներելի չե, միթե չելի՞ր կարող հայտնել։ Թուլլ տվեք, ո-
րիորդ...

Մարիամը թուլե ժպտալով, ձեռը խլեց բժշկից և նստեց սեղա-
նի մոտ։

— Վոչ, դուք կատակ եք անում, դուք առողջ եք, — ասաց բժիշկը, ավելի շփոթվելով որիորդի վարմունքով և համարելով նրա ժպիտը մի տեսակ հեղեղություն:

Այնինչ՝ վայրկենաբար Մարիամը փոխվեց: Նա բժշկի շփոթմունքը այլ կերպ հասկացավ:

«Միթե լիս սխալվում եմ», անցավ նրա մտքով:

Յեւ սկսեց լարված ուշադրությամբ հետեւել բժշկի խոսակցությանը, գիտել բոլոր նրա շարժումները: Մինչդեռ բժիշկը զսպելով շփոթմունքը, կրկին դարձավ ազատ, համարձակ: Նա պատմեց մի քանի նորություններ, գովեց մեկին, պարսավեց մի ուրիշին:

Առհասարակ բժիշկը խոսում եր շատ ընդհանուր, շատ հասարակ բաների մասին: Նա վոչ մի խոսք հասաց, վոչ մի ակնարկություն հարավ Ռուսիայի և Մարիամի ներկա կացության մասին: Նա չհիշեց մի վորեւեղեղ անգամ, վոր կարող եր կապ ունենալ այդ հանգամանքի հետ: Նա թաղցրեց և՛ յուր այցելությունը Սաղափյաններին:

Մարիամը ուրախ եր—չգիտեր ինչու, ժպտում եր, ծիծաղում եր—չգիտեր ինչից գրգված:

Բանի մի վայրկյան նրանք լռեցին: Բժիշկը, իբր թե ճակատը տրորելով, ձեռով ծածկեց աչքերը և մատների արանքով զննեց Մարիամին:

«Ինչպես աղքատությունը վատ ե ազդում գեղեցկության վրա», — ասաց նա մտքում, տեսնելով որիորդի ձեռների վրա անսովոր աշխատանքի հետքերը:

Այդ քնքուշ ձեռների թափանցիկ, բարակ կաշին կոշտացել եր, քիչ սևացել, մատների ծայրերը բիրդացել եին, չեղունգները, կարծես, զրկվել եին իրանց նախկին հալելանման փայլից: Յեւ այդ՝ ընդամենը լերկու շարաթվա ընթացքում:

Բժիշկը ցավեց որիորդի չերիտասարդության, գեղեցկության, կրթության մասին: Միթե նրանց վիճակված ե մաշվել աղքատության մեջ: Դա խղճի խալթոց չեր, դա և՛ մի ոտար, անտարբեր մարդու սառն կարեկցություն չեր, այլ բուն չեսականության զգացմունքը:

Չե՞ վոր նա սիրում եր Մարիամին յուր տեսակի, չե՞ վոր չերազում եր կապել նրա հետ յուր ապագայի խնդիրը: Ինչո՞ւ նա ստիպված ե ձեռք վերցնել յուր փափայած ծրագրից, ինչո՞ւ Մարիամը աղքատ ե, բոլորովին աղքատ:

«Ինչո՞ւ գոնե լիս հարուստ չեմ»:

Բայց մի՞ժամ, այս դրության մեջ... Յերբեք, չքավորության հետ կատակ անել չի կարելի: Կանցնի ամուսնության առաջին ամիսը,

ամիսները, վերջապես, շատ-շատ տարին, նրանք կսթափվին արբե-
ցությունից, և առորդա անողոք պահանջները կսկսեն թունավորել
նրանց կյանքը: Այն ժամանակ գնա ու ապրիր: Դեռ չերկուսով վո-
չինչ, հետո, զավակները, չպիտի նրանց մեծացնել, կրթութուն տալ:

«Կարճը եմ չես նրանց աշակես պահել, ինչպես իմ հայրս և ինձ
պահել, տկլոր, քաղցած: Վոչ, վոչ, Մարիամը չերկտա չի, նա կաշող
և մտածել այս բոլորի մասին, նա պետք և մտածի...»:

Յերկու շաբաթվա ընթացքում կռվված և պատրաստված խոր-
հրդածությունների այս շարքը մի վալրկյանում կրկին անցավ բժշկի
մոտքով: Նա թեթև հառաչեց, կարծես, ազատվելով մի ճնշող ծանրու-
թյունից:

Մարիամը լուռ եր: Խոսում եր Ռուբենը կցկտուր: Յերեքն ել
զգում ելին, վոր խոսակցութունը չե տաքանում, վոր մեջտեղ կա մի
սև թել, վոր նրանց մտքերի հաղորդակցութունը արվեստական և
դարձնում:

Վերջապես, բժիշկը նույն ժամացույցին և իսկույն վոտքի վեր-
կացավ: Նա ստիպողական գործ ունի, «ցավում ե», վոր չի կարող
չերկար նստել:

Փողոց դուրս գալով, նա ագահությամբ չուր թոքերը լցրեց ա-
դատ ողով: Փոքրիկ ընակաբանի ցածր առաստաղը, Մարիամի թախ-
ծալի դեմքը, Ռուբենի ակներև անփութությունը դեպի չուր ընկերը,
այս բոլորը ծանր ազդեցութուն ելին գործել նրա վրա: Նա չեր կա-
րող միանգամից, խստորեն ընդհատել չուր հարաբերությունները
նրանց հետ, այդ կլիներ արդեն վերին աստիճանի կոպիտ: Իսկ նա
չեր կամենում կոպիտ լինել: Պետք և հետզհետե, փոքր առ փոքր հե-
ռանալ: Ահա ինչու, «ցտեսութուն» ասելով, նա ավեց Ռուբենին չուր
մանրամասն հասցեն և խնդրեց այցելել:

Այդ ուր մինչև չերեկո Ռուբենը և Մարիամը չխոսեցին Մելիք-
Բարսեղյանի մասին: Նրանք ճաշեցին շտապով, հատհատ անկապ,
աննշան խոսքեր փոխանակելով: Թվում եր, վոր չերկուսին ել միև-
նույն միտքն և գբաղեցնում, վոր չերկուսն ել ցանկանում են բացա-
տրել այդ միտքը, բայց միմյանցից քաշվում են:

Յերկու ու անցած Ռուբենը իրիկնադեմին տուն վերադառնալով,
Մարիամին տեսավ պատշգամբի վրա: Որիորդը մի սյունից մինչև
մյուսը մի պարան կապած, փռում եր լվացած շորերը: Նրա թևերը
ծալած ելին մինչև արմուկները, թանձր մազերը բարակ թաշկինակի
տակից սփռվել ելին ուսերի վրա:

Մի ծանր զգացմունք ճնշեց Ռուբենի սիրտը, չեր տեսավ քրոջ

կարմրած և սապոնի բիծերով ծածկված բազուկները: Առաջին անգամ նա զգաց աղքատության դառն լուծը: Միթե այդպիսի ապագա լերազեղ եր նա չուր սիրեցյալ քրոջ համար: Նա զսպեց չուր հառաչանքը, շտապեց ներս: Վառեց կանթեղները, հակառակ Մարիամի ընդդիմության ինքը սամովարը դրեց, հետո սկսեց ոգնել քրոջը, խոհանոցից կեղտոտ ջուրը գավիթ տանելով:

Չաչ խմելուց հետո նա նորից նստեց պարապելու, չկարողացավ միաքը կենտրոնացնել: Նա կանչեց Մարիամին չուր մոտ: Յերբ քույրը լեկավ նստեց, անցավ աչն բոպելական լուսթյունը, վոր սովորական և չերկու մոտերիմների լուրջ և ծանր խոսակցությունից աճաջ:

Սկսելով շատ հեռվից, Ռուբենը շատ զգուշ, շատ նուրբ կերպով ակնարկեց Մելիք-Բարսեղյանի մասին: Սակայն այդ զգուշությունը հուզեց Մարիամին:

— Ինչո՞ւ լես տանջում ինձ քո հետաքրքրությունով,— գոչեց նա հանկարծ, մի դառն խստությամբ, վոր հատուկ չեր նրան,— միթե ամեն ինչ հայտնի է՞ քեզ, միթե չգիտե՞ս ինչ եմ զգում լիս...

— Մարո, լես չերբեք չեմ ձգտել իմանալ աչն, ինչ-վոր դու կամեցել ես ինձանից թագցնել, չերբեք չեմ ուղեցել կաշի քո սրտի գողտնիքներին: Բայց, լսի՛ր, լես չեմ կարող սառնարչուն մնալ, քանի տեսնում եմ քեզ այդպես փոխված, այդպես տխուր: Ինձ համար պարզ է, վոր մի միտք, մի ծանր վիշտ, քեզ որից որ, ի՛նչպես ասեմ, հալում է...

Մարիամի նշմարելի կերպով նիհարած աչտերը կարմրեցին: Անցավ մի քանի վայրկյան: Նա վերջին ճիգն արավ պահելու չուր սառնությունը և... պատմեց աչն բոլորը, վոր վաղուց արդեն զգում եր Ռուբենը և աչն բոլորը, վորի մասին միայն կասկածում եր կամ միանգամայն չգիտեր: Նա վաղուց եր կամենում հայանել, բայց կարծում եր, վոր Ռուբենը կվշտանա, կհանդիմանի: Նա մեղավոր չի, նա չկարողացավ զսպել ինքն իրան: Սկզբում Մելիք-Բարսեղյանը դուր չեկավ նրան իբրև խելոք, կրթված, զարգացած լերիտասարդ: Նա հարգեց նրան: Ռուբենի գովասանքները ավելի զորացրին այդ հարգանքը, բարձրացրին բժշկին Մարիամի աչքում:

— Յես ուրախությամբ ելի լսում քո գովասանքներդ, լես ցանկանում ելի, վոր դու ավելի հարգես, ավելի սիրես նրան: Յերբ նա թիֆլիսից հեռացավ վերջին անգամ, լես մի տեսակ տխրություն զգացի: Կարծես, ինձ մի բան պակասեց: Դիլիջանում նրան հանդիպելով, չկարողացա ուրախությունս թագցնել: Դու նկատեցիր: Մի հարցնիլ, թե ինչպես նա որից որ գրավեց ինձ, մի հարցնիլ, լես

ինքս ել չգիտեմ: Առաջ նա ինձ հետ սառն եր. չես տանջվում ելի, չես վիրավորվում ելի, միևնույն ժամանակ, սրտով ավելի ու ավելի մոռոհնում ելի նրան: Յես չեյի հուսահատվում, զգում ելի, վոր նա ինձ սիրում ե, իսկ չես... Ո ո ո, չեթե իմանայիր ինչքան գրավիչ եր մանավանդ այն ժամանակ, չերբ վիճում եր քեզ հետ: Յես ապահու-թյամբ ելի լսում նրա տատանքերը: Ինձ թվում եր, վոր նրա նման մի ուրիշ մահկանացու չկա վոչ խելքով, վոչ սրտով, վոչ զարգացումով և վոչ չուր արտաքին տեսքով: Նրա շարժվածքը, նրա ձայնը, մինչև անգամ հագուստը ինձ համար մի առանձին հրապույժ ուներ...

— Ահա մի մարդ, — շարունակեց Մարիամը, մի վայրկյան լու-լուց հետո, — ահա մի մարդ, տառնում ելի ինքս ինձ, վոր կարող ե սի-րել այնպես, ինչպես հարկավոր ե, ինչպես չես եմ չերեկայում, սի-րել ամբողջ սրտով, անհաշիվ սիրով: Նրա անցյալը, նրա կյանքի դժվար պայմանները, ինձ թվում եր, վոր չերաշխավոր կարող եմ լի-նել նրա հավատարմութան: Յես տառնում ելի, նա չի խաբիլ վոչ ինքն իրան, վոչ ուրիշին, վոչ մանավանդ ինձ... Նա բոլորի մարդ չե, նա շուտ վոգեկորվող և շուտ սառչողներից չե, չերբ հափշտակվեց, չերբ սիրեց, կմնա հավատարիմ: Այսպես ելի մտածում նրա մասին: Շատ կարելի չե չես չհավատայի ինքս ինձ, իմ զգացմունքներին, չեթե չտեսնեյի նրա կողմից խրախուսանք: Լսեմ ես, Ռուբեն, նա չերդվել ե ինձ սիրել հավիտյան, այո, շատ անգամ, շատ անգամ...

Ռուբենը ակամա մի ցնցումն զգաց: Այլևս ավելորդ ելին Մա-րիամի խոսքերը: Պարզվեց այն հանգամանքը, վորի մասին թեև կա-կածում եր, բայց համոզված չեր — բիշկը սիրո խոստումն ե արել:

— Իսկ այժմ, այժմ, — կրկնեց Մարիամը, չերեսը կսկիծից թե ա-մոթից ծածկելով, — չես տեսնում եմ, վոր խաբված եմ:

Նրա դժգունացած շրթունքները աշնանային տերևների պես դո-ղում ելին, նա ցնցվում եր ամբողջ մարմնով: Նա մի անգամ ես ճիգն արավ իրան զսպելու, սակայն իզուր... Նրա թուլացած գլուխը թեք-վեց սեղանին, և լսվեց մի խուլ, խեղդուկ հեծկտանք:

Յեով Ռուբենի վոչ մի մխիթարական խոսքը չամոքեց նրա վըշ-տարեկ սիրտը, և Ռուբենի վոչ մի հորդորը չգաղարեցրեց նրա ար-տասուքը: Միտը դառնությամբ լի չերիտասարդը մերթ համոզում եր, մերթ խնդրում, ձգտելով շարժել քրոջ սառն խոհականութունը, վոր այդ բոլորին թմրել եր բուռն զգացումների ճնշման ներքո: Նա ինքն իրան մեղավոր եր զգում Մարիամի առաջ: — Չե՞ վոր նա խրախուսել ե չուր քրոջ սիրուն, չե՞ վոր նրա գովասանքները ազդել եմ քրոջ կուսական անարատ սրտի վրա: Ի՞նչ, միթե նա սխալվեմ եր: Միթե՞

Մելիք-Բարսեղյանի մասին նա ծուռ և սխալ գաղափար և ունեցել
տասներկու տարի շարունակ։ Միթե՞ նա այդքան միամիտ, կույր և
գլուրահավատ և չեղել։ Վոչ, դժվար է, դժվար է հավատալ այդ մար-
դու անաղնվությանը, դժվար է, անկարելի չե, վերջապես դառն և։
Իսկ չեթե՞ ճիշտ է, չեթե՞ Մելիք-Բարսեղյանը մի անսիրտ, անգութ,
մի լեռամուկ մարդ է։ Յեթե՞ նա մինչև այսօր դիմակ է ունեցել չերև-
սին։ Յեթե՞ Մարիամը չի կարող մոռանալ նրան, ատել, արհամարհել։
Այն ժամանակ...

IX

Հակառակ Ռուբենի սպասածին, հետևյալ որը Մարիամը ավելի
հանդիստ էր չերեում, քան չերբ և և չեղել էր վերջին դեպքերից հե-
տո։ Ասորյա պարապմունքը նա սկսեց մի առանձին չեռանդով։ Չալի
ժամանակ ասաց Ռուբենին, թե տնային տնտեսությունը նրան չի
բավականացնում, թե ցանկանում է մի ուրիշ գործով ել պարապվել։

— Ի՞նչ գործով, — հարցրեց Ռուբենը։

— Կար կարելով։

— Դ՞ձե, կար կարելով։

— Այո, ի՞նչ զարմանալի բան կա։

— Վե՛րջին։ Բայց դու չգիտես կարել, դու ասեղ բանացնել ան-
գամ չգիտես։

— Կոսվորեմ, արդեն վճռել եմ սովորելու։ Յես մի ծանոթ որի-
որդ ունեմ, վոր կար ու ձեի վարժուհի չե։ Կդիմեմ նրան, կխնդրեմ,
վոր ինձ դաս տա։

Ռուբենը հակառակեց։ Առանց այն ել Մարիամի տնային գոր-
ծերը ծանր են, ուրիշ պարապմունքի չետեից ընկնելը առ այժմ ա-
վելորդ է։

— Յերբեք ավելորդ չե, — պնդեց Մարիամը։ — Յես ազատ ժա-
մանակ շատ ունեմ, այժմ տնային գործերը հեշտացել են ինձ համար,
ցերեկները միքանի ժամ ձեռներս ծալած նստած եմ։ Այդ ինձ համար
անտանելի չե։

Այդ խոսքերի մեջ Ռուբենը զգաց քրոջ հաստատամտությունը։
Նա իսկապես ուրախ էր Մարիամի մտադրությունը, ուրախ էր, վոր
նա գիտե արհամարհել ամեն մի նախապաշարմունք, մոռանալ լուր
փարթամ անցյալը և գնալ մի հասարակ արհեստավոր դառնալ։ Բայց
և այնպես նա ընդդիմացավ, և ընդդիմացավ լուր այն պատճառով, վոր
խնայում էր քրոջ առողջությունը։

— Դու կարող ես մի ուրիշ գործ ընտրել, մի ավելի հարմար գործ, — ասաց նա,

— Ի՞նչ կարող եմ անել, ասա տեսնեմ, ի՞նչ, վարժուհու թշնամի։ Դրա համար առանձին պատրաստութուն ե հարկավոր։ Իսկ չեա ինչ վոր սովորել եմ գիմնադիպուս, մոռացել եմ։ Վերջապես, վարժուհի դառնալու սեր չունեմ։ Ուրիշ ի՞նչ ե մնում։ Ի՞նչ են սովորեցրել ինձ, վոր անեմ, միջանի ֆրանսերեն ֆրագնեթ, պարեթ, միջանի կտորներ ածեթ դաշնամուրի վրա։ Անպետք բաներ։ Վոչ, Ռուբեն, արգելք մի լինիլ ինձ։ Յես կսովորեմ կար անելը, գոնե չեթե ուրիշների համար ել չկարեմ, քեզ ե ինձ համար ուրիշներին չենք դիմիլ։

Յերկու որ անցած Մարիամը դնաց չուր ծանոթ վարժուհու մոտ։ Վերջինը նախ կատակի տեղ ընդունեց նրա առաջարկութունը, հետո դարմացավ, չերը Մարիամը կրկնեց չուր խնդրը լրջորեն։

— Հոգիս, քեզ զրկեթ եմ, — գոչեց նա, ձեռը ձեռին խփելով, — հոգիս, դու աղքատ ես։

— Թողնենք այդ։ Հանձն առնեմ ես ինձ դաս տալ։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, ուրախութունով, ուրախութունով։

— Պայմանը։

— Յեթե պայմանի մասին կխոսես, ինձ կվիրավորես, ինձ համար վոչինչ չարժե իմացածս քեզ սովորցնել։ Հոգիս, մոռացեթ ես, ինչքան մենք ըլլորս քեզ սիրում ելինք ուսումնարանում։ Հոգիս, այդ ի՞նչ դժբախտութուն ե պատահել քեզ։

Յերկար ախուլախից հետո, վարժուհին վերջապես վճռեց, վոր Մարիամը այցելե նրան շաբաթական չորս անգամ, կեսորից հետո։

Մարիամը հետևյալ որից սկսեց դասերը։ Նա գնում եր վարժուհու մոտ միայնակ։ Յերբեմն միայն Ռուբենը նրա հետ դուրս եր դալիս ե մինչե կես ճանապարհ ուղեկցում։

Մի անգամ Մարիամը տուն վերադառնալիս, չերը փողոցի մի մայթից մյուսն եր անցնում, հանկարծ մի լանդո անցավ նրա առաջով։ Նա գլուխը բարձրացրեց ե տեսավ որիորդ նատալիային չուր մոր հետ նստած։ Հանդիպումը այնպես եր, վոր նրանք ես անշուշտ պետք ե տեսնելին նրան։ Մարիամը գլուխը քաշ գցեց, խուլս տալով նրանց հայացքից, ե շտապով անցավ։

Մի ուրիշ անգամ նա տեսավ Մելիք-Բարսեղյանին, վոր կառքով անցնում եր պրոսպեկտով։ Բժիշկը գլաղը վերցրեց, մինչե անգամ տեղից բարձրացավ ե խորին հարգանքով գլուխ տվեց։

Կառքը սրընթալով անցավ։

Մարիամի փոստները դողացին ներքին հանկարծակի խռովութիւնից: Նա հազիվ կարողացավ տուն հասնել, և ամբողջ բերեկո փակված մնաց սենյակում: Հետևյալ որից նա չուր չերթեկութեան ճանապարհը փոխեց: Բայց այստեղ ևս նա ազատ չմնաց: Մի որ նա անցնում էր Սուրբակի փողոցներից մեկով, լսեւից լսեց.

— Բարե ձեզ, որիորդ:

Նա հետ նայեց, և չեւես առ չեւես հանդիւլեց Հալաբյանին:

Յերբեք նա չէր մտածել ամուրիի մասին և չէր ել սպասում վոր և և տեղ տեսնել նրան:

Հալաբյանը ձեռ տվեց համեստաբար, հարցրեց նրա առողջութեան մասին և աննկատելի կերպով սկսեց ընթանալ նրա հետ: Մարիամին ճշտում էր նրա ուղեկցութիւնը, բայց քաղաքավարութեան ղեացմունքը չթուլ տվեց հեռանալ նրանից:

— Իսկ ձեր չեղրալը առողջ է, լավ է,— շարունակում էր խոսել Հալաբյանը,— չես նրան չեմ հանդիւլում, վորտեղ կարելի չէ տեսնել: Դուք, կարծեմ, այժմ առանձին եք ապրում: Չե՞ս:

Մարիանը սիրտ առավ: Ինչո՞ւ վախենալ մի մարդուց, վոր այնքան համեստ է և այդքան հետաքրքրվում է Ռուբենի վիճակով: Ի՞նչ ամոթ բան է նրա հետ միասին գնալը: Ամենը գիտեն, վոր նա Մարիամի վաղուցվա ծանոթներից է և, վերջապես, ի՞նչ վատ մարդ է:

Սակայն չնայելով այս մաքերին, որիորդը քանի մոտենում էր վարժուհու բնակարանին, այնքան կամենում էր ազատվել Հալաբյանի ուղեկցութիւնից: Փողոցի ծայրում նա ձեռ տվեց նրան և շտապեց հեռանալ, փոխելով չուր ճանապարհը:

— Դիտե՛ս, Մարո, — ասաց հետևյալ որը Ռուբենը, չեւք Մարիամը հայտնեց, թե պատահել է Հալաբյանին, — չես կարծում եմ, վոր նա վատ մարդ չէ: Յես ել այսոր պատահեցի նրան: Այդ մարդը ավելի անկեղծ ցավակցութիւն հայտնեց ինձ, քան թե... ուրիշները: Նա ինձ շատ խնդրեց, վոր ազատ ժամանակ գնամ չուր մոտ:

— Յեվ պիտի գնամ:

— Տեսնենք:

Մշուռ որը Ռուբենը ճաշից հետո, մի փոքր ուղեկցելով քրոջը, սկսեց միայնակ անցողաբձ անել պրոսպեկտի վրա: Նա հանդիպեց Հալաբյանին, վոր Իվորցովա չա փողոցի ծայրում կանգնած անապատակ նայում էր դեռ ու դեռ: Հենց վոր տեսավ, ժպտալով մոտեցավ Ռուբենին: Նրանք մի փոքր զրոսնեցին:

Աշնանային որը ամպամած էր, նոր-նոր անձրև էր սկսվում: Զրոսնողների թանձր բազմութիւնը հետզհետե ցրվում էր: Հալաբյա-

նը տնփուլթ կերպով, շատ հասարակ ձևով, հրավիրեց Ռուբենին լուր մոտ:

Ամուրիի վերանորոգված բնակարանը այդ որը մի առանձին շուք ուներ: Մոսիո Վախվախյանի շնորհով ավելացել էլին դարձյալ մի քանի նորանոր պարագաներ:

Նա առաջնորդեց Ռուբենին լուր առանձնասենյակը: Թանգագին գրասեղանը ծածկված էր մի քանի գեղեցկակազմ գրքերով, զանազան լրագրներով, հաշվեմատյաններով: Մեջ տեղ դրված էր պղնձյա թանաքամանը, մարմարյա պատվանդանով, շրջապատված լուր բոլոր պարագաներով: Սենյակը ընդարձակ էր, առաստաղը բարձր, լուսավոր, մաքուր, հրապուրիչ: Ռուբենը մի վայրկյան մտքում ահամա նախանձեց այդ բոլոր հարմարություններին և իսկույն դատապարտեց լուր թուլությունը:

Ամուրին գիտեր, վոր այդ նախանձը պիտի դարթեցնի նրա մեջ և հենց դիտմամբ նրան առաջնորդեց այդտեղ: Նա առաջարկեց լուր հյուրին ընտիր սիգարներ, ցույց տվեց լուր գրքերը, չերեկլի մարդկանց լուսանկարներից կազմած ալբոմը, խոսեց սրանց լուրաքանչլուրի մասին այն, ինչ-վոր լսել էր, և այն, ինչ-վոր կարգացել լրագրներում: Առհասարակ նա աշխատում էր իրան ներկայացնել ժամանակակից մարդ, լուսավորված, տեղյակ այն բաներին, վոր կարող էլին հետաքրքրել մի կրթված, թարմ չերիտասարդի: Առանձին սեր տրտահայտեց նա դեպի թատրոնը, մանավանդ գրաման: Պատերբուրդում նա լսել էր Պատտիի չերգեցողությունը, Մոսկվայում տեսել էր Սարա-Բերնարի, Սալվինիի իաղը, տեսել էր և՛ արտասահմանում մի քանի փայլուն բեմական աստղեր: Նա հիացած էր և՛ Ադամյանով:

Այս խոսակցությունը նա զրավեց Ռուբենին: Ժամանակը անցնում էր աննկատելի կերպով: Յերեկո չեր արդեն, նրանք տնցան հյուրասենյակ, սպասավորը թել բերեց: Հալաբյանը լուր ձեռքով սեղանի վրա դրեց մի ինչ-վոր թանգագին ըմպլիքի շիշ: Քաղցրահամ, վոգելից ըմպելիքը ախորժկի ազդեցություն արավ Ռուբենի վրա:

Հալաբյանը, վերջապես, խոսք բաց արավ Սադափյանների մասին: Նիկողայոսը արդեն սնանկանալու վրա լի: Տան գրավի ժամանակը շուտով կլրանա, նա փող չունի բանկի տոկոսները վճարելու, տունը չերևի՝ կծախվի: Մյուս կողմից շրջապատել են մասնավոր պարտատերերը:

— Իսկ լես լսեցի, վոր դուք նրան ոգնում եք,—ասաց Ռուբենը, անկեղծ ցավակցելով լուր հորեղբոր վիճակին:

— Կոգնեցի, չեթե ինքը ավելի մարդավարի վարվեր լուր ազգականների հետ: Նա կարող էր ձեզ չզրկել, պարոն Ռուբեն...

— Նա ինձ չի զրկել, — պաշտպանեց Ռուբենը լուր հորեղբորը:

— Թողե՛ք, ի սեր աստուծո, խոսմ ինձանից թագցնել չեք կարող: Ձեր հանգուցյալ հոր գործերը ինձ ամենից ավելի ելին հայտնի: Յես ամեն բան գիտեմ, ամեն բան:

Ռուբենը սկսեց ավելի պաշտպանել հորեղբորը: Նա վատ մարդ չի, նա չեր զրկել, չեթե ունենար: Նա դարձյալ լուր պարտքերը կտա, չեթե գործերը հաջողվին:

— Յերանի թե նա չխալտառակվի, — ավարտեց լերիտասարդը վոպկորոված:

— Ձեզ ի՞նչ, Թող խալտառակվի:

— Վոչ, վոչ, մի ասե՛ք, պարոն Հալարյան, նա իմ հորեղբայրս ե, մեր ազգանունը միևնույնն ե:

Հալարյանը լռեց, և սկսեց թեյը գդալով խառնել: Հարձակվելով Նիկողայոս Սաղափյանի վրա, նա կարծում եր, թե աչդախտով կշահի Ռուբենի սիրտը: Յերբ տեսավ, վոր լերիտասարդը անկեղծ և պաշտպանում լուր հորեղբորը, մտածության մեջ ընկավ...

Այնինչ Ռուբենի սրտում վառվել եր ընածին բարության և ներողամտության զգացմունքը: Նա վոպկորվել եր ինքն լուր ասածով: Ի՞նչ պատվական խրատ և աղնիվ պատիժ տված կլինի տիկին Սոփիոյին, չեթե կարողանա լուր քրոջ զրկանքի փոխարենը բարեսըրտությամբ հատուցանել:

— Դուք շատ վեհանձն եք, — խոսեց Հալարյանը, թիկն տալով քաղկաթոսին: — Յես կարծում եմ, վոր Նիկողայոսը արժանի չե ձեզ պես ազգական ունենալու:

— Վոչ, պարոն Հալարյան, հավատացե՛ք, նա արժանի չե ոգնության, — շարունակեց Ռուբենը ավելի լուռնդով, — ինձ համար մի մեծ ամոթ կլինի, չեթե նա սնանկանա:

— Տվե՛ք ինձ ձեր ձեռը, պարոն Ռուբեն, — գոչեց Հալարյանը հանկարծ, — անկեղծ եմ ասում, դուք ինձ զարմացնում եք ձեր բարեսրտությունով: Դա հազվագյուտ բան ե մեր ժամանակներում, հազվագյուտ բան ե:

Նա դարձյալ մտածության մեջ ընկավ: Անշուշտ Մարիամն ել ալնքան վեհանձնաբար ե վերաբերվում լուր հորեղբորը, վորքան Ռուբենը: Անշուշտ նա չե շնորհակալ կլինի ալն մարդուց, վոր կոգնի Նիկողայոսին: Ինչո՞ւ Հարժանանալ նրա շնորհակալությանը, ի՞նչպես չոգտվել հանգամանքից: Ձե՞ վոր աչախիսով մի քալ մոտեցած կլինի լուր նվիրական նպատակին: Վերջապես, Սաղափյանին կարելի չե առանց մի մեծ գումար տալու չել ազատել, բավական և նրա համար

ինքաշխատութիւնը իննելու նա ճարպիկ մարդ է, վրտքի կկանգնի: Վո՞ւն
նրան տվածը—կորած չի:

Յեւ վահանաթիւթան զգացմունքը ավելի ու ավելի թուլացավ
հարուստ ամուսնի մեջ, տեղի տալով մի ալլ, ավելի դորեղ, ավելի
անհաղթելի զգացմունքի: Դա Մարիամի դուլթական ազդեցութիւնն
էր: Ահա նա, վորքան բարի չե, համեստ, հրապուրիչ: Նա տեսնում է
յուր հորեղբոր բարեբարին, մոտենում է, ժպտում է և ձեռք մեկնում
նրան: Այո, նա ինքը բարի չե, սիրում է բարութիւնն և՛ ուրիշների
կողմից, նա շնորհակալ է, գովում է Հալաբյանի արածը: Նա զգում
է, անկարելի չե, վոր չզգա...

Մի վայրկյան ամուսնի թվաց, թե յուր դեմ ու դեմ նստած է
ինքը Մարիամը: Նախելով ցեղոր աչքերին, նրա առաջ պատկերա-
ցավ քույրը: Ի՞նչ նման են միմյանց:

Ռուբենը նկատեց յուր խոսքերի ազդեցութիւնը նրա վրա: Ահա
ինչու նա սիրտ առավ, վերջապես, արտասանելու.

— Մեծ մարդասիրութիւն արած կլինեք, պարոն Հալաբյան,
չեթե վայր ընկնողին ձեռք մեկնեք: Մեր ժամանակի մարդիկ շատ
նյութապաշտ են, ցույց տվեք ձեր բարութիւնը, որինակ չեղեք...

Այլ ևս ավելորդ ելին վերջին խոսքերը: Հալաբյանը վճռել էր
ոգնել ալն մարդուն, վորին ոգնելը միքանի ուր առաջ «մեղք» էր
համարում:

Զգիտեր ինչպես հայտներ յուր շնորհակալութիւնը Ռուբենը,
այնքան զգացված էր, մանավանդ չերը լսեց.

— Զեր խաթրու, պարոն Ռուբեն, միայն ձեր խաթրու կողնեմ:

Դռան ձայնը ազատեց լերիտասարդին նեղ դրութիւնից:

Ներս մտավ մոսիո Վախվախյանը: Մոսիոն հուզված էր: Նա
նստեց և, ծանր շունչ քաշելով, պատմեց միքանի նորութիւններ:
Ախշարումյանը պառկած է անկողնում. անցյալ որը վորկրամոլը
ընթրիքի ժամանակ այնքան յուզալի և դժվարամարս կերակուրներ է
կերել, վոր չի մարսել ու հիվանդացել է:

Իշխան Սահարունին քաղաքալին դումալում նիստից առաջ մե-
կի հետ կովել է, ուղեցել է ապտակել յուր հակառակորդին:

Ռուբենը հրաժեշտ տվեց:

— Խնդրեմ, շուտ-շուտ շնորհ բերեք,—ասաց Հալաբյանը, ուղեկ-
ցելով նրան մինչև նախասենյակ:—Շատ կպարտավորեք, չեթե վաղը
բարեհաճեք ինձ մոտ ճաշելու:

— Յես ուրիշ տեղ չեմ ճաշում:

— Կարծեմ, դուք այստեղից այնքան հեռու չեք ընակվում, այն-
պես չե՞, — հարցրեց ամուսինը:

Ռուբենը հայտնեց լուր ընակարանի տեղը:

Նա շտապեց տուն: Արթին մութն էր, նա չերեկոները մենակ չէի թողնում քրոջը: Նա տեսավ Մարիամին ավելի գունատված, ավելի մտադրադ:

Նա պատմեց լուր այցելության մասին: Նա ուրախ էր և գոհ լուր արածով, զգում էր հոգեկան մի անսովոր թեթեւություն: Հալարյանը հափշտակել էր նրան լուր բարությամբ: Յերբեք նա չէր սպասել այդ տեսակ վարմունք այն մարդուց, վորին մինչև այն ժամանակ համարել էր խիստ դործնական, խիստ հաշվադետ:

— Մեր շահուսեր հասարակության մեջ դա հազվագյուտ մարդ է,— գովում էր նա վոգեկորված:— Մտածիր, Մարո, և կտեսնես, վոր ճիշտ եմ ասում: Մեր հորեղբայրը ծայրահեղ դրության մեջ է, ամենքը չերես են դարձրել նրանից, ամենքը քչփչում են նրա սնանկության մասին, հանկարծ դուրս է գալիս մեկը և ասում է՝ «չես այդ մարդուն կազատեմ անպատվությունից»: Այո, անպատվությունից, դու չգիտես վաճառականի համար ինչքան ամոթաբեր բան է սնանկանալը: Ինչպես չգովել այդ մարդուն, ինչպես չուրախանալ: Վոչ, վոչ, ինչ ուզում ես ասա, Հալաբյանը արժանի չէ հարգանքի:

Մարիամը պատրաստ էր համաձայնվել չեղոր ասածներին հետ, նրա սրտում արդեն ծագում էր մի տեսակ հարգանք դեպի Հալարյանը: Բայց հանկարծ նա հիշեց այն որը Սադափյաններին տանը, չերը ամուրին առանձին ուշադրությամբ եր վարվում լուր հետ, հիշեց տիկին Սոփիոյի չար և որիորդ նառախալի նախանձոտ հայացքները: Յեւ մի կասկած զսպեց նրա համակրութունը:

— Ի՞նչ է պատճառը,— հարցրեց նա,— վոր առաջ չեր ուզում ոգնել, այժմ հանկարծ ուզում է ոգնել:

— Պատճառն այն է, վոր չես խնդրեցի, վոր նա տեսալ, թե չես ինչպես, ինքս ղրկված լինելով իմ հորեղբորից, ներողամիտ եմ դեպի նա:

— Հետո...

— Հետո, ի՞նչ հետո, մարդ է, սիրտ ունե, զգաց մարդու հեղ դրությունը և ուզում է ոգնել իմ խաթրու:

— Դո խաթրո՞ւ,— կրկնեց Մարիամը:

— Այո:

— Ռուբեն, լավ բան է մի մարդուն համոզել մյուսին ոգնելու, մանավանդ, չերք այդ մյուսը մեր մոտիկ ազգականն է: Բայց դու ի՞նչ կարող ես տալ նրա լավության փոխարենը, նա քեզ վրա բարոյական պարտք է դնում:

— Յես սխալվեցի. նա ինքն ել հենց ուղղում եր ողնելու ի՞նչ միթե դու չե՞ս հավատում մարդկանց: Իրավունք ունես... Բայց համբերիր, սիրելիս, այդպես շուտ մի հիասթափվիր, աշխարհը միայն վատ մարդկանցով չէ լցրած...

Նա լռեց, դիտմամբ, իսկույն զգալով, վոր կարող է Մարիամին հիշեցնել Մեկիք-Բարսեղյանի վերաբերմունքը: Բայց այդ միջանի խոսքերն ևս բավական ելին Մարիամի սրտի ամենանուրբ, ամենացավազար թելերը շարժելու համար: Անփորձ չերիտասարդ. նա այնքան լավ եր տրամադրված, վոր պատրաստ եր պաշտպանել ամենին, նույն իսկ չուր կատաղի թշնամուն:—Պաշտպանել լոկ մարդասիրությունից դրդված, առանց վորոշ նպատակի, լոկ ըոպելի ազդեցության տակ:

Այնինչ՝ բնազդումը ասում եր Մարիամին, վոր Հալաբյանի վարմունքը առանց նպատակի չէ: Թե ինչ եր այդ նպատակը, նա պարզ չգիտեր, կամ գուցե չեր ուղղում դիտենալ:

Կրկին Մեկիք-Բարսեղյանը գրավեց նրա ուղեղն ու սրտը, կրկին բուռն զորությամբ զարթնեց նրա դառն, անամոքելի վիշտը: Ինչո՞ւ իզուր պիտի ինքն իրան խաբի, ինչո՞ւ, քանի վոր սիրտն ասում է, թե նա դժբախտ է, թե նա մոռացված է, արհամարջված, թե այլ ևս չպիտի վերականգնի նրա խորտակված չերջանկությունը, վոր այնքան կարճ տևեց:—Կարճ, վորպես մի անցողիկ չերազ, վորպես մի քաղցր, թուուցիկ ցնորք...

Զգալուն, նրբացած, հիվանդության աստիճանին հասած սիրտը անհուն դառնությամբ լեցուն, որիորդը այդ գիշեր չերկար ժամանակ անքուն պտտում եր անկողնի մեջ: Մերթ նա ձգտում եր ինքն իրան խաբել տկար հույսերով, ստեղծում եր անթիվ պատճառներ բժշկի սառնությունը նպաստավոր կերպով բացատրելու համար: Մերթ ինքն այդ պատճառները չերևակայական, նույն իսկ տնրնական համարելով, հերքում եր, չուր թեթևամտության դեմ վրդովվելով: Յե՛վ կրկին անձնատուր լինելով չուր սրտի անողորմ ձայնին, աշխատում եր հեռու վանել այն չարագուշակ պատկերը, վոր հալածում եր նրան գիշեր ու ցերեկ, վոր պղտորում եր նրա չերևակայությունը: Ահա նա, այդ պատկերը, վոր հետևում է նրան ամեն տեղ, ամեն ըոպե, քայլ առ քայլ: Նա շրջում է, խոսում է, նրա շնչառությամբ է լի այդ ննջարանը, նրա վրդի է տիրում աչստեղ, աչս սենյակում: Մարիամը զգում եր այդ սառն, անմատչելի, միևնույն ժամանակ կաշկանդող պատկերի անխուսափելի ուժը:

Ինչո՞ւ չի հեռանում նրա աչքից, չեթե չի կամենում մոտենալ, ինչո՞ւ այնպես կեղիքում է նրա սիրտը: Պետք է մոռացության տալ,

պետք ե աչք փակել նրան չտեսնելու, ահանջ փակել նրան չլսելու համար, այո, փակել բոլոր զգայարանները:

Նա փորձեց գրգռել լուր մեջ մի խորին, մի կծու ատելութուն և այդ ատելութունը, իբրեւ զենք, գործածել այն անդուլթ պատկերի դեմ: Սակայն ինչպես հղացնել այդ ատելութունը: Նրա սիրտը չի հպատակվում խելքին: Նա տկար ե, անզոր, ճնշված մի բոլորովին հակառակ զգացմունքով: Ի՞նչ ե այդ: Գուցե այդ նույն ինքը ատելութունն ե, վոր ավելի բորբոքում ե նրա վառվուռն հոգին, միայն այլ կերպ, այլ ուղղութիւնով: Այն ժամանակ ռւր ե սիրո և ատելութիւն մեջ այն անդունդը:

Ատել և սիրել, չկամենալ և ձգտել, փախչել և մղվել—ահա սոսկալի դրութիւն:

«Տեր տստված, տեր աստված, տճւր ինձ սառնասրտութիւն, տճւր ինձ համբերութիւն»...

X

Առավոտյան Մարիամը զարթնեց սովորականից ուշ: Նա ավելի գունատուկ եր, նրա աչքերի տակը մի քիչ կապտած էին, կոպկորուում:

— Ո՞ւշ ես քնել գիշերը,—հարցրեց Ռուբենը:

— Այո:

— Ինչո՞ւ:

— Կարդում եմ:

Ռուբենը զգաց, վոր Մարիամը ստում ե, վոր նա գիշերը անքուն ե անցկացրել, և գիտեր, վոր այդ առաջին անքնութիւնը չեր: Ի՞նչ աներ, ինչո՞վ ամոքեր նրա վիրավորված սիրտը: Խոսել Մելիք-Բարսեղյանի հետ, բացատրութիւն պահանջել: Բայց արդէ՞ք Մարիամը կտա նրան իրավունք այդ մասին վորեւ խոսք բանալու բշխի հետ: Վոչ չերեք. նրա խորին ինքնասիրութիւնը բնավ չի թուլ տալ այդ:

Միտ փորձութիւնները տակավին չճաշակած չերտասարդը, հարկավ, չեր կարող լիովին կշռել հագուելու չստացած սրտի դառնութիւն չափը: Դայց նա սիրում եր Մարիամին չեղբայրական անձնվել, անսահման սիրով, և այսքանը բավական եր, վոր քրոջ ամենաթիթև վիշտն անգամ սուր արձագանք գտներ նրա զգայուն սրտում:

«Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ»,—կրկնում եր նա մտքում ամեն անգամ, լսելով քրոջ լուռ, ծանր և սիրտ թափանցող հառաչանքները:

Այնինչ՝ որ որի վրա չեր անցնում: Մելիք-Բարսեղյանը դար-

ձյալ չեր լերեւում, Ռուբինը չերբեմն ալատահում եր նրան փողոցում, բարեւում եր և անցնում: Նա չեր կամենում մոտենալ բժշկին, գիտեր, վոր սառնարչուն չի կարող նրա հետ խոսել, գիտեր, վոր կամա թե ակամա պետք ե արտահայտի նրա մոտ չուր սրտի ատելութիւնը:— Մի բան, վոր նա տակաւին չեր ուզում ցուց տալ:

Իսկ Մարիամը. վորքան ուզում եր չմտածել, վորքան ուզում եր չուր վիշտը լեթե վոչ մոռանալ, գեթ փոքր ինչ մեղմացնել տնային դորձերով և կարուձեխ պարապմունքով, այնքան ավելի համառութեամբ ելին հալածում նրան անցյալ չերջանկութեան հիշատակները:

— Հոգեակս, դու հիվանդ ես,—հարցրեց մի անգամ կարուձեխ վարժուհին, վոր վաղուց արդեն նկատել եր չուր ընկերուհու խորին թախիծը:

— Ինչից ես չկարակացնում, վոր հիվանդ եմ:

— Նրանից, վոր դու ուշադրութիւնով չես աշխատում, վոր չես քեզ բան եմ բացատրում, չես յսում, միշտ միտքդ ուրիշ տեղ ե: Այո, դու հիվանդ ես, բայց չգիտեմ ինչ ե հիվանդութիւնդ:

Մարիամի կրծքից ակամա մի հառաչանք դուրս թռաւ և նա գլուխը թեքեց կրծքին տխուր ու տրտում:

— Յես տեսնում եմ, հոգիս, վոր դու մի վիշտ ունես,—խոսեց դարձյալ վարժուհին և, ձեռը դնելով նրա ուսի վրա, շարունակեց.— ամոթ չէ, վոր ինձանից թաղցնում ես: Մոռացել ես մեր ընկերական սերը: Ասա, հոգիս, պատմիր, ով գիտե, կարելի չե, մի բանով կարող եմ ոգնել քեզ: Ի՞նչ, դու, կարծես, ուզում ես արտասովել, համ, ալժմ համոզված եմ, վոր քո վիշտը աղքատութիւնը չե, մինչև վոր չպատմես, ձեռք չեմ քաշի քեզանից: Մարո, սիրելի Մարո, հայտնիւր սըրտիդ ցավը քեզ սիրող ընկերուհուդ: Նեհե, ալդ չերավ, դու փոխանակ խոսելու, լաց ես լինում...

Յեզ իրավ, Մարիամը չկարողացաւ զսպել չուր արտասուքը: Ընկերուհու անկերձ կարեկցութիւնը շարժեց նրա սիրտը: Նա, զգացված, ձեռները փաթաթեց վարժուհու պարանոցին, գլուխը դրեց նրա ուսի վրա և սկսեց հեկեկալ: Անցան առաջին վայրկյանները, նրա սիրտը փոքր ինչ հանդարտվեց: Նա արտասուքը սրբեց, նաչեց ընկերուհու աչքերին և ալկա չկարողացաւ թաղցնել աչն, ինչ-վոր վաղուց մի հոգեկան պահանջ եր զգում պատմելու մի մտերիմ կնոջ և, ինչ-վոր ինքնասիրութիւնը մինչև ալդ բոպե չեր թողնում պատմելու: Վոչ մի խոսքով, վոչ մի թուլլ ակնարկով նա դժգոհութիւն չհայտնեց Մելիք-Բարսեղյանի դեմ: Նա բոլոր մեղադրանքը բարդեց չուր վրա, վոր աչնպես մոռացաւ ինքն իրան, վոր աչնպես հափշտակվեց, և անա պսոթ աշդքան տանջվում ե:

— Գիտես ինչ, սիրելիս, — ասաց վարժուհին խորին կարեկցութեամբ, լսելով ընկերուհու համառոտ պատմութիւնը, — չես ինքս թեեւ չեմ սիրահարվել մինչև որս. բայց զգում եմ քո դրութիւնդ:

— Յերանի քեզ, լերանի, վոր չես սիրահարվել, — գոչեց Մարիամը զողովուն ձայնով, — ակա, վորքան նախանձում եմ քեզ:

— Նու, նախանձելու բան, ասենք, չկա, ո՞վ եր ինձ սիրողը, վոր չես ել նրան սիրելի: Իմ տղեղութիւնը ինձ ազատ և պահում ալդ տեսակ փորձանքներից:

Վերջին խոսքերը արտասանելիս վարժուհին, զսպելով չուր հառաչանքը, ծիծաղեց, չուր ընկերուհուն զվարճացնելու համար: Իսկապես նա արդարացի չէր չուր վերաբերմամբ, նա այնքան ել տղեղ չէր, վորքան վատաբանում եր ինքն իրան: Հասակով Մարիամից քիչ ցածր, գեմքով գուցե ավելի գեղեցիկ եր, լեթե անգութ ծաղիկը տասը տարի առաջ ալդ գեղեցեղութիւնը հալիտյան արատավորված չլիներ չուր խոշոր հետքերով:

— Հանգստացիր, սիրելիս, — մխիթարում եր նա Մարիամին մայրական քնքշութեամբ: — Պառաջների խոսքով ասած, գրողը տանի ալդ տղամարդներին: Արժե՛ նրանց համար ալդպես տանջվել, այն ել քեզ նման սիրուն տղջկան: Ո՛ւմ վրա ուշադրութիւն դարձնես, վոր քեզ համար չի գժվի: Յեթե ինձ հարցնես, չես կասեմ՝ թող իսկի վոչ վորք ել չսիրի քեզ: Ձե՛ս կարող առանց տղամարդի ապրել: Աստված վկա, կարող ես: Ինչո՞ւ չես ապրում եմ, և վճռել եմ ապրել մինչև մահ: Գիտե՛ս ինչից ե, վոր դու ալդքան տանջվում ես. վորովհետեւ զբաղմունք չես ունեցել մինչև որս: Հապա, ինձ նման սիրիւր աշխատանքը, տես կմոռանաս, թե չես:

— Սովորեցրու ինձ, սովորեցրու մոռանալ, Սաթենիկ, և չես կմոռանամ, — արտասանեց Մարիամը հուզված, նայելով ընկերուհու աչքերին և նախանձելով նրանց մեջ փալլող հոգեկան մխիթարիչ անդորրութիւնը:

— Աչքիս վրա, բարեհաճիր նստել բանիդ: Մարո, հավատացիր, աշխատանքից ավելի սիրելի բան չկա, մանավանդ չերբ տեսնում ես աշխատանքիդ պտուղները: Տե՛ս, ալդ կոպտացած մատներս իմ սրտի ամենամեծ մխիթարիչներն են: Արի վաղը առավոտյան ինձ մոտ, տանեմ քեզ իմ ուսումնարան, դու կտեսնես այնտեղ իմ խոսքերի ճշմարտութիւնը: Տես, այնտեղ իմ փոքրիկ աշակերտները լինչպես են բանում, լինչպես են աշխատում: Անկեղծ եմ ասում, չերբ նայում եմ նրանց, չերբ տեսնում եմ, թե ինչպես նրանց փոքրիկ ձեռները որեց որ ավելի ու ավելի վարժվում են, մի հպարտութիւն

եմ զգում, չեռանդս ավելանում եւ: «Ահա իմ աշխատանքի պտուղը, ասում եմ ինքս ինձ, աչդ աղջիկները, աչդ աղքատ ընտանիքների զավակները արհեստ են սովորում ինձանից: Նրանցից ամեն մեկը ժամանակին կարող ե յուր գլուխը պահել, ով գիտե, ծնողներին ել պահել յուր ձեռքի աշխատանքով, ինչպես լիս ավժամպահում եմ ինձ ե չեղիւ փոքրիկ քույրերիս»: Մարո, չերկու տարի շարունակ արտասանմանում լիս լսել եմ իմ ուսուցիչներից. «սիրիր աշխատանքը, սիրիր, ե դու միշտ բախավոր կլինես»: Այժմ տեսնում եմ, թե վորքան ճշմարիտ ե ին աչդ խոսքերը: Այո, աշխատանքը կարող ե մարդուս բախտավորեցնել:

— Յերանի թե լիս ել քո ճանապարհով գնացած լինելի, — ասաց Մարիամը, հառաչելով. — Դու քո բախտը խելքով ապահովեցիր, լիս իմը թողի սրտիս կամքին:

— Չեյր կարող ուրիշ կերպ անել, հոգիս: Իմ ճանապարհով գնալու համար հարկավոր եր, վոր դու վոչ գեղեցիկ լինելիր, վոչ հարուստ: Հարստութունը ե գեղեցկութունը ծուլացնում են մարդուն: Հիշո՞ւմ ես, ինչպես լիս ցավեցի, ինչքան հառաչեցի առաջին անգամ, չերը լսեցի, վոր քեզ զրկել են ժառանգութունից: Յես ցավում ելի անկեղծ, վորովհետե կարծում ելի, վոր հարստութունը քեզ համար կլանք ե դարձել, վոր առանց նրան դու դժբախտ ես: Բայց չերը դու հաստատ մտքով ինձ ասացիր, թե ուզում ես հասարակ արհեստավոր դառնալ, ուրախացա: Յես տեսա, վոր հարստութունը քեզ չի փչոցրել: Այժմ լիս ուրախ եմ, վոր դու զրկվել ես քո ոժիտից, բայց աստված վոչ անի, զրկվիս քո մշուս ոժիտից — գեղեցկութունից: Պահպանիր գեղեցկութունդ, պահպանիր ե որինակ դարձիր մշուսների համար, թե գեղեցիկ կինն ել պիտի աշխատի, թե կնոջ դարդը միայն գեղեցկութունը չե, ինչպես կարծում են թեթեամիտ մարդիկ: Դիտե՛ս, ինձ շատերն են ասել, թե չեթե լիս տգեղ չլինելի, արհեստ չելի սովորիլ, կմտածելի միայն մարդու գնալու մասին: Զգիտեմ, բայց կարծում եմ, վոր սխալվում են...

Այստեղ Սաթենիկը լռեց ե խաղաղ ժպտաց Մարիամի չերիսին: Յեվ նրա ժպիտը արտահայտեց մի տեսակ մեխամաղձութուն. արդո՞ք դա նրա անվերադարձնելի կերպով կորցրած գեղեցկութան հիշատակը չեր: Առագությամբ հետ դարձնելով յուր խոհուն ճակատի վրա սփոված սև ե գանգուր մազերը, վարժուհին, կարծես, աչդպիսով վանեց յուր թախիժը ե ավելի վոգեկորված շարունակեց գովել աշխատանքը:

Մարիամը լսում եր նրան սիրով ե հաճությամբ, նրա լուրա-

քանչևուր խոսքի մեջ վորոնելով մի-մի սփոփանք չուր վշտացած սրտի համար:

Նա տուն վերադարձավ այդ որը սովորականից ուշ: Յերկար ժամանակ Սաթենիկի խոսքերը հնչում էին նրա ականջում: Սակայն վրա հասավ չերեկոյան խաղարը, և նա կրկին անձնատուր չեղավ չուր սովորական անհաղթելի վշտերին:

Արդեն հոկտեմբերի վերջն էր, աշնան խոնավութունը տեղի չէր տալիս մոտալուտ ձմեռվա ցրտերին:

Ռուբենի համար ավելի ու ավելի զգալի չիր դառնում նյութական պահասութունը: Հարկավոր էին մի քանի նախապատրաստութիւններ ձմեռվա համար, իսկ ամսական ուժիկը նրանց առօրյա պիտուքներն անգամ չէին լրացնում: Ռուբենը մասնավոր դասեր էր վորոնում, բայց անաջող, տարվա միջոցը անհարմար էր, ամենքը խոստանում էին ամառվա սկզբին: Յեւ մի կողմից նյութականը, մյուս կողմից քրոջ բարոյական դրութիւնը, որից որ կրկնապատկում էին չերիտասարդի հոգացողութիւնը: Նա տեսնում էր, վոր այդպես թողնել Մարիամին չի կարելի, վոր մի կերպ պետք է վերջ դնել նրա վշտին:

— Մարո, — ասաց նա մի որ ճաշից հետո, — արի այս չերեկո թատրոն գնանք:

Մարիամը նախ դարմացավ, ապա, հայելով չեղբոր աչքերին, գուշակեց նրա միտքը և կատակի ձևով պատասխանեց:

— Գնանք, չերի փող շատ ունես գրպանումդ:

— Ունեմ, ունեմ, այսօր ուժիկս ստացել եմ: Այսուհետև ավելի կունենամ, խոստացել են դասերս ավելացնել: Բացի դրանից, անպատճառ մասնավոր դասեր ել կգտնեմ: Շուտով, շուտով մենք կապահովվենք նյութապես, — ավելացրեց նա շինծու վոգևորութեամբ:

— Լավ, չերը կհարստանաս, այն ժամանակ զվարճութեան մասին ել կմտածենք: Իսկ այժմ իրավունք չունենք:

— Իրավունք, — գոչեց Ռուբենը, — ո՞վ է այդ իրավունքը մեզանից խլում: Մարո, խնդրում եմ, աշխարհից բոլորովին մի կտրվիլ: Լավ չե, քեզ համար մի քիչ զվարճութիւն անհրժեշտ է: Նախիր հայելիի մեջ, տանը փակված մնալով, տես ինչպես փոխվել ես:

Յեւ նա շարունակեց համոզել: Շուալութիւն չի ամսական գոնե մի չերկու անգամ մի տեղ գնալը: Ով աշխատում է, նա իրավունք ունի և՛ զվարճանալու: Ինչո՞ւ փախչել հասարակութիւնից: — Նրա համար, վոր առաջ հարուստ էին համարվում, այժմ աղքատ են:

— Յեթի այդ է պատճառը, նախապաշարմունք է, սիրելի Մարո:

Աղքատութիւնը ամօթ բան չէ, ամօթ է աղքատութիւնից ամաչելը: Վոչ վոք իրավունք չունի մեզ ծաղրելու: Իսկ չեթե ծաղրողներ լինեն, միթե չէս կարող ալդպիսներին արհամարհել:

Նա շատ լավ գիտեր, վոր Մարիամի հասարակութիւնից փախուստ տալու պատճառը աղքատութեան զգացումը չէ, բայց շեշտելով այդ հանգամանքը, կամենում եր կպչել նրա ինքնասիրութեանը: Գիտեր, վոր միայն ալդպիսով կարող է համոզել քրոջը:

— Յես վոչ վոքից չեմ քաշվում մեր աղքատութեան պատճառով,— պատասխանեց Մարիամը զգացված,— խնդրում եմ այդ մասին այսուհետե չխոսես:

— Վոր ալդպես ե, թատրոն չենք գնալ, այլ մի ուրիշ տեղ: Վաղը չերեկոյան հալոց բալն ե. չես շատ եմ ցանկանում մի անգամ մի տեղ տեսնել այստեղի հասարակութեանը: Գնանք վաղը միասին:

Մարիամը գլուխը թեքեց կրծքին: Նրա հոնքերը սեղմվեցին, ճակատը դարձալ պատեց տխրութեան քողով: Հիշեց նա, վոր այդ չերեկոյի կարգադրիչը Նատալիան է լինելու: Գնալ այնտեղ, ուր այդ գոռոզ արարածը, նրա անհաշտ հակառակորդը, լուր փքված մոր հետ պիտի փայլեն.— վոչ, վոչ, նա չի կարող: Սակայն նույն վայրկեանին նրա գլխում զարթնեց մի այլ միտք:— Անշուշտ Մելիք-Բարսեղեանը այնտեղ կլինի, անշուշտ նա չի արհամարհիլ մի ալդպիսի հանդիսավոր չերեկոյի: Ի՞նչ կանի բժիշկը այդ չերեկոյ, ի՞նչ հետ կխոսի, ո՞ւմ հետ կզրոյսնի, կամ գուցե կպարի: Յեւ զգում եր նա, վոր չէ կարողանում դիմանալ լուր սրտի ձգտմանը, վոր, հակառակ լուր կամքի, հիվանդոտ հետաքրքրութիւնը մղում է նրան դեպի այնտեղ, ուր պիտք է լիներ բժիշկը: Այո, պիտք է գնալ, պիտք է տեսնել նրան: Այդ չերեկոյ վերջնապէս կվճռվի նրա բախտի խնդիրը: Հասարակութեան մեջ մի թեթեւ վարմունք, մի վորոշ շարժումնք անգամ կարող է դրականապէս պարզել բժշկի հոգին:

«Այն ժամանակ չես կհամոզվեմ և կհանգստանամ», վճռեց Մարիամը:

Հետեւալ որը դարձալ տոն եր Ռուբենը ողնում եր Մարիամին տնային գործերում, չերք պատշգամբի վրա հանկարծ չերկաց Հալաբլանը: Ռուբենը չզարմացավ, բայց փոքր ինչ շփոթվեց: Նա դուրս շտապեց հլուրին դիմավորելու և հարգանքով հրավիրեց ներս:

— Յես չեկել եմ հայտնելու, վոր ձեր հորեղբոր գործերը հաջող են գնում,— ասաց ամուրին, միանգամայն ընկերարար թոթվելով չերիտասարդի ձեռը:

— Յեւ, ի հարկե, ձեր շնորհով,— ավելացրեց Ռուբենը, հրավի-

րելով նրան նստել, — Թույլ տվեք կրկին անգամ հայտնել շնորհակալութիւնս:

— Յես լերաշխավոր լեղա, նրա լերկու վեքսելները փոխեցին՝ մեկը վեց հազարի, մյուսը ութ հազարի, — շարունակեց Հալարչանը մի առանձին ինքնագործութեամբ: — Եզուց ել մի քիչ փող կգտնեմ, կտամ, հետո ել վախենալու բան չկա, ձեր հորեղբայրը կազատվի անպատվութիւննից: Թող նա գա, ձեր վրտները համբուրի. դուք եք նրան աղատողը:

Արտասանելով այս խոսքերը մյուս սենյակում լսվելու չափ բարձր ձայնով, Հալարչանը նայում եր աջ ու ձախ: Պարզ եր, վոր նա Մարիամին եր սպասում:

Դարձյալ Ռուբենը վոգեկորվեց, դարձյալ Հալարչանը նրա առաջ պատկերացաւ իբրեւ մի աղնիվ, բարեսիրտ մարդ, չուր տեսալի մի ասպետ: Մտքում նա մինչև անգամ մեղադրեց Մարիամին, վոր այնքան ուշանում եր մի ալգալիսի հյուրին՝ ներկայանալու: Թվում եր նրան, թե ամենաչնչին մի անուշադրութիւն չպետք է թույլ տալ ալգամարդու վերաբերմամբ, թե նա արժանի չե ամենախորին հարգանքի, թե վերին աստիճանի անքաղաքավարութիւն կլինի չհարգել նրան, մի ալգալիսի հաղվագչուտ մարդու: Ահա ինչու նա չկարողացաւ զսպել իրան, անցաւ մյուս սենյակ և Մարիամին խնդրեց շուտով դուրս գալ:

— Յես չեմ կարող նրան լերկալ, — հակառակեց Մարիամը, — դու զբաղեցրու, լիս գործ ունեմ:

— Անկարելի չե, նա կկարծի, վոր չես ուզում նրա լերեսը տեսնել, ամոթ ե: Մարո, նա մեր հորեղբորը ազատել ե խայտառակութիւննից, հասկանո՞ւմ ես:

Մարիամը աւամա հնազանդովեց լեղոր թախանձանքին. աւամա, վորովհետեւ այլ ևս կասկած չուներ, վոր Հալարչանի ալցելութիւնը աննպատակ չի: Նա փոխեց չուր վերնազգեստը և դուրս լիկաւ:

Վայրկենաբար ամուրիի հոգեկան տրամադրութիւնը փոխվեց: Նա հաղիվ կարողացաւ զսպել չուր ուրախութիւնը, շտապեց առաջ և հարգանքով սեղմելով որիորդի ձեռը, արտասանեց.

— Հուսով եմ, վոր իմ ալցելութիւնը հոնդգնութիւն չեք համարի. մեր վաղուցվա ծանոթութիւնը ինձ իրավունք տվեց: Առո՞ղջ եք:

Մարիամը գլուխը թեթեւ խոնարհեցրեց և նստեց սենյակի մի անկյունում:

— Յեկել եմ ձեր լեղորը հանդիմանելու, — շարունակեց Հալարչանը, — ամեն ոք տանա առաջով անցնում ե, գոնե լերկու որը մի անգամ ել չի մտնում: Շատ ցավում եմ, վոր բարեկամութիւնը վորդուց

Վորդի ժառանգաբար չի անցնում,— դարձավ նա Ռուբենին,— չեթե իմանալիք ձեր հայրը ինչքան եր սիրում ինձ, այդպես չեյիք վարվիլ ինձ հետ: Հանդուցյալը մի որ ինձ չտեսնելիս, տխրում եր: Միշտ ինձ ասում եր «չես քեզ սիրում եմ վորդուս պես, վորովհետեւ քո հանդուցյալ հայրդ ինձ սիրել է լուր վորդուս պես»: Ախ, Գրիգորի Միրոնովիչ, լես չերեք չեմ մոռանալ քեզ:

Յեւ նա վերջին խոսքերը մի աջնալիսի զգացված ձայնով և խորհրդավոր չեղանակով արտասանեց, վոր կարելի չեր կարծել, թե լուր հարազատ հոր մասին է խոսում:

Հոր հիշատակը դուրս հանեց Մարիամի կրծքի խորքից մի հառաչանք, վոր նա, սակայն, շտապեց զսպել:

Հալաբչանը շարունակեց լուր խոսքը և հետզհետե մեկից մյուսին անցնելով, սկսեց խոսել լուր մասին: Նա զանգատվեց, վոր լուր որերը տխուր են անցնում: Կյանքը առհասարակ ձանձրալի բան է: Նա բավական զզվել է հասարակութունից, չգիտե ինչպես հեռու ապրել նրանից:

Հետո նա շատ անփութ կերպով ակնարկեց լուր հասարակական դիրքը, լուր հարստութունը, այն հարգանքը, վոր վայելում է զանազան շրջաններում: Յեւ այս բոլորը նա լուր խոսակցութեան մեջ անցկացրեց մի աջնալիսի վարպետութեամբ, որինակներով և փաստերով, վոր թվում եր, թե խոսում է լոկ խոսելու համար և վոչ մի ուրիշ նպատակով:

Քանի մի բոպե Մարիամի կասկածը մեղմացավ, տեսնելով, վոր Հալաբչանը խոսելիս ավելի Ռուբենին է դառնում, քան իրան: Նա չգիտեր, վոր այդ մի տեսակ քաղաքականութուն է ամուրիի կողմից: Նա հիմարութուն համարեց լուր չերկուզը մի մարդուց, վոր բացի բարեսիրտ և քաղաքավարի լինելուց, առ այժմ վոչինչ չէ ցույց տալիս: Նա մինչև անգամ ինքը սկսեց խոսել Հալաբչանի հետ: Ռուբենը հաղորդել եր նրան մոսիո Վախվախյանի պատմած անցքը իշխան Սահարունիի մասին:

— Եեե վոչինչ բան է,— պատասխանեց Հալաբչանը որիորդի հարցին,— իշխանը մի փոքրիկ վեճ է ունեցել ձեր հորեղբոր պարտատեղաներից մեկի հետ, ուրիշ վոչինչ:

Անտանիլի չեր Հալաբչանի համար խոսել այն բաների մասին, վոր չեյին բղիում նրա սրտից, վոր չեյին համապատասխանում նրա ալթմյան զգացմունքներին: Խոսեց թագցնել չե կարելի, խոսեց վերջապես, պետք է պարզվի նրա մետքը: Բաց ինչպես պարզել— գիմն ուղղակի Մարիամին:— Վոչ, վոչ, այդ անկարելի է: Յեւ Հալաբչանը

դղում եր, վոր լերերեք այդչափ քաջութիւնն չի ունենալ: Դիմել Ռուբենին:—Այդ ավելի դուրին եւ նա բարեսիրտ չերիտասարդ ե, խելոք ե, ժամանակակից, ազատամիտ: Նա չե Մարիամի միակ մեծը ե պաշտպանը, ե նրա հետ կարելի չե պարզ սրտով խոսել:

Մինչ նրա ուղեղը զբաղված եր այս խորհրդածութիւններով, լեզուն խոսում եր այլ բաների մասին, ժամանակը անցնում եր: Նա չեր կամենում ձանձրացնել Մարիամին, պետք եր հրաժեշտ տալ, ե նա վոտքի կանգնեց:

— Յես միշտ տանն եմ լինում, վոր ժամին ել գաք, ուրախ կլինեմ,—ասաց նա, կրկին ե կրկին խնդրելով Ռուբենին այցելել իրան:

Նախ քան դուրս գալը, նա մի հայացք ձգեց չուր շուրջը: Մինչեւ այդ րոպե նա լավ ուշադրութիւն չեր դարձրել աղքատիկ բնակարանի անշուք կահ-կարասիի վրա: Անսովոր չքավորութիւնը տարրերինակ աղղեցութիւն գործեց նրա վրա: Նա ե՞ ուրախ եր, ե՞ խղճում եր Ռուբենին ու Մարիամին: Ա՛խ, վորպիսի հաճությամբ նա կոգներ, լիթե իմանար, թե չի վերավորիլ նրանց ինքնասիրութիւնը: Նա չեր ուզում դուրս գալ, նա կամենում եր վոր ե ե կերպով առաջարկել չուր ոգնութիւնը Ռուբենին: Հանկարծ մի միտք լուսավորեց նրա ուղեղը: Մարիամը արդեն անցել եր չուր սենյակը, րոպեն հարմար եր:

— Դուք ժամանակ ունե՞ք մասնավոր դասերով պարապվելու,— հարցրեց նա Ռուբենից:

— Ինչու չե:

— Յես մի քրոջ վորդի ունեմ, գիմնադիպի հինգերորդ դաստան աշակերտ ե: Դուք, չերի, նրա մեծ չեղբայրներին ճանաչում եք: Անկարգ տղերք են, չես գիտեմ, վոր դուք նրանց չեք հավանիլ: Բայց այդ մեկը, ամենից վաճրը, խելոք տղա չե, չես միայն նրան եմ սիրում, ուզում եմ, վոր մշուս չեղբայրների նման կիսատ-պոտտ ուսում չառնի: Կհամաձայնե՞ք դասեր տալ նրան մինչև հարցաքնութիւնների ժամանակ:

Ռուբենը հաճությամբ հայտնեց չուր պատրաստակամութիւնը:

Նա ուրախացավ, վոր մի բանով կարող ե չուր հորեղբոր ոգնողի բարության փոխարենը մասամբ հատուցանել:

— Յերբ վոր հրամայեք, պատրաստ եմ:

— Թե ժամանակ ունեք, հենց եզուցվանից սկսեցիք: Դիտեք, լիս ուղում եմ նրան մշուս չեղբայրներից հեռացնել: Նրան կբերեմ իմ տուն, դուք ել տանս կպարապեք նրա հետ: Պաշտանների մասին չեմ խոսում, վորքան կամենաք...

— Առանց վորեւ ե պայմանի, պարոն Հալաբյան,— ընդհատեց Ռուբենը:— Դուք իմ հորեղբորս ոգնելիս, պայման չառաջարկեցիք:

— Լավ, լավ, եգուց չեկեք, կխոսենք,—շտապեց ավելացնել Հալաբյանը, վախենալով, վոր մի գուցե Ռուբենը բոլորովին հրաժարվի։ Ամուրին հեռացավ մի փոքր թեթևացած սրտով։ Ախորժելի չեր նրա համար ամեն կերպ պարտավորեցնել Ռուբենին և այդպիսով մասամբ բարոյապես կաշկանդել նրան։

— Լսեցի՞ր, Մարո, — դարձավ Ռուբենը Մարիամին, Հալաբյանին ճանապարհ դնելուց հետո, մտնելով քոջ սենյակը, — նա ինձ խնդրեց, վոր յուր քոջ վորդու հետ պարապեմ։ Ուրեմն չես մի փոքրիկ բանով պարտքս կթեթևացնեմ, այնպես վոր...

— Ռուբեն, — ընդհատեց Մարիամը չեղբոր խոսքը, — ալդ պարոն Հալաբյանը շատ լավ մարդ է, բարի չե, բայց...

— Բա՛ց։

— Յես չեմ ուզում, վոր նա մեզ այցելե։

— Պատճառը։

— Հենց այնպես, չեմ ուզում։

— Ասա, Մարո, առանց պատճառի չի լինիլ, ասա, չեթե մի բան կա։

— Ի՞նչ կապ մեր և նրա մեջ, ասա խնդրեմ. նա հարուստ է, մենք աղքատ։

— Նա հարուստ է, մենք աղքատ — հետո, ալդ ե բոլորը։

— Յես կարծում եմ այսքանն էլ բավական է, վոր մնացյալը դու հասկանաս։ Ուրիշ ասելիք չունեմ։

Արտասանելով վերջին խոսքը, Մարիամը հանդարտ վերկացավ տեղից ու դուրս գնաց։ Ռուբենը զարմացած նայեց նրա չետեից, մի քանի վարկյալն մտածողության մեջ ընկավ։ Առաջին անգամ նրա սրբտում ծագեց մի թույլ կասկած Հալաբյանի մասին։

«Քույրս ճշմարիտն է ասում, — խոսեց նա մտքում, — մեր և այդ հարուստ Հալաբյանի մեջ ի՞նչ կապ կարող է լինել։ Ինչ կա՞պ... չե՞ վոր նա իմ հոր բարեկամն է։ Հնոտ՞։ Վոչ. Մարոն ճշմարիտն է ասում։ Միթե՞ չես այդքան պարզամիտ եմ։ Միթե՞ Հալաբյանի բարեկամութունը մի ուրիշ նպատակ ունի։ Ահա հենց այդ բանը պետք է իմանալը...»

Յեով ամբողջ որը նա քոջ խոսքերի ազդեցության տակ եր. վորքան նա թախանձեց, վորքան ստիպեց, Մարիամը ալլ ևս վռչինչ չխոսեց այդ մասին, և միայն կրկնում եր.

— Ինքդ մոռածիւր։

— Հասկանում եմ, — ասաց, վերջապես, Ռուբենը, — այդպիսի մի մարդ, ինչպիսին Հալաբյանն է, չեթե մի նպատակ ունի մեր վերաբեր-

մամբ, այդ նպատակը ուրիշ վոչինչ չի կարող լինել, չեթե վոչ... Նա
ամուրի չե և դուցե... Բայց, Մարո, լես այդ կողմից բոլորովին վախ
չունենա: Դու անկախ ես... հասկանում ես, վոչ վոք, վոչ վոք չի կարող
ճնշումն գործել քեզ վրա... հասկանում ես: Գալով ինձ, չերեք, բացի
չկրթարական խորհրդից, վոչինչ իրավունք մի սպասիլ ինձանից: Այո,
լես հասկանում եմ միտքդ: Բայց դու չերեքս չես, իսկ լես միշտ ուժ
կունենամ քեզ պաշտպանելու ամեն տեսակ քեզ համար անախորժ
բաներից...

— Յես այդ դիտեմ, Ռուբեն, — արտասանեց Մարիամը, տեսնելով,
վոր չկրթարը հասկացել է չուր միտքը, — շնորհակալ եմ: — Մի բան
միայն կասեմ. լես Հալարյանի մասին վատ կարծիք չունեմ, բայց կըր-
կնում եմ, նրա այցելութունը ինձ ճնշում է: Իսկ դու ինքդ կարող ես
նրա հետ բարեկամ մնալ:

— Յեթե այդպես է, լես այնպես կանեմ, վոր նա չերկրորդ տն-
դամ այստեղ չգա, — վճռեց Ռուբենը, վերջ տալով խոսակցությանը:

XI

Հասավ այն օրը, չերբ պետք է փախչել որիորդ նատալիան: Յերե-
րեկոյան իննը ժամն էր, Թիֆլիսի Ժողովարանի ձմեռային բնականա-
նում տիրում էր մի անսովոր շարժում: Իշխան Սահարունին Ֆրանկ և
սպիտակ փողպատ հագած կարգադրութուններ էր անում: Հանդիսա-
վոր հազնված սպասավորները մի անսովոր չեռանդով կատարում էին
նրա աջ ու ձախ սփռվող հրամանները:

Բազմաթիվ տոմսակները վաղորոք տարածված էին հասարա-
կության մեջ, հույս կար, վոր բարեգործական չերեկույթը պիտի բազ-
մամարդ լինի: Ժողովարանի հարցուրավոր մոմերով լուսավորված սեն-
յակները մի առանձին շուք էին ստացել: Գլխավոր դահլիճի մի ծալ-
րը բռնված էր վիճակախաղի իրերով: Մյուս ծալրում առանձին-առան-
ձին կանգնած էին չերեք տոմսակ վաճառող որիորդներ, շրջապատ-
ված իրանց չերկրպագու կավալիրներով:

Յերաժշտութունը վերնահարկից դղրդեցրեց դահլիճները: Հան-
դիսականները հեռդհետե հավաքվում էին: Նախասենյակում խռնված
էր կոչված և անկոչ կարգադրիչների մի խումբ: Այստեղ, մի անկյու-
նում, տրոպիքական բույսերի տերեւների միջից, չերեկում էր չորրորդ
տոմսավաճառի գլուխը: Սանդխտից վեր բարձրացողին ուժով քաշում
էին այդ որիորդի մոտ և ստիպում տոմսակ վերցնել:

Մոտ տասը ժամն էր, չերբ, վերջապես, չերեկեցավ նատալիան մոր
ուղեկցությամբ:

— Նատու, ալդպես չի կարելի ուշանալ, — հանդիմանեց իշխանը շշնջուռով, — ամենը քեզ են սպասում:

Սակայն Նատուն վատ եր տրամադրված, լուր քեռու նկատողութիւնը անուշադիր թողեց: Մադամ Կուրաժոն խաբել եր նրա հույսը. նոր հագուստը դուր չեւ լեկել որիորդին, վորքան սպասում. եր: Նա հանդիմանել եր մադամին շատ կոպիտ խոսքերով, և վերջինը, ակնարկելով որիորդի նիհարութիւնը, պատասխանել եր.

— Մադուսպել, մեղավորը ձեր ցցված վոսկորներն են, կան բաներ, վոր մոգիստիան չի կարող ուղղել:

Այնուամենայնիւ, Նատալիան հագել եր լուր նոր հագուստը, վոր կարված եր կաթնագույն նուրբ մետաքսից և զարդարված պարզիզան վոլանսե կրուժեոներով: Նրա ուսերն ու թեկերը կիսով չափ բաց ելին:

Ճանապարհին մայրը նրան հորդորել եր, վոր մոռանա տխուր անցքը, լուր դեմքին զվարթութիւն տա: Բարձրանալով սանդխտով վեր, նրա աչքերի մեջ փայլեց ինքնագոհութիւն, բարակ շրթունքների վրա տխրութիւնը տեղի տվեց սովորական գոռոզ ժպտին: Նա մի կողմնակի հալացք ձգեց հայելիի մեջ, հագուստը այնքան ել վատ չեւ նստում, վորքան կարծում եր: Նա մի առանձին հաճութիւն զգաց, տեսնելով լուր պարանոցի կաշվի քնքշութիւնը, և մի անգամ եւ մաքում հայհոյեց մադամ Կուրաժոնին: Ընդհանրապես նա տգեղ չեւ, կային մարդիկ, վոր մինչև անգամ շատ գեղեցիկ ելին համարում նրան, գովելով նրա բարակ մեջքը, լերեսի գույնը և թուխ-թուխ, թանձր հոնքերը:

Նա լսեց մի քանի կոմպլիմենտներ, նրան շրջապատեցին, նա զվարթացավ: Հովհարի ծալքը, անդլիական պոլիսմենի ձեռով, մոտեցրեց մի քանի ծանոթների, և վոմանք հետեցին նրան՝ տոմսակ գնելու:

Դահլիճը հետզհետե լցվում եր, խուլ աղմուկը ավելի ու ավելի սաստկանում եր:

Հասարակութան մեջ լերեկացավ Ախարումյանի սև և դեր պարանոցը: Վորկրամովը առողջացել եր: Պետք և տասած, վոր մոսխո Վախս-վախյանը նրա հիվանդութեան լուրը մեծացրել եր, ինչպես սովոր եր փքել ամեն մի չնչին լուր:

— Տասը-տասը ռուբլու ամեն մի արկղից—ավել չեմ պահանջում, — գիմեց նրան իշխանը, թեկից բռնելով և քաշելով տոմսավաճառների մոտ:

— Այդ բանում հավասարութեան որենքին չես խիստ հակառակ եմ, — ասաց Ախարումյանը, — ով ավելի գեղեցիկ և, նրա համար ավելի կզոհեմ: Բարեգործութիւնն ել ճաշակի բան և, չես փողերս նվիրում եմ կանանց և վոչ թե գործին:

Յեւ ինչպէս ճշտակի համաձայն դիմեց ան արեւդին, վորի մոտ
Քանդակներ եր ամենազեղեցիկը տոմսավաճառ կանանցից:

Հասարակութիւնը նստալիալի քիֆովը չեր: Գերազանցող տար-
քը դարձաւ հասարակ վաճառականների ընտանիքներն ելին: Նա ան-
համբեր սպասում եր «արիստոկրատներին», առանձնապէս կոմսուհի
Նավալիխինային: Նրա տրամադրութիւնը ավելի վատացաւ, տեսնե-
նելով մի քանի «սլուրտուկավոր» չերիտասարդներ, վոր ինքնազուխ,
կոպիտ կերպով, քաշում ելին սրան ու նրան և մոտեցնում տոմսա-
վաճառներին:

— Ուրեք եր անգամ չուշեցները, — հարցրեց որիորդը իշխանից:

Նորին պաշտօնաւարութիւնը, հեղնաբար ժպտալով, պատաս-
խանեց.

— Մեր ազգասերները:

— Վոր մեջտեղ չընկնեն, լավ կլինի:

Այդ բոլորին տիկին Սոփիոն, Հալաբլանի թեից բռնած, մոտե-
ցաւ աղջկանը: Մտնելով դահլիճ, տիկնոջ առաջին հոգսը չեղաւ գտնել
ամուրիին, չերկրորդը՝ դիմավորել անվանի կոմսուհուն:

— Միթե չեք պարկուռ, վոր դուք ել սլուրտուկով եք չեկել, —
հարցրեց Նատալիան դժկամակութեամբ:

— Վոչ:

— Զարմանալի չե, կարծես, բոլորը չերգվել են իմ բալս փչաց-
նել այս չերկու:

— Ինչո՞ւ, տոմսակները լավ են վաճառվում, չես կարծում եմ,
մեծ չեկամուտ կունենաք:

— Շատ հարկավորս ե չեկամուտը, իմն ան ե, վոր բալս ուրախ
անցնի, շքեղ լինի: Այդ սլուրտուկները ամեն բան ազեղացնում են:

Ամուրին շտապեց չուր բարեգործական տուրքը վճարելու տոմ-
սավաճառներին: Հետո նա, ոգտվելով Սոփիոյի և Նատալիայի զրադ-
ված դրութիւնից, հեռացաւ և խառնվեց ամբոխին: Մի քանի ժամ
առաջ Ռուբենը նրա մօտն եր չեղել, և նա վարպետութեամբ իմացել
եր, վոր Մարիամն ևս չերեկուցթ ե գալու: Անցնելով մի դահլիճից մյուս-
ըն, ամեն տեղ անց անցելով, նա չգտաւ Մարիամին, և արդեն հուսա-
հատվելու վրա չեր, չերը մի անկունում տեսաւ Ռուբենին մի քանի
չերիտասարդների հետ:

— Դուք միաջնակ եք չեկել, — հարցրեց նա, չկարողանալով զսպել
ձուր հետաքրքրութիւնը:

Մինչև Ռուբենի պատասխանելը, նա տեսաւ Մարիամին: Որիոր-
դը չուր վարժուհու հետ կանգնած խոսում եր: Պատից քարշ արած

մեծ կանթեղը առատ լույսը սփռել եր նրա վրա: Յեւ ալդ լուսո ներքո նրա լերեսի գունատութիւնը այնքան նկատելի չեր. աչքերի մեջ միայն փայլում եր մի տեսակ տենդային հուզմունք խառն մեկամաղձոտութեան հետ: Նա արագ-արագ հովհարում եր իրան, անդադար նայելով աջ ու ձախ անհամբեր հայացքով: Նա հագած եր չուր բաց արձիճագուն մետաքսյա հագուստը, պարզ, տառնց ավելորդ զարդարանքի:

Բարեբախտաբար Հալաբչանը կարուձևի վարժունու հետ ծանոթ եր: Նա բարեկեց, կանգ առավ և սկսեց խոսակցել: Մարիամը զգաց դարձյալ սովորական ճնշումը: Թվում եր նրան, վոր ամեն կողմից լուր վրա լին նայում, վոր ամենը իսկույն պիտի սկսեն նրա մասին խոսել, բամբասել:

Հալաբչանը հանեց գրպանից լուր վերցրած տոմսակները, վոր դեռ չեր բաց տրել: Նա կեսը տվեց վարժունուն, կեսը Մարիամին և խնդրեց բաց անել: Բոլորը փուչ դուրս լեկան: Այդ անանջողութիւնը գրգռեց նրա սնահամակտութիւնը, վորից նա զերծ չեր: Նա հեռացավ և իսկույն վերադարձավ մի բուռն տոմսակներ ձեռին: Այս անգամ Մարիամի բացածներից յերկուսը նոմերով ելին:

— Ձեր ձեռքը բախտավոր և ինձ համար,—ասաց Հալաբչանը խորհրդավոր լեզանակով:

Նա այժմ ուրախ եր, պտուղտ-պտուղտ եր անում Մարիամի շուրջը, աշխատելով որիորդի գեմքի վրա շարժել մի ժպիտ: Բայց վերջինը լուռ եր և մտախոհ:

Հանկարծ Մարիամը մի ցնցումն զգաց: Մեկիք-Բարսեղյանը անցնում եր նրա մոտով: Տեսնելով Մարիամին, նա քաղաքավարութիւնից դրդված մոտեցավ, արտասանելով.

— Դուք այստեղ եք:

Բժիշկը ծանոթ եր Հալաբչանի հետ:

Մարիամի սիրտը ուժգին բաբախում եր: Ինչ եր այդ—լեկի՞նդ, սէր, ատելութիւն, թե՞ հետաքրքրութիւն—չգիտեր: Զգում եր միայն, վոր նա դարձյալ կաշկանդում և լուր կամքը, իլում և հաստատակամութեան վերջին ուժը: Այն, ինչ-վոր մի բոլոր առաջ համոզմունք եր, դարձեալ փոխվեց կասկածի: Բժիշկը խոսում եր լերեկութի մասին: Կրկին թույլ հուշի նման մի բան զարթնեց Մարիամի սրտում: Միթե ամեն ինչ վերջացած և, միթե նրա համար ախորժելի չեր հուսալ և այդ հույսը նա ստանում եր բժշկի մի ամենաթույլ ժպտից, մի անորոշ հայացքից: Նա զգում եր բուռն ցանկութիւն բժշկի հետ առանձնանալու, վախենում եր, վոր մի գուցե նա թողնի իրան և հեռանա:

Պետք և նրա հետ խոսել, թող ինչ ուզում և լինի, անորոշութունը ծանր և, գառն և, անտանելի չե:

— Դուք չեք պարելու, — հարցրեց Հալարյանը Մելիք-Բարսեղյանից: — Յես շատ հաղիվ եմ պարում:

Հալարյանը դժգոհութունից կծեց ներքին շուրթը: Նկատելով Մարիամի դեմքի փոփոխութունը, նրա սիրտն արդեն մի կասկած եր ընկել: Արդյոք մի վորեն կապ կմ նրանց մեջ, մտածում եր ամուրին: Նա դնեց բժշկին, և մի նախանձ դարձնեց նրա սրտում: Յերիտասարդութունը, աշխուժ խոսակցութունը, «բժիշկ» կոչումը — ահա այդ նախանձի առաջին պատճառը: Նա սկսեց ատել բժշկին և մտածում եր ինչպես նրան հեռացնի Մարիամից:

Նրանց մոտով ծանր քալելով անցավ տիկին Սովիոն մի ինչ-վոր վրացի իշխանի հետ: Մարիամը չերեսը դարձրեց: Տիկինը, տեսնելով նրան Հալարյանի հետ, մտքում գրգռվեց: Նա վորոնում եր ամուրիին, նրան մոտեցավ միայն բժիշկը: Յերեցավ և՛ իշխան Սահարունին: Մարիամը, վարժուհու թևից բռնելով, հեռացավ, խուս տալով թե իշխանից և թե Սովիոյից:

— Յերկու խոսք ունիմ քեզ ասելու, — ասաց իշխանը, տոնելով Հալարյանի թևը:

— Ի՞նչ ևս ուզում ինձանից, — պատասխանեց Հալարյանը մի այնպիսի չեղանակով, վոր արտահայտեց նրա խորրն դժկամութունը:

— Դու անպատճառ պիտի պարես:

— Յես:

— Այո, դու:

— Դու խելագարվել ես, իշխան. չես տա տարի չե չեմ պարում:

— Իմ խաթրու պետք և պարես, թե չե՛ ել ինչ պոկաշչիկ-մոկ-կաշչիկ ասես մեջ են ընկել, ուզում են պարել: Քրոջս աղջկա բալը փչացնում են, նա վրդովված ե: Յես արդեն մի քանի դուլդ կազմել եմ, ուզում եմ, վոր որինավոր մարդիկ մեջտեղ մտնեն: Կոմսուհի Նավալիխինան այստեղ և. ամոթ ե:

Հալարյանը մեծ դժվարությամը կարողացավ ազատվել իշխանի ձեռքից և գնաց Մարիամին գտնելու:

Վիճակախաղը վերջացել եր, հատակի վրա սփռված ելին պատռոտված տոմսակները: Պարերը արդեն սկսվել ելին: Նատալիան վալիս եր պտտում մի չերիտասարդ սպայի հետ, վորին նա համոզել եր պարերի կառավարիչ լինել: Դահլիճը ծայրեիծալը լիքն եր: Հանդիսավանները, ըստ չերեուլթին, գոհ ելին չերեկուլթից: Միայն մի քանիսի գեմքերն ելին տխուր, նրանց, վորոնք վիճակախաղի վրա կորցրել

և ին իրանց վերջին ուղիները: Մի տիկին, դահլիճի մուտքի մոտ նստած, հաշվում էր չերեկույթի չեկամուտը: Մի ուրիշ տիկին, հեռավոր, նրան ծաղրում էր չուր խոսակիցների հետ:

— Յես զարմանում եմ,—ասում էր ծաղրողը, դեմքը ծռմոկելով,— այդ մարդիկ չերեկացում են, վոր գործ են շինում: Ընկել են քաղաքները, լինչ «խլամ» սսես հավաքել են, բերել մանրավաճառի խանութ բաց արել... Ֆի դոն, չես զգլում եմ:

— Յեվ լ՛հնչ հասարակություն են հավաքել, տեք աստված, ով վոր ասես կա,—հարեց նրա խոսակիցը:

— Ձե, չե, գլխավորն այն է, չին ամաչում, գնացել են ու կոմսուհի նավախիխնային հրավիրել, խի-խի-խիլ:

— Սուտ իշխանի աղջկանից կամ նախկին բաղադի կնկանից ավելի բան սպասել չեր կարելի:

Այսպես, բամբասանքներին, արհամարհական ակնարկներին, ժպիտներին, կծու ակնարկություններին վերջ չկար: Յեվ ամենի ուշադրության կենտրոնը տիկին Սոփիոն էր չուր աղջկա հետ:

Նատալիան ստեպ-ստեպ մոտենում էր կոմսուհուն և զբաղեցնում նրան: Ամեն ճիգ գործ էր դնում նա, վոր բարձրաստիճան տիկինը գոհ լինի և գլխավորապես այդ բանի մեջ էր տեսնում չերեկույթի հաջողությունը: Տիկին Սոփիոն այնքան չեր զբաղված կոմսուհու, վորքան Հալարյանին չուր մոտ ունենալու մտքով: Իսկ Հալարյանը չկար, չեր չերեում, և տիկինը կատաղությունից մատերն էր կրծոտում, զգալով, վոր նա այս չերեկո ևս ընկած է Մարիամի չետեից:

Դահլիճը թնդում էր չերաժշտության փողերի ու թմբուկների հնչյուններից, պարողների վոտների տրոփուներից: Մերթ ընդ մերթ լսվում էր պարագլուխ սպայի խրոխտ, բարձր ձայնը, վոր ղեկավարում էր պարողներին:

— Ձերդ պայծառափայլություն, կարծիք, բավական զվարճալի չե, այս, ներեցեք ասել, բաճիլը—զարձավ կոմսուհուն նրա ուղեկիցներից մեկը հեգնաբար:

Կոմսուհին ժպտաց:

— Իրավունք ունեք, Պետր Աֆանասյեվիչ, արժեք տեսնել այս տարորինակ հասարակությունը:

— Առանձին ուշադրության արժանի չե այդ գեղեց...կու...հի...նե.. ըի... հագուստը, մանավանդ գրացիան, եֆ, եֆ, եֆ,—մեջ մտավ չերկրորդ ուղեկիցը և սկսեց բարձրաձայն ծիծաղել:

— Պարոններ, զգուշ կացեք, մի մոռանաք, վոր մենք այստեղ հյուր ենք,—սաստեց կոմսուհին շշմուռնով:

— Իսկ կառավարչուհին, ֆո, ֆո, ֆո,—հիանալի չե:

— Իսկ մամլոյ:

— Ռիստոկրատիս:

— Խի խի խի,— ծիծաղեց կոմսուհին, չուր կարմիր չերեսը մեծ հովհարով ծածկելով:

Նատալիան պարուս կը և, միևնույն ժամանակ, աչքը չեր հեռացնում կոմսուհուց: Նկատելով վերջինի զվարթ ծիծաղը, մտքում ուրախացավ, վոր բարձրապատիվ հուրը ասնքան զվարճանում է:

— Յերեակայեցեք,— խոսեց դարձալ կոմսուհու հանաքչին,— ալդ սե-սե դեմքերի մեջ չես տեսնում եմ, վերջապես, մի վոչ ագեղ չերես:

— Ո՛ւր ե, ո՛ւր ե:

Հանաքչին կոմսուհու ուշադրութիւնը դարձրեց Մարիամի վրա, վոր ալդ վայրկյանին անցնում էր նրանց մոտով միայնակ: Նա զրուխը հավանորեն շարժեց: Նույն պահին մոտեցավ նրան Նատալիան:

— Ասացեք, խնդրեմ, ո՞վ է ալդ համակրելի դեմքով որիորդը,— հարցրեց կոմսուհին:

Անգուստ նախանձը վայրկենարար պղտորեց Նատալիաի սիրտը, չերը տեսավ, վոր կոմսուհու հավանածը Մարիամն է: Նա պատասխանեց, թէ չե ճանաչում «ալդ աղջկան»:

Մարիամը Ռուբենին էր վորոշում: Նա միայնակ անցավ սեղանատուն, ուր արդեն առանձին-առանձին սեղանների շուրջը նստած ընթրում էր հասարակութիւն մի մասը: Ռուբենը աչտուղ չեր: Մարիամը հետ դարձավ, և մեծ դանիճին չհասած, տեսավ բժշկին, վոր չերկու չերիտասարդ որիորդների հետ տաք-տաք խոսում էր: Ալդ չերկուսից մեկը քաղաքի մի հարուստ ընտանիքի զավակ էր, հռչակված չուր խոշոր ոժիտով:

Մարիամը չկարողացավ դպիլ իրան, նրա արշուներ սառավ չերակներում, աչքերը պղտորվեցին:

«Ի՞նչ շուտ կտրողացավ ծանոթանալ դրանց հետ», ասաց նա մտքում: Բժշկի դեմքը արտահայտում էր խորին բավականութիւն, նա շատ ուրախ էր չերելում:

Հոգով ցանկանում էր Մարիամը հեռանալ ալդ չարագուշակ չերեկութից, ուր հետզհետե ավելանում էր նրա տանջանքը: Բայց Խնչ անհաղթելի ուժ էր ասն, վոր դարձալ մղում էր նրան դեպի ալդ մարդը և վոր տակավին ստիպում էր նրան հետամուտ լինել մի չքացող բախտի: Կատաղի խանդը կրծում էր նրա սիրտը: Նա չկարողացավ վոչ առաջ գնալ, վոչ չետ դառնալ: Նա մնաց տեղն ու տեղը, աչքերը

դարձրած զեպի ասն կողմը, ուսկից լսվում եր բժշկի բարձրաձայն ծիծաղը։ Որիորդները անցան դահլիճ։ Բժիշկը, մեջքից թեքված, հետևեց նրանց, զվարճախոսելով, ծիծաղելով և աջ ու ձախ արտասանելով «վինոլատ», «պարդոն», «ներողութուն», ուսմ ինչ լեզվով հարկավոր եր։

Մարիամը կանգնած եր միենուկն տեղում, մեջքը հենած սպնդուխտի վանդակապատին։

— Խոչ և պատահել քեզ,— լսեց նա չիղբոր ձայնը,— դու հոգնե՛լ ես արդեն։

— Այո, հոգնել եմ, գնանք, գնանք աչստեղից։

— Վոչ, շատ վաղ և ղեռ։ Կես ժամ և քեզ պտրում եմ, չեմ գտնում։ Գնանք դահլիճ, չես ուզում եմ քեզ ծանոթացնել իմ ուսանողական ընկերների հետ։

— Վոչ վոքի հետ չեմ ուզում ծանոթանալ։ Մի տեղ նստենք, քիչ հանգստանանք, գլուխս պտտում ե։

— Ուրեմն չե՞ս պարելու։

— Վոչ։

Ռուբենը նրան ուղեկցեց ասիական ձևով կահավորված դահլիճը, ուր փափուկ գահավորակների վրա նստած ելին խումբ-խումբ հանդիսականներ։

— Ախ, Մարո, չեթե իմանալիր ինչպես ելի վիճում մի կես ժամ առաջ իմ ընկերների հետ։ Տեր աստված, ի՜նչպես մարդիկ փոխվում են և ի՜նչպես շուտ։ Յես չեմ ճանաչում իմ նախկին ընկերներին, բոլորը փոխվել են, բոլորը մանրացել են, բոլորի խոսակցության նյութը աչժամ կանաչք են, իրանց պաշտոնները, իրանց զվարճությունը— ուրիշ վոչինչ։ Վորքան հիմար դրության մեջ դրեցի ինձ, խոսելով նրանց հետ ասն առարկաների մասին, վոր մեզ վոգետվորում ելին։ Դու պետք և լսես, թե ինչպես նրանք միմյանց ծաղրում են, քննում, քննադատում, բամբասում։ Ահա հենց այդ բանի մասին ելի վիճում նրանց հետ մի փոքր առաջ։

Յեղբայրը խոսում եր, քրոջ միտքը ո՛ւր եր։ Կրկին նրա աչքովն ընկավ բժիշկը նույն որիորդի հետ։

— Գնանք տուն, Ռուբեն,— ասաց նա, բռնելով չիղբոր բազուկը,— աչստեղ սաստիկ տոթ ե, չես խեղդվում եմ, գնանք։

Բայց դու այս չերեկո բոլորովին չզվարճացար։ Յես ուզում եմ քեզ հետ միքիչ պարել։ Մերժում ես։

✓ Դարձյալ չերեաց Հալաբյանը։ Ամբողջ մի ժամ մերթ իշխան Սահարունիի, մերթ տիկին Սոփիոյի և մերթ որիորդ նառալիաչի ձեռքին տանջվելուց հետո, ամուրին, վերջապես ազատվել եր։

— Արդուք չեւիք կամենալ ընթրել, — զիմեց նա Ռուբենին և Մարիամին:

— Նա մերժումն ստացավ, և մինչ աշխատում եր համոզել, նրա թեկից բռնեց Ախշարումյանը և քաշեց մի կողմ:

— Բավական ե, թող այդ հիմարութուններդ. — ասաց վորկրամոյր, — Թնչ ես ընկել այդ աղջկա լեռնից: Գնա՛նք ընթրելու:

Հալարչանը կատաղեց:

— Թողեք ինձ հանդիստ, ի սեր աստուծո, — խնդրեւէ ձայնով արտասանեց նա, յուր թեւ աղատելով Ախշարումյանի ձեռից:

— Գնա՛ն, դու դժգոյն ես:

Հալարչանը հետ վերադարձավ: Բայց Ռուբենն և Մարիամը չկային իրանց առաջվա տեղում: Նա անցավ ասիական դահլիճին կից փոքրիկ սենյակը: Այստեղ վոչ վոք չերեաց: Նա քայլերը ուղղել եր դեպի գլխավոր դահլիճ, չերը նրա ականջին հասավ մի շշնջման ձայն: Նա չեց դեպի սենյակի կիսալուսավոր անկուռնը և մնաց տեղն ու տեղը անշարժ: Նա չեր սխալվում. դա Մարիամն եր, նստած դահավորակի վրա: Իսկ մյուսը. բժիշկ Մելիք-Բարսեղյանն եր: Յուր լեղրոր հետ հանդիպելով բժշկին այդ սենյակում, որիորդը խնդրեց Ռուբենին թողնել իրանց միջանի բոպե առանձին: Նա վճռեց անել վերջին քայլը. նա կամեցավ բացատրութուն պահանջել Մելիք-Բարսեղյանից: Յեւ հա նրանք նստած ելին դեմ ու դեմ...

Մի վայրկյան նրանք լուռ նայեցին միմյանց լերեսին: Մարիամի աչքերի մեջ փայլում եր մի հուսահատ վճռականութուն: Բժիշկը գուշակեց նրա միտքը: Նա զգաց, վոր արդեն հասել ե բարոյական ճգնաժամը, վոր դեմ ու դեմ նստած ե մի անողոք դատավոր, վորին պարտավոր ե հաշիվ տալ յուր վարվողութւն մասին: Նա շփոթվեց, նա չեց աջ ու ձախ. վոչ վոք չեր չերևում, բոլոր հանդիսականները կից դահլիճներումն ելին:

— Բժիշկ, — ընդհատեց Մարիամը վայրկենական անախորժ լուութունը մի այնպիսի ձայնով, վորի մեջ հազիվ զգացվում եր նրա հոգեկան խռովութունը, — այսոր չես վճռեցի ձեզ հետ խոսել վերջին անգամ: Հուսով եմ, վոր չեք մերժիլ միջանի բոպե ինձ նվիրել, միջանի բոպե միայն, այնուհետեւ դուք ազատ եք: Կարձիկ եք լսել:

— Այստեղ, — պատասխանեց բժիշկը, շվարված աջ ու ձախ նախելով, — այս հասարակական տեղում, Մարո, մեր խոսակցութունը, չեթե գաղտնիք ե, կարող են լսել:

— Մի վախենաք, վոչ վոք չի լսիլ: Յես այստեղը ընտրեցի մեր բացատրութւն համար այն պատճառով, վոր մենք այսուհետեւ ուրիշ

վոչ մի տեղ չենք կարող տեսնվել... Յերբեք: Միամիտ կացեք, մի կարծեք, վոր չես ձեռ կանալատվեմ: Վոչ, գիտեմ, վոր դուք վախենում եք հասարակութունից:

— Լսեցեք, չես ամեն բան զգում եմ, ավելորդ կլինի, չեթե դուք սկսեք պարզել դեպի ինձ ձեր զգացմունքները: Դուք ինձ չեք ներում, չես գիտեմ այդ, գիտեմ այն ել, վոր չերբեք, չերբեք չեք սիրել ինձ: Բայց... ասացեք... Խնչ եր նշանակում ձեր այդ դառն կատակը ինձ հետ: Պատասխանեցեք, ինչո՞ւ համար դուք այդպես վարվեցիք, ինչո՞ւ...

Բժիշկը դարձյալ նայեց աջ ու ձախ: Չնայելով, վոր Մարիամը խոսում եր ցածր ձայնով, գրեթե շշնջունով, բժիշկը այսուամենայնիվ կարծում եր, վոր կարող են լսել նրա ասածը: Որիորդի արտաքին կեղծ սառնութունը նրան չեւ խաբում: Նա զգում եր նրա ներքին բուռն հոգեկան խռովութունը, զգում եր և վախենում մի գուցե խոսակցութունը շարունակելով, առիթ տա մի անախորժ տեսարանի:

— Մարո, — հորդորեց նա մեղմ և փաղաքշական ձայնով, — թող, հետո կխոսենք այդ մասին: Յես պատրաստ եմ քեզ բացատրութուն տալ, բայց վոչ այստեղ: Նայիր, — ավելացրեց նա, ցույց տալով դեպի մեծ դահլիճը, վորի դռների մոտ չերեում ելին մի խումբ հանդիսականներ:

Մարիամը հեզնարար ժպտաց:

— Ինչի՞ցն եք վախենում, — շարունակեց նա համառությամբ, — վոր չես աղմուկ կբարձրացնեմ այստեղ, վոր չես կարտասվեմ, վոր չես ձեր անունը խոսակցության և բամբասանքի առարկա կդարձնեմ: Չի՞ք ճանաչում ինձ, մոռացել եք... Վոչ, պատվելի բժիշկ, չես այդ չեմ անիլ, չես ինձ չեմ թույլ տալ մի չերիտասարդ բժիշկի, հա հա հա, պատիվը արատավորել: Բայց չես պետք և ձեզանից հաշիվ ստանամ ձեր վարմունքի մասին, հասկանում եք: Խնչ, դուք կարծում ելիք, վոր գործ եք ունեցել մի խեղճ, մի վողորմելի, մի անլիզու աղջկա հետ, վոր կարող ե չերեկվա ձեր վիրավորանքը այսոր մոռանալ: Հասկացեք, ուրեմն, ձեր առաջ նստած ե մի չափահաս կին, վոր ինքը կարող ե չուր պատիվը պաշտպանել: Տեսնում եք, այսոր, այս հասարակական տեղում, չես ամեն ինչ արհամարհելով, պահանջում եմ ձեզանից այն, ինչ-վոր իրավունք ունեմ պահանջելու: Տվեք ինձ պատասխան, ասացեք, ի՞նչ իրավունք ունեյիք կարծելու, վոր չես փողով ինձ համար փեսացու առնողներից եմ: Լռեցեք... Թույլ տվեք խոսքս վերջացնեմ: Խոմ ձեր հոգին այժմ ինձ համար պարզ ե, Խոմ դուք մի ծախու ապրանք եք... հ՞մ, դուր չի՞ գալիս ձեզ իմ ասածը: Միթե ճիշտ չե, միթե դուք ձեր անունը, ձեր չերիտասարդութունը, ձեր

կրթութիւնը, ձեր գաղափարները, ձեր պատիւն տգամ կշիռքի մի թաթի վրա չեք դրել, մյուս թաթի վրա վոսկի-վոսկի չեք կանչում: Ձե՛ք, այսպէս չե՛ւ չհրքեցեք, չեթե սուտ եմ ասում, պաշտպանվեցեք, չեթե ասածս զրոյարտութիւնն էք համարում, հերքեցեք, վոր դուք... մի մի մի... բախտախնդիր չեք...

Քանի խոսում եր որիորդը, հետզհետե կորցնում եր սառնութիւնը և նրա սրտի դառնութիւնը ավելի ու ավելի զգացվում եր աստիճանաբար հուզվող ձայնի լելեկներին մեջ: Յե՛վ նրա նիհարութիւնը, նրա դեմքի գունատութիւնը, նրա աչքերի հիվանդոտ փայլը սարսափեցնում ելին բժշկին: Նա ցնցվում եր որիորդի ամեն մի խոսքից, նա անդադար նայում եր յուր շուրջը: Վերջին խոսքը նրան բոլորովին զինաթափ արավ: Նա ցանկանում եր, վոր այդ բոլորին ներս մտնի մի ծանոթ մարդ և վերջ դնի այդ տագնապալի դրութեանը: Սակայն չերաժշտութեան ձայնը դեռ լսվում եր, պարերը դեռ շարունակվում էլին: Յերբեմն-յերբեմն միայն մի հանդիսական մտնում եր սենյակի մի դռներով և իսկույն դուրս գալիս մյուս դռներով, ծուլորեն նայելով աջ ու ձախ և ուշադրութիւն անգամ չդարձնելով նրանց վրա:

— Ախ, տեր աստված,— փոխեց հանկարծ յուր ձայնը Մարիամը, վերջապես, չկարողանալով շարունակել յուր կեղծ սառնասրտութիւնը,— ի՛նչ եմ ասում, վորքան հիմար եմ չեմ: Ո՛ւմ հետ եմ խոսում, ի՛նչ եմ պահանջում չես ձեզանից: Դուք լուծւում եք, դուք չափից դուրս շփոթված եք, դուք ուզում եք փախչել ինձանից: Գնացեք,— ավելացրեց նա, մի վայրկեան լռելուց հետո,— չես չեմ կարողանում ձեզ հետ սառնասիրտ խոսել: Թողեք ինձ, հեռացեք, դուք ազատ եք, անտեղ ձեզ սպասում են... ուրիշները:

Նա թուլացած թիկն տվեց գահավորակին: Նա զգում եր, վոր ինքն ել չգիտե ինչ է ասում, վոր առհասարակ այն չի խոսում, ինչ-վոր հարկավոր եր խոսել: Նրա դողդոջուն ձեռը ուժգնակի շարժում եր լայն հովհարը: Նա զգաց ողի սաստիկ պակասութիւն, նրա շնչառութիւնը ծանրանում եր:

— Ձե՛ք կամենում դահլիճ անցնել,— լսեց նա բժշկի ձայնը, և այդ ձայնը հնչեց նրա ականջին իբրև մի հանդուգն հեղնութիւն, իբրև մի սառն արհամարհանք:

Այլիս միանգամայն ավելորդ եր խոսելը: Նա ճիգն արավ և անըսպասելի արագութեամբ վոտքի կանգնեց: Նա նայեց մի վայրկեան բժշկի լերեսին և խեղդված ձայնով, գրեթե խուլ շնչունով արտասանեց.

— Գնացեք ձեզ համար բախտ վորոնեցեք, իսկ լե՛ս...

Նա ծածկեց լերեսը հովհարով և քայլերը ուղղեց դեպի հակառակ

կողմ: Յերբ բժիշկը հեռացավ, նրա առաջ դուրս լեկավ սենյակի կիսա-
խավար անկյունից... Հալարչանը: Ամուրին հուզված եր, նրա աչքերի
մեջ փայլում եր սաստիկ անհանգստութիւն: Մարիամը նայեց նրա
չերեսին, և վաշկենաբար սթափվեց:

«Թիթե լսի՛ր և իմ առածները», անցավ նրա մտքով:

Նա թուլլ տվեց ամուրիին լուռ գնալ լուր մտաով: Նա ամբողջ
մարմնով դողում եր:

«Ի՛նչ ստորութիւն, ի՛նչ ստորութիւն,—կրկնեց նա մտքում,—
ի՛նչ արի չես, ի՛նչ արի չես»:

Արդարեւ նոր միայն նա հասկացավ, վոր միանգամայն արժանի
չեր լուր ինքնասիրութեանը գրեթե ուժով բացատրութիւն պահան-
ջել մի մարդուց, վոր աչնպես տմարդի կերպով խաբել եր նրա հուշ-
սերը: Այժմ այլևս նրա համար գոյութիւն չուներ չքացած բախտի
ինդիբը: Զարթնեց նրա մեջ լուր բոլոր գորութեամբ նսեմացած ինք-
նասիրութեան խալթող զգացմունքը:

«Ի՛նչ ստորութիւն, ի՛նչ ստորութիւն»,—կրկնում եր նա ան-
դադար:

Նրան թվում եր, վոր վոչ միայն բժշկի առաջ ինքն իրան ստո-
րացրեց, այլև ամենի աչքում, վոր ամբողջ հասարակութիւնը այժմ
աղբրում ե նրան, ծիծաղում ե, բամբասում ե: Նա չգիտեր ինչ ե կա-
տարվում լուր շուրջը, նա չեր հասկանում լուր հետ ընթացող Հալար-
չանի ասածը, լսում եր միայն նրա խուլ, չերերվող ձայնը: Նա մտա-
ծում եր դտնել չեղբորը շուտով և աննկատելի կերպով հեռանալ չե-
րեկուլթից:

«Ի՛նչ արի չես, ի՛նչ արի, տեր աստված», շշնջացին այս անգամ
լսելի ձայնով նրա շրթունքները:

— Ինչ ասացի՞ք,—հարցրեց Հալարչանը, լսելով նրա ասածը:

Մարիամը մի քիչ սթափվեց:

— Խնդրեմ չեղբորս դտեք և ուղարկեցեք ինձ մոտ, չես ախտեղ
կսպասեմ:

Նա ուժասպառ, թուլացած նստեց ընդարձակ հյուրասենյակի մի
կիսալուսավոր անկյունում:

Հալարչանը տեղից չշարժվեց: Զկարողանալով զսպել լուր բուռն
հետաքրքրութիւնը, նա թագնվել եր սենյակի մի անկյունում և ա-
կանջ դրել Մարիամի խոսակցութեանը բժշկի հետ: Որիորդի մի քանի,
անզգուշ կերպով բարձր արտասանված, դարձվածները այլևս պարզե-
ցին նրա համար մի չարագուշակ դադտնիք: Ուրեմն Մարիամը սիրում
ե այդ չերիտասարդ բժշկին, իսկ նա... արհամարհում ե: Նա պատ-

րաստ եր նույն ընդհանր հարձակվել Մելիք-Բարսեղյանի վրա, տալ նրան մի խալտառակ ապտակ: Նա կատաղած եր և՛ Մարիամի դեմ: Ի՞նչ, մի չերիտասարդ արհամարհում ե նրան, և նա դեռ հետամուտ ե լինում նրան:

— Գտեք չեղորոս, խնդրում եմ ձեզ,—ասաց որիորդը կրկին:

Հալաբյանը մեքենաբար շարժվեց տեղից և սկսեց աչքածել լուրջուրջ: Յերեկույթը դեռ շարունակվում եր: Պարերից հոգնած գուլգերը անց ու դարձ ելին անում, ուրախ-ուրախ խոսակցելով: Դանիճը կիսով հափ դատարկվել եր:

Նրան մոտեցավ մոսիո Վախվախյանը և ասաց, թե իշխան Սահարունին կանչում ե: Նա ուշադրություն չդարձրեց, անցավ:

— Վերջապես գոռ քեզ,—լսեց նա դանիճում իշխանի ձայնը:— Նո՛ւ, գնանք, քեզ են սպասում:

— Ինձ վոչ վոք չպիտի սպասի, չես գործ ունեմ:

— Զի կարելի, դու մերոնց խոսք ես տվել միասին ընթրելու: Նոր միայն ամուսին հիշեց, վոր արդարև, լուր գլուխը ազատելու համար, ահամա խոսք եր տվել Նիկողայոսին:

Նա ուշադրություն չդարձրեց իշխանի վրա: Նա գիմեց առաջ: Այս անգամ նրան հանդիպեց տիկին Սոփիոն:

— Ախ, պարոն Հալաբյան, չես ձեզ ելի պտրում,—ասաց տիկինը ուրախ-ուրախ:—Յերեկայեցեք, կոմսուհի Նավալիխինան այնքան գովեց մեր բալը, այնքան գովեց, վոր չգիտեմ... Փառք աստուծո, փառք աստուծո, շատ ուրախ եմ: Դեհ, գնանք աթո՛մ, Նիկողայոսը սպասում ե...

Յերեկեցան և՛ որիորդ Նատալիան ու Ախշարումյանը, ամուսիններ շրջապատեցին: Այլևս դժվար եր ազատվել նրանց ձեռքից: Սակայն նա դարձյալ ներողություն խնդրեց, հեռացավ, ասելով, վոր իսկույն կվերադառնա: Նա Մարիամին չգտավ այնտեղ, ուր թողել եր: Նա վազեց այս ու այն կողմ, անցավ նախագավիթ, և այստեղ տեսավ, վոր որիորդը չեղբոր թևին հենած, սանդխատով ցած ե իջնում: Նա ինքն իրան մոռացավ և, հրելով ճանապարհին պատահած հանդիսականներին, խելագարվածի պես հետևեց նրանց:

— Դուք արդեն գնա՛ւ եք:

Նա պատասխան չատացավ: Իջնելով ցած, հանդերձարանում նա մի քիչ ուշքի չեկավ, շփոթվեց ինքն լուր արածից: Նա ձեռը մեկնեց Ռուբենին: Յերիտասարդը գունաթափված եր, աչքերի մեջ փայլում եր մի տեսակ, նրա բարի դեմքին անհամապատասխան, կատաղություն: Պարզ եր, վոր Մարիամը հաղորդել եր նրան բժշկի վարմուն-

քըլ Դողդողացող ձեռներով նա պահեց քրոջ վերարկուն, հաղցրեց, առավ նրա թևը և շտապեց դեպի դուրս։

Հեզ ամուրիին մնաց բեկեղած յուր տեղում։ Ընկճված, հուսահատված, նաչեց Մարիամի չեռերից։ Նա ծանր և ակամա քայլերով բարձրացավ վեր։ Նա զգում էր յուր շուրջը մի ամալութուն, կարծես, Մարիամի գնալով նրա համար ամեն ինչ վերջացավ, կարծես, այլևս հավիտյան խորտակվեցին նրա հույսերը։ Սեղանատանը չհասած, նա հանդիպեց Մելիք-Բարսեղյանին, վոր խոսում էր մի հարուստ և բավական ծեր դրամատիրոջ հետ։ Վարձան ատելի թվաց նրան բժշկի լուրջ կերպարանքը։ Նա ձգեց նրա վրա մի սպառնողական, մի սուր հայացք։ Բժիշկը բարեկամաբար ժպտաց։ Այդ նրան ավելի կատաղեցրեց։ Նա համարում էր իրան վերավորված, հաղթված և մինչև անգամ ստորացած մի նոր, մի տակավին անհայտ չեղիտասարդի առաջ։ Ինչպես, նա սիրե, նա այնքան չեռանդով հետամուտ լինի մի որիորդի, վորից չեքես և դարձնում մի ինչ-վոր կիսաքաղցած բժիշկ։ Ել ուր մնացին Հալաբյանի անունը, դիրքը, հարստութունը։

«Նա ծիծաղում է ինձ վրա, նա ծաղրում է ինձ, — ասաց նա մըտքում, — չես նրան ցույց կտամ, ցույց կտամ, թե ով եմ չես»...

Յերբ մտավ սեղանատուն, ամուրիին այնպես թվաց, վոր ամենը հեգնաբար ժպտացին, մանավանդ Ախշարումյանը և իշխան Սահարունին։ Նիկողայոսի խոհարհ հրավերով նա նստեց սեղանի մոտ, կասկածալի հայացքներ ձգելով բոլորի վրա։ Ամբողջ ընթրիքի ժամանակ նա լռեց, անուշադիր թողնելով Նիկողայոսի հաճոյախոսութունները, տիկին Սոփիոյի սիրալիր ակնարկութունները, որիորդ նատալիայի հաղթական հայացքները, իշխան Սահարունի սրախոսութունները և Ախշարումյանի կատակները։ Նա վերկացավ տեղից ամենից առաջ, բարեկեց և պատճառ բերելով յուր գլխացավը, ներողութուն խնդրեց ու հեռացավ։ Նրա հետևից վազեց իշխան Սահարունին։

— Սիրելիս, — շնջաց իշխանը հեգնաբար, — չես հիմար չեմ։

— Ի՞նչ ես ուզում ասել։

— Ասում եմ, չես հիմար չեմ։

— Յես այդ գիտեմ. հետո։

— Ուրեմն իմացիր, վոր գլխացավիդ պատճառը ինձ հայտնի չէ։ Սպասիր, մի շտապիլ, չերկու խոսք։ Զգուշ կաց, հասկանա՞ւ ես, զգուշ կաց։ Քեզ նման մարդիկ չեն ընկնում, բայց ընկնելիս չերկու վոտով են ընկնում թալաքի մեջ...

Սոսակցութունը տեղի ունի նախասենյակի մի անկյունում, մոտիկ վոշ վոք չկար։ Հալաբյանը ապշած նայեց իշխանի չերեսին, կարդալով նրա աչքերի մեջ մի չարամիտ բան։

— Իբրեւ բարեկամ, խորհուրդ եմ տալիս, զգուշ կաց,—կրկնեց իշխանը խորհրդավոր լեզանակով։ Այո, զգուշ կաց, ձեռք մի մեկնիլ ուրիշի պատտռին, հասկանձեմ ես, կարող ես մատներդ անել և շատ վատ անելի։

— Իշխան, ամոթ ե, լոբի։

— Յես կլռեմ, բայց դու զգուշ կաց... Դե գնա, ուրիշ ասելիք չունեմ։

— Իշխանը անհայտացավ։ Հալարչանը մնաց տեղն ու տեղը անշարժ, արձանացած։ Այդ անորոշ խոսքերի մեջ նա զգաց շատ վորոշ, շատ պարզ և շատ հարամիտ մի ակնաբեկութիւն։ Նա սարսափեց։

«Ուրիշի պատառի՞ն,—արտասանեց նա, մեքենաբար, ձեռով շփելով ճակատը։ Նա չիմացավ։ Թե ինչպէս ցած իջավ, ինչպէս ծառան հագցրեց վերադրուէն, և միայն յերբ դուրս յեկավ փողոց, յերբ ձմեռալին սառն ողը խփեց նրա ճակատին, սթափվեց փոքր ինչ։ Այն ժամանակ նրա կրծքից մի ծանր հառաչանք դուրս թռավ, և նա արտասանեց։

— Յես անբախտ եմ։

XII

Մարիամի կծու հանդիմանութիւննները մի վորոշ աստիճանի ազդեցութիւն գործեցին բժիշկ Մելիք-Բարսեղյանի հոգու վրա։ Յերեկութից հետո միջանի որ շարունակ նրա ականջին հնչում ելին որիորդի վերավորական խոսքերը, իբրեւ սուր բողոք լուր անարժան վարմունքի դեմ։

Սակայն անցավ թարմ տպավորութիւնը, և նրա խիղճը փոքր առ փոքր սկսեց հանդարտվել։ Այս անգամ ես նրան ոգնեց սառն, անկիրք դատողութիւնը։ Չէ՞ վոր վերավորողը Մարիամն ե լեղել։

«Իսկ լես միայն լսեցի նրա կոշտ ու կոպիտ հախոյանքները։ Ասենք իմ արածս, նրա կարծիքով, լավ բան չե, բայց նրա արածը խո՞մ ավելի վատ եր»։

Ուրեմն պատիժը կատարված ե, պարտքը վճարված ե, հաշիվը վերջացած ե։

Բայց արդոք այդ յերեկո հասարակութիւնից վոչվոք չե՞ լսել նրանց խոսակցութիւնը—ահա այն միակ միտքը, վոր սաստիկ անհաճատացնում եր բժշկին։ Յեթե նա համոզված լիներ, վոր այդ անախորժ տեսարանին վոչ-վոք վկա չի լեղել և առհասարակ դադարեցրել չե հայտնվել ուրիշին, վորքան դուրին կլիներ նրա համար մոռանալ

ամեն ինչ և անձնատուր լինել սովորական դրադմունքներին: Բայց նա կասկածում եր, և կասկածում եր ամենից ավելի Հալաբյանի վերաբերմամբ:

Նրա սուր աչքերը նկատել էին Հալաբյանին այն պահին, չերբ վերջինը դուրս չեկավ սենյակի անկյունից Մարիամի հանդիմանութուններից հետո: Նրա նուրբ դիտողութունից փախուստ չեր տվել ամուրիի հետամուտ լինելը Մարիամին: Նա նկատել եր և՛ Հալաբյանի սպառնալի հայացքը ժողովարանի նախասենյակում: Այնուհետև նա միջանի անգամ պատահել եր ամուրիին փողոցում, բարեկ եր հարգանքով, և արժանացել եր միայն սառն և թեթև պատասխանի:

Այս բոլորը նրա կասկածները զորացնում էին, և նա, մութ կերպով, զգում եր, վոր Հալաբյանը նախ անտարբեր չե դեպի Մարիամը, չերկրորդ՝ վերդովված և լուր դեմ: Առաջինը ցանկալի չեր, չերկրորդը վոչ: Ցանկալի չեր՝ գտնվի մեկը, վոր հետամուտ լինի Մարիամին և գուցե մոռացնել տա նրան լուր անցյալը: Ցանկալի չեր, վոր այդ մեկը լինի Հալաբյանի նման մարդ: Նա հարուստ և, հասարակութան մեջ ունի հայտնի դիրք, ունի ծանոթների մեծ շրջան, կատմի բան և մի չերիտասարդ բժշկի համար կյանքի ասպարիզում, հենց առաջին քայլում, հանդիպել այդպիսիների ատելութանը, չերևալ նրանց աչքում իբրև միստոր խաբեբա:

Պետք և, ուրեմն, զգուշ լինել, պետք և մոտենալ Հալաբյանին, վաղորոք դրավել նրա սիրտը, չթուլ տալ նրան վատ կարծիք կադմելու բժիշկ Մելիք-Բարսեղյանի մասին:

Չլինե՞ր տխուր միջնադեպը Մարիամի հետ, որիորդ Նատալիայի բալը իսկապես բժշկի համար մի բախտավոր որ եր: Այդ չերեկո նա ծանոթացել եր չերեք-չորս հայտնի ընտանիքների հետ, գրավել եր միջանի մայրերի ուշադրութունը: Մի հարուստ պարոն հենց այդ չերեկո առաջարկել եր նրան լուր տան բժիշկը լինի: Յեվ նա շտապել եր հետևյալ որն իսկ ալցելութուն անել պարոնի ընտանիքին: Մի խոսքով, այդ չերեկույթից հետո նրա գործերը քիչ-քիչ առաջ էին գնում, ապագան հույսեր եր տալիս: Նրա մասին արդեն սկսել էին խոսել հասարակութան մեջ, նրա անունը տարածվում եր, նրանով հետաքրքրվում էին:

Իբրև բարեմիտ քաղաքացի, իբրև լուր դրութունը հաստատել ցանկացող մի բժիշկ, նա արդեն կանոնավորել եր լուր կյանքը: Առավոտյան դարձնում եր կանուխ, չալի ժամանակ թերթում եր տեղական լրագիրները, հետո կարդում եր լուր մասնագիտութանը վերաբերյալ այս կամ այն գրքից միջանի եջեր, այնուհետև ծանր ու հանդարտ,

ծառայի ոգնութեամբ, հագնվում եր, դուրս եր գալիս. տնից առավոտ-
յան տասնութնեկ ժամին: Յեթե հիվանդ ունեք, գնում եր այցելութեան,
յեթե հուներ, դարձյալ կառք եր նստում վորոշյալ ժամին և մի կամ
յերկու անգամ անցողդարձ անում քաղաքի բազմամարդ փողոցներում:

Հետո նա գնում եր այն հիվանդանոցները, ուր առժամանակ
ձրի բժշկութուն եր անում: Այստեղ նա շփվում եր զանազան այցե-
լուների հետ, ծանոթանում եր, և յեթե այցելուն փոքր ի շատե ունեք
մարդ եր, հայտնում եր նրան լուր հասցեն, հարմար դեպքում հրավի-
րելով լուր մոտ:

«Ծանր չես տղատ հմ, կարող եմ ավելի լավ քննել ձեր հիվան-
դութիւնը», ասում եր նա:

Յեւ ամենի հետ նա վարվում եր միատեսակ մեղմ, սիրալիւ և
զարմանալի ուշադրութեամբ: Նրա համբերութիւնը սահման հուներ,
յերբ քննում եր այս կամ այն շատախոս հիվանդին, վոր մանրամասն
նկարագրում եր լուր հիվանդութիւնը: Նա ինքն լուրաքանչլուրին
շուշլում եր շատ ավելորդ հարցեր, կատակ եր անում, սրախոսում եր,
զվարճացնում եր և այսպիսով ամենի սիրտը շահում:

— Ախ, Անիշկա,—ասում եր հիացած մի տիկին լուր ընկերու-
հուն,—դու չես կարող չերեակայել ինչքա՞ն բարեսիրտ ե այդ բժիշկ
Մելիք-Բարսեղյանը, ինչքա՞ն ցավում ե հիվանդի մասին: Ուրիշները
միքիչ քննում են հիվանդին ու հետո ձեռքին նայում, թե ինչ կտա:
Իսկ նա, սիրող մոր պես, ամեն բան ուզում և իմանալ:

— Դուք ճանաչում եք բժիշկ Մելիք-Բարսեղյանին,—հարցնում ե
մեկը մյուսից:

— Վոչ, լսել եմ:

— Ոոտ, ծանոթացեք, ծանոթացեք, շատ համակրելի չե:

— Ինչո՞վ ե համակրելի:

— Ի՞նչպէս ասեմ, պրոստո դուշկա...

Հին բժիշկների դասը, որ առաջ արհամարհանքով եր վերարե-
վում, փոքր առ փոքր սկսեց լուրջ ուշադրութիւն դարձնել նրա վրա:
Շատերը զգում եին, վոր նրա հետ կատակ անել չի կարելի, վոր նա
մի վտանգավոր մրցակից ե և կարող ե շատերին նսնմացնել, յեթե
վաղորոք առաջը չկապվի: Յեւ հողհոտե սկսեցին նրա վրա բամբա-
սել: Առաջ նրան անվանում եին «մանուկ», հետո սկսեցին «վիսկաչ-
կա» մականունը դործածել: Իսկ նա, ինչպիս հիվանդների, նույնպիս
և լուր արհեստակիցների հետ վարվում եր՝ ձերերի հետ հարգանքով
և պարկեշտորեն, չերիտասարդների հետ ընկերարար և համեստորեն:
Նա մյուսների պես չեր բամբասում նրանց, չեր աշխատում վաչր գցել

նրանց վարկը հասարակութեան աչքում: Նա չեր ցույց տալիս վոչ նախանձ, վոչ ատելութիւն, վոչ արհամարհանք: Յերբ նրա մոտ անվանարկում ելին այս կամ այն բժշկին, նա կամ աշխատում էր բամբասանքը ընդհատել կամ ընդդիմադրում էր անվանարկողին, պաշտպանելով վոչ թե խոսակցութեան առարկա բժշկի անձնավորութիւնը, այլ առհասարակ բժիշկ մարդու արհեստը, նրա պատասխանատու դերը, նրա դիրքը և պատիւը: Իսկ չերբ գտնում ելին մեկին, նա լոււմ էր, և միայն այն ժամանակ չերևան էր գալիս նրա դեմքի վրա այն խորհրդավոր ժպիտը, վոր նրան էր միայն հատուկ և վոր, կարծես, արտահայտում էր հետեւյալ դարձվածը.

«Ճանաչում եմ քո զոված բժշկին, չարժես: Նայիր ինձ...»:

Յեւ գտնողը նայում էր նրա չերեսին, լոււմ էր, ամաչում էր և կամա-ակամա մտածում.

«Ինչ խելոք դեմք ունե աս մարդը»:

Այսպես էր վարվում բժիշկ Մելիք-Բարսեղյանը ամենի հետ: Նրա հնարագետ ուղեղը մատակարարում էր նրան միշտ նորանոր միջոցներ չուր նպատակին հասնելու համար: Մի որ այդ ուղեղը թեկադրեց նրան հետեւյալ սկզբունքը.

«Ընդհանուր համակրութիւն ձեռք բերելու համար հարկավոր է ընդհանրութեան հետ շփվող մարդկանց մոտենալ»:

Յեւ նա, վոր անգիտակցաբար արդեն գործադրում էր այդ սկզբունքը, այժմ սկսեց գիտակցորեն գործադրել: Նա արդեն ծանոթացել էր տեղական բոլոր խմբագիրներին հետ, այցելութիւն էր արել նրանց և չուրաքանչյուրի մոտ չուրաքանչյուրի տեսակետից առանձին-առանձին պաշտպանել էր հասարակական շահերի դադաւարը: Դրանով նա չբավականացավ: Բացի բժշկականից, նա զբից միջանի ընկերութիւնների անդամ, մոտեցավ չերիտասարդութեան հետ, ցույց տվեց իրան հնի թշնամի, նորի չեռանդուն ջատագով:

Մի ընկերութեան ընդհանուր ժողովում, չուր մի աղաւաւմտական ճառի շնորհիւ, չերիտասարդները ընտրեցին նրան խորհրդի անդամ, և այդ որվանից նա անցավ «հասարակական գործիչներին» շարքը:

Բայց հաղիւ նա ստացել էր այդ անունը, հաղիւ նա ծանոթացել էր չերիտասարդութեան հետ, չերբ փորձով տեսաւ, վոր այդ միջոցով ձեռք բերած հոչակն էլ ունե չուր անհրամարութիւնները: Բանն այն է, վոր, ինչպես ամենուրեք, նույնպես և՛ բժիշկ Մելիք-Բարսեղյանի արջունակից հասարակութեան մեջ կա մի վորոշ դասակարգ, վորի համար արհեստավորին ձրի հարստահարելը անբարոյականութիւնն է համարվում: Ահա այդ դասակարգի հետ առիթ ունեցաւ մո-

տենալ նա, ընդունելով «հասարակական գործիչի» անունը: Նրա մեղմ աղատամտութիւնը, նրա արտաքին բարեհամբույր վարվողութիւնը անխափր ամենի հետ և, վերջապես, նրա աղքատիւն «լան» մասնիկը— այս բոլորը համարձակութիւն էին տալիս շատերին դատարկ ձեռքով դիմել նրա արհեստի ոգնութեանը: Յեղ նա չեր կարող մերժել, նա չեր կարող դանդաղել անգամ: Դիտեր, վոր հակառակ դեպքում հետևանքը կարող է վատ լինել:

Պատահում էր, վոր շարաթիւս մեջ ընդունելութեան համար լեքեք վորոշիւս որերից մեկը կամ մյուսը անցնում էր միայն ձրի հիվանդներ ընդունելով:

— Ի՞նչ գործի լեք,—հարցնում էր նա լեկողներից:

— Յես հայոց դպրոցի աղքատ վարժապետ եմ,—պատասխանում էր մեկը:

— Յես տիրացու լեմ,—պատասխանում էր մյուսը:

— Յես ներսիսյան դպրոցի աշակերտ եմ,—պատասխանում էր չկրորդը:

Յեղ ալլն և ալլն Բոլորն էլ դալիս էին մի տեսակ անբռնաբարելի իրավունքով, կարծես, նրա վարձը վճարել էին վաղուց: Վերջապես, նա տեսով, վոր աղպես շարունակել անկարելի լի, վոր պետք է սահմանափակել ձրիասերների թիւը: Բայց ի՞նչպես: Միայն ալն էր, վոր նա սկզբից չեր հալտնել, թե իբրև մանկաբարձ-բժիշկ դարմանում է միայն կանանց հիվանդութիւնները: Ի՞նչ տեսակ հիվանդներ ասես, նա ընդունում էր վարձով, հետևաբար չեր կարող անվարձների վերաբերմամբ ալլ կերպ վարվել:

Մի որ նա նստած էր յուր առանձնասենյակում: Ընդունելութեան ժամն էր: Նա բարկացած էր. մի բոպե առաջ նս, ընդունել էր մի տերտերի, քննել, դեղատոմս դրել, և տերտերը, փոխանակ վարձ տալու, «պահպանիչ» էր ասել, կարծես, նրան ծաղրելու համար: Իսկ մի պացիենտ, վորին բժշկել էր ծանր հիվանդութիւնից, տասն ու իննը «վիզիտի» համար ուղարկել էր ծրարով ընդամենը քսան ուրբի:

«Վիզիտին մի ուրբի,—ասում էր նա,—մարդ կարող է խելադարվել, խելագարվել, ЭТО ЧОРТ ЗНАЕТ ЧТО ТАКОЕ, աղպես էլ անբարեխղճութիւն...»:

Հանկարծ նա լսեց դռան դանդաղի ձայնը: Իբրև կանանց բժիշկ, նրան աջակցում էր մի մանկաբարձուհի:

— Հիվանդ—ասաց վերջինը, ընդունարանի դռներից ներս մըտնելով:

— Հրավիրեցեք,—պատվիրեց բժիշկը և մտքում ալելացրեց.—ձրի, թե՛ վարձով:

Ներս մտալ լեվրոպական ձևով հագնւած, լերեսը թանձր քողով ծածկած մի կին: Յերկշուտությամբ նայելով աջ ու ձախ, կինը շշնջաց.

— Յես ուզում եմ ձեզ հետ առանձին խոսել:

Մանկաբարձուհին դուրս չեկաւ: Բժիշկը դռները ամուր Ծածկեց և հրաժիրեց անծանոթին նստել: Կինը միանգամ ևս նայեց լուր՝ շուրջը և սաստիկ հոգնած մարդու պես, ընկղմվեց բաղկաթոռի վրա: Նա գլուխը մոտեցրեց բժշկին և սկսեց շշնջալով խոսել: Թանձր քողի տակից նկատելի էր նրա լերեսի գուշնը, սակայն նրա ստեղծ ընդհատվող շնչառութիւնից, արագ բարախող կրծքից և դողացող ձեռներից պարզ էր, վոր նա մի ինչ-վոր տենդային հուզմունքի մեջ է: Լսելով նրա շշնջումը, բժշկի դեմքը հանկարծ մոռայվեց: Անծանոթը լուր ասելիքը վերջացրած, պատասխանի չէր սպասում:

— Ձեմ կարող,— արասանեց բժիշկը դրական լեզանակով:

Կինը մի հուսահատական շարժումն արաւ:

— Յես կսպանեմ ինձ,— լսվեց նրա աղերսալի ձայնը քողի տակից,— չես ինձ կսպանեմ, չեթե չաղատեք աչս դրութիւնից: Իմ բոլոր հուշերս ձեզ վրա չեն, ուրիշին դիմել էմ կարող, աչստեղի բժիշկները ամենը ճանաչում են մեզ: Դուք նոր մարդ եք, դուք չերխտասարդ եք, բարի չեք, ոգնեցեք:

Հետզհետե նրա թուլացող ձայնից լերևում էր, վոր նա արտասուքում է, վոր առհասարակ նրա դրութիւնը շատ հուսատհատական է:

— Ձեմ կարող,— կրկնեց բժիշկը միանգամ ևս, բայց վոչ առաջվա հաստատամտությամբ,— աչդ կլինի իմ կողմից մի հանցանք գիտության սուրբ ավանդութիւններին դեմ:

— Բայց միթե հանցանք չի լինիլ ինձ սպանելը,— աղերսում էր անծանոթը,— միթե դուք թուլ կտամք, վոր մի չերխտասարդ կլին մեռնի խաչատուակութիւնով: Բժիշկ, չես պատրաստ եմ ձեզ վարձատրել, ինչքան ուզում եք, ոգնեցեք:

Վերջին խոսքերը բարկացրին բժշկին, դոնե աչսպես ձեացրեց նա իրան:

— Տիրուհի,— ասաց նա խտորեն,— մի մոռանաք, վոր չես պատիւս փողով ծախողներից չեմ:

— Ներողութիւն, չես աչդ չեյի ուզում ասել: Յես գիտեմ, լսել եմ ձեր մասին, խնդրում եմ, խղճացեք ինձ:

Բժիշկը լուռ էր: Նրա դեմքի սառն արտահայտութիւնը տեղի տվեց մտախոհութիւն: Փորձնական տագնապալի բոպեն անցաւ: Բժիշկը վերցրեց սեղանի վրա դրած մեծագիր գրքերից մեկը, թերթեց մի քանի վայրկյան և կրկին դրեց տեղը: Հետո նա ձեռով մի վճռական

շարժումն արավ, կարծես, միանգամայն հեռացնելով իրանից ծանր մտքերի մի շարք:

— Ձեր հասցեն,—հարցրեց նա հանդարտ:

Անծանոթ կինը հառաչեց, բռնեց նրա աջը, շնորհակալութիւնով ամուր սեղմեց և հետո մատիտով նշանակեց թղթի կտորի վրա լուր տան տեղը:

— Վաղը չե, մշուս որը, առավոտյան տասը ժամին յետ ձեզ կըսպասեմ,—ասաց նա, վտառի կանգնելով:

— Սպասեցեք, բայց միայն մի պալմանով՝ բոլոր պատասխանատվութիւնը ձեզ վրա չեմ թողնում:

— Յետ կշանքս հանձնում եմ ձեր գիտութեանը, իսկ անուստ ձեր համեստութեանը:

Յեւ անծանոթը գրպանից հանեց մի աղեղնագուն թղթադրամ, սեղմեց բժշկի ձեռի ափում, ավելացնելով.

— Առ այժմ:

Նա դուրս չեկավ: Բժշկի գեմքը փակեց, նրա աչքերի մեջ պըսպղաց անհագ շահասիրութեան վռդին, նայելով ձեռի մեջ սեղմած թղթադրամին:

«Գիտութիւնն ել նախապաշարմունքներ ունե,—ասաց նա ինքն իրան,—ինչեւ նրանցից մեկի դեմ չգնալ»...

Նա ուրախ-ուրախ սուրկելով, գնաց մշուս սենյակ, հալտնեց մանկաբարձուհուն, թե ընդունելութեան ժամը անցել է, ազատ է:

Որը կիրակի չեր. մի որ, չերբ բժիշկը սովորաբար այցելում եր լուր այն ծանոթներին, վորոնց հետ կամենում եր բարեկամութիւն հաստատել: Այս անգամ, կեսորվա ուղիղ տասներկու ժամին, նրա կողքը կանգ առավ քաղաքի հարուստ տներից մեկի առաջ:

— Պարոն Ազամովը տանն է,—հարցրեց նա, դռան դանգակի ձայնին դուրս չեկող իմերել սպասավորից:

— Վոչ:

— Ո՞վ կա:

— Աղջիկ պարոնները:

— Հարցրու, կարո՞ղ ե գոքտոր Մելիք-Բարսեղյանը ներկայանալ:

Մինչև ծառայի վերադառնալը բժիշկը մտքում միջանի անգամ արտասանեց լուր ազգանունը և առաջին անգամ զգաց, վոր նա բավական կոշտ է հնչում: «Ափսոս Մելիքը, վոր կպցրել են Բարսեղին», մտածեց նա, անիծելով լուր հոր ճաշակը, վոր չեր կարողացել ժամանակին ավելի աղնվահնչյուն դարձնել այդ ազգանունը:

Տանտիրուհին նրան ընդունեց ուրախութեամբ և հրավիրեց մի

շքեղ զարդարած ընդարձակ հյուրասենյակ, ուր նստած ելին նրա լեր-
կու զուգ հասուն աղջիկները: Ագամոմնեքը Թիֆլիսում մի հայտնի
ընտանիք ելին: Ինքը, ծերունի Ագամովը, մի պաշտոնաթող չինոֆիլի
եր, վոր ժամանակին կարողացել եր լուր աղջկերանց բախտը ապա-
հովել առանձին առանձին ոժիտով:

Տեսնելով բժշկին, չորս քույրերը միաժամանակ վրաքի կանգնե-
ցին, հերթով սեղմեցին նրա ձեռք և կրկին նստեցին լուրաքանչյուրը
լուր առաջվա տեղը: Սովորական նախաբանից հետո, տանտիրուհին
խոսք բաց արավ քաղաքային նորությունների մասին: Յեվ վորովհե-
տե նրա ուղեղը գիշեր-ցերեկ զբաղված եր լուր աղջկերանց ճակատա-
գրով, ուստի բնական ե, վոր այդ նորությունները լինելին համապա-
տասխան նրա մտավոր տրամադրությանը:

— Դուք ճանաչում եք Հալաբյանին, — հարցրեց նա բժշկից, մի
քանի համանման լուրեր հաղորդելուց հետո:

— Ճանաչում եմ:

— Յերեակայեցեք, այդ մարդը քանի տարի չե չի պսակվել,
հիմա, ասում են, ուզում և պսակվել:

— Այո:

— Այո:

— Ո՞ւմ վրա:

Տանտիրուհին շինծու արհամարհանքով ժպտաց:

— Ով գիտե ում վրա, այստեղ մի «բաղաղ Նիկոլ» կա, վորի
կնիկը իրան արիստոկրատիկա չե ձեռքնում, կարծեմ այդ բաղաղի
յեղբոր աղջիկն ե:

Բժիշկը մի տարորինակ շարժում գործեց, ուղղելով պենսնն:

— Մի աղքատ աղջիկ ե, վոչ հալը ունի, վոչ մայր, հորեղբորից
զրկված, որվա հացին կարոտ: Վարինկա, — դարձավ տիկինը լուր չերկ-
րորդ աղջկանը, վոր թուխ գուլնով, լերկարձև լեռնետով և փոքրիկ
աչքերով մի արարած եր, մի փոքր գեղեցիկ քան մյուս քույրերը, —
Վարինկա, այն աղջկա անունը ինչ ե:

— Մարո:

— Մարիա:

— Մաշա:

— Մարիամ:

Պատասխանեցին չորս քույրերը միաժամանակ:

Բժիշկը շփոթվեց: Առաջին անգամն եր նա լսում մի լուր, վոր
վաղուց արդեն պտտում եր քաղաքում:

Տիկինը շարունակեց.

— Այդ Հալարւանը մեր Թիֆլիսի ամենալավ փեսացուներից մեկն է, հանկարծ ուզում է պսակվել ալդ աղքատ աղջկա վրա: Ի՞նչ կասեք, դոքաոր, լսով բան է:

— Յես կարծում եմ, վոր շատ ազնիւ լինի և մի հարուստ մարդու կողմից,— պատասխանեց բժիշկը համեստութեամբ:

— Յես էլ կարծում եմ,— մեջ մտած տիկնոջ ավագ աղջիկը:

— Յես էլ,— կրկնեց չերկրորդը — Վարինկան:

— Յես էլ,— կրկնեց չերրորդը:

Չորրորդը լռեց, վորովհետև հասակը չեր ներում համարձակ լինել:

— Բայց դուք տեսեք, վոր,— շարունակեց տանտիկինը,— ալդ աղջիկը կտրաւորում է, ասում են, չի ուզում զնալ Հալարւանին: Իդուր չէ ասած՝ աղքատ ու հպարտ:

— Մամա,— խոսեց Վարինկան,— հպարտութիւնը խո՞ւմ չէ պատճառը:

— Բնա:

Բոլոր քույրերը նայեցին միմյանց չերեսին, զլուխները ցած գցեցին և աչքի տակով սկսեցին նայել բժշկի կողմ:

— Ինչո՞ւ չի գնում,— կրկնեց մայրը լուր հարցը:

— Սիրահարված է մեկ ուրիշի վրա,— լսվեց չորս քույրերի կողմից, բայց թե վորն ասաց — ալդ մնաց անհայտ:

Բժիշկը չերկրորդ տարբերանկ շարժումն արած, այս անգամ ավելի գորեղ: Նա նկատեց, վոր ամենից ավելի համառութեամբ նայում է լուր վրա Վարինկան: Դա այն որիորդն էր, վորին բժիշկը հետամուտ լինելիս Մարիամը տեսել էր այն չարագուշակ չերեկո:

Տանտիկինը սկսեց տրամաբանորեն ծագրել և առհասարակ պախարակել սեր ասած բանը և սիրահարվողներին:

Բժիշկը հաջողութեամբ փոխեց խոսակցութեան առարկան և, մի քառորդ ժամի չափ ևս նստելով, հրաժեշտ տվեց, դուրս չեկավ վերին աստիճանի անախորժ տպավորութեան ներքո:— Անախորժ, վորովհետև ալդ, ինչից վախենում էր, արդեն կատարվում էր— նրա անունը սկսել էր բամբասանքի առարկա դառնալ:

Փողոցի մայթի վրա նույն վայրկյանին, չերը ձեռափալտը բարձրացրած կառք էր կանչում, նրա առաջով անցավ Ռուբինը: Հանդիպումը այնպես էր, վոր բժիշկը, հակառակ լուր ցանկութեան, չկարողացավ խուլս տալ:

— Ա՛յ, փառք աստուծո, քո չերեսդ էլ տեսա,— գոչեց նա կեղծ զգացմունքով, այնպես, վոր, կարծես, վոչինչ անախորժութիւն տեղի չեր ունեցել նրանց մեջ:

Ռուբենը շատ սառն բարեկեց և ակամա ընդունեց ընկերոջ ձեռը, վոր ծածկված եր փալլուն ձեռնոցով:

— Յեղբայր, ինչո՞ւ չես գալիս ինձ մօտ, միթե քեզ ել պետք ե հրավիրեմ, վոր շնորհ բերես,—հանդիմանեց բժիշկը ընկերարար, ուշադրութիւն չդարձնելով ընկերոջ սառնութեան վրա:

— Յես քեզ մօտ ի՞նչ գործ ունեմ,—արտասանեց Ռուբենը դառն սրտմտութեամբ:

Բժիշկը իրան զարմացած ձեացրեց:

— Ի՞նչպես, դու ինձ մոռացել ես:

Հեկ, նայելով Ռուբենի չերեսին, գլուխը հանդիմանութեամբ չերերեց աջ ու ձախ և խորին համեստութեամբ շարունակեց.

— Հաա, ուրեմն մոռացել ես: Շատ լավ, մոռացիր, ինչ անեմ, չերեի, արժանի չեմ: Բայց չես այդպես չեմ, չես միշտ հիշում եմ իմ հին ընկերներին, չես չեմ կարող նրանց հետ այդպես շուտ կտրել բարեկամութիւնս:

Այս խոսքերի տակ թաղնված հանդգնութիւնը կատաղեցրեց Ռուբենին:

— Վասի՛լ,—գոչեց նա դողդոջուն ձայնով,—վաղո՞ւց ես սովորել այդ չեղձիտական լեզվով խոսելը:

Բժիշկը ժպտաց:

— Եհ, չեղբայր, չես չեմ հասկանում ինչո՞ւ այդպես բարեկացած ես ինձ վրա, ի՞նչ ե պատահել:

Այս չերկրորդ հանդգնութիւնը միանգամայն ապշեցրեց Ռուբենին:

— Ի՞նչ, դու դեռ համարձակվում ես արածդ մոռանալ, դու դեռ հարցնում ես:

Սոսակցութիւնը տեղի ունել փոփոցի մաշթի վրա, և այդ սաստիկ անհանգստացնում եր բժշկին: Նա անդադար նայում եր աջ ու ձախ, վտխեանալով մի գուցե Ռուբենի հետզհետե գրգռվող ձայնը անցորդների ուշադրութիւնը գրավի:

— Ռուբեն,—ասաց նա մեղմ և համոզիչ ձայնով, միևնույն ժամանակ, աջ ձեռը դնելով ընկերոջ ուսի վրա,—չես տեսնում եմ, վոր այսոր քեֆդ տեղը չես: Ահա կառք, չեմ բարեհաճիլ արդոք գնալ ինձ հետ տունս: Յես մի չերկու ժամ ազատ ժամանակ ունիմ, կարող եմ նվիրել քեզ:

Ռուբենը լուռ եր:

Գնալ բժշկի տունը—նա չերբեք չեր համաձայնվիլ, բայց խոսել նրա հետ վերջին անգամ, պահանջել վերջին բացատրութիւնը—այդ

նա ցանկանում եր վաղուց: Արդեն հինգ շաբաթ եր անցել այն լերեկույթից, չերը Մարիամի հետ խոսելուց խույս տվեց բժիշկը, և այսոր Ռուբենը առաջին անգամն եր պատահում նրան: Նա գիտեր, վոր այսուհետև բժիշկը աշխատելու չե հոռու պահել իրան: Ինչպես հարմար առիթը բաց թողնել, ինչպես անպատիժ թողնել նրան, ինչպես թույլ տալ, վոր նա այդպես հեշտութեամբ աղատվի պատասխանատվութիւնից:

— Յես քո տան շնորք վոտք գնել չեմ կարող,—պատասխանեց Ռուբենը, հազիվ զսպելով կատաղութիւնը,—բայց քեզ հետ պետք ե խոսեմ, վորովհետև ստիպված եմ խոսել: Անցնենք մի փոքր:

Նրանք գնացին միասին և հասան փողոցի ծալքը: Ռուբենը առաջարկեց նրան մտնել մոտակա սլճարանը: Խանութի ձև ունեցող մի բալական ընդարձակ դահլիճում, առանձին սեղանների շուրջը, նստած ելին մի քանի, վայելուչ հագնված, մարդիկ, վորը սուրճ եր խմում, վորը դարեջուր, վորը նարդի չեր խաղում: Ընդհանուր աղմուկի միջից վորոշ լսվում եր մոսիո Վախավախյանի խրոխտ ձայնը: Բժիշկը նայեց պատերին և առաստաղին, ինչպես մի մարդ, վոր ուզում եր ցուլց տալ, թե առաջին անգամն ե այդպիսի տեղ մտնում, այն ել ա-կամա:

— Մի վախենալ, լստեղ չենք մնալ,—ասաց Ռուբենը և առաջնորդեց բժիշկին դահլիճի հետեի կողմում գտնվող մի փոքրիկ սենյակ, ուր վոչ վոք չկար:

Բժիշկը դարեջուր պահանջեց, Ռուբենը մի բաժակ սուրճ, և նրանք նստեցին սենյակի մի անկյունում, պատվիրելով սպասավորին դռները ծածկել:

— Մեր խոսակցութեան համար,—սկսեց Ռուբենը,—մի աղաչիս չեղոք տեղ եր հարկավոր, բարեկամական ասպարեզ այլ ևս չափտի գոյութիւն ունենա մեզ համար: Վասիլ, դու գիտես իմ հուզմունքի պատճառը: Ասա, իրավունք ունե՞մ քո վարմունքը տմարդի համարել, ասա, ունե՞մ իրավունք:

— Մինչև հանդարտվես,—պատասխանեց բժիշկը սառն և խաղաղ ձեղանակով,—քեզ հետ խոսիլ չի լինիլ: Խմում եմ կենացդ և ցանկանում եմ, վոր իբրև տղամարդ կարողանաս զսպել քեզ: Միբելիս,—շարունակեց նա, դարեջրի բաժակը հազիվ շրթունքին մոտեցնելուց հետո, բերանը սրբելով,—մարդու հետ աղպիս վարվել չի կարելի, ինչպես դու չես վարվում: Այո, գիտեմ ինչու չես զրգոված: Բայց դի-ցուք չես մի հանցավոր եմ, դու դատավոր, միթե չափտի՞ լսես ինձ և հետո դատես:

— Սառնարլուն լինել այն ժամանակ, չեր տեսնում եմ անիրա-

վություն—յես չեմ կարող: Բայց կաշխատեմ զսպել ինձ, ասա, յես լսում եմ:

— Վերն ե իմ հանցանքը, ցուց տուր խնդրեմ,— առաջ տարավ չուր խոսքը բժիշկը, արմուկները դնելով սեղանի ծայրին և աչքերը ակնոցի միջով սեռեցնելով ընկերոջ լեռնախնու:— Վոր յես այն լեռնեկո բացատրություն չեմ տվել քրոջդ: Համաձայնիր, վոր տեղը անհարմար էր, Ռուբեն, խոմ չեր կարելի մի ամբողջ հասարակության մեջ ընտանեկան զաղտնիք պարզել: Մարիամը իրավունք ուներ ինձանից հաշիվ պահանջել: Նա իրավունք ունի ինձ անամոթ դավաճան անվանել: Նա իրավունք ունի կարծելու, վոր յես նրան մոլորեցրել եմ և հետո լերես դարձրել: Տեսնեմ ես, Ռուբեն, յես վռչինչ չեմ թագցնում, բոլորը ասում եմ: Այո, պարզ ասում եմ, վոր քրոջդ յես սեր եմ խոստովանել, վոր ամբողջ չերկու ամիս ամառանոցում հավատացրել եմ նրան, թե վաղուց, շատ վաղուց ե նրան սիրում եմ, վոր այդ չերկու ամսվա ընթացքում բացի սիրո ցուցներից, ուրիշ բան չի հասաքքրել ինձ: Խոստովանում եմ և այն, վոր յես չերդվել եմ կյանքս կապել նրա կյանքի հետ հավիտենական կապով: Յեվ ահա այսօր նա զգում է, վոր յես ստույգ եմ դեպի նա, վոր յես փախչում եմ նրանից: Իհարկե, ով լիներ նրա տեղը, ինձ մի անամոթ, անխիղճ, անպատկառ շառլատան պիտի համարեր: Բայց, համբերիր, այդպես է արդյոք, ճշմարիտ յես շառլատան եմ, թե՞ արդարանալու պատճառներ ունիմ: Խոմ չի կարելի այդպես շտապ դատավճիռ կայացնել: Ռուբեն, Մարիամը կին է, գիտես, վոր կինը ահաստարակ շատ էլ խորը դատել չգիտե: Իսկ դու, դու տղամարդ ես, դու պետք է խելքիդ հավատաս, դու չպիտի լինեիր կվեկալիս ընկերի ազդեցության: Յես ասեմ, դու մտածիր, մեղավոր եմ, թե՛...

Յեվ նա սկսեց պարզել չուր պատճառաբանությունը: Վերցնելով աղքատությունը իրեն հիմք լուր տրամաբանության, նա շատ լրջամիտ, շատ խոհուն կերպով և հաջորդաբար արժարժեց այն, ինչ-վոր վաղուց պատրաստել էր ուղեղում: Նա դարձանալի արվեստագիտությամբ պատկերացրեց չքավոր ամուսինների դրությունը, նրանց դառն կյանքը, նրանց հոգեկան աննախանձելի վիճակը: Նա մեջ բերավ և՛ դավակներին, խղճալի գույներով ներկայացրեց նրանց բախտը: Տեղ-տեղ նա չղուրս չեկավ իրականության սահմանից, բայց և տեղ-տեղ զոռելով չերևակայությանը, թշվառությունը կրկնապատկեց անխիղճ կերպով:

— Ահա այս ամենը աչքի առաջ ունենալով,— շարունակեց նա, խրախուսվելով Ռուբենի լռությունից, վոր համաձայնության տեղ էր

ընդունում,—չես չեմ վստահանում խոստումս կատարել: Ավելի լավ ե
դավաճան լերեալ Մարիամի աչքում, քան նրան դժբախտացնել: Հա-
վատացիր, լես դարձյալ սիրում եմ նրան, ոոո, սիրում եմ, և հենց սի-
րելուցս եմ այդպես վարվում: Թող չես տանջվեմ, Թող չարչարվեմ,
միայն թե իմ պատճառով նրա ամբողջ կյանքը չթունալորվի: Յես
չեմ ուզում անսիրտ եզոխտ լինել: Մարիամը դեղեցիկ և, լերիտա-
սարդ, կրթված, խելոք, միշտ ինձանից ավելի տասնապատիկ հաջող
ընտրութիւն կարող ե անել: Նա սովոր ե փարթամ ապրել, իսկ չես,
չես ու՛մ եմ, աղքատութեան մեջ ծնված, աղքատութեան մեջ մեծացած
մի համեստ: մի աննշան բժիշկ, վորի նմանները շատ կան Թիֆլիսում:
Մարիամին հարկավոր ե անհոգ, առատ և շքեղ ապրուստ: Իսկ լես
միջոց չունեմ, լես աղքատ եմ: Մեղք չե՛մ, վոր լես այդ քնքուշ արա-
բածին ձգեմ որովս հացի կարոտութեան մեջ: Նրան, Մարիամին, ոոո,
Ռուբեն, մտածիր, նա կարող ե ուրիշի հետ բախտավոր լինել, նրա
հետեից ընկած են հարուստ մարդիկ: Յես այդ գիտեմ. դեռ կես ժամ
սրանից առաջ լես մի շատ պատվավոր ընտանիքումս ելի, վորտեղից
դուքս գալիս դու պատահեցիր: Այնտեղ ինձ ասացին, վոր հայտնի
հարուստ Հալաբյանը իբր թե... այո, ինչու թագցնեմ... իբր թե Մա-
րիամին առաջարկութիւն ե արել: Այդ կատարելալ բախտավորութիւն
ե: Յե՛վ դու չեթե տեսնելիր, թե այն ընտանիքում ինչպես նախան-
ձում ելին Մարիամին, կհավատայիր...

Մինչև այդ վայրկյանը Ռուբենը լուռ եր: Զսպելով իրան, նա թույլ
տվեց բժշկին ասել բոլորը, ինչ վոր կամենում եր: Բայց վերջին խոս-
քերը այլ ևս սպառնցին նրա համբերութեան վերջին կաթիլը: Նա դո-
ղաց ամբողջ մարմնով, աչքափ սառն հանդգնութիւն նա տակավին
չեր սպասում չուր նախկին ընկերոջից:

— Բժիշկ,— գոչեց նա խեղդուկ ձայնով,— դու ավելի վատ ես
լեղել, քան թե կարծում ելի լես: Դու վոչ միայն խաբել ես մի ան-
մեղ աղջկա, այլ և աշխատում ես քո խաբելութիւնը արդարացնել
բարոյական պատճառաբանութիւնով: Ավելի՛, դու մինչև անգամ ձգդ-
տում ես քեզ վեհանձն ձևացնել: Այժմ քեզ բոլորովին ճանաչեցի:
Յես չգիտեցի, վոր դու աչքհափ ճարպիկ ես, ոոո, չգիտեցի...

— Դարձյալ գրգռվեցի՞ր, դարձյալ,— ընդհատեց բժիշկը բարե-
սիրտ վարժապետի չեղանակով,— նո՛ւ, Ռուբեն, լես քեզ բոլորը բացա-
տրեցի, այժմ դու գիտես:

Նա հանդարտ և հանգիստ դարեջրի բաժակը մոտեցրեց շրթուն-
քին:

— Մնում ե ինձ համար մի դառն վիշտ,— շարունակեց Ռուբենը,

—վոր քրոջս և քո մեջ սիրո առաջին սերմ ցանոգը չես եմ չեղել, չես, վոր տասներկու տարի քեզանով խաբված եմ չեղել, Բայց վոչ, ինչու, չես չերեք չեմ խաբվել: Ձե վոր դու ինձ շարունակ ասում եիր, թե չքավորութունը մի իմաստուն դպրոց ե, թե նա պատրաստում ե խելոք, առողջամիտ մարդիկ: Մի բան միայն թագնում եիր, և չես այսոր եմ միայն դգում այդ բանը... այդ իմաստուն դպրոցից դուրս չեկած մարդիկ չերեմնի դուրկ են լինում մարդկային սրտից: Ոոո, ի՞նչպես գիտես անամոթ վարմունքդ արդարացնել: Խոնարհում եմ շնորքիդ առաջ, դու արժանի չես գովասանքի: Վեհանձն ձևանալ այն ժամանակ, չերբ մարդ ստոր ե—դրա համար տաղանդ ե հաբկավոր:

— Ռուբեն, — ընդհատեց բժիշկը գրգռված չերտասարդի անկապ խոսքերը, վոր բղխում ելին մի վիրավորված սրտից, — Ռուբեն, կամաց խոսիր, մյուս սենյակում կարող են լսել:

Բայց Ռուբենը, ուշադրութուն չդարձնելով նրա նախազգուշութան վրա, շարունակեց.

— Ախ Մարիամ, չեթե դիտենայիր, թե վորքան բախտավոր ես, վոր դրկվել ես աղպիսի մարդու ընկերակցութունից: Բայց լինչ, դու դեռ քո խորին տեխնության մեջ չես կարողանում մոռանալ քո չերեկակայած անցյալ չերջանկութունը: Դու դեռ արտասվում ես գիշեր ու ցերեկ, մինչդեռ պետք ե ծիծաղելի և ուրախանալի: Անամոթ, — դարձավ նա բժշկին, վոր շվարված լսում եր նրա զսպանցանքը, — դու դեռ հանգսնում ես ծաղրել քրոջս: Դու ուրախ ես, վոր նրան հետամուտ ե լինում մի Հայարչան...

— Ռուբեն, — դարձավ ընդհատեց բժիշկը, այս անգամ անհամբեր եղանակով, — բավական ե, կարող են լսել, դու ինձ վիրավորում ես:

— Ցեա քեզ վիրավորում եմ, — կրկնեց Ռուբենը դառն ժպտալով, — լինչ, միթե դու դեռ վիրավորվելու ընդունակութուն ունես:

— Բավական ե, Ռուբեն, — արտասանեց բժիշկը, այլևս չկարողանալով զսպել իրան և վոտքի կանգնելով:

Նրա հետ միասին վոտքի կանգնեց և Ռուբենը, գունատված, դողդողալով. Բժիշկը նայեց նրա չերեսին և մի Հարամիտ բան կարդաց նրա աչքերի մեջ. Նա սարսափած չերեսը հետ դարձրեց:

— Զգվի՛ր, — ձայն տվեց Ռուբենը, ձեռը ուժգին խփելով սեղանի ծալքին:

Անսահման սառնասրտութունը արդեն դավաճանում եր բժշկին: Բայց և այնպես նա քաջութուն ունեցավ մի վայրկյան ևս զսպել իրան և խուլ ձայնով պատասխանեց.

— Ասա քրոջդ, վոր չես դարձյալ սիրում եմ նրան և պիտի սիրեմ...

Դուք եւ թիշկը անկեղծ եր ասում, գուցե դա նրա կողմից մի տեսակ մեղմացուցիչ դարձված եր, սակայն այդ դարձվածը այնքան լիրբ թվաց Ռուբենին, վոր նա վարկենաւար կողքեց խելքը: Նրա աչքերը արշուճով լցվեցին, սենյակը խավարվեց և նա գրեթե անըդ-դաւարար ձեռը բարձրացրեց.

— Ահա քեզ իմ քրոջ պատասխանը ..

Յեւ թիշկը լուր ձախ արտի վրա դեպք մի սառնութիւն, վոր իսկուէն փոխվեց աչրող տաքութիւն: Նա վռչինչ չկարողացավ ասել: Կարծրած աչքերով, բորբոքված դեմքով նայեց լուր շուրջը:

Դռները բացվեցին, լերեկեցավ սպասավորը, նրա հետեից մի քանի հետաքրքիր դեմքեր, վորոնց թվում և՛ մոսիո Վախվախյանին: Բը-թիշկը լուր ձեռին սեղմած ռուբլանոցը շարտեց սպասավորի կողմ և շտապեց աննկատելի կերպով դուրս սլկվել:

— Խի խի խի,—ուղեկցեց դռների մոտ հավաքված ականատես-ներին և մոսիո Վախվախյանի միահամուռ ծիծաղը:

XIII

— Մոռացիր, սիրելի Մարո, մոռացիր: Ծշմարիտն ասած, լես կարծում ելի դու ավելի քաջասիրտ կլինես: Միթե չե՞ս կարող արհա-մարհել այդ մարդուն: Հավատացիր, տասն ու ատաս լես ատում ելի նրան, ինչպես մի վատ թշնամու: Իսկ այն անցքից հետո, արհամար-հում եմ: Նա քո վտտի դարշապարին անգամ չտրժե: Դու կթքեցիր, լեթե տեսնեցիր ինչպես նա սառնարլուն ընդունեց ինձանից այն վի-րավորանքը: Ոխ, զգվելի լես նա, զգվելի: Գիտես, լես մինչև անգամ ափսոսում եմ, վոր այնպես վարվեցի նրա հետ, վոր չկարողացա ինձ զսպել: Իսկ դու դեռ չես մոռանում այդ մարդուն, դու դեռ չես հան-գստանում:

— Յես բոլորովին հանգիստ եմ այժմ, լես նրան վաղուց եմ մո-ռացել: Նա ինձ համար գոլութիւն չունի:

— Յերանի այդպես լինելու Բայց դու ինձ խաբում ես, դու ին-ձանից ելի թագնում ես վիշտդ: Դեռ մեկել որը չերազումդ նրա մա-սին ելիր զառանցում, դեռ չերեկ չերեկոյան իմ սենյակից լսում ելի քո արտասովելու ձայնը: Այդպես չի կարելի շարունակել, Մարո: Դու քեզ մաշեցիր: Մտիկ արա հայելուն, քեզ ձանաչել չի լինում, այնքան փոխվել ես:

Յեւ ամեն ու լեղքայրը այսպես հորդորում եր քրոջը և ամեն ու քուրը հավատացնում եր լեղքորը, թե մոռացել և այն, ինչ-վոր կո-պիտ համառութիւնը հալածում եր նրան գիշեր ու ցերեկ, ինչպես մի չար վոգի:

Այժմ նա ատում էր բժշկին, ատում էր չուր վիրավորված սրտի բոլոր թունալից ուժերով: Սակայն հենց այդ ատելութունն էր, վոր ստիպում էր նրան մի կետի վրա մտածել, թե ինքն անպատված և, արհամարված և հասարակութւան ծաղրի նշավազ դարձած:

Ամիս ու կես էր անցել այն չերեկութից, և նա դեռ չուր կրած վիրավորանքի թարմ տպավորութւան տակ էր: Նրա ամփոփ և առողջ բնավորութւունը, մի անգամ չենթարկվելով մի դորավոր զգացման, չէր կարող այն դժուրութամբ ազատվել ազդեցութւունից, ինչպես գուցե ազատվեր մի ավելի թեթև բնավորութւուն: Միեւնի մի անգամ, նա անձնատուր չեղավ այդ սիրուն մոլեռանդաբար: Հանդիպելով չուր անհուն սիրո փոխարեն մի տմարդի դավաճանութւան, նրա զգայուն սիրտը խոցոտվեց մինչև չուր ամենախորին ծալքերը:

Այդ գիտեր Ռուբենը, զգում էր, վոր դժվար է միեւնիութւուն տալ քրոջ սրտին: Դա չէր, վոր նրան հուսահատեցնում էր, դա չէր, վոր ավելի ու ավելի գրգռում էր նրա ատելութւունը դեպի չուր նախկին ընկերը, թեպետ հավատացնում էր Մարիամին, թե արհամարհում է բժշկին:

Յեւ ինչ քանք ասես գործ չէր դնում նա չուր քրոջ սիրտը ամոքելու համար: Առաջին պայման նա աշխատեց, վոր Մարիամը միայնակ չմնա: Այս պատճառով, նա, չերկար պտրելուց հետո, գտավ քաղաքի կենտրոնից ավելի մոտիկ մի տան մեջ չերկու սենյակ: Այստեղ հարկանները այնպիսի մարդիկ էին, վորոնց հետ Մարիամը կարող էր հաբաբութւուն ունենալ: Այդ տանը, ի միջի այլոց, բնակվում էր և՛ նրա գիմնագիական ընկերուհիներից մեկը,—մի ուռա որիորդ, վորի հետ ծանոթ էր Ռուբենը: Առանց բուն պատճառը ասելու, չերիտասարդը հայտնեց այդ որիորդին չուր քրոջ հոգեկան դրութւունը և խնդրեց միայնակ չթողնել նրան այն ժամերին, լերը ինքը տանը չէր լինում: Իսկ պաշտոնից ազատ ժամանակ նա ինքը չէր հեռանում Մարիամից, ամեն ուր գրեթե ուժով տանում էր նրան զբոսնելու: Հաճախ նա չուր հետ բերում էր այս ու այն ընկերոջը կամ ծանոթին, և նկատում էր, վոր Մարիամը ամենի հետ վարվում է շատ անտարբեր, շատ սառն և մինչև անգամ մի տեսակ կասկածանքով:

Մշուս կողմից Մարիամին աշխատում էր միեւնիութւնը նրա կարուձևի վարժուհին—Սաթենիկը:

— Գիտես, սիրելիս,—ասում էր մի ուր այդ որիորդը, Մարիամի ինքնասիրութւունը զրգուելու համար,—դու բոլորովին ծուլ ես, չես աշխատում: Մոտ չերկու ամիս է սովորցնում եմ, մինչև այժմ մի որինավոր բան ձեռք չգիտես: Ամոթ չէ:

— Ներիր, Սաթենիկ, չես անընդունակ եմ:

— Վոչ, դու անընդունակ չես, դու ծուլլ ես: Ասա, խնդրեմ, մինչև լմեր պետք և նստես, հառաչես և հիմար բաների մասին մտածես: Ամոթ և, Մարո, հալատացիր, ամոթ և: Ասենք թե մենք կանալքս թուլատիրտ արարածներ ենք, թեև այդ սուտն, բայց այդքան: Վոչ, չես քեզ պետք և անպատճառ խելքի բերեմ: Լսիր ինչ եմ ասում: Դու շաքաթակա՞ն լերեք անգամ գալիս ես ինձ մոտ, այժմ չես վճռել եմ, վոր լերկու անգամ ել չես քեզ մոտ դամ: Յես լեղբորդ հետ խոսել եմ: Նա վաղը իմ լեբաշխավորութունով քեզ համար մի կարի մեքենա կվերցնի ապառիկ և այսուհետև դու ձեր տանն ել կար կանես: Շուտով ծննդյան տոները կհասնեն, չես լերկու շաքաթ ազատ կլինեմ, այն ժամանակ ամեն ուր կտեսնվինք: Մենք միասին կաշխատենք, կկարդանք, կխոսենք, կգրոսնենք: Լավ:

Միուս ուր մեքենան գնվեց և Սաթենիկը չուր խոստումը սկսեց կատարել: Յեվ այսպես, նրանք տեսնվում ելին շաքաթակա՞ն հինգ անգամ: Վարժուհու աչս անկեղծ հոգացողութունը չուր ընկերուհու վերաբերմամբ հիացնում եր Ռուբենին:

— Չգիտեմ ինչպես շնորհակալ լինեմ նրանից, — ասում եր լերիտասարդը Մարիամին, — նա մեզ շատ և պարտավորեցնում: Յես ուզում եմ նրան վարձ առաջարկել:

— Մտքովդ անգամ մի անցկացնիլ, — զգուշացրեց Մարիամը, — թե չե նրան սաստիկ կվիրավորես: Յես մի լերկու անգամ խոսել եմ այդ մասին, ինձ հետ կովել ե:

Մի ուրիշ անգամ, Սաթենիկին տուն ուղեկցելուց հետո, Ռուբենը վերադարձավ ավելի վողևորված:

— Ի՞նչ հրաշալի աղջիկ և այդ Սաթենիկը, — գոչեց նա անկեղծ սրտով, — ի՞նչքան խելք, ի՞նչքան առողջամտութուն, ի՞նչ բարի սիրտ: Չափազանցութուն չի լինիլ, չեթե ասեմ, վոր կյանքումս առաջին անգամն եմ տեսնում մի այդպիսի հալ որիորդ: Կարծես բնութունը խիլով նրա արտաքին գեղեցկութունը, պարզեցել և նրա հոգուն:

— Մենք հիանում ենք, բայց կան մարդիկ, վորը արհամարհանքով են նայում...

— Այդ անդին մարգարտի վրա:

— Յես լերքեք չեմ մոռանալ, թե ինչպես Նատալիան նրան «չեզոտ սատանա» անվանեց չուր ընկերուհիների մոտ: Խեղճ ուրիորդը միուս ուր լսել եր այդ, չգիտեր ինձ մոտ ինչպես թագցներ չուր վիրավորանքը:

— Չե՛մ, — կրկնեց Ռուբենը, — չես այդ չեչոտին չեմ փոխիլ Նատալիայի պես տասը «գեղեցկուհիների» հետ:

Յեւ վայսպես քուլը ու լեղբայր սիրում ելին այն որիորդին, վորի պարզ, սիրալիբ ընաւորութիւնը և հռանդուն աշխատասիրութիւնը արդարեւ հազվագլուտ ելին: Փոքր առ փոքր Մաթենիկը կարողացավ ազդել Մարիամի վրա: Միշտ ամաչեցնելով, միշտ կպչելով լուր, աշակերտուհու ինքնասիրութեանը, նա մասամբ հասավ լուր նպատակին: Մարիամը պարապում եր աշխուժով և սիրով: Նա, կարծես, սկսել եր մոռանալ լուր վիշտը: Ռուբենը ուրախանում եր, տեսնելով լուր քրոջ դեմքի վրա լերբեմն-լերբեմն այն զվարթ ժպիտը, վոր հատուկ եր նրան և վոր վերջին ժամանակ չեր արտահայտվում այդ մռայլ դեմքի վրա:

Սակայն նա դարձյալ խաբվում եր, և չգիտեր, թե այդ արտաքին զվարթութիւնը վորքան ընդադրոսիկ և և վորքան հոգեկան ճիգն եր անում Մարիամը լուր վիշտը քողարկելու համար:

Ծննդւան տոները մոտեցան: Ռուբենը լերկու շարաթով ազատվեց ուսումնարանական պարապմունքից: Բայց նա ունեւ լերկու մասնավոր դասեր, վոր ստիպում ելին նրան որակաւ լերկու անգամ այցելել քաղաքի հեռավոր թաղերը:

Հալաբչանի քեռորդու հետ պարապելուց նա հրաժարվել եր հենց առաջին շարաթ: Մի քանի դասերից հետո նա տեսավ, վոր այդ աշակերտը խեղապես կարոտ չե ավելորդ դասերի: Նա հասկացավ Հալաբչանի նպատակը, վիրավորվեց: Ամուրին շատ խնդրեց շարունակել դասերը, բայց իղուր:

Այնուհետև Ռուբենը շատ քիչ եր պատահում Հալաբչանին, այն ել միայն փողոցում: Բարեւում եր, անցնում, վորպեսզի առիթ չտա ավելի մոտիկ հարաբերութեան: Նա կատարում եր Մարիամին տված լուր խոստումը, չեր ուղում վոր Հալաբչանը այլևս այցելի իրանց: Յեւ ամուրին չեր համարձակվում այցելել, վորքան և՛ այդ ցանկալի լեր նրա համար:

Վոչ Ռուբենի սառնութիւնը, վոչ իշխան Սահարունի լերկդիմի ակնարկութիւնը այն լիրեկութիւն—չունեցան այնքան ուժ, վոր խաղաղեցնեն Հալաբչանի մի անգամ արդեն գրգռված կիբքը: Նա լսել եր, վոր քաղաքում լուր ե տարածվել Մարիամի հետ ամուսնանալու մասին: Մոսիո Վախվախյանն եր հաղորդել նրան այդ լուրը: Նույն Վախվախյանը շտապել եր անմիջապես պատմել նրան և՛ հյուրանոցում Ռուբենի ու բժիշկ Մելիք-Բարսեղյանի մեջ տեղի ունեցած անցքը:

— Դու ասում ես լսեցիք, վոր Ռուբենը բժշկին անպատվեց,— հտըցրեց Հալաբչանը մի քանի անգամ:

— Վոնց թե լսեցի, աչքովս տեսա, մեկ փախավ, դու լես իմ պարոնս, վոնց վոր վախլուկ նապաստակը:

Ռուբենի այս վարմունքը դուր չեկավ Հայաբլանին, վոր ասնքան վրդովված եր բժշկի դեմ: Նա զգում եր, վոր բժիշկը արժանի չե այդ պատժին:

Նա ինքը պատրաստ եր ավելի զորեղ պատժել այդ մարդուն, վոչ թե նրա համար, վոր նա դավաճանել ե Մարիամին, այլ, վոր հանդգնել եր այդ որիորդի սերը զրավել:

Տոն որ եր: Կեսորից մի քիչ առաջ Մարիամը, Ռուբենը և Սաթենիկը զրոսնում ելին Գոլովինսկի պրոսպեկտի վրա: Չնայելով, վոր ձմեռվա կեսն եր, չեղանակը տաք եր, լերկինքը պարզ, ողը մաքուր և պայծառ: Զրոսնողների խիտ բաղմության մեջ նրանց առաջը դուրս չեկավ Հայաբլանը, վորին ուղեկցում եր անխուսափելի մոսիո Վախ-վախյանը: Տեսնելով Մարիամին, ամուրին թողեց չուր ուղեկցին, մոտեցավ, բարեկց և սկսեց զրոսնել նրա հետ: Վերջին որերը հեզ ամուրին նեկատելի կերպով նիհարել եր, աչքերը խորն ելին ընկել և լերեսի կաշվի ծալքերը ավելի խորացել ելին:

Ռուբենը զիտմամբ մի քանի քայլ հեռ մնաց, վոր Հայաբլանի հետ ման գա, իսկ Մարիամը Սաթենիկի հետ թե թեի տված առաջ անցավ: Հայաբլանը խոսեց Նիկողայոս Սադափյանի մասին, ասաց, թե վերջինի գործերը շատ հաջող են գնում, թե նա վերցրել ե մի կապալ, վորից մեծ գումար պիտի աշխատի: Այդ մի նուրբ աղնար կուլթուն եր, վորով ամուրին Ռուբենին չիշել եր տալիս Սադափյանին արած չուր լավությունը:

— Ռուբեննա նա շուտով ձեր պարտքը կտամ, — հարցրեց Ռուբենը, գուշակելով նրա միտքը:

— Մի մասը արդեն տվել ե: Բայց չես այդ մասին չեմ մտածում, — կտա չի տալ, միևնույնն ե: Յես ավելի ուրախ կլինեի, վոր նա ձեր հայրական ժառանգությունը վերադարձներ ձեզ:

Ռուբենը վոչինչ չասաց: Նրանք հասան փողոցի ծայրը: Հետ դառնալիս Հայաբլանը կրկին մոտեցավ Մարիամին: Այս անգամ որիորդը մի կողմնակի հալացք ձգեց նրա վրա: Հայաբլանի նիհարությունը, բավական ընկճված ձայնը, նրա ամբողջ կերպարանքի խղճալի արտահայտությունը բոլորակապ շարժեց Մարիամի գուլթը: Առաջին անգամ նա խղճաց ամուրիին, առաջին անգամ նրա նրբացած սիրտը զգաց այդ դժբախտությունը:

«Միթե չես եմ պատճառը», ասաց նա մտքում, տեսնելով, թե ինչպես Հայաբլանը չերկյուղած դեմքով ե նայում չուր վրա և ինչ անվստահ չեղանակով ե խոսում:

Նա ևս լսել եր չուր ու Հայաբլանի մասին տարածված լուրը:

Նա նկատում եր, վոր զըրոսնող ամբոխի մեջ շատերը նայում են և քչփչում: Նա լուր ծանոթների դեմքերի վրա տեսնում եր մի իմաստալի ժպիտ, կարծես, նրան շնորհավորում ելին: Նա շտապեց հեռանալ Հալաբյանից և, վերցնելով Սթենիկի թևը, քայլերը ուղղեց դեպի տան կողմ:

— Դուք մի գնաք, լես մի շատ հարկավոր բանի մասին պիտի խոսեմ ձեզ հետ,— դարձավ Հալաբյանը Ռուբենին, բռնելով նրա թևից:

Մարիամը գնաց Սթենիկի հետ: Ռուբենը Հալաբյանի հետ վերադարձավ:

— Մտենք մի բուպե ինձ մոտ,— առջարկեց վերջինը:

Ռուբենը ակամա հետաքրքրվեց ամուրիի ասածով և անամա հետևեց նրան: Մի թեթև հառաջաբանից հետո ամուրին խոսք բաց բերավ վերջին դեպքի մասին, գովեց Ռուբենի վարմունքը, անվանեց նրան ազնիվ:

— Գիտե՞ք, բանը ինձ հայտնի չե, չես լսել եմ բոլորը: Խնդրեմ չնեղանաք, վոր ձեզ հետ պարզ եմ խոսում, մենք բարեկամներ ենք: Այդ անպիտանի հետ ուրիշ կերպ վարվել չեր կարելի, մանավանդ ձեզ նման ազնիվ ու տաքարյուն չերիտասարդը: Ավելի վատ պետք և պատժելիք: Տեսե՞լ եք նրան այդ որից հետո:

— Վոչ:

— Ի՞նչ չերեսող պիտի չերես ձեզ ախտահետև, ախ անամոթ, անամոթ,— կրկնեց Հալաբյանը մի քանի անգամ:

Ռուբենը լուռ եր: Նա մասամբ գուշակում եր, թե Հալաբյանը ինչ նպատակով և այդ դեպքի մասին խոսում: Վերջապես, ամուրին պարզեց լուր սիրտը, վերջապես, նա առաջարկութուն արավ Մարիամի մասին: Նա վաղուց և սիրում Ռուբենի քոջը, վաղուց եր մտադիր սասել, բաց չեր համարձակվում: Կարծում եր, վոր նա սիրում և բժշկին, վոր նրան և խոսք տվել: Այժմ գիտե, վոր Մարիամի սիրտը ազատ և, և համարձակվում և խոսք բանալ այդ մասին:

— Դուք, ի հարկե, չպիտի դարմանաք, վոր լես ձեզ հետ ախպես պարզ եմ խոսում: Յես հասարակ մարդ եմ, չես սիրում եմ անկեղծ խոսել: Շատ կարելի չե, մի ուրիշի հետ ուրիշ կերպ խոսելի: Բաց ձեզ ճանաչում եմ, պարոն Ռուբեն, գիտեմ, վոր չեք նեղանալ ինձանից: Ձեր քույրը ծնողներ չունի, վոր չես նրանց հետ խոսեմ: Դուք եք նրա մեծը, իրավունքը ձեր ձեռքին և:

— Իմ ձեռքին վոչինչ իրավունք չկա,— ընդմեջեց Ռուբենը,— Մարիամն ինք իրան և միայն հպատակվում, ուրիշ վոչվորքի:

— Գիտեմ, գիտեմ, սիրելիս: Նա խելոք և, նա կրթված և, բաց

շատ լերիտասարդ է, կան բաներ, վոր նա չի կարող հասկանալ: Դուք պետք է հասկացնեք նրան: Յես վոչինչ չեմ թագցնում իմ կյանքից: Ասեմ, լես ամենքան ել ծեր չեմ—քառասուն ու չորեք տարիս նոր լրացավ: Յես ամենքան ել տղետ չեմ,—հասարակութան մեջ պատիվս պահել կարող եմ: Հավատացեք, լես ձեր քրոջը կաշտեմ: Բայց լ՞նչ եմ ասում, միթե դուք չգիտեք, վոր լես համարյա... Ինչո՞ւ չեք շփոթվում, լես անկեղծ եմ ասում: Դուք այդ կարող եք հայտնել Մարիամին, այո, հայտնեցեք: Ասացեք, հույս ունենամ, վոր կարժանանամ այդ բախտին: Յես ամեն բան կզոհեմ, լես հարստութունս կզենեմ նրա վոտքի տակ, ինչ ուզում է, թող անի, ինչպես ուզում է, թող ապրի: Թող նա իմ տերը լինի, լես նրա ծառան, ստրուկը: Յես ձեզ ել կհալատակվեմ: Յես ձեզ ամեն միջոց կտամ՝ ձեր ուզածը անելու: Դուք ուզում ելիք արտասահման գնալ, գնացեք, փողի պակասութուն չեք ունենալ...

Դժվար եր կասկածել ամուրիի անկեղծութան մասին, զգալի չեր, վոր նա սրտից է խոսում: Յեմ այդ ապացուցանում ելին նրա զգացված ձայնը, աչքերի փայլը, դողդոջուն շրթունքները:

— Ուրեմն այդ եր ձեր ասելիքը,—հարցրեց Ռուբենը, չերբ, վերջապես, վոգեկորված ամուրին մի վաչրկյան լոց:

— Ոգնեցեք, պարոն Ռուբեն, մի մերժեք, հավատացեք, իմ բախտը ձեզ ել կբախտավորեցնի:

Ռուբենը վոտքի կանգնեց: Հալարյանը հուսահատված նայեց նրա քրեմին: Յեմ այդ հայացքը ամենքան խղճալի չեր, վոր Ռուբենը մի վաչրկյան հոգով ցավեց ամուրիի մասին:

— Յես ձեզ կխնդրեյի ինձ հետ ճաշել, չեթե...

— Շնորհակալ եմ,—շտապեց ընդհատել Ռուբենը և, ձեռք մեկնելով նրան, ավելացրեց,—մնացեք բարով:

Ասաց և անմիջապես դուրս գնաց, թողնելով մենակաց ամուրիին տխուր ու հուզված:

«Նա վոչինչ չասաց, նա համաձայն չեմ», գոչեց Հալարյանը, հուսահատված ընկնելով բազկաթռի վրա:

Այդ որից հետո նա սաստիկ լարված դրության մեջ եր: Նա անհամբեր սպասում եր պատասխանի Ռուբենի կողմից: Նա շուտ-շուտ դուրս եր գալիս փողոց, պտտում եր այս կողմ, այն կողմ, հուսալով հանդիպել նրան մի տեղ: Բայց փոխանակ Ռուբենի, նա, հակառակ չուր ցանկության, գրեթե ամեն անգամ տեսնում եր բժիշկ Մելիք-Բարսեղյանին, վոր կառքով դես ու դեն եր անցնում:

Մի որ բժիշկը կառքը պահել տվեց, ցած իջավ և, խոնարհ բաժնելով, մոտեցավ Հալարյանին:

— Յեա ձեզանից մի բան եմ ուզում խնդրել,—ասաց նա, քաղցր ժպտալով:

— Ասացեք,—պատասխանեց Հալաբյանը կտրուկ:

— Յես....սկան ընկերութեան խորհրդի անդամ եմ: Այս տարին որ ընտրութեւններ պիտի լինին: Մեր նախագահը հրաժարւոյն է, թույլ տվեք, վոր ձեր անունը անդամներ ընտրուի մեջ մտցնեմ: Մեր ընկերութեւնը ձեզ նման մի անձի կարոտութեւն ունի, համաձայնեցեք մեր նախագահը լինել:

Մի վայրկյան Հալաբյանի փառասիրութեան զգացմունքը շարժվեց: Բայց նա չմոռացավ լուր տեսլութեւնը:

— Յես նախագահ լինելու արժանավորութեւն չունեմ, գտեք մի ուրիշին,—պատասխանեց նա հակիրճ և չերեսը շուռ տվեց, վոր հեռանա:

Բժիշկը չհուսահատվեց:

— Մեզ միայն ձեր անունն է հարկավոր: Ձեզ թիֆլիսում բոլորը ճանաչում են ու հարգում, ձեր անունը մեծ ոգուտ կարող է տալ մեր ընկերութեւնը:

— Ինձ նման շատերը կան, առաջարկեցե՞ք ավելի արժանավորին: Մնաք բարեւ:

Նա խստութեամբ չերեսը կրկին հետ դարձրեց և դնաց: Բժիշկը մի վայրկյան մնաց տեղն ու տեղը անշարժ: Հետո ձեռով մի շարժումն արավ, նստեց կռք և հեռացավ:

Մյուս որը նա չեկավ Հալաբյանի տունը, կրկին նույն առաջարկութեւնն արավ: Բայց վերջինի կողմից շատ սառն ընդունվելով, դուրս չեկավ քնիթը քարշ: Նա տեսավ, վոր չէ հաջողվում այդ մարդու հետ բարեկամանալ:

Որ-որի վրա չէր անցնում, և Հալաբյանը չէր պատահում Ռուբենին: Մի առավոտ չեկավ նրա մոտ իշխան Սահարունին և ասաց, թե տիկին Սոփիոն նրան հրավիրում է ճաշի: Վերջին ամիս Հալաբյանը Սադափյանների տանը չէր չեղել: Տիկինը բոլորովին հուսահատված էր, մանավանդ լսելով այն լուրը, վոր պատում էր քաղաքում: Նա փորձեց հրաժարվել տիկնոջ ճաշից, բայց իշխանը այնքան խնդրեց, թախանձեց, վոր, վերջապէս, համաձայնեց գնալ:

Որիորդ նատալիան զուգված (նա միշտ զուգված էր լինում) նստած էր հյուրասենյակում: Սոփիոն և Նիկողայոսը Հալաբյանին հանդիմանեցին բարեկամաբար: Որիորդ նատալիան սառն ընդունեց նրա բարեւը և ցուց տվեց, վոր վերավորված է: Մարիամի մասին տարածված լուրը նրա վրա խորին տպավորութեւն էր արել: Յերբեք նա

այնքան կատաղած չեր Մարիամի դեմ, չերեք նա այնքան չեր ատել չուր կարծեցյալ թշնամուն։ Ինչպէս նա կարողացավ գրավել այդ հարուստ ամուրիի սիրտը. նա, վոր նատալիայի աջըռւմ վոչինչ և վոչինչ արժանավորութիւն չուներ։

Նստեցին ճաշելու։ Սոփիոն դարձյալ ամուրիին տեղավորեց Նատալիայի մօտ և սկսեց չուր քաղաքականութիւնը բանեցնել։

— Հո, պարոն Հալարցյան, — ասաց նա չերկրորդ կերակրի ժամանակ, իբրև թե հանկարծ մտաբերելով, — այդ ի՞նչ լուրեր են տալածել ձեր մասին։ Ասում են, հըմ, ի՞նչ են ասում, Սրափիոն, — ժպտալով դարձաւ նա չուր չեղբորը — իշխան Սահարունիին։

— Ասում են, վոր Միշան պսակվում ե Մաշայի հետ, — խկուչն պատասխանեց իշխանը և բարձրաձայն ծիծաղեց։ — Զշմարթտ ե, — դարձաւ նա Հալարցյանին։

Ամուրին վերավորվեց.

— Ուրիշ բան չունեմ խոսելու, — նկատեց. նա խիստ հանդիմանական լեզանակով։

Այս կոշտ նկատողութիւնը, հարկաւ, վերաբերում եր և՛ տիկին Սոփիոյին։ Սակայն տիկինը չվերավորվեց։

— Տեսմը, վոր սուտ ե, — դարձաւ նա չեղբորը, — տեր աստված, անգործ մարդիկ ինչ ասես հնարում են անմեղ մարդկանց վրա։ Ախար չես ել ասում եմ՝ չեթե Հալարցյանը միտք ունի նշանվելու, խոմ աշխարս տակն ու վրա չի չեղել, վոր գնա ու այն...

Այստեղ տիկինը հանկարծ կանգ առաւ, միաժամանակ հանդիպելով Հալարցյանի դեմքի դժգոհ արտահայտութեանը և Նիկողայոսի նշաններին, վոր պահանջում ելին նրանից լուութիւն։

Այս միջադեպի պատճառով ճաշը, հարկաւ, շատ սառն անցաւ։ Հալարցյանը չերկար չմտաց։ Զաշից հետո, մի կես ժամ անցած, նա հրաժեշտ տվեց, չուր հետ տանելով տիկին Սոփիոյի վերջին հուշը...

XIV

Ռուբենից ստացած վերավորանքը՝ Մելիք-Բարսեղյանին ստիպեց փոխել չուր քաղաքականութիւնը։ Մինչև այդ ժամանակ նա աշխատում եր գործը մեղմորեն և, վորքան հնարավոր ե, բարեկամաբար, առանց աղմուկի վերջացնել։ Այժմ, չերբ նա արդեն վերավորված եր, չերբ նրա անունը արդեն հասարակական դատաստանին եր չենթարկված, այլևս չեր կարող դադտնիք պահել, պետք ե բացարձակ պաշտպաներ իրան։ Բայց ռւմ դեմ։ Ռուբենը վրեժխնդիր եր չեղել չուր քորջ համար, իսկ Մարիամը կին եր։ Բժիշկը գիտեր, վոր այսպես թե

այնպես ընդհանուրի համակրանքը որիորդի կողմն և թեքվելու, չեթե ուրիշ բան ել չլիներ, գեթ այն հասարակ պատճառով, վոր նա մի թույլ արարած ե:

— Գլխավորն այն և,—հանդիմանում եր մի որ նրան վաղեմի ընկերներից մեկը,—վոր, ինչպես ասում են, դու այդ որիորդին թողել ես աղքատության պատճառով:

— Վոչ, վոչ ու վոչ,—պատասխանեց բժիշկը, չկարողանալով, վերջապես, պահել չուր սառնասրտութունը,—սխալվում են ասողները, չես նրան թողել եմ բոլորովին մի ուրիշ պատճառով:

— Ա՛յն և:

— Պարոններ, բավական և, վերջապես, խնդրում եմ, մի ստիպեք ինձ շատ ել պարզախոս լինել:

— Դու պարտավոր ես պարզ խոսել, դու պետք և քեզ արդարացնես, գիտես, վոր ամենքը քեզ են մեղադրում:

Բժշկի համբերութունը միանգամայն սպառվեց և նա, մի քանի վայրկյան խորհելով, արտասանեց հետևյալը.

— Յես ինձ արդարացնեմ. այո, կարող եմ և շատ հեշտությամբ: Բայց, պարոններ, մի մոռանաք, վոր իմ հակառակորդը որիորդ և, չես չեմ կարող ամեն բան ասել, չեմ կարող իմ սառնելու գլխավոր պատճառը հայտնել, հասկանո՞ւմ եք:

Վերջին դարձվածը բժիշկը մի այնպիսի խորհրդավոր չեղանակով արտասանեց, վոր խոսակցի սրտի մեջ մի վորոշ կասկած ձգեց: Խոսակիցը դարձվածը կրկնեց մի չեղկորդի, չերրորդի մոտ, և նա, բերանից բերան անցնելով, տարածվեց հասարակության մեջ: Բամբասանները սկսեցին զանազան չենթադրութուններ անել, չենթադրութուններ, վոր չերբեմն, համեստության սահմանից դուրս գալով, պղտորում ելին մարդկային առաքինական զգացմունքը:

Ինքնապաշտպանության այս պարզ միջոցը ունեցավ չուր հետևվանքը: Շուտով բժիշկը գրավեց մի շարք կողմնակից-պաշտպաններ մասամբ այն հնամաշ որիորդներից, վորոնց վրա նա չերբեմն-չերբեմն ուշադրութուն եր դարձնում, և մասամբ այն մայրերից, վորոնք աչք ունեցին նրա վրա:

— Վոնց չե,—ասում եր, ի միջիացլոց, չորս աղջիկ ունեցող տիկին Ագամովան,—չես դիմ գիտեմ, այն աներես աղջիկը ինքն և ուժով կպել: Բժիշկը խոմ գիժ չեր, վոր գնար ու այն քաղցածին ուղեր: Անանիա ջան, միտդ ե, վոր չերբ լսեցի, ասացի մի բան կա: Տեսար:

Յեկ այդ «բանը» բացատրվում եր այնքան կերպ, վորքան տարբեր գլուխներ կային:

Սակայն ժամանակը հետզհետե խաղաղեցրեց թեր և դեմ խոսող լեզուներին: Բամբաստանքի նյութը սկսեց հնանալ, տեղի տալով նորանոր նյութերի: Բժիշկ Մելիք-Բարսեղյանի անունը փոքր առ փոքր սկսեց ազատվել սանձարձակ բերաններից:

Մնում էր միայն բժշկի սրտում բարոյական սուր վերավորանքի խորին հետքը: Նա մոռացավ բոլորը, բաց չմոռացավ հյուրանոցի դեպքը: Մի դեպք, վոր տյնքան ցավալի չե՛ր նրա համար, վորքան նա հռչակված եր քաղաքում: Նա նկատում էր, վոր այդ որից հետո վսմանք, մանավանդ չերիտասարդներից, ծուռ աչքով են նայում լուր վրա և վսմանք, կարծես, մինչև անգամ խուլս են տալիս նրանից: Այդ եր, վոր նրան անչափ անհանգստացնում էր և ստիպում ավելի մտածել այն միջոցների մասին, վորոնցով կարելի չե՛ր վերականգնել լուր պատիվը և արժանանալ ընդհանուրի համակրությանը: Յե՛վ այս նպատակով նա սկսեց իրան ձևացնել մեկամտդձոտ, մտադրադ, մանավանդ կանանց շրջանում:

- Կարծես, վիշտը տանջում է նրան,—ասում եր մի տիկին:
- Այո,—համաձայնում եր մի ուրիշը,— շատ տխուր դեմք ունե:
- Տխրությունը խիստ սառ է գալիս նրան:
- Հետաքրքրելի չե՛ դաձնում:
- Յես սիրում եմ հոգեկան վիշտ ունեցող տղամարդկանց:
- Յես ել:

Յերբ պատահաբար բժշկի մոտ խոսում էին սիրո մասին, նա չե՛ր մասնակցում խոսակցությանը, լուռ ու տխուր հառաչում եր և աչքերը խոնարհեցնում:

Այս ինքնահնար միջոցը վորոշ ներգործութուն ունեցավ և հետևանքն այն չեղավ, վոր բժիշկը դարձավ զգայուն կանանց ցավակցության առարկա:

Դալով «պրակտիկային», անախորժ անցքը վատ ներգործութուն չունեցավ: Ընդհակառակը, նրա անունը ավելի տարածվեց, հետաքրքիր կանաչք ցանկացան նրա չերեսը տեսնել: Շատերը, հիվանդ ձևանալով, գալիս էին նրա մոտ, մի փոքր խոսում և, ալցավճարը տալով, հեռանում:

Մի որ նա, հիվանդների ընդունելութունը վերջացրած, հանգստանում եր ննջարանում, չերբ ծառան ներս մտավ և տվեց մի նամակ: Դա մի չերեկուլթի սիրալիր հրավեր եր Ագամոֆների կողմից: Այդ որը տիկին և պարոն Ագամոֆների ամուսնության չերեսնամյակը լրանում եր: Դեռ առավոտյան բժիշկը շնորհավորել եր նրանց: Տիկինը կարծելով, վոր բերանացի հրավերը մոռացած կլինի, ստիպեց ամուսնուն նամակ ուղարկել:

— Ասա, վոր կգամ, — պատվիրեց բժիշկը ծառալին։

Վերջին ժամանակ նա այդ ընտանիքում ընդունվում էր զրկաբաց, նրան ցույց ելին տալիս անսովոր հարգանք և բարեկամութուն։ Տիկին Ազամովան արդեն նրան համարում էր չուր ցերկրորդ զստեր փեսացուն։

Այս մտքով նա արդեն մի թեթև լուր տարածել էր չուրալիսնների շրջանում գործին հիմք տալու համար։ Բժիշկը գիտեր, վոր այդպիսի լուր կա, մինչև անգամ արհեստակիցներից մեկը շնորհավորել էր նրան։ Սակայն նա տակավին դպուշ էր։ Առաջին փորձից խրատված, նախ քան մի վորոշ քալ անելը, նա կամենում էր ճիշտ ուսումնասիրել հանգամանքները, ունի՞ արդյոք որիորդ Ազամովան աչնքան, վորքան ասում են։

Վորոշյալ ժամանակից մի ժամ անցած, գալով ցերեկույթ, նա Ազամովաների տանը տեսավ հրավիրվածների մի բավական մեծ բազմություն։ Նրան գիմավորեցին ուրախությամբ, կարծես, ամենքը նրան ելին սպասում։ Այստեղ նա ծանոթացավ մի քանի ընտանիքների հետ։ Հասարակութունը բաղկացած էր տարբեր տարրերից. կային և՛ վաճառականներ, և՛ ծառայողներ, մեկ ինժեներ, ցերեկ կապալառու, ցերեք գրագիր, մի պաշտոնաթող գեներալ, մի կոմիսիոներ, մի վաշխառու, ցերեկ ուսուս և այլն։

Յերեկույթը սկսվեց, մի թեթև կոնցերտով։ Գրագիրներից մեկը ջութակի լարերը անխնա խարթոցում էր։ Մի ինչ-վոր տիկին ցեռանդով ջարդում էր դաշնամուրի կլավիշները։ Կրտսեր որիորդ Ազամովան չուր կատվի ձայնն էր բարձրացրել։

Վաճառականը, վաշխառուն և կոմիսիոները, մի անկուռն քաշված, խոսում ելին իրանց գործերի մասին։ Պաշտոնաթող գեներալի մեջքին մի բարձր դրեցին, և նա իսկույն նիւրհեց։ Պարոն Ազամովը ինժեների և ուրիշ ցերեկ հյուրերի հետ նստեց թուղթ խաղալու։

Յերիտասարդ գուլգերը սկսեցին պարել։ Բժիշկը հերթով տանտիրուհու աղջկերանց հետ մի-մի անգամ պարելուց հետո, շինովի մեկամադճութունը ցերեսին, քաշվեց մի կողմ։ Տիկին Ազամովան աչքից բաց չէր թողնում նրան։

— Պարոն բժիշկ, — մոտեցավ նա չուր թանգագին հյուրին, — մեր տունը տխրող հյուրերի չէ սիրում։

— Յես տխուր չիմ։

— Լավ, լավ, ինչո՞ւ չեք խաբում, խոմ չես ամեն բան գիտեմ։ Դուք և մենք մեղավոր չենք, վոր աշխարհումս անամոթ մարդիկ կան։

Բժիշկը հասկացավ, թե տիկինը ինչ բան և ում և ակնարկում:

— Դեհ, թողեք ձեր դատարկ հոգսերը, զվարճացեք, — հրավիրեց տիկինը և, թևից բռնելով, մոտեցրեց կանանց, վորոնց համար այդ պահին զվարճախոսում եր ուսւս լերիտասարդներից մեկը:

Մի քանի րոպե չանցած տիկինը նկատեց, վոր Բժիշկը սենյակի մի անկյունում առանձնացած ուրախ-ուրախ խոսում և հյուրերից մեկի հետ: Դա վաճառական հյուրի միակ աղջիկն եր, մի դեղնադեմ որիորդ, քսան տարեկան հասակից վոչ ավելի, վոր գիտեր դաշնամուր ածել, լավ պարել, ուսներեն մաքուր խոսել:

Բժիշկը վազուց լսել եր նրա մասին, իմացել եր, վոր հարսնացուների մեջ ամենայուղալի պատահներից մեկն ե:

Տանտիկինը վախեցավ այդ վտանգավոր հարևանութունից, մեջ մտավ և հաջողեց բժշկին բաժանել որիորդից:

Սկսեցին ընթերի: Տանտիկինը բժշկին նստեցրեց չուր չերկրորդ աղջկա — Վարինկա անվանվածի — մոտ և աչքը տնկեց նրա վրա: Յիվ վոչ միայն նա, այլ, նկատում եր Բժիշկը, ամենքը նրանց ելին նալում: Վոմանք միմյանց բոթում ելին, քչփչում և ժպտում: Այս բոլորը կատարելապես համոզեց բժշկին, վոր ինքն արդեն Վարինկալի փեսացուն և համարվում: Ավելի համոզվեց, չերր սեղանի կառավարիչը նրա կենացը առաջարկեց որիորդի կենացի հետ միասին, խորհրդավոր չեղանակով արտասանելով.

— Թող ձեր հարևանութունը բարեկամության սկիզբ լինի...

Սակայն բժշկի միաքը ավելի վաճառականի աղջկանով եր զբաղված: Նա զադտնի ուշադրությամբ դիտում եր որիորդի կերպարանքը: Մի թեթև համեմատութուն անելով չուր մաքում, նա վերջինին գերադասեց չուր հարևանից, չեթե վոչ դիրքով և դեմքով, գեթ ո՛րիտով:

Յերեկույթը վերջացավ: Բժիշկը տուն վերադարձավ բավական զվարթ տրամադրությամբ: Յերկար ժամանակ այդ գիշեր նա մտածում եր չուր մասին: Հանգամանքները միանգամայն նրան ուրախացնում ելին: Նա տեսնում եր, թե հասարակութուն ասած բանը այնքան ել սարսափելի դատավոր չե, վորքան կարծում եր, թե շատ-շատերը, վոր կարծում եր խուլս կտան, դեռ ձգտում են դեպի նա: Նա վճռեց, թե հիմարութուն ե պատվի խնդրի վերաբերմամբ շատ ել մանրակրկիտ և զգալուն լինելը, թե առհասարակ նուրը պատվասիրությունը մի տեսակ տկարամտություն ե: Արժե մտածել անցած բաների մասին, արժե վշտանալ մի չերիտասարդի տված թիթև վիրավորանքից, չերր հասարակութունը այդ վիրավորանքը անպատվաբեր չե համարում...

Հետեւիւլ որից նա արդեն նախկին Մելիք-Բարսեղյանն եր: Ջքացան մոտիկ անցյալի տխուր մտածումները: Վերադարձով կրկնակի ուժով նրա լեռանդը: Թեթեւ հուզմունքը տեղի տվեց բնական անհողդողդ սառնասրտութեանը: Յեւ նրա կյանքը սկսեց ընթանալ սովորական շավղով:

Մնում եր իբրեւ միակ հոգս Հալաբւանի թշնամութիւնը: Բայց հեղ մոռնին աչն դրութեան մեջ եր, վոր բժշկին անգամ մոռացել եր:

Դարձյալ Հալաբւանի միտքը գրադված եր Մարիամով, դարձյալ փշեր ու ցերեկ նրա մասին եր մտածում և որից որ ավելի ու ավելի կապվում չուր ցնորքի հետ:

Այժմ նա անճանաչելի չեր դարձել: Չկար այլևս նրա ինքնավստահ քայլվածքը, չկար աչն խրոխտ, ինքնագոհ հալացքը, վոր աջ ու ձախ ձգում եր մարդկանց վրա: Նա ավելի չեր նիհարել, ավելի գունատվել, նրա բարձր ուսերը ցած ելին թեքվել, նրա կուրծքներս եր ընկել, կարծես, մի ամսով մեջ նա ապրել եր տասը տարի:

Յեւ դեռ սպասում եր նա, դեռ հուշս ունեւր, վոր արժանանալու չե չերազած չերջանկութեանը: Բայց որեւն անցնում ելին և վոչ մի դեպք, վոչ մի թուլչ չերեուլթ չեր ցույց տալիս, թե նա կհասնի չուր նպատակին: Վերջին ժամանակ նա փողոցում չերբեմն պատահում եր Ռուբենին, և հանդիպում եր նուչն սառնութեանը, նուչն անուշադրութեանը: Բայց նա դարձյալ չեր հուսահատվում: Նա պատահեց մի քանի անգամ նուչնպես և՛ Մարիամին, և ամեն անգամ Սաթենիկի հետ: Մի որ որիորդը վերջինի հետ ձիաքարշով անցնում եր: Ամուրին, չնայելով անանցնելի ցիխին և չուր պատկանելի տարիքին, վազեց, վոր ձիաքարշ նստի, չհասավ, զրկվեց որիորդին բարեկիւլ հաճույքից և միաչն աչքերով ուղեկցեց նրան:

Նրա ականջին ևս հասել ելին Մելիք-Բարսեղյանի խորհրդավոր դարձվածի պես-պես մեկնութիւնները: Բայց վոչ մի չար չենթադրութիւն, վոչ մի վերավորական բամբասանք Մարիամի անարատութեան մասին հավատալի չեր թվում նրան, վոր պաղեցներ նրա սիրտը, վոր ստիպեր նրան սթափվել չուր դառն ցնորքից: Նա համոզված եր, վոր աչք բոլոր յուրերը չար մտքով են տարածված: Նա կարծում եր, թե դա իշխան Սահարունիի գործն է, նա չե հնարում աչք յուրերը: Յեւ Հալաբւանը վրդովված եր իշխանի դեմ: Նրան տեսնելիս կամ չերեսը չեւ եր դարձնում կամ փոխում եր ճանապարհը, վոր չբարկի: Նա դադարել եր և՛ Սադափյաններին ալցելիւուց, չերել մտածում նիկողայոսից ստանալիքի մասին: Նա մոռացել եր և չուր միւս գործերը: Նրան տիրել եր մի տեսակ թմրութիւն: Վոչ մի բան նրան

չէր հետաքրքրում, վոչ մի տխուր կամ ուրախալի լերեւելթ չէր շար-
ժում նրա սիրտը: Պատահում էր, մոտիկ վախժախանը մտնում էր
նրա մոտ հուզված, ալլալված և պատմում էր սրտաշարժ նորութիւն-
ներ քաղաքային կյանքից: Նա, վոր առաջ սիրով և հետաքրքրութեամբ
էր լսում ալլ նորութիւնները, ուրախանում էր—չէր հարկավոր էր,
տխրում—չէր հարկավոր էր, ալժմ մնում էր անտարբեր, լուռ, նրա
դեմքի մկանունքը անգամ չեղին շարժում:

Յեւ վախժախանը չգիտեր վշտանար, թե զարմանար լուր տե-
սածի վրա: Ամեն ոք նա վազում էր Ախշարումյանի մոտ և պատմում
Հալաբչանի հոգեկան դրութեան մասին, ավելացնելով, վոր որից ոք
ավելի վատանում է նա: Մի քանի անգամ Ախշարումյանը ինքն ալ-
ցելից ամուրիին և տեսավ, վոր, արդարեւ, ցավալի չէ նրա դրու-
թիւնը:

— Գնանք արտասահման, — առաջարկեց նա մի անգամ Հալաբ-
չանին:

— Ինչո՞ւ:

— Մի քիչ ման կզանք, ժամանակ կանցկացնենք: Մի քաղաքում
չերկար ապրելը մարդուս բթացնում է:

Հալաբչանը գլուխը բացտարած շարժեց, հառաչելով և տխուր
ժպտալով: Յեւ ալլ հառաչանքն ու ժպիտը այնքան սրտաշարժ եղին,
վոր Ախշարումյանը, այն մարդը, վոր միշտ ծաղրաբար էր վերաբե-
րում դեպի լուր ընկերոջ զգացմունքը, սկսեց անկեղծ ցավակցել նրան:
Ալլ որը նա վճռեց ոգնել Հալաբչանին՝ ազատել նրան լուր ծանր
վշտից:

— Իշխան, — դարձավ նա մի ուր Սահարունիին, — մեր Մեխակի
դրութիւնը շատ ցավալի չէ, որից ոք նա նիհարում է, խեղճանում
ու պառաւում:

— Հավ, չէս ինչ անեմ:

— Դու և՛ չես նրա բարեկամներն ենք. պետք է խելք-խելքի
տանք և նրա միտքը մի ուրիշ բանով դրադեցնենք: Յես համոզված
եմ, չեթե նա ալլպես շարունակի, մի ոք կխելագարվի: Ափսոսում եմ,
վոր մինչև հիմա չես ծաղրաբար եմ վերաբերվել, մարդը, վոչ դես վոչ
դեն, սիրահարված է և շատ վատ է սիրահարված:

— Սիրահարվել, խելագարվել, — կրկնեց իշխանը, բարձրաձայն
ծիծաղելով, — նու, բարեկամ, ինչպիս տեսնում եմ, դու նրանից պա-
կաս խելոքը չես: Դ՞նէ չել սեր ես անվանում ալլ:

— Բան:

— Վոչ, սիրերիս, ալլ կիրք է, հասկանձեմ ես, քառասուն ու

ցերեք տարեկան կիսամաշ մարդու կիրք, վիրավորված ինքնասիրութեան հետ խառն: Եւեւ, յերևակայիւր գործ և զբաղմունք չունեցող մի հարուստ ամուրի, վոր մի անգամ վճռել և ձեռք բերել մի սիրուն աղջկա, չե կարողանում նպատակին հասնել և տանջվում և, պրծնով գնաց: Յեթե ինձ ես հարցնում, թող տանջվի, նա խղճալու մարդ չի: Նա հիմար և, ալ մարդ, հիմար, ընկել և մի աղջկա լետեից, վորի լեւրեսի պատկառանքը... նու... մի ուրիշն և լիզել:

— Իշխան,— արտասանեց Ախշարումյանը զարմացած,— ի՞նչ ես գուրս տալիս. չե՞ վոր այդ աղջիկը աղքատեանդ և:

— Աղքատեան, շատ հարկավորս են այնպիսի աղքատեանները, վոր ութ տարի քրոջս հաշվով ապրելուց հետո, հիմա քաղաքում լուր են տարածել, թե փեսաս նրանց զրկել և հոր ժառանգութունից:

— Միթե այդ ճշմարիտ չե:

— Այնքան և ճշմարիտ, վորքան այն, վոր նրանց հայրը ժառանգութուն և թողել: Շանտաժ և, բարեկամս, անխիղճ շանտաժ, վորի համար հիմա աստված պատժում և նրանց— քուլը և լեզրայր քաղցած զկրտում են: Լսիր, յեթե ընկեր ես, յեթե ուզում ես Հալաբյանին ոգնած լինել, համոզիր նրան, վոր ձեռք վերցնի այդ աղջկանից, թե չե կփոշմանի, շատ կփոշմանի: Ասա այն հիմարին՝ խելքի դա և հասկանա, վոր յեթե մի անգամ վճռել և տխմարանալ, այսինքն ամուսնանալ, թող իմ առաջարկած աղջկան ձեռքից բաց չթողնի:

— Զլինի՞ քրոջդ աղջկա մասին և խոսքդ:

— Նու, հենց դիցուք նրա մասին և, չարժե՞ տասը Մարիամի: Այդ հիմարը առաջ նրա հետեից եր ընկած, չեմ իմանում, ինչ պատահեց, թողեց հանկարծ ու կապով մեկին, վորին մարդիկ ել մոռացել են, աստված ել: Տո, մեկ հարցրու նրանից, յեթե այդ աղջիկը լավ պտուղ եր, ինչո՞ւ բժիշկ Մելիք-Բարսեղյանը թողեց նրան: Ի՞նչ յերեվելի մարդ և այդ բժիշկը, հա հա հա:

— Այսուհետեւ շատ ուշ և փոխել Հալաբյանի միտքը: Յերկուսից մեկը— կամ պետք և մի կերպ անել, վոր նա չուր նպատակին հասնի, կամ պետք և այս քաղաքից հեռացնել նրան:

— Յեթե դու կողնես կամ կցանկանաս, վոր առաջինը լինի— վոչ իմ բարեկամս ես, վոչ Հալաբյանինը, լավ իմացիր,— ասաց իշխանը և հեռացավ:

Իշխանի այս ծալրահեղ գրգռման պատճառն այն եր, վոր Հալաբյանի վարմունքը դեմ եր նրա շահերին: Տիկին Սոփիոն բացարձակ խոստացել եր նրան՝ Նատալիայի բանը հաղորեցնելուց հետո, չուր ամուսնուն համոզել, վոր սա յերաշխավոր լինի իշխանի համար

մութնակով բանկից միքանի հազար վերցնելու: Այնինչ իշխանը, նալելով Հայաբլանի դրութլանը, տեսնում էր, վոր հազիվ չերբեհ հաջողութլուն ունենա լուր շահավետ ձեռնարկութլունը: Այս էր պատճառը, վոր նա վրդովված էր և՛ Մարիամի դեմ, վոր, հարկավ, գլխավոր խոչընդոտն էր:

Մի անգամ իշխանը այս հուզված դրութլամը պատահեց Ռուբենին: Նորին պալծառափայլութլունը հարկավոր համարեց նախ նրա հետ խոսել իբրև աղքատի, ապա սկսեց հանգիմանիլ նրան, անվանելով չերախտածո լուր հորեղբոր ընտանիքի վերաբերմամբ:

— Դուք ինձ խրատում եք, — հարցրեց Ռուբենը հեգնաբար:

— Յես հիշեցնում եմ ձեզ ձեր բարոյական պարտքը, — գոչեց իշխանը, ավելի գրգռվելով, — վոր դուք այնպես մոռացաք:

— Շատ պատասխանատու դեր եք կատարում, ձերդ պալծառափայլութլուն, — արտասանեց Ռուբենը վերավորված:

— Ի՞նչ, չլինի թե դուք ինձ անընդունակ եք համարում խրատել մի թեթևամիտ պատանու և մի անփորձ աղջկա:

— Թե՛ պատանին և թե՛ աղջիկը կարոտ չեն վոչ ձեր և վոչ ուրիշների խրատներին:

Իշխանը կատաղեց, նայեց խորին արհամարհանքով չերիտասարդին վոտից մինչև գլուխ և արտասանեց.

— Սիրելիս, շատ ես քիմթե՛ վեր ցցում, վաղճւց ե, վոր այդքան մեծացել ես:

— Իշխան, — պատասխանեց Ռուբենը, մի կերպ զսպելով իրան, — ճիշտը չգիտեմ ինչ, բայց համոզված եմ, վոր ազգակցական զգացմունքը չե՛ ձեզ լս և քրոջս դեմ գրգռողը... Անշուշտ մի ուրիշ պատճառ ունեք: Յես ձեր մասին մի բան ել լսել եմ, բայց չեմ ուզում հավատալ, այդ արդեն չափազանցութլուն կլինեք...

Միքանի վայրկյան իշխանը աչքերը լալն բաց արած նայում էր Ռուբենի չերեսին:

— Ի՞նչ եք լսել, — արտասանեց նա վերջապես:

Ռուբենը լուռ էր: Իշխանը կրկնեց, չերկնեց լուր հարցը:

Այն ժամանակ Ռուբենը հուզված և վշտացած հայտնեց այն բանը, վորին ինքն ել արդարեւ չէր հավատում, վորքան և՛ վատ կարծիք ուներ իշխանի մասին: Հայտնեց, թե՛ լսել է, վոր իշխանը կողմնակի կերպով վոմանց մոտ անվանարկիլ և Մարիամին:

— Կրկնում եմ, չես չեմ հավատում լսածիս, չեմ հավատում, վոր դուք այդքան վատ եք:

Իշխանը փոքր ինչ շփոթվեց, ամաչեց, զգալով, վոր իրավ չուր

լեզվին շատ և աղատութիւն տվել: Նա հանձն չառաւ, նա հետ կանգնեց չոր ասածից: Յեւ վորպեսզի ավելի համոզի Ռուբենին, վոր ինքը արդար և, ցուց տվեց անարդար մարդու կեղծ-արդարացի կատաղութիւն:

— Կասկածել մի վայրկյան, վոր չես, իշխան Սահարունիս,— գոչեց նա, աչքերը պապղացնելով,— վոր չես, իշխան Սահարունիս, ընդունակ եմ բամբասելու մի որիորդի, լինի նա աղբականս, թե բոլորովին ոտար, կրկնում եմ, կասկածել մի վայրկյան անգամ այդ մասին— կնշանակի ինձ անպատվել: Ամոթ և ձեզ համար, Ռուբեն, ամոթ և, վոր այդպես անպատվում եք ինձ:

Յեւ չոր կեղծիքը թագցնելու համար շտապեց հեռանալ:

Սակաջ Ռուբենը զգաց, վոր իշխանը այդ բանում շատ եւ արդարացի է, վոր անկասկած նա մասն ունի Մարիամի մասին տարածված տմարդի լուրերում: Լուրեր, վոր վորքան և մոթ և մեղմացրած կերպով ելին հասնում սիրող չեղոր աղանջին, բայց և այնպես պատճառում ելին նրան մի ծանր վիշտ և ստիպում ավելի կատաղել այդ բոլորի սկզբնապատճառ— բժշկի դեմ: Հարկաւ, նա չոր լսածը չեր հաղորդում Մարիամին: Բայց նրա դեմքից, նրա խոսակցութեան ձևից, քույրը կանացի բնազդմամբ մասամբ գուշակում ևր նրա սրտի ճնշող գաղտնիքը: Յեւ նա չոր ցավի վրա ավելացնում ևր չոր չեղոր ցավը— նոյճի խալթոցի պես մի բան, թե ինչու չոր պատճառով պետք և բարոյական տանջի և՛ չեղբայրը: Դրոված դեպի Ռուբենի տածած փոխադարձ սիրուց, նա վերջին ժամանակ ամեն ջանք գործ ևր դնում չոր վիշտը մոռանալ, կամ գոնե ուրախ լինել այն պահին, չերը Ռուբենը չոր մոտն ևր: Այս պատճառով նա խաբում ևր չեղբորը: Նա, վոր անտարբեր ևր հոգով և՛ սրտով դեպի բոլորը, մերթ գովում ևր Ռուբենի մի ընկերով, մերթ մյուսին, ցուց տալու համար, թե դեռ կարող և սիրել մի ուրիշին: Ազնիվ խաբելութեան միջոցը ճիշտ ևր ընտրված, և Ռուբենը ուրախացնում ևր, վոր Մարիամը դեռ գիտե հետաքրքրվել ուրիշ չերիտասարդներով:

Մի որ, իրիկնադեմին, մասնավոր դասից տուն վերադառնալով, պատշգամբի վրա Ռուբենի աղանջին չոր սենյակից հասավ մի ձայն, վոր, կարծես, վաղուց, շատ վաղուց նա լսել ևր:

Նա շտապեց ներս:

Մարիամի և Սաթենիկի հետ, նրա սեղանի մոտ, նստած ևր մի անծանոթ մարդ, հասարակ սև հագուստով: Դա բավական լայն թիկունքով, դեմքի խոշոր գծագրութեամբ, թուխ աչքունքով և խիտ միլոնքով մի չերիտասարդ ևր, վորի չերեսի կաշին կրում ևր բաց ողի, արևի, քամու հետքը:

Տեսնելով Ռուբենին, անծանոթը ժպտալով, ծանրաբար վռոջի կանգնեց, չերեան հանելով լուր բարձր հասակը և ամուր կազմվածքը: Միքանի վալրկյան Ռուբենը զարմացած նալում եր նրա չերեսին: Հանկարծ նրա զարմանքը փոխվեց չերկուղի, և ակամա, մի քալ հետ գնելով, բացականչեց.

— Բագրատյան...

— Նա ինքն ե,— գոչեց անծանոթը և, լուր լալն թեերը բանալով, գրկեց Ռուբենին...

XV

Բագրատյանի չերեալը Ռուբենին մի ալնալիսի ցնցումն պատճառեց, վոր չերկար ժամանակ ալլալված նալում եր նորեկին վոտից միհնչե գլուխ:

Նրո առաջ կանգնած եր լուր պատանեկական ընկերներից մեկը, վորին մոտ ութ տարի չեր տեսել և վորին չերեք տարի մեռած, անհետացած եր համարում:

Յերը Ռուբենը գեմաղլատ եր, Բագրատյանը ուսանում եր ռեսալական դպրոցում: Մի որ նրանք ծանոթացան, և անմիջապես չերկուսի մեջ հղացավ փոխադարձ համակրութլուն:

Բագրատյանը գլուղական հասարակ ընտանիքի զավակ եր, կըրթութլուն եր ստանում մի բարեգործ ազգականի ոժանդակութլամբ: Հասակով լուր դասակիցներից մեծ, ուսման մեջ շատերից հետ մնացած, ալդ պատանին ուներ հատկութլուններ, վոր առանձին դիրք ելին տալիս նրան ընկերական շրջանում: Միհնչ դասակիցները զբաղված ելին իրանց ուսումով: Նրա ուղեղը վոգեորված եր ալլ բաներով: Տասնուչորս տարեկան հասակից սկսած նա պարապում եր մի շարք գրքերի ընթերցանութլամբ, վոր վոչինչ կապ չունեին դպրոցական ուսման հետ: Յեվ ալդ գրքերի ազդեցութլան ներքո նրա մեջ պատրաստովում ելին ալն ձգտումները, վոր ապագալում նրա բնորոշ հատկանիշներն ելին կազմում: Նկատելի չեր, բնութլունից առանց ալն ել սակավախոս պատանին որից որ ալելի լուիկ և դառնում, ալելի մտազբաղ և հետգհետե նրա պայծառ ճակատը սքողվում և մի մուալլ ստվերով: Մի անգամ աշակերտներից մի քանիսը նրան տեսան ուսումնարանի չետեում մի պատի տակ նստած արտասովելիս: Վոչ վոք չեր կարծում, թե նա ալնքան փափկասիրո ե: Հարցրին պատճառը: Նա, հուղված, տվեց նրանց մի հայ լրագիր, ուր նկարագրված եր Տաճկական-Հայաստանում չեղած հարստահարութլունների մի դեպք:

Դեռ հինգերորդ դասատան աշակերտ էր, չերբ մի որ հրավիրեց նա չուր աղքատիկ սենյակը ամենամոտիկ ընկերներին: Այստեղ նահաղորդեց նրանց այն, վոր վաղուց նրա մտախոհության նյութն էր կազմում: Հայտնվեց, վոր մասամբ անընդունակ, մասամբ ծուլ հահամարված աշակերտի պատանեկական ուղեղը չուրացրել է և սիրտը ջերմ կերթով ընդունել մի ծանր գաղափար, վորով պետք է նոր-նոր տոգորվեր ժամանակակից թարմ սերունդը: Նրա միաքը հասկացան միայն հինգ-վեց հոգի, վորոնց թվում և՛ Ռուբենը: Բնականաբար կազմվեց համամիտ և համագաղափար ընկերների մի սուղ շրջան:

Բազրատյանն էր այդ շրջանին ուղղություն տվողը, վոգի ներշնչողը, պարագլուխը:

Ապագայում Ռուբենը հաճախ հիշում էր այն բարձրահասակ, կայտառ, սևաթուր աչքերով գլուղացի պատանուն, վոր չուր զորեղ կամքով, կորովի ընտելորությամբ բոլոր ընկերակիցներին հարգանք էր ներշնչում: Հիշում էր, այդ պատանին ունեւ չուր մեջ ինչ-վոր մի դյուլթական ուժ, վոր կամա-ակամա բոլորին հպատակեցնում էր:

Վոչ-վոք չուներ շրջանի մեջ այնքան կշիռ, վորքան նա, վոչ-վոքի կարծիքը այնքան հեղինակութուն, վորքան նրանը:

Յեւ ինքը Բազրատյանը զգում էր այդ: Գուցե հենց դա չեր պատճառը, վոր որից որ նրա մեջ զարգանում էր մի տեսակ բռնակալական ձգտում: Զգտում, վոր հարգանքի հետ թուլվելին ներշնչում էր և՛ ատելութուն, և՛ նախանձ, վորոնք սակայն ընտել բացարձակ կերպով չեյին արտահայտվում:

Ավարտելով միջնակարգը, Բազրատյանը դիմեց բարձրագույն կրթության Ռուբենից չերկու տարի առաջ:

Այնուհետև նրանք այլևս չտեսան միմյանց: Թե ինչ պատահեց Բազրատյանին հետո—ճիշտ չգիտեր Ռուբենը, նույնպես և վոչ-վոք: Հայտնի չեր միայն, վոր նա տարի ու կես Պետերբուրգի տեխնոլոգիական ճեմարանում ուսում առավ, հետո արտաքսվեց: Այնուհետև նրա մասին չեղած տեղեկութունները հակասում էին միմյանց...

Մի որ հանկարծ լուր տարածվեց, թե նա մեռել է ոտար լերկրի մի հետ ընկած ավանում և թաղվել ոտար քահանայի ձեռքով: Բոլորը հավատացին այդ լուրին: Բազրատյանը մոռացվեց: Վոչ-վոք չեր հիշում նրա անունը և չեթե հիշում էր, շատ թուլ, սառնարյուն կերպով, իբրև վաղուց չքացած մի բան:

Յեւ հանկարծ մեռածը չերևան և գալիս, անձամբ ներկայանում է չուր ընկերներից մեկին:

Դեպքը անսպասելի չեր, ալգեցութունը ուժգին:

— Պատմիր, վերտեղ ելիր,—գոչեց Ռուբենը շնչառալառ հետաքրքրութեամբ, լերը փոքր ինչ սթափվեց ապշութունից։

Նորեկի վայրկենաբար պարզված դեմքը խսկուէն քողարկվեց աչն մթին ստվերով, վոր, ըստ լերեւութին, մշտական եր։

Մարիամը և Սաթենիկը տակավին չգիտեին Ռուբենի հանկարծակի և լերկարատե ալլալման պատճառը։ Զարմացած մտիկ ելին անուժ մերթ մեկի, մերթ մուսի լերեսին։

— Մեռած ելիր և կենդանացաւ։ Յեթե սնահալատ լինելի, լերկուղից պետք և խելագարվելի, կարծելով, վոր իմ առաջ կանգնած և ուրվականդ։

Նորեկը նստեց, հրավիրելով Ռուբենին ևս նստել։ Նա տակավին լուռ եր։

— Ութ տարի բարեկամներից և ընկերներից անհատ ապրել մեր դարում, թույլ տալ, վոր չար լեզուները չար լուրեր տարածեն, չհերքել այդ լուրերից ամենասարսափելին, չուրախացնել ընկերներիդ — ասած, ի՞նչ և նշանակում այդ գաղտնիքը։

— Նշանակում և,—խոսեց, վերջապես, Բագրատյանը, հառաչելով,—վոր այդ բոլոր լուրերը անհիմն չեկին, չես չեկի կարող հերքել։

— Ի՞նչ, միթե դու ինձ պետք և հավատացնես, թե չերեք տարի մեռած ելիր։

— Այն, մեռած ելի, թեև շնչում ելի...

Ռուբենը կարծեց, թե նա կշարունակե Բաց վոչ. նա կանգ առավ, նայեց Մարիամին և Սաթենիկին։ Պարզ եր. նա չեր կամենում որիորդների ներկայութեամբ խոսել։

Այնինչ Մարիամի և Սաթենիկի զարմանքը փոխվեց բուռն հեքքրքրութեան։ Նրանք անթարթ աչքերով նայում ելին նորեկի բերանին։

Առանձին անհամբերութուն եր արտահայտում Մարիամի դեմքը։ Յեվ լերեք վերջին ժամանակ վոչ-վոք չեր գրավել նրա ուշադրութունը այնպես, վորպես այդ խորհրդավոր հյուրը։

Ռուբենը զսպեց լուր հետաքրքրութունը, թողեց լուր հարցուփորձը, տեսնելով, վոր Բագրատյանը ահամա չե խոսում։ Այն ժամանակ նորեկը ինքը հետաքրքրվեց Ռուբենի ներկա կացութեամբ և բավականացավ վերջինի համառոտ պատասխաններով։

— Ազատ ժամանակ ունե՞ս,—հարցրեց նա հանդարտ։

— Ունեմ։

— Դնանք մի քիչ զբոսնելու։

— Այս ցրտով և քամո՞վ։

— Փուլթ չե։

Ռուբենը դուրս լեկավ նրա հետ: Մարիամը և Սաթենիկը մնացին առանձին: Դանիմի վայրկյան նրանք լուռ նայում էին նախ՝ պատահանի միջով Բագրատյանի լեռերից, մինչև աներևութացավ վերջինի լայն թիկունքը իրիկնային կիսամթնում, ապա՝ միմյանց չեղևին:

— Ի՞նչ տարորինակ մարդ եր,— արտասանեց վերջապես, Սաթենիկը:

— Այո, տարորինակ և չերկուղալի:

— Յես կարծում եմ, այդ մարդը մի հասարակ մարդ չե, — սկսեց չենթադրութուններ անել Սաթենիկը: — Դու նկատեցիր, նա ինչպես աղամա չե՞ր պատասխանում չեղորորդ հարցերին: Կտեսնես, այդ մարդու անցյալում մի բան կա, նա այժմ ել մի շատ ծանր հոգս պետք ե ունենա: Ո՞վ պետք ե լինի:

Մարիամը լուռ եր: Անսպասելի հյուրը չերկուսի վրա ևս խորին տալավորութուն եր գործել: Մեկը չուր տալավորութունը հաղորդում եր լսելի ձայնով, մյուսը լուռ խորհում եր մտքում: Հարկավ, վոչ մեկը չկարողացավ գաղտնիքը հասկանալ:

Արդեն ուշ չերկու չե՞ր, չերբ Ռուբենը տուն վերադարձավ: Յերբ նա աչքպես ուշացած չե՞ր դրսում, այն որից, չերբ քրոջ հետ առանձին եր ապրում:

Մարիամը միայնակ սպասում եր նրան անհամբեր և չերկուղով: Նա ներս մտավ միանգամայն այլափոխված: Նրա միագույն այտերի վրա չերևում եր մի անսովոր կարմրութուն, նրա աչքերի մեջ փայլում եր մի տեսակ կենդանեցուցիչ հուր: Նա նշարդային քալեցաված դրության մեջ եր: Նա զլխարկը մի կողմ շարտեց և նստեց սեղանի մոտ:

— Վճրտեղ ելիր,— հարցրեց Մարիամը:

— Տեսա՞ր, տեսա՞ր այն մարդուն,— գոչեց Ռուբենը,— տե՛ր աստված, ի՞նչ ուժ, ի՞նչ կրակ, աչքբան նեղութուններ քաշել և աչքհափ կենդանի հողի ունենալ... Ի՞նչ եմ չես և ի՞նձ նմանները այդ մարդու մոտ:

Արտասանելով այս խոսքերը ավելի ինքն չուր քան Մարիամի համար, նա վոտքի կանգնեց և սկսեց շտապ-շտապ անցուղարձ անել:

— Դու չես կարող չերևակայել,— շարունակեց նա, դառնալով քրոջը,— այդ մարդը ինչքան ե տանջվել չուր կյանքում: Մազերս փշաքաղվում էին, չերբ լսում էի նրա չոր ու ցամաք պատմութունը:

Վայրկյան առ վայրկյան Մարիամի հետաքրքրութունը բորբոքվում եր: Նա ձգտում եր իմանալ Բագրատյանի կյանքի պատմութուն-

ներ, նա փափագում էր լսել այն բոլոր նեղութիւնները, վորոնց մասին այնպէս հուզված խոսում էր Ռուբենը: Սակայն հատուկօր դարձվածներով Ռուբենը ավելի լուր վողեորութիւնն էր արտահայտում, քան մի կանոնավոր բան պատմում:

Այսքանը պարզվեց նրա բոլոր ասածներից:—Տեխնոլոգիական ճեմարանից արտաքսվելուց հետո Բագրատյանը զրկվում է լուր բարեգործի ոժանդակութիւնից: Նա ընկնում է հետին աղքատութեան մեջ:

Ճարահատված նա շատ չափավոր ուժիկով մտնում է մի կալվածատիրոջ մոտ կառավարչի պաշտոնով: Բայց այստեղ ևս հանգամանքները դավաճանում են նրան: Կալվածատերը կասկածում է նրա անցյալի մասին և քաղաքավարի կերպով հրաժարեցնում պաշտոնից: Նա դադարում է ուրիշ քաղաք...

— Ամեն տեղ կրել է քաղցածութիւն, ցուրտ, մերկութիւն: Ամեն տեղ մարդկանց անտարբերութիւնը լեղել է նրա ընկերը:

— Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Ռուբենը տխուր ժպտաց:

— Ի՞նչ, Մարտ, ի՞նչ, — արտասանեց նա հառաչելով, — և առանց վորեւէ հանցանքի:

Խորհրդավոր հուրը այնքան գրավել էր Մարիամի միտքը, վոր նույն գիշեր որիորդը չերկար ժամանակ նրա թողած տպավորութեան տակ էր: Նրա աչքի առաջից չէր հեռանում մի տեսակ կիսաառասպելական մշուշով վարագուրված չերիտասարդի կերպարանքը: Ո՞վ է նա իսկապէս, ինչո՞ւ չէ չեկել, ո՞ւր պիտի գնա — տակաւին Հպարդված այս հարցերը ակամա հետաքրքրում էին նրան: Ռուբենի ասածից իմացավ նա, ի միջի այլոց, վոր այդ չերիտասարդը նրա պատանեկական ընկերներից մեկն է չեղել, բայց վորքան աշխատեց, չկարողացավ մտաբերել՝ տեսնել և արդե՞ք մի տեղ նրան, չհիշեց անգամ նրա ազգանունը:

Անցավ չերկու օր: Բագրատյանը կրկին չերեւցավ: Այս անգամ նրա դեմքը այնքան մռայլ և խոժոռած չլիւաց Մարիամին, վորքան առաջին օրը, չերե ծանոթը ներս մտավ, հարցրեց Ռուբենի տեղը և նստեց նրա վերադարձին սպասելու:

— Հաղովկեց, — հարցրեց Ռուբենը խորհրդավոր չեղանակով, հենց վոր ներս մտավ Բագրատյանը:

— Հուլս կա, — պատասխանեց նա:

Նրանք լռեցին: Ռուբենի անհամբեր հարցը, Բագրատյանի կրտսրուկ պատասխանը ավելի գրգռեցին Մարիամի հետաքրքրութիւնը: Նա չենթադրեց, վոր նրանց խոսքը անշուշտ մի շատ նշանավոր գործի մասին է:

Բագրատյանը հրավիրված էր ճաշի: Ներկա էին և՛ Սաթենիկը՝ վոր դիտմամբ լեկել էր չուր հետաքրքրությունը քիչ թե շատ գոհացումն տալու: Սակայն այս անգամ ևս որիորդները չիմացան ավելի քան Ռուբենի պատմածը Մարիամին: Ճաշի ժամանակ խոսակցությունը պատում էր չերկու չերիտասարդների նախկին ընկերների մասին: Բագրատյանը հետաքրքրվում էր, Ռուբենը չուրաքանչյուրի մասին տեղեկություն էր տալիս:

— Իսկ վճռեղ և Մելիք-Բարսեղանը, — հարցրեց հանկարծ նորեկը, — հիշում ես, դու նրան միշտ պաշտպանում ելիր ինձ մոտ:

Բարեբախտաբար այդ պահին Մարիամը անցել էր խոհանոց, ուր նա զբաղված էր համեստ սեղանի չերկրորդ և վերջին համեստ կերակրի պատրաստությամբ:

— Նա այժմ բժիշկ է, — պատասխանեց Ռուբենը:

— Թիֆլիսումն է:

— Այո:

— Փոխվել է, թե՞ նույն չեսամոլն է մնացել, ինչ-վոր գիմնա-գիտնում:

— Դու ինքդ կտեսնես և կիմանաս:

Սաթենիկը վաչկյան առաջ կարողացավ մի միջանկյալ խոսքով բժշկի անունը դուրս հանել խոսակցությունից:

— Դուք չերկմիր կմնաք Թիֆլիսում, — հարցրեց նա:

— Հաշտնի չե, — պատասխանեց հյուրը:

Նա լռեց: Սաթենիկը փորձեց մի վորևե խոսակցությունը զբաղեցնել նրան, աշխատելով, վերջապես, վոր նա փոքր ինչ ազատություն տա չուր ժլատ լեզվին: Սակայն Բագրատյանը ավելի ինքն էր հարցնում, քան իրան առաջարկած հարցերին պատասխանում և առհասարակ ավելի լսում էր, քան խոսում:

Ճաշից հետո, մի կես ժամ անցած, նա շտապեց հրաժեշտ տալ, դարձյալ Ռուբենին չուր հետ տանելով:

Այս անգամ Ռուբենը տուն վերադարձավ ավելի ուշ: Հետևյալ որը նա զարթնեց շատ վաղ, տնից դուրս դնաց սովորականից մի ժամ առաջ. տուն չեկավ սովորականից մի ժամ ուշ: Նկատելի էին, վոր նա մի բանով զբաղված է, մի բանով, վոր չեր կամենում վոչ-վոքի հաղորդել: Մարիամի հետաքրքրությունը փոխվեց չերկուդի: Նա վախենում էր Ռուբենի մասին, նա զգում էր, վոր չեղբոր տարրինակ տրամադրություն պատճառը Բագրատյանն է: Նա փորձեց խոսել Ռուբենի հետ այդ մասին, մի վորոշ հետևանքի չհասավ: Միևնույն ժամանակ, նա ցանկանում էր դարձյալ տեսնել Բագրատյանին, այնինչ վերջինը հինգ որ էր չեր չերկում:

— Ինչո՞ւ նա դադարեց քեզ մոտ գալուց, — հարցրեց մի որ նա մուրեհներից:

— Այսոր կզա:

Մարիամը թեթեւ չերկուղի հետ զգաց և՛ մի անորոշ ուրախութիւն:

— Ռուբեն, ինչո՞ւ ինձանից թազցնում ես, թե ինչ գործով ե զբաղված ալլ Բագրատւանը:

— Սիրելիս, — պատասխանեց չեղբայրը, փոքր ինչ ձանձրացած քրոջ անչափ հետաքրքրութեամբ, — առաջին չեմ կարող ասել: Բայց կիմանաս, շուտով կիմանաս...

— Խոստովանում եմ, նրա լուռութիւնը, նրա կերպարանքը ինձ վրա մի տեսակ չերկուղ և ազդում: Յեթե չլինէր նրա աչքերի խորքում մի բարի և ազնիւ վալլ, չեա պետք ե կասկածելի նրա մասին:

— Բարի ե ազնիւ, — կրկնեց Ռուբենը զգացված, — վոչ վոք մեր ընկերներից Բագրատւանի չափ չի չեղել և ալժամ ել չե բարի և ազնիւ: Բայց նա ունի մի ուրիշ հատկութիւն, վոր շատ և շատ բարձր ե ալլ առօրյա առաքելութիւններին: Մարո, նա հաղվազուտ մարդ ե: Ժաշից հետո չեկալ Բագրատւանը: Այս անգամ նա Ռուբենի հետ առանձնացալ վերջինի սենյակում և ալնտեղ խորհրդակցում եին:

Նիվանդոտ հետաքրքրութիւնը հանգիստ չեթ թողնում Մարիամին: Նա չեթ զգում, վոր հետզհետե անգիտակցաբար մոռանում ե չուր հոգսերը, չուր մտածութիւնները, և ալեկի ու ալեկի զբաղվում ալլ չերիտասարդով: Նա չեթ զգում, վոր անսպասելի հյուրի զարթեցրած հետաքրքրութեան զգացումը ալնքան զորեղ ևր, վոր նսնմացնում եր մի ուրիշ զորեղ զգացում — նրա սրտի ամենախորին վիշտը:

Ռուբենի սենյակի դռները բացվեցին, Մարիամը ներս հրավիրվեց: Բագրատւանը նստած եր անշուք և փոքրիկ թախտի վրա, վտտր վտտի վրա ձգած, կռները կրծքին ծալած: Ամբողջ նրա կերպարանքը ալլ վալրկանին տրտահալտում եր մի անթափանցելի սառնութիւն: Մարիամը զգաց մի ճնշումն, մի ծանր բան չուր սրտում: Ալլ մարդու ներկայութիւնը մի անհասկանալի ուժով խլում եր նրա համարձակութիւնը և չեթ թուլ տալիս նրտն մինչև անգամ ազատ շրջել, ազատ խոսել չուլնիսկ չուր չեղոր հետ: Նա, կարծես, վախենում եր ուղիղ նայել հյուրի չերեսին, բայց բոլոր ուշք ու միտքը կենտրոնացած եր նրա վրա:

Տանտիրոջ պատանի ծառան, վոր ոգնում եր Մարիամին խոհանոցի գործնրում, ներս բերեց սամովարը: Մարիամը թեկ պատրաստեց և առաջարկեց: Բագրատւանը չուր կոշտացած ձեռքով վերցրեց մա-

տողարանի վրայից մի բաժակ, դրեց չուր մոտ: Հոգով փափաղում էր Մարիամը խոսել նրա հետ, բայց լեզուն չէր զորում: Նա չգիտեր ինչի մասին խոսել և ինչպես սկսել: Թվում էր նրան, վոր այդ մարդուն զբաղեցնելը դժվար է, վոր նա հասարակ խոսակցությունից կարող է ձանձրանալ: Նրա առաջ նստած եյին լերկու կատարյալ հակառակներ, մեկը—Ռուբենը, դարձյալ հուզված, վառված ինչ-վոր մտքերով, պատրաստ ամեն վայրկյան խոսելու, մյուսը—Բագրատյանը, սառն, հանդարտ, սակայն այդ սառնության և հանդարտության մեջ ավելի ազդու, անդամ չերկյուղալի:

— Վորքան հիշում եմ, որիորդ, չես ձեզ առաջ ել տեսել եմ,— դարձավ Բագրատյանը Մարիամին, առաջին անգամ:

— Ի՞նչ,— կրկնեց Մարիամը, շփոթվելով,— չե՞րբ, վաճառե՞լ:

— Մոտ տասը տարի առաջ, Ռուբենի հետ, ձեր ազդականներից մեկի տանը:

Մարիամը մտքում հանդիմանեց իրան, վոր չէր հիշում Բագրատյանին: Կարծես, այդ մի աններելի թուլություն էր նրա կողմից, կարծես, նա մի անգամ տեսնելով այդ կերպարանքը, չպիտի մոռանար հավիտյան:

— Յես ել կարծում եմ...— արտասանեց նա:

Նա կամենում էր ուղղել չուր սխալը: Բայց կանգ առավ, զգալով, վոր անգլիտակցաբար գրեթե սուտ ասաց:

Մեջ մտավ Ռուբենը և աշխատեց վերականգնեցնել Մարիամի հիշողության մեջ Բագրատյանին, թեև ինքն էլ համոզված չէր, թե յերբևե նրանք հանդիպած լինին:

— Դուք տվարոցեթեք գիմնադիական ուսումը,— հարցրեց Բագրատյանը:

— Այո:

— Ուրեմն դուք ունեք շատ ընկերուհիներ կրթված որիորդների մեջ:

— Թեև շատ չե, բայց ունեմ:

Բագրատյանը մի քանի վայրկյան լռեց: Ապա մի քիչ թեյ խմեց և շարունակեց.

— Այն ժամանակ, չերբ չես դեռ գիմնադիստ եյի, հալ որիորդը չուներ մի վորոշ իդեալ. նա բարձր չէր առերջա չնչին հուպերից: Ցանկալի չե իմանալ, նա նույնն է և՛ այժմ, թե ժամանակի հոսանքը կարողացել է նրտ վրա ևս ազդել:

Այս խոսքերը Մարիամին նեղ դրության մեջ ձգեցին: Ի՞նչ պատասխաներ:

— Ահա մի շատ հետաքրքրելի խնդիր,— միջամտեց Ռուբենը,—

վոր, ճշմարիտ, արժե լուրջ մտածութիւն: Ինձ թվում է,—չարունակեց նա, մի քանի վալերկիան կանգ առնելուց հետո,—հալ կինը առանց իդեալի չէ. միայն պետք է ուսումնասիրել նրան: Պոստովանում եմ, չես այդ մասին դեռ առիթ չեմ ունեցել խորհելու:

— Իմ կարծիքով,—վստահացավ, վերջապես, խոսել Մարիամը,—առաջ պետք է իմանալ հալ չերիտասարդի իդեալը կնոջ մասին: Որինակ,—դարձավ նա Բագրատուանին այս անգամ բավական համարձակ,—չես կկամենալի իմանալ, թե դուք ինչ եք պահանջում կնոջից. նա ի՞նչ ձգտումներ պետք է ունենա:

Մի բոպե տիրեց լուռութուն: Մարիամը անհամբեր սպասում էր Բագրատուանի պատասխանին:

— Որիորդ,—ասաց վերջինը դրական չեղանակով և հաստատ ձայնով, վորի մեջ զգացվում էր նրա համոզմունքի ամբողջութունը,—այժմյան հալ կնոջ մեջ չես միայն մի բան կցանկանալի տեսնել: Կըցանկանալի տեսնել նրա մեջ մի ուժ, վորով կարողանար տղամարդից անկախ կրել այն բոլոր նեղութիւնները, դիմանալ մեր կլանքի այն բոլոր փոթորիկներին, վորոնց դեմ այժմ սկսել է կռվել հալ չերիտասարդութիւնը:

— Դուք ուրեմն կնոջից պահանջում եք տղամարդին հավասար ուժ:

— Այո, և վոչ միայն բարոյական ուժ, այլ և ֆիզիկական տոկունութիւն, այնչափ, վորչափ բնութիւն սահմանած որեւէները թույլ են տալիս: Հուսով եմ, իմ միտքս կարոտ չէ մանրամասն բացատրութիւն:

— Միայն չեթե բարեհաճեք բացատրել, թե վորոնք են այն նեղութիւնները, կլանքի այն փոթորիկները, վորոնց դեմ, ինչպես դուք ասում եք, սկսել է կռվել ժամանակակից չերիտասարդութիւնը:

— Վորոնք են,—կրկնեց Բագրատուանը ներողմտաբար ժպտալով,—չես կարծում եմ, որիորդ, այդ պարզ է հետաքրքրվողի համար:

— Պարզ է,—արտասանեց Մարիամը դառն հեգնութիւամբ,—այո, շատ պարզ է, այնքան, վորքան բացատրում է տղամարդը, վորքան նա ինքն որինակ է դառնում որիորդին...

Այդ խոսքերի մեջ զգացվող հեգնութիւն միտքը անհասկանալի չէր Բագրատուանին: Նա կես դարմաղած նախց որիորդին: Ռուբենը միայն հասկացավ քրոջ ակնարկութիւնը, ուստի սրտմտութիւամբ առաջ տարավ նրա խոսքը:

— Ձի կարելի պահանջել հալ որիորդից մի բարձր իդեալ, քանի վոր մեր չերիտասարդութիւնը, վորից ավելի չէ պահանջելի, նեխված է անբարոյականութիւն ցեխի մեջ: Ո՞րո, Բագրատուան, դու դարձյալ

նույն իդեալիստն ես, ինչ-վոր ելիր առաջ: Դու գուցե զարմանաս, վոր չես այսպես խիստ եմ խոսում, բայց չեթե այդքան տարի հեռացած չլինեիր մեղանից, շուտ պետք է հիասթափվելիր: Մեր չերիտասարդութունը—չես խոսում եմ կրթված չերիտասարդութւյան մասին—այժմ այնպիսի որինականեր է տալիս, վոր բարոյական ապականութւյան կատարելատիպեր են...

Մարիամը շնորհակալութեամբ լի մի մեկամաղձիկ հայացք ձգեց մուրհներ չերեսին: Յեղըոր խոսքերը ըղիւում ելին քրոջ սրտից, վոր այդ վայրկյանին դարձյալ լցվել եր դառնութեամբ զեպէ՛ նա, վոր մուրհների ակնարկած կատարելատիպն էր...

— Ցավալի չե, չեթե տղայես ե,—ասաց Բագրատյանը, տակաւին չզգալով մուրհների սրտմտութեան բուն շարժառիթը,—բայց այդ չպետք է չերբեք հուսահատեցնի մեզ: Տեսնել շատ քիչ, պահանջել և սպասել շատ ավելի—իմ կարծիքով, այս պետք է լինի նույնիսկ քեզ պես հիասթափված մարդու ցանկութունը: Յեթե չերիտասարդութունը ապականված է, թող հայ կինը որինակ լինի նրան: Ներեցեք, որիորդ, չես դարձյալ դառնում եմ մեր խոսակցութեան բնաբանին—հայ կնոջը: Մեր պատգամախոսները ուզում են, վոր կինը լինի միայն լավ տընտեսուհի և առաքինի մայր: Վոչ. այդ չե իմ ցանկացածը: Յես աչքի առաջ ունեմ ուրիշ բան: Զեցեք ձեր հայացքը ավելի հեռու ձեր արուեսակից ժողովրդի այժմյան վիճակի վրա, մտածեցեք և կտեսնեք, վոր կնոջ դերը չպիտի սահամանափակվի միայն հասարակ տնտեսուհու և քնքուշ մոր պաշտոնով: Ինչպես մեր չերիտասարդութեան, նույնպես և որիորդների բոլոր ուժերը ներկա ժամանակ պետք է ուղղված լինեն դեպի մի կետ... պետք է ծառայեն ժողովրդի հասարակական վիճակի վերակենդանութեան գործին: Ահա այս դերը կատարողից պահանջվում է անսահման սեր դեպի յուր հայրենիքը և այդ սիրո անուսով անձնազոհ լինելու պատրաստականութուն: Ունե՞ արդոք հայ որիորդը այդ սերը: Ունե՞ արդոք նա յուր սրտում անձնազոհութեան կալծ—ահա ինչ եմ ուզում իմանալ:

Նա կանգ առավ և թուխ հոնքերի տակ տեղավորված կրակոտ աչքերը սեւեռեց Մարիամի չերեսին: Դա մի այնպիսի թափանցող հայացք էր, վորին չկարողացավ դիմանալ որիորդը: Նրան թվում եր, վոր Բագրատյանը ձգտում էր կարդալ յուր սրտի ամենամիտրական գաղտնիքը: Նա հասկացավ նրա խոսքերի միտքը, հասկացավ, թե այդ չերիտասարդը ինչ է պահանջում հայ որիորդից: Կարող է արդոք զեթ փոքր մասամբ համապատասխանել նրա կամեցածին: Մտածե՛լ է արդոք չերբ և է այս ուղղութեամբ:

Յեւ վ զգուսմ եր Մարիամը ալ զ մարդու առաջ մի անհաղթելի տկարութիւն, վաւրկենարար մի թռուցիկ հայացք ձգելով դեպի լուր անցալը: Այնտեղ նա տեսնում եր մի ամալութիւն: Ի՞նչ է մտածել նա մինչև այսօր, կլանքի վճի հոգսերն են լեղել նրա ջերմ մտատանջութեան նյութը:—Վոչ մեկը, վոր հեռու լինել նրա անձնականութեանից, վոչ մեկը, վոր անջատված լինել նրա անհատական լերջանկութիւնից:

— Զգիտեմ, կամ արդոք ձեր ասածի նման մի որիորդ, չգիտեմ: Այս լեղալ նրա պատասխանը—բարիշ վոչինչ: Յեւ սրանով վերջացավ խոսակցութիւնը: Բազրատյանը զգաց Մարիամի հոգեկան խռովութիւնը լուր խոսքերի ազդեցութիւնից: Նա փոխեց խոսակցութեան նյութը:

Այլ որից Մարիամի միտքը ավելի լեր զրազված նորեկի անձնավորութեամբ...

XVI

Տիկին Սոփիոյի հուսերը խաբվեցին: Նա կատաղած եր վոչ միայն Մարիամի, այլ և Հալաբյանի դեմ: Այժմ նա պախարակում եր ամուրիին, աշխատում եր փքել նրա ամեն մի թերութիւնը, մոռանալ բոլոր լավ հատկութիւնները: Հալաբյանը ծեր է, տգեղ է, տգետ է, արժե՛ նստալիսի մի մատին անգամ: Յերբեմն լուր սրտի թուլնը տիկինը թափում եր իշխան Սահարունիի գլխին:

— Մեղավորը դու չես, լեթե մեջ տեղ չընկնելիւ, չես նրա անունն ել չելի տալ: Նա ո՞վ է, ո՞ւմ վորդին է, ի՞նչ մարդ է, վոր...

Իսկ իշխանը հասկանում եր քրոջ հոգին, դիտել, նրա կատաղութիւնը ուրիշ վոչինչ է, լեթե վոչ անաջողութեան արգասիք: Նա ինքն ել հուսահատված եր: Այն որից, լերը տեսալ, վոր Հալաբյանին դժվար է փոխել, վոր անկարելի չե նստալիսին նրա վզին կապել, չեր իմանում ինչպես համոզել քրոջը, վորպեսզի սա լուր ամուսնուց մի բան պոկե:

Այլ եր լեթե իշխանի անցալ կլանքի փորձերից խրատված չլինելին թե տիկին Սոփիոն և թե Նիկողայոսը: Բայց որինակները պարզ ելին, և Նիկողայոսը շատ լավ եր ճանաչում նրան: Գիտել, վոր լերաշխափոր լինել իշխան Սահարունիի համար կնշանակե՝ նրա պարտքը անպայման լուր վրա վերցնել, զուտ փող տալ նրան՝ կնշանակե տվածից հավիտյան ձեռք վերցնել:

— Դրստի բանս, լեթե այս լեղունգիս Հափ սիրում ես ինձ,— անդադար հորդորում եր իշխանը լուր քրոջը:

— Չեմ կարող, չեմ կարող, չեմ կարող: Նիկոն քեզ չի հավատում, ասում ե՛՛ անքանն ել հերիք ե, ինչքան տվել եմ, ստացածը հետ տվե՛լ ե, վոր նոր պարտք ե ուզում:

— Ասա նրան, վոր ինչ վոր ինձ տվել ե, տոկոսով հետ կստանա ժամանակին: Իշխան Սահարունին քարվանսարի բաղադ չի, վոր սուտ կոտր ընկնի, ուրիշի փողերը կուլ տա: Իմ անունս ու պնտիվս միլիոններով չեմ ծախիլ... Հասկացրո՛ւ նրան, լսո՞ւմ ես:

— Յեթե կարող ես, ինքդ հասկացրու, չես աչուհետե ձեր մեջ գործ չունեմ,— դրապես հրաժարվեց Սոփիոն:

Մի որ իշխանը փողի սաստիկ կարոտություն ուներ: Նա թղթախաղում տանուլ եր տվել մի ըավական ղզալի գումար: Ինչ-ինչ, այս տեսակ պարտքերը նա ճշտություն վճարում եր: Փորձեց սրանից-նրանից խնդրել, ամենքը մերժեցին, վոչ վոք չեր հավատում նրա-վարկին: Մի առավոտ նա դարձյալ վաղեց Սոփիոյի մոտ: Նիկողայոսը տանը չեր: Նա հրավիրեց քրոջը մի առանձին սենյակ և, գրպանից մի մուրհակ հանելով, դրեց նրա առաջ:

— Առանց այլ և այլի, այս վեքսիլի տակ մարդուդ ստորագրել կտաս,— գոչեց նա հրամայողական ձայնով:

Սոփիոն վախեցավ նրա հուսահատությունը լի կատաղի աչքերից:

— Վոր չուզենա ստորագրել, ի՞նչ անեմ:

— Հրամայում եմ քեզ, վոր ստիպես: Այդ քո գործն ե:

Տիկինը ավելի դարձացավ:

— Սրաֆիոն, ի՞նչ ես խոսում, հրամայելս վո՞րն ե:

— Կարճ ասա, չե՞ս ուզում կատարել...

Սոփիոն, մի քալ հետ դրեց և լուռ նայեց չնդրորը վոտից մինչև գլուխ:

— Չե՞ս ուզում,— կրկնեց իշխանը:

— Չե՛ս:

— Լավ,—ասաց իշխանը և շինծու հանդարտությունը, մուրհակը վերցնելով, դրեց գրպանը,— ուրեմն թող մարդդ պատրաստվի բերդը գնալու...

Սոփիոն գունաթափվեց:

— Բե՛րդը... — արտասանեց նա, գոլգողալով:

— Այ՛ո, բերդը: Հերիք ե, ինչքան չես նրան խնայեցի քո խաթրու, հերիք ե, ինչքան թագքրի նրա կեղտոտ բաները: Այժմ ինձ համար դիփ մեկ ե. լեթե այս վեքսիլով փող չստանամ, ալ, սրանով կլանքիս վերջ կտամ,— շարունակեց նա, սլուրտուկի ծոցի գրպանը բանալով և ցույց տալով ատրճանակի կոթը:— Յես կորչելու չեմ, թող Նի-

կողայտան եւ կորչիւ Սյս բոպելիս կփնամ պոլեցիա և ինչ վոր մարդուդ հետ միասին արել ենք, բոլորը կպատմեմ, հետո դու տես, թե ինչ կլինի:

Սյս սպառնալիքը միանգամայն սարսափեցրեց Սոփիոյին, վոր ապուշ դարձած խուժ եր:

— Ի՞նչ ես խոսում, ի՞նչ եք արել միասին, — գոչեց նա, շունչը կտրված և ուժասպառ նստելով աթոռի վրա:

— Ինչ ենք արել... Գողութուն, ավաղակութուն, մարդասպանութուն, կերել ենք, կոփել ենք, կողոպտել ենք խեղճերին, անտերներին: Հերիք ե, վոր հարյուրից մեկը, միայն մեկը բացվի, չես ու մարդդ Սիրիբում կլինենք...

Սյլ ևս Սոփիոն չկարողացավ ուրիշ բան հարցնել: Յեղբոր խոսքերը ազդեցին նրա վրա անհաշիվ, անպայման: Նա հավատաց լիովին, թե կա մի չերկրորդալի գաղտնիք:

— Տուր ինձ, տուր ինձ, դու գովել ես, — գոչեց նա, ձեռք չեղբորը մեկնելով:

Իշխանը մուրհակը տվեց:

— Յերեք որ ժամանակ եմ տալիս, ավելի չեմ կարող, — խստութեամբ վորոչեց նա: — Կանց, վեքսիլը ստորագրել կտաս. բայց ինչ վոր ասացի մեր արածների մասին, չես պատմիլ մարդուդ: Հոսկանո՞ւմ ես, մի խոսք ել չես ասիլ, թե չե՞ վատ կլինի ամենիդ համար:

Յեւ վերեք որ շարունակ տիկին Սոփիոն, բոլոր մյուս հոգսերը մի կողմ թողած, մուրհակը ձեռին չեր հեռանում ամուսնուց: Ժամանակ-անժամանակ, առավոտ-չերեկո, միշտ, չիբբ տանն եր Նիկողայոսը, նա մի և նույնն եր կրկնում.

— Կամ ինձ սպանիր կամ այս վեքսելի տակ ձեռ քաշիր:

Անտանելի չեր Նիկողայոսի դրութիւնը: Ընտանեկան կյանքը նրա համար կատարյալ գոյութեք դարձավ: Նա հուզվում եր, բարկանում եր, գոռում եր, հրում եր ձեռքով կնոջ կրծքին, բայց իզուր: Ինչպես մի անխուսափելի չարիք, մի բնական պատիժ, Սոփիոն անգութ կերպով հալածում եր չուր ամուսնուն, ստվերի պես հետեւելով նրան ամեն բոպե, ամեն վայրկյան: Մերթ նա գոռում եր, մերթ աղերսում և մերթ արտասովում, աշխատելով թունավորել մարդու: հանգստութիւնը:

Ուրիշ չեւք չկար: Վերջապես Նիկողայոսը համաձայնեց, միանգամայն հաղթված համառ կնոջ անընդհատ հալածանքից:

— Բայց ասա լեղբորդ, — պատվիրեց նա, մուրհակը ստորագրելիս, — այս վերջին անգամն ե լինելու...

Իշխանը փողը ստացավ բանկից, և այնուհետև մոռացավ (գուցե առ ժամանակ) Նիկողայոսին ել, Սոփիոյին ել, բոլոր Սաղափյաններին ել:

Ձմեռվա ընթացքում Նիկողայոսի գործերը այնքան հաջող գնացին, վոր կարողացավ չուր պարտքերից մի քանիսը վճարել: Մնում էին մի քանի խոշոր պարտքեր, ի միջի այլոց, և Հալաբյանից վերցրած ի մի մասը: Մի որ հանդիպեց ամուսնի ին և խնդրեց մի քանի ամիս ևս համբերել: Հալաբյանը անտարբեր կերպով գլուխը շարժեց, կարծես, մի և նույնն եր, կստանար չուր փողերը, թե վոչ:

— Յես մինչև մահ չեմ մոռանալ, վոր ձեզանով վոտքի կանգնեցի, — ասաց Նիկողայոսը չերախտագիտաբար:

— Վոչինչ չեմ արել ձեզ համար, վոր ինձ չմոռանաք, — արտասանեց Հալաբյանը վհատված ձայնով:

— Փահ, բաս Բիլ ե արել...

— Շնորհակալ չեղեք ձեր չեղոր վորդուց:

Նիկողայոսը զարմացավ: Առաջին անգամն եր նա այդ լսում: Այն ժամանակ Հալաբյանը բացատրեց բանի ելութունը, հայտնեց, թե լոկ Ռուբենի խնդրելովն ե նրան ոգնել:

— Ռուբենը, Ռուբենն ե ինձ համար ձեզ խնդրել, — գոչեց Նիկողայոսը, չհավատալով չուր լսելիքին:

— Այո, Ռուբենը... բայց... — արտասանեց Հալաբյանը և, գլուխը չերեղելով, հեռացավ:

Անհասկանալի, նույնիսկ անբնական եր թվում Նիկողայոսին վեհանձնության մի աշդպիսի որինակ: Ի՞նչպես, նա, վորին զրկել ե, վորին չուր տնից համարյա թե արտաքսել ե, հանկարծ մոռանում ե ամեն ինչ և կողմնակի ոգնում ե չուր զրկողին, այն ել գաղտնի՞ կերպով: Վոչ, այդ անկարելի չե, մեջտեղ մի բան կա: Մարդ ասված արարածը չերեք չի կարող աշդափ վեհանձն լինել:

Նա պատմեց Հալաբյանից լսածը չուր ամուսնուն: Տիկին Սոփիոն, լսելով Ռուբենի տնունը, կատաղեց, փրփրեց:

— Այդ եր պակաս, համ ութ տարի մեր հացով ապրի, համ մեզ խալտառակ տնի քաղաքում, համ ել մեր բարերարը լինի: Ձե, Նիկո, մի հավատալ, սուտ ե, Ռուբենը այն պտուղը չե...

Յերբ նույն բանը լսեց չուր մորից Նատալիան, քահ-քահ ծիծաղելով ասաց:

— Յեթե ուրիշին ոգնել կարողանում ե, ինչեւ շվեյկա քրոջը չի ոգնում:

Որիորդ Նատալիան ալժմ Մարիամի տնունն անգամ լսել չեր ուզում, ուր մնաց նրա չեղոր բարեկամութունը ընդունել: Այն չերազը, վոր նա հուշս ունեի կատարված տեսնել, այն ճոխ և փարթամ կլանքը, վոր պետք ե զարմացնել ամբողջ քաղաքին, մնաց չերազ:

Նա թեև ձայնակցում էր մորը, չեր վերջինը անխնա պարսավում եր
Հալարյանին, բայց կորուստը զգալի չեր և շատ զգալի Տարի ու կե-
սից ավելի չեր, նա վճռել էր չուր կյանքը կապել Հալարյանի կյանքի
հետ, թեև մյուս կողմից նա պտրում էր ավելի արժանավորին: Մական
բոլոր չուր շրջապատողների մեջ չկար ավելի լավը և հույս ել չուներ
չերը և ե գտնել մի այդպիսուն, ուստի Հալարյանն էր մնում
միայն: Այժմ դուրս և գալիս մի ատելի աղջիկ և վերջնապես խորտա-
կում և նրա հույսերը:

Ահա ինչու նա այնքան կատաղել էր, նրա խելքը կրքից այնքան
խավարվել էր, վոր վոչ մի միջոց չեր խնայում Մարիամի պատիվը
տրատավորելու համար: Վոչ վոք այնպես ջերմ չեր պաշտպանում
ըթիշկ Մելիք-Բարսեղյանին, վորպես նա, վոչ վոք Մարիամի բարոյա-
կանությունը այնքան չեր զրպարտում, վորքան այդ նախանձոտ աղ-
ջիկը:

Մի անգամ նա վտտով զբոսնում էր Գոլովինսկի պրոսպեկտի
վրա, միքանի կավալերներով շրջապատված: Պատահաբար հանդիպեց
Մարիամին, վոր Սաթենիկի հետ գալիս էր դեմ ու դեմ: Միքանի քալ
մնացած նա ինչ-վոր ասաց չուր ուղեկիցներին, բոլորը ուշադրություն
դարձրին Մարիամի վրա, իսկ ինքը բարձրաձայն ծիծաղեց, համես-
տության սահմանից դուրս գալով: Մոտովը անցնելիս նա մի այնպիսի
կատաղի հայացք ձգեց Մարիամի վրա, վոր, կարծես, պատրաստ էր
հարձակվել և տեղն ու տեղը խեղդել նրան:

— Փն, կատարյալ ֆուրիա չե դառել այդ աղջիկը,— շնչաց Սա-
թենիկը Մարիամի ականջին:

Մարիամը անուշադիր թողեց Նատալիայի ծիծաղը և կովակոչ
նայվածքը, անցավ: Նա վերջին ժամանակ մոռացել էր չուր ակամա
վոխը Նատալիայի և տիկին Սոփիոյի դեմ: Յեվ առհասարակ հետըզ-
հետե նրա սրտում մեղմանում էր ատելության զգացմունքը վոչ մի-
այն դեպի չուր հեռավոր հակառակորդները, այլ անգամ դեպի նա,
վոր ավելի, քան վոր և ե, վայելում էր նրա կծու ատելությունը: Թե
ինչպես պատահեց այդ—նա չգիտեր և չեր զգում: Չեր զգում, վոր
Բագրատյանի գաղտնախորհուրդ անձնավորությունը, մի անհասկա-
նալի դուրթական զորությամբ, հաղթում և նստմացնում և ամեն բան
նրա աչքում: Տակավին այդ մարդը նրա համար մի տեսակ առեղծված
էր, տակավին չեր հասկանում, թե ինչ և կատարվում չուր շուրջը,
ինչ մի գաղտնի դործ և այն, վոր այդքան զբաղեցնում և թե Բաղ-
րատյանին և թե Ռուբենին:

Ամեն որ չերկու չերիտասարդները տեսակցում ելին վերջինի սեն-

յակում, խոսում ելին, վիճում և շտապով միասին դուրս գալիս: Ո՛ւր ելին գնում, ինչ՞ո՞ւ—հայտնի չեր: Սովորաբար պարզախոս Ռուբենը աչքի գառելի եր գաղտնապահ, անհանդիստ, նշարդալին: Մերթ Մարիամը նրան տեսնում եր սեղանի մոտ նստած, ինչ-վոր մի քարտեզ առաջը դրած, խորասուզված մտքով նայելիս, մերթ թղթի վրա ինչ-վոր հաշիվներ անելիս: Նա նկատում եր, վոր չեղբայրը աչքիս չե պարտապնում չուր սովորական դործերով—չե կարդում, չե գրում:

Այս բոլորը ավելի ու ավելի սաստկացնում եր Մարիամի հիվանդոտ հետաքրքրությունը և դրդում նրան զանազան լենթադրություններ անել:

— Սաթենիկ, ինչ մարդ և այդ Բագրատյանը,—դառնում եր նա յերբեմն չուր ընկերուհուն:

Սակայն Սաթենիկը նույնքան եր ճանաչել այդ մարդուն, վորքան Մարիամը: Մի անգամ վարժուհին ասաց, թե մի բան և լսել Բագրատյանի մասին, չգիտե վորքան ճիշտ և:

— Ի՞նչ,—հարցրեց Մարիամը:

— Ասում են, նա չեկել և այստեղ մի շատ կարևոր գործով և շտապով պետք և գնա:

— Ի՞նչ գործ և:

— Ձգիտեմ: Ինձ ասաց իմ ծանոթներից մեկը, Բագրատյանի ուսանողական ընկերն և չեղել: Յեղբայրդ ել այդ գործով և զբաղված:

Ավելի վոչինչ չգիտեի Սաթենիկը:

Մարիամի հետաքրքրությունը փոխվեց անհամբերություն: Ռուբենը նրան վոչինչ չեր ասում և չեթե մի բան հարցնում եր Մարիամը, նա բարկանում եր: Յերբեմն Մարիամը փորձում եր Բագրատյանին խոսեցնել: Բայց իդուր: Այդ չերիտասարդը ամեն բանի մասին խոսում եր նրա հետ հաճութամբ, բայց չեր հարց եր լինում չուր մասին, նա կամ խուլս եր տալիս պատասխանից կամ բավականանում եր անորոշ խոսքերով: Այնինչ՝ Մարիամի համար չուրաքանչուր անգամ նրա բնավորության և մտքերի մեջ բացվում եր մի նոր խորություն: Մերթ Բագրատյանը զանազապես եր, մերթ պերճախոս, բայց և միշտ հավատ ներշնչող, վոգելից, ազդու, մանավանդ այն ժամանակ, չեր խոսում եր կնոջ հասարակական դերի մասին:

Հաճախ, չեր Մարիամը առանձնանում եր չուր սենյակում, նրա մտախորհության առարկան այդ չերիտասարդն եր: Յեվ վորքան մտածում եր, այնքան անթափանցելի չեր դառնում այդ մարդը նրա համար:

Պապահում եր, վոր նրա մեջ զանազան կասկածներ ելին ծագում Բագրատյանի վերաբերմամբ: Թվում եր նրան, թե դա բախտա-

խնդիրները մեկն է, վոր ով դիտե ինչ-ինչ ներքին ձգտումները քողարկում է արտաքին խորհրդավորութեամբ, որի գինալութեամբ: Այդ անցյալի դառն փորձից առաջացած մի զգացմունք էր: Ահա ինչու, չերբ Ռուբենը սկզբում միջանի տնդամ զգացված գովեց Բազրատյանին, առանց, սակայն, հայտնելու նրա նպատակը, Մարիամի դեմքի վրա ստանում էր մի կասկածելի ժպիտ:—Ժպիտ, վոր, կարծես, արտահայտում էր.

— Ձեռն սխալվում արդյոք: Դու աչն մշուսին ել գովում եիր... Բայց ամեն անգամ, չերբ որիորդը չերես առ չերես հանդիպում էր Բազրատյանին, չերբ լսում էր նրա առնական ազդու ձայնը, չերբ նայում էր նրա աչքերի խորութեան մեջ թագնված վշտախառն բարկութեանը, չերբ նրա սեղմված շրթունքների վրա տեսնում էր աչն մշտական տխուր ժպիտը,—փարատվում եիր նրա կասկածները, և նա դարձյալ չենթարկվում էր նրա ազդեցութեանը: Վոչ, այդ ազդեցութունը նման չէ աչն մարդու ազդեցութեանը, վոր աչնպես մոլորեցրեց Մարիամին: Վոչ, այստեղ կա մի բնական զորութուն: Դա վոչ խելքի, վոչ պերճախոսութեան, վոչ դիտութեան ուժն է, դա մի ուրիշ, բոլորովին ուրիշ բան է:

«Ի՞նչ է, տեր աստված, ի՞նչ է», հարցնում էր Մարիամը անդադար և վոչ մի տեղից պատասխան չեր ստանում:

Արդեն ձմեռը մոտենում էր չուր վերջին, չեղանակը սկսել էր մեղմանալ: Մարիամը զգում էր, վոր փոքր առ փոքր վերադառնում են չուր ուժերը և նա հետզհետե կազդուրվում է մարմնապես: Միևնույն ժամանակ, նա հոգեպես ևս փոխվում էր: Այլևս նա չեր նստում առաջվա պես ամբողջ ժամեր և ծանր վշտից ճնշված մնում մի տեսակ թմրած դրութեան մեջ: Այլևս դեպի շրջապատող կյանքը չեր զգում խորին անտարբերութուն, ինչպես առաջ: Ամբողջ որը նա աշխատում էր մի անսովոր չեռանդով, խոսում ու վիճում էր Սաթենիկի հետ և ազատ ժամերը ինքը խնդրում Ռուբենին գնալ միասին զրոսնելու:

Այս բոլորը ուրախացնում էր Ռուբենին և հիացնում Սաթենիկին:

— Միրելիս,—ասաց մի որ վերջինը,—դու այժմ կատարյալ վարպետուհի չես դառել, առանց իմ ոգնութեան կարող ևս ինքնազուլխ աշխատել:

— Այո, կարող եմ և ուզում եմ աշխատել,—պատասխանեց Մարիամը չեռանդադիր:—Բայց, դիտես ինչ, կար ու ձևի գործը ինձ չե բավականացնում: Յես ուզում եմ մի ուրիշ աշխատանք, մի ավելի ծանր, դժվար գործ...

— Որինակ, ի՞նչ գործ,—հարցրեց Սաթենիկը, զարմանալով:

— Յեա ինքս ել չեմ իմանում, բայց ինձ թվում է, վոր կար ու ձեռն դատարկ բան է, շատ դատարկ բան:

Սաթենիկը վերափոխվեց: Մարիամը արհամարհում էր այն դործը, վորին նա հոգով ու սրտով անձնատուր էր չեղել, և վորի մեջ գտնում էր մի տեսակ չերջանկություն: Յուր ընկերուհու սրտին չկաշխելու համար, նա բարվոք համարեց լռել, վորպեսզի չարտահայտի յուր վերափոխմանը: Սակայն Մարիամը զգաց յուր սխալը և շտապեց տպավորությունը մեղմացնել:

— Յեա չեմ արհամարհում քո պարագմունքը,—ասաց նա, ընկերարար ժպտալով,—բայց կարծում եմ, դու և չես ընդունակ ենք ուրիշ ավելի բարդ գործ կատարելու:

— Գիտես ինչ, Մարո,—արտասանեց Սաթենիկը հանդարտ չեղանակով,—չես տեսնում եմ, վոր վերջին ժամանակ դու փոխվել ես: Ասա ինձ ընկերարար, այլուք քեզ վրա մի նոր մարդ ազդեցություն չի՞ արել:

Այս անորոշ ակնարկությունը դուր չեկավ Մարիամին: Նա հանդիմանաբար նայեց ընկերուհու չերեսին:

— Ինձ վրա... վոչ վոք և վոչինչ չի ազդել: Յեա առաջ ել այսպես ելի, միայն ամաչում ելի քեզ ասել, կարծում ելի դու կվերափոխվես: Ախ, Սաթենիկ, գոնե դու ինձ լավ ճանաչելիս, հավատացիր, չես միշտ դժգոհ եմ չեղել ինքս ինձանից, միշտ կարծել եմ, ինձ մի բան պակասում է: Բայց չերբեք այդ դժգոհությունը այնպես սաստիկ չի չեղել իմ մեջ, ինչպես այժմ: Յեթև դու այդ էս փոփոխություն համարում, իրավունք ունես:

Այս խոսակցությունից անցել էր մի ամիս: Ապրիլի առաջին որերն ելին: Ողի մեջ արդեն տիրում էր գարնանային բուրմունքը: Հարավային ջինջ չերկնքի կապտությունը, արևի տաք ճառագայթները, ծառերի նորաբողբոջ տերևները, ծիծեռնակների ուրախ ծվվոցը մի ախորժելի ազդեցություն ելին գործում մարդու հոգու վրա, սիրտը լեցնում էին գլուրեկան զգացմունքով: Մարդ դդում էր ապրելու և անհուն, անսահման չերջանկություն վաչելելու մի անհաղթելի ցանկություն:

Մի սիրուն որ էր: Ռուբենը առավոտյան առաջարկեց Մարիամին մինչև քաղաքից դուրս վոտով դրոսնելու: Մարիամը իսկույն համաձայնեց: Սաթենիկին ևս խնդրեցին, ընկերացալ նրանց: Ռուբենը առաջնորդեց նրանց նախ մի նեղ և հետ ընկած փողոց, վոր ճանապարհի վրա չեր: Մի չերկհարկանի տան առջև նա խնդրեց որիորդներին սպասել, ինքը մտավ ներս: Փոքր անցած նա դուրս չեկավ, Բաղրատյանի թեից բռնած. Մարիամը ակամա մի ուրախություն զգաց:

Նրանք ծանր քալլերով անցան միքանի փողոց և հասան քաղաքի ծայրը։ Վոչ մեկը չէր զգում ճանապարհի լերկարուծվունը, այնքան զրազված էլին խոսակցութեամբ։ Առանձին տրամադրութեան տակ երկերևում ալդ ուրը Բագրատյանը։ Մերթ նա պատմում էր, մերթ զվարճախոսում և մերթ մինչև անգամ կատակներ էր անում Ռուբենի հետ։ Յեվ Մարիամը, վոր սովոր էր նրան մոայլ տեսնել նուշնիսկ զվարճախոսելիս, դարմացած նայում էր նրա պաշտօն կերպարանքին։ Նա չէր զգում ալլիս ճնշումն, նա վստահ և համարձակ էր ալդ մարդու մոտ։

Նրանք արդեն քաղաքից դուրս էլին լեկել։ Բարձրանում էլին ապառաժոտ դառիվայրով Բեթխայիմի լեռան լանջը։ Ուղին նեղ էր, աջ ու ձախ զարդարված նոր-նոր կանաչող թփերով։ Ռուբենը գնում էր Սաթենիկի հետ առաջից, Բագրատյանը և Մարիամը նրանց չտեղից բարձրանում էլին դանդաղ քալլերով, մերթ ընդմերթ կանգ առնելով և մտիկ անելով դեպի լեռ։ Ստորև բացվել էր մի սիրուն տեսարան— ընդարձակ քաղաքը լուր խիտ ծառաստաններով, խայտառղետ կոուրներով, լուր ուղղապիծ և ծուռ ու մուռ փողոցներով, հիսուն վաթսուն լեկեղեցիների արծաթագույն դմբեթներով, շրջակա դաշտերով ու լեռներով։

Մարիամը դիտում էր ալդ տեսարանը հիացած։ Վաղուցվա ծանոթ պատկերը աչտոր մի առանձին գեղեցկություն էր ստացել նրա աչքում։ Յեվ զգում էր նա ալդ տեսարանի ազդեցության ներքո մի տեսակ անգործ զվարճություն, խառն անորոշ մեղամաղձություն հետ։ Արեգակի ախորժիկ տաքությունը, բարեխառն ողի թեթև հոսանքը պարգևում էլին նրա հոգնած ջղերին հանգստություն։ Կարծես, ներշնչելով մի նոր ուժ, նոր կենդանություն։ Նրա թախծալի աչքերը ժպտում էլին, արտահայտելով հոգեկան մեղմ և անուշ տրամադրություն։

Հանկարծ մի տխուր ստվեր վարագուրեց նրա դեմքը։ Հոնքերը սեղմվեցին, աչքերի կոպերը խոնարհվեցին։ Պարզ էր, նրա մեջ զարթնեց մի անախորժ զգացումն։ Նա չերեսը չեռ դարձրեց, հառաչեց և ճիգն տրավ վանել անցյալի, տխուր անցյալի, հիշողությունները։

Բագրատյանը կանգնած էր թփերի մոտ և լուռ նայում էր դեպի ցած, լուր հաստ ձեռնափայտը կռնատակին դրած։

— Հավանձմ եք ալդ տեսարանը, — հարցրեց Մարիամը, մի բան ասած լինելու համար, վորպեսզի ընդհատի անհարմար լուծությունը։

— Գեղեցիկ է, — արտասանեց Բագրատյանը սառն, հանդարտ և անտարբեր, հայացքը չհեռացնելով քաղաքից։

Նրանք դարձյալ լռեցին։ Մարիամը դադարեց նայում էր լուր ուղեկցի առնական կիսադեմքին։

— Յերկու շաբաթից հետո, — շարունակեց նա, — տեսարանը ավելի կգեղեցականա, չերբ բոլոր ծառերը ծաղկած կլինին:

— Յերկու շաբաթից հետո, — կրկնեց անգիտակցաբար Բագրատ-յանը և շարունակեց ընթանալ նրա հետ:

— Դուք, իհարկե, թիֆլիսում կլինեք:

— Վոչ:

— Ուրեմն շուտով գնալու չեք:

— Տասն որից հետո:

— Վերադառա՞լ:

— Ոո, նրանք լինչքան հեռացել են մեզանից, շտապենք հասնել, — ասաց Բագրատյանը, ցույց տալով դեպի առաջ, ուր հեռու թփերի չետերից չերևում էին Սաթենիկի և Ռուբենի գլուխները:

Մարիամին վերաժողական չթվաց այդ ասարերինակ վարմունքը: Սակայն նա ամաչեց և կարմրեց, զգալով, վոր Հափազանց և լուր հետքերբռնությունը, վոր վաչկի չէ մանրամասն հարցերով հետամուտ լինել մի մարդու, վոր չէ ուզում լուր մասին խոսել:

Յերբ նրանք հասան, Սաթենիկը և Ռուբենը լուռ նստած էին ճանապարհի չեղրին: Նկատելի չեր, վոր վաղրկյան առաջ ընդհատվել և նրանց մեջ մի ջերմ խոսակցություն: Յերկուան ևլ հուզված էին: Ռուբենը ջղախն աշխուժով կտրում եր կանաչ թփի փոքրիկ ճուղե-րը, մանրացնում և սփռում լուր առաջ: Սաթենիկի շրթունքների վրա չերևում եր մի անհանգիստ ժպիտ: Նրա աչքերի անսովոր փայլը արտահայտում եր հոգեկան խռովություն:

— Մենք ճանձրացանք ձեզ սպասելուց, — ասաց նա, սպիտակ ճակատից հեռացնելով գանգուր և գեղեցիկ մազերը, վոր դուրս էին սփռվել մեխակագույն գլխարկի տակից:

— Իսկ մենք շտապում էինք ձեզ հասնելու, — ասաց Մարիամը:

Յերկու, ըստ չերևույթին, աննշան դարձվածներ, վոր, սակայն, փոխադարձ պատասխան էին ալն ընտկան կասկածին, վոր միաժա-մանակ ծագեց չերկու ընկերուհիների սրտերում...

Քառորդ ժամ հանգստանալուց հետո խումբը շարունակեց լուր ճանապարհը: Հոսնելով սարի գագաթը, վորի մլուս կողմում, խոր ձորի մեջ, տարածված և բուսաբանական ալգին, նրանք դարձլալ կանգ առին: Սաթենիկը առաջարկեց հետ դառնալ:

— Հոգնեց՞ր, — հարցրեց Մարիամը:

— Վոչ, չես մի փոքր տկար եմ:

— Իսկ դու չե՞ս հոգնել, — հարցրեց Ռուբենը քրոջից:

— Ծաղրում ես ինձ, — արտասանեց Մարիամը, — վոչ, չես կարող եմ չերեք ալսքան ևլ բարձրանալ:

Արդարեւ, նա չուր մեջ զգում եր մի անասելի ուժ. թեթեւ զոտանքը նրան մանկական խաղ եր թվում:

Զիջանելով Սաթենիկի խնդրին, խումբը հետ դարձավ նույն զառիվալուով: Այս անգամ Բագրատյանը և Մարիամն ելին առաջ գնում: Նրանք լուռ ելին: Յերբեմն զառիվալի զժվար տեղերում Բագրատյանը կամ առաջարկում եր Մարիամին չուր թեւը կամ խնդրում եր զգուշացած իջնել: Որիորդը ուշադրութուն չեր դարձնում, անվախ գնում եր առաջ, մերթ ուղիով, մերթ շեղվելով մի կողմ՝ ճանապարհը կարճելու համար: Մի տեղ նա քիչ եր մնում ընկնի, բայց կարողացավ կանգ առնել: Միայն մի անգամ ժալոյ ընական սանդխտով իջնելիս, նա թուլջլ տվեց Բագրատյանին բռնել չուր ձեռը:

— Շնորհակալ եմ,— ասաց նա, ժպտալով:

Նրանք կանգ առան, սպասեցին ընկերներին:

— Ի՞նչ ե պատահել քեզ, վոր այդքան չեռանդ ես ստացել,— ասաց Ռուբենը, մոտենալով,— չես չերբեք քեզ այդպես չեմ տեսել:

Մարիամը, կարծես, շփոթվեց: Նա դարձյալ առաջ ընկավ:

— Յես չելի կարծում, վոր որիորդը այդքան աշխուժով ե,— դարձավ Բագրատյանը Ռուբենին:

— Մանավանդ, վոր վերջին ժամանակ նա հիվանդ ե չեղել:

Խումբը հասավ քաղաք, մտավ նեղ փողոցները: Արդեն կեսօր եր: Մարիամը մտաբերեց, թե ճաշ պիտի պատրաստի: Նա շտապեց տուն: Բագրատյանը և Սաթենիկը հրաժեշտ տվեցին:

Առաջին անգամ այդ որը Մարիամը զգաց մի տեսակ ատելութուն դեպի օրնային տնտեսութունը: Մտնել խոհանոց, զբաղվել մանր-մունր խոհարարական գործերով — նրան վիրավորական թվաց: Նա ամբողջ որը աշխատում եր ակամա, մերթ ընդ մերթ ինքն իրան տրտնջալով:

Իրիկնադեմին նա ավելի հանգիստ եր: Ստեպ-ստեպ մոտենում եր և նստում չեղբոր մոտ: Նկատելի չեր, վոր նա կամենում եր մի բանի մասին խոսել և... չեր վստահանում:

Հետևյալ որը նա գնաց Սաթենիկի մոտ:

Այստեղ վիճակված եր նրան մի ուրիշ, վուչ պակաս կարևոր, նորութուն ևս իմանալ:

Վարժուհին միայնակ նստած եր չուր սենյակում անգործ: Տեսնելով ընկերուհուն, նա արագութեամբ վոտքի կանգնեց և, առաջ վազելով, մի անսովոր աշխուժով գրկեց նրան: Նա հուզված եր: Աչքերը ժպտում ելին ուրախ-ուրախ, կուրծքը բաբախում եր: Պարզ եր, վոր մի արտաքու կարգի բան եր պատահել նրան:

— Դիտե՛ս,—գոչեց նա, ազատելով ընկերուհուն լուր գրկից,— չես աչտոր տրամադրված չեմ գործելու։ Նստիր, նստիր, շատ ուրախ եմ, վոր չեկար։

Մարիամը դարձացած նստում եր լուր ալլափոխված ընկերուհու վրա, չկարողանալով տակավին հասկանալ նրա հուզման պատճառը։

— Դու հանդիպեցի՞ր Ռուբենին,—հարցրեց Սաթենիկը, ուժով նստեցնելով Մարիամին լուր քով։

— Վոչ։

— Հենց նոր դուրս չեկավ այստեղից։ Դու դարձանձւմ ես, վոր նա ինձ մոտ եր... իրավունք ունես... Մարիամ, հոգիս, չես քեզանից վոչինչ, վոչինչ չեմ ուզում թագցնել այսուհետեւ։ Ասա, չե՞ս բարկանալ, չե՞ս ծաղրիլ, չեթե քեզ պատմեմ ամեն ինչ...

Յեւ չէր համարձակված փաթաթվեց լուր ընկերուհու պարանոցին, գլուխը դրեց նրա ուսի վրա։ Մարիամը զգում եր նրա կրծքի ուժգին բաբախումը։ Նա ապշած եր, նա դեռ վոչինչ չգիտեր։ Դուշակում եր միայն, թե դեպքը, անշուշտ, շատ նշանավոր ե, վոր այնքան ալլափոխել ե այդ մշտական հանգիստ, մշտական անվրդով աղջկան։

Անցավ քառորդ ժամի չափ, մինչև Սաթենիկը փոքր ինչ հանդարտվեց։ Այն ժամանակ պարզվեց բանի ելութունը։ Պարզվեց այն, ինչ-վոր վերջին ժամանակ մասամբ զգում եր Մարիամը ե ինչ-վոր նույն բույնից նա միանգամայն մոռացել եր։ Արդին նա նկատել եր, վոր Ռուբենի ե Սաթենիկի հարաբերութունները ալլ կերպարանք են ստանում, վոր քանի գնում, այնքան նրանց մեջ զարգանում ե փոխադարձ համակրութունը։

Յեւ ամեն ինչ պատմեց Սաթենիկը, բոլոր մանրամասները, առանց մի կետ անգամ թագցնելու։

— Յես նրան սիրեցի՞ր հենց այն ուրից, չե՞ր դու ինձ ծանոթացրի՞ր նրա հետ։ Բայց չիս ինձ զսպում ելի, ե ինչ իրավունք ունեյի նրա մասին մտածել անգամ, չե՞ս... Ախ, դու ծաղրում ես ինձ, Մարո, այնպես չե՞, դու մտքումդ անիծում ես ինձ, դու պախարակում ես չեղորդ ճաշակը...

— Յես այդ գուշակում ելի...

— Ի՞նչ, ի՞մ ե Ռուբենի մասին, միթե՞ կարծում ելիր, վոր իրավունք ունեմ, չե՞ս, չե՞ս տգեղ, ալլանդակված տարաձայն։

— Լո՛ւր,—ընդհատեց Մարիամը սաստողաբար,—լուր, չեթե չես ուզում ինձ վիրավորել։ Նախ ե առաջ քո հոգո գեղեցկութունը բավական եր, վոր արժանանալիր Ռուբենի սիրուն։ Յերկրորդ, ինչո՞ւ դու քեզ վրա այդպիսի վատ կարծիք ունես։ Միթե՞ կարծում ես,

ժողովի միջանի աննշան հետքերը փշտցրել են քո գեղեցիկ դեմքը: Վոչ, դու այնքան համակրելի չես արտաքուստ, վորքան և հոգով ու արտով... Ռուբենը պետք և քեզանով պարծենա...

Անկեղծ սրտից ըղիսած այդ խոսքերը կրկին վոգևորեցին Սաթենիկին, և կրկին նա փաթաթվեց յուր ընկերուհու պարանոցին:

— Հիշում ես տոաջվա Սաթենիկին, հիշում ես, ինչպես ելի ծաղրում սեր ասած բանը: Յես չգիտեցի, վոր նա այդպիսի բան և: Ահ, ինչպես փոխվել եմ չես, կարծես, խելքս թռել և գլխիցս... Վոչ, չես չեցի հավատում, չեցի հավատում, վոր մի որ պետք և այս դրության հասնեմ...

Վերջապես, անցան հուզման բոլորները, և Սաթենիկը շարունակեց ավելի հանգիստ խոսակցել Մարիամի հետ: Սակայն ամբողջ չերկու ժամ նրա խոսակցության առարկան միմիայն Ռուբենն էր:

— Ախ, մոռացա ասելու, — գոչեց նա, չերբ Մարիամը, վերջապես, խոսք բաց արավ Բագրատյանի մասին, — նա առաջիկա շաբաթ գնում և, Ռուբենը շատ տխուր և նրա պատճառով:

— Ինչո՞ւ:

— Ի՞նչ, միթե չե՞ս լսել, Ռուբենը չե՞ պատմել քեզ:

— Ռուբենը Բագրատյանի մասին չի խոսում ինձ հետ:

— Ուրեմն կարող ես ինձ նախանձել: Բայց, գիտես, մինչև հիմա ինձանից ել թագցնում եր գաղտնիքը, այսօր միայն հայտնեց:

Մի, քանի խոսք ևս Սաթենիկի կողմից, և... վարագույրը ընկավ Մարիամի աչքերից, այլևս ամեն ինչ պարզվեց նրա համար: Բագրատյանը պատկերացավ նրա տոաջ իսկական դիրքով, սակայն ավելի զորավոր, ավելի ազդու:

Վորպեսզի միանգամայն չպարզի յուր հոգեկան գաղտնիքը, կարծես, ինքն իրանից ամաչելով, Մարիամը շտապեց հրաժեշտ տալ յուր ընկերուհուհու:

Նա վերադարձավ տուն խռովված հոգով և առանձնացավ յուր սենյակում:

Որերը անցնում էին: Բագրատյանի բաժանման ժամը մոտենում էր, և Մարիամի մտատանջությունը ավելի ու ավելի զարգանում...

XVII

Վերջին ժամանակ Հալաբյանը բոլորովին հեռացել եր մարդկանցից և տանը նստած, յուր որերը անց եր կացնում տխուր մենության մեջ:

Թաթոսը, նրա վաղեմի հավատարիմ Թաթոսն եր միայն որվա
ընթացքում միջանի անգամ ընդհատում նրա լուսթյունը: Մյուս ծա-
ռաները նրա յերեսը չենին տեսնում: Այլևս նա տնային գործերով չե-
րադովում, չե՞ր ել հետաքրքրվում անգամ: Մոսիո Վախվախյանը փոր-
ձեց անտեսական գերիշխանութունը յուր ձեռքն առնել, բայց Թա-
թոսը մի այնպիսի համառ ընդդիմութուն ցույց տվեց, վոր նա
ստիպվեց հետ քաշվել:

Յերբեմն Հալաբյանը ճաշում եր միայնակ, յերբեմն նրան ընկե-
րանում եր մոսիո Վախվախյանը առանց հրավերի: Գալիս եր հաճախ
և՛ Ախշարումյանը, միշտ աշխատում եր ցրել նրա տրամութունը, և
միշտ տպադրուհի եր մնում նրա ջանքը: Մի անգամ նա փորձեց Թու-
բենի խիղճը գրգռել Հալաբյանի վերաբերմամբ: Սակայն, յերբ խոսք
բաց արավ, Թուբենը քաղաքավարի և զրական չեղանակով առաջար-
կեց նրան մի բառ անգամ չարտասանել այդ մասին:

Այն ժամանակ Ախշարումյանը բողբոջին համոզվեց, վոր իրավ
անիրադրժեկի չեն Հալաբյանի հուշերը: Բայց նա չերգվել եր վերջ
տալ յուր ընկերոջ հուսահատ կամ, ինչպես ինքն եր ասում, «հիմար»
դրությանը: Վաղուց Հալաբյանը գանգատվում եր, թե տկար և, վոս-
կորները, կարծես, ջարդված են: Ախշարումյանը հորդորում եր դիմել
բժշկին, նա չեր համաձայնում:

— Ինչ կլինի, կլինի,— ասում եր վհատված ձայնով:

Մի օր Ախշարումյանը չեկավ նրա մոտ քաղաքի հայտնի բժիշկ-
ներից մեկի հետ, վորին վաղուց ծանոթ եր Հալաբյանը: Ծանապար-
հին վորկրամոլը սովորեցրել եր բժշկին, վոր նա, վորքան կարելի չե,
վախեցնի ամուսնին, նկարագրելով նրա հիվանդութունը ամենախիստ
գուշներով: Միևնույն ժամանակ, խնդրել եր, վոր խորհուրդ տա նրան
անպատճառ ուղեորվել արտասահման և այնտեղ բժշկվել:

— Այստեղից հեռանալը շատ անհրաժեշտ և նրա համար, գիտե՞ք,
չմտ,— կրկնում եր Ախշարումյանը բժշկին:

Վորքան ևս ձանձրացած լիներ կյանքից, Հալաբյանի վրա ազդեց
բժշկի գիտնական բացատրութունը, վորից նա վշինչ չհասկացավ,
բացի մեկ բանից, թե իրը յուր հիվանդութունը վտանգավոր ե:
Տադուկալի կյանքը դարձյալ ավելի քաղցր թվաց, քան մահը:

Ամուսնին վախեցավ:

Այդ որվանից Ախշարումյանը հանգիստ չեր թողնում նրան և
միշտ կրկնում եր արտասահման գնալու անհրաժեշտութունը: Վեր-
ջապես, նրա հորդորը ազդեց: Մի առավոտ ամուսին ինքը խոսք բաց
արավ արտասահմանի վերաբերմամբ: Նույն պահին չեկավ և՛ մոսիո

Վախվախյանը։ Սկսեցին խորհրդակցել՝ ո՞ւր գնալ։ Մոսիոն, կլիմայական և բժշկական հանգամանքները արհամարհելով, մի բերան պաշտպանում եր Փարիզ գնալու միտքը։

— Աշխարհիս դրախտն է, այնտեղի Պեր-լա-Շեզոլում թաղվելը ուրիշ քաղաքներում ապրելուց լավ ե,— գովում եր նա համաշխարհային մայրաքաղաքը, վորի բուլվարներում չորս տարի շարունակ թափառել եր։

Հալաբյանը հակումն չուներ դեպի մեծ կենտրոնները։ Նա չեղել եր Փարիզում, այժմ տհաճությամբ եր հիշում նրա ազմկալից կյանքը, նրա բազմամարդ փողոցները։

— Վխարդեն կամ Կարլսրադ, — պնդում եր Ախաբումյանը։

— Յեղել եմ բարեկամս, այն տեղերումն ել չեղել եմ,— դարձյալ մեջ մտավ մոսիո Վախվախյանը, վոր, այսպես թե այնպես, հույս ուներ ուղեկցել ամուսրին, հարկավ, նրա ծախքով։

Հալաբյանը ընդունեց Ախաբումյանի խորհուրդը։ Այդ որովանից իսկ նա սկսեց ճանապարհի պատրաստություններ տեսնել։ Այն գործերը, վոր կարելի չեր շուտով վերջացնել, ինքը վերջացրեց, իսկ մյուսները հանձնեց Ախաբումյանին, վոր ամառը Թիֆլիսումն եր մնալու։

— Ձեզ ել խնդրում եմ,— դարձավ նա մոսիո Վախվախյանին մի որ,— վերահասու լինել տանս։ Ծառաներին չես կարճակիմ։ Յեթե ուզող լինի այս կահ-կարասիքը, բոլորը կծախեք, փողը կտաք Ախաբումյանին։

— Վճնց, ուրեմն ել հետ չմք գալու,— գոչեց մոսիոն զարմացած։

— Ե՛հ, չեմ իմանում...

Մոսիո Վախվախյանը բոլորովին հրապարակեց։ Բավական չեր, վոր Հալաբյանը չեր ուզում նրան արտասահման տանել, լուր վերադառնալն ել դեռ անհայտ եր թողնում։

— Աչքիս վրա,— հանձն առավ նա ամուսրի պատվերը, գլուխը խեղճաբար թեքելով ուսին։

Պակաս քան տասն որովա ընթացքում Հալաբյանը, Ախաբումյանի ոգնությամբ, վերջացրեց լուր գործերը և պատրաստվեց ճանապարհի համար։ Այժմ նա անհամբեր սպասում եր Թիֆլիսից հեռանալու րոպեին։ Նրա վշտացած սիրտը ձգտում եր ժամ առաջ աղաւովել լուր մշտական շրջանից, թողնել հեռանալ այն բոլոր տեղերից, վոր հիշեցնում եին նրա դառն ցնորքը։ Մի առավոտ Ախաբումյանը սասաց նրան, վոր Մարիամին նախընթաց որը հանդիպել և փողոցում ինչ-վոր մի նոր չերիտասարդի հետ զրոսնելիս։ Դիտմամբ հայտնված

աչդ լուրը ունեցավ ցանկալի ազդեցութիւն Հալաբլանի վրա: Նա խղճալի դեմքով նայեց ընկերոջ չերեսին և ընկճված չեղանակով արտասանեց.

— Ի՞նչ անեմ...

Արդեն ամեն ինչ նա վերջացած էր համարում, ամեն հուշա խորտակված:

Հասավ այն չերեկին, վարի հետեյալ առավոտը Հալաբլանը պետք և ուղևորվելու: Նա նստած էր Ախշարումյանի հետ հյուրասենյակում, և խոսակցում էին առաջիկա ճանապարհորդութեան մասին: Կանթեղի պայծառ լույսը լուսավորում էր նրա վոսկորոտ դեմքը, խոշորացած աչքերը: Մի վայրկյան Ախշարումյանը սոսկաց, ուշադիր դիտելով նրա կերպարանքը. աչքա՛ն փոխվել էր ամուրին նույն իսկ աչն մարդու աչքում, վոր աչնպես հաճախ տեսնում էր նրան:

— Այդպես, ուրեմն, դու բոլորովին միայնակ ես դնում,— ասում էր Ախշարումյանը:

— Միայնակ:

— Վատ էք լինիլ, լեթե հետդ ընկեր լինեք, ժամանակդ ուրախ կանցնեք:

— Վոչ վոքի չերեսը չեմ ուզում տեսնել, վոչ վոքի,— ասաց Հալաբլանը վճռապես:

— Եհ, դ՛ու դիտես,— շարունակեց Ախշարումյանը,— բայց լսիլ ինչ եմ ասում: Ամառը անց կկացնես վորտեղ վոր ուզում ես, Կարլս-բադ թե Վիսբադեն, միևնույն և: Բայց աշնանը դու իմն ես: Սեպտեմբերին դորժերս վերջացրած չես կգնամ Վիեննա, դու լել կդաս աշնտեղ, մի չերկու ամիս միասին քեֆ կքաշենք... քեֆ եմ ասում, հասկանում ես... վըվվվ, Մահամմեդի հյուրիները շրջանում: Նո՛ւ, լավ, մի քարկանալ, կատակ եմ անում: Հետո, Վիեննայից ուղիղ կճանապարհվենք Փարիզ: Այդտեղ ամբողջ ձմեռը մարդավարի կռպրենք... Լսում ես, հրաշալի պրոեկտ ե, չէ՞...

Ներս մտավ մոտիո Վախվախյանը և հայտնեց, թե իսկույն փողոցում հանդիպել է Սահարունիին:

— Նորին պայծառափայլութիւնը խիստ զարմացավ հենց վոր ասացի, թե դնում եք: Շուտով ինքն ել այստեղ կլինի:

Արդարեւ, կես ժամ չանցած, ներս մտավ իշխանը:

— Ներել չեմ կարող,— գոչեց նա խորին հանդիմանութեամբ,— մեզանից հեռանում ես ու ինձ վոչինչ չէս ասում:

Մուրհակը Նիկողայոսին ստորագրել տալուց հետո իշխանը դարձյալ բարեկամացել էր Հալաբլանի հետ: Նա նպատակ ուներ այժմ

հարստահարել ամուրիին, ահա ինչու նա դժգոհ էր, վոր վերջինը հեռանում էր Թիֆլիսից։

Այդ չեղեկո վերջին անգամ չորս ամուրիները ընթրեցին միասին։ Ամենից տխուրն էր մոսիո Վախվախյանը, ամենից ուրախը Ախաբարումյանը։ Ընթրիքի միջոցին և հետո չերկար ժամանակ նրանց խոսակցության գլխավոր նյութն էր, հարկավ, Հալաբյանի ճանապարհորդությունը։ Մոսիո Վախվախյանի սիրտն էր թնդում, լսելով այն հրապուրիչ տեղերի անունները, վոր թվում էր Ախաբարումյանը, հորդորելով Հալաբյանին այցելել մի առ մի։

Արդեն ուշ գիշեր էր, չերր ամուրիները բաժանվեցին։ Իշխան Սահարունին համբուրվեց Հալաբյանի հետ, ներողություն խնդրելով, վոր չէ կարող առավոտյան ճանապարհ գցելու դալ։

— Տես,—ասաց նա Ախաբարումյանին փողոցում,—աշխատիր, վոր այդ մոենդեկը շուտ վերադառնա, նա մեզ հարկավոր մարդ է։

Մոսիո Վախվախյանը չկամեցավ բաժանվել Հալաբյանից, գիշերից նրա մոտ։

Որը լուսացավ։ Հալաբյանը, վաղ դարթնելով, սկսեց արագ-արագ շորերը հագնել։

Մոսիո Վախվախյանը, արտասահման չգնալու հոգսից, ամբողջ գիշեր անքուն էր անցկացրել։

Ներս մտավ Թաթոսը տխուր ու տրտում։ Տասնուհինգ տարի շարունակ ծառայելով, նա այնքան ընտելացել էր չուր տիրոջը, վոր նրանից բաժանվելը կատարյալ դժբախտություն էր համարում։

Անչափ էր նրա վիշտը այն օրը, չերբ Հալաբյանը հայտնեց չուր գնալու լուրը և պատվիրեց նրան ուրիշ պաշտոն գտնել։ Նա չկամեցավ մի այլ մարդու ծառայել։ Հալաբյանը զգացվեց, տվեց նրան մի թեթև ապահովություն։ Թաթոսը վճռեց հեռանալ չուր հայրենի գյուղաքաղաքը։

— Գնա, չերկու կռք կանչիր,—պատվիրեց Հալաբյանը։

Ծառան, հառաչելով, դուրս չեկավ։

Գարնային մի հրաշալի առավոտ էր։ Հալաբյանի կռքը անցնում էր Գոլովինսկի պրոսպեկտով, դիմելով դեպի չերկաթուղու կայարանը։ Նա չուր լսում էր չուր հետ նստած Ախաբարումյանի, այդ փորձառու ճանապարհորդի, վերջին խորհրդները և չուր առաջ նստած մոսիո Վախվախյանի տխուր հառաչանքները։ Հեռոկհեռ նրա աչքից հեռանում էին այն ծանոթ փողոցները և տները, վոր այնքան ձանձրացրել էին նրան և վորոնցից բաժանվելը այժմ մի տեսակ թախիծ էր պատճառում նրան։

Հանկարծ նրա դեմքը ժպտաց: Նա հրամայեց կառապանին կառ-
քը պահել, ցած իջավ: Փողոցի մակթով դեմ ու դեմ գտլիս եր Ռուբե-
նը: Հալարչանը մոտեցավ նրան: Ռուբենը զարմացած կանգ առավ:

— Մնացե՛ք բարե, չես գնում եմ,—ասաց Հալարչանը, գդակը
վերցնելով և ձեռք մեկնելով:

— Ո՞ւր:

— Արտասահման:

— Բարի ճանապարհ,—մտղթեց Ռուբենը քաղաքավարի, սառն և
անտարբեր:

Նա հնարցրեց, թե արդյոք ինչու չե գնում, հնարցրեց անգամ,
թե չերբ կվերադառնա: Այնինչ Հալարչանը սպասում եր... ավելի
ջերմ վերաբերության: Դա չեղավ վերջին հարվածը ամուրիի համար...
Նա շուտով կառք նստեց. հրամայեց կառապանին շտապել: Փողովա-
րանի ամառային շինության մոտով անցնելիս նա չեքեսը մի կողմ
զարձրեց ատելութամբ... Այստեղ եր առաջին անգամ հղացել նրա
մեջ այն զգացմունքը, վոր այսօր այնպես դժբախտացրել եր նրանց:

Նա հասավ կաշարան: Մոսիո Վախվախյանը, նրա պատվերով,
վարձեց առաջին կարգի կուպեններից մեկը:

Ամուրին ճանապարհին ես ուղում եր մենակ լինել:

Հասավ բաժանման բոպեն: Ախշարումյանը համբուրվեց: Մոսիո
Վախվախյանը վատհացավ նույնն անել, ավելի ամուր հպելով չուր
շրթունքները Հալարչանի բերնին:

Արդեն չեքերոք դանդաղել ավելի ելին: Ուղևորը, կուպելի փոք-
րիկ պատուհանի վրա արմունկները հենած, խոսում եր չուր վաղեմի
ընկերակիցների հետ, վոր կանգնած ելին պլատֆորմի վրա: Ձանգա-
կը չեքերոք անգամ հնչեց, լավեց շոգեշվիի սուր ձայնը, գնացքը շարժ-
վեց: Նույն վայրկյանին, չերս Ախշարումյանը և մոսիո Վախվախյանը
գդակները բարձրացրին իրանց վերջին բարենները աալու, նույնվալը
կյանին նրանք Հալարչանի աչքերի մեջ նկատեցին արտասուքի նշույլ-
ներ: Այո, թշվառ ամուրին լալիս եր, ինչպես մի թույլ արարած:

Ախշարումյանը և մոսիո Վախվախյանը հեռ դարձրին իրանց
չեքանները և տեսան՝ կալարանի պատի տակ կտնգնած, չեքիտալի պես,
հեկեկում եր հավատարիմ Թաթոսը: Գուցե դա միակ մարդն եր ամ-
բողջ աշխարհի չեքեսին, վոր անկեղծ ցավում եր Հալարչանի համար:

— Իսկ չես հույս ունելի,—դարձավ մոսիո Վախվախյանը Ախ-
շարումյանին, կրծքի խորքից մի ծանր հույոց արձակելով,—վոր Հա-
լարչանը ինձ վերջը մի մարդ կշինի... Թնացի ելի առաջվա քաղցած,
անփող, անտուն ու անտեր Վախվախյանը:

— Այսոր չեկ ինձ մոտ ճաշելու:

Մոսիո Վախվախյանը գլուխը թախծորեն շարժեց, Ախշարումյանի հրավերը ընդունեց...

Ռուբենը նույն պահին գնում էր ուսումնարան, չերը Հալաբջանին հանդիպեց: Տուն վերադառնալով, նա հայտնեց Մարիամին տմուրիի գնալը: Ինչպես Հալաբջանի առաջարկության լուրն էր Ռուբենից ընդունել սառն և անտարբեր, նույնպես և ավելի անխռով ընդունեց նրա ուղևորության լուրը: Միայն նա նկատեց.

— Ասում են, վերջին ժամանակ նա սաստիկ հիվանդ է չեղել, լերի գնում և բժշկվելու:

— Հիվանդ լինելը չեմ իմանում, բայց այսոր աչքիս մեռելի չեր նմանվում... Գիտե՞ս, Մարո, չես այժմ հոգով խղճում եմ նրան, ճշմարիտ վատ մարդ չե՞ր...

Մարիամը վռչինչ չասաց, և ասելու վռչինչ էլ չուներ: Նա արտակարգ խռովության մեջ էր մի աչնալիսի պատճառով, վրդից դուրս նույն բոսիկին վռչ մի բան չեր հետաքրքրում նրան: Դա Բագրատյանի ուղևորությունն էր, նրա խորհրդավոր նպատակը: Ինչ-ինչ պատճառներով այդ ուղևորությունը հետաձգվել և միջանի որով: Յեվ այդ միջանի որովա ընթացքում Մարիամը նկատում էր Բագրատյանի մեջ մի տեսակ փոփոխություն: Նա այժմ տխուր և մտախոհ էր ավելի, քան չերբեք տեսել էր նրան որիորդը: Որական մի չերկու անգամ նա գալիս էր Ռուբենի մոտ: Գալիս էին չերբեքն և՛ միջանի անծանոթ չերիտասարդներ: Վրանց բարբառից չերեում էր, վրդ ուսանալի չեն: Ամենի հետ Բագրատյանը խոսում էր մի տեսակ հրամայողական չեղանակով: Թվում էր, վրդ ըրորը հպատակվում են նրա, իբրև մի տեսակ գլխավորի, խոսքին: Յեվ վրդքան համապատասխանում էր նրա լուրջ կերպարանքին պարագլխի դերը:

Պատահում էր, վրդ Մարիամը ներկայեր լինում նրանց պայմանավոր խոսակցությանը չուր ընկերների հետ: Շատ բան այդ խոսակցությունից նա չեր հասկանում և չեր էլ ուղում հասկանալ: Բավական էր աչնքանն էլ, վրդ այդ ըրորը խոսակցությունների նպատակը գիտեր: Այդ էր գլխավոր և հետաքրքրական կետը, մանրամասները չերկրորդական նշանակություն ունեին նրա աչքում:

Բագրատյանը գիտեր, վրդ այժմ գործի կուղությունը հայտնի չէ Մարիամին, ուստի այլևս առաջվա պես զաղտնապահ չեր և միշտ Ռուբենի հետ խոսում էր նրա ներկայությունը: Բայց մյուս կողմից Մար-

ըրիամը նկատում եր, վոր Բագրատյանը անձնապէս խուսափում եր նրա հետ առանձին մնալուց և գալիս և միայն այն ժամանակ, չերը Ռուբենը տանն և լինում: Կանացի բնադդմամբ նա զգում եր, միևնույն ժամանակ, վոր նրա խուլս տալը արհամարհանքի արգասիք չի, այլ ընդհակառակը...

Ռուբենը ասել եր նրան, վոր արդեն Բագրատյանին հայտնի չե բժիշկ Մելիք-Բարսեղյանի վարմունքը: Ինքը Ռուբենն եր պտտմել նրան տխուր չեղելու թշուհը: Յեւ Բագրատյանի վրա խորին տպավորութիւն եր գործել այն մարդու տմարդի արարքը, վորի մասին նա չերբեք լավ կարծիք չեր ունեցել: Նա զրգոված եր բժշկի դեմ և հաճախ Ռուբենին ասում եր, թե պատահած ժամանակ պատրաստ և ուղղակի թքել նրա չերեսին:

— Այգայիսներին չերբեք չպտի խնայել, պետք և պատժել ամեն քայլում... Ում մեջ մեռած չի աղնվութիւն զգացմունքը, նա պետք և կայենի կնիքը դրոշմի ալդ մարդկանց անամոթ ճակատին:

Յեւ այդ ասում եր նա, ատամները կատաղաբար կրճտելով և բռունցքը ամուր սեղմելով: Զգում եր Ռուբենը, վոր, արդարեւ, չեթե պատահի բժիշկ Մելիք-Բարսեղյանին, առանց չերկար մտածելու չուր սպառնալիքը կգործադրե:

Մի անգամ Բագրատյանը չեկավ սովորականից վաղ: Ռուբենը դեռ չեր վերագարձել ուսուցման արանից: Մարիամը միայնակ զբաղված եր խոհանոցում: Նա անմիջապէս լվացվեց, շտապեց չուր սննչակը, փոխեց վերնազգեստը և դուրս չեկավ նրան դիմավորելու:

— Ներեցեք, յս կարծում եյի Ռուբենը տանն ե,—ասաց Բագրատյանը, գլուխ տալով:

— Կես ժամից հետո կվերադառնա:

Նրանք նստեցին՝ Բագրատյանը Ռուբենի սեղանի մոտ, Մարիամը փոքրիկ թախտի վրա: Բավական ժամանակ նրանք լուռ ելին: Մարիամը չեր վստահանում առաջինը ընդհատել լռութիւնը, կաշկածեղված մի ինչ-վոր տահաղթելի զորութիւններից: Նա չեր համարձակվում անգամ նայել նրա կողմ:

Դա չերրորդ անգամն եր, վոր նրանք դեմ առ դեմ գտնվում ելին առանձին:

Բագրատյանը մատիտը վերցրեց և սկսեց խաղխաղել սեղանի վրա դրած մի կտոր թուղթ: Նրա ձեռները նշմարելի կերպով դողում ելին, նա հուզված եր չերեւում: Վերջապէս, նա նայեց Մարիամի կողմ, Մարիամն եւ գլուխը բարձրացրեց, և նրանց աչքերը հանդիպեցին միմյանց: Ինչ-վոր մի տարրինակ չերկուղի զգացում դարթնեց որի-

որդի սրտում, վորի նմանը նա չեր կրել: Թվում եր նրան, վոր արնտեղ, միքանի քայլ հեռու, բազմած և մի գերբնական զորութիւն, վորի դեմ պիտք ե նա մաքառեր, բայց տկար եր և անզոր եր զգում իրան:

— Ահ, ի՞նչ ուշանում ե,— արտասանեց Բաղրատյանը, շտապով նայելով ժամացույցին:

— Իսկույն կգա:

Դարձյալ լռեցին, դարձյալ չեկին նայում միմյանց վրա: Այդ բոլորին Բաղրատյանի ճակատը, հոնքերի մեջ տեղում, մերթ սեղմվում եր, մերթ բացվում: Յերբեմն նա, կարծես, ցնցվում եր, գլուխը բարձրացնում և պատուհանի միջով նայում դեպի դուրս: Վոչ, այդ հասարակ սպասող մարդու նայվածք չեր...

Յեւ ի՞նչպես գունատ եր թվում նրա դեմքը Մարիամին պատուհանից ներս տարածվող պայծառ լուսո ներքո:

— Վոչ, յես չեմ կարող համբերել...

Այս դարձվածը դուրս թռավ հանկարծ նրա բերանից, կարծես, ինքն ըստ ինքյան: Նա վրտքի կանգնեց:

— Յես հետո կգամ,— ասաց նա, գլուխ տվեց Մարիամին և շուտով դուրս չեկավ:

Մարիամը մնաց ապշած, նրա յետևից նայելով: Միևնույն ժամանակ, ինչ-վոր մի հեռավոր, մութ, անորոշ միտք ծագեց նրա գլխում, հիշելով այն տարորինակ հայացքը, վոր ձգեց նրա վրա Բաղրատյանը: Այժմ և միայն այժմ այդ հայացքի մեջ պատկերացավ նրան մի խորին հոգեկան պատերազմ: Ծի՜շտ ե, վոր այդ յերիտասարդին տանջում եր մի նոր միտք: Ի՞նչ և արդյոք այդ: Ինչ՞առ նա չմնաց, ինչ՞առ այդպես շտապեց հեռանալ, ինչ՞առ չկարողացավ «համբերել»...

Քառորդ ժամ չանցած նա կրկին յերևեցավ Ռուբենի հետ: Նրանք փակվեցին վերջինի սենյակում և մի ամբողջ ժամ այնտեղ ելին: Յերբ դռները բացվեցին, Բաղրատյանը յուր լայնեզր գլխարկը մի ձեռին բռնած, մշուս ձեռը հենած սեղանի ծայրին, նայում եր մռայլ հայացքով դեպի դուրս... հեռու ու հեռու: Ռուբենը մտիկ եր անում նրա յերեսին, նուրբնափ դարմացած, վորչափ և Մարիամը:

Հանկարծ Բաղրատյանը ձեռով ինչ-վոր վճռական շարժումն գործեց, սեղմեց Ռուբենի ձեռը, խոնարհ գլուխ տվեց Մարիամին, առանց նրա յերեսին նայելու, և արագ քայլերով դուրս գնաց:

— Ինչ՞առ չհրավիրեցիր ճաշի,— հարցրեց Մարիամը յեղբորից:

— Չնկատեցի՞ր մի՞թե,— պատասխանեց Ռուբենը, սթափվելով,— այն դուռնից մեջ եր, վոր մոռացա չել հրավիրելու: Յես յերբեք նրան

այդպէս չեմ տեսել... Քեզ արդեն հայտնի է, թե նա վորտեղ և գնում։ Մինչև այսօր նրա ամեն մի քայլը վճռական էր, իսկ այժմ, չերբ պետք է ուղևորվի, սկսել և տատանվել։ Մահվան մասին խոսում էր սառն, անյլբողի, այժմ, կարծես, վախենում և մահից... և ի՞նչ ծալքահեղ մտա-տանջության մեջ է։ Ի՞նչ և պատահել այդ մարդուն, տեղ աստված,— ավելացրեց նա չուրովի և սկսեց անցուդարձ անել սենյակում։

— Յե՛րբ և գնում,—հարցրեց Մարիամը։

— Բոլոր ընկերները վճռել են վաղը ուղևորվել, նրան են սպա-սում, իսկ նա...

— Վաղը,—ընդհատեց Մարիամը, հազիվ կարողանալով չուր շփոթությունը քողարկել։

Նույն օրը չերեկոյան Ռուբենը գնաց Բազրատյանի մոտ և տուն չեկավ բավական ուշ։ Մարիամը անհամբեր սպասում էր նրա վերադարձին։

— Այժմ դարձյալ փոխվել է, վաղը անպատճառ գնում է,—պատասխանեց Ռուբենը նրա շտապ հարցին։

— Անպատճառ։

— Անպատճառ։

Մարիամը գունաթափվեց։

— Մտո՛ւ, ի՞նչ պատահեց, ինչո՞ւ այդպէս փոխվեցիր։

— Վաղը նա կգա՞ այստեղ,—հարցրեց Մարիամը դողդոջուն ձայնով։

— Վոչ։

Մարիամը թուլացած նստեց աթոռի վրա և ձեռները ամուր սեղմեց ճակատին։

— Հասկացա,—ասաց Ռուբենը, դու նրան խղճում ես, այո, նա կդռնվի չուր հանգուգն ձեռնարկությանը։

Այդպէս հասկացավ չեղբայրը քրոջ ալլալման պատճառը, և քույրը չցրեց նրա մոլորությունը։

Հետևյալ առավոտ Մարիամը թախանձեց Ռուբենին, վոր իրան տանի Բազրատյանի մոտ չերեկոյան, չերբ պետք է վերջինը ուղևորվեր։

— Ի՞նչ գործ ունես նրա մոտ, հարցրեց Ռուբենը զարմացած։

— Ուզում եմ նրան բարի ճանապարհ մաղթել։

— Վոչ, չեմ կարող քեզ տանել։ Նա կբարկանա ինձ վրա։ Յերեկ նա ահնարկեց, թե չե ուզում կանանց չերես տեսնել։ Ի՞նչո՞ւ—չեմ իմանում... Նա կանանց մեջ ուրիշ ծանոթներ ել չունի, բացի քեզանից...

Բայց Մարիամը շարունակեց չուր թախանձանքը ամբողջ օրը։ Բարկացավ, հանդիմանեց Ռուբենը, բայց վերջապէս համաձայնեց։

Բագրատյանը ընակվում էր մի պառավ կնոջից, վարձած մի վոչ ասնքան ընդարձակ տնշուք սենյակում: Յերեկոյան ինն ժամն էր, լերը Մարիամը Ռուբենի հետ լեկավ նրա մոտ: Առաջ ներս մտավ Ռուբենը, նրա հետևից Մարիամը: Կանթեղի աղոտ լուսավորութունը մի քանի վայրկյան չթուլ տվեց տեսնել, թե ինչ է կատարվում սենյակում: Ապա նրանց աչքերը ընտելացան կիսախավար մթնոլորտին, և պարզվեց հետևյալը.— Մենյակում հավաքված էին այն անծանոթ լերիտասարդները, վոր վերջին օրերը լերբեմն լերեում էին և՛ Ռուբենի մոտ: Ամենը հազած էին ճանապարհային հագուստ— լերկար կոշիկներ, կարճ բաճկոններ: Ամենի աչքերը կրակոտ էին, դեմքերը վառված, լեռանդոտ: Հատակի վրա սփռված էին զանազան փոքրիկ կապոցներ, սեղանի վրա դրած էին մի ատրճառակ և մի կարճ սուր: Յերիտասարդները, չնայելով իրանց հուզված դրությանը, խոսում էին առանց աղմուկի, գրեթե շշնջունով: Բագրատյանը չուր շորերն էր կապկապում: Նրան ոգնում էին լերկու լերիտասարդներ: Նա ասնքան զբաղված էր գործով, վոր մի քանի վայրկյան չնկատեց Մարիամին, վոր մի անկյունում կանգնած լուռ և հոգեզմայլված դիտում էր... լերիտասարդներին: Հանկարծ նա նկատեց որիորդին, և նույն վայրկյանին նրա ձեռները թուլացան: Բաց թողնելով ճանապարհային «խուրջին» թուկերը, նա հանդիմանաբար նայեց Ռուբենի լերեսին:

— Հավատացիր, վոր չես շատ ընդդիմացտ, բայց ի՞նչ անեմ, համառեց, — ասաց Ռուբենը:

Մարիամը շփոթված և լուռ կանգնած էր: Նա ժպտաց, առաջ դիմեց և, ձեռը մեկնելով Բագրատյանին, արտասանեց.

— Կամեցա վերջին անգամ սեղմել այն ձեռքը, վոր պևտք է գործես...

Նա հավատեց չուր ասելիքը: Նա անշափ զգացված էր, ձայնը դավաճանեց նրան: Նա նայեց ուղիղ Բագրատյանի աչքերին: Ռոպեյաբար հաղթվելով այդ քնքուշ, սիրալիր և զգացմունքով լի հայացքից, լերիտասարդը կրկին ճիգն արավ իրան զսպելու և, արտասանելով «շնորհակալ եմ», վճռական շարժվածքով շարունակեց չուր գործը: Նա սեղանի վրա դրած սուրը տվեց ընկերներից մեկին, ատրճառակը դրեց չուր գրպանը: Մյուս լերիտասարդները զարմացած նայում էին Մարիամին: Բարեկազմ, գեղեցկադեմ, գունատ, խոշոր և խելացի աչքերով որիորդի լերեույթը այդ ուշ լերեկոյին, այդ կիսախավար անշուք պատերի մեջ, կարծես, նրանց թվում էր մի լերկնային խրախուսանք... Նրանց դեմքերը ժպտացին, նրանց աչքերի մեջ փայլեց մռայլ ուրախության նշույլը:

— Պարոններ, — դարձավ Մարիամը նրանց, — թույլ տվեք ձեր դա-
դափարը պաշտող մի հայ որիորդի սեղմել ձեր ազնիվ ձեռքը... Յես ինձ
բախտավոր եմ համարում, վոր գոնե մի քանի բոսկի ձեր շրջանումն
եմ...

— Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, — արտասանեցին գրեթե բո-
լորը միաբերան:

Յեւ Մարիամը սեղմեց չոթ լերիտասարդական առողջ և կոշտ
ձեռներ:

— Յես պատրաստ եմ արգեն, — լսվեց Բագրատյանի անհողդողդ
ձայնը:

Յոթ լերիտասարդներ միաժամանակ շտապեցին վերցնել նրա ի-
րերը, միմյանց հրելով և միմյանց ձեռքից խլելով:

— Սպասեցեք, — գոչեց Բագրատյանը, — համբուրվենք մեր ընկե-
րական ուխտը վառ պահելու համար...

Տեսարանը սրտաշարժ եր: Անկեղծ սրտով, մաքուր զգացմունք-
ներով, չոթ լերիտասարդները հերթով համբուրվում էին իրանց Բագ-
րատյանի հետ: Յեւ աչք անկեղծ ընկերական համբուրների մեջ զգաց-
վում էին նրանց սրտի փափկութիւնը, գաղափարի վսեմութիւնը և
հոգու անվահերութիւնը: Զգացված Մարիամը ջանք եր անում զսպե-
լու չուր կանացի տկարութիւնը, Սակայն իզուր: Արցունքը, սրտի ա-
մենախորին թելերի շարժումից առաջացած մաքուր արցունքը դուրս
ձգտեցին: Նա թաշկինակը սեղմեց աչքերին: Այդ աչք վալբկյանն եր,
լերը Բագրատյանը համբուրվում եր նրա լողորդ հետ...

— Մնացեք բարե, — հնչեց նրա տկանջին աչք ձայնը, վոր հենց
առաջին որից աչնպէս ազդել եր նրա վրա:

Նա թաշկինակը հեռացրեց աչքերից: Ինչպէս վոգեւորիչ հրեշտակ,
նա աչտմ կանգնած եր սենյակի մեջտեղում կարմրած և վառվռուն աչ-
քերով, վոգեւորված դեմքով: Նրա շուրջը կանգնած էին չոթ լերիտա-
սարդները և հիացմունքով նայում էին: Նրա աջ կողմում կանգնած
եր Ռուբենը, սղմված, փռքրացած, կտրծես, չուր վոնչութիւնը զգա-
լով մշուսների մոտ: Իսկ դեմ ու դեմ կանգնած եր Բագրատյանը, զո-
րավոր և հաղթական պարագլուխը, չուր հսկայական ուժեղ ձեռը ա-
ռաջ տարածած: Մարիամը չուր աջը դրեց նրա ափի մեջ և զգաց մի
անասելի ցնցումն ամբողջ մարմնի մեջ:

— Լավ պաշտպանիք քրոջդ, նա հաղվագլուտ սիրտ ունե, — լսեց
Ռուբենը:

Ծխշտ և արդշոք, իրանվ Բագրատյանն եր աչք խոսքերի տրտասա-
նողը, թե՛ Մարիամին աչդպէս թվաց: Նրա շուրջը պտտեց, աչքերը

մթնեցին: Յերազի նման նրա առաջից հերթով անցնում էին ուղևոր լերիտասարդները: Վերջինը Բագրատյանն էր:

— Յեթե վերադառնամ, կտեսնվենք,—այս խոսքերը լսեց Մարիամը:

Նա փոքր ինչ սթափվեց, նայեց լուր շուրջը: Վոչ վոք չեր մնացել սենյակում, բացի Ռուբենից: Սա ևս արտասովում հր...

XVIII

Որից որ բժիշկ Մելիք-Բարսեղյանի ասպարեզը ընդարձակվում էր: Ձմեռվա ընթացքում ձեռք բերած ծանոթները, ուժեղներին և իրավատերերին դուր գալու ձիրքը, վերին աստիճանի փափուկ և սիրալիր վարվողութունը, այս բոլորը և ուրիշ շատ առավելութուններ նպաստում էին նրան:

Այլևս նա կարիք չուներ Գոյովինսկի պրոսպեկտով որական մի քանի անգամ կառքով անցնելու արտաքին ցուլցի համար: Կարիք չուներ նույնպես հիվանդանոցներում ձրի հիվանդներ ընդունելու: Այժմ նրա լուրաքանչուր ժամը փող էր: Ամբողջ որը կառքը նրան պատեցնում էր քաղաքի մի ծալրից մյուսը, մեկ հիվանդից մյուսի մոտ, և ամեն որ նրա ընդունարանը լիքն էր հիվանդներով:

Արհեստակիցները նախանձում էին նրան, հասարակութունը զարմացած էր նրա արագ հառաջադիմությանը: Վոմանք նրա հաջողութունը վերագրում էին մի քանի անհուսալի հիվանդների առողջացնելուն և հիշում էին այս կամ այն մարդուն, վորին նա «ազատել էր մահից»: Իսկ թե քանիսին էր «կյանքից ազատել», այս մասին մարդկանց հիշողութունը թույլ էր, քանի վոր հասարակության մեջ արդեն կաղմվել էր այն կարծիքը, թե Մելիք-Բարսեղյանը լավ բժիշկ է: Միջին և ստորին դասակարգերը նրա մասին ասում էին «ձեռքը թեթև է», բարձր դասակարգը՝ *лечит симпатично*: Այն, այժմ ամենքը նրան «սիրապատիչին» լերիտասարդ էին համարում, վորովհետև ամենքի սիրտը այս կամ այն կերպ կարողացել էր հրապուրել:

Կային միայն մի քանի տաք գլուխներ, վոր չէին լենթարկվում ընդհանուրի կարծիքին և համառ կերպով պնդում էին, թե Մելիք-Բարսեղյանը «ճարպիկ շառլատան է», ուրիշ վոչինչ: Այդպիսիներն էին նրա նախկին ընկերներից վոմանք, վորոնք մի առանձին դիրք և ձայն չուներին հասարակության խավերում, ուստի և նրանց խոսքը ազդեցութուն չեր անում լսողների վրա: Ինքը Մելիք-Բարսեղյանն էլ մի առանձին ուշադրութուն չեր դարձնում այդպիսիների կարծիքին: Սակայն հարմար դեպքում չեր մոռանում նրանց սիրտն ևս շահել:

դգայով, վոր, եհ, ինչ և ե, դարձյալ ավելի լավ ե նրանց ևս բարեկամ ունենալ, քան չարակամ:

Յեւ քանի՜ քանիսն ելին պարծենում նրա ծանոթությամբ, քանի՜ քանիսն ելին պատիւ համարում նրա հետ բարեկամանալ:

— Ախ, ներեր, հոգեպէս, յերեկ չկարողացա քեզ մօտ գալ, դոքսոր Մելիք-Բարսեղյանը մեր տանը հյուր եր:

— Յես պարել չիմ սիրում, բայց անցյալ որը Մայկոյի յերեկութում դոքսոր Մելիք-Բարսեղյանը այնքան զոռեց, վոր ել չկարողացա ձեռքից ազատուիլ:

— Այսոր դոքսոր Մելիք-Բարսեղյանը մեր տանն եր:

Պարծությամբ արտասանված այս դարձվածքներն ելին պատում տիկիներին և որիորդներին մեջ: Խնճուկք, մեծարանք, յերեկութ, ամեն տեղ և ամեն կողմից նա հրավիրվում եր և հազիւ ժամանակ եր դրունում հնգից մեկի տունը գնալու: Իսկ յերբ գնում եր, ստեպ-ստեպ նայում եր ժամացույցին և հանկարծ վեր թռչում տեղից, սովորաբար ուղղելով տան տիրուհուն միևնույն փքուն դարձվածքը:

— Արհեստիս ծանր պարտականութիւնը ստիպում ե ինձ զրկվել ձեր հյուրասիրութիւնը վայելելու քաղցր զվարճութիւնից:

Մինչդեռ բժշկի գործերը այսպես հաջող ելին ընթանում, նրա վրա աչք ունեցող մայրերի և հարսնացուների թիմը ել որից որ ավելանում եր: Բայց նա տակավին հետամուտ եր յերկուսին—որիորդ Վարինկա Ագամովային և այն վաճառականի աղջկանը, վորի հետ ծանոթացել եր Ագամովների տանը:

Առաջինը նշանավոր աղգականների, յերկրորդը ոժիտի քանակությամբ գերազանցում ելին բոլոր մշուսներից: Յեւ բժիշկը տատանվում եր, չգիտեր վորին ընտրել և վորից հրաժարուիլ: Սակայն, յերբ ձեռք բերեց ծանոթների մեծ շրջան, հետզհետե սկսեց թեքվել վաճառականի աղջկա կողմը: Նա վճռեց, վերջապես, լուրջ կերպով հետամուտ լինել վերջինին: Փոքր առ փոքր զրավեց նրա ծնողների սիրտը, բարեկամացավ, և ստեպ-ստեպ այցելում եր նրանց: Սկզբում նա որիորդի կողմից հանդիպեց սառնութիւն, ապա նկատեց, վոր այդ սառնութիւնը արվեստական ե և որիորդը սրտում իսկապէս համակրում ե:

Ավելի ինչ եր մնում անելու, յեթե վոչ ուղղակի առաջարկութիւն: Բայց տակավին նա զգուշ եր վարվում, չեր շտապում: Նա տեղեկացել եր, վոր որիորդի հայրը ահագին կարողութիւն ունե և աղջկա համար նշանակած ոժիտը այդ կարողութիւն համեմատ շատ չնչին ե:

Քաղաքում սկսեց հռչակվել այժմ, վոր դոքսոր Մելիք-Բարսեղյանը ամուսնանում ե վաճառական Մեհրաբովի աղջկա հետ: Լուրը հա-

սավ և՛ Ազամոմներին: Տիկին Ազամովան զայրացավ, որիորդ Վարին-
կան վերավորվեց, տխրեց:

Դարձյալ Մելիք-Բարսեղյանի անունը ընկավ հասարակության
բերանը, դարձյալ սկսվեցին թեր և դեմ խոսակցությունները: Վոմանք
պնդում էին, թե հարցը դեռ վճռված չե, բժիշկը դեռ չի կապել լուր
պայմանագրությունը որիորդի ծնողների հետ: Ասում էին, թե նա
Մեհրաբովից պահանջում է, վոր տասնուհինգ հազար ռուբլի չե՛լ ավե-
լացնի լուր աղջկա ո՞թիտի վրա և բացի դրանից պարտավորվի մի քա-
նի հազար ել տալ՝ պսակվելուց հետո արտասահմանում ճանապարհոր-
դելու:

Այդ լուրերը, հարկավ, զբաղեցնում էին և տիկին ու որիորդ
Սադափյաններին: Վերջին ժամանակ, յերբ տիկին Սոփիոյի հույսերը
Հալաբյանի վերաբերմամբ խորտակվեցին, նա սկսել եր ուշադրու-
թյուն դարձնել բժիշկ Մելիք-Բարսեղյանի վրա, վոր յերբեմն այցելում
եր նրանց: Սկզբում չերիտասարդ բժիշկը բոլորովին մի արժանավոր
փեսացու չեր թվում նրան, վոչ դիրք ուներ, վոչ փող, վոչ անուն:
Բայց յերբ հասարակության մեջ նա հարգանք ձեռք բերեց, յերբ
մայրերը ընկան նրա յետեից, փոխվեց հետզհետե տիկնոջ կարծիքը:
Նա տեսավ, վոր շատ ել չի կարելի արհամարհել այդպիսի մեկին, թե-
կուղ Հալաբյանից հետո:

Նույն կարծիքի յեր և՛ որիորդ Նատալիան, վորի աշխարհահա-
յեցողությունը գրեթե վոչնչով չեր տարբերվում մոր աշխարհահայեցո-
ղությունից: Մայր և աղջիկ ավելի սիրալիր հարաբերություն սկսե-
ցին բժշկի հետ: Սակայն յերբ լսեցին, վոր նա արդեն ընտրություն
արել է, որիորդը դադարեց անունը հիշելուց, մայրը—անզուսպ տիկին
Սոփիոն—շտապեց կապել բժշկի թերությունների ցանկը և տարածել
լուր ծանոթների շրջանում:

Մի որ բժիշկը չեկավ այցելության, որիորդ Նատալիան չզուրս
չեկավ սենյակից նրան հանդիպելու: Տիկին Սոփիոն սառն ընդունեց
և ուղղակի շնորհավորեց:

Բժիշկը շփոթվեց:

— Թիֆլիսի հասարակությունը զարմանալի չե,— ասաց նա վի-
րավորված մարդու յեղանակով,— բավական է, վոր մեկի տունը մի
քանի անգամ գնում ես, իսկույն սկսում են բամբասել:

— Բայց այդ բամբասանք չե, ասում են, նշանվել ել եք, ինչո՞ւ
չեք թագցնում,— գրգռեց համառ տիկինը:

Բժիշկը, շրթունքը կծելով, լռեց:

Ճշմարիտն այն եր, վոր որիորդ Մեհրաբովալի ծնողները ընդու-

նել ելին նրա պայմանները: Բայց նա դարձյալ տատանվում էր: Այժմ նա ափսոսում էր, վոր ավելի մեծ պայմաններ չառաջարկեց, քանի վոր առևտուրը այնպես հաջողվում էր:

Բայց կար մի հանգամանք, վորի վրա սկզբում նա ուշադրություն չէր դարձրել և վոր հետո դրեց նրան նեղ դրութչան՝ մեջ և ստիպեց վճռական քայլ անել: Բանն այն է, նա նկատում էր, վոր, լուրը տարածվելուց հետո, շատ ընտանիքներում սառն են ընդունում իրան: Սաղափյանների և Ագամովների տանը այդ սառնությունը արտահայտվում էր խիստ կերպով: Մյուս ընտանիքներում ևս չէր վայելում առաջվա հարգանքն և հյուրասիրությունը:

Յերկգիմի դրութչունը նրան վտանգավոր թվաց վոչ միայն բարոյական, այլև նյութական տեսակետից: Այսպես թե այնպես, «առկածախնդիր» մարդու հոչակ վաչկու միտքը սարսափեցրեց նրան: Նա վճռեց, վերջապես, պսակվել... որիորդ Մեհրաբովայի հետ:

Նշանադրությունը կատարվեց զատկի չերկրորդ օրը: Պսակը տեղի ունեցավ չոթ շաբաթ անցած: Որիորդի ծնողները մի շուրջ հարսանիք տվեցին իրանց միակ դստեր համար: Նրանք հրավիրել էին քաղաքի ամեն դասակարգի մարդիկ—վաճառականներ, չինովնիկներ, բանկիրներ, կապալառուներ, ոֆիցերներ, իրավաբաններ, մի քանի վրացի իշխաններ և այլն: Բժիշկը չուր կողմից հրավիրել էր չուր արհեստակիցները վոմանց, մի քանի հասարակական գործիչներ, չերկու հաջ խմբագիր, մի ուսու խմբագիր, չորս ուսանող, մի քանի ուսուցիչներ...

Հանդեսը բազմամարդ էր, ճոխ և շուրջ: Հարսանիքը կատարվում էր աղջկա ծնողների տանը, վոր գտնվում էր քաղաքի կենտրոնում: Ամբողջ փողոցի բնակիչները իրարանցման մեջ էին: Պատուհանները և պատշգամբները լիքն էին հետաքրքիր հանդիսասերներով: Յեկեղեցու բակում խոնվել էր անագին բազմություն: Յեկեղեցու մեջ ասեղ գցելու տեղ չկար: Տիրում էր մի անասելի աղմուկ: «Դեղինները» և պառաված ու պառավող որիորդները, միմյանց հրելով, առաջ էին ձգտում, վոր տեսնեն նորահարսը ի՞նչ կերպորանք ունե, խաչեղբայրը և և և այլն: Պսակ կատարող քահանան, մի քանի անգամ ընդհատելով պսակի խորհուրդը, ամբոխին հրավիրեց խաղաղ կենալ: Բայց նրան լսող չկար:

Փառահեղ պսակադրությունը վերջացավ: Նորապսակները շքեղ կառքով վերադարձան տուն: Ուղիղ մի ժամ ու կես նրանք կանգնած շնորհավորություններ էին ընդունում, ալնքան մեծ էր հանդիսականների բազմությունը: Միմյանց լետեից, թնդալով, բացվում էին

շամպանիայի շիշերը: Յերաժշտութիւնը գլորդեցնում եր վաճառականի փարթամ դահլիճը: Նորապսակները զգացված ելին: Բազմաթիվ ճրագները լուսավորում ելին նրանց ուրախ դեմքերը: Բժիշկը մի քիչ գունատված եր, նորահարսի դեմքը վարդի պես կարմրած:

Ընթրիքը սկսվեց գիշերվա յերկու ժամին, վերջացավ լուսաբացին:

Նույն օրը յերեկոյան նորապսակները ուղևորվեցին արտասահման: Այլևս չքացան հետամուտ յեղող մայրերի հուշերը Բժիշկ Մելիք-Բարսեղյանի վերաբերմամբ...

Ամառն եր: Քաղաքի բնակիչները ցրվում ելին ամառանոցները: Հետզհետե պատարկվում եր Սուրյակը, ուր ալնպես տարածվել եր Բժիշկ Մելիք-Բարսեղյանի անունը, ուր ամեն ընտանիք խոսում եր նրա մասին:

Տիկին Սոփիոն, տխուր սրտով, իզուր անցած հուշերով, յուր կիսաթառամ աղջկա հետ, ուղևորվեց Բորժոմ, և ալնտեղ շարունակում եր պարսավել ըտլոր փեսացուներին...

Արտասահման ուղևորվելուց մի ամիս անցած Ախշարումյանը Հալաբյանից ստացավ մի նամակ: Ամուրին յուր մասին մի քանի համառոտ տեղեկութիւններ տալուց հետո խնդրում եր ընկերոջը՝ հաղորդել իրան հաճնված գործերի դրութիւնը:

Ախշարումյանն արդեն կատարել եր նրա պատվերները, բացի մի քանիսից: Նա դիմել եր և՛ Նիկողայոս Սադափյանին, առաջարկելով վճարել յուր պարտքը Հալաբյանին: Բայց Նիկողայոսը խնդրում եր դարձյալ հետաձգել:

— Գործերս հաջող են, բայց փողի պակասութիւն ունեմ,— ասում եր նա:

Ախշարումյանը հաղորդեց Հալաբյանին, իմիջի ալոց, և՛ այդ բանը: Ամուրին իսկույն պատասխանեց, թե Սադափյանի պարտքը հետաձգել չե կարող և խնդրում եր Ախշարումյանին յուր պարտապանի հետ վարվել ամենայն խստութեամբ: Առհասարակ նրա նամակը տոգորված եր դեպի Սադափյանները ատելութեամբ և ամեն տեղ վրդովմունքով եր հիշվում ալդ աղգանունը: Ախշարումյանը ստիպված յեղավ կրկին և կրկին անգամ դիմել Նիկողայոսին և վերջը մի որ սպառնաց դատաստանի անունով: Միջտեղ ընկավ իշխան Սահարունին, հեռագրով խնդրեց Հալաբյանին համբերել: Պատասխանը յեղավ «չեմ կարող», և մի շաբաթ անցած իշխանը ստացավ մի կոշտ նամակ, ուր

Հալաբյանը արտահայտում էր մի տեսակ արհամարհանք նորին պայծառափայլությանը:

Վերջապես, Նիկողայոսը ստիպվեց Հալաբյանին տալիքը վճարել Ախշարումյանին: Իսկ իշխան Սահարունին յուր կողմից մի գողոց և վերավորական նամակ ուղարկեց Կարսբաղ ամուրիին: Յեվ աչսպես ընդհատվեց նրանց բարեկամությունը հավիտյան...

Այնան սկզբին Ախշարումյանը, վերջացնելով յուր և Հալաբյանի դործերը, ինչպես խոստացել էր, ուղևորվեց Վիեննա: Այնուհետև Հալաբյանի մասին Թիֆլիսում այլ ևս վոչ վոք տեղեկություն չեր ստանում և վոչ վոք էլ չեր մտածում նրա վրա: Միայն նրա քրոջ վորդիները, վորոնց հետ նա վոչինչ հարաբերություն չուներ, յերբեմն հիշում էին, վոր արտասահմանում մի հարուստ քեռի ունենա: Յեվ հիշում էին ալն մտքով, վոր գուցե մի որ կարողանան տիրանալ նրա ժառանգությանը: Սակայն նրանց հուշերն էլ խարվեցին: Քաղաքում մի որ լուր տարածվեց, թե Հալաբյանը այլևս մտադիր չե յուր հայրենիքը վերադառնալու: Նա վճռել է մնալ արտասահմանում և մտադիր է յուր բոլոր կարողությունը կտակել ազգին:

Լուրը քաղված էր Ախշարումյանի մի նամակից, և սխալ չեր...

Մարիամը նստած էր դեպի փողոց նայող սենյակի պատուհանի մոտ և նայում էր դուրս: Հոկտեմբերի խոնավ և ցուրտ օրերից մեկն էր, յերկինքը հետգհետե մթնում էր միմյանց վրա կուտակվող խիտ-խիտ ամպերից: Յիբեմն նա վեր էր կենում տեղից, 'քայլում էր սենյակում և կրկին նստում, կրկին հայացքը ուղղում դեպի փողոց:

Անձրևը սկսեց թեթև շողել, կառքերը անցնում էին բաց ծածկոցներով, մարդիկ նույնպես: Մարիամը թույլ, մոլոր քայլերով շարունակում էր անցուղարձ անել, ձեռները կրծքին ծալած: Յերբեմն նա ցնցվում էր, կանգ էր առնում, նայում յուր շուրջը: Կարծես աչքերով վորոնում էր մի բան, վորով կարողանար թեթևացնել յուր սրտի ճնշող ծանրությունը:

Վեց ամիս էր անցել Բագրատյանի գնալուց, և նրա մասին վոչ մի տեղեկություն չկար: Միայն առաջին ամիս Ռուբենը ստացավ նրանից մի նամակ, վորով հայտնում էր, թե յուր ընկերների հետ հասել է ճանապարհորդության կետին... Ուրիշ վոչինչ:

Արդյոք ի՞նչ պատահեց նրան, արդյոք կենդանի է, թե՞ արդեն զոհ է դարձել յուր վտանգավոր ձեռնարկությանը: Այս էր մտածում Մարիամը, և յեղանակի վատությունն ավելի ծանրացնում էր նրա սրտի վիշտը:

Նախընթաց որը նա թախանձել էր Ռուբենին հայտնել ճիշտը՝ վիրտեզ և գտնվում Բագրատյանը։ Բայց Ռուբենը ինքն էլ չգիտեր նրա տեղը, և աշխատում էր մի կերպ իմանալ։ Այսոր մեկը խոստացել էր ճիշտ տեղեկություն տալ նրան։ Նա գնացել էր, և այժմ Մարիամը նրան էր սպասում անհամբեր։

Այլևս Մարիամը չէր թաղցնում վոչ Ռուբենից, վոչ Սաթենիկից չուր ղգացմունքը։ Հայտնի չէր Բագրատյանի նրա սրտում զարթեցրած խորին, անհաղթելի ղգացմունքը, վորին վոչ նրա բացակայութիւնը և վոչ ժամանակի ընթացքը չէին մեղմացնում, այլ ընդհակառակը...

Այն որից, չէր Բագրատյանը հեռացել էր, այն որից Մարիամի գեմքի վրա մի ժպիտ չէր յերևում, այն որից չունէր մի բոլե հանգստութիւն։ Ժամերով նստում էր նա անգործ, լուռ, մտադրաղ. վոչ մի բան նրան չէր ղրաղեցնում, վոչ մի բան չէր շարժում. նրա հետաքրքրութիւնը։ Նրան տիրել էր մի տեսակ ծուլութիւն։ Կարուձևով նա համարյա այլևս չէր պարապում, և չեթ չերեմն չուր ձեռքն էր առնում կարի մեքենան, լոկ Սաթենիկի թախանձանքից ստիպված և Ռուբենից ամաչելով։ Իսկ տնային գործերը կատարում էր ռուս աղախինը, վորին չերկու ամիս էր արդեն վարձել ելին։

Այժմ Ռուբենի նյութական դրութիւնը համեմատաբար ապահով էր։ Մեպտեմբերի մեկից նրան տվել էին նույն ուսումնաբանում ուսուցչի լի պաշտոն։ Նա ստանում էր այնքան վարձ, վոր կարող էր միջակ ապրուստ վարել։ Բագրատյանի գնալուց հետո նա ղարձալ փոխվել էր, պարապվում էր չուր սովորական խաղաղ գործերով։ Նա ղրաղված էր այն ղիտական գրավոր աշխատութիւնը, վոր սկսել էր մի տարի առաջ։

Նա արդեն վճռել էր ձմեռը ամուսնանալ Սաթենիկի հետ։ Սկզբում չերկուսն էլ մտաղիր ելին հետաձգել մի տարով։ Բայց Մարիամի համոռութան ձանքը փութացրել էր վճիռը։ Նա ցանկանում էր որ առաջ տեսնել չուր սիրելի չեղբոր և ընկերուհու բախտը ընտանեկան խաղաղ կյանքում։ Նրա խռովված հոգին և փոթորկալից սիրտը ձգտում էին մտերիմների փոխադարձ չերջանկության մեջ գտնիլ մեղմ միութարութիւն։

Արդեն սկզբնական պատրաստութիւնները տեսնվել ելին։ Ռուբենի այժմյան բնակարանը նոր էր վարձված։ Այն սենյակը, վոր այնպես հանգիստ անց ու ղարձ էր անում Մարիամը, բաժանալ ընղարձակ էր։ Կահ-կարասին նոր էր. չուր առաջին ամսվա ոռճիկը Ռուբենը այդ բանին էր հատկացրել։ Պատի տակ ղրված էր ծաղկանկար բար-

ձերով և մոլթաքաներով զարդարված թախտը: Մի անկյունում յերևում եր մի սևագուլն փոքրիկ պահարան, վորի հարկերի վրա կանոնավոր դարաված ելին յերկու տասնյակ կազմած գրքեր: Մյուս անկյունում դրված եր մի գահավսրակ, յերեք թեր-բազկաթոռներ, վորոնց մոգ-մոխրագուլն ասվյա ծածկոցը համագուլն եր պատերի պամտառին:

Այս բոլորը դասավորված ելին մեծ խնամքով: Մարիամի ճաշակն եր յերևում ամեն տեղ, նա յեր ղեկավարել աղախնի գործը: Մաքրությունը որինակելի յեր, վոչ մի տեղ, վոչ մի անկյունում չեր յերևում ավելորդ կամ անկանոն ձգված բան: Սեղանները՝ իրանց վրա դրած պարագաններով, աթոռները, հատակը, նույնիսկ դռները փայլում ելին իստակությունից: Պատահանների ապակիների վրա չեր յերևում մի փոքրիկ արատ, և ցերեկվա լույսը ներս եր տալածվում տն-խափան:

Ամեն ինչ այստեղ տրամադրում եր ընտանեկան խաղաղ կյանքի: Միայն Մարիամի հոգու խռովությունը այդ բոլորի հակապատկերն եր արտահայտում նրա դեմքի վրա:

«Յեթե վերադառնամ, կտեսնվենք», կրկնում եր նա մտքում Բագրատյանի վերջին խոսքը: Յեւ նա հուսով եր, վոր կվերադառնա, ապրում էր ու շնչում այդ հուսով: Անշուշտ կվերադառնա և անշուշտ կկամենա տեսնել Մարիամին: Նա զգում եր Բագրատյանի այդ խոսքի բուն միտքը, և ճիշտ եր զգում...

Դռները բացվեցին: Նա ցնցվելով հեռ նայեց, Ռուբենն եր ներս մտնողը:

— Լուր կա, — յեղավ Մարիամի առաջին հարցը:

— Կա, — պատասխանեց Ռուբենը և, զրպանից մի կեղտոտված ու սևացած նամակ հանելով, տվեց քրոջը:

Մարիամը շտապով բաց արավ նամակը: Նրա ձեռները դողում ելին անհամբերությունից: Հասցեն Ռուբենի անունով եր գրված: Կարդալով յերեք եջերից բաղկացած նամակը, Մարիամի դեմքը մերթ մոռլվում եր ավելի, մերթ պայծառանում և փայլում ներքին զոհու-նակութունից:

Բագրատյանը տեղեկություն եր տալիս չուր մասին, նկարագրում եր չուր ձեռնարկության դժվարությունը:

«Հեռվից ավելի դյուրին եր թվում ինձ, բայց այն չե, ինչ վոր կարծում ելի, — գրում եր նա: Առ այժմ չես բազկախանանում եմ խոսքով, մինչև վոր գործը հիմք ստանա: Շատ հավանական ե, վոր հանկարծ վրա հասնի վճռական քալլ անելու ժամը, վորովհետև մեր կամքը մեզանից չե կախված, այլ... Հակառակ կողմը կարող ե ինքը առիթ տալ խոսքից գործին դիմելու... Այն ժամանակ... մնացեք բարև... իմ վերադարձը ցնորք ե...»

Մարիամը գունաթափվեց, կանգ առավ, նայեց Ռուբենի լերեսին։ Անունհետև Բաղրատյանը գրոււմ էր մասնավոր բաների մասին։ Մարիամը վորոնում էր չուր անունը, և գտավ նամակի վերջում. սասորագրութլունից հետո, լերկու տողի մեջ։

«Բարեկիր որորդ Մարիամին և ասա, վոր աղոթե մեր գործի հաջողութլան համար...»։

Մարիամը թուլացած նստեց թախտի վրա, նամակը ձեռում ա-մուր սեղմած, կարծես, վախենալով, մի գուցե խլին նրանից։

— Դժվար, շատ դժվար դեր է հանձն առել,—ասաց Ռուբենը։

— Նա կկատարե, նա կարող և կատարել,—գոչեց Մարիամը վրդովվելով չուր լեզրոր հուսահատութլան դեմ։

— Կկատարե, բայց չուր կյանքի գնով...

Մարիամը մի ծանր հաչացք ձգեց լեզրոր վրա։ Մի հաչացք, վոր արտահայտում էր և՛ կծու հանդիմանութլուն, և՛ վիշտ, և՛ հուսալք, անպայման հուսալու բռնն կարոտ։ Ռուբենը զգաց այդ և շտապեց չուր սխալն ուղղել։ Մարիամը լուռ լսում էր նրա հուսադրական խոս-քերը, աշխատելով հավատալ՝ չուր արեկոծված հոգուն սակավ ինչ հանգստութլուն տալու համար։

Որ որի վրա անցնում էր, Մարիամն ափելի ու ափելի անհան-գիստ ու նյարդաչին էր դառնում։ Ամեն որ նա գնում էր Սաթենիկի մոտ չուր տիրութլունը փարատելու համար։ Ամբողջ ժամերով նստում էր ընկերուհու մոտ, և նրա խոսակցութլան միակ նյութը Բաղրատ-յանն էր, նրա ասածները, նրա բնավորութլունը և պաղափարները, վորոնց անձնատուր էր լեզել այդ մարդը...

Սաթենիկն լերբեմն լսում էր սիրով, լերբեմն ձանձրանում էր մտքում, բայց և լերբեք դժկամակութլուն չէր արտահայտում։ Նրա անդորը բնավորութլանը և մեղմ ձգտումներին չէր համապատասխա-նում Մարիամի հոգեկան տրամադրութլունը և այսպիսով ընկերուհի-ների հաչացքների տարբերութլունը քանի գնում անքան ափելի խըս-տանում էր։ Սակայն լերկուսն էլ փոխադարձաբար հարգում ելին ի-րարու դաղափարները։ Հաճախ Սաթենիկը խոսք էր բաց անում Ռու-բենի մասին, և միշտ նրա ասածների մեջ զգացվում էր հոգու բռնն ձգտումը՝ որ անուշ արժանանալ ամուսնական կյանքի լերջանկութլանը։

Տեսնելով այդ, Մարիամը մտքում վճռեց առ ժամանակ մի կերպ զսպել չուր մտատանջութլունը և զրադվել այլ խնդիրներով։ Այս պատ-ճառով նա աշխատում էր Ռուբենի և Սաթենիկի առջև ուրախ ձեւանալ։

Վերջապես, նրա թախտաձանքով ամուսնութլան որը վորոշվեց։ Յերկար հետաձգելու կարիք չկար—մի ձեռք պսակադրութլան զգեստ Սաթենիկի համար և մի նոր հագուստ Ռուբենի համար—ահա ինչ էր

մնում անելու: Սաթենիկն ինքը՝ ձեռք ու կրակից իր զգեստը Մարիամի ողնությամբ:

Հասավ վորոշված որբը:

Ռուբենը հրավիրեց յուր նախնին ու նոր ընկերներից վոմանց և մի քանիսին իր պաշտոնակիցներից: Սաթենիկը հրավիրեց յուր ընկերուհիներին և մի քանի ազգականներ:

Յերիտասարդ հանդիսականների ընկերության զվարթ շրջանում համեմատ հարսանիքն անցավ շատ ուրախ: Ուրախ ու զվարթ եր աչք չկրկուց և Մարիամը:

Դեկտեմբերի վերջն եր Մի սառը և քամի որ: Հարսանիքից անցել եր ամիս ու կես: Այն սենյակում, ուր չերկու ամիս առաջ Մարիամը կարգացել եր Բագրատյանի մոռյլ նամակը, նստած եր Սաթենիկը և անհամբերությամբ նայում եր դեպի դուրս: Կեսօրից հետո չեր: արդեն չերկու ժամ եր, վոր նա սպասում եր Ռուբենին:

Ներս մտավ տասը տարեկան մի գեղեցկագին աղջիկ սեահեր և սեահյա:

— Ի՞նչ ես ուզում, Անահիտ,— հարցրեց Սաթենիկը բարկացած ձայնով:

— Դրքերս բերեմ:

— Վոչ, այսօր չեմ կարող քեզ հետ պարապել:

Աղջիկն ուրախացավ:

— Մարիամն ել չի ուզում պարապել Վարդուհու հետ, այսօր մեղ համար տոն ե,— գոչեց փոքրիկը և թռչկոծելով դուրս վազեց:

Անահիտն ու Վարդուհին Սաթենիկի փոքրիկ քույրերն էին, վոր այժմ տպրում էին իրանց ավագ քրոջ հետ և նրա հովանավորության տակ:

Սաթենիկը դարձյալ մենակ եր և դարձյալ անհամբեր նայում եր պատուհանով դեպի փողոց:

«Ուշացավ, շատ ուշացավ, չերկու, չի կարողանում գտնել ձիշտ տեղեկանք», ասում եր նա մտքում անպադար:


Արդեն որբ մթնում եր, չեր, վերջապես, Ռուբենը լեկավ վոտքից մինչև գլուխ թրջված ձյունախառն անձրևից: Նա գունատ եր, աչքերի մեջ չերկում եր արցունքի հեռքը:

— Վերջապես,— գոչեց Սաթենիկը, ընդառաջ վազելով:


Նա մի քանի քայլ մնացած կանգ առավ և ստորստիած նայեց ամուսնու աչլալված չերեսին:

— Ուրեմն, ձիշտ ե:

— Ձիշտ ե,— պատասխանեց Ռուբենը և հոգնած ու շնչասպառ նստեց թախտի վրա:



Յրապատ Դիմում



Համար 5
20 n

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220037739

A 37733